ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57, A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ՇԱԲԱԹ
2
ՄԱՅԻՍ
SAMEDI
2 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8384 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4285

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԱՅԻՍ ՄԷԿ

Էր երբեմն գարնան փառաբանութեան յատկացուած ամէն էր Մայիս մէկը :

« Ահա՛ Մայիս, ամիս բուրմանց, ամիս նուագաց, ամիս՝ ուր ծառերն ի քնար կը փոխարկուին, քարերն ի գալար » :

Այս բառերով կը սկսէր մեր հայերէնի դասագիրքին մէկ դրուագը՝ ստորագրուած Ե. Տէմիրճիպաշեանէ եւ նուիրուած « Մայիս»ին, երկինքէն հոսող բանաստեղծութեան՝ ցօղի, մարգրիտի, չողի, ծիածանի, Թռչունի եւ օրհնութեան ձեւերով, վարդի բուրմունքին եւ սոխակի զեղգեղանքին ...

Մինչ արեւելք գարնան այս հրաշալիկ ամիսը կ'ողջունէր ցնծաձոն ու խրախճանք սարքելով, արեւմուտքի ճոխառարուեստի կեդրոններու մեծ զործարաններուն եւ հանքերուն մէջ չհագործուող բանուորներն ու բանուորուհիները ան-համբեր Մայիս Մէկին կը սպասէին՝ իբրեւ օրը՝ զործ պահանջելու համար :

Մայիս մէկը աշխատաւորներու դերասպասն էր :

« Դասակարգային պայքար»ը իր խակական զիմագիծը ցոյց կուտար այդ օրը :

Շնորհիւ ընկերվարական կուսակցութեանց բանաւոր ու զրաւոր քարոզութեանց՝ ամէն կարզի աշխատաւորները կազմակերպուած իբրեւ արհեստակցական միութիւններ՝ կը ձեւակերպէին իրենց նուագպահանջները : Ու Մայիս մէկին թափօր կազմած՝ զրօշակներով եւ ցուցատախտակներով ապմկալի ցոյցեր կը կատարէին՝ պահանջներ պարտադրելու համար զործարանատէրերուն :

Ձարտարարուեստի զարգացումը ժամ. զարու ընթացքին ընչազուրկներու (պրոլեթար) դասակարգ մը ստեղծեց քաղքենիներու (բուրժուա) կողքին :

Այս վերջինները 1789ին ընդվզած էին պետութեան եւ կղերականներու իշխանութեան դէմ :

Դերերը փոխուած էին այժմ : Քաղքենիները զարձեր էին շահագործող դասակարգ եւ կը կեղեքէին իրենց բանուորները : Ու պահպանութիւն կը պահանջէին պետական իշխանութիւններէն :

Տանեակ տարիներ բանուորներն ու անոնց առաջնորդ հանրասացող ընկերվարական կուսակցութիւնները դժնդակ պայմաններու տակ ուժեղ պայքար մղեցին շահագործողներուն դէմ :

Մայիս մէկի ցոյցերը յաճախ կ'արդիւնաւէին պետութեանց կողմէ՝ զինու զօրութեամբ :

Ի վերջոյ յաղթանակը տարին ընչազուրկները, որոնք այսօր արեւմուտքի քաղաքակիրթ երկիրներուն մէջ չարաչար կերպով չեն շահագործուիր այլեւս : « Ընկերային օրէնք»ները բաւարար չափով մարգպահել կանոք մը ապահոված են աշխատաւորներուն : Շահագործումը ի զէմ է իր նուագպահոյն ասպիճանին : Ընտանեկան նպաստ, ծերութեան թոշակ, բժիշկի ու դեղի դիւրութիւն, վճարովի արձակուրդ եւ այլ առաւելութիւններ զրեթէ նախանձելի վիճակ մը ապահոված են այսօր աշխատաւորներուն :

Ցաղթած է ընկերվարութիւնը արեւմուտքի մէջ :

Իսկ աշխարհի մէկ վեցերորդ մասին մէջ « ընկերվարութեան» անունով ան խղճօրէն կը շահագործուին դեռ բանուորները թէ դիւզացի բոլոր « պրոլեթար»ները :

« Մայիս մէկը» աշխատանքի փառաբանութիւնը չէ անոնց համար :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԺՐՆԵՒԻ ԺՈՂՈՎԷՆ ԱՌԱՋ

ԱՅՋԸՆՀԱՒՈՒԸՐ ԿԸ ՃՇԴԷ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԴԻՐՔԸ

«ԵՐԲԵՔ ՊԻՏԻ ՁԼՔԵՆՔ ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ »

Նախագահ Այզընհաուըր մամուլի ա-սուլիս մը տալով, վերջնականապէս ճըշդեց Միացեալ Նահանգներու դիրքը՝ Պերլինի տագնապին մէջ.— « Երբեք պիտի չձլքենք երկու միլիոն Գերմանացիները. ա-նոնց հանդէպ մեր պարտականութիւնները ընելու համար՝ մեր իրաւունքը պիտի պահենք» :

Միացեալ Նահանգներու Նախագահը մանրամասնութեանց մէջ չմտաւ : Արտաքին նախարար Հերթըր Փարիզի մէջ կը դրպռի հարցին « մանրամասնութիւն»ներով : Այզընհաուըր պարզեց իր քաղաքականութեան միայն դլխաւոր դիծերը :

Հաւանական է, որ յարուած կացութիւնը որոշ չափով մեղմանայ, բաւ Այզընհաուըր.— « Այդ մասին խօսեցայ Տըլըսի եւ Հերթըրի հետ. պիտի աշխատինք կարզադրութիւն մը ընել՝ որպէսզի Գերմանիա քայլ մը եւս յառաջդիմէ եւ կարենայ մտածել խաղաղութեան դաշնադրի մը մասին » :

Միւս կողմէ, Այզընհաուըր բաւ նաեւ թէ Տըլըսի հիւանդութեան առաջին իսկ օրերուն՝ որոշուած էր արդէն Հերթըրի նշանակումը, բայց վերջնական յայտա-րարութիւն մը ընելէ առաջ կը սպասէր բժիշկներու տեղեկագրին :

ՄԵԾԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մեծերու հանդիպումի իրականանալու ճամբուն վրայ կը դտնուի : Նախագահ Այզընհաուըր յայտարարեց թէ որեւէ պատճառով եթէ տեղի ունենայ Ուոշինկթըն մնալ՝ Նիքսըն կրնայ փոխարինել զինքը :

Խրուշչեւ նամակ մը զրած է Սան Ֆը-րանչիսքոյի քաղաքապետին, յայտնելով թէ ինք դէմ չէ որ մեծերու հանդիպումը տեղի ունենայ այնտեղ : « Եթէ բոլոր ժո-ղովականները համաձայն են որ հանդի-պումը տեղի ունենայ Սան Ֆրանչիսքոյի մէջ՝ Ս. Միութեան կառավարութիւնը ընդդիմանալու պատճառ մը չունի» :

Լոնտոնէն կը հաղորդեն թէ վարչապետ Մաքմիլըն թէեւ Վիէննան կը նախընտրէ, բայց եթէ միւսները Սան Ֆրանչիսքոյի մէջ կ'ուզեն ժողով դումարել՝ ինք ալ պատրաստ է :

Ամէն պարագայի մէջ, մեծերու հան-դիպումը միշտ կապուած կը մնայ Արտա-քին նախարարներու ժողովին հետ : Անգլիոյ Վարչապետին կարծիքը այն է թէ Ժընեւի մէջ մթնոլորտը որոշ չափով պիտի մեղմանայ : Իսկ եթէ պատահի որ Արտաքին նախարարները բոլոր հարցերու շուրջ համաձայնութիւն չդոյացնեն՝ մե-ծերու հանդիպումէն դուրս այլ միջոց չկայ : Այսինքն՝ նոյնիսկ ձախողութեան մը պարագային « Զորս»երը պէտք է խոր-հրդակցին :

Կը մնայ սպասել Փարիզի խորհրդակ-ցութեանց արդիւնքին՝ քանի որ Արեւ-մտեան երկիրներու մէկ մասը Մաքմիլընի կար-ծիքը չի բաժներ :

Ֆրանսա եւ Միացեալ Նահանգները Ար-տաքին նախարարներու ժողովին յաջո-ղութեան հետ կը կապեն մեծերու հան-դիպումը :

Անգլիա եւ Ս. Միութիւն կ'ուզեն ամէն դնով դումարել մեծերու ժողով մը՝ նոյն իսկ երբ Ժընեւի մէջ համաձայնութիւն չդոյանայ :

× Վարչապետի ժողովէն ետք, համայ-նավար երկիրներու եւ մասնաւորապէս Լեհաստանի ներկայացուցիչները կ'ուզեն քաջալերել Միացեալ Նահանգներու « չա-փաւոր» քաղաքականութիւնը : Լեհ դիւա-նագէտները մեծ յոյսեր դրած են Հերթը-րի վրայ : Վարչապետի թերթերը կը դրեն թէ Հերթըր « նախախնամական դեր կրնայ խաղալ, տարակարծութիւնները հարթե-լով ... » :

Մոսկուայի մէջ միշտ կը պնդեն թէ Գերմանիոյ հետ խաղաղութեան դաշինք մը կնքելու, Պերլինի եւ Եւրոպայի ա-պահովութեան հարցերը իրարմէ անջատ պէտք է ուսումնասիրել : Արեւմուտքը չուզեր բաժնել Գերմանիան ու Եւրոպան : Գլխաւոր տարակարծութիւնը՝ որ դոյու-թիւն ունի երկու աշխարհներու միջեւ :

Լեհերը կը յուսան որ Հերթըր պիտի յաջողի հաշտեցնել երկու թեւերը :

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Մայիս մէկի աշխատանքի տօնին առ-թիւ, Յառաջ այս չի տեսներ Ուրբաթ օր, տեղական բոլոր թերթերու նման : Մեր յաջորդ թիւը՝ կիրակի Մայիս 3 :

ՄՈՆԿՈՄՐԻ ԿՐԵՄԼԻՆԻ ՄԷՋ

Մառէշալ Մոնկոմըրի եւ Խրուշչեւ առա-ջի քանի երկու ժամ իսօսակցեցան Կրեմլինի մէջ : Մառէշալը յայտարարեց թէ հան-դիպումը տեղի ունեցած է « սքանչելի» մթնոլորտի մը մէջ եւ կարծիքի փոխա-նակութիւններ ունեցած են զրեթէ բոլոր հարցերուն շուրջ :

Քիչ մը տարօրինակ կը թուի այն պա-րագան, որ Խրուշչեւ Հինդշաբթի օր դարձեալ ընդունեցաւ Մոնկոմըրին, խո-սակցութիւնները չարունակելու համար :

Մառէշալ Մոնկոմըրի տեսակցութիւնները ունեցաւ նաեւ Ս. Միութեան պատերազ-մական նախարար Մալինովսքիի եւ մա-ռէշալ Սոքոլովսքիի հետ : Երեք զինուո-րականները միասին ճաշեցին՝ Սպաներու Ակումբին մէջ :

Առ այժմ պաշտօնական ոչ մէկ յայտա-րարութիւն կայ Մոնկոմըրիի եւ խորհրդա-յին զեկավարներու բանակցութիւններուն շուրջ : Բայց Անգլիոյ Թերթերը կը չա-րունակեն քննադատել զայն, մասնաւո-րապէս ծանրանալով Մոսկուա մեկնելէ առաջ ամերիկեան հեռատեսիլէն կատա-րած յայտարարութիւններուն վրայ :

Բրիտանական մամուլը անյարմար կը դտնէ ամերիկացի զեկավարներու մասին Մոնկոմըրիի կատարած յայտարարութիւն-ները :

Անգլիոյ պաշտօնական շրջանակները լրջօրէն մտահոգուած են լուրը Մոնկոմըրիի բռնած ընթացքէն : Կառավարութիւնը ո-չինչ կրնայ ընել այս ուղղութեամբ, ոչ արդելք կրնայ հանդիսանալ անոր ճամ-բորդութիւններուն եւ ոչ ալ « զրաքննել» իր կատարած յայտարարութիւնները, քանի որ ան ոչ մէկ պաշտօն ունի ներկա-յիս. հետեւաբար՝ ոչ օրէնքի առջեւ պա-տասխանատու է :

Արտաքին նախարարութեան բաները յայտարարեց թէ Մոնկոմըրի հանդուտեան կոչուած զինուորական մըն է : Ազատ է իր յայտարարութիւններուն մէջ, բայց պէտք չէ մոռնալ որ պաշտօնական բնոյթ չեն ներկայացներ անոնք

ՊԱՂՏԱՏԻ « Ալ Թալրա» Թերթը (ձախ աշխատաւորական) առաջին անդամ ըլլա-լով զրած է թէ Իրաքի դահլիճը պէտք է ընդլայնուի եւ համայնավարները մաս կազմեն կառավարութեան : Թերթը կ'ա-ւելցնէ թէ քիւրտ ներկայացուցիչներ ալ պէտք է ըլլան կառավարութեան մէջ : Միւս կողմէ Ալըն Տըլըս, ամերիկեան դաշտնի ոստոստրկութեանց պետը յայ-տարարեց Ժերակոյտի արտաքին յանձ-նախումբին առջեւ .— Իրաքի կացու-թիւնը աշխարհի ամէնէն վտանգաւորն է ներկայիս :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՉՕՐ. ՏԸ ԿՈՂ տեսակցութիւն մը ունե-ցած է « Լքօ տ'Օրան»ի ընդհանուր տնօրէ-նին հետ եւ կարեւոր յայտարարութիւն-ներ ըրած է ալժերիական իր քաղաքակա-նութեան շուրջ : Տը Կոլ չէշտած է թէ Ալ-ժերիան ֆրանսական է եւ թէ « ես մինակ կրնամ լուծում մը դտնել Ալժերիոյ հա-մար : Մեր ապագան փառաւոր կրնայ ըլ-լալ եթէ միացած մնանք » :

ԼԻԲԱՆԱՆ պատրաստ է միջամտելու Ալժերիոյ խնդրին կարգադրութեան հա-մար : Հանրօգուտ չինութեանց նախարար եւ քրիստոնեայ պարագլուխ՝ Փիէր Ժե-մայէլ յայտարարեց Նետա էլ Վաքաո թերթին .— « Պատրաստ ենք նման մի-ջամտութեան մը համար, որովհետեւ Լի-բանանի որդեգրած չէզոքութիւնը, արա-բական եւ միջազգային դետնի վրայ կը նպաստէ նման պարագայի մը » :

ՖԵՐԱՒՆ ԱՊԱՍ, « Ալժերիոյ կառավա-րութեան վարչապետ» Պէյրութ հասաւ : Իրեն կ'ընկերանան երեք « նախարար-ներ» : Լաւատեղեակ աղբիւրներու համա-ձայն Ապասի այցելութիւնը որոշ կապակ-ցութիւն մը ունի Ժեմայէլի յայտարարու-թեան հետ :

ՄՈՍԿՈՒԱՅի ձայնասփիւռը թրքերէն լեզուով աղդարարութիւն մը ըրաւ Թուր-քիոյ՝ դգուշացնելով զայն հեռաւար հըր-թիռներու արձակարաններու հաստատ-մամ դէմ : Ձայնասփիւռը աւելցուց թէ այդ ձեւով նոր վտանգ մը եւս կ'ուզել նոյ Միջին Արեւելքի մէջ եւ տագնապը աւելի կը ծանրանայ :

ՀԱՅԱՍՏԱՆի եւ Թուրքիոյ սահմանին վրայ կորուսած անգլիական օդանաւը դտնուեցաւ : Վանայ լճին հիւսիսը՝ Սի-փանայ լերան վրայ (4300 մեթր), տես-նուած են օդանաւի մը կտորները : Լոն-տոնի մէջ յայտարարեցին թէ 17 հոգինոց խումբ մը մեկնած էր դէպի Տիգրանակերտ օդնութեան փութալու համար :

ՓԱՆԱՄԱՅի մէջ կացութիւնը ծանրա-ցած է : Ընդհանուր գործադուլի կոչ ե-ղած է Մայիս երեքի համար : Ուսանող-ները զօրավիդ կը կանդնին յեղափոխա-կաններուն : Կառավարական շրջանակները չեն ծածկեր իրենց մտահոգութիւնները :

ՀՌՈՄի մէջ պաշտօնական բացումը կատարուեցաւ « Վիա Փառիճի»ին (Փա-րիզի փողոց) առջի օր : Փողոցը կը զա-նուի կայարանին մօտ :

ՄԱՌԵՇԱԼ ԺՈՒԿՈՎ կոչ մը ուղղեց աչ-խարհի բոլոր նախկին ռազմիկներուն որ-պէսզի հաւաքուին Լուբա, յառաջիկայ Սեպտեմբերին : Այս թուականը (Օգոստ. 30էն Սեպտ. 5) կը զուգադիպի երկրորդ աշխարհամարտի 20րդ տարեդարձին : Մառէշալը ըսած է այս կոչին մէջ թէ Լուբաը ընտրած է իրրեւ Ուխտի վայր, ո-րովհետեւ .— « Ամէն ցեղի եւ ա-մէն զաւանանքի մարդոց համար, Լուբաը հոգեկան մեծ կեդրոն մըն է, խաղաղու-թիւն ծնող, ուր բոլորը կրնան հաւաք-ուիլ նոյն մտածումով » :

ՓԱՐԻԶ հասաւ Մարոքի դահաժառան-գը՝ իշխան Մուլէ Հասան, բայց մերժեց որեւէ յայտարարութիւն ընել : Իշխանը որ Գահիրէէն կուգար յայտարարած էր թէ դիպլոմական մայրաքաղաքէն մեկնած ա-տեն թէ « Միջին Արեւելքը ամբողջովին կախում ունի Արաբ. Միացեալ Հանրա-պետութենէն » :

ՊԱՌԶԵԼՈՆԱ. – Մատրիտ օդանաւը ին-կաւ եւ 27 հոգի մեռան :

ՆԻՒՐԵՄԲԵՐԿԻ մէջ (Գերմանիա) դը-բաւուեցան « Նացի Գերմանիոյ ճառերն ու երգերը» անունով սալերը, որոնք պատ-րաստուած էին Ամերիկայի մէջ : Սալե-րուն մէջ կան Հիթլերի ճառերը : Հակա-ռակ անոր որ այս սալերը չատ սուղ են՝ բացառիկ յաջողութիւն դտած են ժողո-վուրդին մէջ... եւ սալավաճառները կը բողոքեն դրուած արդելքին դէմ :

ՅԱՂԹԱՀԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏ որ Ֆրգեն Գասիեի Խորհրդային Միության Նախագահ Ն. Ի. Վի Ե. Հնտոնովի «Ռեվոլյուցիոն Ռուսսիե» — «Հեղափոխական Ռուսաստան» — «Հեղափոխական Հայաստանի Ռուսաստանի Հայկական Ռուսաստանի Հայկական Ռուսաստանի Հայկական

ԿՅՈՒՐԻ

Ֆ. ՀԱՅԱՐ

Լ.Ե.

Եթե մի հոգեկան ուժ կա, որ կարող է մեզ հետ խոսել մեր մահից հետո, ապա ես կցանկանայի, որ այդ ուժը ինձ հետ խոսեր ոչ թե մահից հետո, այլ հիմա, երբ ես դեռ ապրում եմ, որովհետև ես ուզում եմ ապրել, ես սիրում եմ կյանքը, ես ուզում եմ ապրել, ապրել, ապրել...

Ես ուզում եմ ապրել, որովհետև ես ունեմ մի գործ, որ ինձանից ոչ ոք չի կարող կատարել, ոչ ոք չի կարող ինձ փոխարինել, ոչ ոք չի կարող ինձ տեղակալել, ոչ ոք չի կարող ինձ փոխանորդել։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Սամուէլ Մուրատեան վարժարանի տես–չուհիները, Մխիթարեան Միաբանութեան եւ վարժարանի անմոռանալի բարեկա–մին, հանդուցեալ Տոքթ. Արամ Ճինճեա–նի քառասունքին առթիւ՝ Մայիս 24ի կի–րակին, առաւօտեան ժամը 10·30ին, հո–գեհանդստեան պատարագ եւ պաշտօն պի–տի կատարէ վարժարանի Մատրան մէջ։

Փափաքողները կրնան ներկայ գտնուիլ։

×

Արաքսի, Սեդա, Արմիկ Ջամալեան, Եղիա Թասլաճեան, Թորոսեան եղբայր–ները եւ քոյրերը, իրենց ընտանիքներով, կը յայտնեն թէ այս Կիրակի (Մայիս 3), Փարիզի Ս. Հ. Մ. եկեղեցիին մէջ, Սուրբ պատարագէն ետք, հոգեհանդստեան պաշ–տօն պիտի կատարուի ի յիշատակ իրենց մօր, զոքանչ մօր, մեծ մօր, քրոջ եւ ազ–գականին՝

ՈՂՔ. ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԹԱՍԼԱՃԵԱՆԻ
(Ծննալ Թորոսեան)

մահուան քառասունքին առթիւ։

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգող բարեկամներն եւ համակիրները։

×

Այրի Տիկին Անիկ Աբրահամեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Յակոբ Գու–յումճեան, Ժամկոչեան, ընտանիքները կը ծանուցանեն թէ այս Կիրակի հոգե–հանդստեան պաշտօն պիտի կատարուի ի–րենց մօտ, Հօր, Ահարոն Աբրա–համեանի մահուան քառասունքին առթիւ։ Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ մէջ։ Հանդուցեալին յիշատակը յարգող–ները կը հրաւիրուին։

×

Այս Կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, հոգեհանդստեան պաշտօն պիտի կատարուի ողբացեալ
ՎՐՈՅՐ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
յիշատակին։

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան վարչութիւնը, յանուն բոլոր հայրենա–կիցներուն իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հայրենակից Այրի Տիկին Մարիամ Ալեանաքեանի մահուան առթիւ, իր զաւակներուն եւ բոլոր պարագաներուն։

×

Վիէն.— Տէր եւ Տիկին Դ. Երամեան իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտ–նեն ողբ. Լեւոն Քէչիշեանի ընտանեկան պարագաներուն, եւ այս առթիւ փոխան ծաղկեպսակի հազար ֆրանք կը նուիրեն Վիէնի Կ. Ա. դպրոցներուն։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Քէչիշեան եւ զաւակները, ինչպէս նաեւ Լուիքիկ Քէչիշեան, Դայ–եան, Ճղիկեան, Ալոյեան եւ Բազդասար–եան ընտանիքները իրենց խորին շնորհա–կալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որ իրենց մասնակցութիւնը բերին ԼԵՒՈՆ ՔԷՇԻՇԵԱՆԻ յուղարկաւորութեան։

ՀԱՅԿ. ՇԱՐՃԱՆԿԱՐԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Կազմակերպուած Սեբաստիոյ ճահաճ–գային ՄՈՒՐԱՏ Ուսումնասիրաց Միու–թեան Մարսէյլի մասնաճիւղի կողմէ։

Ի նպաստ իր արդեղրած սաներուն։

Այս Կիրակի առաւօտ ժամը 9ին, նոյն սինեմային մէջ։

39, Բիւ տը լ'Արպրը, Մարսէյլ։

Պիտի ցուցադրուի « ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ » եւ վաղէն Ա. Կաթ. Ծ. Օծումը Էջմիածնի մէջ։

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏՋ. ԵԿԵՂԵՑԻ

20, RUE JEMMAPES

Պաշտամունք՝ այս Կիրակի ժամը 9·30–ին՝ Սէն ժերմա, ժամը 10·45ին Մարսէյլ։ Կը խօսի Վեր. Յ. ՀԵԼՎԱՃԵԱՆ։

ՋՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
EXPERTISE GRATUITE
Ծախելու համար
ձեր փավիյօնը, վիլլան,
յարկաբաժինը կամ խանութը։
J. TORANIAN
18, AVENUE DE L'OPÉRA
OPE 73-21 OPE 19-45

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

Ե''ՄԱՅԻՍ 28''Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միջնեւ լոյս)։

Վեցերորդ Թաղապետարանի սրահնե–րուն մէջ, Փլաս Սէն Սիւլփիս։

ԿԱՊՈՅՏ ԽԱՋԻ ԵՐԵՍՆԱՄԵԱԿԸ
ՎԻԷՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Վիէնի մասնաճիւ–ղին, Մայիս երեքին, կէսօրէ ետք ժամը երեքին Սէրքըլը Կաթոլիկ սրահին մէջ։

Կը նախագահէ ընկերուհի Ա. ՄԱՂԱՔ–ԵԱՆ։ Կը խօսի ընկերուհի Ա. ՍԻՍԼԵԱՆ (Կրընոպլէն)։

Գեղարուեստական խնամուած բաժին մասնակցութեամբ երեք ղպրոցներու ա–շակերտութեան եւ Հ. Յ. Դ. Նոր Սե–րունդին։

Մուտքը ազատ է։

ՀԱՆԴԻՍ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Կազմակերպուած Կայս. Խաչի Փորթ տ'Իթալիի մասնաճիւղի կողմէ։

3 Մայիս, Կիրակի կէսօրէ վերջ ժամը երեքին, Կղերականներու սրահին մէջ,

32, RUE DANTON· KREMLIN-BICETRE

Կը ներկայացուի «ԹՈՐՈՍ ԾԱՌԱՆ»

Նոր Սերունդի Առնուէիլի «կառավա–րնոց» խումբին կողմէ։

Գեղարուեստական բաժնին կը մասնակ–ցին.—

ԵՐԳ՝ Օր. Ա. Քէօսէեան եւ Պ. Մ. Գա–բակէօզեան։

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ՝ Օր. Շ. Յովհաննէսեան։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՐ՝ Պ. Ա. եւ Օր. Պաղ–տասարեան։

Մուտք 200 ֆրանք։

Հաղորդակց. միջոցներ.— Իջնել Փորթ տ'Իթալի, հանրակառք թիւ 185 եւ 147 եւ իջնել Բիւ Քոնվանսիօն։

ԱՊՐԻԼ 11–24Ի 44ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՈՒԹԻՒ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԳԱՏՕՆ
ՏԷՄԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. ՏԷՄԻՆԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ։

Մասնակցութեամբ՝ վաստպրականի երիտասարդաց երկսեռ միութեան, Տա–րօն – Տուրուբերան Հայր. Միութեան, Սեբաստիոյ «Մուրատ» Ուսումնասիրաց Միութեան, Խարբերդի Հայր. Միութեան, Կրօնական Ընկերակցութեան, Ֆ. Բահչէի Նախկին Ռազմիկներու Միութեան, Հայ Կամ. եւ Մարտիկներու Միութեան, Ֆր. Կաթ. Խաչ, Հ. Մ. Ը. Մ., կրթական մարմին, Հ. Յ. Դաշնակցութեան։

Այս Կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին, Հ. Յ. Դ. Տան մէջ։

Կը նախագահէ Պ. Լ. ԱՄԱՏՈՒՐԵԱՆ

Կը բանախօսէ Պ. Ա. ԿԻՒԼԳԻՆԿԵԱՆ

Գեղարուեստական պատշաճ բաժին։

ԾԱՆՕԹ.— 1 Մայիս 1959 Ուրբաթ ա–ռաւօտ ժամը 8·30ին հոգեհանդստեան պաշտօն եւ պատարագ, ընդհ. հանգստա–կաց համար։

ՀԱՅ ԱՔՕՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, RUE THOUIN

Այս Կիրակի, ժամը 10·30ին Հայ Կա–թողիկէ եկեղեցիին մէջ, Հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ ԳԵՐՑԱՐԳԵԼԻ ՊՕՂՈՍ Վ. ԱՐԻՍ քահա–նապետ Պարտ Համուսի ի Պէյրութ։

AU BEAU NOYER



Salles de séjour — Penderies - literie
Chambres - cosys — Cuisines laquées
Salons-tapisserie — Fauteuils-canapés-lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵՆ
ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԶՐԻ ՅԱՆԶՆԵԼԻ ՖՐԱՆՍԱՑԻ
ԱՄԷՆ ԿՈՂՄԸ
185, BD. J. JAURES
15, AV. A. MORIZET
Boulogne - Billancourt
Métro : MARCEL SEMBAT
Mol. 06-03 et 60-38

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ
ՄԱՐՍԷՅԼ

Գրական Ասուլիս նուիրուած Կ. Փօլատ–եանի նոր վէպին՝ ԱՐԾԻՒՆԵՐԸ ԱՆԱՊԱ–ՏԻՆ ՄԷՋ։

Այս Շաբաթ երեկոյ, ժամը 21ին, Ֆրանս. Համալսարանի ամփիթեատրոնը (40 Ալէ Կամպէթա)։

Կը նախագահէ Պ. Արամ Թէրզիպաչ–եան, վէպը կը ներկայացնէ Պ. Աստուր Քէօսէեան։ Կը վերլուծեն Պ.–Պ. ՇԱՒԻԱՐՇ ԹԱՇՃԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅԵԱՆ եւ ԺԻՐԱՅՐ ՄԻՐԻՃԵԱՆ։

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ – ԹԱՏԵՐԱԿԱՆ

ՋՈՒԱՐԹ ՑԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Մարսէյլ – Պոմպոնի Նոր Սերունդի «Քրիստափոր» խումբի կողմէ։


Այս Կիրակի կէսօրէ ետք ժամը 3·30ին,

SALLE D'ATHÉNÉE
15, AVENUE DE LA VICTOIRE, NICE

Կը ներկայացուի կատակերգութիւն մը՝
ԵՐԿՈՒ ԽՈՒԼԵՐԸ

Կը բեմադրուի առաջին անգամ ըլլալով՝
ՀԱՅ ԳԵՂՋԿԱԿԱՆ ՊԱՍԱԿ

ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՄԵԼԻՆԵՐ



REMINGTON "Princess"
— Մասնաւորապար —
ԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
պատրաստուած մօտէլը

REMINGTON "Super 60"
— Ա Մ Է Ն Է Ն —
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾԸ
Super-confort du rasage électrique

REMINGTON IV
Բոլոր պիւտճէներուն
մատչելի ՄՕՏԷԼ մը
Ա Ն Ն Ա Խ Ը Ն Թ Ա Ց
ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ

Services Commerciaux Rasoirs Electriques
12 Rue Edouard VII Paris - 9e

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՄԻՇՏ ԱՌՈՂՋ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՌԵՑԷՔ
BOSPHORE
ՀԷԼՎԱՆ ԵՒ ԹԱՀԻՆԸ

ՀՐՈՒՇԱԿԸ, որ կը պատրաստուի շուշմայով (*սուսամ*) եւ շաքարով, առաջնակարգ սնունդ մըն է, կազդուրիչ՝ շնորհիւ շուշմային, որ Արեւելքի մէջ ծանօթ է նաեւ հինէն ի վեր, իր հրաշալի բուժական յատկութիւններով, իր երիտասարդացնող տարրերով,


Արեւելեան ժողովուրդներուն երկարակեցութիւնը արդիւնք է Հէլվայի եւ թահինի գործածութեան։

Այսօր Արեւմուտքի մէջ եւս բժշկական հեղինակութիւններ կը հաստատեն առաջնակարգ այս սննդանիւթին արժէքը։

Sté BOSPHORE (ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՏԱԴՐԻՉԸ)
2, Rue Louis Astoin - Marseillle

Հիմնադիր–Տնօրէն ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ
ՃԱՇԱՐԱՆ ԵԱՐ
Ֆրանսական – Հայկական եւ կովկաս–եան ընտիր կերակուրներ

4, RUE ROBERT-ETIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e
TÉL. : BAL. 31 21
ՇԱՆ ՋԷԼԻԶԷԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՑ
Métro : F. D. Roosevelt
Հաճելի մթնոլորտ
Առաջնակարգ կովկասեան խորոված–ներ, «շաշլիք», «քարսքի»
Bar Américain



ՑՈՒՇԱՑԵՑՔ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ շրջաններու մարմիններու ներկայացուցիչները այս Շաբաթ, ժամը 20·30ին, Մշակոյթի Տան մէջ, 17 Բիւ Պիէօ, մէթրօ Քատէ։ Օրակարգ.— Շրջ. ժողովի օրակարգի հարցերու ճիւնւորիւն։

ԼԻՈՆ.— Հ. Յ. Դ. Վարանդեան կո–միտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Կիրակի կէսօրէ ետք, ժա–մը երեքին, ընկեր Շ. Խաչատուրեանի բնակարանը, հասցէ.— 7 Ռէ Փիէր Ժէզ։ Ներկայ պիտի ըլլայ Կ. Կ.ի ներկայացու–ցիչը։ Պարտաւորիչ ներկայութիւն։ Ճըշ–դապահ ըլլալ։

ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԻՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Մեծ եղեռնի Սպահանդէ–սի կազմակերպիչ մարմինը կը հրաւիրէ, ժողովի, բոլոր հայրենակցական եւ երի–տասարդական Միութեանց ներկայացու–ցիչները, այս երկուշաբթի 4 Մայիս, ե–րեկոյեան ժամը 9ին Հ. Բ. Ը. Մ. սրա–հը։ (Բիւ Վանթիւր 19ա)։

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար· 4000 ֆր·վեց·2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր·

ԿԻՐԱԿԻ
3
ՄԱՅԻՍ
DIMANCHE
3 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8385 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4286

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԵԼՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ

Հարիւր տարի առաջ Բալուի հայաբնակ անչուն մկկ դիւղին մէջ աշխարհ կուգար Մելքոն Կիւրճեան, որ ժԹ· դարու ութսունական թուականներէն սկսեալ հոյլ մը դրոշներու հետ արեւմտահայ դրականութեան երկնակամարին փայլուն աստղերէն մէկը պիտի ըլլար :

Կանուխէն պանդխտած Պոլիս, — ինչպէս տասնեակ հազարաւոր դաւառացիները — Կիւրճեան Սկիւտարի ձեմարանին եւ Ս· Խաչ վարժարանին մէջ ուսանելէ վերջ, կը նուիրուէր ուսուցչական ասպարէզին, լաւագոյնս ծառայելու համար իր ազգին, զոր կը պաշտէր :

Փոթորկալից կեանք մը վերապահուած էր իրեն :

Թունդ հայրենասէր, յեղափոխական, մանաւանդ դաշնակցական գործիչներու հետ իր սերտ յարաբերութիւնները կասկածելի էին դարձուցած զինքը յաչս համիտեան լրտեսներուն, որոնց հետապնդումէն կ'ազատի հրաշքով 1896ի արիւնոտ նոտ օրերուն՝ վառնա ապաստանելով : Հայց երկու տարի վերջ Պոլիս վերադարձին ձերբակալուելով բանտի եւ աքսորի (Գասթեմունի) տառապանքները ցմրուր կը քամէ ամբողջ տասը տարի (1898 — 1908ի Օսմ· Սահմանադրու-թիւնը) :

Գործունէութեան նոր ասպարէզ մը կը բացուէր իր առջեւ՝ իբրեւ դրագէտ, ուսուցիչ եւ հանրային գործիչ : Հաղիւ եօթը տարի առիթ կ'ունենայ իր բազմակողմանի տպաղրը ի սպաս դնելու յօդուտ հայ ժողովուրդին՝ վերածնունդի այն անմոռանալի շրջանին, որ սկսած էր Ազատութենէն վերջ :

Բանտէն ու աքսորէն ազատուող Կիւրճեան՝ 1913 ապրիլ 11/24ի չարաշուք դիշերը կը ձերբակալուէր իր հարիւրաւոր մտաւորական ընկերներուն հետ եւ կը տարուէր Ակնի սպանդանոցը :

Տակաւին 56 տարեկան էր, ֆիզիքական ու մտաւորական ուժերու կատարեալ լրութեան մէջ՝ երբ նահատակուեցաւ անարդ դահիճին ձեռքով :

Կիւրճեան իսկական ներկայացուցիչն էր իրապաշտ դրականութեան :

Արեւմտեան Հայրիկ, Գարեգին Սրուանձտեանց, Թլկատինցին, Գեղամ եւ Զար-դարեան դաւառի մասին կը դրէին բուն իսկ երկրէն :

Մելքոն Կիւրճեան դաւառը դասած էր Պոլսոյ խառներուն մէջ, ուր անլուր տառապանքներու եւ ծայրայեղ թշուառութեան մէջ կ'ապրէին հաղարաւոր Ղարիբ պանդուխտներ :

Գաւառացի դրագէտը՝ Հրանդ ծածկա-նունին տակ՝ սրտաճմլիկ տողերով կը պատկերացնէր անտանելի կեանքը բախտէն հալածական այդ կտրիճ երիտասարդներուն, որոնք հայրենիքի մէջ ձգած նորապսակ հարս, հայր, մայր, քոյր ու եղբայր, նետուած էին մայրաքաղաքին համայնակուլ յորձանքին մէջ, ճակատի քրտինքով պատուոյ մը հաց ճարելու եւ ընտանիքին քանի մը դրուշ օգնութիւն կարենալ հասցնելու յոյսով :

Պոլսահայերու «աղնուական դասակարգը» արհամարհանքով կը դիմաւորէր այդ խեղճ «պատառացի»ները, որոնք խանութ-րու աղտոտ ու վատառոդջ սենեակներուն մէջ կը հիւծէին անսուաղ, լքուած բոլորէն :

Հրանդ իր հուժկու դրիչով ցնցող հատուածներու ամբարտաւան դասակարգը եւ դատափետեց պատրիարքարանն ու ազդային իշխանութիւնները, որոնք անտարբեր էին եւ անկարեկից՝ այդ դժբախտ Հայորդիներու անլուր թշուառութեան հանդէպ :

Նահատակ Դրագէտներու Բարեկամութիւնը 1931ին իրենց մատենաշարին երկրորդ հատորը նուիրեցին Կիւրճեանի Պանդուխտի կեանքէն առնուած հոյակապ էջերուն, հատքելով զանոնք Մասիսի, Հայրենիքի, Արեւելքի եւ այլ անզտանելի դարձած Թերթերու մէջէն :

Իր ծննդեան հարիւրամեակին առթիւ պիտի բազմայինք, որ մեծ հատորի մը մէջ ամփոփուէին իր ամբողջական եր-կերը : Աւելկա առիթ պիտի ընծայէր նոր սերունդին լրիւ ճանչնալու եւ դնահատելու այս աննման դրագէտը :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԱՅԻՍ ՄԷԿԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

Աչխատանքի ոտնը արժանաւոր չուքով տնուեցաւ բոլոր երկիրներու մէջ :

Աւանդութեան համաձայն՝ Փարիզի Հալերու Թաղուհին Մայիս մէկի խորհրդանչան հովտաշուչան մը տարաւ Հանրապետութեան Նախագահին, ինչպէս նաեւ պատուղներ՝ զոր կը նուիրեն Ա· Թագամասի առեւտրականները, Տօնական յանձնախումբը եւ Թաղապետարանը :

Նախագահ Տը Կոլ կարճ ճառով մը շնորհակալութիւն յայտնեց պատուիրակութեան՝ որ մայիսեան նուէրները էլիզէ տարած էր :

ԱԼԺԵՐԻԱ.— Ոչ մէկ ցոյց Ալժէլի մէջ : Ամառնային արեւէն եւ արձակուրդէն օգտուելով, Ալժէցիները ծովափ խուժած էին : Բանուորական Ուժը (ընկերվարական) միայն ժողով դումարեց եւ բանաձեւուած իր առաջարկները յանձնեց Տըլուվրիէի ներկայացուցիչին եւ Ալժէրի ոստիկանապետին :

Փարիզի մէջ Աչխատանքի Դաշնակցութեան (համայնավար) եւ Ֆրանսայի համայնավար կուսակցութեան կոչին պատասխանելով մօտ տասը հազար հոգի հաւաքուած էին Պուբս Տիւ Թրավայի առջեւ : Ասոնցմէ՝ Աչխատանքի Դաշնակցութեան ընդհանուր քարտուղար Պընուա Ֆրաչըն, Խօժէն Հէնաֆ, Էշնի եւ Լէոն Մոլէ : Բոլորն ալ ծանրացան Ալժերիոյ խաղաղութեան վրայ, խոստանալով պահպանել ընկերային մարզերու մէջ ձեռք ձգուած առաւելութիւնները՝ պայքարելով կառավարութեան դէմ ...:

Ֆրանսայի այլ շրջաններուն մէջ, ինչպէս՝ Մարսէյլ, Քլէռմոն — Ֆերան եւ Լիլ, բանուորական կազմակերպութիւնները իրարմէ անկախ ժողովներ դումարեցին եւ կազմակերպեցին հրապարակային ցոյցեր ու հանդիսութիւններ :

ՄՈՍԿՈՒԱ.— Կարմիր Հրապարակին վրայ աւանդական տողանցքը տեւեց 41 վայրկեան : Օդանաւերն ու հրթռայլերը ցուցադրութիւն չըրին : Խրուչչեւ, իսկ — հրդային կառավարութեան եւ համայնավար կուսակցութեան բարձրաստիճան դէմքերուն հետ ներկայ եղաւ պիոնուորական տողանցքին : Պատերազմական նախարար Մալինովսքի բուռն ճառ մը խօսեցաւ, մասնաւորապէս չէշտելով :— «Աչխարհի վրայ ուժ մը զօրութիւն չունի՝ որ ընկերվարական աչխարհն ուժէն զրկելի պատրաստ ենք՝ եւ մղելու համար ռեւ Թշնամիի յարձակումը » :

ԳԵՐՄԱՆԻԱ.— Արեւելեան Պերլինի մէջ՝ պիոներական տողանցք, 30 վայրկեան : Հիւրերուն մէջ կը դանուէր հա-մայնավար Զինաստանի Պատերազմական նախարար Փէնկ Թէհ - Հիւէյ : Արեւմտեան Պերլինի մէջ քաղաքապետ Ուիլի Պրանտ ճառ մը խօսեցաւ, անդամ մը եւս մերժելով Խրուչչեւի առաջարկները՝ Պերլինի մասին :

ՓԵՇՏԱ.— 500·000 հոգի տողանցեցին՝ մօտ երեք ժամ : Փողոցներու մէջ դեռեւուած էին ուրիչ երկիրներու համայնավար ղեկավարներու նկարները· այս տա-

(Շար·ը կարդալ Դ· էջ)

ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԶՈՐՍԵՐՈՒ ՄԻՋԵԻ

Արեւմտեան Արտաքին Չորս նախարարներու ժողովը վերջացաւ Հինգչաբթի օր : Կատարեալ համաձայնութիւն գոյացած է չորս երկիրներու միջեւ՝ Ժընեւի մէջ Արեւմտեաններու բռնելիք դիրքին շուրջ : Նախարարները պարզ հանդիպում մը պիտի ունենան նաեւ Մայիս տասնին, Ժընեւի ժողովէն օր մը առաջ, կարծիքի փոխանակութիւններ ունենալու համար :

Պաչտօնական զեկոյցի մը մէջ կը յայտարարուի թէ ժողովը անցած է շատ լաւ մթնոլորտի մը մէջ· ոչ մէկ վէճ՝ բոլոր կէտերու շուրջ համաձայնելու համար :

Դիւանագիտական շրջանակներու ուշադրութիւնը գրաւած է այս ժողովին արագութիւնը : Արդարեւ, մէկուկէս օրը բաւական եղաւ որ Արտաքին նախարարները յայտարարեն թէ կատարեալ համաձայնութիւն մը կը տիրէ իրենց միջեւ :

Գրեթէ բոլոր շրջանակներն ալ դոհունակութիւն կը յայտնեն ժողովին արդիւնքին համար :

Ամերիկեան պատուիրակութեան բանբերը յայտարարեց թէ· «Չորս»երը մեծ յաջողութիւն մը արձանագրեցին : Գերմանացիները անվերապահ համաձայնութիւն յայտնած են Հերթերի ներկայացուցած ծրագրին :

Անգլիական շրջանակները կ'րսեն թէ փարիզի ժողովին արդիւնքը՝ չորս դաչնակիցներու տեսակէտներուն խտացումն է :

Հակառակ այս բոլորին, կը կարծուի թէ Արեւմուտքի առաջարկները պիտի մերժուին Ռուսերու կողմէ :

Պաչտօնական զեկոյցին մէջ Արեւմտեաններուն անդամ մը եւս կը հաստատեն՝ թէ Արեւմտեան Պերլինի պատուէրները պիտի պահպանուի եւ դաչնակիցները իրենց իրաւունքները պիտի պահեն այն-տեղ :

ՄՈՆԿՈՄԲԻ ԼՈՒՏՈՆ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ

Մառեչալ Մոնկոմբի երեք օր Մոսկուա մնալէ յետոյ Լոնտոն վերադարձաւ : Երկու անդամ տեսակցութիւն ունեցած էր Խրուչչեւի հետ :

Վերադառնալէ առաջ մամուլի ասուլիս մը տուաւ Մոսկուայի մէջ, ուր յայտարարեց թէ Խրուչչեւ նամակ մը տուած էր իրեն՝ Վարչապետ Մաքմիլլընի յանձնելու համար :

Մոնկոմբի մերժեց խօսիլ նամակին պարունակութեան մասին : Այսուհանդերձ պատասխանեց լրագրողներու կարգ մը հարցումներուն·

— Երբ Լոնտոն վերադառնաք Մաքմիլլընի հետ պիտի տեսնուի՞ք :

— Իրմէ կախում ունի :

— Լաւատե՞ս էք միչտ :

— Միչտ լաւատես եմ : Գիտէք որ Իռլանտացի եմ ...

Այնուհետեւ իր տպաւորութիւնները յայտնած է Մոսկուայի մասին՝ մասնաւորապէս ծանրանալով 1947էն ի վեր եղած չինութեանց վրայ :

Լոնտոնի մէջ Մոնկոմբի հարցազրուցաւ ամերիկեան հեռատեսիլէն Այզընհաուըրի, Տըլլըսի եւ Հերթըրի մասին կատարած յայտարարութիւններուն ձգած տպաւորութեան շուրջ : Մառեչալը «նեղողութիւն» խնդրեց :— «Քանի որ ամէն րիկացի բարեկամներս վերաւորուած են ըսածներէս՝ բոլոր խօսքերս ետ կ'առնեմ : Ամբողջ սրտով ներողութիւն կը խնդրեմ եւ կը յուսամ թէ ամերիկացի բարեկամներս նեղած են ինծի՝ ըսածներուս համար » :

Ինչպէս ծանօթ է, Մոնկոմբրի աննը պատճառ եղած էր Արեւմտեան մամուլին մէջ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳԵՐՄԱՆԻՈՅ Վարչապետ Ատենաուըր իսաալականհեռատեսիլէն յայտարարեց թէ « Ֆրանսայի նման Արեւմտեան Գերմանիան ալ համաձայն է որ Սպանիա մտնէ կազմէ Հարաւատեան Ուխտին» : Միւս կողմէ Անգլիոյ Արտաքին նախարարութեան բանբերը յայտարարեց թէ Սպանիան Հարաւատեան Ուխտին մէջ ընդունելու համար՝ պէտք է ժողով մը դումարել· ծանօթ է, որ Լոնտոնի կառավարութիւնը դէմ է այս ծրագրին : Իր կարգին զօր· Ֆրանքօ յայտարարեց թէ «Սպանիա այլեւս մեկուսացած չի կրնար մնալ » :

ՖԵՐԱՒ ԱՅԱՍ, Պէյրութէն մեկնելէ առաջ, մամուլի ասուլիս մը տուաւ : Կը թուի թէ «Ալժերիոյ կառավարութեան » վարչապետը չյաջողեցաւ դրամական օժանդակութիւն մը ապահովել Լիբանանէն : Մամուլի իր ասուլիսին ընթացքին Ապաս չէշտեց :— «Գիտենք թէ չենք կրնար Ֆրանսացիները ծովը նետել : Մեր նպատակն է՝ ճնշում բանեցնել միջազգային հանրային կարծիքին վրայ որպէսզի Ֆրանսան ընդունի, անկախութեան մեր իրաւունքը : Պատրաստ եմ Փարիզ երթալու եւ Տը Կոլը տեսնելու : Պատրաստ ենք նաեւ բանակցութիւնները սկսելու առանց իրրեւ նախապայման ունենալու անկախութեան ճանաչումը » :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին փոխ նախարար նշանակուեցաւ Տիլըն, Փարիզի ամերիկեան նախկին դեսպանը : Նախապէս այս պաչտօնը կը վարէր Հերթըր :

ԱՄԵՐԻԿԱ. խոստացաւ օգնութիւն տալ Ինտոնեզիոյ կառավարութեան, պայմանաւ որ անոնք չդործածուին ուրիչ երկիրներու վրայ յարձակում դործելու համար :

ԻՏԱԼԻՈՅ բոլոր քաղաքներուն մէջ հանդիսաւոր պատարագ եւ հոդեհանդիսութիւն կատարուած է Մուսոլինիի եւ 1945 Ապրիլ 28ին դնդակահարուած Ֆաչիստ այլ դեկավարներու յիչատակին՝ Ընկերային Շարժումի (Նէօ - Ֆաչիստ) նախաձեռնութեամբ : Ոչ մէկ միջադէպ պատահած է :

ԳԱՀԻՐԷԻՆ կը հաղորդեն որ ափրիկեասիական տնտեսական կազմակերպութեան խորհրդակցական կոմիտէն որոչած է մերժել Ս· Միութեան մասնակցութիւնը այս կազմակերպութեան դործունէութեան : Լատտեղեակ շրջանակները կը կարծեն թէ այս որոչումը նոր հանդրուան մէն է Ս· Միութեան եւ արաբական աչխարհի խզումին մէջ :

ԽՐՈՒՇՉԵՒ արժանացաւ 1959ի լենինեան «խաղաղութեան մրցանակին» :

ՖՐԱՆՍԱՅԻ մէջ երկաթուղիի ընկերութեան պաչտօնեաները դործադուլի սրտնչում տուած են չորեքչաբթի օրուան համար (Մայիս 6) :

ՊԱՂՏԱՏԻ Ուխտին Խորհուրդը որոչեց Անդարա փոխադրել իր կեդրոնատեղին : Մինչեւ Իրաքեան յեղափոխութիւնը (Յուլիս 14) կեդրոնը՝ Պաղտատ էր :

ԹՈՒՐՔԻՈՅ մէջ ծանր միջադէպեր պատահեցան : Ուչաքի մէջ (Անգարայէն երեք հարիւր քիլոմեթր) Իսմէթ Ինէօնիւ (Հալքի պարադլուխ) բուռն ճառ մը խօսեցաւ քննադատելով կառավարութիւնը : Ժողովուրդը անմիջապէս յարձակեցաւ տեղւոյն կառավարական կուսակցութեան կեդրոնին վրայ (Դեմոքրաթ), քարեր նետելով : Ոստիկանութիւնը միջամտեց կարգը վերահաստատելու համար : Ուչաքի առաջին քաղաքն է Ինէօնիւի չրջապտոյտին :

ՋՈՒԻՑԵՐԻՈՅ մէջ ձերբակալուեցաւ գերմանացի մը՝ Փլաթէ, որ լրտեսութիւն կ'ընէր Ս· Միութեան հաչուոյն : Այս առթիւ կասկածի տակ առնուած է նաեւ Պեռնի խորհրդային դեսպանատան անդամներէն մէկը :

ԱՊՐԻԼԵԱՆ ՍԳԱՏՕՆ

ՕՐ ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ԿԱՄՔԻ

Մեր հայրերը, նման պարագաներու մէջ, միամտութիւնն ունէին մեծ յոյսեր դնելու Արեւմուտքի խղճմտանքին վրայ : Ցանցառորէն իրենք չէին : Իրենց խղճին կանգնովով կը չափէին Արեւմուտքին ալ խիղճը եւ յուսախաբ եղան միշտ :

Բայց մենք այլեւս լաւ կը ճանչնանք այդ խորհրդաւոր Արեւմուտքը, իր աչքառու առաւելութիւններով եւ իր խոշոր թերութիւններով : Մենք այլեւս ոչ յուսալու միամտութիւնն ունինք եւ ոչ ալ յուսախաբ ըլլալու դառնութիւնը կը կրենք :

Ցուսահատներ չենք սակայն մենք, յոյսն ու հաւատքը ունինք մեր ապագային, ունինք հաստատ համոզումը լաւագոյն ապագայի մը՝ որուն իրագործումը մեր ձեռքն է, եթէ սիրոյ, եղբայրութեան, միաբանութեան կամքը քիչ մը չեչտուի մեր մէջ, մեր գերագոյն շահերուն դիտակից ըմբռնումով :

Այս տարուան սգահանդէսին Հայ կամաւորներու եւ Ռազմիկներու Միութեան նախաձեռնողն ըլլալը պատգամի մը բնոյթն ունի, յատակ խօսք մը կը կրէ :

Արդարեւ մեր Միութիւնը կազմուած է զանազան հորիզոններէ, զանազան մի-ջավայրերէ, զանազան ընկերային կամ քաղաքական ըմբռնումներէ, պատրաստութեան զանազան մակարդակներէ եւ կամ Հայերէ՝ որոնք սակայն նոյնացած եւ եղբայրացած էին զէն ի ձեռին կռուի պահուն, վտանգին մէջ, նոյն դատին պաշտպանութեան եւ նոյն իդէալին յաղթանակին համար, մինչեւ գերագոյն զոհողութեան պատրաստակութեամբ : Վկայ պատուոյ դաշտին վրայ իննկած մեր ընկերները :

Հետեւաբար այլազան մարդոց Միութեան այս նախաձեռնութիւնը՝ համազգային նախաձեռնութեան մը բնոյթը կու տայ այս սգահանդէսին :

Եւ իրապէս ալ, մեր յարանուանական իշխանութիւններն ու կազմակերպութիւնները, մեր մարզասիրական, մշակութային, գաղափարական թէ այլ կարգի Միութիւնները իրենց յօժար հաւանութեամբ եւ իրենց բարոյական աջակցութեամբ վաւերացուցին նախաձեռնութեան համազգային բնոյթը :

Նուիրական Ապրիլ 24ին առթիւ տարակարծիք ըլլալ, Հրկի եւ հեթանոսի հարց յարուցանել, նախատինք մը պիտի ըլլար մեր մեռելներուն յիշատակին եւ մեր-ժուժ՝ անոնց զերագոյն զոհողութեան :

Պէտք է այլեւս անցուդարձերը եւ երեւոյթները մեր անձնական նեղ պատուհանէն, մեր չրջանակին նեղ սահմաններէն դատել հրաժարինք : Աւերն է այլեւս, մեղմացնելու տեղի – անտեղի սա մեր բերնի ծամոց ըրած «մեռանք կորանք» յանկերգը եւ արձանագրենք իրողութիւններ՝ որոնք չատ ալ մեռնող կորսուող ժողովուրդ մը յատկանշելու բնոյթը չունին :

Նախ մեր համրանքը :

Թուրքը վճռած էր ֆիզիքապէս բնաջինջ ընել մեզ, զանգառելի քանակի մը վերածել Հայութիւնը՝ որ դատապարտուած ըլլար ինքն իր մէջ հիւծելու եւ ի սպառ չքանալու :

Ես կը սիրեմ թուանշաններու լեզուն եւ թիւերուն խորհուրդը : Այդ թիւերը չատ պերճախօս են մեր ներկայի համրանքին համար եւ ցոյց կուտան թէ յաղթանակ մը տարած ենք այդ մարդին մէջ եւ թուքին հաչիւները սխալ ելած են այդ ուղղութեամբ :

Այսօր մեր համրանքը դրեթէ հասած է աղէտէն առաջուան մեր թիւին եւ մեր թուական կորուստները դրեթէ վերադարձած ենք :

1914ին Հայոց ընդհանուր թիւը չորս միլիոնէն քիչ պակաս, երեք միլիոն ութ հարիւր հազար կը հաչուէին, որուն մէկ միլիոնէն քիչ մը աւելին՝ ռուսական սահմաններէն ներս, իսկ մնացեալը հայկական բնաշխարհին, Կիլիկիոյ եւ Տաճկաստանի արեւմտեան չրջաններուն մէջ :

Աղէտը մէկ միլիոնէն քիչ մը աւելի, մէկ միլիոն հարիւր հազար զոհ խլելով մեզմէ, մեր թիւն իջեցուցած էր երկու միլիոն եօթը հարիւր հազարի :

Այսօր մեր համրանքը երեք միլիոն վեց հարիւր հազարի բարձրացած է, այսինքն քառասուն տարուան մէջ մօտաւորապէս մէկ միլիոնի չափ մը արձանագրեր-լով, գրեթէ հասած ենք մեր երբեմնի համրանքին :

Հայաստանի մէջ մէկ միլիոն երկու հարիւր հազարի զանգուած մը ունինք : Նոյն թիւը նաեւ Սորվրդային Միութեան մէջ, մասնաւորապէս Վրաստանի 380 հազար, Ատրպէյճանի 360 հազար եւ Հիւսիսային Կովկասի երեք հարիւր հազար համախմբումներով : Հետեւաբար խորհրդային սահմաններէն ներս երկու միլիոն չորս հարիւր հազարի համրանք մը ունինք :

Դարձեալ, ինչ որ Սփիւռք կը կոչենք, Գարսկաստանէն, արաբական երկիրներէն, Գալքաններէն մինչեւ Արեւմտեան Եւրոպա եւ երկու Ամերիկաները մէկ միլիոն երկու հարիւր հազարի համրանք մը կը հաչուէ :

Զանց առնելով Սփիւռքի բաժանումները, չեչտենք որ մասնաւորապէս արեւելեան երկիրներուն մէջ խիտ համախմբումներ ունինք :

Ուրեմն մեր ընդհանուր դումարը երեք միլիոն վեց հարիւր հազարի կը հասնի ներկայիս, այսինքն գրեթէ այնքան որքան էինք Ապրիլ 24ի նախօրեակին :

Եւ գիտէ՞ք ինչ է մեր ներկայի ահման տարեկան տոկոսը, 45 առ հազար, տոկոս մը՝ որ հակառակ մեր բազմածնութեան երբեք չէինք ունեցած ցարդ եւ որուն նըպաստած են անչուշտ այժմու առողջապահական կարելիութիւններն եւ համեմատաբար նպաստաւոր կեանքի պայմանները :

Տարեկան մօտաւորապէս հարիւր հազար Հայկակներ կ'աւելնան Հայութեան թիւին վրայ :

Արդ «մեռանք – կորանք»ի յատկանի՞շ է այս, թէ ծլող, ծաղկող ժողովուրդի մը կենսունակութեան փաստը :

Ցաղթանակ մըն է ասիկա, փառաւոր յաղթանակ մը մեր թշնամիին Հայութիւնը ֆիզիքապէս բնաջնջելու ծրագրին վրայ տարուած :

Ուրիշ մեծ ուրախութեան պատճառ մըն ալ ունինք, Հայութեան այսօրուան բարգաւաճ տնտեսութիւնն ու մշակոյթի աչքառու որակը, ըլլայ այդ հայրենիքի թէ Սփիւռքի մէջ :

Հայաստանի միատարր զանգուածը կ'ապրի ազգ մը յատկանշող ստորոգելիներով, կը խօսի իր լեզուն, կը պահէ իր պապենական բարքերն ու աւանդական սովորութիւնները : Իր սեփական հողին մէջ արմատ նետած բունն է մեր ազգային ծառին :

Երկրին քաղաքական պայմանները խնդրոյ առարկայ չեն հոս : Այդ պայմանները կրնան ոմանց համար ընդունելի եւ հաճելի ըլլալ, այլոց համար խոտելի եւ տրտում : Կ'անտեսենք այս երեկոյ այդ պայմանները եւ առարկայական իրողութիւն մը կը չեչտենք, ի տես իր հողին կապուած հայութեան ստուար զանգուածին :

Ամփոփարար միջակութիւններու հանած ժխորին մէջէն ցայտող դրագէտ, արուեստագէտ եւ գիտնական լուրջ դէմքերու հոյլ մը ունինք հոն, որուն վաստակը մնայուն է անկասկած եւ կը ճոխացնէ մեր մշակոյթին ծանր դանձերը :

Սփիւռքն ալ, եթէ մասամբ միայն կը մատակդէ մեզ իր ապագայի անորոշ հեռանկարով, մասամբ՝ որովհետեւ պէտք է չափազանցել ամէն քայլափոխի օրն ի բուն ամէն տեղ ուծացում, օտարացում տեսնելով, Սփիւռքն ալ ուրեմն ունի դոհունակութեան պատճառներ :

Արեւելեան երկիրներու մեր բազմութիւններուն տեղական պայմանները թոյլատու են իւրայատուկ դիմագիծով ազգային հաւաքական կեանքի մը : Մեր վարժարաններուն ցանցը հասնող սերունդներուն հայեցի դաստիարակութիւնը կը բաւարարէ եւ կ'երաչխաւորէ : Հոն ալ մտքի մարդիկ չեն պակսիր : Հոն ալ տպագրական մամուլը կը թաւալի, գալով երբեմն լեցուն ու ծանրակեռ դրծեր :

ԲԱՐԳԻՆ ԳԱՎԱՌ

(2 Շար.)

ԶՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ :

ՄԵԼՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ - ՀՐԱՆԴ

(ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՒԹԻՒ)

1859 – 1915 – 1959

«Հրանդ, հաւաքական դառնացած սրտի բանաստեղծն է» :
Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

1929 Սեպտեմբերին հիմը դրուեցաւ « Նահատակ Գրագէտներու Բարեկամներ » Հրատարակչական Ընկերութեան, որ ահաւասիկ երեսուն տարուան ընթացքին յիշատակելի գործունէութիւն մը ունեցաւ, լոյս ընծայելով 18 ընտրուած հատորներ, Ռուբէն Զարդարեան, Մելքոն Կիւրճեան, Գեղամ Տէր Կարապետեան, Գեղամ Բարսեղեան, Արփիար Արփիարեան, Գրիգոր Զօհրապ, Տիգրան Զէօկիւրեան, Օհան Կարօ, Երուանդ Օտեան, Արտաչէս Յարութիւնեան, Արդի Հայ Գրականութիւն Ա. եւ Բ. արտասահմանի գրողներ եւ Գ. Հայաստանի գրողներ, Երուանդ Սրմաքէշխանլեան, Ռուբէն Սեւակ, Գարեգին Եպիսկ. Սրուանձտեանց (երկու հատոր) եւ Եղիա Տէմիրճիպաշեան :

Ուրիշ անդամուան մը վերապահելով այդ հրատարակչականին բեղուն գործունէութեան պատմութիւնը, — քանի որ հիմա այդ ընկերակցութեան գործունէութիւնը «Համազգային Մշակութային Ընկերակցութիւնը » պիտի չարունակէ, — Մելքոն Կիւրճեանի ծննդեան հարիւրամեակին առիթով, քանի մը յուշեր արձանագրենք տալով նաեւ մասնաւորաբար հեղինակին «Պանդուխտի կեանքէն նամակներ»ուն նկարագիրը :

Արդէն լոյս ընծայած էինք Ռուբէն Զարդարեանի Ամբողջական երկերուն առաջին հատորը, «Արձակ էջերու հէքեաթներ»ը : Պէտք էր որոշել մատենաչարին երկրորդ հատորը : Մեր ծրագրին մէջ բաւական անուններ ունէինք : Ա. Արփիարեան, Գ. Զօհրապ, Գ. Բարսեղեան, Տ. Զէօկիւրեան, Ար. Յարութիւնեան, Ռ. Սեւակ, Տիրան Զրաքեան եւ ուրիշներ : Առանց երկար վիճաբանութիւններու ընկերակցութեան ինը անդամները իրենց ձայները միաձայնութեամբ կեդրոնացուցին Մելիոն Կիւրճեանի վրայ : Այս որոշումը չէր բաւեր սակայն : Ան ունէր բազմաթիւ գործեր, պատմուածքներ, նկարագրական էջեր, թարգմանութիւններ, չինականի նամակներու շարք մը, թղթակցութիւններ Թիֆլիսի «Մշակ»ին՝ Շահէն Յածկանունով, Զարեհ Գազանեանի « Հայ Գրականութիւն» եւ «Շանթ» գրական – գեղարուեստական հանդէսներուն մէջ չահեկան պատմուածքներ եւ պանազան հրապարակագրական յօդուածներ, «Ռատան»ի մէջ փոքրիկ վիպակներ եւ բանաստեղծութիւններ «Մանդոմէի էֆքեար» եւ «Ժամանակ» օրաթերթերուն մէջ : Ո՞ր մէկը ընտրել այս բոլորէն : Այս խնդրին համար ալ տարակարծութիւն չունեցանք : Որոչեցինք առաջին անդամ ըլլալով հրատարակել գրքի մը մէջ «պանդուխտի կեանքէն նամակները » :

Մեր տրամադրութեանը տակ ունէինք քանի նամակներ, զոր ընդօրինակեր էր մեր աչխատակիցը ողբացեալ Հայր Արսէն Ղազիկեան, այնքան բծախնդրութեամբ : Հատորը ամբողջացնելու համար աւելցուցինք նաեւ ինը պատկերներ ու վիպակներ : Գիտէինք որ հատորէն դուրս պիտի մնային ուրիշ էջեր, որոնք պիտի կազմէին ամբողջական երկերուն երկրորդ հատորը :

Մեր միտքէն չէր անցած ոչ «դիւտ» մը եւ ոչ ալ «նոր» արժէք գտած ըլլալու սփոփանքը ունենալ : Մելքոն Կիւրճեանի դրականութեան դիմագիծը աւելի քան կենդանի էր մեր մէջ : Մատենաչարին մէջ իրմէ առաջ ունէինք Ա. Արփիարեանին ու Գր. Զօհրապին հատորները, որոնք լոյս տեսան Մելքոն Կիւրճեանի հատորէն եառ :

Ար. Արփիարեանի թելադրութեան եւ մատնանչումին կը պարտինք «հաւաքման դառնացած սրտի բանաստեղծին»նամակները, որոնցմէ առաջինը «Արտամեաի խնճորը» խորագրով լոյս տեսած է «Մասիս» չաբաթաթերթին մէջ 1888 Նոյեմբեր 28ին, Հրանդ ծածկանունով : Նամակներն իրարու կը յաջորդեն : Հազարաւոր պանդուխտներ, մանաւանդ Հրանդի հայրենակից Բալուցի որմնադիրներ, կը զգան որ իրենց համար յուզուող եւ սրտակից սիրտեր կան :

Տարի մը եառ Մելքոն Կիւրճեան այդ նամակներու բովանդակութեան մասին այսպէս կ'արտայայտուէր խօսքը ուղղելով Ա. Արփիարեանին . —

« Հերու ճիշդ այս ամսուն էր որ խնդրեցիր ինձմէ բաներ գրել մեր պանդուխտներու կեանքէն : Ահէ ի վեր տարի մըն է, եւ պարբերաբար գրեցի խանութէն, գերեզմաններէն, տուներէն : ... Եւ սակայն չմոռնամ ըսել որ տակաւին ոչինչ միայն գրած եմ այդ սարսափելի կեանքէն, չատ բաներ կան որոնց հեռուէն խելք հասցնել կարելի չէ . բաներ ալ կան որոց գրչի ծայր չպիտի մերձեցնենք բը – նաւ, բաներ ալ կան զորս հարկ է տեսնել պանդուխտի տանը մէջ՝ կենսակից ըլլալով անոր զաւակներուն, անոնց չոր ու սեւ հացն ուտելով եւ տառապանքն ալ հաղնելով : Իսկ ինչ որ ամէն բանէ աւելի ակներեւ եղաւ, այն է թէ այդ կեանքի դոյութիւնն ինչպէս երկարած է մինչեւ այսօր, ինչպէս կեանքի տարերք կրցած են մնալ այդ փտութեանց մէջ :

« Ան նուազն հարիւր հազար հոգի ի – րենց տուներէն դուրս նետուած են, եւ պիտի՞ք թէ որոնք են, գործող, վարող, ցանող եւ հնձող ձեռքեր, համեմատաբար առոյգն ու կորովին : Տարին, ամէն զեղչեր ընելէ եառքը, դէթ 50 – 60·000 անձին զաւկի կորուստ կայ . ասոր վրայ աւելցուր օտարութեան մէջ չարունակուած չարաչար զոհերն ալ, հովէ զարնուած, ձողերուն տակ ջարդուած, եւ ահա խոչ՛ը դումար մը մեռելոց, զորս կը թաղենք առանց քահանայի եւ արցունքի : Դարեր այսպէս չարունակուած են, այսօր ալ կը չարունակուի այդ աղէտքը, հի – ւանդի մը թոքերը կրծող որդերու պէս : Պանդխտութիւնն եթէ այսպէս չարունակուի, մեր զաւառներն անմարդի կ'ընէ այսօր կամ վաղը, այս համոզումն ունեցէք, ահաւոր ճշմարտութիւն է» :

Կ'արժէ կրկին կարդալ այդ նամակները, որոնք թաթախուած են հեղինակին արիւն քրտինքով, ու նաեւ արիւն քըրտինքովը պանդուխտներուն ... :

Եօթանասուն տարիներու անջրպետ մը կը բաժնէ մեզ այն օրերէն, երբ առանձին հաւաքականութիւն մը կը ներկայացնէին Հայաստանի պանդուխտները, Պոլսահայերու որոչ մէկ դասակարգին կողմէ արհամարհուած, լքուած ու անտեսուած : Եւ Մելքոն Կիւրճեան սրտի մորմոքով եւ անխառն վիշտով համակուած, կ'այցելէ անոնց բնակած խաներուն անկիւնները : Ցիչե՞նք մենք ալ չատ ծանօթ ու յեղյեղուած մէկ խօսքը հայ կնոջ մը, հաւանական մեռելաբարբիտասարդ մեռելի մը մայրը, որ պատուհանէ մը դուրս ծռած ողբալին կը ճչայ . «Ախ որդի՛ս, խաներուն մէջ պէքեա՞ր կը պակսէր» : Եւ Մելքոն Կիւրճեան սրտէն պարնուածի պէս, կը խորհրդածէ .— « Կը տեսնե՞ս, սիրելիս, դաւառացին ոչ թէ հայ, այլ մարդ իսկ չէ եղեր, նա քարէն ծնած է, լեռնէն բուսած է, որպէս թէ մօր մը ստինք ծծած չէ, որպէս թէ մայր մը անոր օրրանի երդ ըսած չէ, ղիչերն անոր անարին վերեւ աքնած չէ . նա ծնողք չունի, զաւակ չունի, տուն չունի, տեղ չունի » :

Եւ այսպէս նամակներն իրարու կը յաջորդեն : Կը խօսի Վանեցի, Մշեցի եւ Սեբաստացի աղքատիկ ուսանողներուն եւ այն պանդուխներուն մասին, որոնք չոգեհատով մը կ'ելլեն Սամսոն, Կիրասոն ու Տրապիզոն : Պանդուխտները չուտով չէն մոռնար սակայն տան սէրը, ծնողաց սէրը, կնոջ եւ որդւոց սէրը, սարի ու կալի սէրը : Եւ կը պատահի որ Հրանդ ընկերանայ դէպի ծննդավայրը վերադարձող պանդուխտներու քայլերուն եւ որոնք տարիներ եառք, լերան կատարէն իրենց դիւղը կը դիտեն, իրենց սիրտը դողով ու վիշտով լեցուն է, արդեօք ընտանիքի անդամներէն քանինե՞րը ողջ առողջ պիտի գտնեն ... :

Մելքոն Կիւրճեան կարգ կանոն չուզեր դնել իր մտածումներուն եւ խորհրդածութիւններուն մէջ, եւ ոչ ալ արուեստագիտութիւն ունի : Պարզ են բոլորը, բայց եւ այնպէս տրտմաթախիծ : Եւ աստղ սիրելի, բնական, մարդկային : Նոյնիսկ այդ պարզ լեզուով գրի առնուած էջերը յաճախ կը պատճառեն, կարեկցութիւն կ'արթնցնեն : Ցաճախ պատահներ են, որոնք նոյն ճամբուն կը հետեւին, գանելու համար իրենց հայրերը խաներու լքուած անկիւններուն մէջ : Ու նաեւ մայրերը, որոնք իրենց պանդուխտ սիրելիներու առաջին նամակներուն կը սպասեն, ու նաեւ առաջին վաստակներուն ... :

«Վէպ չէ գրածս, Արփիար», կը գոչէ, իր երրորդ նամակին մէջ, երբ կուտայ պատանի Մարտիկին պատմութիւնը, այսպէս կ'արտայայտուէր խօսքը ուղղելով Ա. Արփիարեանին . —

« Հերու ճիշդ այս ամսուն էր որ խնդրեցիր ինձմէ բաներ գրել մեր պանդուխտներու կեանքէն : Ահէ ի վեր տարի մըն է, եւ պարբերաբար գրեցի խաներէն, գերեզմաններէն, տուներէն : ... Եւ սակայն չմոռնամ ըսել որ տակաւին ոչինչ միայն գրած եմ այդ սարսափելի կեանքէն, չատ բաներ կան որոնց հեռուէն խելք հասցնել կարելի չէ . բաներ ալ կան որոց գրչի ծայր չպիտի մերձեցնենք բը – նաւ, բաներ ալ կան զորս հարկ է տեսնել պանդուխտի տանը մէջ՝ կենսակից ըլլալով անոր զաւակներուն, անոնց չոր ու սեւ հացն ուտելով եւ տառապանքն ալ հաղնելով : Իսկ ինչ որ ամէն բանէ աւելի ակներեւ եղաւ, այն է թէ այդ կեանքի դոյութիւնն ինչպէս երկարած է մինչեւ այսօր, ինչպէս կեանքի տարերք կրցած են մնալ այդ փտութեանց մէջ :

« Ան նուազն հարիւր հազար հոգի ի – րենց տուներէն դուրս նետուած են, եւ պիտի՞ք թէ որոնք են, գործող, վարող, ցանող եւ հնձող ձեռքեր, համեմատաբար առոյգն ու կորովին : Տարին, ամէն զեղչեր ընելէ եառքը, դէթ 50 – 60·000 անձին զաւկի կորուստ կայ . ասոր վրայ աւելցուր օտարութեան մէջ չարունակուած չարաչար զոհերն ալ, հովէ զարնուած, ձողերուն տակ ջարդուած, եւ ահա խոչ՛ը դումար մը մեռելոց, զորս կը թաղենք առանց քահանայի եւ արցունքի : Դարեր այսպէս չարունակուած են, այսօր ալ կը չարունակուի այդ աղէտքը, հի – ւանդի մը թոքերը կրծող որդերու պէս : Պանդխտութիւնն եթէ այսպէս չարունակուի, մեր զաւառներն անմարդի կ'ընէ այսօր կամ վաղը, այս համոզումն ունեցէք, ահաւոր ճշմարտութիւն է» :

Կ'արժէ կրկին կարդալ այդ նամակները, որոնք թաթախուած են հեղինակին արիւն քրտինքով, ու նաեւ արիւն քըրտինքովը պանդուխտներուն ... :

Եօթանասուն տարիներու անջրպետ մը կը բաժնէ մեզ այն օրերէն, երբ առանձին հաւաքականութիւն մը կը ներկայացնէին Հայաստանի պանդուխտները, Պոլսահայերու որոչ մէկ դասակարգին կողմէ արհամարհուած, լքուած ու անտեսուած : Եւ Մելքոն Կիւրճեան սրտի մորմոքով եւ անխառն վիշտով համակուած, կ'այցելէ անոնց բնակած խաներուն անկիւնները : Ցիչե՞նք մենք ալ չատ ծանօթ ու յեղյեղուած մէկ խօսքը հայ կնոջ մը, հաւանական մեռելաբարբիտասարդ մեռելի մը մայրը, որ պատուհանէ մը դուրս ծռած ողբալին կը ճչայ . «Ախ որդի՛ս, խաներուն մէջ պէքեա՞ր կը պակսէր» : Եւ Մելքոն Կիւրճեան սրտէն պարնուածի պէս, կը խորհրդածէ .— « Կը տեսնե՞ս, սիրելիս, դաւառացին ոչ թէ հայ, այլ մարդ իսկ չէ եղեր, նա քարէն ծնած է, լեռնէն բուսած է, որպէս թէ մօր մը ստինք ծծած չէ, որպէս թէ մայր մը անոր օրրանի երդ ըսած չէ, ղիչերն անոր անարին վերեւ աքնած չէ . նա ծնողք չունի, զաւակ չունի, տուն չունի, տեղ չունի » :

Եւ այսպէս նամակներն իրարու կը յաջորդեն : Կը խօսի Վանեցի, Մշեցի եւ Սեբաստացի աղքատիկ ուսանողներուն եւ այն պանդուխներուն մասին, որոնք չոգեհատով մը կ'ելլեն Սամսոն, Կիրասոն ու Տրապիզոն : Պանդուխտները չուտով չէն մոռնար սակայն տան սէրը, ծնողաց սէրը, կնոջ եւ որդւոց սէրը, սարի ու կալի սէրը : Եւ կը պատահի որ Հրանդ ընկերանայ դէպի ծննդավայրը վերադարձող պանդուխտներու քայլերուն եւ որոնք տարիներ եառք, լերան կատարէն իրենց դիւղը կը դիտեն, իրենց սիրտը դողով ու վիշտով լեցուն է, արդեօք ընտանիքի անդամներէն քանինե՞րը ողջ առողջ պիտի գտնեն ... :

Մելքոն Կիւրճեան կարգ կանոն չուզեր դնել իր մտածումներուն եւ խորհրդածութիւններուն մէջ, եւ ոչ ալ արուեստագիտութիւն ունի : Պարզ են բոլորը, բայց եւ այնպէս տրտմաթախիծ : Եւ աստղ սիրելի, բնական, մարդկային : Նոյնիսկ այդ պարզ լեզուով գրի առնուած էջերը յաճախ կը պատճառեն, կարեկցութիւն կ'արթնցնեն : Ցաճախ պատահներ են, որոնք նոյն ճամբուն կը հետեւին, գանելու համար իրենց հայրերը խաներու լքուած անկիւններուն մէջ : Ու նաեւ մայրերը, որոնք իրենց պանդուխտ սիրելիներու առաջին նամակներուն կը սպասեն, ու նաեւ առաջին վաստակներուն ... :

«Վէպ չէ գրածս, Արփիար», կը գոչէ, իր երրորդ նամակին մէջ, երբ կուտայ պատանի Մարտիկին պատմութիւնը,

ԻՐ ՀԱՅՐՈՎ ՀԱՅՏԸ

Մ. ԿԻՐՅԱԿՈՒՆ ԱՐՏԱՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՊԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՂԱՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ

Ա

Ամէն անգամ որ ես իմ հոգւոյ մէջ կը խորհիմ Մ. Կիրյակունի մասին, ինքնաբերաբար կը յիշեմ Վիպարանի հայկական սեղանը։

Ինչո՞ւ։ Ինչո՞ւ այդ սեղանը։ Ինչո՞ւ ոչ ուրիշ որեւէ սեղան։

Ես չեմ գիտեր։ Ես չեմ գիտեր, թէ ինչո՞ւ։ Ես չեմ գիտեր, թէ ինչո՞ւ։

րի Թիֆլիսի նկարին բացակայութիւնը ուշագրաւ էր :

ՎԱՐՇԱՒԱ.— Կոմունալքա ճառ մը խօսելով չէշտեց թէ «Լեհ ժողովուրդը ամբողջ սրտով այն ժողովուրդներուն հետ է՝ որոնք դէմ են պատերազմին» :

ՎԻՆՆԱ.— Մայիսեան ոտնը օգտագործուելու քնարապայքարի համար. ընդհանուր ընտրութիւնները՝ Մայիս 10ին :

ՓԷՔԻՆ.— Կէս միլիոն հոլի տողանցեին մօտ երկուքուկէս ժամ ցուցարար – ները կը պոռային. «Մաօ Ձէ Թունկ 10000 տարի թող ապրի» :

ՆԱՄԱՐ յայտարարեց արար աշխատա – ւորներուն.— « Համայնավար կուսակցութիւնը կը գործէ իբրեւ հիմնգերորդ գունդ մեր երկիրներուն մէջ : Անդրադառնալով իրաքի կացութեան, Նասր չէշտեց «անգլիական աշխարհակալութիւնը արար ազգին դէմ կը գործէ » :

երազեան ընտանիքը եւ պարագաները ցաւով կը ծանուցանեն՝

ԼԵՒՈՆ ԵՐԱԶԵԱՆԻ

(68 տարեկան)

մահը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ առաւօտ (Մայիս 1), Նէֆեր հիւանդանոցին մէջ :

Ցուղարկաւորութիւնը՝ այս երեքշաբթի (Մայիս 5) , ժամը 14ին Ս. Խաչ եկեղեցին, 10պիս, Րիւ Թուէն :

Մասնաւոր մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել :

Այրի Տիկին Տէր Խաչատուրեան, Տէր եւ Տիկին Վէնսան Տարաքճեան, Տէր Խաչատուրեան եւ Տարաքճեան ընտանիքները ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, եւ ազգականին՝

ՍՏԵՓԱՆ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ Ապրիլ 30ին, Փլեթիէի հիւանդանոցը :

Ցուղարկաւորութիւնը՝ այս երկուշաբթի ժամը 10ին, Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ մէջ :

Մասնաւոր մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Պ. Նուպար Ալիքսանեան, Տիկին Ռուբինա Սթէյն — Ալիքսանեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս հինգշաբթի (Համբարձում) առաւօտ Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցւոյ մէջ իրենց մօր եւ մեծ մօր՝ ՍԻՐԱՆՈՑՇ ԱԼԻՔՍԱՆ – ԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալ արուեստագիտուհիին յիշատակը յարգողները :

լիսը բաժնելով երկու հակամարտ ճակատներու՝ Օրմանեանական եւ հակաօրմանեանական : Աղբ. երեսփոխանական ժողովին մէջ բուռն վէճեր, կռիւներ : Փողոցներու, ակումբներու մէջ բախումներ : Մամուլին մէջ — այսօրուան պէս — կատաղի պայքար :

Մելքոն կիւրճեանի դաշտիարակից ընկերներէն մեծ մասը Օրմանեանի դէմ են : Ինքն ալ երեսփոխան է, եւ այլեւս յայտնի, պատկառելի դէմք մը : Ամէնէն կատաղի եւ կրքոտ նիստերէն մէկուն ընթացքին, երբ ամբողջ երեսփոխանական ժողովը լարուած մեքենայ մըն է այլեւս Օրմանեանի թէր կամ դէմ՝ կիւրճեան կը բարձրանայ ամպիոն, իր հուժկու ձայնով եւ մեծդի մարմնով պահ մը կը լռեցնէ ժողովը եւ կը սկսի... պաշտպանել Օրմանեանը : Կիւրճեան կը խօսի համոզումով, ջերմութեամբ, իրեն յատուկ անսայթաք տրամաբանութեամբ, խախտելով Հակաօրմանեանական ճակատին դիրքը մեծապէս :

Ժողովէն եաք, մէկը կը յիշեցնէ իրեն. — Մոռցա՞ր այդ մարդուն ըրածները.. Մոռցա՞ր թէ ինչպէս կը բանբասէր քեզ Օաեաններուն մօտ :

— Ոչ, չեմ մոռցած կ'ըսէ կիւրճեան : Չեմ մոռցած, եւ չեմ մոռնար : Բայց ա – տիկա անձնական պարագայ մըն է, իսկ մենք այստեղ ազգային երեսփոխաններ ենք ու պարտաւոր ենք պաշտպանել ազգին օգտակար եղող տեսակէտները : Իրաւունք չունինք մեր անձնականը խառնելու ազգայինին ...

Ի՞նչ մարդ ...

Նման Հայեր, նման սերունդ՝ անդամ մըն ալ կ'ունենա՞նք արդեօք ... : Ծ.

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷ'Ք

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան կազմակերպած դաշտապնացութեան, դէպի Սէն Զաղարիէ պաղ ապրիւրը, 7 Յունիս կիրակի ամբողջ օրը : Օթոքարի համար արձանագրուիլ այժմէն, Պ. Տ. Զօրէքեանի մօտ, 5 Ավընիւ Քամիյ Փէլեքան :

ԿՈՉ

ՏԻՎՐԻԿԻ ԽՈՒՌՆԱՎԻԼ ԳԵՂԱՑԻՆԵՐՈՒՆ

Սիրելի հայրենակիցներ,

Աւելի քան 20տարի առաջ, Քոչէնց երուանդը ծրագրած էր մեր անմահ ծննդավայրին համար պատմագիրք մը պատրաստել եւ դիս ալ հրաւիրած՝ օգնելու իրեն :

Լուսահոգի մայրս կ'ապրէր տակաւին : Գրեցի նաեւ Պոլիս ու բաւական նիւթեր ճարելով իրեն ղրկեցի : Հետզհետէ պիտի լրացուէին պակաս մնացածներն ալ ու պիտի խմբագրուէր գործը, երբ պայթեցաւ երկրորդ աշխարհամարտը : Եւ ամէն նախապատրաստական աշխատանք անհետացաւ գրեթէ :

Այժմ նորէն խնդիրը ճեռք առնուած է ու սկսուած ծայրէն : Բարեբախտաբար անցեալէն մաս մը նիւթեր պահած էի ու կրցածիս չափ ալ լրացումներ ընելով երուանդին ղրկեցի :

Իրեն՝ Երուանդին հետ բաւական հոմ նիւթեր հաւաքած ենք, իր մեծ մայրիկին ու իմ մօրս բերնէն : Սակայն անոնք դեռ պակասաւոր են, բաղդատմամբ այն լեզուական ու ազգագրական գանձին, որ մեր գուտ հայաբնակ գեղը կը ներկայացնէր :

Ուստի սոյն կոչով կը դիմենք ձեզի, որպէսզի ձեր գիտցած հոմ նիւթերը ղրկէք մեզի : Գիտէք որ, հին սերունդը չատ նօսրացած՝ հատնելու վրայ է գրեթէ եւ Ապրիլեան Սերունդն ալ յիսուն – յիսուն– և հինգին դուռները կը ծեծէ : Հետեւաբար աճապարելու է մեր Սրբութիւն Սրբոց հատատակ ծննդավայրը պատմագիրքով մը յաւերժացնելու, իբրեւ յուշարար դուրսը ծնած նոր սերունդին ու նպաստ մը հայկական բնաջնջումի ծանօթութեան :

Հաւաքեցէք ու ղրկեցէք մեզի :

« Ձեր ջարդի յուշերը : Ի՞նչ տառապանքներով եւ ի՞նչպէս փրկուեցաւ ձեզմէ ամէն մէկը : Ձեր տեսածներն ու լսածները :

2.— Շէրբեր, օրօրներ, ասացուածքներ, հանելուկներ, խաբեբիքներ, անէծքներ, երդիծական մանրապէպեր Պաղատամուէն Զէմանեանց եւ, ուրիշներէ, այր թէ կին, անուններով, եթէ կարելի է :

3.— Եթէ դիտէք, ո՞վ, ո՞ւր, է՞րբ, ի՞նչպէս սպանուած է : Ո՞վ մնացած է Թուրքի ու Քուրդի քով, է՞րբ, ո՞ւր :

4.— Եթէ ունիք ջարդէն առաջ գեղը քաչուած պատկերներ, մանաւանդ մեր տարազով, եւ 1915էն առաջ ու վերջը գեղէն գրուած նամակներ :

5.— Ձեր նկարները պանդխտութեան մէջ, անպայման նոր սերունդով միասին (խմբանկարներ) :

6.— Մեր կամաւորներուն (1914–1920) եւ ուսուցիչներուն նկարները եւ նամակները եթէ կան :

7.— 1895 – 96 դէպքերէն անցած – դարձածներ : Քաջագործութիւններ : Շատ կարեւոր է այս կէտը :

8.— Ուսումնասիրացին Ամերիկա տպուած ծրագիրը : Համառօտ տեղեկագիր մը անոր մասին : Հիմնադիրները, թուական : Բոլոր անդամներուն անուններ : Մուտք ու ելքի դումարները : Մինչեւ 1915 երկիր ղրկուած դումարը : Ուսումնասիրացին անունէն երկրէն ստացուած նամակները : Բոլորը, ինչ որ մենք կը մոռնանք ու դուք կը մտածէք : Ձեր խորհուրդներն ու թելադրանքները :

9.— Նկատի ունենալով իմ եւ երուանդին նեղ վիճակը, ուրախ պիտի ըլլանք եթէ գործին նիւթական կողմն ալ մտածէք, նախապայմանը ներկայանալի հատոր մը միայն տպագրութեան ծախքը :

Բոլոր նիւթեր ղրկել հասցէիս .—

Hatchikian Nercés

St-Saturnin les Avignons (Vaucluse) France

Նիւթերու առաքման պայմանաժամ մինչեւ այս տարուան Օգոստոսի վերջը :

ՆԵՐՍԻԿ

Յ. Գ.— Կը խնդրուի Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի, Եգիպտոսի եւ Սուրիոյ հայ մամուլէն արտատպել :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

"ՄԱՅԻՍ 28"Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միջնեւ լոյս) :

Վեցերորդ Թաղապետարանի սրահներուն մէջ, Փլաս Սէն Սիւլփիս :

×

ԼԻՈՈՆԻ ՄԷՋ

Յունիս 6ին, Շաբաթ իրիկուն, Գ. Թաղապետարանի սրահին մէջ :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

ՄԱՐՍԷՅԼ

Գրական Ասուլիս նուիրուած Կ. Փոլատեանի նոր վէպին՝ ԱՐԾԻՒՆԵՐԸ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ :

Այս Զորեքշաբթի իրիկուն, ժամը 21ին, Ֆրանս. Համալսարանի ամփիթեատրոնը (40 Ալէ Կամպէքթա) :

Կը նախագահէ Պ. Արամ Թէրզիպաշեան, վէպը կը ներկայացնէ Պ. Ասատուր Քէօսէեան : Կը վերլուծեն Պ. Պ. ՇԱՒԱՐՇ ԹՈՇՃԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅԵԱՆ եւ ԺԻՐԱՅՐ ՄԻՐԻՃԵԱՆ :

ԱՊՐԻԼ 11–24Ի 44ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԳԱՏՕՆ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կրընոպլի Հայ Ազգային Եկեղ. Միութեան եւ մասնակցութեամբ զաղութիս կազմակերպութեանց, կիրակի, (10 Մայիս) կէսօրէ ետք ժամը երեքին Ռիւ ժէ Սէն Լուի սրահին մէջ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՊԱՆԵԼԻՕ – ՔԱՇԱՆ.— Հ. Յ. Դ. «Ար – ծիւ» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս երեքշաբթի, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին : Բոլորին ներկայութիւնը անհրաժեշտ է :

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐ

Հաստատման Տօնին առթիւ (7 Մայիս) Հինգշաբթի օր, ժամը 10ին, Փարիզի Ս Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը կազմակերպած է Հայ Մանուկներու հաղորդութեան օր :

Փարիզի եւ շրջակայքի բոլոր դպրոցներու աշակերտութիւնը հրաւիրուած է ներկայ ըլլալու հանդիսաւոր Ս. պատարագին :

Արարողութիւններուն պիտի նախագահէ եւ քարոզէ Գեր. Տէր Սեբովբէ եպիս. ՄԱՆՈՒԿԵԱՆ :

Կը հրաւիրուի նաեւ հայ հասարակութիւնը :

ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԻՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Մեծ եղեռնի Սգահանդէսի կազմակերպիչ մարմինը կը հրաւիրէ, ժողովի, բոլոր հայրենակցական եւ երիտասարդական Միութեանց ներկայացուցիչները, այս երկուշաբթի 4 Մայիս, երեկոյեան ժամը 9ին Հ. Բ. Ը. Մ. սրահը : (Րիւ Վանթիւր 19ա) :

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ

Յունիս 10ին, Զորեքշաբթի, երեկոյեան ժամը 9ին ,

ECOLE NORMALE DE MUSIQUE

Մասնակցութեամբ՝ ՍԷՐԺ ԳՈԼԼՈՅԻ (ալթիսթ)

ՄՕՆՆԻԿ ՄԱՔԱՃՆԻ (դաշնակ)

Երեկոյթը նուիրուած է զերման վիպական երաժշտութեան (ՇՈՒՄԱՆ ՊՐԱՄՄ)

Առաջին ունկնդրութիւն ՄԱՐՍԷԼ ՏԷԼԱՆՈՒԻՍԱՅԻ վերջին մէկ գործին , (Սիւլամիթ)

ԾՐԱՐՆԵՐ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆԱՅԱՏՈՒԿ ԵԻ ՆՊԱՍՏԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ՇՆՈՐՀԻՒ ԱՐՏԱԴՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— ՄԱՓՈՒ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԵԻ ԾՐԱՐԻ ԾԱԽՔԵՐԸ ՄԻԱՍԻՆ

Հարիս թուիտ (գուտ բուրդէ հիւսուածեղէն)	մեթրը	3·500	ֆր·
Ֆիլ ա ֆիլ	մեթրը	3·900	»
Փէնիէ Պոսթօն գուտ բուրդ	մեթրը	4·500	»
Սեռժ Փենիէ գուտ բուրդ	մեթրը	4·900	»
Խառն կերպասեղէն	մեթրը	1·900	»
Գուլպա մուս նիլօն (այր մարդու)	2 զոյգը՝	1·500	»
Շապիկ (փոփլին)		2·700	»
Կօշիկ Պօfu – fաֆ (այր մարդու)		5·900	»
Տիւրբիճի գուտ բուրդ (կնոջ հագուստիհամար)	մեթրը՝	2·100	»
Ֆրէփ մուս գուտ բուրդ	մեթրը	2·800	»
Օթոման (կնոջ եւ այր մարդու համար)	մեթրը	3·800	»
Էնֆրիմէ չճմռթկուող եւ լուացուող	Ա. գին	500	»
Գուլպա նիլօն մուս (կնոջ համար)	2 զոյգը	1·900	»
Գուլպա նիլօն (կնոջ համար)	2 զոյգը	1·500	»
Նիլօն Փառիւռ (ռոնպինէզօն եւ ֆիւլոթ)		3·200	»
Ժամացոյցներ՝ ոսկեզօծ , 17 րիւպի, ամբիշօֆ		10·000	»

ԱՌԱՔՈՒՄԻ ԾԱԽՔ.— 2·500 ֆր· 10 ֆիլոնոց ծրարի մը համար :

ՍՏԱՑՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ԶՈՒՆԻ :

ԵՐԵՔ ԶՈՐՍ ՇԱԲԱԹԻՆ ծրարները իրենց տեղը կը հասնին :

Ձեր տրամադրութեան տակ են բոլոր կերպասներու նմոյշները :

SICOMEX

20, Rue Royale,
Tél. : OPE. 67-77 PARIS 8· Métro : Madeleine

ԱՅՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՀԵՅՔ'Ք

1939 ՅՈՒՆՈՒԱՐ 1ԷՆ

MORY et Cie

Հաստատութիւնը սկսած է շատ նպաստաւոր պայմաններով կատարել դէպի Խ· Միութիւն ծրարներու առաքումը :

ԳԻՆԵՐԸ ԶԳԱԼԱՊԷՍ ԻՋԱԾ ԵՆ

Մեր նոր գիները ստանալու համար· դիմել, դրաւոր, հետեւեալ հասցէին.—

Service C des Colis Postaux

10, Rue St-Quentin, Paris 10

կամ հեռաձայնել .—NOR. 40 72 & 50 83

MÉTRO ET AUTOBUS : GARE DU NORD

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար· 4000 ֆր·վեց·2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր·

ԵՐԵՔՇԱԲԹԻ
5
ՄԱՅԻՍ
MARDI
5 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8386 — 35EME ANNÉE — ...ateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4287

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

Աղանաեան Ուխտի արեւելեան թեւը ծանր տաղնապի էր ենթարկուած հինգ տարիէ ի վեր, իբրեւ հետեւանք կիպրոսի խնդրին, որ դրեթէ թշնամական վիճակ էր ստեղծած Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ :

Անդորձութեան —չըսելու համար կռմալուծման — զատապարտուած էր Պալքանեան Ուխտը, որուն երեք անդամներէն երկուքը ճակատ յարդարած էին իրարու դէմ :

« Միջերկրականի Թագուհի»ին չուրջ ստեղծուած վէճը պետական չրջանակներու պաշտօնական նեղ սահմաններէն դուրս ելլելով սեփականութիւնն էր դարձած երկու երկիրներու բնակիչներուն, քաջալերութեամբ տեղական իշխանութեանց :

Վերադարձ մըն էր կատարուած դէպի հին օրերը :

Վերստին արծարծուած էին Թուրքեւ – հելլէն աւանդական փոխադարձ ատելութիւնն ու կրկէքերը :

Թուրքիոյ դեմոկրատ կառավարութեան համար կը ներկայանար բացառիկ առիթ մը՝ երկրին մէկ ծայրէն միւսը տիրող թշուառութիւնը ծածկելու եւ ժողովուրդին ուշադրութիւնը տարբեր ճակատի մը վրայ փոխադրելու համար :

Եւ ի՛նչ աւելի դիւրին բան՝ քան դրդռել տպէտ մարդոց կրօնական մոլեռանդութիւնն ու ազգայնամոլական կիրքերը :

Պոլսոյ, Անգարայի, Իզմիրի եւ գլխաւոր քաղաքներու մէջ տեղի ունեցած բուռն ցոյցերը Յունաստանի եւ հելլէն ժողովուրդին դէմ՝ կը յիշեցնէին կրետէի դրաւման եւ պալքանեան պատերազմի հռչակման նախօրեակին կատարուած սանձարձակ պոռթկումները :

Անմոռանալի պիտի մնայ 1955 Սեպտեմբերի վեցը, երբ քանի մը ժամուան ընթացքին Անատոլուէն յատկապէս Պոլիս բերուած բազմահազար ջարդարարներ՝ համալսարանական ուսանողներու եւ ուսանողուհիներու դործօն աջակցութեամբ՝ քարուքանդ ըրին Օսմանեան կայսրութեան նախկին մայրաքաղաքին յոյն եւ հայ հազարաւոր վաճառատուներն ու բազմաթիւ եկեղեցիները, չխնայելով նոյնիսկ մեռելներուն, որոնց գերեզմանները սրբապղծեցին :

« Դեմոկրատ » Թուրքիոյ ճակտին քըսուած սեւ արատը անկարելի է մաքրել :

Կիպրոսի կնճիռը ժամանակաւոր լուծում մը ստացաւ, «վերջն», Աղանաեան Ուխտի գլխաւոր վարիչներուն, մասնաւորաբար ամերիկեան կառավարութեան կողմէ որուած խիստ ազդարարութեան չնորհիւ :

Երբ հրդեհը կը սպառնայ այրել երկու դրացիներուն ալ տունը, կը մոռցուին ներքին վէճերը :

Այս սկզբունքէն մեկնելով է, որ Անգլիա, Յունաստան եւ Թուրքիա ստիպուեցան կարճ կապել եւ յանդիման համաձայնութեան մը, վերահաստատելով խաղաղութիւնը կղզիին մէջ եւ հանդարտեցնելով կիրքերը :

Այս առաջին քայլն առնելէ վերջ, այժմ փորձեր կ'ըլլան բարեկամական յարաբերութիւններ ստեղծել Յոյներուն եւ Թուրքերուն միջեւ : Յունաստանի վարչապետն ու արտաքին նախարարը Անկարա կ'երթան ...

Կը կրկնուի պատմութիւնը :

1919ին Անգլիոյ դրդումով հելլէն բանակը Իզմիրէն սկսեալ դէպի անատոլուի ներսերը յառաջանալով, գրաւած էր մինչեւ Սաքարիա : 1922 Սեպտեմբերի ազէտը ճակատագրական պիտի ըլլար ո՛չ միայն Յոյներուն, այլ Հայերուն համար : Սեւրի դաշնագիրը պիտի փոխարինուէր Լոզանի չարաբաստիկ դաշնագրով :

Վէնիզէլոս, Թուրքերու մեծագոյն թշնամին, սրտին վրայ քար դնելով, 1933 Սեպտեմբեր 14ին Անգարա կ'երթար՝ Մուսթաֆա Քեմալի հետ բարեկամական դաշինք կնքելու համար :

Նոյնը կը փորձէ այսօր Քարամանլիս :

Անդամ մը եւս Թուրքիա կը տանի չաղթանակը՝ չնորհիւ դաշնակիցներու մեղսակցութեան :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀԵՐՔԸՐ ՈՒՈՇԻՆԿՔԸՆ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ

ԶՐՋԻԼ ԱՑԶՂՆՀԱՒՈՒՐԻ ՄՕՏ

Միացեալ Նահանգներու Արտաքին Նախարար Հերթըր Փարիզի ժողովէն վերադարձին՝ Ուոշինկթընի մէջ յայտարարեց :

— Արեւմտեաններու միջեւ կատարեալ համաձայնութիւն գոյացաւ՝ բոլոր հարցերու չուրջ : Այս պարագան մեծապէս օգտակար պիտի ըլլայ մեզի՝ Ժընեւի մէջ յաջողութիւններ արձանագրելու համար, եթէ Խ· Միութիւնը իրապէս կը փափաքի բանակցիլ եւ տեղ մը հասնիլ :

Լրագրող մը հարց տուաւ թէ արդեօք իրապէս բոլոր հարցերու չուրջ համաձայնա՞ծ են Արեւմտեանները, որովհետեւ Փարիզէն հասած լուրերը կը հաստատէին էթ կարդ մը «մանրամասնութիւնները մէկ կողմ ձգուած են :

— Ո՛չ, պարոն, պատասխանեց Հերթըր, մենք կարգադրեցինք նաեւ բոլոր մանրամասնութիւնները :

Ուրիշ լրագրող մը հարցուց թէ Հերթըր յաւատա՞ս է Գերմանիոյ հարցերը լուծելու համար :

— Եթէ դիտնայի թէ ինչ կը մտածեն մեր հակառակորդները՝ կրնայի պատասխանել ձեզի :

Այնուհետեւ Արտաքին Նախարարը դիմեց Նախագահ Այզընհաուըրի մօտ, կէթիպըրկի ազարակը, ուր աւելի քան մէկ ժամ խորհրդակցեցաւ :

Շարաթ օր Հերթըր Ուոշինկթըն Ռիսի հետ ունեցած էր Տըլլըսի հետ :

Նախապէս՝ Ամերիկայի նախկին Նախագահ Թրումըն ալ այցելած էր Տըլլըսի եւ Մարշալի, որ նոյնպէս դինուորական հանդիպումը կը դիտնուի :

Ներկայիս գրեթէ ամէն ինչ յստակ է Արեւմտեաններու եւ մասնաւորապէս Ամերիկացիներու համար : Յաջորդիկայ չաբաթ, Ժընեւ մեկնելէ առաջ Հերթըր վերջին անդամ մըն ալ պիտի խորհրդակցի իր դործակիցներուն հետ եւ պիտի խօսի Ամերիկեան հեռատեսիլէն :

Հակառակ այս բոլորին՝ Լոնտոն կը չարունակէ մեծ արժէք չընծայել Արտաքին Նախարարներու ժողովին : Անգլիոյ վարչապետին կարծիքով մեծ բան պիտի չէ ըսուած Մայիս 11ին Ժընեւի մէջ սկսելիք խօսակցութիւններէն :

Մաքմիլըն իր յոյսը դրած է Մեծերու ժողովին վրայ, ինչպէս նաեւ՝ Խրուշչեւ : Միացեալ Նահանգները, Ֆրանսա եւ Ա· Գերմանիա իրենց Թերահաւատութիւնը չեն ծածկեր : Այս վերջիններուն կարծիքով՝ Խ· Միութեան հետ կարելի չէ համաձայնութեան մը յանդիլ :

Աւելին՝ Մաքմիլըն այն կարծիքը ունի թէ ՄԱԿը նոյնիսկ աւելի չատ բան կըրնայ ընել երկու աշխարհներու տարաբաժանումը հարթելու համար՝ քան Արտաքին Նախարարներու ժողովը :

Ամէն պարագայի մէջ՝ Անգլիոյ վարչապետը յոյս յայտնեց որ Արտաքին Նախարարները որոշ արդիւնքի մը յանդին՝ որպէսզի Մեծերու ժողովը լաւ ճամբու մէջ դրուի «ասիկա միակ ժողովն է՝ որ կոչուած է լուծելու աշխարհի բոլոր հարցերը, այսպէս կը մտածեմ ես, այսպէս կը մտածեն նաեւ միւս երկիրներու կառավարները » :

Մինչ այս մինչ այն, Անգլիոյ նախկին վարչապետ Զըրչիլ Նիւ Եորքէն Ուոշինկթըն գնաց, ուր պիտի հասնէր երկուշաբթի դիշեր : Սպիտակ Տան մէջ, Զըրչիլ Նախագահ Այզընհաուըրի հիւրը պիտի ըլլայ մինչեւ Մայիս 7 :

Օր ը Օրթը

ՓԱՏԻՇԱՀԸՄ ՉՕՔ ԵԱՇ՛

Մեր մեծերէն լսած ենք .

— Կար ու չկար, ատեն մը կար, երբ Պոլսոյ մեր լրագիրները Հայկազեան բառարանին ամէնէն շռնդալից ածականները կը ժողվէին՝ ողջունելու համար Նորին Օգոստափառ Գազանութեան, Սուլթան Ապտիւլ Համիտի, ծննդեան կամ գահակալութեան — տարեդարձը··· Ինչե՛ր չէին ըսեր անոր համար՝ իրենց վախէն— բարերա՛ր , բարեգո՛ւթ , բազումողո՛րմ , բարեխնա՛մ, գթառա՛տ, մարդասէ՛ր , հայր··· Ա՛խ, ինչպէ՛ս կը ֆծնէինք այդ հրէշին առջեւ··· Մեր Պատրիարքն ան – գամ, փէշերը կը փղդվէր ու ելտրզի պատը կ'երթար, այդ օրը ու Արքային Դահլիճէն ներս կը մտնէր, մէջքը երկու կտոր ըրած ու կը համբուրէր արիւնկզակ բարեհնին աջը··· Ազգերնիս ալ, դուրսը, փողոցներուն մէջ, լուսավառութիւն — *տօնանմա* — կ'ունենար ու ձայները ձգած կը պոռար — *փատիշահըմ չօք եաշա՛*··· Միայն մեր տուներէն ներս կը լսուէր « ազօքճիներուն» ու «բարեմաղթութեանց» մնացեալը՝ մեր մամիկներուն բերնէն .

— Աստուած հոգին առնէ ··· Շան–սատա՛կ ելլէ··· Դժոխքին կրակները՛ւն մէջ այրի··· երկու աֆեչ՛րը քչօքնան··· երկու ծառերը կոտրի՛ն···Լեզո՛ւն բռնուի : Այո՛, տղաքս, կար ու չկար ատեն մը կար, երբ ազգերնիս ծունկի կուգար աշխարհի ամէնէն սարսափելի գազանին առջեւ··· Հիմա, ատանկ չէ, կարծեմ ···

Ո՞վ ըսաւ որ «հիմա ատանկ չէ» : Հիմա ալ ատանկ է, մեծ հայրիկ : Միայն «փատիշահ»ին անունը փոխուած է : Եւ անոր հասցէն : Մէյ մըն ալ, երէկուան *տոնա – մայիս* առիթը :

Երէկ, մեզի համար կ'ըսէին «փոբրա – մասնութիւն» ու մեզ ծունկի բերել կու տային մէկ *փատիշահի* առջեւ :

Այսօր, մեզի համար կ'ըսեն «ազատ ու անկախ ազգ» ու նորէն ծունկի բերել կու տան մեզ՝ ոչ թէ մէկ խելագար *փատիշահի* այլ հազար *փատիշահի* առջեւ :

Երէկ, առնուազն, մեր տուներէն ներս, բուրբ *փատիշահը* անիծելու ազատութիւնն ու բաղութիւնը ունէինք : Այսինքն, անիծողը իր անէծքը լսողներէն — տնեցիներէն — չէր վախնար :

Այսօր, անիծելու միտք ունեցող մարդիկը չորս կողմը նայելու է — չելլէ իր բոռը Չեկային լուր տայ թէ «մեծ մայրիկս, երէկ գիշեր, բսաւ որ ···

Չէ՞ որ հաւատար թէ այսօր ալ կը բծնինք, այսօր ալ ծունկի կուգանք եւ այսօր ալ «*փատիշահըմ չօք եաշա*» կը պոռանք :

Լա՛ւ : կարդացէք «անկա՛խ» Հայաստանի Կոմունիստ կուսակցութեան բարտուղարին, Սուրէն Թովմասեանի ճառը, որ արտասանուեր է երկու ամիս առաջ, կուսակցութեան 21րդ համաժողովին, ի Մոսկուա :

Մեր Թովմասեանը ըսեր է ·

— Ատ Ամերիկան չկա՛յ — մեր ժողովուրդը կը հալածէր ··· Փա՛ռք Լենինին, կոմունիզմը վրայ հասաւ ու մեր Հայաստանը փրկեց ··· Մենք երախտապարտ ենք Ռուս ժողովուրդին ··· Այն օրերուն երբ բուրժուա կուսակցութիւնները, աշխարհակալներու օգնութեամբ, կովկասը խորհրդային Ռուսաստանէն կ'անջատէին, Ամերիկացիները եկան Հայերու գլխուն վրայ աղա եղան եւ Հայաստանի արտադրութիւնը տասներկու անգամ «ինկաւ» :

Այս շաշորթապատումէն ետք — որ կ'ապացուցանէ թէ մեր Սուրէնը պատմութիւն ալ չի գիտեր — մնացած տրխմարութիւնը ·

— Հայերը, դարերով, իրենց հողերուն վրայ, իրենց հաշուոյն, գրեթէ բա'ն մը շինած չէին··· Որովհետեւ , ազատ չէին ··· Բայց, հիմա՞···

Հիմա, իրենց հողերուն վրայ, ֆով ֆովի շարած են Սուրէնները պէս տխմարներ, որպէսզի անոնք մեր անցեալն ալ ոտքի տակ առնեն, պատմական իրողութիւնները խեղաթիւրեն, եւ խրուշչեւներու գարշապարը համբուրեն, մինչեւ որ այդ գարշապարը ջարդուփշուր ընէ իրենց ֆիթն ու բերանը :

Երէկուան «*փատիշահըմ չօք եաշա*»ն եւ այսօրուանը իրարմէ շատ ալ տարբեր չեն : Ափսո՛ս :

ԵԻՐՈՊԱՑԻ

ՆԱՍՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ԽՐՈՒՇՉԵՒ

Խրուշչեւի վերջին նամակին պատասխանը պատրաստուած է արդէն նախագահ Նասրի կողմէ եւ չուտով պիտի յանձնուի Խրուշչեւի՝ Մոսկուայի Ա· Մ· Հանրապետութեան դեսպան Էլ Գունեի միջոցաւ :

Մէկ – երկու օրէն Էլ Գունի Գահիրէէն պիտի մեկնի Մոսկուա՝ իր պաշտօնը վերստանձնելու համար : Եգիպտոս կան – չուած էր իր կառավարութեան հետ խորհրդակցելու համար, այն պահուն՝ երբ Խրուշչեւ – Նասր տաղնապը ծանրացած էր :

Ինչպէս ծանօթ է, Նասր պահանջած էր ու Խրուշչեւ դադրի արար համաձայնաւորները պաշտպանելէ, բայց Խ· Միութեան վարչապետը բուռն ճառով մը քաջալերեց անոնց գործունէութիւնը :

Նասրի պատասխանը տակաւին չէ հրապարակուած : Բայց յայտարարուեցաւ թէ եգիպտական պատուիրակութիւն մը պիտի երթար Մոսկուա՝ Աչխատանքի նախարար Մուսա Արաֆայի գլխաւորութեամբ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖԵՐԱՒՆ ԱՊԱՍ նոր յայտարարութիւն մը ըրաւ, այս անգամ Գահիրէի Ալ Մասսա Թերթին : Ցեսս կոչում ընելով, Ալժերիոյ ազատագրական ճակատի պարագլուխը ըսաւ ։— «Մինչ պատրաստ եմ բանակցելու Ֆրանսայի հետ, բայց մէկ պայմանով ։— Խօսակցութիւնները տեղի պիտի չունենան չէզոք երկրի մը մէջ եւ ոչ թէ Ֆրանսայի, պատրաստ ենք սակայն երկար պատերազմ մը մղելու Ֆրանսայի դէմ, պատերազմը՝ որ կրնայ 20 տարի տեւել » :

ՄԱՐՈԿԻ թագաւորը բարեկամական նամակ մը ուղղած է Զօր· Տը Կոլի : Մոհամմէտ Ե· կը մաղթէ որ Տը Կոլի ձեռք բերած յաջողութիւնները նպաստեն Ալժերիոյ խնդրին լուծման :

ԳԱՀԻՐէի եւ Փարիզի միջեւ հեռաձայնային յարաբերութիւնները վերահաստատուեցան, ամէն օր ժամը ութէն տասը եւ 15էն 17 : Այս յարաբերութիւնները դադրած էին 1956 Նոյեմբերէն ի վեր :

ՅՈՐԴԱՆԱՆի Հիւէէյն թագաւորը թեհրանի ճամբով վերադարձաւ Ամման՝ 56 օրուան չրջապտոյտէ մը յետոյ : Երիտասարդ թագաւորը խանդավառ ընդունելութեան մը արժանացաւ իր մայրաքաղաքին մէջ :

ՓԱՐՍԿԱՍՏԱՆի Շահը Անգլիա դնաց՝ ժընեւ հանդիպելէ ետք : Փարիզ դալէ առաջ երկար տեւեն պիտի մնայ Լոնտոն :

(Լուրերու շար·ը կարդալ Դ· էջ)

ՅԱԽՈՒՐԴ ՕԸՆԿՈՒՄԸ

«ՈՒՄԻՆ ԲՈՒՆ ԻՐ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՆՔ ԲԱՑԱՌԻԿ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԵՒ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ ՑՈՒՑԱԴՐԵԼ ՈՐԵՒԷ ՊԱՅՄԱՆՈՎ ԵՒ ՊԱՏՃԱՌՈՎ»։— «ԱՐԵՒԵԼՔ ՎԱ ԲԱՑԱՌԻԿ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԵՒ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ ՑՈՒՑԱԴՐԵԼ ՈՐԵՒԷ ՊԱՅՄԱՆՈՎ ԵՒ ՊԱՏՃԱՌՈՎ»։— «ԱՐԵՒԵԼՔ ՎԱ ԲԱՑԱՌԻԿ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԵՒ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ ՑՈՒՑԱԴՐԵԼ ՈՐԵՒԷ ՊԱՅՄԱՆՈՎ ԵՒ ՊԱՏՃԱՌՈՎ»։

Մ. Բ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ։

•

Մեր ոսկեայ դարուն ամէն մէկ ազգային գործ, ամէն մէկ ձեռնարկ, որ ուղղուած էր ազգի մը ապագայի ապահովութեան համար, ունեցած է իր ամենամեծ թշնամին ներքին կեանքին մէջ։ Ամէն մէկ ազգ, որ ուզած է իր ապագան ապահովել, ստիպուած է եղած է իր ներքին թշնամիներուն դէմ պայքարիլ

ԿՅՆՔԻՑ

Ֆ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼԲ.

Ալսօր Ռոսլեի տան դուռն հանկարծ բացվեց, և ներս մտավ Տիգրան Ալեքսանդրի Մելիք-Եսայեանը, որ ինքնաթիռով եկել էր Մոսկվա՝ Ռոսլեի հետ հանդիպելու համար։ Ռոսլեն ուրախացավ հանկարծակի հանդիպելով իր հին ընկերոջ հետ, որի հետ միասին նա ապրել էր Ֆրանսիայի մի քանի քաղաքներում։ Ռոսլեն ուրախացավ նաև այն առիթով, որ Մելիք-Եսայեանը ինքնաթիռով էր եկել Մոսկվա։ Ռոսլեն ինքն էլ ուզում էր ինքնաթիռով թռչել Ամերիկա, և Մելիք-Եսայեանի հետ ինքնաթիռի մասին խոսելը նրան հնարավորություն էր տալիս ավելի հաճախ տեսնել իր ընկերոջը։

Ռոսլեն ուրախությամբ ողջունեց Մելիք-Եսայեանին և հարցրեց նրան.

— Ինչպե՞ս հասար այդ «Ֆրանսիա»-ն, որ ինքնաթիռ չէ, այլ ամբողջ կղզի։

— Ես ինքնաթիռով չեմ եկել, — պատասխանեց Մելիք-Եսայեանը։ — Ես եկել եմ նավով, որ ամեն օր մեկնում է Ֆրանսիայի Մարսել նավահանգստից։ Ես ինքնաթիռով եկել եմ Մարսելից մինչև Ֆրանսիայի ափերը, իսկ այնտեղից նավով։

— Ինչո՞ւ ես չեկել ինքնաթիռով, — հարցրեց Ռոսլեն։

— Ես ինքնաթիռով չեմ կարող գալ, որովհետև ինձ հետ ունեմ մի մեծ կենդանի, որ ինքնաթիռով չի կարող թռչել։

— Ո՞ր կենդանին ես ուզում ասել, — հարցրեց Ռոսլեն։

— Ես ուզում եմ ասել, որ ինձ հետ ունեմ մի ընկեր, որ ինքնաթիռով չի կարող գալ։

— Ինչո՞ւ չի կարող, — հարցրեց Ռոսլեն։ — Ես հասկանում եմ, որ մարդն ինքն էլ չի կարող թռչել ինքնաթիռով, բայց ինչո՞ւ նրա ընկերը չի կարող։

— Ես ինքնաթիռով չեմ կարող գալ, որովհետև ինձ հետ ունեմ մի ընկեր, որ ինքնաթիռով չի կարող գալ։

— Ինչո՞ւ չի կարող, — հարցրեց Ռոսլեն

ԱՐԵՒՄՏ. ԳԵՐՄԱՆԻՈՑ վարչապետ Առընաուըը Պոն կը վերադառնայ՝ խոտլիոյ մէջ իր արձակուրդը անցընելէ ետք :

ՆԻՒ ԵՈՐՔԻ նախկին կառավարիչ Հարիման, որ Մոսկուայի ամերիկեան նախկին դեսպանն էր, քանի մը օրէն Ֆ. Միուէթիան կը մեկնի, ուր տեսակցութիւն մը պիտի ունենայ Խրուշչեւի հետ :

ՊՈՒՆՈՍ ԱՅՐԷՍԻ համամերիկեան տնտեսական ժողովին մէջ Ֆիտել Գասթրօ յայտարարեց թէ Միացեալ Նահանգները 15·000 միլիառ տոլար պէտք է տան Լատինական Ամերիկայի երկիրներուն :

ԲԱՆԿՈՒՒՆԻ (Պիրմանիա) խորհրդային դեսպանատան պինուորական կցորդը Մոսկուա փոխադրուեցաւ չինական օդանաւով մը : Գնդ. Սթրիկին, Ապրիլ 28ին հիւանդանոց փոխադրուած էր անձնասպանութեան փորձ մը կատարած ըլլալով : Հիւանդանոց եղած ատենը խորհրդային պինուանդակը կարդ մը հակախորհրդային յայտարարութիւններ ըրած է եւ փորձած է խորհրդային պահակներու ձեռքէն փախչիլ : Օդակայանը կռիւներ տեղի ունեցած են Ռուսերուն եւ լրագրողներուն միջեւ, մինչ առաջինները բռնի կը տանէին խորհրդային դիւանագէտը :

ՖՈՒԹՊՈԼԻ Ֆրանսական բաժակի հանդիպումը տեղի ունեցաւ Կիրակի օր, Քոլոմպի մարզադաշտին վրայ, 60·000 հոգիի եւ Հանրապետութեան Նախագահին ներկայութեան : Սօչօ եւ Լը Հավր հաւասար մնացին (1–1) : Երկու երկարաձգումներէ յետոյ ոչ մէկ խումբ կրցաւ տիրանալ բաժակին : Երկրորդ երկարաձգումին Սօչօ կը յաջողէր կէտ մը նշանակել, բայց Լը Հավր անմիջապէս կը նշանակէր իր կարգին, եւ խաղը վերջացաւ՝ 2–2 : Երկու խումբերը կրկին պիտի խաղան Մայիս 18ին :

ՅԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆ. Կ. Խաչի Գուլ. Օտտոյի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ, Տէր եւ Տիկին Շամիրեանի եւ իր զաւակներուն իրենց հօր, մեծ հօր

ԱԶԳԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ

մահուան առթիւ, այս առթիւ վարչութիւնը փոխան ծաղկեպսակի կը նուիրէ հազար ֆրանք «Յառաջ»ի Ֆոնտին, հազար ֆրանք Մշակոյթի Տան :

Նոյնպէս վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ Տէր եւ Տիկին Յակոբ Գէորգեանի զաւակներուն եւ ընտանիքին իրենց սիրեցեալ զաւկին եւ եղբօր, տարաբախտ Պետրոս Գէորգեանի սիրոյ մահուան առթիւ, այս առթիւ վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած է փոխան ծաղկեպսակի Տէր եւ Տիկին Կ. Քէչէեանէ (Փարիզ) երկու հազար ֆրանք, Տէր եւ Տիկին Ն. Քէչէեանէ հազար, Գ. Նշան Դարբինեանէ երկու հազար, Գ. Յակոբ Շահինեանէ երկու հազար ֆրանք :

×

Վիէն.— Հ. Մ. Ը. Մ.ի վարչական կազմը եւ բոլոր անդամները, իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն այրի Տիկին Շնորհիկ Քէչիչեանի, զաւակներուն, Գ. Լուիֆիկ Քէչիչեանի, Տիկին Զ. Տայեանին, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր, մօրեղբօր եւ պզտիկանին՝

ԼԵՒՈՆ ՔԷՇԻՇԵԱՆԻ

անակնկալ եւ կսկծալի մահուան առթիւ :

×

Կապոյտ Խաչի Մարսէյլի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Տէր եւ Տիկին Շահմիրեանին իրենց հօրը կսկծալի մահուան առթիւ, ինչպէս նաեւ ընտանեկան պարագաներուն :

Կապոյտ Խաչի Մարսէյլի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Այրի Տիկին Արաքսի Մալաքեանի, Գ. Աչոտ Մալաքեանին իրենց քրոջ եւ մօրաքրոջ Գայեանէ Քիրազեանի մահուան առթիւ :

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան կազմակերպած դաշտադնացութեան, դէպի Սէն Զազարիի պաղ աղբիւրը, 7 Յունիս կիրակի ամբողջ օրը : Օթոքարի համար արձանագրուիլ այժմէն, Գ. Տ. Զօրէքեանի մօտ, 5 Ավընիւ Քամիյ Փէլեքան :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

''ՄԱՅԻՍ 28''Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միւնչեւ լոյս) :

Վեցերորդ թաղապետարանի սրահնեբուն մէջ, Փլաս Սէն Սիւլփիս :

×

ԼԻՈՈՆԻ ՄԷՋ

Յունիս 6ին, Շաբաթ իրիկուն, Գ. թաղապետարանի սրահին մէջ :

ԱՊՐԻԼ 11–24Ի 44ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԳԱՏՕՆ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կրընոպլի Հայ Ազգային Եկեղ. Միութեան եւ մասնակցութեամբ զուլութիս կազմակերպութեանց, կիրակի, (10 Մայիս) կէսօրէ ետք ժամը երեքին Ռիւ ժէ Սէն Լուի սրահին մէջ :

×

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Այս կիրակի առաւօտեան ժամը 9·30ին, վաթիէթ սինեմային մէջ : Հովանաւորութեամբ Ազգային Առաջնորդարանի եւ հայ յարաբերութեանց :

Մասնակցութեամբ՝ Մշակութային, երիտասարդաց հայրենակցական եւ քաղաքական կազմակերպութեանց :

Կը նախագահէ՝

Պ. Վ. ՍԱՀԱԹՃԵԱՆ

Կը խօսին՝

ԳԵՐՑԱՐԳԵԼԻ ՋՈՒՀԱՃԵԱՆ

եւ Պ. ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ

Ինչպէս նաեւ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի եւ Մշակութային Միութեան ներկայացուցիչները :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի եկեղեցաչէն Տիկնանց Միութիւնը չնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուէրները ի նպաստ Լիոնի եկեղեցւոյ չինութեան.— Գ. Միքայէլ Գասմաճեանէ հինգ հազար ֆրանք, Տէր եւ Տիկին Գրիգոր Շաֆաֆեանէ իրենց քրոջ Մարիամ Սուքիասեանի մահուան առթիւ հինգ հազար, Տիկին Զօրայեանէ հազար, Վիլֆրանչէն հիւանդ մը Գ. Լուի Արմէնիէ Տէր Վռամշապուհ հօր միջոցաւ հինգ հարիւր ֆրանք :

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐ

Համբարձման Տօնին առթիւ (7 Մայիս) հինգշաբթի օր, ժամը 10ին, Փարիզի Ս Ցողհ. Մկրտիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը կազմակերպած է Հայ Մանուկներու հաղորդութեան օր :

Փարիզի եւ չրջակայից բոլոր դպրոցներու աշակերտութիւնը հրաւիրուած է ներկայ ըլլալու հանդիսաւոր Ս. պատարագին :

Արարողութիւններուն պիտի նախագահէ եւ քարոզէ Գեր. Տէր Սերովբէ Եպիս. ՄԱՆՈՒԿԵԱՆ :

Կը հրաւիրուի նաեւ հայ հասարակութիւնը :

ՊԱՂԱՏԵԱՆ ՍՐԲ. ԻՆ ՇԻՐԻՄՆԻՆ ՀԱՄԱՐ

4 Ապրիլին տրուած հանդէսէն փոխան պատուոյ տոմսերուն ստացուած են հետեւեալ դումարները.— Տոքթ. Արշակ Անդրէասեան տասը հազար ֆրանք, Ոմն հինգ հազար, Ն. Թրէնկեան, Վ. Թրէնկեան, Մայր Ակոնցեան, Գ. Համբարձումեան հազարական ֆրանք, Սարաֆեան, Տամլամեան, Տիկին Խաչիկեան 500ական ֆրանք, Տիկին Կէնտէլիճճի 200 ֆրանք : Ընդհ. դումար 20·750 ֆրանք :

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Դատական վճիռի մը համաձայն բնակարանի ծանր տաղնապի մը մատնուած ըլլալով, կը փնտռեմ Փարիզի կամ արուարձաններուն մէջ առնուազն երկու սենեակ եւ խոհանոցով յարկաբաժին մը : Տեղեկացնել հասցէս՝

A. KEMPETIAN
6, RUE D'ARRAS, PARIS-5e

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Յովհաննէս Զօրլուեան (Անգարացի) 65 – 70 տարեկան, քառասուն տարի ա – ռաջ Պոլսէն մեկնած, հօրը անունը՝ Սիմոն, մօրը՝ Ովսաննա : Հասցէ.—Եղբայրը՝ Վահան Զօրլուեան (լուսանկարիչ), Զարշը Գափու, Ամալը Քանտիլ սօֆաֆ, թիւ 133 տունը, Իսթանպուլ : Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

ՄԱՐՍԷՅԼ

Գրական Ասուլիս նուիրուած Կ. Փոլատեանի նոր վէպին՝ ԱՐԾԻՒՆԵՐԸ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ :

Այս Շաբաթ իրիկուն, ժամը 21ին, Ֆրանս. Համալսարանի ամփիթատրոնը (40 Ալէ Կամպէթա) :

Կը նախագահէ Պ. Արամ Թէրզիպաշեան, վէպը կը ներկայացնէ Պ. Աատուր Քէօսէեան : Կը վերլուծեն Պ. Պ. ՇԱՒԱՐՇ ԹԱՇՃԵԱՆ, ՑԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՑԵԱՆ եւ ԺԻՐԱՅՐ ՄԻՐԻՃԵԱՆ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Դպրոցասէրի տարեփակի հանդէսը Յունիս 28ին, Կիրակի, կէսօրէն ետք, ժամը 15ին, վարժարանի հանդիսասրահին մէջ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէի ներկայացուցչական ժողովը այս Շաբաթ, ժամը 21ին, Մշակոյթի Տան մեծ սրահին մէջ : Օրակարգ՝ չարունակութիւն նախորդ ժողովին : Կը հրաւիրուին մարխորդ ժողովին : Կը հրաւիրուին մարմիններու եւ խումբերու ներկայացուցիչները :

ՊԱՆԵԷՕ – ՔԱՇԱՆ.— Հ. Ց. Դ. «Արձիւ» ԱՆթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Երեքշաբթի, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին : Բոլորին ներկայութիւնը անհրաժեշտ է :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Ապրիւր Սևրոր եւ Մկրտիչ Եօթնեղբայրեան խումբի ընդհ. ժողովը այս Ուրբաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ : Ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՕՐ

Նախաձեռնութեամբ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Փարիզի Ահարոնեան խումբին
Շաբաթ, 16 Մայիս, ժամը 21էն միւնչեւ լոյս Սէրբլը Միլիթէոի շէեղ սրահնեբուն մէջ :

Ինամուած գեղարուեստական բաժին : Երգ, պար, արտասանութիւն, զուարչար :

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

JACQUES MORINOTի ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲՈՎ

Երգիչը՝ ԱԼՎԱՐԷԶ

Հ Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ՊԱՆԵԷՕ ՔԱՇԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՏԱՐԵ ԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Շաբաթ, 9 Մայիս ժամը 21էն միւնչեւ լոյս, 6րդ թաղամասի Բաղաքապետարանի սրահներուն մէջ :

Պանեէոյի պարախումբը : Ճոխ պիւֆէ :

ORCHESTRE RICOS CRÈOLE BAND

Մուտք 500 ֆրանք :

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ

Յունիս 10ին, Շաբաթ երեկոյեան ժամը 9ին,

ECOLE NORMALE DE MUSIQUE

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕՐԸ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ

ՍՈՐՊՈՆԻ ՄԵԾ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

47, Rue des Ecoles, métro : St.-Michel et Odéon

Այս կիրակի, ժամը 14·30ին

Բարձր հովանաւորութեամբ

Ս. ԵՊ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

(Հայրապետական պատուիրակ Եւրոպայի Թեմի)

եւ Ֆրանսական Կարմիր Խաչի

Կը նախագահէ.—

PROF. CAMILLE LIAN
Commandeur de la Légion d'Honneur
Membre de l'Académie de Médecine
Professeur à la Faculté de Médecine

Կը մասնակցին.— Օր. Ալիս Պօյաճեան եւ Պ. Պերճ Պէրպէրեան (*Հայկական պար*), (*դաշնակի ընկերակցութեամբ Տիկին Անժէլ Թագուրեանի*)

Տիկին Ս. Սաաթճեան — Լը Բուա եւ Պ. Լը Բուա (*Երգ*), Տիկին Հ. Խտրչեան Շասալիէ (*արտասանութիւն*) :

MLLE GISÈLE DE MONCEAU (*Թաւ Ջութակ*)
MLLE MARIELLE NORDMANN (*տաւիղ*)

Օր. Յասմիկ Մարուճեան (*Երգ*), Պ. Արտաշէս Գմբէրեան (*արտասանութիւն*), Պ. Նուրհան Մարգարեան (*արտասանութիւն*), Պ. Արթօ Պէճօճ (*դաշնակ*), Պ. Մկրտիչ Պօղոսեան (*Երգ*), Պ. Ս. Նահապետեան (*արմոնիքայի երիտասարդ վերթիւզը*), Փարիզի լեհական լիսէի *Երգի եւ պարի խումբը*, *դեկավարութեամբ*

Պ. Է. ԵՕՏԼՈՎՄՓԻԼ եւ ՆԱՑԻՐԻ ԵՐԳԱՀՈՒՄԲԸ

Դեկավարութեամբ Գէորգ Եանպէկեանի :

տոմսերու գինն է 150, 200, 300 եւ 500 ֆրանք :

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՄԻՇՏ ԱՌՈՂՋ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ'
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՌԵՑԷՔ

BOSPHORE Ի

ՀԷԼՎԱՆ ԵՒ ԹԱՂԻՆԸ

ՀՐՈՒՇԱԿԸ, որ կը պատրաստուի շուշմայով (*սուսամ*) եւ շաբարով, առաջնակարգ սնունդ մըն է, կազդուրիչ՝ շնորհիւ շուշմային, որ Արեւելքի մէջ ծանօթ է նաեւ հինէն ի վեր, իր հրաշալի բուժական յատկութիւններով, իր երիտասարդացնող տարրերով,

Արեւելեան ժողովուրդներուն երկարակեցութիւնը արդիւնք է Հէլվայի եւ թահինի գործածութեան :

Այսօր Արեւմուտքի մէջ եւս բժշկական հեղինակութիւններ կը հաստատեն առաջնակարգ այս սննդանիւթին արժէքը :

Sté BOSPHORE (ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՑՆ ԱՐՏԱԴՐԻՉԸ)
2, Rue Louis Astoin - Marseillle

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200

Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
6
ՄԱՅԻՍ
MERCREDI
6 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8387 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4288

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԻԱՑԵԱԼ ՁԱԿԱՏՈՎ

Ժընեւի Մայիս 11ի խորհրդաժողովին համար հակամարտ երկու ճակատները վերջացուցին իրենց նախապատրաստական աշխատանքները: Արեւմուտքցիները՝ Փարիզի, Արեւելքցիները Վարշաւայի մէջ:

Օրակարգի հարցերուն շուրջ մասնաւորեալ դէտները մանրակրկիտ ուսումնասիրու-թիւնները կատարած ըլլալով, դիրքերը վերջնապէս ճշդուած են: Ո՛չ մէկ բան բախտի ձգուած է:

Իսկ ամէնէն կարեւորը՝ մեծ դաշնակիցները կատարեալ համաձայնութիւն դոյացուցած են բոլոր խնդիրներու մասին: Մանաւանդ վճռապէս որոշած են ո՛չ մէկ գինով տեղի տալ բոլշեւիկեան ըսպառնալիքներուն առջեւ: Ո՛չ մէկ զի-ջում կատարել:

Անգլիացիներն են միայն, որ ջատագոված են որոշ ճկունութիւն ցոյց տալու եւ բանակցութիւնները չխզելու քաղաքական-նուրբիւն մը: Սակայն ի վերջոյ համակերպած են միացեալ եւ ամրակուռ ճակատով ներկայանալու որոշման: Զըրչիլ – Այզընհաուըր հանդիպումը աւելի պիտի պայծառացնէ մթնոլորտը:

Զորս երկիրներու արտաքին նախարարներու խորհրդակցութեանց զուգընթաց, Ֆրանսայի երեսփոխանական ժողովն ալ իր վերաբացման անդրանիկ նիստերուն ընթացքին լայնօրէն զրաղեցաւ օրուան քաղաքական հրատապ հարցերով, մաս-նաւորապէս Ժընեւի խորհրդաժողովին օրակարգով:

Բոլոր հոսանքներու ներկայացուցիչները ալ հաւանութիւն յայտնեցին կառավարութեան հետապնդած քաղաքականութեան:

Նախարարապետը պատասխանելով ճառախօսներու թելադրութեանց, յայտնեց որ խնդրոյ առարկայ են արեւմտեան եւ բոպալի ապագան, Ալանտեան Ուխտը, Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ ուժերու հաւասարակշռութիւնը եւ խաղաղ համակեցութեան վերջին պատեհութիւնը:

Յատկանշական է Ֆրանքֆուրտեան յարաբերութեանց մասին մտքերու մէջ առաջ եկած յեղաշրջումը: Զօրավար Տը Կոլ կարեւոր քայլեր առաւ երկու երկիրներու զործակցութիւնն ու բարեկամական յարաբերութիւնները ամուր հիմերու վրայ դնելու համար:

Այս քաղաքականութիւնը սկսած է արդէն տալ իր պտուղները: Արեւմտեան ճակատին դիրքը աստիճան մը աւելի ամրացուցած է՝ ընդդէմ բոլշեւիկեան աչխարհակալական ձգտումներուն:

Աչխարհի ճակատագիրը վարելու կոչուած Մեծերուն համար մտահոգութեան գլխաւոր առարկան է խաղաղութեան պահպանումը:

Ալանտեան Ուխտը իր պաշտպանողական ծրագրով կոչուած է կատարելու «խաղաղութեան պահակ»ի դերը:

Այդ նպատակով է, որ անիկա կը ձգտի զինուորական – ռազմավարական ամուր պատնէշ մը կանգնել արեւմտեան Եւրոպայի մէջ, յարձակողական պատերազմի մը փորձութեան չմղելու համար կրեմլինի վարիչները:

«Ուժերու հաւասարակշռութիւն»ը լաւագոյն պահակն է խաղաղութեան: Անոր խախտումը կրնայ աղիտաբեր ըլլալ մարդկութեան համար:

Համաչխարհ Զինաստան սկսած է աչքերը ուղղել դէպի արեւմուտք: Վեց հարիւր միլիոնոց երկրի մը քանակական ուժին վրայ յոյս դնելով կարելի չէ արկածախնդիր քաղաքականութիւն վարել:

«Դեղին վտանգ»ը ամէնէն առաջ պիտի պայթի զայն քաջալերողի գլխուն:

Դաշնակիցներու միացեալ ճակատն է միայն, որ պիտի փրկէ խաղաղութիւնը:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

ՏԸ ԿՈԼԻ ՁԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

★

ՈՒՂԵՎԱՐՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Զօր. Տը Կոլ Մայիս եօթին Փարիզէն պիտի մեկնի՝ Հանրապետութեան Նախագահ ըլլալէ ի վեր պաշտօնական երրորդ չրջագայութիւնը ընելու համար:

Նախագահին առաջին հանդրուանը պիտի ըլլայ Պուրժ՝ ուր ճառ մը պիտի խօսի: Նոյն օրը իրիկունը պիտի հասնի Շաթօ:

Ուրբաթ օր Նախագահը պիտի այցելէ Օրլէան՝ ուր պիտի մասնակցի Ժան տ'Արքի տօնակատարութեանց: Շաբաթ՝ Պլուա, Թուր, Մոն – Լուի:

Երեք օրուան այս չրջագայութեան ընթացքին Զօր. Տը Կոլ պիտի խօսի վեց ճառ:

Մինչ այդ սակայն՝ քաղաքական եռուզեռը կը չարունակուի Փարիզի մէջ: Ֆրանսական Հասարակապետութեան Գործադիր Մարմնոյն Նորհուրդը յաչորդական երկու նիստեր գումարեց Էլիզէի մէջ: Ժողովը նախապէս որոշուած թուականէն առաջ տեղի ունեցաւ՝ Նախագահ Տը Կոլի չրջագայութեան պատճառով:

Երեքչաբթի օր Նախարարաց Նորհուրդն ալ ժողով մը գումարեց՝ ուր Արտաքին Նախարար Քուվ տը Միւրվիլ խօսեցաւ Փարիզի վերջին ժողովին մասին:

Վարչապետ Տրպրէ բացատրութիւններ տուաւ իր գործակիցներուն՝ Պոնի մէջ Ատլանտեան Դաշինքի հետ ունենալիք խորհրդակցութեան չուրջ: Ուշագրաւ է այն պարագան, որ Ֆրանքֆուրտեան այս խօսակցութիւնները միայն քաղաքական բնոյթ պիտի չկրեն:

Նախարարաց Նորհուրդը քննեց նաեւ ուղեվարներու գործադուլի հարցը: Այսօր՝ Զորեքչաբթի, կառախումբի բանուորները գործադուլ յայտարարած են, բայց դինուորական կառքերը պիտի աչխատին երթեւեկը ապահովել:

Ուղեվարները աչխատավարձի յաւելում կը պահանջեն:

× *Մեթրոյի չարաթական տոմսերու դինը 160 Ֆրանքէն պիտի բարձրանայ 280 Ֆրանքի, իսկ օթոպուսի իւրաքանչիւր տոմսակ պիտի արժէ 17·50 Ֆրանք, փոխանակ՝ 15 Ֆրանքի, այսինքն՝ fառնիէ 300 Ֆրանքէն պիտի բարձրանայ 350ի:*

Այս որոշումը պէտք է վաւերացուի Աչխատանքի նախարարին կողմէ՝ որպէս զի կարելի ըլլայ գործադրել զայն:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏՔ ՉՈՒՆԻ

1955էն ի վեր առաջին անգամ ըլլալով պետութիւնը պարտք չունի Ֆրանսական դրամատուներու: Ընդարեւ, 1959 Ցուն-ուար մէկէն ի վեր պետական դանձը 340 միլիոն տոլարի իր պարտքը վճարած է (167 միլիառ Ֆրանք):

Այսուհետեւ կառավարութիւնը կը պատրաստուի վճարել իր արտաքին պարտքերը. առաջին մասնավճարը՝ 1960-ին (600 միլիոն տոլար), երկրորդը՝ 1961-ին (450 միլիոն տոլար):

Միւս կողմէ կը յայտարարուի թէ մօտ առենէն Ելմտական Նախարար Փինէ Միացեալ Նահանգներ պիտի երթայ, ուր ամերիկացի գործարանատէրերու պիտի առաջարկէ իրենց դրամագլուխները օգտագործել Ֆրանսայի մէջ:

Այս ուղղութեամբ Փինէ մամուլի առաջիկայ մէկ մեկնութեան մէջ կը յայտնէ թէ Ֆրանսա պատրաստ է ներգրաւելու օտարերկրեայ դրամագլուխներ, որոնք կրնան ներդրուիլ ֆրանսական ընկերութիւններու մէջ՝ առանց ազգային ընկերութիւններու բաժնետոմսերու մեծամասնութիւնը կորսնցնելու վտանգին:

Ֆրանսական կառավարութիւնը կը յուսայ որ այս միջոցով ֆրանսական ընկերութիւնները պիտի կարենան ընդլայնել իրենց գործունէութիւնը եւ ներդրումները:

Ֆրանսական կառավարութիւնը կը յուսայ նաեւ որ այս միջոցով ֆրանսական ընկերութիւնները պիտի կարենան ընդլայնել իրենց գործունէութիւնը եւ ներդրումները:

ՀԱՄԲՐՇՈԼՏ.— ՄԱԿ-Ը ՊԻՏԻ ԶՄԻՋԱՄՏԷ ՊԵՐԼԻՆԻ ՄԷՋ

Մակի ընդհանուր քարտուղար Համըր – չոլտ Շուէտ մեկնելէ առաջ մամուլի առաւիս մը տուաւ Քոփէնհակի մէջ, ուր կարեւոր յայտարարութիւններ ըրաւ մի-ջազգային հրատապ հարցերու չուրջ:

Լրագրողի մը հարցումին պատասխանելով, Համըրշոլտ ըսաւ թէ Մակը, զըժ-բախտաբար, պիտի չկարենայ միջամտութիւն մը ընել՝ երբ Պերլինի տագնապը ծանրանայ:

Տակաւին յայտնի չէ թէ Մակը յառաջիկայ միջազգային ժողովին պիտի մաս-նակցի թէ ոչ: Համըրշոլտ ըսաւ թէ այդ ուղղութեամբ առաջարկ չէ ըրած, բայց նման պարագայ մը հաւանական կրնայ ըլլալ՝ քանի որ խնդրոյ առարկայ է եւ-րոպայի ապահովութիւնը: Մակի ընդհա-նուր քարտուղարին տպաւորութիւնը այն է թէ Պերլինի տագնապը աւելի քան ծանր է:

Լրագրող մը հարցուց թէ Համըրշոլտ ինչո՞ւ Փեչտա չգնաց 1956ի հունգարա-կան յեղափոխութեան առեն.

— Այն առեն ոչ ոք գիտէր թէ Փեչտա ինչ կացութեան մէջ էր, բայց ամէն մարդ գիտէր թէ կացութիւնը ինչ էր Սուէզի մէջ ...

Համըրշոլտ աւելցուց, խօսքը ուղղելով նոյն լրագրողին.—Ի՞նչ պիտի ըլլար Սուէզի մէջ՝ եթէ այն առեն Փեչտա գըտնուէի: կը կարծեմ թէ եթէ չմիջա-մտէի՝ պատերազմը պիտի չդադրէր:

Միւս կողմէ, Ալանտեան Ուխտի ընդհանուր քարտուղար Սփաք յայտարարեց՝ թէ որեւէ ձեւով կարելի չէ իրականացը-նել Գերմանիոյ չէզոքացումը, ինչպէս կարելի չէ իրականացնել Արեւմտեան Եւրոպային ամերիկեան ուժերը հեռա-ցնելու ծրագիրը:

Այսուհանդերձ, աւելցուց Սփաք, կա-րելի է ուսումնասիրել Եւրոպայի կարգ մը չրջաններուն մէջ զինաթափ գօտիներ ստեղծելու հաւանականութիւնները:

× *Անգլիոյ Արտաքին Նախարար Սելուին Լոյտ յայտարարեց.— «Պրուչչէլ ըսաւ թէ Արեւմտեան Պերլինի քաղաքացիները իրաւունք ունին որոչելու իրենց ապրելա-կերպը... այս յայտարարութիւնը մեկ-նակէտ մը կրնայ ըլլալ՝ Ռուսերու հետ խորհրդակցելու համար»:*

Հակառակ Համըրշոլտի յոռետեսու-թեան՝ Արեւմտեանները կը չարունակեն վճռական մնալ իրենց տեսակէտներուն վրայ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ Վարչապետ Նեհրու թիկնեփի դէպքերուն չուրջ խօսելով յայտարարեց թէ Հնդկաստան պիտի չարունակէ իր խաղաղ զոյակցութեան եւ չէզոքութեան իր քաղաքականութիւնը: Միւս կողմէ, Նեհրու պիտի աչխատի որ Հա-մայնավար Զինաստան ընդունուի ՄԱԿի մէջ:

ՍԻՓԱՆԱՑ լերան վրայ հինգած անգլիական օդանաւին մօտ հասած են անգլիացի եւ Թուրք լեռնագնացներ, բարձրանալով 4350 մեթր: 12 հոգիէ դիակները կարելի եղած է գտնել, ինչպէս նաեւ երկու հրթիռները՝ որոնք չէին պայթած:

ԱՄԵՐԻԿԱՑի Արտաքին Նախարարու-թեան բանբերը յայտարարեց թէ ամե-րիկեան օդանաւերը պիտի չարունակեն թռիչք կատարել Պերլինի վրայ:

ԿՈՍՏԱՆԴԻՆԻ մէջ ծանր դէպքեր պատահեցան առջի օր: Մինչ ցուցարարները Մարսէյեզը կ'երգէին Զօր. Տը Կոլի նը-կարները կը նետուէին պատուհաններէն եւ կը կոխկռտուէին: Զինուորական իշ-խանութիւնը ստիպուեցաւ լուսարձակի ժամը յառաջացնել (20·30 փոխանակ՝ 22ի):

(Լուրերու շար.ը կարդալ Դ. էջ)

ՅԱԿՈԲ ԿՈՋՈՅԵԱՆԻ ՄԱՀԸ

Յաւով կ'իմանանք որ վաստակաւոր նկարիչ Յակոբ Կոջոյեան մեռած է երե-ւանի մէջ Ապրիլ 24ին, ինչպէս կը հա-ղորդէ «Խորհ. Հայաստան» (26 Ապրիլ):

Դեռ վերջերս էր որ երեւանի, ինչպէս Մոսկուայի մէջ տօնուեցաւ տաղանդաւոր արուեստագէտին ծննդեան 75ամեակը, մասնաւոր երեկոյթներով եւ ցուցահան-դէսներով:

Կոջոյեան ծնած է 1883ին, Ախալցխայի մէջ: Ոսկերիչ էր հայրը, որու մօտ, իբ-րոյ մեծ եղբայրներուն մօտ պատանի Յակորը հետեւեցաւ նախ ոսկերչութեան, այսպէս առիթ ունենալով իւրացնելու ազգային արուեստի լաւագոյն աւանդու-թիւնները: Յետոյ նուիրուեցաւ նկարչու-թեան, դնաց Մոսկուա, ապա Միւնխէն, կատարելագործելու իր արուեստը, հա-ւատարիմ մնալով հայ ժողովրդական արուեստի ոճին, մշակելով ինքնուրոյն արուեստի լեզուն: Այնուհետեւ աչխատեցաւ Հայաստանի մէջ, իր ժողովուրդին ծոցին մէջ, 40 տարի անընդհատ:

Գիրքերու պատկերազարդութեան մէջ ունի մեծ վաստակ, ու կը մնայ վարպետ մը զեղանկարչութեան: 1936ին Հայաս-տանի կառավարութիւնը իրեն չնորհեց «վաստակաւոր նկարչի» տիտղոս, սա-ցած է բազմաթիւ չքանչաններ: Յետոյ նչանակուած է դասախօս Երեւանի գե-ղարուեստից վարժարանին:

ԿԱՐԴԻՆԱԼ ԿՈՒՍԱՆԹԻ ՄԱՀԸ

Լը Մանի արքեպիսկոպոսը՝ ակադեմա-կան Կարդինալ Կուսանթ վախճանեցաւ, եր-կուչաբթի օր, 87 տարեկանին:

Ինիկ Նոմանտոյի, Կարդինալը վար-դապետ ձեռնադրուած էր 1895ին, երկար առեն դասախօս եղած է եւ 1914ին Շեռ-պուրի Ս. Պօղոս Հաստատութեան մեծա-ւորը: Լը Մանի եպիսկոպոս կարգուած է 1918ին:

1936ին, անդամ ընտրուած է Ֆրանսա-կան Ակադեմիային, զբաւելով Փիէր Տը Նոլաքի աթոռը, ուրիչ համառօտ պատմա-բան մը:

Կարդինալ Կուսանթ մեծ արժէք մըն էր իրրեւ հմուտ եկեղեցական, պատմաբան եւ տաղանդաւոր զրագէտ: Ծանօթ՝ ա-րեւելքի ուր լուրջ ուսումնասիրութիւններ ըրած է 1919ի իր ճամբորդութեան ըն-թացքին, Կարդինալ Կուսանթ իր վերա-դարձին զիրք մը գրած է.— «Առաքելու-թիւն՝ արեւելքի մէջ»:

Իր միւս գործերուն կարգին յիչենք.— «Նոմանտոյիները՝ մեր հայրերը», «Շարադրութիւնը եւ ոճը», «Տիկին Տը Լաֆայէթ՝ Ռասինի աչակերտ», եւն:

Ժողովական Կուսանթ Կարդինալ ձեռնադրուած է 1953ին:

Իր մահով Ֆրանսական Ակադեմիայի թափուր աթոռներու թիւը կը բարձրա-նայ հինգի (Ֆաուէռ, Լըքոնթ, Շըվրիյօն, Սիկֆրիտ եւ Կուսանթ):

Իր կեանքին վերջին տարիները նուի-րած էր գրական պատմութեան: Ինք էր գլխաւոր պատասխանատուն «Ֆրանսական գրականութեան բառարան»ը գործին որ կը պատրաստուէր հաւաքաբար: Այս բա-ռարանը մեծ օգտակարութիւն կը բերէ պրպտողներուն, իր տուած տեղեկութիւն-ներովը գրականութեան վրայ, դարերու ընթացքին:

Կարդինալ Կուսանթի մահը մեծ յուզում յառաջ բերաւ կրօնական եւ գրական չըր-ջանակներու մէջ: Զօր. Տը Կոլ յաւակ-ցական հեռագիր մը ղրկեց չնչելով.— «Կարդինալ Կուսանթի կորուստը միայն Եկեղեցիին եւ Գրականութեան սուգը չէ: Կ'ազդէ նաեւ իմ վրաս ինչպէս բոլոր Ֆրանսացիներու»:

ԽՈՎԱՅՈՅՋ ՊԵՐԼԻՆԸ

—o—

Ամիսներէ ի վեր Պերլինի խնդրով պաեւրոպմի սպառնալիքի տակ կը գտնուի քաղաքական աշխարհը : Մոսկուայի համայնավար վարիչները չէին սպասեր թէ Պերլինի խնդրի կապակցութեամբ Արեւմուտքը միասնական, միակամ եւ անվիճելի կեցուածք պիտի ցոյց տար : Ճիշդ այնպէս ինչպէս Միացեալ Նահանգները ու Անգլիան ցոյց տուին Լիբանանի եւ Ցորդանանի ճակատին վրայ : Վարչապետ Խրուշչեւ քանիցս իր սպառնալից բառերով սկզբնական շրջանին քանի քանի անգամ յայտարարեց թէ «անկախ արեւմտեան պետութիւններէն՝ Մոսկուան ո–րոշած է Պերլինը յանձնել Արեւելեան Գերմանիոյ համայնավար կառավարութեան» :

Այդ յայտարարութիւնը թէեւ յուզում յառաջ բերաւ Արեւմտեան պետութիւններու շրջանակներուն մէջ, սակայն այդ հանգամանքը առիթ հանդիսացաւ, որ այս անգամ միակամ ու միասին իր խօսքը ըսէ Ատլանտեան Ուխտը, դլխաւորութեամբ Միացեալ Նահանգներու , Անգլիոյ եւ Ֆրանսայի : Այսպիսով Պերլինի չարաբաստիկ խնդիրը աւելի միացուց Ատլանտեան Ուխտի 15 պետութիւնները :

Պերլինէն քշելու համար Արեւմտեան զօրքը եւ ազատ քաղաք դարձնելու առաջարկին բուն նպատակը այն է, որ Մոսկուայի վարիչները կ'ուզեն ազատ Պերլինէն եւ Արեւելեան Գերմանիայէն իրենց ծանօթ մութ ճանապարհներով, համայնավար տիրապետութիւնը տարածել դէպի արեւմուտք :

Խրուշչեւ երբեմն խաղաղասիրական ճառ կ'ըսէ Պերլինի շուրջ, սակայն մեծ մասամբ իր երկարապատում ճառերով ու սպառնալիքներով կը թունաւորէ աշխարհի քաղաքական մթնոլորտը, եւ կը ծանրացնէ դիտաւորեալ կերպով Պերլինի շուրջ իրենց ստեղծած տագնապը, զոր խորքին մէջ Մոսկուայի վարիչները կ'ուզեն երկարաձգել ու չարունակել պաղ պատերազմը, պղտոր ջուրերուն մէջ ձուկ որսալու համար, ինչպէս եղած է միշտ իրենց գործունէութեան ընթացքին, քաոսուն տարուան մէջ :

Արեւմտեան պետութիւնները ետ չեն քաշուիր Մոսկուայի առաջարկներուն ու պահանջներուն Պերլինի խնդրի շուրջ եւ քաշէին իրենց զօրքերը Պերլինէն, Մոսկուան Պերլինը յանձնելով Արեւելեան Գերմանիայէն, վերջնականապէս պիտի դարձնէր Արեւելեան Գերմանիան արբանեակ երկիր, սառուկ վիճակի մէջ, ինչպէս Կովկասը, Պալտեան եւ Արեւելեան երկիրները : Արեւմտեան Պերլինի դոյավիճակը սերտ կերպով կապ ունի Եւրոպայի ապահովութեան խնդրի հետ : Մոսկուան այդ լաւ գիտէ, եւ իր մութ քաղաքական հաշիւներուն համար, առաջ կը քաշէ Պերլինի խնդիրը եւ Պերլինի կապակցութեամբ՝ պաղպատերազմը, ամենայն սաստկութեամբ :

Խրուշչեւ Լայբցիկի մէջ արեւմտեան պետութիւններու հասցէին կը յայտարարէր. « Մեզ չեն կարող վախցնել սուրեր ճօճելով : Սուրեր ճօճելով իրենք է որ կը վախցնեն ազատ աշխարհը Պերլինի, — Ֆորմոզայի , Լիբանանի, Ցորդանանի եւ այսօր էլ Իրաքի ճակատի վրայ, եղբայրասպան կռիւներով եւ ամիսներէ ի վեր, Պաղտատի չրջանին մինչեւ Մուսուլի անապատները : Խորհրդային Ռուսիան այսօր Եւրոպայի քթին տակ կազմ ու պատրաստ ունի մօտ 180զօրաբաժին, երբ արեւմտեան պետութիւնները միասին , միայն մօտ 22 զօրաբաժին : Արդ , ո՞վ կը ապառնայ սուրեր ճօճելով :

Պերլինի շուրջ Մոսկուայի վարիչներու կողմէ ստեղծած վէճը չատ խնդիրներ պիտի պարզէ թէ Խորհրդային Ռուսիոյ եւ թէ արեւմտեան պետութիւններուն համար : Խորհրդային Ռուսիան իր աշխարհակալութեան եւ իր նորանոր նուաճումներուն ժամը չարուցեց այս խնդիրը , միաժամանակ ցանկանալով այս ճակատի վրայ պառակտել Ատլանտեան Ուխտը , որ այս ուղղութեամբ հանդիսա քուն չունի : Կ'ուզէ պառակտել, որ հանդիսա ուր այս ուղղութեամբ հանդիսա քուն չունի : Կ'ուզէ պառակտել, որ հանդիսա ուր խաղաղ կերպով չարունակէ իր յառաջխաղացումը ու թափանցումը դէպի ազատ աշխարհը, յանուն ռուսական բոլշեւիզմի տիրապետութեան :

Սակայն չարաթը աւելի չուտ եկաւ քան ուրբաթը, Ատլանտեան Ուխտի պետութիւնները միակամ ու միասին ծառացան այս ահաւոր վտանգին դէմ :

Մոսկուան ամէն կերպ կ'աշխատի ծուռ ու մուռ ճանապարհներով օրինականացնել Արեւելեան Գերմանիոյ համայնավար իշխանութիւնը, որ կը հանդիսանայ փաստօրէն խամաճիկը, միջնաբերդը ու դինարանը, խորհրդային չարաչուք Ռուսիոյ, իրրեւ սպառնալիք ու վտանգ, արեւմտեան Եւրոպայի համար : Համայնավար վարդապետութեան դլխաւոր մեկնաբանը, Լենին, յաճախ կը յայտարարէր թէ « Համաչխարհային յեղափոխութեան չահը աւելի անհրաժեշտ է մեզ համար քան թէ մեր ազդային եւ մեր պետութեան չահերը :» Խրուշչեւ եւ իր ընկերները հաւատարիմ կը մնան այդ կտակին եւ Մոսկուայի վարիչներու դլխաւոր նպատակը կը հանդիսանայ , ոչ թէ ռուս ժողովուրդը կամ թէ մեծ ու փոքր ազգերու ազատութիւնը ու աշխարհի խաղաղութիւնը, այլ համայնավար կուսակցութեան տիրակալութիւնը եւ ռուսական բոլշեւիզմի տիրապետութիւնը աշխարհի վրայ : Մոսկուայի դերագոյն մութ նպատակն է դրաւելով Պերլինը միացնելով համայնավար արեւելեան Գերմանիային, չեզոքացնել արեւմտեան Գերմանիան , դաշնակից բանակները հեռացնել արեւմտեան Եւրոպայէն եւ անպաշտպան թողնել Եւրոպան, ինչպէս անպաշտպան մնաց Կովկասը, պալքանեան եւ պալտեան երկիրները : Երկրորդ աշխարհամարտի յաղթանակէն յետոյ Խորհրդային Ռուսիան արագ կերպով կարողացաւ բռնադրաւել բռնօրէն ու զէնքի միջոցով տասնեակ երկիրներ, ազատ աշխարհի եւ արեւմտեան պետութիւններու աչքին առջեւ, որոնք դժբախտաբար դիտողի դերին մէջ մնացին : Այսօր, որ ռուսական դերակչիռ ու ցամաքային ուժը միշտ պատրաստ կը դտնուի արեւելեան Գերմանիոյ չուրջը եւ համայնավար աշխարհի մէջ , դինուորական այդ ուժն է, որ առիթ կու տայ Մոսկուայի վարիչներուն յաճախակի սպառնալիքներ կարդալ ազատաշխարհին :

Միահեծանութեան դաղափարը ամենասիրած զործն է եղած մեծ ու փոքր բոլշեւիկներուն, հիմնուած միշտ իրենց տիրակալութեան եւ բռնատիրութեան ուժին վրայ : Պետրոգրատի ժողովներուն մէջ 1917 թուին, Լենին կը բացականչէր , «Ամէն երկրի մէջ եւ ամէն տեղ զէնքի ուժով պէտք է տապալել դրամատիրութիւնը» : Այս ոգիով ու չունչով զործեցին ու յառաջացան մինչեւ Եւրոպայի սահմանները : Համաչխարհային յեղափոխութեան ծրագիրէն չեն կարող հրաժարիլ, ինչպէս չեն կարող հրաժարիլ միջազգային համայնավարութեան ծրագրէն, որ կ'ուզեն ամէն կերպ ամբողջ աշխարհը նուաճել :

Պերլինի խնդիրը յարուցանելով եւ ուշադրութիւնը զրաւելով արեւմտեան պետութիւններուն, այստեղ միաժամանակ ստեղծեցին Իրաքի ճակատը : Իրաքը, որ բանալին ու դուռը կը հանդիսանայ Մինչեւ Արեւելքին :

Զէնքի, ռազմամթերքի, սովետ զօրքերու, քիւրտ երիտասարդ զինուած ուժերու փոխադրութիւնը ռուսական նաւերով դէպի Պաղտատ, սովորական եղելութիւն դարձած, որոնք կ'երթան կուեւելու համար Պաղտատի համայնավարներու կողքին եւ օգնելու նրանց իրենց պայքարին մէջ, տիրելու համար ամբողջ Իրաքին :1948ի Ատլանտ. Ուխտի 15 պետութիւններու կազմութեան պատճառը ու առիթը հանդիսացած է Մոսկուայի համայնավար իշխանութիւնը, որ բոլոր ճակատներու վրայ կը հետապնդէ տարածել համայնավարութեան տիրապետութիւնը աշխարհի մէջ եւ դրաւել ամբողջ Եւրոպան : Ատլանտեան Ուխտի տասներորդ տարեդարձի առիթով ,Ուխտի ընդհանուր քարտուղար Անրի Սփաք չատ հեշտ յայտարարեց թէ «դիւանագիտական պարտութիւն մը Պերլինի մէջ պիտի նշանակէ Արեւմուտքի անկման սկիզբը. պէտք է ըլլանք աւելի վճռական քան երբեք». այո, ժամանակը եկած է, որ Ատլանտեան Ուխտի 15 պետութիւնները ըլլան աւելի վճռական ռուսական բոլշեւիզմի յառաջխաղացման եւ թափանցումին դէմ , որ կարողացաւ բռնօրէն եւ դէնքի ուժով համայնավարութեան աղեղութեան տակ առնել աշխարհի 6–7րդ հողամասը :

Գ. ԲԱԼԱՑԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԱԳԱՒՄԻՆ ՀԵՏ

Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԱՔԻ ՔԻՒՐՏԵՐԸ

Անցեալները այս թերթին սիւնակներուն մէջ անդրադարձած էինք քրտական հարցին, որ ժամանակ առ ժամանակ այժմէութիւն կը ստանայ, ինչպէս այս օրե–րուս՝ զբաղեցնելով միջազգային հանրային կարծիքը :

Արդարեւ, Քիւրտերը իրենց մասին խօսիլ տուած են արդէն առաջին աշխարհամարտէն ետքը եւ մանաւանդ երկրորդ աշխարհամարտին ընթացքին, երբ Առանցքի պետութեանց համակիր կայսնին, որ աւելի ճանչցուած է Ռաշիտ Ալի անուան տակ, պետական հարուածի մը ենթարկելէ յետոյ Իրաքի վարչապետ :

Բայց հրատապ հարց դարձած է առաւելապէս այն օրէն ի վեր, երբ, 1958ի Յուլիս 14ի իրաքեան յեղափոխութեան ընծայած առիթէն օգտուելով, Քիւրտ համայնավար մեծ դեկավար մը, Մուլլա Մուսթաֆա էլ Պարզանի , արտօնութիւն ստացաւ Պաղտատ վերադառնալու Խ. Միութենէն ,ուր ապաստանած էր տարիներէ ի վեր եւ ուր բարձրացուած էր կարմիր բանակի զօրավարի աստիճանին :

Պարզանի Պաղտատ վերադառնալէն ի վեր ժամավաճառ չեղաւ, քանի որ դաւադրութիւններ երեւան հանելով ու նախագահական ձերբակալութիւններ պահանջելով, այնքան լաւ մաքրատործեց վարչապետ Քասըմի չրջապատը, որ Նասըրի համակիրներուն կողմէ կազմակերպուած յեղափոխութենէն ինը ամիս ետքը Քասըմի դահլիճին մէջ միայն չորս ոչ – հա – մայնավար նախարարներ կը մնան տակաւին : Առանք ալ յառաջդիմական մտաւորականներ են արդէն, ու տեսնելով որ ծայրայեղ ձախակողմեաններուն չեն կրնար հետեւիլ, վերջերս իրենց հրաժարականը ներկայացուցին Քասըմի, որ մերժեց ընդունիլ այդ հրաժարականը :

Պարզանի Խ. Միութեան մէջ չատ հանդիսա աքսոր մը կ'ապրէր : Աքսոր, որ անցուց Անդրկովկասի քիւրտ փոքրամասնութեան մէջ, առանց ինքզինքը օտար զգալու :

Վերին Փոքր Ասիոյ ծագում առած , Քիւրտերը այժմ տեղաւորուած են Թուրքիոյ մէջ (ուր Հայերէն չատ աւելի մեծ թիւ մը կը կազմեն), Հիւսիսային Իրաքի մէջ (ուր երկրին ընդհանուր բնակչութեան մէկ երրորդը կը ներկայացնեն) , Իրանի Հիւսիս – արեւմտեան չրջանին եւ Հայաստանի եւ Ադրբէյճանի խորհրդային հանրապետութիւններուն մէջ (ուր իրենց թիւը կը հասնի մօտ մէկ միլիոնի) :Քիւրտերը այս վերջին չրջաններուն մէջ հաստատուած են 16րդ դարու վերջերէն ի վեր : Այդ չրջանին է, արդարեւ, որ հոն կը հասնէին Օսմանեան կայսրութենէն եւ Պարսկաստանէն հասած առաջին Քիւրտերը : Առաջին աշխարհամարտէն անմի–

ԻՐ ՀԱՐՍԻՆ ՀԱՄԱՐ

—o—

(Գ. եւ վերջին մաս)

Այդ Տէրվիշը, ամէն Ցուլիսի սկիզբը , կ'երեւար մեր ու մեր չրջակայ դիւղերու մէջ: Զգուտ մարդ մըն էր, խած աչքե–րով, ճերմակ հագուստ, ազատ օդի մէջ, մաքուր չուրով ապրած մարդ մը բնութեան ծոցին մէջ, այնպէս որ դժուար էր երեւոյթէն դուշակել տարիքի հաւանական թիւ մը: Ճերմակ կը հագուէր, բաւական մաքուր , ազուէսի մաշկեակ մը: Թուազոնը կռնակին վրայ : Իր մուրացկանի վիճակը, իր կռնոնաւոր երթն ու դարձը ամէն տարի, որոշ եղանակի մէջ, ընտանեցուցած էին մեզ իր ոտքին. մեր չուներն ալ ճանչուորի պէս սկսած էին անոր նայիլ :

Իրեն համար կ'ըսէին թէ մեր վանականներուն պէս է. թէեւ մուրացիկ, բայց աչքը կուշտ էր, սրտով տրուած քչիկը՝ մեծ բանի տեղ կ'ընդունէր եւ օրհնելով կը հեռանար՝ առանց ետեւ դառնալու :

Առեն առեն ալ կ'երդէր մեր Տէրվիշը , ու կ'երդէր չատ անուշ. իր օրհնութիւններն էին, որոնք թէեւ մեզի անհասկնալի լեզուով մը, բայց իր ձայնին դիւրին կոտրտուքը, վարժ եւ կակուղ հագագի մը ճարտարութիւնը զեզդեղները չինելու մէջ, կը խօսէին մեզի մինչեւ մեր սրտի խորքը: Ամէն տարի, իր դարձի առեն , դինքը տեսնելէ առաջ՝ իր ձայնը կուլար մեզի հեռուէն, օդին մէջ թրթռալով , մեր փողոցներուն մէջ արձագանդուելով պատէ պատ :

Այդ մարդը տարի անցնելով այնքան ընտանեցած էր մեր դիւղին որ իր առջեւը՝ բաց կը մնային մեր դուռները. ամէն տուն անոր կուտար իր ունեցածէն բան մը, մերը եղած էր ան, մեզմով կ'ապրէր ու մեզմով ալ պիտի ապրէր :

Երբ կը մեկնէր Տէրվիշը, մենք, դիւղին երախաներս, քանի մը օր տխրած կը դգայինք ինքզինքնիս յիշատակով իր ձայնին անուշութեանը, կռնակին վրայ պարդուած կարմրուկ մաշկեակին, որ արհամարհանք մըն էր, մեր աչքին, բոլոր անարժէք մեծութեանց :

Տասնըհինդ օր կը մնար դիւղը, միայն վերջին անգամ, ինչպէս կ'ըսէին, չէր ուդած մեկնիլ, ու կը չարունակէր մնալ : Ու, ինչ որ զարմանալի էր, չարաթէ մը աւելի էր որ չէր երդեր, չէինք լսեր իր անոյշ ձայնը :

Զուհարը կ'անդրադառնար, հիմա, ամէնէն առաջ, այդ կէտին վրայ, եւ հարսէն լսածն ալ խառնուելով անոր հետ իր փորձ մաքին մէջ, տարակոյս չթողուցին որ Տէրվիշը կը կենար այս անգամ, մի–միայն իր հարսին համար :

— Ան,— ըսաւ ինքնիրենը — ալ առջինը չէ մնացեր :

Առաւօտ մը բակին մէջ, քոթոտներու չարք մը հալած էր միաբերան, եւ բաւական աղմկոտ : Կիսաբաց դրանը արանքէն տեսած էր Զուհար որ Տէրվիշը դուրս կ'ելլէր անկէ, փոսթը կռնակին վրայ : Ալ տարակոյս չէր մնար որ Մուրացիկը կուդար այդ բակին մէջ դիշերելու, եւ ան – չուչա թաղուն դիտաւորութեամբ մը :

Ցաջորդ դիշերը Զուհարի դուռը խառխռուած էր. եւ ողորմ ձայն մը, չան մը կաղկանձիւնին պէս, լսուած դրանը առջեւ :

Հարս ու կեսուր վրդովուած էին :

Առաւօտուն, թէեւ երկուքն ալ դիշերուան ծանր տպաւորութեան ներքեւ, դուրս բան մը տուած չէին, հարսը՝ ամօթէն, իսկ կեսուրը, Զուհար, հարսին պատիւին համար, չէր ուդած բերանն իսկ բանալ :Իրեն համար մեռնիլ էր եթէ կասկածներու տեղի տրուէր իր հարսին համար :

Իրենց համար ամէնէն կարեւորն էր դիտնալ թէ ի՛նչ կը պատրաստուէր յաջորդ դիշերուան մութովը. ի՞նչ պիտի ընէր երբ իրենց դուռը տեղի տար հուժկու ցնցումի մը առջեւ , եւ Տէրվիշը, իր փոսթովը որ հիմա զազանային կերպարանք մը կուտար իրեն, իրենց սեմերէն ներս իյնար հեւալով, բերնէն փրփուրը թափթփուն՝՝ կատղած չան մը նման եւ կամ մոլեգին դրդռուած կատուի մը պէս : Կէսօրի առեն երեւցած էր Տէրվիշը պառաւին տանը բոլորտիքը. պառաւը , իր հարսին պատմութենէն տեղեկացած եւ դիշերուան անցքէն հաստատուած , աբիացաւ դուրս նետուիլ եւ մուրացիկին դիմացը ցցուելով բոպէապէս իրրեւ թէ անոր հետ խօսակցելու աշխարհի ցաւերուվրայ, հասկցուցած էր որ խելքը գլուխը բերէ, ու, ետ դառնալու առեն ,

— Զուհարին ծխանը, Տէ՛րվիշ, պատիւի վրայ ծխրատացած է միշտ, խելքդ քեզի կանչէ. մի մոռնար որ աս դիւղը քեզի հաց կերցուց իր հացէն, ջուր խմցուց իր ջուրէն. հիւրի պէս կեցար մեր մէջ, աղօրթգէտ եւ օրհնութիւններդ բերիր տիրոջդ : Նորէն կ'ըսեմ, խելքդ քեզի կանչէ, Զուհարի հետ չես կրնար խաղալ. սան – կռնակ կին չէ. լաւ դիտցած ըլլաս :

Մուրացիկը չփոթուած իրրեւ թէ պառաւ վազրի մը առջեւ որ ակռաները կը կրճտէ, յարձակումի պատրաստ, Զուհարին եռեւէն մրմռացած էր կսկսուր,

— Դու դնա՛. Տէրվիշն ալ ունի իր ընելիքը :

×

Զուհարը, մինչեւ իրիկուն, ամփոփուած մնաց իր երդիքին ներքեւ. դուրս չելաւ որ մէկու մը հետ խօսելիք չունենայ. միայն առեն առեն իր աղուորիկ հարսին պոյն ի վեր յառած, լուիկ, հոդիի բառերով ,— Ո՛չ ըսած էր ինքնին, Ար –

ՀԱՂՈՒԹԵՂ ՀԱՂՈՒԹ

ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՀԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Տիթրոյթի մէջ, Մարտ 13ին դասախօսական երեկոյ մը տեղի ունեցած է, նը – ւիրուած Գուրգէն Մ. Ալէմշահի յիշա – տակին :

Նախաձեռնութիւնը ստանձնած էր տեղ – ւոյն Հ. Յ. Դ. «Ազատամարտ» եւ «Անդ – րանիկ» կոմիտէներու միացեալ յանձնա – խումբը, օգտուելով, Հալէպէն ժամա – նած, բժիշկ Ահարոն Խաչատուրեանի ներ – կայութենէն :

Բժ. Ա. Խաչատուրեան, պատանեկան եւ ղպրոցական ընկերը Գուրգէն Ալէմշա – հի, ձեռնհասօրէն ներկայացուցած է տա – ղանդաւոր երգահանին տակաւին դպրո – ցական չրջանէն բոլորովին անծանօթ մնացած երիտասարդական խռովքներն ու նուիրումը հանդէպ հայ երգին եւ հայ մշակոյթին :

Դասախօսը ծանօթ դէմք մըն է, իր ու – սանողական չրջանին խակ, Հոմի մէջ վարած ըլլալով Հ. Հանրապետութեան Հոմի դեսպանատան քարտուղարութիւ – նը :

Տիթրոյթի զգուխը մասնաւոր պատ – ճառ մը ունէր կազմակերպելու յարգան – քի այս երեկոն : Արդարեւ, 1947 Դեկ – տեմբեր 14ին, կիրակի, Տիթրոյթը իր քնաթաթախ աչքերը հագիւ բացած, ցուրտ դորշ ու մռայլ երկինքին դէմ, չարագուշակ լուր մը յանկարծ , սաղա – յելական թեւերով չրջան կ'ընէ ու հայ – րենարաղձ այս զաղութին դուռներուն եւ պատուհաններուն մահազանգ մը պէս զարնուելով, անողորմ ողբի մը հանդոյն կը հնչեկայ .

– –Գուրգէն Ալէմշահ մեռա՞ծ ... :

Արդեօ՞ք ... : Ինչպէ՞ս ընդունիլ որ յա – ւիտեան լռած էր անոր անսպառ տենդով եւ կորովով օծուն սրտին չերմ տրոփիւնը — կեանքէն, սէրերէն, ուրախութիւննե – րէն պէմուրա՛տ սիրտը ... :

Անոր անակնկալ մահը զարձաւ տեսակ մը անբացատրելի կսկիծ եւ կատարկալ ողբերգութիւն մը Տիթրոյթի Հայութեան համար առաւելապէս այն տխուր պատճա – ռով, որ եղերական զուգադիպութեամբ մը, նոյն այդ կիրակին չկրցաւ ներկայա – նալ ան իր սիրած ժողովուրդին, ծրա – զրած ու կազմակերպած իր համերգին :

Ափսո՛ս, որ Տիթրոյթը առիթը չունե – ցաւ ըմբռչնելու եւ մօտէն ճանչնալու վառ երաղնելով լի տաղանդ մը, որ սպա – ռեցաւ իր երկունքին մէջ ու զերեզման իջաւ իր սիրած ժողովուրդին տենչերն ու խոյանքները ծրարած իր հոգիին մէջ :

Տիթրոյթը սրտի ճմլումով կը յիչէ ու երկա՛ր պիտի յիչէ 1947 Դեկտեմբեր 14ի կիրակին ... :

Հոծ բազմութիւն մը ներկայ եղած է դասախօսութեան : Աւելի քան մէկ ժամ , չարժանկարի յուզիչ ժապաւէնի մը պէս, Բժ. Խաչատուրեան ներկաներուն աչքե – րուն դիմաց զարձուց Ալէմշահի կեանքը Մուրատ – Ռափայէլեանի, Հոմի եւ բո – լոր այն վայրերուն մէջ ուր երկու ընկեր – ները ապրած են մերթ լաւ՝ մերթ դժուա – րին օրեր :

Դասախօսութիւնը մեծ տպաւորութիւն թողուց ներկաներուն վրայ, որոնք եկած էին յարգելու դասախօսը եւ մանաւանդ հայ մշակոյթը, որուն խորանին վրայ մո – մի պէս չանկարծ մարեցաւ Գուրգէն Մ. Ալէմշահ :

«ՀԱՅՐԵՆԻՔ»

×

ԳԱՀԻՐԻ «Ցուսաբեր»ի թատերասրա – հին մէջ, Ապրիլ 24ին տօնուած է Մեծ Եղեռնի տարեդարձը : Սգահանդէսին նա – խագահած է Մ. Քհնյ. Ամրիկեան, խօ – սած են՝ Ե. Քիւչիւքեան եւ Գ. Վրդ. Կէրկէտեան : Գործադրուած է օրուան խորհուրդին պատչաճ զեղարուեստական յայտագիր մը :

ԼՈՆՏՈՆի Ֆիլհարմոնիք նուագախումբի համբաւաւոր մենակատարը՝ Ջուլթա – կահար Մանուկ Բարիկեան զգացած է Պէյրութ, ուր նուագահանդէս մը տուած է Ապրիլ 25ին :

ՊՐԻՍԷԼի Հայ Երիտասարդաց Միու – թեան նախաձառնութեամբ՝ Պելժահայ դաղութը Ապրիլ 26ին յարգանքի այցե – լութիւն մը տուած է Կանտի Համալսա – րանը՝ ազգային նահատակ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի յուշաքանդակին :Այ – ցելուները ծաղկեպսակ մը դրած են Վա – րուժանի յուշաքանդակին տակ՝ երկիւ – ղածութեամբ խոնարհելով տարաբախտ քերթողի յիշատակին առջեւ :

ՊՈԼՍՈՑ Ս. Խաչ Դպրեվանքի ուսա – նողները այցելութիւն մը տուած են Պետրոս Դուրեանի , Մատթէոս Զարիֆ – եանի, Ռէթէոս Պէրպէրեանի եւ Յովհ. Չինդիլեանի չիրմներուն : Ուսանողները առաջնորդող կղերականները խօսած են բանաստեղծներուն եւ ուսուցիչներուն կեանքին ու գործին չուրջ :

ԼԻԲԱՆԱՆի Հայ Օգն. Խաչի կազմակեր – պած «Պնակ մը կերակուր»ի հանգանա – կութիւնը բացառիկ յաջողութիւն մը ար – ձանագրած է այս տարի : Հանգանակուած է 17·007 լ. ոսկի (մօտ երեք միլիոն ֆր) :

ՊԻՑՐՈՒԹի մէջ կազմակերպուած երկ – րորդ դասակարգի պատկանող հեծելան – ուորդներու մրցումը (Պէյրութ – Սայտա) վերջացած է Հ. Մ. Ը. Մ.ի յաղթանա – կով : Առաջնութիւնը չահած է Ժաղ Տա – մանեան :

ՊԵՐԼԻՆի մէջ մեռած է Յովսէփ Փա – ջանեան, 67 տարեկան հասակին : Փոքր տարիքէն մխիթնարներու կոզմէ Մարա – չէն տարուած էր Ֆրանքֆուրտ : Գերմա – նահայ զաղութին գործօն անդամներէն էր, մանաւանդ՝ 1935էն ի վեր իր մաս – նակցութիւնը կը բերէր ազգային ամէն ձեռնարկի :

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ԱՊՐԻԼ 11–24Ը ՊԻՎԷՈՒԻ ՄԷՋ

●

ՊԻՎԷՈՒ, (Յատուկ).— Կիրակի, Ապրիլ 26, երկիւղածութեամբ ոգեկոչեցինք մեր նահատակներուն խնկելի յիչատակը,«Գե – դունի» սրահին մէջ, սգահանդէսին նա – խագահութիւնը ստանձնած էր Ս. Սա – հակ – Մեսրոպ զպրոցի վարչութիւնը :

Գեղարուեստական բաժինը կը վարէր ուսուցչուհի Տիկին Ռ. Միլտոնեան, ո – րուն պատրաստած յուչարձանը զնահա – տանքի արժանի էր : Բացումը կատարուե – ցաւ «Ազատութեան սիրոյն համար» խմ – բերգով որ երգեցին աշակերտները :

Նախագահի բացման խօսքէն ետք ներ – կաները վայրկեան մը յոտնկայս յարգե – ցին նահատակներուն յիչատակը :

Նոր Սերունդէն Օր. Մարի Նաւոյեան յուզումով արտասանեց Գ. Կառավարենցի «Ապրիլ Տասնմէկ»ը : Այնուհետեւ, երի – տասարդութեան անունով խօսեցաւ Ժի – րայր Մխիթեան, մանաւանդ չեչտելով թէ պէտք չէ մոռնալ կատարուած ոճիրը :

Ժիրայր Ունանեանի եւ Մօնիք Մաթոյ – եանի արտասանութիւններէն ետք, խօսք առաւ կարտոնի եւ Պիվէոի Հայ Աւետա – րանական եկեղեցւոյ հովիւ Պատ. Յովհ. Սարգիսեան, որ յուզումով խօսեցաւ եւ բացատրեց օրուան իմաստը :

Օր. Նաւոյեան արտասանեց Ա. Ահա – րոնեանի «կանգ առէք այս չերիմին առ – ջեւ»ը, որմէ յետոյ խօսեցաւ Պ. Ա. Քէօ – սէեան :— Ապրիլը զարնան ամիսն է ,բայց 1915ի ապրիլը մահ բերաւ Հայութեան մեծ հատուածին :

Թուրքը կը կարծէր թէ ոճիրով կարելի է բնաջնջել Հայութիւնը եւ փակել Հայ – կական Դատի թղթածրարը : Բայց մեծ ոճիրէն երեք տարի յետոյ, Մայիսեան յաղթանակը ցոյց տուաւ թէ Հայը կ'ապ – րի եւ պիտի ապրի փառապանծ Մասիսի տատրատը :

Սգահանդէսը վերջացաւ «Հայր Մե – ր»ով :

Ն. Ա. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՋԱՊԷՈ եռքը ղօրացան Թուրքիայէն եկող կարեւոր թիւով ազգայնական Քիւրտե – րով : Եւ վերջապէս, երկրորդ աչխար – համարտին վերջաւորութեան, Մահապա – տի Քիւրտ ինքնավար կարճատեւ Հանրա – պետութեան վերջ դնող պարտութենէն եռքը, Իրանէն վտարուած քանի մը հա – զար Քիւրտեր եկան աւելնալ Անդրկով – կասի Քիւրտերուն թիւին վրայ :

Մ. Մխիթեան այս քիւրտ փոքրամաս – նութիւնը փայլուն եւ զործունեայ փոք – րամասնութիւն մը կը կազմէ, որ սեռա կապեր պահած է միւս երկիրներու Քիւր – տերուն հետ : Ահա թէ ինչու կրեմլին զա – զափարն ունեցաւ իրեն ի նպաստ չահա – զործել քրտական ազգայնականութիւնը, զայն օժտելով խորհրդային ձայնասփիւռ – ներէն հարիւր անդամ կրկնուած կարպա – խօսքով՝ «Քիւրտեր բոլոր երկիրներու՝ միացէք » :

Խորհրդային քիւրտ փոքրամասնութիւ – նը յարմարադոյնն էր այս ձեւի չարժման մը պարագլուխը դառնալու, քանի որ կեանքի իր մակարդակը չատ աւելի բար – ձրը է քան ուրիշ երկիրներու մէջ ապրող Քիւրտերունը : Խորհրդային Քիւրտերը, սովխոզներու եւ կոլխոզներու մէջ համա – խմբուած, կը չարունակեն ապրիլ որպէս խաչնարածներ ու հողագործներ, ինչպէս իրենց նախնիքը : Կը բնակին առաւել կամ նուազ չափով հանդստաւէտ տնակներու մէջ, ու անդամ են երկրագործական սէճ – տիֆաններու : Ոմանք անդամագրուած են համայնավար կուսակցութեան : Մտացի ըլլալով, վերջին տարիներուն ընթացքին բազմաթիւ մտաւորականներ տուած են Խ. Մխիթեան : Փոխարէնը, խորհրդային իչխանութիւնները առիթ ընծայած են ա – նոնց, որ խորհրդանիթութիւններ ձեռքգխեն գիտական, ռուսական զրականութեան եւ քրտական զրականութեան ճիւղերուն մէջ : Քրտական զրականութեան իսկական չարժում մը ծնունդ առած է, որուն կեդ – րոնը Երեւանն է, եւ որ չատ իւրայատուկ տեղ մը կը զրաւէ խորհրդային զրակա – նութեան մէջ : Քիւրտերը ունին քանի մը Քիւրտ վիպագիրներ, բայց մանաւորա – բար մեծ է բանաստեղծներուն թիւը : Ի – րաքի մէջ, ուր կիները պահած են վտա զոյներով ազգային տարազը (մինչ այրե – րը, խորհրդային Քիւրտերուն մօտ, որ – դեգրած են չապիկն ու տարատը), կան մեծ թիւով հովուերգակներ, որոնց ներ – չնչումն ու արտայայտութեան կերպը քիչ մը կը յիչեցնէն Պարսիկ բանաստեղծ Օ – մար Խայամը :

Մէկ խօսքով, խորհրդային Քիւրտին մտաւորական միջին մակարդակը բար – ձրը է :

Ուրիչ փոքրամասնութիւն մը, նոյնքան դործօն Իրանի քրտական փոքրամասնու – թիւնը, Խ. Մխիթեան Քիւրտերուն հետ կրնայ բաղդատուիլ միայն զրական մչա – կոյթի զեռնին վրայ, որովհետեւ այն – տեղ ալ անհամար է բանաստեղծներուն թիւը :

Աւոր փոխարէն, ընկերային տեսակէ – տէն, Իրաքի Քիւրտերը, որ կ'ապրին Մուսուլի եւ Քէրքիւքի չրջակայքի քա – րիւղաչատ հողերուն վրայ, ամենակա – տաբեալ խեղճութեան մէջ կը մնան : Հե – տեւաբար, Մոսկուա կը կարծէր թէ դիւ – րին պիտի ըլլար զանոնք կուրօրէն հա – ւատարիմ համայնավարներու վերածել՝ միայն Պարզանիի օգնութեամբ : Բայց կարդ մը Քիւրտ դեկավարներ, որոնց հետ Պարզանի բացայայտ մրցակցութեան մէջ է, կը մերժեն ընդունիլ իր հեղինա – կութիւնը : Նոյնիսկ կարելի է ըսել, թէ ընդհանուր առմամբ, Պարզանի նուազ լաւ ընդունելութիւն զտաւ Քիւրտերուն մօտ, քան արաբական երկիրներուն մէջ : Ահա թէ ինչու, Կրեմլինի վարիչները անհրա – ժեչտ նկատեցին աւելի ամրացնել կապե – րը, որոնք կը միացնեն Խ. Մխիթեան Քիւրտերը Իրաքի Քիւրտերուն հետ : Այս մարդին մէջ, Խ. Մխիթեան հաստատուած քանի մը հազար Քիւրտերու «հայրենա – զարձ»ը կրնայ միայն ծառայել Կրեմլինի չահերուն : Իրիկունը, խարոյկին չուրջ հաւաքուած, իրենց մեծ նախնիքներուն փառքը հիւսող երկու երգի միջեւ, հա – մայնավարութեան այս նուիրակները դի – տէն թէ ինչ բառեր պէտք է գտնել պատ – մելու համար, որ թշուառ խաչնարածնե – րու համար կեանքը որքան աւելի լաւ կ'ըլլայ՝ երբ վայելեն զօրաւոր, ընկեր – վարական եւ խորհրդային պետութեան մը օժանդակութիւնը :

Սարսուռը կը տարածուէր դուռնէն ներս : Վախ չունէին թէ պիտի կոտրէր դուռը, որովհետեւ երկաթէ ձողով մը ե – տեւէն հաստատած էին, այնպէս որ եթէ ոտղնակն ալ կոտրուէր՝ դուռը անխախտ պիտի մնար իր տեղը :

Կրկնուեցաւ դուռին դղորդը, ու այս անգամ աւելի ուժգին : Հարսն ու պատա – ւը, արդէն քով քովի մութին տակ, իրա – րու մէջ ամփոփուած պէս էին, իրենց համոզումն էր թէ անտեղիտալի էր դու – ռը, միայն անքուն պիտի մնային մինչեւ առաւօտ :

Երրորդ ցնցում մըն ալ վրայ հասաւ, ահռելի այս անգամ, եւ զարձեալ լուռ – թիւն :

Քիչ յետոյ սկսաւ միջրնակ դփռտուք մը զրանը առջեւ,— կացինի ձայն մը սե – մին տակ, եւ միջրնակ : Գիւաը զարհու – րելի էր, օձը ներս պիտի սողար սեմին տակէն. յաջողութեան անվրէպ միջոցը դանուած :

Կռիւի ժամ : Տէրվիչը դուրսը կ'աչխա – տի իր հնարքներով, Ջուհարն ալ ներսը ոտքի վրայ : Նաղլուին պատուիրած է չխախտիլ իր տեղէն, ու անվախ : Եթէ ճրագ վառուած ըլլար, պիտի տեսնէինք ահռելի էակ մը, որ, ալ, ոչ կին է, ոչ այր մարդ, այլ զարհուրանքը անձնա – ւորուած, մահը ձեռքին մէջ, մահը՝ իր չունչին մէջ, թունաւոր եւ սպաննող :

Իսկ դուրսը, մութին մէջ, կը չարու – նակուէր դփռտուքը, միօրինակ եւ ան – ընդհատ : Սեմին տակէն ծակ մը բացուած էր եւ կը լայննար, խոռոչը կը մեծնար , եւ հողը ներսէն դուրս կը քաչուէր բոպէ առ բոպէ :

Ցանկարծ սեւ կծիկ մը,— Տէրվիչի զը – լուխ մը, որ կ'երկննար դէպի ներս , ե – րեսին վրայ սողոսկուն : Թեւերը դեռ չերկնցած ասղին, տապարի ուժգին հար – ուած մը կ'ինչէ ոճրագործ զանկին վրայ : Խեղդուկ ձայն մը դոռաց մթութեան մէջ : Երկրորդ հարուած մը նոյն ուղղու – թեամբ, եւ ալ վերջացած է ամէն ինչ :

Ջուհարն էր որ զործեց մութին մէջ , եւ մեղապարտ ոճիրը, նամուսի սեմին տակ, անզլուխ պառկած էր մինչեւ ա – ռաւօտ :

Այս պատմութիւնը, հայ կնոջ պատիւի չարքին վրայ, լսուեցաւ զիւղին մէջ, եւ դուրս չելաւ անկէ իբրեւ սխրալի զաղա – նիք մը :

Յետագի կարդադրութեամբ մը, Հարսն ու կեսուրը ուրիչ թաղ փոխադրուեցան : Իսկ զրանը սեմին տակ փորուած անցքը մնաց այնպէս ինչպէս որ էր՝ իր մարդ մը սողալու չափ պարապութիւնով , — կենդանի պատմութիւն մեղապարտ ոճի – րի :

Ջուհարը խենթեցաւ :

Տարիներ անցան : Ջուհարը, Յուլիս եւ Օդոստոս ամիսներուն մէջ, հասած մոլե – զին կատաղութեան, ամէն զիչեր միջոց կը զանէր զալ իրենց նախկին դուռը, եւ կ'իյնար սեմի բացուածքին վրայ, ջղային ուժեղ պրկումով կ'ափոկէր հողը եւ,

— Ջուհարը, — կը մրմռար կատաղո – րէն, — պիտէ իր ընելիքը· քանի որ ան կայ, բերնին մէջ ակռայ ունի եւ մատ – ներուն ծայրը եղունդներ, ոչ մէկ ձեռք կը հանի Նաղլուին, ոչ մէկ ձեռք կը դպցնէ հարսիս ծամի թելերուն :

ՄԵԼՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ

ՁՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ :

ԻՏԱԼԻՈՑ մէջ մէկ միլիոն բանուորներ 48 ժամուան զործադուլ մը ըրին՝ աշխատավարձի յաւելում պահանջելով : Բազմաթիւ միջադէպեր պատահեցան բանթողներու եւ ոստիկաններու մէջեւ :

ԱՆԳԼԻԱՑի 137 պատուէլիները Վաբչապետ Մաքմիլլանի նամակ մը զրելով առաջարկած են որ հիւլէական փորձերը արզիլուին :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ զրագէտ՝ Իլիա Էհրբուրկ որ քանի մը օր է Փարիզ է կարզ մը յայտարարութիւններ ըրաւ : Շեչտեց թէ փրանսերէնը պէտք է կրկին միջազգային լեզու դառնայ : Փասթերնաքի խնդրին մասին հարցապնդուելով Էհրբուրկ ըսաւ.— «Տոքթ. Ժիվակոյի հետ պինակը շատ լաւ բանաստեղծ մըն է բայց շատ կեղրոնացած է իր անձին չուրջ եւ իր զիրքին մէջ պաշտպանած զաղափարները անիմաստ են մեր ժամանակին համար » :

ՊՈԼԻՍ վերազարձին իսմէթ Ինէօնիւ ծանր միջազէպերու առիթ տուաւ : Հալէպի պարապմունքը իզմիրէն կուզար : Օդակայանէն սկսեալ, հակառակ ապահովութեան ուժերուն ձեռք առած միջոցներուն, կռիւներ ծագեցան զեմոկրատներու եւ հալէպեաններու միջեւ Դեմոկրատները ցուցատախտակներ ունէին ուր զրուած էր.— «Կը բաւէ, թշնամութիւն կը ստեղծես եղբայրներու միջեւ» : Կռիւը որ քանի վայրկեան տեւած է մօտ 15 վիրաւոր ըրած է : Ներկայ բազմութիւնը, մօտ երկու հարիւր հազար հոգի, չարունակած է հետեւիլ ընդդիմադիր պարապմունքին : Մօտ հարիւր հոգի ձերբակալուած են :

Այրի Տիկին Ովսաննա Մաճառեան, Տէր եւ Տիկին Հայկ Մաճառեան – Զաուիկեան եւ զաւակները, Ռոստոմ, Զապէլ եւ Ա. զատ, եւ ընտանեկան պարագաները ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, աներձակին, մօրեղբօր եւ ազգականին՝

ԿԱՐԱՊԵՏ ՄԱՃԱՌԵԱՆի

մահը որ տեղի ունեցաւ Ապրիլ 29ին : Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Զորեքշաբթի ժամը 11ին, Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցիին մէջ :

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել :

× *Այս տխուր առթիւ, ԶՈՄը իր ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալին այրիին եւ ընտանեկան պարագաներուն :*

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Արձանագրութիւնները բացուած են 1959 – 1960 ուսումնական տարեշրջանի համար :

Իրենց զաւակները արձանագրել փափաղող ծնողքները փութան դիմել տես Չութեան, ղրաւոր կամ հեռախօսով, ամէն օր :

26, RUE TROYON, SEVRES

TEL. OBS. 18-28

Վարժարանի մէջ լրիւ կ'աւանդուին աղզային դիտութիւնները եւ ֆրանսական երկրորդական ուսմանց ամբողջական ծրագիրը, մինչեւ Պաքալօրէայի առաջին մասը :

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Ֆ. կապ. Խաչի Օդափ. կայանի արձանագրութիւնները բացուած են :

Դիմումները պէտք է ընել տեղական մասնաճիւղերուն, իսկ կեդրոնի դիմումները կ'ընդունուին, Երկուշաբթի, Զորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը 13էն 14 եւ երեկոյեան ժամը 18էն 20, Րիւ Մէյրաճ 5, հեռ. Թռիւտէն 27–35 :

ՅՈՒԼԻՒՍի ՀԱՄԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓԱԿՈՒԱԾ ԵՆ :

ԿԱՐԴԱՑԷՔ

Վերապրելու համար 1915ի ողբեր – գութիւնը՝

Կարդացէ՛ք

Կ. ՓՕԼԱՏԵԱՆի

վէպը՝

ԱՐԾԻՒՆԵՐԸ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

Դիմեցէք հայ գրավաճառներուն կամ ուղղակի հեղինակին՝

G. POLADIAN

53, AVENUE DE ST JULIEN MARSEILLE 12.

Գինը՝ 1000 ֆրանք :

Օր. ՆՈՅԵՄԻ ՇԱՒԻՈՆԵԱՆ
(Շաւիլի Նոր Սերունդէն)
Պ. ԱՐԱՄ ԼԱՐՈՍԵԱՆ
Ամուսնացած

Վիրոֆլէ *Պոլիս*

Կնքահայրութեամբ Տէր եւ Տիկին Յարութիւն Բապուճեանի :

Այս ուրախ առթիւ եւ իրենց զաւակին Ալժերիայէն ողջ առողջ վերադառնալուն առթիւ Տէր եւ Տիկին Շմաւոնեան կը նուիրեն Շաւիլի Հ. Ը. Դ. Նոր Սերունդին երեք հազար ֆրանք եւ կապ. Խաչին երկու հազար ֆրանք :

ԱՊՐԻԼ 11–24Ի 44ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԱՌԹԻՒ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԳԱՏՕՆ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կրընոպլի Հայ Ազգային Եկեղ. Միութեան եւ մասնակցութեամբ զաղութիս կազմակերպութեանց, կիրակի, (10 Մայիս) կէսօրէ ետք ժամը երեքին Ռիւ Թէ Սեն Լուի սրահին մէջ :

×

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Այս կիրակի առաւօտեան ժամը 9·30ին, Վարիէթէ սինեմային մէջ : Հովանաւորութեամբ Ազգային Առաջնորդարանի եւ հայ յարաւուաւնութեանց :

Մասնակցութեամբ՝ Մշակութային, Եւ – րիտասարդաց հայրենակցական եւ զաղաքական կազմակերպութեանց :

Կը նախագահէ՝

Պ. Վ. ՍԱՀԱԹՃԵԱՆ

Կը խօսին՝

ԳԵՐՅԱՐԳԵԼի ՋՈՒՀԱՃԵԱՆ
եւ Պ. ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ

Ինչպէս նաեւ Հ. Ը. Դ. Նոր Սերունդի եւ Մշակութային Միութեան ներկայացուցիչները :

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Լիոնէն Տէր եւ Տիկին Ահարոնեան կը նուիրեն երկու հազար Ֆր. ողբացեալ Վահան Զէկիւրեանի մահուան առթիւ (24 Ապրիլ) :

ՆՈՒԻՐ

Պ. Պօղոս Մանոյեան (Մարսէյլէն) խմբագրատուն իր այցելութեան առթիւ հազար ֆրանք կը նուիրէ Մշակոյթի Տան (Ստանալ «Յառաջ»էն եւ հազար ֆրանք «Յառաջ»ի բարեզուամտան :

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ

Պ. Վահագն Յակոբեան տասը հազար ֆրանք կը նուիրէ Ֆ. Կ. Խաչի Պանէօ Քաչանի մասնաճիւղին, , անդամուհիներուն համար իր կնոջ ընկերուհի Տիկին Սանդուղթի յուղարկաւորի Տիկին Սանդուղթի յուղարկաւորի մահուան առթիւ :

ՀՈՓԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Գ. Ձինճեան, Տէր եւ Տիկին Վ. Պարսամեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Մայիս 17ին, կիրակի առաւօտ, ժամը 10·30ին Ս. Խաչ եկեղեցին, 10պիս, Րիւ Թուէն, իրենց ամուսնոյն եւ հօր ԱՐԱՄ ՁԻՆՁԵՒԱՆի մահուան քառասունքին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷՅԼ.— Կ. Խաչի Պուլվար Օտտոյի վարչութիւնս փոխան ծաղկեպսակի չնորհակալութեամբ ստացած է.—Տէր եւ Տիկ. Կարապետ Քէչէեանէ (Փարիզ – բնակ) երկու հազար ֆրանք, երիտասարդ Պետրոս Գէորգեանի կսկծալի մահուան առթիւ :

Այս առթիւ վարչութիւնս իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին Ց. Գէորգեանի եւ իր զաւակնե – րուն :

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չո – րեքշաբթի գիշեր, Քատէի սրահը : Կը խօսի Հիւրաբար մեր մէջ գտնուող Պատուելի Գայեեան : Նիւթ՝ «Ցունահայ զաղութը սկիզբէն մինչեւ մեր օրերը» : Կը խնդրուի ըլլալ ճշդապահ :

ՅԱՌԱՋԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ

—o—

ՓԱՐԻԶԻ Հ. Ը. Դ. Շրջ. կոմիտէի ներկայացուցչական ժողովը այս Շաբաթ, ժամը 21ին, Մշակոյթի Տան մեծ սրահին մէջ : Օրակարգ՝ չարունակութիւն նախորդ ժողովին : Կը հրաւիրուին մարմիններու եւ խումբերու ներկայացուցիչները :

ՓԱՐԻԶ.— Հ. Ը. Դ. Ապրիւր Սերոբ եւ Մկրտիչ Եօթնեղբայրեան խումբի ընդհ. ժողովը այս Ուրբաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին : կարեւոր օրակարգ : Ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է :

ՓԱՐԻԶ.— Հ. Ը. Դ. « Փոթորիկ » խումբի ժողովը այս Հինգշաբթի, ժամը 9ին, 17 Րիւ Պլէօ :

ԿՐԸՆՈՊԼԸ.— Հ. Ը. Դ. « Եօթնեղբայրեան»ի ընդհ. ժողովը այս Շաբաթ, ժամը 21ին, զպրոցի սրահին մէջ : Կարեւոր օրակարգ : Անդամատեսրերը միասին բերել :

"ՄԱՅԻՍ 28"Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միւնչեւ լոյս) : *Վեցերորդ Թաղապետարանի սրահնեբուն մէջ, Փլաս Սէն Միւլփիս :*

×

ԼԻՈՈՆԻ ՄԷՋ

Յունիս 6ին, Շաբաթ իրիկուն, Գ. Թաղապետարանի սրահին մէջ :

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Յունիս 7ին :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

ՄԱՐՍԷՅԼ

Գրական Ասուլիս նուիրուած Կ. Փօլատեանի նոր վէպին՝ ԱՐԾԻՒՆԵՐԸ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ :

Այս Զորեքշաբթի իրիկուն, ժամը 21ին, Ֆրանս. Համալսարանի ամփիթեատրոնը (40 Ալէ Կամպէթա) :

Կը նախագահէ Պ. Արամ Թէրզիպաչեան, վէպը կը ներկայացնէ Պ. Աստուր Քէօսէեան : Կը վերլուծեն Պ. Պ. ՇԱՒԱՐՇ ԹԱՇՃԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅԵԱՆ եւ ԺԻՐԱՅՐ ՄԻՐԻՃԵԱՆ :

Հ Ը. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ՊԱՆԵԷՕ ՔԱՇԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Շաբաթ, 9 Մայիս ժամը 21էն միւնչեւ լոյս, Ճրդ թաղամասի Բաղաքապետարանի սրահներուն մէջ :

Պանեէոյի պարախումբը : *Ճոխ պիւֆէ :*

ORCHESTRE RICOS CRÈOLE BAND

Մուտք 500 ֆրանք :

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕՐԸ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ

ՍՈՐՊՈՆԻ ՄԵԾ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

47, Rue des Ecoles, métro : St.-Michel et Odéon

Այս կիրակի, ժամը 14·30ին

Բարձր հովանաւորութեամբ

Ս. ԵՊ. ՄԱՆՈՒԿԵԱՆի

(Հայրապետական պատուիրակ Եւրոպայի Թեմի)

Եւ Ֆրանսական կարմիր Խաչի

կը նախագահէ.—

PROF. CAMILLE LIAN

Commandeur de la Légion d'Honneur

Membre de l'Académie de Médecine

Professeur à la Faculté de Médecine

Կը մասնակցին.— Օր. Ալիս Պօյաճեան եւ Պ. Պերճ Պէրպէրեան (*Հայկական պար*), (*դաշնակի ընկերակցութեամբ Տիկին Անժէլ Թագուրեանի*)

Տիկին Ս. Սաաթճեան — Լը Բուա եւ Պ. Լը Բուա (*երգ*), Տիկին Հ. Խտրչեան Շասսաինը (*արտասանութիւն*) :

MLLE GISÈLE DE MONCEAU (*թաւ ջութակ*)

MLLE MARIELLE NORDMANN (*տաւիղ*)

Օր. Յասմիկ Մարուճեան (*երգ*), Պ. Արտաշէս Գէմբէճեան (*արտասանութիւն*), Պ. Նուրհան Մարգարեան (*արտասանութիւն*), Պ. Արթօ Պէճօ (*դաշնակ*), Պ. Մկրտիչ Պօղոսեան (*երգ*), Պ. Ս. Նահապետեան (*արմոնիքայի երիտասարդ վիրթիւօզը*) : *ՆԱՅԻՐԻ ԵՐԳԱԽՈՒՄԲԸ ղեկավարութեամբ* Գէորգ Եանպէկեանի :

տոմսերու գինն է 150, 200, 300 եւ 500 ֆրանք :

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐ

Հռչարձման Տօնին առթիւ (7 Մայիս) Հինգշաբթի օր, ժամը 10ին, Փարիզի Ս Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը կազմակերպած է Հայ Մանուկներու հաղորդութեան օր :

Փարիզի եւ շրջակայից բոլոր զպրոցներու աշակերտութիւնը հրաւիրուած է ներկայ ըլլալու հանդիսաւոր Ս. պատարագին :

Արարողութիւններուն պիտի նախագահէ եւ քարոզէ Գեր. Տէր Սերովբէ Եպիս. ՄԱՆՈՒԿԵԱՆ :

Կը հրաւիրուի նաեւ հայ հասարակութիւնը :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Դպրոցասէրի տարեփակի հանդէսը Յունիս 28ին, կիրակի, կէսօրէն ետք, ժամը 15ին, վարժարանի հանդիսասրահին մէջ :

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏՉ. ԵԿԵՂԵՑԻ

20, RUE JEMMAPES

Պատարագ այս կիրակի ժամը 10·45ին : Կը խօսի՝ Վեր. Յ. Հելվաճեան : Նիւթ.— «Ո՞վ է ճշմարիտ քրիստոնեան» :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

—o—

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Տ. Հայկազուն քհնյ. Բանտիկեան 1959 Փետրուար եօթէն ի վեր պաշտօնէ զադրած ըլլալով, իր յաջորդը նորընտիր հովիւ Տ. Խոսրով քհնյ. Աստուրեան միացն իրաւասու է Մարսէյլի քաղաքամասի ծուխերուն կրօնական արարողութիւնները կատարելու : Կը խնդրուի ծուխերէն նը – կատի ունենալ այս պարագան :

×

Եղնիկ Հայրապետեան նամակ ունի իր աղջիկէն՝ Քնարիկ Ալիպեանէ (Հայաստան) : Լուսիա Եազմաճեան նամակ ունի հօրմէն Գէորգ Զաքրեանէ (Երեւան) : Յովհաննէս Մկրտիչեան նամակ ունի Մկրտիչեաններէ (Լենինական) : Դիմել եկեղեցի :

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Դաստակեան վճիռի մը համաձայն բնակարանի ծանր տաղնապի մը մատնուած ըլլալով, կը փնտռեմ Փարիզի կամ արուարձաններուն մէջ առնուազն երկու սենեակ եւ խոհանոցով յարկաբաժին մը : Տեղեկացնել հասցէիս՝

A. KEMPETIAN

6, RUE D'ARRAS, PARIS-5e

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ
7
ՄԱՅԻՍ
JEUDI
7 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8388 35EME ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4289

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Համբարձում օրն ա գալում ,
Եարս մնացել ա սարում ,
Եար ջան նշան կը դրնեմ
Համբարձման օրն՝ «ջան գիլում»:

Հայոց ժողովրդական բանահիւսութեան ծաղումը կը կորսուի մեր պատմութեան մշուշին մէջ :

Հին հին դարերէ ի վեր մեր նախահայրերը երգած են բնութիւնն ու անոր բազմերանգ երեւոյթները՝ բանաստեղծական ինքնաբուխ ներշնչումներով: Երգած են մեր թագաւորներու դիւցազնական սխրագործութիւնները:

Եղած ենք «աչուղ» ժողովուրդ :

Մեր զուռնաները երգած են ո՛չ միայն կենդանի ձայնով, այլև հնարած են զանազան նուագարաններ՝ աւելի փայլ տալու համար իրենց ստեղծագործութեանց : Սրինգ, տաւիղ, փող, քնար, ջնար, ծնծղայ, թմբուկ, բամբիռ եւ այլ գործիքներ ընկերացած են յաճախ իրենց երգերուն:

Շատ քիչ բեկորներ միայն փրկուած են հեթանոսական շրջանի հայկական բանահիւսութենէն , չնորհիւ մեր պատմահայր Մովսէս Խորենացիին :

Մասնաւորաբար Գողթն (Ագուլիս) դաւառը հարուստ է եղած զուռաններով :

Մեր աչուղները ազատ մուտք ունէին թագաւորներու պալատներուն եւ նախարարներու ապարանքներուն մէջ: Մանկիկ էին անոնց ուրախութեանց եւ խնջոյքներուն, հարսանեկան հանդէսներուն ու ռազմական յաղթերգութեանց :

Միջին դարու մեր աչուղներու եւ բանաստեղծներու գործերը մեծ մասամբ կորսուած փրկուելով հասած են մեզի, չնորհիւ ղլխաւորաբար վանականներու ընդօրինակած ձեռագիրներուն՝ մագաղաթի կամ պարզ թուղթի վրայ :

« Համբարձում»ը Քրիստոսի այլակերպութեան տօնը չէ միայն Հայուն համար: Անիկա աւելի շատ ազգային տօն մըն է, իր ինքնայատուկ վիճակի հանդիսութեամբ :

Հեթանոսական Հայաստանի հին մէկ տօնն է անշուշտ , որ քրիստոնէական պատմութեան է հաղած, ինչպէս Տեառն ընդառաջն ու Վարդավառը:

Համբարձումը երկկ մեր ծննդավայրին մէջ հարսնցու աղջիկներու տօնն էր առաւելապէս :

Անոնք մէկ օր առաջ, եօթն աղբիւրէ ջուր կը լեցնէին, եօթը տունէ եօթը տեսակ ծաղիկ կը քաղէին եւ մէկ մէկ նչան կը դնէին սափորի մը մէջ:

Ու հինգշաբթի՝ պատարագէն վերջ՝ հանդիսաւորութեամբ վիճակ կը հանէին՝ Ջան գիլում երգելով .

Ա՛յ տղայ, հուր ես, մուր ես ,,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես ,
Էս Համբարձման գիշերը
Քե՛զ մանւ կուգամ, դուն ո՞ւր ես :

Ինչպէս Յովհ. Թումանեանի անմահացուցած Անուշը, հարսնութեան առնչուող բոլոր աղջիկները անհամբեր կը սպասէին վիճակին, անկէ յուսալով իրենց «բախտ»ին բացուիլը:

Այսօր, հայրենիքէն հեռու, օտարութեան մէջ, մեր աղջիկները մոռցած են Համբարձումն ու Ջան գիլումը: Իրենց բախտը այլեւս չեն կապեր վիճակին :

Համբարձումը լոյս քաղաքին մէջ դարձեր է Մանուկներու հաղորդութեան օր :

Փորձ մը՝ նոր սերունդը կապելու Հայութեան :

Չենք մը՝ ինքնապաշտպանութեան :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԻՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱՆ ԻՐ ՀՈԳԵՐՈՎ

18000 ՈՒՂԵՎԱՐՆԵՐ ԳՈՐԾԱԴՈՒԻԻ ՄԷՋ

ՀԱՄԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԸ ՎԵՐՋԱՑԱՒ

Մինչ երեքշաբթի օր էլիզէի մէջ տըրուած հաց կերոյթով մը կը փակուէր Համապարակապետութեան Գործադիր Խորհուրդի ժողովը՝ կէս գիշերէն առաջ սկսաւ ուղեվարներու գործադուլը, 24 ժամուան համար :

Համապարակապետութեան Խորհուրդի ժողովին որոշումները հրապարակուեցան պաշտօնական զեկոյցով մը, որ տրուեցաւ Համապարակապետութեան ընդհանուր քարտուղար Ռէմոն Ժանոյի կողմէ :

Տնտեսական զետնի վրայ՝ որոշուած է հիմնել «Փոխատուութեան Գերագոյն Խորհուրդ » մը, որ պիտի ղրաղի անդամ երկիրներու փոխատուութեան հարցերով :

Արտաքին ապահովութեան հասարակաց մարմին մը պիտի ստեղծուի՝ բոլոր անդամներուն համաձայնութեամբ : Իւրաքանչիւր պետութիւն պիտի կարենայ դիմել յիշեալ մարմինին օժանդակութեան , անշուշտ՝ երբ կարիքը ունենայ :

Առժամեայ կարգադրութիւն մը եղած է նաեւ Ռուհր – Էնթերի համար : Ջոյնսթփիւրը ղարձեալ պիտի սկսի գործել :

Գործադիր Խորհուրդի յառաջիկայ ժողովը տեղի պիտի ունենայ Թանանարիւի մէջ, Յուլիս 7 – 8ին :

Միւս կողմէ . Աչխատանքի Դաշնակցութեան (Համաձայնավար) եւ Ինքնաւար սէնտիքալի գործադուլի կոչին հետեւեցան 18·000 բանուորներ՝ 24·000ի վրայ :

Կառախումբերու 25 առ հարիւրը միայն երթեւեկը ապահովեցին Շաբէքշաբթի օր, նկատելով որ յիշեալ երկու սէնտիքաներուն չպատկանող վեց հազար ուղեվարներ մերժեցին գործադուլ ընել :

Կացութիւնը աւելի լաւ էր մեծ պիծեռու վրայ, ուր չորեկատքերու երթեւեկը ապահովուած էր՝ 70 առ հարիւր համեմատութեամբ :

Ամէնէն աւելի վնասուեցան Փարիզի արուարձանի գիծերը: Բայց գինուորական եւ անհատական կառքեր դրուած էին ժողովուրդին տրամադրութեան տակ :

Մայիս վեցի համար գնուած երկաթուղիի տոմսերը կարելի է փոխել կամ գործածել ուրիշ օր մը,— կը հաղորդէ երկաթուղիի ընկերութիւնը: Շարաթաթան տոմսերու Շաբէքշաբթի օրուան (Մայիս վեց) կտրօնները կարելի է գործածել մինչեւ Մայիս 10 :

ՎԱՐՁԱՊԵՏ ՏՐՊՐԻ ՊՈՆԻ ՄԷՋ

Շաբէքշաբթի առաւօտ ժամը 10ին Վարչապետ Տրպրէ եւ Արտաքին Նախարար Քուվ տը Միւրվիլ Պոն հասան : Արեւմտեան Գերմանիոյ Վարչապետ Ատենաուերի եւ Արտաքին նախարար Ֆոն Պրենթանոյի հետ խորհրդակցելէ ետք՝ երկու Ֆրանսացիները փարիզ պիտի վերադառնային այսօր, հինգշաբթի :

Այս հանդիպումը կոչուած է երկու երկիրներու միասնականութիւնը ամուր հիմերու վրայ դնելու : Արձնաուերը եւ Տըպրէ անդամ մը եւս պիտի հաստատեն՝ թէ Ժընեւի մէջ «Ֆրանսա եւ Գերմանիա իրարու կրնան վստահիլ » :

«Ճկուն» քաղաքականութեան մը կողմնակից ըլլալով հանդերձ՝ երկու երկիրները որոշած են տեղի չտալ Ռուսերու առջեւ՝ եթէ անոնք չընդունին Արեւմուտքի պատրաստած ծրագիրը :

ԱՅՋԸՆՀԱՈՒԿԸՐ.— ՄԵԾԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ ՊԻՏԻ ԳՈՒՄԱՐՈՒԻ

... ԵԹԷ ԺԸՆԵՒԻ ՄԷՋ ՄԹՆՈԼՈՐՏԸ ՄԵՂՄԱՆԱՑ

Նախագահ Այզընհաուըր մամուլի առուելիս մը տալով յայտարարեց թէ Մեծերու ժողովը ապահովաբար պիտի գումարուի՝ եթէ Ժընեւի մէջ Արտաքին Նախարարները յաջողին Արեւելք – Արեւմուտք լարուած մթնոլորտը մեղմացնել : Նախագահը աւելցուց թէ Խ. Միութեան անունով խօսելու համար իրաւասու միակ անձը՝ Խրուշչեւն է :

Հակառակ կարգ մը զեկավարներու յոռետեսութեան, Միացեալ Նահանգներու Նախագահը այն յոյսը ունի թէ Ժընեւի ժողովը որոշ յառաջդիմութիւններ պիտի արձանագրէ : Այսուհանդերձ, Այզընհաուըր մեծ խօսիլ ամերիկեան տեսակէտին չուրջ: Արտաքին նախարար Հերթըր այդ մասին յայտարարութիւն մը պիտի ընէ հեռատեսիլէն :

Կարեւոր այլ յայտարարութիւններ ըրաւ նաեւ միջազգային հրատապ հարցերու չուրջ.— «Միջին Արեւելքի մէջ Միացեալ Նահանգները արագ եւ անկողմնակալ պիտի ըլլան: Այդ երկիրները ազատօրէն պէտք է որոշեն իրենց ապագան: Որեւէ մեծ երկրի մը հետ սերտօրէն պէտք չէ գործակցին անոնք՝ եթէ կ'ուզեն տեղ մը հասնիլ »:

Միջին Արեւելքի հարցէն ետք, Նախագահը յայտարարեց թէ ոչ մէկ լուր կայ ցարդ անցեալ Սեպտեմբերին խորհրդային հարածիչներու կողմէ վար առնուած ամերիկեան օդանաւի 11 օդաչուներու մասին: Սակայն, կասկածէ դուրս է այն պարագան՝ որ ամերիկացի օդաչուները բանտարկուած են Խ. Միութեան մէջ :

Այզընհաուըր խօսեցաւ նաեւ Եւրոպայի Միութեան յաջողութեան եւ անհրաժեշտութեան մասին, որմէ ետք իր չեչոր դրաւ օտար երկիրներու կատարուող ամերիկեան օժանդակութիւնը չարունակելու էական կէտին վրայ : Այս մարդին մէջ պէտք է աչխատիլ որ Հնդկաստան տնտեսապէս զօրանայ :

Այս ուղղութեամբ ուչադրաւ է նախկին նախագահ Թրումընի յայտարարութիւնը. — Որեւէ ձեւով պէտք չէ դադրեցնել օտար երկիրներու ի նպաստ ամերիկեան տնտեսական օժանդակութիւնը :

Միւս կողմէ դերմանացի (Արեւմտեան) ինը լրագրողներ ընդունելով՝ Խրուշչեւ կարգ մը յայտարարութիւններ բրաւ Պերլինի չուրջ, յայտնելով թէ Ռուսերը ինքնագլուխ որոշում մը պիտի չտան այդ մասին.— բայց, աւելցուց ան, ձեր ուշադրութեան պէտք է յանձնեմ այն պարագան՝ թէ Պերլինը խնդրոյ առարկայ միակ հարցը չէ : Մենք արձարծած ենք նաեւ խաղաղութեան դաշնագրի մը խնդիրը... եթէ մեր նախկին դաշնակիցները համաձայն չեն, այն ատեն պիտի մտածենք թէ Արեւմտեանները իրենց որոշումը տուած են արդէն՝ Պոնի հետ համաձայնելով : Այն ատեն, մենք ալ մեր խնդիրները պիտի լուծենք առանձին եւ խաղաղութեան դաշինք մը պիտի կնքենք Արեւելեան Գերմանիոյ կառավարութեան հետ :

Խրուշչեւ յայտարարեց նաեւ թէ Խ. Միութիւնը, հակառակ պարագային, պիտի ընդունի տակաւին որոշ ատեն զբաղման զօրաբանակները պահել Պերլինի մէջ, — ինչ որ խորհրդանչական իմաստ մը ունի :

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Համբարձման եւ Զինադադարի տարեդարձի յաջորդական տօներու առթիւ Յառաջ լոյս չի տեսներ, Թղթատարը փակ ըլլալով :

Մեր յաջորդ թիւը՝ կիրակի :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՅՈՐԴԱՆԱՆԻ վարչապետ Սամիր Ռիֆայի, որ միաժամանակ իր կառավարութեան Արտաքին նախարարն էր, առջի օր հրաժարեցաւ՝ առողջական պատճառներով: Հիւանդի թագաւոր նոր կառավարութիւնը կազմելու պաչտօնը յանձնուեց Մաժալիի: Ռիֆայիի կառավարութիւնը կազմուած էր 1958ին:

ԼՈՆՏՈՆԻ հաւատամքը կը հաստատէ թէ Իրաքի կառավարութիւնը մեծ քանակութեամբ զէնք, օդանաւ եւ այլ ռազմական նիւթեր ուղած է Անգլիայէն: Իրաքի խնդրագիրը դադրած չէ մինչեւ հիմա եւ այս օրերուս է միայն որ Անգլիա իր որոշումը պիտի տայ : Այս դիմումին Անգլիացիք այն մեկնութիւնը կուտան որ Իրաքը վերջնապէս կորսուած չէ Արեւմուտքի համար եւ Զօր. Քասըմ դեռ կ'ընդդիմանայ իր երկրին խորհրդայնացման : Ծանօթ է որ Մոսկուա կը փափաքէր եւ նախապէս առաջարկած էր Պաղտատի որ ինքն ըլլարիրաքի բանակին ամէն տեսակ զէնք եւ ռազմանիւթ հայթայթողը :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ լոյս տեսած է ռուսական փոքր համայնապիտարանի երրորդ հատորը: Մառէլ Փուկովի լուսանկարին եւ կենսագրականին տակ գրուած է որ ան միշտ անդամ է համայնավար կուսակցութեան, բայց վտարուած գերագոյն խորհուրդէն եւ կեդրոնական կոմիտէէն որովհետեւ «գրժած է բանակը վարելու լենինեան սկզբունքները»: Ցիշատակուած են մառէլային պատերազմական ծառայութիւնները, չորս անդամ խորհրդային հերոսի չքանչանին արժանացած ըլլալը , բայց ոչ մէկ ակնարկութիւն կայ անոր այժմու դիրքին մասին:

Խ. ՄԻՈՒԹԵԱՆ մէջ ներկայ լոյս կը տեսնէն 7680 թերթ, 67 լեզուներով եւ ոնց ապագանակն է՝ 13 միլիառ :

ՈՒՈՇԻՆԿԹՐՆԻ վերաքննիչ տեսանին խնդրագիրը մը ներկայացուցած են խումբ մը անուանի պետնականներ եւ գաղափարականներ, պահանջելով որ վճիռ մը արձակէ հիւլէական փորձերու անմիջական դադարումին համար : Խնդրագիրը կը մանրամասնէ եւ փաստեր կուտայ որ անոնց պատճառով կրնան , դալիք սերունդներուն, կէս միլիոն նոր բածինները վաղահաս կերպով մեռնիլ եւ ներկայ սերունդներուն մէջ բազմահազար մահացու պարագաներ առեղծել ոսկրի խլերդի եւ սպիտակուկի (լէօսէմի) :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆի կառավարութիւնը մերժեց խորհրդային բողոքագիրը՝ որ կ'ակնարկէր Միացեալ Նահանգներու հետ կնքուած դաշնագրին : «Չենք հասկնար թէ ինչո՞ւ , միաժամանակ բարեկամ պիտի չըլլանք Միացեալ Նահանգներու եւ Խ. Միութեան», կ'աւելցնէ Պարսիկներու յուչագիրը՝ որ յանձնուեցաւ Մոսկուա :

Խ. ՄԻՈՒԹԻՒՆԸ նոր բողոքագիր մը յանձնեց Ճափոնի կառավարութեան՝ որ Թոյլ տուած է իր հողմասին վրայ գինուորական օտար խարխիններ հաստատել :

ԱՆԳԼԻՈՑ եւ Ա. Մ. Հանրապետութեան մէջէն դիւանագիտական յարաբերութիւնները վերահաստատելու աչխատանքները ճախողեցան : Երկար ժամանակէ ի վեր ժողովներ կը գումարուէին այդ ուղղութեամբ :

ԳԵՐՄԱՆԻՈՑ տնտեսական նախարար Էրհարտ Անգարա գացած է եւ խորհրդակցութիւն մը ունեցած՝ Թուրքիոյ վարչապետ Մենտերէսի եւ Ելմտական նախարար Փոլաթքանի հետ :

ՔՈՒՊԱՅի վարչապետ Ֆիտէլ Գասթրօ Մոնթէվիտէոյէն մեկնեցաւ Բիօ տը Եանէյրօ, ուրկէ պիտի վերադառնայ Հաւանա :

ՀԵՐԿ ՈՒ ՅԱՆ

Մեր չրջանը ոչ միայն աղքատ չէ բանաստեղծներով, այլեւ ակնկալուածէն աւելի հարուստ է: Հարիւր յիսունէ աւելի քերթողները,— մեծ ու փոքր, երիտա – սարդ թէ տարեց, տիտղոսաւոր կամ անտիտղոս,— «թաց» կը պահեն միչտ իրենց քնարին լարերը: Սակայն ո՞րն է բանաստեղծը, միակը, զոր իրաւունք ունենա – յինք համարելու ընտրեալը եւ որ, իր սերունդին հիմնական յատկանիչները ներկայացնելով հանդերձ, բացառութիւն մը ըլլար եւ ոչ թէ «կանոն» մը:

Իր սերունդին միակ բանաստեղծն էր, օրինակի համար, Սիլիւարի հանճարեղ պատանին՝ Գեորգ Դուբեան: Քիչ մը աւելի արուեստագէտ, մօտաւորապէս նոյն կաղապարէն թափուած էր միւս տաղանդաւոր պատանին՝ Միսաք Մեծարենց: Վարուժանը, Սիամանթօն, Թէքէեանը բացառութիւններ չէին. ընտրեալներ էին:

Բացառութիւնը Ինտրան էր, եւ սոսր համար իր սերունդը զրեթէ չհասկցաւ եւ զրեթէ աչերնց զինք:

Մեր օրերու բանաստեղծութիւնը եւ բանաստեղծները այս կամ այն ձեւով, այս կամ այն չափով կը զոհացնեն մեզ, բայց չեն լիացներ: Պիտի ըսենք նաեւ, որ մեր բանաստեղծութեան կը պակսի զգայական լայնալիր յուզումը: Կը պակսի խմացական լայնածիր յուզումը: Կը պակսին նաեւ յանդգնութիւնը, վերասլաց թռիչքը, նորութիւնը, տաք չունչը, ինքնատպութիւնը, որոնց զումարը կրնանք կոչել ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ:

Կը հաւատանք սակայն, որ մեր զարաչրջանի բանաստեղծը պիտի գայ օր մը անկասկած: Ու թերեւս հետը պիտի բերէ Դուբեանէն բան մը. նաեւ բան մը Մեծարենցէն, Վարուժանէն, Սիամանթոյէն, Թէքէեանէն, Ինտրայէն ու Զարենցէն: Թերեւս նոյնիսկ բան մը Քուչակէն եւ Սայաթ Նովայէն, առանց անշուշտ նմանելու ասոնցմէ մէկուն կամ միւսին: Գալիք այս բանաստեղծին անունը չենք դիտեր, բայց այժմէն կրնանք կոչել զայն ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆԸ:

Ախոստո կ'ըսէր, «Թէ Աստուած կը ստեղծէ արուեստագէտը եւ կաղապարը կը կոտրէ: Ասիկա կը նշանակէ, որ արուեստագէտները կը ծնին, չեն պատրաստուիր: Ի՞նչ էին, իրրեւ «պատրաստուած», Դուբեանը, Մեծարենցը կամ Զարենցը: Գրեթէ ոչինչ: Բայց քաչուած էին «Աստուծոյ ճախարակ»էն: Արուեստագէտ ծնած էին:

Կառչած էին անցեալին՝ անտեսելու համար, անտեսելու չափ ներկան, որ ուրիչ նկարագիր ունի եւ ուրիչ մտահոգութիւններ: Կեանքը հիմա խաղաղ մակընթացութիւն մը չէ, այլ քիչ մը աւելի է, քան փոթորիկը: Այս փոթորիկին մէջ պիտի քալեցնենք մեր նաւը՝ գրեթէ առանց առագաստի, գրեթէ առանց կոմպասոյի:

Արդի բանաստեղծութիւնը նկարագիր կը փոխէ: Փակուած է քերթողական արուեստին հին չրջանը, առանց անհետացած ըլլալու: Կազմուելու վրայ է նորը: Մայակովսկին, Փօլ Էլիւարը պիտի ըլլան — պիտի ըլլա՞ն — վաղուան բանաստեղծները:

Կը մնայ վէպը:

Որոշ չափով բանաստեղծութիւն կայ այսօր մեր վէպին մէջ, ինչպէս կար երէկ ալ: Պահ մը կը թուի մեզի, թէ ինչ որ կորնցուցինք մեր բանաստեղծութեան մէջ պիտի կրնանք վերաչահիլ վէպին ու պատմուածքին մէջ: Եւ ինչ որ կրցանք իրագործել 1900էն մինչեւ այսօր, յաղթանակ մը չէ, դեռ, թերեւս ոչ իսկ յաջողութիւն մըն է: Զօհրապը, Երուխանը, Տիկ. Եսայեանն եւս, պէտք կ'ըլլայ հասնիլ Շ. Շահնուրին, որպէսզի մեր վէպը նոր հանդրուան մը արձանագրէ:

«Յեղային» հանդրուան մը չէ անշուշտ ասիկա, այլ պարզապէս «զրական» հանդրուան մըն է, զոր կրցաւ նուաճել իր սերունդին կարկառուն ներկայացուցիչներուն օժտուած երիտասարդ այս զրողը 1929ին:

Ամէն զրականութեան մէջ ժողովուրդէն մանրիկ մը կայ միչտ, երբեմն՝ չէչտ, երբեմն՝ անչէչտ: Կը ձգտինք աւելիին, բայց չենք ուրանար պակասն ալ, որ դարձեալ աւելի է, քան ոչինչը: Շահան Շահնուր իր սերունդին վէպը տուաւ զրեթէ, եթէ չկրցաւ իր ժողովուրդին վէպը տալ ամբողջութեամբ: Եւ ինչ որ տուաւ, մեծ բան էր անկասկած: Զենք խօսիր Օշականի մասին, որ կազմուած զրադէտ մըն էր արդէն, երբ Շահնուր զրել սկսաւ:

Ռուբէն Զարդարեանէն եւս, պէտք է հասնիլ Շաւարչ Նարդունիին, որպէս զի մեր հէքեաթը դառնէ իր «զուգահեռ – պիծ»ը: Անտեսուած, լքուած սեռ մը եղաւ հէքեաթը մեր նոր զրականութեան մէջ, հակառակ այն հարուստ ժառանգութեան, զոր մեր ժողովուրդը, դաւառը, պատմութիւնը ձգեցին մեզի իբրեւ «նոյէ հրիտակ»: Հիմա զրեթէ «ոչ ոքի պատկանող» հողամաս մը զարձած է հէքեաթը մեր մէջ: Կրնայինք աղգային դիւցազներգութիւն մը ստեղծել թան – կագին այդ ժառանգութենէն:

Մեր կեանքի մեծ որբեւայրին է հիմա թատրոնը թէ իրրեւ բեմ, թէ իրրեւ զրական ստեղծագործութիւն: Շիրվանզադէն եւ Շանթէն եւս, ուրիչ հաստատուն համբաւ մը չտուաւ մեզի թատերական մեր զրականութիւնը: Համակրելի փորձեր ըրին Օշական, Իփէկեան, Եղիա Գասպարեան եւ ուրիչներ: Բայց տիրապետող չեն ոչ իրենց ներքին, ոչ ալ արտաքին արժէքներուն դէմառջեւ: Մտիկ – ուած ենք մեր բեմը անուշանել հիմա օտարին պատուաստով՝ մեզմէ դուրս փնտռելու համար ինչ որ մեզմէ ներս մըննաց «թերի եւ անընդունելի» ...

Կը մնայ դեռ քննադատութիւնը:

Լաւագոյն պարագային՝ զրական քրոնիկ է մեզի տրուածը զրական քննադատութիւն անունին տակ:

Երկու վաւերական քննադատներ, Նիկոլ Աղբալեան եւ Յակոբ Օշական, իրենց ողջութեան իսկ լքեցին ասպարէզը, ուր զրեթէ տիրական էր իրենց ձայնը: Մէկը մխրճուեցաւ բանասիրութեան մէջ, միւսը՝ զրական պատմութեան, որ բուն քննադատութիւնը չէ: Իսկ հիմա արդէն լուած են ընդմիչտ, մեր անպատասխան յիշողութեան մէջ զրեթէ առանձին ձգելով մեզ:

Աղբալեան՝ իր հանդարտ վերլուծումով, Օշական՝ իր լայն հայեացքով, զիրար փոխարինող ուժեր չէին, այլ դիրար լրացնող ուժեր էին: Կեանքի մէջ դեմոկրատ, զրականութեան մէջ արիստոկրատ, Աղբալեան նրբահոյզ միտք մըն էր: Հին մեհենական մըն էր Օշական, որ մեր «արուեստ քննադատութեան» բերաւ նոր մեթոտ, նոր չափանիշներ: Աղբալեան տրամաբանութեան մարդն էր, Օշական՝ արդարամտութեան: Աղբալեան կը համոզէր, Օշական «կը հրամայեցնէր»: Աղբալեանի մէջ վերակիր էր խորասոյզ կեդրոնացումը, Օշականի մէջ՝ յանդգնութիւնը: Մէկուն մէջ հանրային գիծը զուգահեռ կ'ընթանար զրականութեան հետ, միւսին մէջ զրականութիւնը առանձինն ու բարձրավիզ կը քալէր: Մէկը արժէքներ կը յայտնաբերէր, միւսը արժանիքներ կը ճշդէր: Մէկը երկրախոյզի աչք ունէր, միւսը՝ հողեխոյզի: Նիկոլ Աղբալեան կը տարակուսէր ու կ'որոնէր, Յակոբ Օշական կը հաստատէր կամ կը ժխտէր: Աղբալեան զգաստ կը պահէր մեզ, Օշական՝ արթուն:

Քննադատութիւնը հիմա, մեր օրերուն, աւելի շատ մեկնութիւն է կամ բացատրեալ ընթերցանութիւն», քան արուեստի սահմանադրութիւն:

Չի բաւեր միայն հասկնալ, պէտք է նաեւ զգալ:

Չի բաւեր միայն տեսնել, պէտք է նաեւ տեսնել տալ:

Պոտլեռ, թերեւս ամէնէն նուրբ արուեստագէտը իր ժամանակին, քննադատութենէն կը պահանջէր ըլլալ կրքոտ եւ կողմնապահ: Գաղջ, հաշտարար, միջի – նին միայն հետամուտ մարդիկ չեն կրնար քննադատ ըլլալ: Կրնան բանսփսիր ըլլալ:

Նոյն տարականոն միտքը, Շարլ Պոտլեռ, կ'ըսէր նոյնպէս. «Քննադատութիւնը պէտք է, որ քաղաքականութիւն ընէ, բայց պէտք է, որ նաեւ հոգիդոն բանայ»:

Հիմա մեր քննադատութիւնը զրեթէ միայն քաղաքականութիւն կ'ընէ, բայց զրեթէ բնաւ հոգիդոն չի բանար: Սակ մենք պէտք ունինք հոգիդոն բացող քննադատութեան եւ քաղաքականութիւն չընող քննադատներու:

Առանցճնաչնորհեալ սերունդներ չկան, բայց սերունդներուն մէջ կան առանձնաշնորհեալ զէմքեր: Ամէն սերունդ ունի իր ցորենն ու չարդը. չարդը կ'երթայ, ցորենը կը մնայ:

Եւ կը մնայ՝ առանց պէտք ունենալու մեր զովեստին կամ պարսաւին:

(Խմբագրական՝ ՅՈՒՍԱԲԵՐԻ)

ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ ԶՈՒԱՐԹՆՈՑԸ

Կարդացի «Ցառաջ»ի մէջ՝ «Գրական Թերթ»էն արտատպուած ճարտ. Տիրան Մարութեանի «կարեւոր յայտնութիւն մը» յօդուածը:

Հայաստանէն Փարիզ պատչտի եկած հայ ճարտարապետները յայտնաբերած են Սէնթ Շափէլի վերին եկեղեցւոյ մուտքի պատի վրայ, ջրհեղեղը ներկայացնող երկու հարթաքանդակներ: Նկատած են որ Նոյի Տապանը ճիշդ պատկերն է Էջմիածնայ Զուարթնոց տաճարի, ինչպէս ճարտարապետ Թորոս Թորամանեանը վերակազմել է աւերակներու վրայ կատարած պրպտումներուն ու չափագրութիւններու հիման վրայ:

Ցայտնի է վաղուց, որ Թորամանեանի վերակազմած տաճարի ձեւը ամբողջովին ընդունելի չէ եղած եւ չատերը վերապահ դտնուած: Յօդուածի մէջ անուանուած ճարտարապետ Կուզնեցովը եւ Մը – նացականեան, 1951ին եւ 1956ին հակառակ փաստեր են:

Հայկական ճարտարապետութեան պատմութեան ճշդրտութեան համար կարեւոր կը համարեմ լրացուցիչ տեղեկութիւններ տալ, որոնք մասնագէտ պրպտողներուն օգտակար կրնան լինել:

Ճարտարապետ Թորամանեանի հետ բեկամական մօտիկ յարաբերութեան մէջ եղած եմ 1914 – 1919 թուերուն, երբ ան իմ ծննդավայրս, Գիւմրի, կ'ապրէր:

Մօտէն ծանօթ եմ եւ տեսած իր իսկ բնակարանի մէջ (նկուղ մը) իր աչխատութիւնները, գծագրութիւնները, չափագրութիւնները, դժուարին պայմաններու մէջ հանած մեր յուչարձաններու լուսանկարները եւայլն: Նիւթական միջոցներէ բացարձակապէս զուրկ, հերոսաբար կը չարունակէր իր աչխատանքները, չըլլալով հանդերձ համառարած անտարբերութեամբ եւ նոյնիսկ որոչ թչնամութեամբ:

Պատերազմի բերումով հայկական բաղմաթիւ դաւառներ դտնուելուս, վարպետին ուղարկած եմ տեղւոյն հայկական կանդուն եւ աւերակ յուչարձաններու ուրուագծեր, լուսանկարներ եւ տեղեկութիւններ: Միչտ կ'այցելէի ճարտարապետին արձակուրդներուս առեն եւ ակնածանքով կը լսէի իր բացատրութիւններ եւ կը դիտէի նկարներն ու դծագրութիւնները:

Փարիզ պատչտի եկած խորհրդահայ ճարտարապետները եւ Մարութեանը սըխալմամբ կ'ենթադրեն, թէ Թորոս Թորամանեանը իր երիտասարդ տարիքը փարիզ ըլլալով, տեսած է Սէնթ Շափէլի երկու որմնականդակները Զուարթնոցի կերպարներով:

Իմ խոնարհ կարծիքով Թորամանեանը իր ուսումը կատարելագործելու համար

(7 Շար.)

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՑՈՒՇԱՏԵՏՐԸ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ

«ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ԻՐԱՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ – ԹԻՒՆԸ»·— «ԱՐԵՒԵԼԱՀԱՑ ԲԱՆԱՍՏԵՂ – ԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԸ»·— «ՀԱ – ՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՑ ԳՐԱԿԱՆՈՒ – ԹԵԱՆ» Ա· Բ· ԵՒ Ե· ՀԱՏՈՐՆԵՐԸ:

Մանաւանդ լաւատեսութիւնը զրական դիծ մըն է, զոր պէտք է մչակէ ամէն արուեստագէտ զրող: Օշական կ'իյնայ զարձեալ նոյն սխալին մէջ, այս օրուան ըմբռնումներով եւ տեսակէտներով զատեել վէպեր ու քերթուածներ, առանց նրկատի առնելու անոնց երկունքին ժամանակաչրջանը: Այնպիսի առեն մը երբ կը կազմուէր հայ իրապաչտ վէպը եւ անոր կը յաջորդէր արուեստագէտ սերունդը, Օշականի վայրիացած որակումով, եւ ո – րոնք մէջ աթոռ մըն ալ Լ· Շանթին կը դիջանէր· «ամէնէն աւելի հռչակի հասած «Հին Աստուած»ներուն զատ յաջողութիւնը «անհասկնալի» կը զտնէ եւ չի յիչեր մանաւանդ Լ· Շանթին «Օչին Պայլը» եւ ուրիչ թատերական յաջողութիւններ, արեւմտահայերուս մէջ միակը մնալով իրրեւ թատերագիր:

Ո՞ր ժողովուրդը չունի իր դիւրին ընթերցանութեան վէպերը, որպէս զի մերինը չունենար անոնցմէ: Քասիմի, կամ Սմբատ Բիւրատի, նոյնիսկ Եր· Օտեանի վէպերը կարդացող ժողովուրդ մըն ալ ունէինք: Ունէինք··· այսօր ան ալ չունինք: Գրական թիւրիմացութիւն մըն է դրել թէ «Ողորմելի Քասիմը մեծ վիպասան դաւանողներ» կան մեր մէջ: Մեզի ծանօթ եւրոպական այնքան անուններուն քով բազմահազար չե՞ն անոնք որ առօր – եայ ընթերցանութեան կեր կուտան: Լ· Սեդրոսեանի զրականութեան եւ արուեստին մասին Օշականի վերապահումները վերաքննութեան կը կարօտին: Անիկա «Լուսանցքի մարդ չմնաց» երթեք:

Օշականի զրչին տակ վարժապետ բառը թեթեւութեամբ ու հեղնութեամբ կը յիչուի յաճախ, մասնաւորաբար Լ· Շանթի անունին յիչատակութեան առեն: Երբ՞ն ի վեր զրադէտի մը արժանիքները կամ տկարութիւնները լոյսին բերելու առթիւ արհամարհանքով կը յիչուի ան – հատական զրադումը: Կարելի՞ է թուղթին յանձնել ինչ որ ըրած է Օշական մեծ պատերազմին Գուլիարիոյ մէջ: Գալով Լ· Շանթին, երկար տարիներ հայ կրթական գործին բերած նպաստը, մանկավարժական բազմաթիւ եւ այլազան դաստիրքերը եւ հասցուցած նոր սերունդը անկարելի է մոռնալ:

×

Յ· Օշական զրականութեան մարզէն դուրս կ'ելլէ ու կը խօսի Պոլսոյ երկրորդական վարժարաններուն՝ մեր Գրական նուիրեան բերած ու չբերած նպաստին մասին (Շահնազարեան, Պէրպէրեան, Մէզպուբեան, Կեդրոնական, Հինդլեան, Կարապետեան, Պէզդեան, Սանասար – եան): «Համապատկեր»ի էջ 108ին ծանօթութեան մը մէջ կը խօսի Սանասարեա – նի մասին· «Գաղափարներու զուգորդութեամբ մը, կը զրեմ կ'ըսէ Օշական, ա – նունը Սանասարեանին որ մեր զրականութեան համար ամուլ անուն մը կը նչանակէ (մեր իմացական միւս զործունէութեան վրայ իր զերը՝ պայծառ, դուրս է նկատառումէս) ու պիս կը մղէ զերման ռէպշուլէներուն մեզքը տեսնելու այս արդիւնքին մէջ: Այդ վարժարանին սպայկոյը թող ըլլար առած իր ուսումը Գերմանիայէն դուրս, մենք, ապահով եմ, կ'ունենայինք, առ նուազն Սրուանձտեանցի չքեղ երազին իրագործումը, այլ սինքն՝ Հայ Հայրենիքին ամբողջական ուսումնասիրութիւնը եւ ոչ թէ ճղակտոր ուսուցիչներու թէկուզ հերոսական փաղանդը: Այնքան բախտորոչ է պարագա – ներուն դերը երբեմն»:

Շատ լուրջ խնդիր մըն է ասիկա: Կրթական որեւէ հաստատութիւն, բարձրագոյն հաստատութիւն ըսել կ'ուզեմ, իր ո – րոչ առաքելութիւնն ունի: Երկրորդական վարժարանները, որոնց կարգին նաեւ Սանասարեանը, մասնագիտական հաստատութիւններ չեն, որպէսզի հոն յատկ – խողները ձեռք բերեն որեւէ մասնագիտութիւն: Երկրորդական վարժարանները ընդհանուր զարգացման իմացական հիմնոցներ են: Ցետոյ է որ մասնագիտական ուսումներ կը ճիւղաւորուին, որպէսզի ուսանողները դառնան զրագէտ, արուեստագէտ, բժիչկ, ճարտարագէտ եւայլն: Գալով Սանասարեանին, ծանօթ է որ երջանկայիչատակ բարերարը, Մկրտիչ Սանասարեան, կրթական այդ վառարանը հարձր Հայքի կեդրոն, կարնոյ մէջ բացած է հայկական նահանգներու հայ դպրոցներուն, Օշականի արհամարհական «ճղակտոր» բառով, ուսուցիչներ պատրաստելու համար: Թէ այդ մարզին մէջ ինչ բարերար դեր կատարած է այդ հաստատութիւնը, ուրիչ գլուխ մըն է, որուն մասին դժբախտաբար գրեթէ չատ քիչ բան գրուած է: Բարեբախտաբար Յ· Օշական այս խնդրին մէջ արդար եղած է իր տուրքը տալու համար այդ հաստատութեան կատարած այնքան հայկական դերին, գրելով փակագծի մէջ· «Մեր իմացական միւս զործունէութեան վրայ իր դերը՝ պայծառ, դուրս է նկատառումէս»:

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

փարիզ եղած ժամանակ դեռ ոչ մէկ դա – դափար ունէր Զուարթնոցի մասին : Փարիզէն եաքն է, որ Հայաստան է դա – ցած եւ հոն հաստատուած : Շատ հաւա – նական է, որ Թորամանեանը չէ տեսած Ջրհեղեղի հարթաքանդակները, ինչպէս չեն տեսած հազարաւոր հայ եւ օտար բանիմաց այցելուներ :

Կը վկայեմ, որ հանգուցեալ Թորաման– եանը բարմիցս կրկնած է ախորժակով, որ մասնագէտները, բացի Սարգիքովս – կին, վերապահ են իր վերակազմած Զուարթնոցին : Ինչո՞ւ պէտք է դաղտնի պահէր Փարիզի Սէնթ Շափէլի Նոյան Տապանի պատկերը, որ ապացոյցը կու տայ եւ կը հաստատէ իր աշխատանքին ճշդութիւնը : Ամէնին յայտնի է, որ Ա – կատ. Մաթ նոյնպէս վերապահ էր եւ չատ սառն դէպի Թորամանեանը : Այս բա– նըն լինի լինքը ճարտարապետն է պատ – մած : Նոյն հռչակաւոր հայագէտ Մաթը Գագիկաձէն Ս. Գրիգորը պեղելիս գտած է Թագաւորի քարէ դունաւոր արձանը, որ ես տեսած եմ Անի, իր իսկ ձեռքերով հաւաքել, ի մի է բերած եկեղեցու նա – խատիպարի կտորները եւ հիացած, որ անիկա Թորամանեանի նկարած Զուարթ– նոցին նման է : Այս պիտով Թորաման– եանի տաղանդը կը հռչակուի :

1922 Թուին Փարիզի Սէնթ Շափէլը այ– ցելելիս հրճուանքով տեսայ հարթաքան– դակ գոյգ Նոյան Տապանները : Գնեցի ա – նոնց քարտերը եւ նամակով ուղարկեցի 1923 Թուին Թորոս Թորամանեանին : Ես իրմէ նամակներ ստացած եմ, որոնց մէջ ոչ մէկ յիշատակութիւն Նոյեան – Տա – պանի մասին : Անշուշտ նամակս իրեն չէր հասած : Ուզարկած եմ նոյնպէս Սիպտը քաղաքի (պակեան երկիր, Պիարիցի մօտ) եկեղեցու զանգակատան լուսանկա– րը : Այդ զանգակատունը նման նոյնպէս Զուարթնոցին, թէեւ չատ աւելի փոքր եւ բազմազան չինանիւթերով կառուցուած (փայտ, քար, կղմինդր) : Սոյն նամակս էլ չի հասած իրեն :

Այժմ նչենք տարբերութիւնները :

Թորամանեանի վերակազմած Զուարթ– նոցի պատուհանները երկարաւուն են բո– լոր երեք յարկերու պատերու վրայ, մինչդեռ հարթաքանդակ Նոյեան – Տա – պանի երկրորդ եւ երրորդ յարկի պատու– հանները բոլորակաձեւ են՝ կլոր : Նոյն պատուհանները գարձեալ բոլորակաձեւ են Գագիկաձէն եկեղեցու տիպարի վրայ :

Ուրիչ տարբերութիւն : Թորամանեանի Զուարթնոցի եւ Գագիկի Ս. Գրիգորի բոլոր պատուհանները երեք յարկերու պատերու վրայ առնուած են սիւնազարդ կամարներու մէջ : Սիւները գոյգ են : Մինչդեռ Նոյի Տապանի երրորդ յարկը, գմբէթը սիւնազարդ կամարներ չունի :

Ուրեմն առանձին հմտութեան պէտք չկայ ապացուցելու, որ Թորոս Թորաման– եան տեսած չէր Փարիզի Նոյեան – Տա– պանի պատկերները եւ յետագային ալ իմ ուղարկած քարտերն ստացած չէ : Եթէ ստացած լինէր, անպատճառ ակնարկ պի– տի ընէր լինդի, ցուցմունքներ տալով :

Հանգուցեալ վարպետը խոնարհ ու համեստ էր եւ ուրիշներու նման փառամոլ չէր : Իր գործունէութեան միակ նպատա– կըն էր իր բազմամեայ ուսնջման աչխա – տանքները լ մի բերել եւ կոթողական ներկայանալի հրատարակութեամբ ցոյ – տուն կերպով ցոյց տալ գիտական աչ – խարհին եւ արուեստի սիրահարներուն բազմազարեան հայ ճարտարապետու – թեան վեհութիւնը, բազմազան կերպար – ներու ճոխ հարստութիւնը, չինանիւթե – րու բանական գործածութիւնը, ձեւերու պարզութիւնը, չքնաղ համաչափութիւնը եւ մանաւանդ հայ ճարտարապետութեան ինքնատիպ անհատականութիւնը : Միչտ կը ծառանար ցաւումով այն դիտուններու դէմ, որոնք թեթեւօրէն կը փնտռէին ու կը գտնէին միմիայն օտար ազդեցութիւն– ներ մեր չինարուեստի եւ ոճի մէջ :

ԳԻՒՄՐԵՑԻ

ՇԱՆՕԹ.— Համեմատելու համար տես·
1) Նոյի Տապանը (Խարտ) :
2) Յարութիւնեան եւ Սափարեան, «Հայկական ճարտարապետութեան յու – շարձանները· Էջ 44 ռուսերէն :
3) Եակոբսօն· «Ակնարկ Հայաստանի ճարտարապետութեան պատմութեան Էջ 68 · 69 ռուսերէն :

ԿԱՐԴԱՑԻՔ ՏԱՐԱԾԵՑՔ «ՅԱՌԱՋ»Ը

ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ

(ՌԻՇԱՒ ԺԵՐԱՆԵԱՆ)

★

Ապրիլ 15 – 30, ժէրար Մուրկ նկարա– սրահին մէջ տեղի ունեցաւ Ֆրանսահայ երիտասարդ նկարիչ Ժերանեանի գործե – րու ցուցահանդէսը :

Արուեստագէտը ունի ուժեղ բազուկ, բնաւ մատիտ չի գործածեր : Վարպետ վրձինի տէր, արագութեամբ կը գտնէ գիծերը, հեռապատկերը եւ ապա՝ գոյ – ները :

Տաք, վառվռուն գոյներով ողողուած, երփներանգ են իր պատառոնները : Կարմի– րը կ'արտացոլացնէ իր քովի կարմիրը, նարնջագոյնը իր քովի նարնջագոյնը եւ այսպէս չարունակաբար, առանց որ կողք կողքի դրուած նոյն գոյները միեր հա – կասեն : Իր պատառոններուն արեւի ջեր – մութիւնը կը տաքցնէ կարծես դիտողը :

Արտակարգ ոճով նկարիչ մըն է ան : Կատարեալ գաստակերտութեամբ, լուսա – նկարչական ճշդութեամբ իրարու կը յաջորդեն նիւթերը իր նկարներուն, ո – րոնց մէջ սիրուն արդիականութեամբ դր– ուած են առարկաները, առանց ղիրար չէ – ղաքցնելու եւ ոչ ալ լուծուելիք յառա – ջադրուած կերպեր յարուցանելու : Ան– մեղսրէն փուռած են իրարու մօտ եւ կը գառնան ինկատիլ :

Անչարժ իրեր ներկայացնող իր կարգ մը պատառոնները որոշապէս կը յիշեցնեն Վա կոկը : «Կարմիր սեղանը պտղամանով», դրուած քովնտի՝ բաց պատուհանի մը մօտը, առջեւը աթոռ մը, աներեւոյթ ա– րեւին լոյսովը ողողուած եւ հիանալի մթնոլորտով պեղուն, յաջող գործ մըն է : Սեղանի վրայի գոնուած առարկաները լուսանկարչական ճշդրտութեամբ կը ներ– կայանան :

«Զուկերը» ձեւով չատ դասական, ծը– րարին թուղթն ու քովի երկու չիչերը խիստ այժմէականութեամբ նկարուած, նոյնպէս եւ զանոնք կրող կապոյտ սեղա– նը, չարադրութեան եւ նկարելու կերպի չնորհալի ամրողջութիւն մըն է : Դասա– կան եւ արդիական կերպերը նոյն յոխոր– տանքով կը քալեն :

« Ինձորները » ներշնչումով եւ յօրի – նումով կը յիշեցնեն հայկական մանրա – նկարչութեան վառվռուն գոյները :

Ֆրանսայի եւ Լիբանանի տեսարանները նկարուած կիզիչ արեւի լոյսին տակ՝ օր– ուան տօթին, տուները ,ծառերը , ճամ – բաները կը չարուին տենդագին, իրարու վրայ, ղիրար հրմչկելով, աչակերտա – կան լրիւ կարգապահութեամբ : Սա – կայն իր երկինքներու գոյները — մանի– չակագոյն , մուխ կապոյտ — կը տակա – սեն լուսաւոր եւ արփակէզ խորութիւն ունեցող բնանկարներուն :

Հանդիսատեսի լուսթեանն մէջ «Սեւա– նայ լիճը» , պատառը կը դիտեմ մեծ տպրումով : Մինչեւ հոն երթալու վա – յելքը ունեցած է արուեստագէտը : Մեր լիճը իր մուխ կապոյտ ջուրերով, խրոխտ ժայռեր ունի եաին, խաղաղ վանքերը կզբին ... ներդաշնակ եւ հաճելի գոյնե– րով բոլորովին ազատ կերպով եւ միջո – գով նկարուած, իսկապէս առինքնող նո – րութիւն մը ունի այս պզտիկ նկարը :

Ձմմարիտ ստեղծագործողի ոգիով գին– ուած է Ժերանեան : Ան չի խանդավառ – ուիր իր տուածներովը· չի մտահոգուիր եւ ոչ ալ կը յուսալքուի ... Իրերու ար– տաքին ճշդրիտ երեւոյթներուն տակ կ'ու– զէ յայտնել անոնց ներքինը ... Ինչպէս իր ջղուտ ներաչխարհը իր հանդարտ և – րեւոյթին տակ : Սրտագեղ պարզութեամբ միչտ փնտռտուքի մէջ է ան : Չի նմանիր այն նկարիչներուն որոնք հպարտութեամբ կը նային իրենց արտադրած գործերուն, ընդհակառակն իր հոգիին եւ մարքին մէջ խլրտացող անկերպարան երեւակայու – թիւններ ունի ու կը ձգտի միչտ լաւա – գոյնին :

Բազմաթիւ անկամներ արժանացած է Փարիզ քաղաքին արձաթեայ չքանչաննե– րուն : Գարգուի կողքին՝ Ժերանեանի ա – նունն է միայն որ կը տեսնենք հարիւր կարող նկարիչներու անուանացանկին մէջ որ կը կազմէ Փարիզի նկարիչներու կա – րեւոր մէկ խմբակցութիւնը :

Յուցադրուած պատառոններէն 6 – 7 հատ ծախուած են բաւական սուղ դի – ներով :

Մեր սրտագին չնորհաւորութիւնները երիտասարդ արուեստագէտին :

Կ. ՉՈՒԽՃԵԱՆ

ՋԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՀԱՅԿ· ԿԵԱՆՔԸ ՎԻԵՆԻ ՄԷՋ

Վիէն, (Յառաջ)· — Զատկէն ասդին, Վիէնի մեր գաղութը, երեք անգամ, հոծ բազմութեամբ ներկայ գտնուեցաւ քա – դաքապետական թատրոնին մէջ զուտ ե – րիտասարդական ձեռնարկներու :

Այսպէս, ճիշդ Զատկի օրը, 29 Մարտ տեղի ունեցաւ Մշակութային Միութեան հանդէսը :

Իսկ հինգ Ապրիլին, Փարիզի Մուրատ – եան վարժարանի աչակերտութիւնն էր որ դրաւած էր միեւնոյն թատրոնը :

Անձնուէր անհատներ Սահճեան եղ – բայրները,— ինչպէս նաեւ աջակից ձեռ– քեր, Յ. Լեւոնեան վարդապետը, հնա – րաւոր դարձուցին մեծածախս այս ներ – կայացումը :

Յայտարի գործադրութեան անցնելէ առաջ վարժարանի տեսուչը՝ Հ. Ս. Ադըլ– եան, ներկայացուց յայտարիրը եւ բա – ցատրեց ձեռնարկին նպատակները :

Առաջին առթիւ, ներկայացուեցաւ «Ազ– ատարդ իշխանը», յուզիչ տուամբ, առ – նուած հայ – մակեդոնական չրջանէն : Նորութիւն մը :

Երկրորդը՝ Քուրթըլինի կատակերդու – թիւնը «յօդուած 330»ը, Ֆրանսերէնի սի– րահարները լաւ մը զուարճացուց : Իսկ, երրորդ եւ վերջին կտորը, մեր անմահ Յ. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրաց – կաններէն» առնուած երկու –երեք պատ– կերներ, տղաքը ներկայացուցին նոյնքան յաջողութեամբ :

Վիէնի հասարակութիւնը իսկական թատերական վայելքի մը արժանացաւ, ծնողքները, տարեցները քիչ մը մխիթար– ուեցան, իսկ մատաղ եւ նորահաս սե – րունդը Մուրատեան վարժարանի աչա – կերտներուն նմանելու բարի նախանձ մը ունեցաւ :

Երեք ներկայացումներու դերակատար– ները, ինչպէս նաեւ խօսնակը եւ դեղար– ուեստական բաժինին սատարողները ան – վերջ ծափերով դնահատուեցան ժողո – վուրդի կողմէ :

Ապրիլ 19ին, Կիրակի, Մեծ Եղեռնի տխուր տարեդարձը, մեր ազգային սու– գի եւ յիշատակի օրը տօնուեցաւ Սէրքըլը Կաթոլիկի սրահին մէջ :

Նախաձեռնութիւնը, երկրորդ տարին ըլլալով, տանձնած էր Հայ Ազգ· Միու– թիւնը մասնակցութեամբ զաղութիս զա– նազան կազմակերպութեանց եւ հայրե – նակցական միութեանց :

Զարմանալի կէտ մը սակայն, հակա – ռակ սպառնալի համաղաղութեային պիտա– կին եւ հանդամանքին, երեք հարիւր հո– գինոց սրահը պարապ աթոռներ ունէր ... Արդեօք, կարելի՞ է մոռնալ մեր նահա– տակները, եւ կամ, անտարբեր գտնուիլ անոնց յիշատակին ընծայուած յարգան – քին հանդէպ :

Ազգային Միութեան առժամեայ վար – չութեան քարտուղարը՝ Պ. Պ. Ճիհան – չահեան սկսհանդէսին բացումը կատա – րեց, դրաւոր ճառով մը :

Յաջորդաբար խօսք առին Պ. Տիգրան Չէքեան (Հայ կամ. եւ Մարտիկներու Միութիւն), Պ. Ս. Գալուստեան (Հ. Ց. Դ. Անի կոմիտէ) եւ տեղւոյս քարոզիչը՝ Պ. Տիգրան Մկրտիչեան :

Արտասանեցին Օրիորդներ՝ Անահիտ Կարապետեան (Նոր Սերունդ) եւ Հելէն Փլթոյեան (Հ. Մ. Ը. Մ.) ուղերձներ կարդացին՝ Տիկին Ովս. Իօքսիւզեան (Հ. Կապոյտ Խաչ) եւ Պ. Պէնոն ձիհանչահ – եան (Վասպուրականի Հայրենակցական Միութիւն)·

Մեներգեց Տիկին Պ. Սիմոնեան (եկե– ղեցասէր Տիկնանց Միութիւն) եւ Մալա– թիոյ Կրթասիրաց Միութեան կողմէ փոք– րիկն Գ. Քիւլհանճեան նուագեց դաշնա – կի վրայ «Մայր Արաքս»ին :

Օրուան պաշտօնական բանախօսն էր Պ. Ալ· Կիւլպէնկեան, Լիոնի Ազգ· Միու – թեան առենապետը, որ պարզ եւ ընտանի խօսակցութեան ձեւով բացատրեց մեր մեծ սուգին իմաստը եւ ահաւոր սպանդին քաղաքական ծալքերը :

Նորագոյն եւ վերջին ձեռնարկը եղաւ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի 14րդ տարե – դարձի տօնակատարութիւնը, կիրակի, 26 Ապրիլին, քաղաքապետական թատրոնին մէջ· Բազմութիւնը պատկառելի էր :

Հանդէսի նախագահութիւնը, ինչպէս նաեւ խօսնակի պաշտօնը վերապահուած էին պատանի Աատուր Ռոստիկեանի, նախկին աչակերտ Մուրատեան վարժա – րանի :

«Մշակ բանուոր»ով, Նոր Սերունդի

ՀԱՅԿ· ԿԵԱՆՔԸ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

—o—

× Կիրակի առաւօտ Ս· Պօղոս – Պետ – րոս եկեղեցւոյ հոգաբարձութեան նախա– ձեռնութեամբ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Ապրիլեան նահատակներու յիչատակին :Պատարագեց Սերովբէ Եպիս· Մանուկեան :Եկեղեցին լեցուած էր խուռ– ներամ բազմութեամբ :

Ներկայ էր նաեւ տեղւոյս քաղաքապե – տը՝ Պ· Պլէօզ, որ յարդանքի իր արտա– յայտութիւնը ունեցաւ մեր բիւրաւոր նա– հատակներուն յիչատակին : Հոգեհան – դիստը վերջացաւ Պ· Գայիչեանի ճառով, որմէ յետոյ եկեղեցւոյ հոգաբարձութիւ– նը մատաղ բաչխեց ժողովուրդին :

×

Շաբաթ, Ապրիլ 25ին, կապոյտ Խաչի տեղւոյս մասնաճիւղին նախաձեռնու – թեամբ, մեր երիտասարդները ներկայա– ցուցին «Արշին մալ Ալան» օփերէթը ; չորս արար :

Մէզոն Ալֆորի քաղաքապետարանի սը– րահը լեցուած էր հանդիսատեսներու բազմութեամբ :

Ներկայացումը մեծ յաջողութիւն դը – տաւ :

Սուլթան պէկի դերին մէջ Անդրանիկ Գալուստեան լաւ խաղարկութիւն մը ցոյց տուաւ· Տիկին Արաքսի Մուրատեան յա– ջողութեամբ կատարեց խալայի դերը : Օր· Օր· Մարգարիտ եւ Լուիզ Նահա – պետեան իրենց հաճելի ձայնով եւ խա – ղարկութեամբ՝ դնահատանքի արժանա – ցած կիւլչորա եւ Աթա դերերուն մէջ :

Յաջող խաղարկութիւն ցոյց տուին նա– եւ Տարօն Գալուստեան (Ապդար), Տէր եւ Տիկին Վէնսան Տարաքճեան (Սիւլէյ – ման եւ Թէլլի), Գրիգոր Պարսումեան (Վէլլի)·

Դիմայարդարումը անթերի էր :

Այս յաջողութիւնը կը պարտինք Պ·Մե– սումենցին, որ կարճ ժամանակի մէջ կա– րողացաւ գլուխ հանել դժուարին այս օ– փերէթին ներկայացումը :

ՍԵՐԳՕ ՍԻՄՈՆԵԱՆ

խառն երգչախումբը քակեց կծիկը դե – զարուեստական բաժինին, որ ճոխ էր եւ լաւ պատրաստուած :

Գաշտօնական խմբերգէն ետք, բեմ է – կաւ ընկերուհի Անահիտ Կարապետեան, Վիէնի Նոր Սերունդի անխոնջ եւ անձը– հատ առենապետուհին, որ արտասանեց եղերաթախտ Եղիչէ Զարենցի «Ես իմ ա – նոյշ Հայաստանին»՝ Ֆրանսերէն թարգ – մանութեամբ :

Լիոնի Նոր Սերունդէն՝ Ազնիւ, Կոլ – կասեան ճկուն պարով մը, ընկերակցու – թեամբ նուագի, դիւթեց ներկաները :

Քառեակ մը (օրիորդներ Ա· Կարա – պետեան, Թ· Մաջոյեան, Պ· Պ· Ա· Ռս– տիկեան եւ Կարօ Կարապետեան) երկու երգեր հրամցուց հասարակութեան :

Իսկ Տէրնի Նոր Սերունդի պարա – խումբը, երեք անգամ ներկայացաւ բեմին վրայ, իր զեղչկական սիրուն պարերով, ստեղծելով անսահման խանդավառութիւն եւ նոյնքան հիացում :

Նոր Սերունդի կեդրոնական վարչու – թեան ներկայացուիչը՝ ընկեր Արա Պի– ալէրեան (Փարիզէն) խօսեցաւ խանդավա– ռած մը՝ դնահատելով տարուած աչխա – տանքը :

Վիէնի Հ· Ց· Դ· Անի կոմիտէի կողմէ ընկեր Ս· Գալուստեան խանդավառ խօս– քեր ուղղեց մեր երիտասարդներուն :

Երոպական հեզիկ, եւ ախորժալուր վալս մը պարեցին վեց օրիորդներ, (Մա – ղաքեան, Քղէլեան, Տէր Յակոբեան, Սու– քիասեան, Մաջոյեան եւ Ադալըլըզեան)· Նուագեց Արման Իօքսիւզեան :

Հանդէսը լաւագոյն կերպով փակելու դիտումով, տղաքը ներկայացուցին «Հի– ւանդասեր», հեղինակութիւն՝ Նչ· Պէ – չիկթաչլեանի :

Այս խաղարկութիւնը կատարեալ անա– կնկալ մը եղաւ ներկաներուն՝ թէ՛ մե – ծին, թէ՛ փոքրին, չատ հաճելի եւ զը – ւարճալի :

Դերակատարները՝ Արման Իօքսիւզեան, Ա· Ռոստիկեան, Յարութիւն Ֆաքրիք – եան, Կ· Մաթոսեան, Վրէժ Գալուստեան, ինչպէս նաեւ օրիորդներ՝ Անահիտ Կա – րապետեան, Մարի Բարսեղեան եւ Մար – գրիտ Գալուստեան, իրենց լաւագոյն ճի– գերը թափելով յաջողեցան դոհ ձգել հա– սարակութիւնը :

Կ· Տ·

Պ. Նուպար Պալեան, Տէր եւ Տիկին Ռոժէ Պալեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Ռուբէն Աւետիսեան եւ զաւակները, Այրի Տիկին Ա. Դաստպեան (Պոլիս), Այրի Տիկին Կ. Աւետիսեան (Պոլիս), Տէր եւ Տիկին Մ. Աւետիսեան եւ զաւակները (Պոլիս), Տէր եւ Տիկին Ա. Աւետիսեան, Այրի Տիկին Վ. Սիսակեան եւ զաւակները (Մարսէյլ), Տիկին Մ. Պէկեան (Լիոն), Այրի Տիկին Ա. Սէմէրճեան, Այրի Տիկին Լ. Իւնէճեան, Տէր եւ Տիկին Բ. Գավէզեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Ն. Իւնէճեան եւ զաւակները, ինչպէս եւ Պալեան ու Պալապան ընտանիքները (Պոլիս) խոր ցաւով կը ծանուցանեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ, զարմիկին եւ ազգականին՝

ՏԻԿԻՆ ՆՈՒՊԱՐ ՊԱԼԵԱՆԻ

(Ծնեալ Նուարդ Աւետիսեան)

զոնդակէտ մահը, որ տեղի ունեցաւ Մարսիլիս հինդին :

Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը պիտի կատարուի 8 Մայիս, Ուրբաթ առաւօտ ժամը 8·45ին Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին, 15 Ռիւ Ժան Կուժօն :

Մարմինը պիտի փոխադրուի Լիոն, ամփոփուելու համար ընտանեկան դամբարանին մէջ:

ՑՈՒՇԱՏԾԱՐ

ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէի ներկայացուցչական ժողովը այս Շաբաթ, ժամը 21ին, Մշակոյթի Տան մեծ սրահին մէջ: Օրակարգ՝ չարունակութիւն նախորդ ժողովին : Կը հրաւիրուին մարմիններու եւ խումբերու ներկայացուցիչները :

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Ազբիւր Սերոբ եւ Մկրտիչ Եօթնեղբայրեան խումբի ընդհ. ժողովը այս Ուրբաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ: Ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է :

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. « Փոթորիկ » խումբի ժողովը այս Հինգշաբթի, ժամը 9ին, 17 Ռիւ Պլէօ :

ԿՐԸՆՈՊԼԸ.— Հ. Յ. Դ. « Եօթնեղբայրեան»ի ընդհ. ժողովը այս Շաբաթ, ժամը 21ին, զպրոցի սրահին մէջ: Կարեւոր օրակարգ: Անդամատեւորները միասին բերել :

ՍԻՆԹ ԼՈՒԻՆ.— Հ. Յ. Դ. «Անտօք» ենթակոմիտէն ստիպողաբար ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, այս Շաբաթ իրիկուն ժամը 9ին, մատրան սրահը :

ԼԻՈՆ.— Հ. Յ. Դ. «Վարանդեան» կոմիտէին ընդհ. անդամական ժողովը այս կիրակի կէսօրէ ետք ժամը ճիշդ երեքին, Ավընիւ տը Սաքս «Պարթապայի»ներքնասրահը (78 Ավընիւ տը Սաքս) Ռիւ Պօնէլի անկիւնը: Ներկայ կ'ըլլայ Կ. Կ.ի ներկայացուցիչը: Կարեւոր օրակարգ: Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Պ. Յակոբ Առաքելեան կը ծանուցանէ թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ մէջ իր կնոջ՝ ԹԱԹԻԱՆԱ ԱՌԱՔԵԼԵԱՆի յիսնամակին: (Մահուան վեցմսեակին առթիւ) :

Կը հրաւիրուին յիշատակը յարգողները :

×

Տէր եւ Տիկին Հանլեան Նուպար եւ զաւակները (Մարթիկ) կուգան ծանուցանել թէ յառաջիկայ երկուշաբթի 11 Մայիս, առաւօտեան ժամը տասնին Մարսիլիոյ Հայ Կաթ. եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պատարագ պիտի կատարուի իրենց աներհօր, հօր, եւ մեծ հօր

ԱԼԵՔՍԱՆ ԵԱՂՃԵԱՆի

մահուան քառասունքի առթիւ: Կը հրաւիրուին հանդուցեալին յիշատակը յարգողները :

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏՉ. ԵԿԵՂԵՑԻ

20, RUE JEMMAPES

Պաշտամունք այս կիրակի ժամը 10·45ին : Կը խօսի՝ վեր. Յ. Հելվաճեան :

Նիւթ.— «Ո՞վ է ճշմարիտ քրիստոնեան» :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ԱՊՐԻԼ 11–24Ի 44ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱՒԹԻԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԳԱՏՕՆ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կրընոպլի Հայ Ազգային Եկեղ. Մխիթեան եւ Մասնակցութեամբ զպրութիւն կազմակերպութեանց, Կիրակի, (10 Մայիս) կէսօրէ ետք ժամը երեքին Ռիւ ժէ Սէն Լուի սրահին մէջ :

×

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Այս կիրակի առաւօտեան ժամը 9·30ին, վարիէթէ սինեմային մէջ: Հովանաւորութեամբ Ազգային Առաջնորդարանի եւ հայ յարաւնուաճութեանց :

Մասնակցութեամբ՝ Մշակութային, Ե-րիտասարդաց հայրենակցական եւ քաղաքական կազմակերպութեանց :

Կը նախագահէ՝

Պ. Վ. ՍԱՀԱԹՃԵԱՆ

Կը խօսին՝

ԳԵՐՑԱՐԳԵԼԻ ՋՈՒՀԱՃԵԱՆ

եւ Պ. ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ

Ինչպէս նաեւ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի եւ Մշակութային Միութեան ներկայացուցիչները :

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ տեղւոյն Երիտ. Միութեան եւ Հովանաւորութեամբ Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցւոյ հոգաբարձութեան

Երեքշաբթի, 12 Մայիս 1959, ժամը 21ին Քաղաքապետարանի սրահը Սալ Վօլթէռ

Կը դասախօսէ ՓՐՈՖ. ՖՐԻՏՏԵՐԻՔ ՖԼՕՏՅԻ

Նիւթ՝ Հայ գրականութիւնը :

Մուտքը ազատ է :

ԽԵՅԱՆՕԹՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԻՍ

Ժանն Տէր Յակտուրեանի կողմէ :

(Մարսէյլ քաղաքի մեծ մրցանակ, Մարսէյլի առեւտրական սենեակին առաջին մրցանակ չնորհատրութիւններով) :

Մայիս 9էն 23 :


19 A, RUE VENTURE, MARSEILLE

Բացումը՝ Շաբաթ ժամը 18 – 21 :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցին վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Տ. Հայկազուն քհնյ. Բանտիկեան 1959 Փետրուար եօթէն ի վեր պաշտօնէ դադրած ըլլալով, իր յաջորդը նորընտիր հովիւ Տ. Խոսրով քհնյ. Աատուրեան մէն իրաւազուր է Մարսէյլի քաղաքամասի ծուխերուն կրօնական արարողութիւնները կատարելու : Կը խնդրուի ծուխերէն նը կատի ունենալ այս պարագան :

AU BEAU NOYER



Salles de séjour — Penderies - literie
Chambres - cosys — Cuisines laquées
Salons-tapisserie — Fauteuils-canapés-lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐԱՒ ՄԵԾ
ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԶՐԻ ՅԱՆԶՆԵԼԻ ՓՐԱՆՍԱՑԻ
ԱՄԷՆ ԿՈՂՄԸ
185, BD. J. JAURES
15, AV. A. MORIZET
Boulogne - Billancourt
Métro : MARCEL SEMBAT
Mol. 06-03 et 60-38

ԶՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
EXPERTISE GRATUITE
Ծախելու համար
ձեր փավիյօնը, վիլլան,
յարկաբաժինը կամ խանութը :
J. TORANIAN
18, AVENUE DE L'OPÉRA
OPE 73-21 OPE 19-45

''ՄԱՅԻՍ 28''Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միւնչեւ լոյս) : Վեցերորդ Թաղապետարանի սրահներուն մէջ, Փլաս Սէն Սիւլփիս :

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Յունիս 6ին, Շաբաթ իրիկուն, Գ. Թաղապետարանի սրահին մէջ :

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Յունիս 7ին :

ԿԸ ՓՆՏՌԻՒԻ

60 տարեկան կին մը, լաւ յանձնարարականով, առանձին կնոջ մը տան համար : Դիմել «Յառաջ»ին :

Comité du Prix Brémond

ԵՒ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼԲԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐ – ԿՈՒԹԵԱՆ

Դասախօսութիւնը՝

Երեքշաբթի Մայիս 12 ժամը 21ին : (252 Ֆոպուր Սէն Օնօրէ)

Կը դասախօսէ՝

MONSIEUR GRABAR

Membre de l'Institut

Professeur au Collège de France

«Հայկական միջնադարեան ճարտարապետութեան մի գլուխ-գործոցները » :

Ծախքերու մասնակցութիւն՝ 350 Ֆր. :

ՄԱՆՕԹ.— Կոմիտէն կը խնդրէ տեղեկացնել թէ տոմսերուն վրայ սխալմամբ տպուած է հայկական արուեստ (տիտղոսը ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ) :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՕՐ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Փարիզի Ահարոնեան խումբին

Շաբաթ, 16 Մայիս, ժամը 21էն միւնչեւ լոյս Սէրքլը Միլիթէռի շէեղ սրահներուն մէջ :

Խնամուած զեղարուեստական բաժին : Երգ, պար, արտասանութիւն, զուարճութիւն :

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

JACQUES MORINOTի ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲՈՎ

երգիչը՝ ԱԼՎԱՐԻԶ

Հ Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ՊԱՆԵԷՕ ՔԱՇԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Շաբաթ, 9 Մայիս ժամը 21էն միւնչեւ լոյս, 6րդ թաղամասի Քաղաքապետարանի սրահներուն մէջ :

Պանեէոյի պարախումբը : Ճոխ պիւֆէ :

ORCHESTRE RICOS CRÉOLE BAND

Մուտք 500 ֆրանք :

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ

Յունիս 10ին, Շաբաթ իրիկուն, Գ. Թաղապետարանի սրահին մէջ :

ԿԸ ՓՆՏՌԻՒԻ

60 տարեկան կին մը, լաւ յանձնարարականով, առանձին կնոջ մը տան համար : Դիմել «Յառաջ»ին :

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕՐԸ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ

ՍՈՐՊՈՆԻ ՄԵԾ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

47, Rue des Ecoles, métro : St.-Michel et Odéon

Այս կիրակի, ժամը 14·30ին

Բարձր հովանաւորութեամբ

Ս. ԵՊ. ՄԱՆՈՒԿԵԱՆի

(Հայրապետական պատուիրակ Եւրոպայի Թեմի)

եւ Ֆրանսական կարմիր Խաչի

կը նախագահէ.—

PROF. CAMILLE LIAN

Commandeur de la Légion d'Honneur
Membre de l'Académie de Médecine
Professeur à la Faculté de Médecine

Կը մասնակցին.— Օր. Ալիս Պօյաճեան եւ Պ. Պերճ Պէրպէրեան (հայկական պար), (դաշնակի ընկերակցութեամբ Տիկին Անժէլ Թագուրեանի)

Տիկին Ս. Սաաքեան — Լը Րուա եւ Պ. Լը Րուա (երգ), Տիկին Հ. Խտրչեան Շասաներ (արտասանութիւն) :

MLLE GISÈLE DE MONCEAU (թաւ ջութակ)
MLLE MARIELLE NORDMANN (տաւիղ)

Օր. Յասմիկ Մարուքեան (երգ), Պ. Արտաշէս Գմբէթեան (արտասանութիւն), Պ. Նուրհան Մարգարեան (արտասանութիւն), Պ. Արթօ Պէճօ (դաշնակ), Պ. Մկրտիչ Պօղոսեան (երգ), Պ. Ս. Նահապետեան (արմոնիքայի երիտասարդ վիրթիւօզը) : ՆԱՅԻՐԻ ԵՐԳԱՀԱՆՈՒՄԸ ղեկավարութեամբ Գէորգ Եաճպէկեանի :

տոմսերու գինն է 150, 200, 300 եւ 500 ֆրանք :

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՄԻՇՏ ԱՌՈՂՋ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՌԵՑԷՔ
BOSPHORE Ի
ՀԷԼՎԱՆ ԵՒ ԹԱՀԻՆԸ
ՀՐՈՒՇԱԿԸ, որ կը պատրաստուի շուշմայով (սուսամ) եւ շաբարով, առաջնակարգ սնունդ մըն է, կազդուրիչ՝ շնորհիւ շուշմայիին, որ Արեւելքի մէջ ծանօթ է նաեւ հինէն ի վեր, իր հրաշալի բուժական յատկութիւններով, իր երիտասարդացնող տարրերով,
Արեւելեան ժողովուրդներուն երկարակեցութիւնը արդիւնք է Հէլվայի եւ թահինի գործածութեան :
Այսօր Արեւմուտքի մէջ եւս բժշկական հեղինակութիւններ կը հաստատեն առաջնակարգ այս սննդանիւթին արժէքը :
Sté BOSPHORE (ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՏԱԴՐԻՉԸ)
2, Rue Louis Astoin - Marseille

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար· 4000 ֆր·վեց·2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր·

ԿԻՐԱԿԻ
10
ՄԱՅԻՍ
DIMANCHE
10 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8389 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4290

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

Ո՞ՒՐ ՄՆԱՑ "ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ"

Տասնեւչորս տարի առաջ, 1945 Մայիս 8ին դաշնակից պետութիւնները ծունկի կը բերէին Գերմանիան, որ չարաչար պարտուած՝ Ռէյնի մէջ «առանց պայմանի անձնատուութիւն» կը ստորագրէր, ապաւինելով յաղթականներու խղճմտանքին :

Երկրորդ աշխարհամարտն ալ, ինչպէս առաջինը, Գերմանացիներուն գործն էր :

1914ին Վիլհելմ Բ. կայսրը՝ կոթնած Փրուսիոյ ռազմապաշտ զինուորականներ – ուն վրայ, արեան մէջ խեղդած էր ամբողջ Եւրոպան, պատերազմի արհաւիրքները փոխադրելով մինչեւ արեւելք :

Իր զինակից Թուրքիան ռազմաճակատներու վրայ կրած պարտութեանց վրէժը լուծել փորձած էր՝ բնաջնջելով անզէն ու անպաշտպան մարդիկ, անմեղ կիներ ու երախաներ, ամբողջ ժողովուրդ մը, ո – րուն կեանքը, ինչքն ու պատիւը ապահովելու եւ երաշխաւորելու պարտական – նութիւնն ունէր :

Առաջինէն քառորդ դար վերջ կը պայթէր երկրորդ ահաւոր փոթորիկը, իբրեւ փոխ – վրէժ 1918ի պարտութեան : Զին – ուորապաշտ Գերմանիան այս անգամ զարճած էր ցեղապաշտ եւ կը ձգտէր իր միահեծան տիրապետութեան ենթարկել աշխարհը, «կենսական տարածութեան » պատրուակին տակ :

1914 – 18 պատերազմը տեղի ունեցած էր Գերմանիոյ սահմաններէն դուրս : Ֆրանսա, Պելժիա, Սերպիա եւ Ռուսիա կրած էին զլխաւոր հարուածները :

Երկրորդ աշխարհամարտը իր վերջին տարիներուն աւերակի վերածեց Գերմա – նիոյ հարիւրաւոր չէն ու բարգաւաճ քաղաքներն ու աւանները :

Դաշնակիցները արեւմուտքէն ու արեւելքէն աջքանի մէջ առնելով յոխորտ նացիական բանակները՝ մահացու հարուածը տուած էին անոնց :

Մեծ եղաւ իրենց յաղթանակը : Զարգացար Գերմանիան :

Սակայն չկրցան վերահաստատել խաղաղութիւնը Եւրոպայի մէջ եւ հաշտութիւն կնքել պարտեալ Գերմանիոյ հետ :

Ու 1945ի Զինադադարէն մինչեւ այսօր տակաւին օրակարգի հրատապ հարցն է Գերմանիոյ ճակատագիրը :

Այս երկուշաբթիներէն մէկ ժողով պիտի դումարեն յաղթական չորս դաշնակիցներու արտաքին նախարարները՝ այդ եւ յարակից կարեւոր խնդիրները քննելու համար :

Գերմանիան անվնաս դարձնելու մտահոգութիւնը ճախորդ կարգադրութեանց մղած էր դաշնակիցները :

Սթալին ճարպիկ խաղերով յաջողած էր խաբել Ռուզվէլթն ու Ջըրչիլը՝ առիւծի բաժինն ստանալու համար յաղթանակէն :

1944 – 45ի սխալ հաշիւներուն պատիժն է, որ կը կրեն այսօր դաշնակիցները :

Խորհրդային Միութիւնը՝ դրժելով իր հանդիսաւոր խոստումները՝ ոչ միայն չէ պարպած գերմանական զրաւումէն «ազատագրած» երկիրները, – հետեւելով արեւմտեան դաշնակիցներու օրինակին — այլ օրէ օր ասպիճան մը աւելի ծանրացուցած է իր թաթը Լեհաստանի, Պալթեան երկիրներու, Ռումանիոյ, Պուլկարիոյ, Չեխոսլովաքիոյ եւ արեւելեան Գերմանիոյ վրայ :

Ժընեւի խորհրդաժողովի սեղանին վրայ դրուած հարցը անունով միայն «զերմանական » է : Իրականին մէջ Խորհրդային Միութեան ներկայ եւ ապագայ քաղաքականութիւնն է, որ պիտի քննուի :

Աշխարհ կը խաղայի այն առեն մի – այն, երբ բռնադրեալ երկիրներն ու կեղեքեալ ժողովուրդները կը վերագտնեն իրենց ազատութիւնը :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԵՒ ՏԸ ԿՈԼԻ ՁԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ՆԱՒԱՏԱՀԸ ՓԱՐԻԶ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ

Հանրապետութեան Նախագահին ճամբորդութիւնը մեծ խանդավառութիւն ըստեղծեց Պերլի ընկալման մէջ :

Ճամբորդութեան առաջին հանգրուանն էր Պուրժ, արքայական Ֆրանսայի նախկին մայրաքաղաքը : Պուրժ – Շաթորու ճամբուն վրայ Նախագահ Տը Կոլ իր ճառերուն մէջ մասնաւորապէս ծանրացաւ Ալժերիոյ հարցին շուրջ : Պուրժի մէջ յայտարարեց այս մասին :— Օրը մօտեցած է՝ երբ Ալժերիա պիտի խաղաղի :

Զօրավարը հնչեցուց թէ թուական կամ այլ խոստում չի տար, բայց հարցը լաւ ուսումնասիրած ըլլալով՝ կը վստահեցնէ Պուրժի բնակիչները որ այդ խնդիրը պիտի լուծուի չուտով : «Ալժերիոյ մեծ հարցը պիտի լուծուի, բայց՝ ո՛չ պատերազմով եւ ոչ ալ բառերով : Հարցը պիտի լուծուի՝ այդ շրջանը նոր Ալժերիոյ մը վերածելու համար թափուած ճիգերուն չնորհիւ » :

Շաթորուի մէջ խօսեցաւ երկրագործներու դժուարութիւններուն մասին. «Ես գիտեմ թէ ինչ կ'ուզեն երկրագործները : Նոր բան պիտի չսորվեցնէք ինծի » :

Կարեւոր օր մըն էր Նախագահին Օր – լէան այցելութիւնը, ուր ժան մ'Արքի եւ պինաղադարի տարեդարձները միաժամանակ տօնուեցան :

Շաթորուէն ուրբաթ առաւօտ ճամբայ ելլելով, կարճ մը փոքր շրջաններու մէջ կանգ առնելէ ետք ժամը 9·30ին հասաւ Օրլէան :

Նախագահական չքախումբը խանդավառ ցոյցերով ղիմաւորուեցաւ բազմութեան կողմէ :

Օրլէանի մայր տաճարին մէջ պատարագին ներկայ ըլլալէ ետք՝ զօրավարը խօսակցութիւններ ունեցաւ քաղաքապետին հետ՝ ուսումնասիրելով շրջանին կարիքները : « Ձեր մտահոգութիւնները պիտեմ, — բսաւ Նախագահը ,— ինչպէս Ֆրանսայի բազմաթիւ շրջանները, դուք ալ մտահոգուած էք ջուրի հարցով : Ջուր կ'ուզէք· քովս կ'արձանագրեմ ձեր պահանջը » :

Այնուհետեւ, Հանրապետութեան Նախագահը դնաց մայր տաճարին առջեւ, ուր տեղի պիտի ունենար ժան մ'Արքի 530րդ տարեդարձը : Մեծ թիւով Օրլէանցիներ հաւաքուած էին այնտեղ : Ամէն կողմէ կը լսուէին «Կեցցէ՛ Տը Կոլ » բացագանչութիւնները :

Զինադադարի եւ ժան մ'Արքի զոյգ տարեդարձներուն առթիւ հանդիսութեան ներկայ եղան եւ խօսք առին բազմաթիւ օտար զիւանագէտներ եւ զինուորական – ներ, ինչպէս՝ Անգլիոյ, Քանատայի եւ Իտալիոյ դեսպանները, Արեւմտ. Գերմանիոյ ներկայացուցիչը, Օրլէանի ամերիկեան զինուորական խարիսխի հրամանատարը եւն. :

Նախագահը մօտ ժամ մը հետեւեցաւ հանդիսաւոր տողանցքին : Շնորհաւորեց « Ժան մ'Արք»ը, որ այս տարի 19 տարեկան ուսանողուհի մըն էր, հագած՝ աւանդական զրահը եւ նստած ձիու վրայ :

Իրիկուան ղէմ տեղի ունեցաւ զինուրական կարեւոր տողանգք մը եւ այս ձեւով փակուեցան օրուան զոյգ հանդիսութիւնները :

Զօր· Տը Կոլ կարեւոր ճառ մը խօսեցաւ նոյն իրիկուընը, ԱռեւտուրիՀան մէջ, մասնաւորապէս ծանրանալով Ֆրանսայի արժանիքներուն եւ ապագային վրայ , « Հետզհետէ Ֆրանսա կը դառնայ դարուս երկիրը, յաղողութիւններու երկիրը : Ա-

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ
ԿՈՂՔ ԿՈՂՔԻ

★

Վարչապետ Տըպրէի եւ արտաքին նախարար՝ Քոլ Տը Միւրվիլի ճամբորդութիւնը ղէպի Պոն, անգամ մը եւս ցոյց տուաւ թէ որքան երկու երկիրները կ'ուզեն ամրապնդել իրենց բարեկամական յարաբերութիւնները :

Տըպրէ, Փարիզ վերադարձին, յայտարարեց :— « Պերլինի եւ Գերմանիոյ հարցով ազատ աշխարհի կազմակերպութիւնն է որ խնդրոյ առարկայ է : Ի վերջոյ ա – րեւմտեան Եւրոպան չի կրնար կազմակերպուիլ եթէ Փարիզ եւ Պոն չհամաձայնին » :

Պոնի մէջ ալ, Ֆրանսայի վարչապետը յայտարարած էր, ճաշի մը ընթացքին, թէ Ֆրանսայի պարտականութիւնն է՝ ըլլալ Գերմանիոյ կողքին : Նոյն ճաշին , Ադընաուըր կը չեշտէր .— «Եթէ Ֆրանսա տակար ըլլայ կամ եթէ Ֆրանք-եւրը – ման յարաբերութիւնները ըլլան այնպէս ինչպէս էին ժամանակին, երկու ժողովուրդներուն ապագան եւ ազատութիւնը մեծապէս վտանգուած կ'ըլլան » :

Ժընեւի ժողովին նախօրեակին, ծանօթ է որ Գերմանիոյ վարիչները չատ մտահոգ են : Վստահութիւն չունին իրենց դաշնակիցներու տեսակէտին մասին, եւ Ֆրանսայի վարիչներուն հետ տեղի ունեցած խօսակցութիւնները կը ձգտին զըլխաւորաբար ամրապնդել Եւրոպայի եր – կու մեծ պետութեանց յարաբերութիւն – ները :

Տեսակցութեանց վաղորդայնին, Պոնի կարեւոր օրաթերթը՝ կենեռալ Անցայկըր կը գրէր .— «Ադընաուըրի համար, միակ վստահելի դաշնակիցը՝ Տը Կոլն է : » Ադրաբեւ արեւմտեան Գերմանիոյ վարչապետին համար՝ Ֆրանսան կապուած է Գերմանիոյ ոչ մէկայն համակրանքով այլ նաեւ՝ ճակատագրով :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԱԲ ՄԻԱՑԵԱԼ. Հանրապետութեան արտաքին նախարարը՝ Ֆաւզի Ժընեւ դացած է ուր պիտի տեսնուի ՄԱԿի ընդհանուր քարտուղարին հետ : Կը կարծուի որ Ֆաւզի Ժընեւ պիտի մնայ արտաքին նախարարներու ժողովին առեն որպէսզի , ի հարկին, իր մասնակցութիւնը բերէ երբ ժողովը զրաղի Միջին – Արեւելքի հար – ցերով :

ՄԻԱՑԵԱԼ. Նահանգներու արտաքին նախարարը՝ Հերթըը ճաշնաւփիւս ճառի մը ընթացքին յայտարարեց թէ Ամերի – կան յառաջդիմութիւն մը կը փնտռէ , նոյնիսկ պզտիկ, դէպի արդար խաղաղութիւն մը : Այդ նպատակին կը ծառայէ , ըսաւ Հերթըը, Ժընեւի ժողովը, բայց նոյն ժամանակ կ'ուզենք ըսել Խ. Միութեան թէ , անհրաժեշտ ուժը եւ վճռականութիւնը ունինք պահպանելու համար ազատ աշխարհի ներկայ կացութիւնը : Հերթըը ըսաւ նաեւ որ , այս առթիւ ,կ'ուզեն աւելի մօտէն ծանօթանալ խորհրդային նպատակներուն եւ ճշդրիտ գաղափար մը ունենալ անոնց յետին մտքերուն մասին :

ԼՈՆՏՈՆԻ մէջ, անգլիական մամուլին տուած ճաշին առթիւ, Պարսկաստանի Շահը կարդ մը յայտարարութիւններ ը – րաւ : Շեշտեց թէ իր կառավարութիւնը վճռած է զինուրական ոչ մէկ կայան տրամադրել օտար որեւէ պետութեան : Շահը աւելցուց թէ ներքին գեանի վրայ, Պարսկաստան կ'ուզէ արդիականացնել իր տնտեսութիւնը :

ԻՐԱՔԻ կացութիւնը մինչ անստոյգ է : Պաղտատի օդակայանը փակ է ժամը 19էն առաւօտեան հինգ, համաձայն զինուրական կառավարիչին որոշումին : Կը կարծուի թէ նոր դէպքեր կը պատրաստուին, որոնց բնոյթը սակայն անորոշ է :

ՈՒՄՊԼիի (Անգլիա) մարզադաշտին վրայ տարօրինակ միջադէպ մը պատահեցաւ առջի օր երբ Ֆութպոլի անգլիական եւ իտալական խումբերը իրենց մրցումը պիտի սկսէին : Նուագախումբը իտալական իրերեւ ազգային քայլերգ նուագեց ... Մառչիա Ռէալէն որ թագաւորական քայլերգն է : Հակառակ տրուած բացատրութիւններուն, Իտալիոյ մէջ չատ դէչ ընդունելութիւն գտած է այս կաֆը եւ երկու երեսփոխաններ կը պահանջեն որ պաշտօնական բողոք ներկայացուի Անգլիոյ կառավարութեան :

ԱՆՐԻ ԹՐՈՒԱՅԱ պաշտօնապէս դրաւ իր թեկնածութիւնը Քլոտ Ֆաւերի աթոռին համար, Ֆրանսական ակադեմիայի չտաւջիկայ ընտրութեանց առթիւ, Մայիս 21ին : Հայտզրի զրազէտը միակ թեկնածուն ըլլալով այդ աթոռին, իր ընտրութիւնը ապահով կը թուի :

ԱՆԳԼԻՈՑ մէջ տեղի ունեցան թագաւորական ընտրութիւններ, որոնք վերջացան Աշխատաւորականներու պարտութեամբ եւ Պահպանողականներու յաղթանակով : Լոնտոնեան շրջանին մէջ Աշխատաւորականները կորսնցուցին 33 աթոռ (ներկայիս ունին՝ 803), իսկ Պահպանողականները չահեցան 33 աթոռ, իրենց թիւը բարձրացնելով 415ի : Գաւառներու մէջ Աշխատաւորականները կորսնցուցին 250 աթոռ, Պահպանողականները չահեցան՝ 199 : Երկու Անկախներ եւ երկու համայնավարներ վերընտրուեցան Լոնտոնի մէջ, իսկ գաւառներու մէջ՝ 71 Անկախներ :

(Լուրերու շար·ը կարդալ Դ· էջ)

Հայրենի Ծուռգներ

★

Ես գնում եմ այս ճամբով ,
Ճամբին իմ բախտն է շողում ,
Թեւիկների նուրբ ծափով
Թռչուններն են ճոռոդում :
— Ո՞ւր ես գնում, կարծես թէ
Ասում են ինձ վշտաբեկ ·
Դու չես լսի ոչ մի տեղ
Մեր երգի պէս անուշ երգ :

Շարունակում եմ գնալ ,
Սրտիս մէջ երգը նրանց ,
Եւ աղբիւրները զուլալ
Ասում են ինձ սրտաբաց·
— Ո՞ւր ես գնում դու ներհուն ,
Կուացիր մեր պաղ ջրին,
Դու ոչ մի տեղ աշխարհում
Քո ծարաւը չես կոտրի :

Ու գնում եմ ես արբած ,
Սիրտս նրանց զով կանչին,
Իմ դէմ ելնում է յանկարծ
Մի սեւահեր թուխ աղջիկ :
— Ո՞ւր ես գնում դու անհոգ ,
Ո՞ւմ ես այդպէս երազում ,
Ինձնից բացի եւ ոչ ոք
Չի հասկանայ քո լեզուն :

Ես գնում եմ մայթերով ,
Ակացիաներն են շրշում
Հովի բնուշ համբոյրով
Հազար յուշեր ինձ յուշում ·
Ճամբան ճգւում է թեթեւ ,
Իրիկունն է բաղցրանում ·
— Ես չեմ գնում ոչ մի տեղ ,
Ես դէպի տուն եմ գնում :

Վ. ԿԱՐԵՆՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՖՈՆ ՀՈՒՄՊՈԼՏ

(ԾՆԱՆ 1769ԻՆ, ՄԵՌԱՆ 1859ԻՆ)

Այս տարի Մայիս վեցին Գերմանիոյ մէջ կը յիշատակուի Ալ. Ֆոն Հումպոլտի մահուան հարիւրամեակը: Մեծ բնախոյզը եւ իր ժամանակին ամբողջ Եւրոպայի մէջ շատ յարգուած այս գիտնականը առհվիրաններէն մէկն էր գերման հին սերունդին: Եղբայրը՝ Վիլհելմ Ֆոն Հումպոլտ 1808ին հիմնած է Պերլինի համալսարանը իբր մշակութային գործերու նախարար եւ հիմա, 1884էն ի վեր, երկու եղբայրներու արձանները, զարդ եւ խորհրդանշան են համալսարանի մուտքին երկու կողմին: Ալեքսանդր Ֆոն Հումպոլտ առաջին արդիական ճանապարհորդն է որ ուսումնասիրած է Հարաւ. Ամերիկայի երկիրները բուսաբանական, տեղագրական եւ կլիմայական տեսակէտներով:

1799 – 1804, տեւող այս ճանապարհորդութիւնը էմէ Պոնփլանի հետ, տարած է գինքը Վենեցուէլա, Քոլոմպիա, Էկուատոր եւ Մեքսիքա, բարձրացած է առաջին անգամ Չիմբորացօ լեռնագագաթը մինչեւ 5800 մեթր: Գրեթէ քանի տարի փոքր ընդհատումներով միայն Ալեքսանդր Ֆոն Հումպոլտ ապրած է Փարիզի մէջ, ուր եւ շարք մը գիտնականներու հետ գրած է դարաշրջան կազմող ճանապարհորդական գործ մը, զանազան բաժանումներով եւ պատկերազարդ հատորնե – րով:

Ամերիկայէն իր վերադարձը եղած է Հավանայի եւ Ֆիլատէլֆիայի վրայով դէպի Պոստօն, 1804ին, բայց քաղաքական պաշտօններ գերման թագաւորական ընտանիքին կողմէ իրեն տրուած ըլլալով 1805ին Պերլին հասնելէ եւք, 1808ին դէպ ի Փարիզ ընկերացած է Վիլհելմ իշխանին եւ անոր հրամանով Ֆրանսա մնացած է մինչեւ 1827 իր գործին աշխատասիրութեան համար:

Իննսուն տարիներու երկար եւ բեղնաւոր կեանքին ընթացքին Ա. Ֆոն Հումպոլտ կատարած է չարք մը հիմնարկութիւններու կազմակերպութիւնը՝ մշակութային դաստիարակչական եւ գիտական զարգացման եւ ժողովրդականացման համար, այլեւ իր «Քոսմոս» անուն մեծ աշխատութիւնը այսօր ալ հիմնական դիտելիքներու չտեմարան մը կը ներկայացընէ: Անչուշտ գիտութիւնը 150 տարիներու հետազոտութեամբ այսօր շատ մը նոր եւ հինին հակոտնեայ բացատրութիւններ գտած է, բայց Հումպոլտի գործերը իրենց արժէքը կը պահեն:

×

Ալեքսանդր Ֆոն Հումպոլտ, 130 տարի առաջ, Հայոց մէջ.—

Անցեալ Գարնան Թիւպինկընի գրադարանին մէջ գտայ ձեռագիր մը, որ գրուած էր 25 Հոկտեմբեր 1829ին Մոսկուայի մէջ եւ հիմա առիթը եկաւ հրատարակելու զայն, որովհետեւ ուղերձ մըն էր Ալ. Ֆոն Հումպոլտի նուիրուած, երբ ան 1829ին կ'այցելէր Մոսկուայի Հայոց Եղիազարեանց ճեմարանը: Ցար Նիկողայոսի առաջարկով Ա. Ֆոն Հումպոլտ Ուրալի եւ Ալթայի շրջանը, հինական ճոնդարիա եւ Կասպից ծովը հետախուզելու կ'երթար եւ այս առթիւ հանդէս մը տրուեր էին իրեն ի պատիւ՝ Մոսկուայի Հայոց այդ դպրոցին մէջ, որ 1815ին հիմնուած եւ մօտ երեք հարիւր աշակերտ ունեցած էր: Ահա այդ դրուագիւնը.—

Բան շնորհաւորական

Ասացեալ ի դիմաց աշակերտաց ճեմարանին Տեառց Եղիազարեանց ի վերայ դալստեան նորին բարձու գերապանցու – թեան գերաշնորհ Հումպոլտի մեծահռչակ բնաբանագէտի.

Գերաստիճանեալ Տէր,

Ոչինչ այնպէս ուրախ առնէ զմանկունս դայտոսիկ, որպէս վսեմափառ տեսիլ մեծամեծ անձանց,

Երջանկացեալ բարեչնորհ այցելու – թեամբ ձերդ բարձու գերապանցութեան այս դպրոց արեւելեան, ոչ չարէ դառնել ղչափ ուրախութեան իւրոց: Քանզի արժանի եղեւ այսօր տեսանել ի պատուա – կան անձին Ձեր զայն գերապանծ բնա – ղնին, որոց յանկալի անունն հռչակեալ քարոզի ի բոլոր Եւրոպիայ ոչ ընդ անմահ յօրինուածոցն նոյնպէս եւ ընդ անսահ – ման դիւտութեան:

Հայեցեալ ի քաղցր ծիծաղ դիմաց ձե – րոց, ոչինչ երկբայիմք թէ արժանի հա – մարեսջիք ձերումդ ակնարկութեամբ այս ուսումնական չինուած, որ է պատուղ ճըշ – մարիտ ազգասիրութեան եւ բարեզոր – ծութեան կառուցեալ յերկուց եղբարց հարազատից ի Յովհաննիսէ ներդործա – կան ներքին խորհրդականէ եւ յԱղայ Ցո – վակիմայ Տէարց Եղիազարեանց յատակ – պէս ի պէտս կրթութեան Արամեան մանկանց, յորում ի միջոցս չորեքտասան ա – մաց յօրէ կառուցմանէ անտի վարժեալ են մանկունք թուով իբր երեք հարիւր, յո – րոց ոմանք չարունակեալ են եւ չարունա – կեն ընդ ցայս ուսման իւրեանց ի կայսերական համալսարանի, եւ այլ բազումք նուիրեալ են զանձինս յայլեւայլ արքա – յական պաշտօնս Տէրութեան Ռուսաց:

Արդ, ո՛վ գերաստիճանեալ Այր, մո՛ւտ արա բարեյաջողութեամբ ի չուիդ նորա – նոր սխրագործութեանց, չարունակեցէք զօգտաբեր պտուղս աշխատանաց ձերոց, զորս լուսաւորեալն Եւրոպայ հանապազ ունի ընդունել բազում բերկրութեամբ:

Իսկ մեք զայս արժանայիշատակ վասն մեր օր տօնեսցուք ի խոր սրտից մերոց յայսմ ամի ի յիշատակ ձերումդ արժա – նալայել գալստեան, եւ զցանկալի անուն ձեր ոսկեգիծ տառիւք անջինջ գրեսցուք ի խորս սրտից մերոց, խնդրելով միան – գամայն յԱստուծոյ, զի պահպանեսցէ զանդին կեանս ձեր ընդ երկայն աւուրս ի խաղաղութեան:

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՊԱԼՔԵԱՆ ԵՐԵՔ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ցաջորդական երեք յօդուածներու մէջ պիտի ներկայացնենք, հաղելով երեւանի « Սովետական Գրականութիւն » ամսագրերէն (1959 Փետրուար) Պալթեան երեք երկիրներու ժամանակակից գրականութիւնը: Այդ տեղեկութիւնները հաղուած են Հայաստանեան գրական այն պատուիրակութեան կողմէ, որ անցեալները Ստ. Կուրտիկեանի առաջնորդութեամբ այցելած էր Պալթեան աշխարհը: Պատուիրակութեան անդամները տեսակցութիւններ ունեցան յիշեալ երկիրներու Գրողներու Միութեանց վարչութեան հարտուղարներուն հետ եւ զրոյցի ձեւին տակ գրի առած են իրենց հաղորդուած տեղեկութիւնները:

« Սով. Գրականութեան » նոյն թիւին մէջ Ստ. Կուրտիկեան հրատարակած է նաեւ ճամբորդական իր տպաւորութիւնները, որոնց Եստոնիոյ վերաբերեալ մասը մասնաւորաբար կը հետաքրքրէ մեզ՝ Հայերս: Ճամբորդական տպաւորութիւններուն այդ մասին պիտի անդրադառնանք Եստոնիոյ գրականութեան նուիրուած մեր յօդուածին առընթեր:

Խորհրդահայ բազմաթիւ բանաստեղծներ ամսաթերթին միեւնոյն թիւին մէջ թարգմանած են նմոյշներ Պալթեան երեք երկիրներու ժամանակակից լաւագոյն բանաստեղծութիւններէն: Մեր ընթերցողներուն պիտի ներկայացնենք ամէն մէկ երկրէ մէկ կտոր:

ԼԱՏՎԻԱԿԱՆ (*) ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

12րդ դարու վերջերը Գերման Խաչակիրները կը խուժէին Պալթեան ծովափնեայ երկիրներէն ներս: Այս եւ յաջորդական այլ արշաւանքները երկար ժամանակ արգելք հանդիսացան լատվիական մշակոյթին ու գրականութեան զարգացման: Այդ պատճառով ալ, լատվիական դիրն ու գրականութիւնը համեմատաբար շատ աւելի ուշ սկսած են ծաղկիլ: Բայց ժողովրդական անդիր բանահիւսութիւնը, դեղեցիկ եւ ինքնատիպ դայլաները շատ աւելի հին են, քան սերունդէ սերունդ անցնդուելով հասած են մինչեւ մեր օրերը: Ժողովրդական այդ ստեղծագործութիւնները մեծ մասամբ կ'երգուէն չինականները աշխատանքը, ազատագրական պայքարը, կը ծաղրէն երկրին օտար տէրերը:

1689ին լոյս կը տեսնէ Մ. Գիրքը լատվիերէն լեզուով առաջին անգամ: Իսկ 18րդ դարուն կ'երեւին լատվիական աչքառնիկ գրականութեան առաջին փորձերը, կատարուած՝ Գերմանացիներու կողմէ:

Միայն 19րդ դարուն է, որ հանդէս կուգան լատվիացի գրողները եւ կը զարգացնեն ազգային գրականութիւնը, որուն զարգացման մէջ մեծ դեր ունի լատվիացի մեծագոյն բանաստեղծը՝ Եան Բայնիս (1865 – 1929), որ կ'երգէր հայրենիքի եւ մարդու վիշտը: Բայնիսի բանաստեղծութիւններու ժողովածուին՝ «կապոյտ երեկոյի հեռաւոր արձագանգները» հատորին մասին, լատվիացի ուրիշ ականաւոր գրող մը, Անդրէյ Ուպիտ կը գրէր.— « Այս հատորը կը պատկանի այնպիսի գեղարուեստական երկերու թիւին, որոնք գարաշրջանին մշակոյթին ու հասարակական ուղղութիւնները, տիրող դասակարգին իդէալներն ու առանձին անհատներու հոգեբանութիւնը հասկնալու համար շատ աւելին կուտան, քան անտեսագէտներու, վիճակագիրներու եւ պատմաբաններու աշխատութիւնները »: (ՀՄԲ.— Վերջերս Ցառաջ հրատարակեց երկար յօդուածք մը Բայնիսի գործերէն, նուիրուած Հայոց պատմութեան եւ մշակոյթին, « աշխարհիս ամենագիժբախտ երկիրը եւ ամենագիժբախտ ժողովուրդը»: Լատվերէն թարգմանուած ունինք նաեւ ուրիշ գործեր):

Անդրէյ Ուպիտ, որ այժմ 82 տարեկան է, իրաւամբ կը նկատուի լատվիական գրականութեան կաղնին: Իբրեւ արձակագիր, թատերգակ, գրականագէտ եւ դասական երկերու թարգմանիչ, ան իր կեանքին աւելի քան վաթսուն տարին նուիրած է իր երկրին գրականութեան եւ մշակոյթին զարգացման: Ուպիտի ստեղծագործութիւնը ամփոփուած է 25 հատորնոց ժողովածուի մը մէջ: Ցիշենք այստեղ միայն «Նոր Աղբիւրներ», «Մեծ տագնապի մէջ», «Ոսկի» վէպերը, « Հերոսի վերադարձը », «Ռոլանտի ժառանգը», «Կլավս Բրունս»ը բազմաթիւ այլ պատմուածքներու եւ վէպերու չարքին: Իր ծննդեան 75րդ տարին Ուպիտ կը հրատարակէր «Լոյսը՝ ամպերու մէջէն» գիրքը, որ լատվիական ժամանակակից գրականութեան ամէնէն կարեւոր եւ ամէնէն հետաքրքրական վէպն է: Այժմ կ'աշխատի «Վէպի պատմութիւնը» խորագրով գործի մը վրայ, որ համաշխարհային վիպագրութեան խոր ուսումնասիրութեան հիման վրայ գիտական լուրջ աշխատութիւն մըն է:

Լատվիացի ուրիշ յայտնի արձակագիրներ են Վէլիս, Լացիսը («Փոթորիկ», Արտասանեաց որդեկիր Սահակ Մարուխեանց ի 1829 Հոկտ. 25, ի Մոսկով:

Բայ ի այն յիշատակելի հանդամանքէն, որ այս նամակը կը ներկայացնէ Ալեքսանդր Ֆոն Հումպոլտի վերաբերմամբ, կը պարզուի մեր աչքին նաեւ այն երախտիքը, որ այդ թուականներուն հոծ դաղութ մը ունեցած են Հայերը Մոսկուայի մէջ՝ նախքան Կովկասի եւ Երեւանեան Նահանգի գրաւումը Ռուսերու կողմէ, եւ դպրոցական լեզուն ջինջ եւ յատակ գրաբար մըն էր՝ նախքան Դորպատեան ուսանողութեան Կովկաս վերադարձը:

Պ. ՓՐՈՒՆՁԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՑՈՒՇԱՏԵՏՐԸ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ

«ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ԻՐԱՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ – ԹԻՒՆԸ».— «ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԸ».— «ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» Ա. Բ. ԵՒ Ե. ՀԱՏՈՐՆԵՐԸ:

●

Այդ պայծառ դէմքը իր մէջը կը խտացընէ ամբողջ ծրագիրը մը, որ իր սկիզբը կ'առնէ վերանորոգչական աշխատանքներէն, 1880ական թուականներուն եւ քիչ մըն ալ աւելի առաջ, երբ հայկական հարցին ձախողանքներէն ետք, հայ մարդուն ուշադրութեան եւ գործունէութեան առարկան կը դառնար մեր հեռաւոր հայրենիքին անտեսուած ու լքուած վիճակը եւ երբ դաւառներուն մէջ կրթական վառարաններ բանալու եւ զանոնք «Քէկուզ ճղակտոր» ուսուցիչներով օժտելու մտահոգութիւնը հրամայական պահանջ մըն էր:

Եւ յետոյ, ինչո՞ւ համար ամէն կրթական հաստատութիւնէ դրականութեան առաքելներ սպասել: Հանրային կեանքին համար մի՞թէ նուազ կարեւոր են ուրիշ ասպարէզներ ալ, որոնց սպասաւորները հասցուցած են մեր մէջ երկրորդական վարժարանները եւ որոնց կատարած դերն ալ այնքան թեթեւ սրտով կը ստորագնահատէ ուսուցիչ եւ դաստիարակ Ց. Օշականն:

×

« Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան» ինչինչ հակասութիւններն ու թիւրիմացութիւնները մատնանշելու մեր աշխատանքին վերջակէտը դնելէ առաջ, տեսնենք թէ երկու առիթներու մէջ ինչպէս արտայայտուած է Գրիգոր Զօհրապի մասին: Մեր կողմէ առանց որեւէ մեկնութեան եւ հերքումի փորձի, ահաւասիկ երկու Օշականներուն դատումները քով քովի, ընթերցողներուն ձգելով ամէն խորհրդածութիւն:

« Համապատկեր»ի էջ 130ին վրայ կը կարդանք.—

« Զօհրապ բոպիկ միտք մըն է 1880ին, ու պիտի մնայ այդ բոպիկութեամբ՝ նոյնիսկ երբ Գոլոյիրաւաբանական վարժարանին մէջ դասեր պիտի աւանդէ, եւ կամ 1910ին Օսմանեան Խորհրդարանին մէջ քաղաքական տարողութեամբ ճառեր արտասանելու առիթներ պիտի ստեղծէ, իր բնածին հռետորութեան յաղուրդ մը ճարելու համար »:

Ց. Օշական լոյս կ'ընծայէ 1942ին երուսաղէմ Սրբոց Յակոբեանց տպարանէն իր

դրուած) դարձեալ չհեկան կը մնան ի – բենց ամփոփութեան մէջ այնքան շատ դիծ ու նկարագիր պարունակելնուն համար: Վարած է հանդէսներ, թերթեր » :

Այստղերէն ետք, տանք նաեւ բոպիկ բառին բացատրութիւնը, տեսնելու համար թէ Օշականի մտքին մէջ ինչպէս կը պատկերանայ ան Գրիգոր Զօհրապի առնչութեամբ :

Մեր բառարանին մէջ բոպիկ կամ բոպլիկ բառին դէմ հետեւեալ բացատրութիւնները կը դանենք փոխաբերական ի – մաստով դործածուած .—

Անտեղեակ, անհմուտ, տգէտ, խելէ բոպիկ, կոշտ – կոպիտ իմաստով նաեւ : Ուրեմն Ց. Օշական կը դործածէ մէկուն համար, որուն գրական արժանիքները ներբողելուն մէջ կը մրցի ամէնուն հետ : Ցիշողութիւնը տակաւ մէկը միայն պիտի իյնար նման հակասութեան մէջ :

Որպէսզի ամէն բան ըսած ըլլանք, « Հայ Գրականութիւն» հատորին մէջ Գր. Զօհրապի «Ճամբու նօթեր»ը վերլուծման ենթարկուելու պահուն, կը դանենք ուրիշ ներբողներ ու վկայութիւններ հետեւեալ կերպով :

«Զօհրապ, նման ձեռնարկի մը (Ճամբու նօթերը) ամէնէն յարմար աշխատաւորը կը ներկայանայ :

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

(8 Շար.)

ԿԱՅՔԵՐ

«ՑՄՄՍՋ»-Ի ՓԵՐՓՈՒՐԸ (400)

ԼԵ.
Ֆ. ՀԱՍՅՈՐ

Ճամփան նոյն տան մէջ մայր վնասուածը – դադրեցուց, նա իր որդու տանը իր ներքաշուեցաւ, ու ամբողջ գիշեր մարդիկ Մարիամը չտեսան։ Միայն առաւօտեան կանուխ, երբ ամբողջ գիւղը դեռ քնած էր, Մարիամը դուրս եկաւ իր տնակէն, ձեռքին մի մեծ ծրար բռնած։ Ան ուղղակի գնաց գիւղի ծայրը, ուր կանգնած էր ձիերու ջրհորը։ Ջրհորի մօտ

ԼՈՆՏՈՆԻ մէջ 77 միլիոն ֆրանքի ծախուեցաւ փիքասոյի մէկ գործը՝ Հոլանտուհին, գծուած 1905ին երբ նշանաւոր նկարիչը կը սկսէր իր «վարդագոյն շրջանը»:

ՍԸՐ ՍԱՄՈՒԷԼ ՀՕՌ, Անգլիոյ նախկին արտաքին նախարարը մեռաւ առջի օր, 79 տարեկանին:

ՍՊՈՒՏՆԻԿ Գ. հինգ հազար անգամ ըլլալով երկրին շրջանը ըրաւ. տակաւին պիտի դիմանայ մինչեւ Հոկտեմբեր: Այս առիթով խորհրդային մամուլը կը հրատարակէ ցարդ ստացուած տեղեկութիւններու հաշուեկշիռը, որոնց կարգին՝ ա – մէնէն կարեւորները հետեւեալներն են.

— Մթնոլորտը կը չարունակուի հազար քիլոմեթր բարձրութենէ մը յետոյ:

— Մթնոլորտի բարձրագոյն խաւը իր մէջ կը պարունակէ ջրածինի եւ բորոկածինի հիւլէներ:

— Հողագունդը չրջապատուած է ելէքթրոնիկ պատկով մը, եւն.:

ԵՒՐՈՊԱԿԱՆ Խորհուրդի վեց անդամ պետութիւններու (Ֆրանսա, Պելժիա, Ա – ւըստրիա, Գերմանիա, Իտալիա, Լիւք – սանպուրգ), հայատակները պիտի կարենան առանց անցագրի Ցունաստան եր – թալ: Վիզան չնչուած էր արդէն:

ՊԱՂՏԱՏԻ կեդրոնական դրամատունը յառաջիկայ Ցուլիս 14ին (յեղափոխութեան տարեդարձին առթիւ) նոր դրամներ հրապարակ պիտի հանէ: Երկու տարուան ժամանակաշրջան մը տրուած է նախորդները փոխելու համար: –

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Երիտասարդ հեղինակ –երգիչը՝ Անրի Մարգարեան, որուն առաջին սալը լոյս տեսաւ այս չաբաթ (Փաթէ – Մարֆոնի) ձայնասփիւռէն պիտի լսուի այս Կիրակի ժամը 12·25ին (Ֆրանսա թիւ 2):

Մարգարեան Վալանսէն է եւ ինք կը գրէ իր երգած երգերուն երաժշտութիւնը եւ բառերը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Արաքսի Մալաքեան եւ Պ. Աչոտ Մալաքեան չնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, դրաւոր, ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնեցին իրենց քրոջ եւ մօրաքրոջ՝

ԳԱՑԵԱՆԻ ՔԻՐԱԶԵԱՆԻ

կսկծալի մահուան առթիւ (Փարիզ՝ յուղարկաւորութեան եւՄարսէյլ՝ թաղման):

×

Լիոնի Ազգ. Միութիւնս չնորհակալութեամբ ստացած է Փարիզէն Պ. Թորգոմ Պասմաճեանէ իր հեղինակած եւ գծած Քրիստոսի Խաչելութեան պատկերը նուիրակուոյց եկեղեցւոյ մէջ դրուելու համար, յանձնուած Պ. Թադեր Ղազարոս – եանի կողմէ: Նոյնպէս Լիոնէն Պ. Ցակոբ Խաչերեանէ չորս սալեր:

ՊԱԼԱՔԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ

ՇԻՐԻՄԻՆ ՀԱՄԱՐ

Ոմն՝ երկու հազար ֆրանք: (Տեսնել «Ցառաջ»ին):

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Կազմակերպուած Կապոյտ Խաչի Իսիկ մասնաճիւղին կողմէ:

Մասնակցութեամբ Ալֆորվիլի թատերախումբին, կը ներկայացուի՝

ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

Այս երեքշաբթի ժամը 21ին Իսիկ Ա – լամպրա սինեմային մէջ:

Մեքթօ Մեռի տ'Իսիկ:

Տոմսերու դին՝ 500, 300 ֆրանք:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Դպրոցասէրի տարեվերջի հանդէսը Ցունիս 28ին, կիրակի, կէսօրէն ետք, ժամը 15ին, վարժարանի հանդիսասրահին մէջ:

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Ֆ. կապ. Խաչի Օդափ. կայանի արձանագրութիւնները բացուած են:

Դիմումները պէտք է ընել տեղական մասնաճիւղերուն, իսկ կեդրոնի դիմումները կ'ընդունուին, երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը 13էն 14 եւ երեկոյեան ժամը 18էն 20, Րիւ Մէյրան 5, հեռ. Թուիւտէն 27–35:

ՑՈՒԼԻՍԻ ՀԱՄԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓԱԿՈՒԱԾ ԵՆ:

ՀԱՑ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Քաջնեան – Զուռնաճեան ամուսնու – Թեան քառասնամեակին առթիւ Պ. Փօլքաջնեան (Պկլֆոր) երկու հազար ֆրանք կը նուիրէ Մշակոյթի Տան: (Տեսնալ «Ցառաջ»էն):

"ՅԱՌԱՋ" ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Պ. Սարգիս Տէրմանեան մէկ տարեկան «Ցառաջ» կը նուիրէ իր հօրը՝ Սահակ Տէրմանեանի (Լիոն):

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Տէսինի Վասպ. Երիտ. Երկսեռ միութեան վարչութիւնը, իր եւ բոլոր հայ բնակիչներու կողմէն խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Տիկին Մանուչ Շամիրհանին (Մարսէյլ) եւ իր բոլոր պարագաներուն հայրենակից Ազգին Մարտիրոս եանի մահուան առթիւ: Նոյնպէս ցաւակցութիւնը կը յայտնէ հայրենակիցները Ցակոբ եւ Անդրանիկ Ալոյեանի (Վիէն), իրենց կնոջ եւ մօրը Տիկին Պայծառ Խլոյեանի մահուան առթիւ եւ փոխանձագկեպսակի երկու հազար ֆրանք կը նուիրէ «Ցառաջ»ի բարգաւաճման համար:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Արձանագրութիւնները բացուած են 1959 – 1960 ուսումնական տարեշրջանի համար:

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները փութան դիմել տէս – չութեան, զրաւոր կամ հեռախօսով, ա – մէն օր:

26, RUE TROYON, SEVRES

TEL. OBS 18-28

Վարժարանի մէջ լրիւ կ'աւանդուին ազգային պիտութիւնները եւ ֆրանսական երկրորդական ուսմանց ամբողջական ծրագիրը, մինչեւ Պաքալօրէայի առաջին մասը:

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Այս տարի Հայ կարմիր Խաչի Ֆէսան – վիլիէի օդափոխութեան կայանի բացումը տեղի պիտի ունենայ երեք Ցուլիսին: Արձանագրութեան համար դիմել Հայ կարմիր Խաչի կեդրոնատեղին, 15 Րիւ Ժան Կուժօն, Փարիզ, Երկուշաբթի եւ Ուրբաթ առաւօտները, ժամը 10 – 12:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ՄԱՐՍԷՅԼ.— Վասպուրականի Հայր. Միութիւնը կը պատրաստուի տօնելու Վասպուրականի Հերոսամարտի 44րդ տարեդարձը, Մայիս 24ին, մեծ պատրաստութեամբ:

ԿԱՐԴԱՑԷՔ

Վերապրելու համար 1915ի ողբեր – գութիւնը՝

կարդացէ՛ք

Կ. ՓՕԼԱՏԵԱՆԻ

վէպը՝

ԱՐԾԻՒՆԵՐԸ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

Դիմեցէք հայ գրավաճառներուն կամ ուղղակի հեղինակին՝

G. POLADIAN

53, AVENUE DE ST JULIEN MARSEILLE 12·

Գինը՝ 1000 ֆրանք:

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Դատական վճիռի մը համաձայն բնակարանի ծանր տաղնապի մը մատնուած ըլլալով, կը փնտռեմ Փարիզի կամ արուարձաններուն մէջ առնուազն երկու սենեակ եւ խոհանոցով յարկաբաժին մը: Տեղեկացնել հասցէիս՝

A. KEMPETIAN

6, RUE D'ARRAS, PARIS-5·

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Ցովհաննէս Զօրլուեան (Անգարացի) 65 – 70 տարեկան, քառասուն տարի ա – ռաջ Գոլէն մեկնած, հօրը անունը՝ Սիմոն, մօրը՝ Ովաննա: Հասցէ.—Եղբայրը՝ Վահան Զօրլուեան (լուսանկարիչ), Զարշը Գափու, Ամալը Քանտիլ uofuf, թիւ 13, տունը, Իսթանպուլ: Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել:

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

"ՄԱՅԻՍ 28"Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միւնէեւ լոյս):

Վեցերորդ թաղապետարանի սրահներուն մէջ, փլաս Սէն Սիւլփիս:

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Ցունիս 6ին, Շաբաթ իրիկուն, Գ. թաղապետարանի սրահին մէջ:

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Ցունիս 7ին:

ԽԵՑԱՆՕԹՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Ժանն Տէր Խաչատուրեանի կողմէ:

(Մարսէյլ քաղաքի մեծ մրցանակ, Մարսէյլի առեւտրական սենեակին առաջին մրցանակ չնորհատրութիւններով):

Մայիս 9էն 23:

19 A, RUE VENTURE, MARSEILLE

Բացումը՝ Շաբաթ ժամը 18 – 21:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Տ. Հայկազուն քհնյ. Բանտիկեան 1959 Փետրուար 6թէն ի վեր պաշտօնի դադրած ըլլալով, իր յաջորդը նորընտիր հովիւ Տ. Խոսրով քհնյ. Աստուրեան միայն իրաւասու է Մարսէյլի քաղաքամասի ծուխերուն կրօնական արարողութիւնները կատարելու: Կը խնդրուի ծուխերէն նը – կատի ունենալ այս պարագան:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

60 տարեկան կին մը, լաւ յանձնարարականով, առանձին կնոջ մը տան համար: Դիմել «Ցառաջ»ին:

Comité du Prix Brémond

եւ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼԻՊՃԵԱՆ ՀԻՄՆԱՐ – ԿՈՒԹԵԱՆ

Դասախօսութիւնը՝

երեքշաբթի Մայիս 12 ժամը 21ին:

SALLE DEBUSSY

(252 Փօպուռ Սէն Օնօրէ)

կը դասախօսէ՝

MONSIEUR GRABAR

Membre de l'Institut

Professeur au Collège de France

«Հայկական միջնադարեան ճարտարապետութեան ֆանի մը գլուխ-գործոցները»:

Մուտքը՝ անձնական քարտով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ տեղւոյն Երիտ. Միութեան եւ հովանաւորութեամբ՝ Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցւոյ հոգաբարձութեան

երեքշաբթի, 12 Մայիս 1959, ժամը 21ին Քաղաքապետարանի սրահը Րիւ Վօլթէռ կը դասախօսէ ՓՐՈՖ. ՖՐԵՏԵՐԻՔ ՖԻՑՏԻ

Նիւթ՝ Հայ գրականութիւնը:

Մուտքը աղատ է:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ֆ. կապ. Խաչի Լիոնի մասնաճիւղը կը տօնէ «ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՕՐԸ» Մայիս 23ի Շաբաթ իրիկունը:

×

Ժանթիլիի Հայկական դպրոցի Ամավերջի հանդէս – պիկնիճօն: 13 Ցունիս Շաբաթ երեկոյ, Ժանթիլիի մէջ:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՕՐ

Նախաձեռնութեամբ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Փարիզի Ահարոնեան խումբին

Շաբաթ, 16 Մայիս, ժամը 21էն միւնէեւ լոյս Սէրբլը Միլիթէռի շէեղ սրահներուն մէջ:

Խնամուած գեղարուեստական բաժին: Երգ, պար, արտասանութիւն, զաւեշտ:

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

JACQUES MORINOTի ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲՈՎ

Երգիչը՝ ԱԼՎԱՐԻԶ

1959 ՑՈՒՆՈՒԱՐ 1ԷՆ

MORY et Cie

Հաստատութիւնը սկսած է շատ նպաստաւոր պայմաններով կատարել դէպի Խ. Միութիւն ծրարներու առաքումը:

ԳԻՆԵՐԸ ԶԳԱԼԱՊԷՍ ԻՋԱԾ ԵՆ

Մեր նոր գները ստանալու համար գիմել, գրաւոր, հետեւեալ հասցէին.—

Service C des Colis Postaux

10, Rue St-Quentin, Paris 10

*կամ հեռաձայնել.—*NOR. 40 72 & 50 83

MÉTRO ET AUTOBUS : GARE DU NORD

ԾՐԱՐՆԵՐ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆԱՑԱՏՈՒԿ ԵՒ ՆՊԱՍՏԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ՇՆՈՐՀԻՒ ԱՐՏԱԾՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԶԱՑՆՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— ՄԱՔՍ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՐԱՐԻ ԾԱԽՔԵՐԸ ՄԻԱՍԻՆ

Հարիս թուխտ (զուտ բուրդէ հիւսուածեղէն)	մէթրը	3·500	ֆր.
Ֆիլ ա ֆիլ	մէթրը	3·900	»
Փէնիէ Պոսքօճ զուտ բուրդ	մէթրը	4·500	»
Սեռժ փենիէ զուտ բուրդ	մէթրը	4·900	»
Խառն կերպասեղէն	մէթրը	1·900	»
Գուլպա մուս նիլօճ (այր մարդու)	2 զոյգը՝	1·500	»
Շապիկ (փոփլինճ)		2·700	»
Կօշիկ Պօfu – fաֆ (այր մարդու)		5·900	»
Տիւվըքինճ զուտ բուրդ (կնոջ հագուստի համար)	մէթրը՝	2·100	»
Քրէփ մուս զուտ բուրդ	մէթրը	2·800	»
Օքօմաճ (կնոջ եւ այր մարդու համար)	մէթրը	3·800	»
Էնփրիմէ չճմռթկուող եւ լուացուող	Ա. դին	500	»
Գուլպա նիլօճ մուս (կնոջ համար)	2 զոյգը	1·900	»
Գուլպա նիլօճ (կնոջ համար)	2 զոյգը	1·500	»
Նիլօճ Փառիւռ (fռնպինէզօճ եւ ֆիլոթ)		3·200	»
Ժամացոյցներ՝ ոսկեզօծ, 17 րիւպի, անթիշօf		10·000	»

ԱՌԱՔՈՒՄԻ ԾԱԽՔ·— 2·500 ֆր· 10 ֆիլոնոց ծրարի մը համար:

ՍՏԱՑՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ՉՈՒՆԻ:

ԵՐԵՔ ՉՈՐՍ ՇԱԲԱԹԷՆ ծրարները իրենց տեղը կը հասնին:

Ձեր տրամադրութեան տակ են բոլոր կերպասներու ճմոյշները:

SICOMEX

20, Rue Royale,

Tél. : OPE. 67-77 PARIS 8· Métro : Madeleine

ԱՅՍ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՀԵՑԷ՛Ք

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ
12
ՄԱՅԻՍ
MARDI
12 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8390 35EME ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4291

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Իսկական ճակատամարտ մըն է, որ սկսաւ երէկ Ժընեւի մէջ, Լեմանի խաղաղ ափերուն վրայ :

Արեւելեան եւ արեւմտեան ճակատները այժմ կանգնած դէմ դէմի՝ չաթթիներով « բանակռիւ » պիտի մղեն :

Ո՞վ պիտի տանի յաղթանակը :

Ռազմաճակատ մեկնելէ առաջ, կողմերը ամխիներով նախապատրաստական լուրջ աշխատանքներ տարին : Սպառազէն – ուեցան՝ անհրաժեշտ բոլոր զէնքերով, անակնկալի չգալու եւ հարուածին փո – խադարձ հարուածով պատասխանելու համար :

Կրէմլինի խորամանկ վարիչները անց – եալին ա՛նքան ճարպիկ ոգեմաւորու – թեամբ — աւելի ճիշդը լարախաղացու – թեամբ — յաղողեր էին խարել արեւմտեան ճակատի բարեմիտ դիւանագէտները :

Այս անգամ, խաղի չգալու համար, ա – զատ աշխարհի պատասխանատու ներկա – յացուցիչները վճռած են արթուն եւ ըս – դաստ ըլլալ : Մանաւանդ՝ կարեւորութիւն չընծայել բոլշեւիկեան սպառնալիքնե – րուն :

Ատլանտեան Ուխտի տասնամեակի տօ – նակատարութեանց եւ դաշնակից արտա – քին նախարարներու փարիզեան խորհր – դաժողովին առթիւ տեսնուեցաւ, որ ա – րեւմտեան ճակատը կարծուածէն աւելի ամուր է : Հասարակաց չահերուն առնչ – ւորութեամբ են ներքին փոքրիկ տարակար – ծութիւնները :

Դաշնակից միացեալ ճակատը առաջին բարեբաստիկ արդիւնք մը արձանագրեց արդէն :

Խրուշչեւ իր 27 Նոյեմբերը 1958ի ծա – նուցագրով վեց ամիս պայմանաժամ էր տուած երեք դաշնակիցներուն՝ Պերլինէն քաշուելու եւ արեւելեան Գերմանիան պաշտօնապէս ճանչնալու համար :

Ցեղս ընկերում կատարելով, Կրէմլի – նի մենաւէրը պարտաւորեցաւ յայտա – րարել թէ վեց ամսուան պայմանաժամը « վերջնագիր»ի հանդամանք չունէր :

Հիմա սկսած են բանակցիլ :

Երկու կողմերն ալ սկզբունքով դէմ կ'արտայայտուին պատերազմին, որովհե – տեւ դիտեն թէ այս անգամուանը քաղա – քակրթութեան քանդումը պիտի ըլլայ :

Բանակցութեանց ճամբով համաձայ – նութեանց յանգելու քաղաքականութիւնն է, որ կը փորձուի այժմ Ժընեւի մէջ :

Երկուստեք զինուորական ուժերու հա – ւասարակշռութիւն հաստատուած ըլլա – լով, կը յուսացուի, որ բանակցութիւն – ները տեղի պիտի ունենան իրերհասկացո – ղութեան խաղաղ մթնոլորտի մէջ :

Ներկայ խորհրդաժողովը քննութեան պիտի առնէ քաղաքական այն բոլոր խըն – դիրները, որոնք ո՛չ միայն Եւրոպայի, այլ նաեւ ուրիշ երկիրներու, մասնաւո – րաբար Արեւելքի մէջ այս կամ այն ձեւով կը սպառնան աշխարհի խաղաղութեան :

Խորհրդային Միութիւնը ամէն միջոց կը դիմէ՝ ո՛չ միայն իր դիրքն ամրացնե – լու համար Եւրոպայի մէջ, այլ նորանոր դիրքեր գրաւելու եւ նուաճումներ կա – տարելու՝ Ասիոյ եւ Աֆրիկէի այն հողա – մասերուն վրայ, որոնք ռազմագիտական եւ տնտեսական որոշ արժէք կը ներկայա – ցնեն :

Դաշնակիցները վճռած ըլլալով վերջ տալ «դիջումի քաղաքականութեան », դիւրին պիտի չըլլայ համաձայնութիւնը արեւելեան ճակատին հետ :

Կարելի չէ այժմէն դուշակութիւններ ընել արդիւնքին մասին :

Նոր «Միւնիխ» մը դուրս պիտի գայ Ժընեւէն՝ թէ ճամբայ պիտի յարդարուի դէպի մնայուն եւ արդար խաղաղութիւն :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԼԱՐՈՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏ ԺԸՆԵՒԻ ՄԷՋ

ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ՝ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ

★

Ա. ՕՐԱԿԱՐԳ.— ԽՈՂՈՎԻ ՍԵՂԱՆԸ ԿԱՐՕՐ ՊԷՏՔ Է ԸՆԼԱՅ ԹԷ ՔԱՒԱԿՈՒՍԻ..

Երկուշաբթի կէսօրէ ետք ժամը 3·30 – ին Ժընեւի մէջ բացուեցաւ Արտաքին Նա – խարարներու ժողովը : Շաբաթ եւ Կիրակի օրերը տեղի ունեցած կարգ մը հանդի – պումներն ու խօսակցութիւնները ոչ մէկ կասկած կը ձգէին ժողովին զումարման չուրջ :

Բացումը կատարեց Մակի ընդհանուր քարտուղար Համըրշոլտ՝ բարիզալուստ մաղթելով նախարարներուն : Առաջին օր – ուան համար նախագահ նշանակուած էր Անգլիոյ Արտաքին Նախարար Սելվին Լոյտ, որ չնորհակալութիւն յայտնեց Հա – մըրշոլտի :

Ժողովը բացուեցաւ վերջապէս, բայց տարակարծութիւնները տակաւին չեն հարթուած : Մինչեւ վերջին վայրկեանը Ռուսերն ու Արեւմտեանները չէին կրցած համաձայնիլ ժողովի սեղանին ձեւին չուրջ ... կլո՞ր թէ քառակուսի :

Պարագայ մը՝ որ կարգ մը մարդոց համար բիւզանդական վէճ կը նկատուէր, մինչ ուրիշներ դառնութեամբ դիտել կու տային.— Եթէ այսպէս սկսաւ, ինչպէ՞ս պիտի վերջանայ ... :

Անշուշտ սեղանին ձեւը որոշ իմաստ մը ունի միջազգային հարցերու մէջ : Ինչպէս ծանօթ է, առաջին անգամ ըլլալով Ա. – րեւելեան եւ Արեւմտեան Գերմանիոյ ներկայացուցիչները հաւասար պետնի վը – րայ խորհրդակցութեան կը նստին «Զոր – ս»երուն հետ : Բայց նկատի ունենալով որ Արեւելեան Գերմանիա չէ ճանչցուած Ա. – րեւմտեաններու կողմէ՝ Ամերիկա, Անգ – լիա եւ Ֆրանսա կ'ուզեն սահմանափակել անոր իրաւասութիւնները :

Միջազգային դիւանագէտներու բառա – րանին մէջ՝ «կլոր սեղան» կը նշանակէ հաւասարութիւն. այսինքն, կլոր սեղանի մը չուրջ ժողով զումարող նախարարները հաւասարազօր իրաւունքներ ունին :

Երբ Ռուսերը կը պնդեն որ սեղանը կլոր ըլլայ՝ կ'ուզեն հասկցնել թէ Արեւելեան Գերմանիա միւս երկիրներու նման հա – ւասար իրաւունքներ ունի : Արեւմուտքը ընդունելով կլոր սեղանի մը չուրջ խմ – նուիլ՝ ընդունած եւ ճանչցած պիտի ըլ – լայ Փանքովի կառավարութիւնը, ինչ որ անկարելի է : Այս պատճառով «երկ – ները կը պահանջեն որ սեղանը քառակու – սի ըլլայ :

Կարճ խօսքով՝ սեղանին ձեւը երկու աշխարհներու քաղաքականութեան ճըշ – դումն է :

Առաջին նիստին երկրորդ մեծ դժուա – րութիւնն է Լեհաստանի եւ Չեխոսլովա – քիոյ մասնակցութեան հարցը : Խ. Միու – թեան Արտաքին Նախարար Կրոմիքօ կը պահանջէ որ բացի երկու Գերմանիանե – րէ՝ հաւասար իրաւունքներով ժողովին մասնակցին նաեւ Վարշաւայի ու Փրակա – յի կառավարութեանց ներկայացուցիչնե – րը :

Դարձեալ անընդունելի առաջարկ մը՝ Արեւմուտքի համար :

Ֆրանսա, Անգլիա եւ Ամերիկա համա – ձայն են որ Լեհաստան եւ Չեխոսլովաքիա մասնակցին, բայց միայն այն խօսակցու – թիւններուն՝ որոնք ուղղակի կապ ունին անոնց հետ : Զորս մեծերը, որ ստորա – գրած են Գերմանիոյ դրաւումը, մեծ պա – տասխանատուութիւններ ունին. ուրիշ երկիրներ չեն կրնար մասնակցիլ այդ պատասխանատուութեանց ճշդորոշման վերջին ժամ

Խ. Միութեան Արտաքին նախարար Կրոմիքօ յայտարարեց թէ ժողովին պիտի չմասնակցի, այնքան ատեն որ Արեւելեան Գերմանիա չէ ընդունուած Արեւմուտքի կողմէ : Բացումը պիտի կատարուէր ա – ռանց Կրոմիքոյի ... եթէ նոր անակընկալներ չպատահին :

համար ըլլալիք խօսակցութիւններուն :

Հետեւաբար, Չեխոսլովաքիա եւ Լե – հաստան ժողովին կրնան մասնակցիլ որոշ իրաւունքներով միայն՝ եթէ Խ. Միու – թիւնը կը մտածէ թէ անհրաժեշտ է այդ : Բայց Արեւմուտքը իրեն կը վերապահէ այլ երկիրներու մասնակցութեան համար ընելիք առաջարկը : Մոսկուա իր առա – ջարկները պահելու համար, պէտք է ըն – դունի նաեւ Իտալիոյ մասնակցութիւնը :

Այս ուղղութեամբ, Անգլիոյ, Ֆրան – սայի եւ Ամերիկայի Արտաքին նախարար – ները խորհրդակցութիւն մը ունեցան ի – տալացի իրենց պաշտօնակիցին հետ, որ – մէ եզք յայտարարուեցաւ թէ Փրակայի եւ Վարշաւայի մասնակցութեան պարա – գային՝ Հռոմ անհրաժեշտ պիտի դառնայ :

Հակառակ այս բոլոր դժուարութեանց՝ Անգլիոյ քաղաքական շրջանակները լա – ւատես են եւ վստահ՝ որ Արտաքին նա – խարարները պիտի յաջողին համաձայ – նութիւն դոյացնել Մեծերու ժողովի մը դումարման համար : Մինչ Ամերիկայի Արտաքին նախարար Հերթըր Պոնէն մեկ – նելէ առաջ կը յայտարարէր .— Ժընեւ կ'ներթանք, բայց ոչ մէկ կէտի մէջ տեղի պիտի տանք :

Ֆրանսայի Արտաքին նախարար Քուվ Տը Միւրվիլ Ժընեւ հասնելով ըսաւ.— Մի՛զգայուն ոչ մէկ ժողով այսքան ող – բերգական պայմաններու մէջ բացուած է : Միջազգային չատ լուրջ տաղնապի մը մէջ կը գտնուինք :

Կրոմիքօ.— Կը յուսանք թէ կարճ ժա – մանակի մէջ կարելի պիտի ըլլայ Մեծե – րու ժողով մը գումարել :

ԺՈՂՈՎԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ՝ Անարէյ Կրոմիքօ ծանօթ է իբրեւ խիստ եւ անզի – ջող : Գիւղացիի զաւակ, իր մանկութիւնը անցուցած է Մինսքի շրջանը հողամշա – կութեամբ զբաղելով : 1939ին, երբ երե – սուն տարեկան էր, Թամանովը զինքը կը ներկայացնէ արտաքին նախարարութեան, ուր կ'աշխատի ամերիկեան բաժանմունք – քին մէջ : Ապա, կը մեկնի Ամերիկա, դես – պանին կրբեւ խորհրդական :

1946էն 1948 Մակի եւ Ապահովութեան Խորհուրդի ժողովին մէջ իր ձիէքները նշանաւոր են արդէն :

ՎԵՐՋԱՊԷՍ արտաքին նախարար կը նը – շանակուի :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ, Քրիսթիըն Հիւնթ մըն էր որ կը փոխարինէ ուրիշ մեծ հիւնդ մը՝ Տըլլոսը : Իր քաղաքա – կան ասպարէզը սկսած է կանուխէն, 1917ին, 22 տարեկանին արդէն քարտու – ղար էր դեսպանատան մը մէջ : Զորս զա – ւակ ունի եւ ծանօթ է իբրեւ լաւ պրիճ եւ ճաարակ խաղացող :

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ՝ Սելվին Լոյտ ամէնէն հինն է այդ պաշտօնին ղը – լուխը, 1957 Յունուար 10էն :

Փայլուն հռետոր բայց յաճախ անճա – րակ, լաւ կը պաշտպանէ սակայն անգ – լիական չահերը : Դեկտեմբերի համալսա – րանը աւարտած է 19 տարեկանին :

ՖՐԱՆՍԱՑԻ ՆԱԽԱՐԱՐԸ՝ Քուվ Տը Միւրվիլ նախկին ելմտական քննիչ մըն է : 1950ին Գահիրէ էր իբրեւ արտակարգ դեսպան եւ 1954ին, Ֆրանսական դեսպան Ուաշինկթընի մէջ : 1956ին դեսպան կը նշանակուէր դաշնակցային Գերմանիոյ, կառավարութեան մօտ : Ծնած է 1907ին եւ միջազգային հանդիպումներու երկար փորձառութիւն ունի :

ՋԻՆԱԴԱԴԱՐԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

—o—

Կիրակի օր, Ֆրանսայի բոլոր քաղաք – ներուն նման Փարիզն ալ տօնեց 1945ի զինադադարին եւ ժան տ'Արքի տարե – դարձները :

Փիրամիտ հրապարակին վրայ տեղի ունեցաւ ժան տ'Արքի աւանդական տօնա – կատարութիւնը : Պատերազմական նա – խարար կիյեոմա ծաղկեփունջ մը դրաւ հերոսուհիին արձանին վրայ, մինչ զին – ուորական նուագախումբը «Մարսէյեզ – ը» կը հնչեցնէր : Այստեղ փոքր միջա – դէպ մը պատահեցաւ ոստիկաններու եւ լրագրողներու միջեւ :

Այնուհետեւ, ժամը 11·25ին Հանրապե – տութեան Նախագահ Տը Կոլ Պատերազ – մական նախարար կիյեոմայի ընկերակ – ցութեամբ զնաց էթուալ, ուր տեղի ու – նեցան զինադադարի տօնակատարութիւնն ու զինուորական տողանցքը :

Անգլիոյ եւ Միացեալ Նահանգներու դեսպանները, Ատլանտեան Ուխտի ընդ – հանուր հրամանատար Զօր. Նորսթէտ եւ քարտուղար՝ Սփաք, ինչպէս նաեւ քաղա – քական ու դիւանագիտական պաշտօնա – կան այլ դէմքեր ներկայ էին զինադադա – րի տօնակատարութեան :

Նախապէս, Ենվալիտի մէջ ծաղկեպսակ մը դրուած էր մառեչալ Լըքլէրքի գերեզ – մանին վրայ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Կի Մոլէ Խարտէլ մեկնեցաւ երկու – շաբթի օր ուր Պէն Կուրիոնի հիւրը պիտի ըլլայ : Այս առթիւ տեսակցութիւն մը ունեցած է Օպսերվաթէօր Տիւ Մուայէն Օրիան Թերթին հետ, եւ յայտարարած թէ ինք հակառակ է Ֆրանքեւիսթայլեան դի – նակցութեան մը : Նախկին վարչապետը չէ չահած թէ նման դինակցութիւն մը ա – ւելորդ քարոզութեան մը միայն կրնայ ծառայել :

ՄԻՒՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարարութեան մէկ պէկոյը կը հա – ղորդէ թէ Արտաքին նախկին նախարար Տըլլըս տկարացած է՝ թեթեւ թոքատապի մը պատճառով :

Խ. ՄԻՈՒԹԵԱՆ վարչապետ Խրուշչեւ ազդարարութիւն մը ըրաւ Արեւմտեան – ներուն, յայտարարելով թէ պատերազմի մը պարագային Խ. Միութիւնը երկրա – դունդի վրայէն պիտի ջնջէ արեւմտեան բոլոր երկիրները եւ առաջին անգամ այն հողամասերը՝ «ուր Ամերիկացիները հըր – թիռներու արձակարաններ հաստատած են » :

ՄԱՅԻՍ 13ի տարեդարձը մեծ չուքով պիտի տօնուի Ալժէրի մէջ, կը յայտարա – րեն Ալժերիոյ Նախկին Ռազմիկներու Միութիւնն ու «Ֆրանսական Ալժերիա Միութիւնը » :

ՓԱՐԻԶի օթօպուսներու չարժավարներ – րը գործադուլի մէջ են այսօր՝ Մայիս 12 : Բանթողները, որ մաս կը կազմեն Բանուորական Ուժի (ընկերվարական), աշխատավարձի յաւելում կը պահանջեն :

ԱՄԵՐԻԿԱՅԻ Նախկին Ռազմիկներու պատուիրակութիւն մը, ամէն տարուան նման զնաց Խ. Միութիւն՝ էլպայի ռուս – եւամերիկեան բանակներու հանդիպման տարեդարձը տօնելու համար : Պատուի – րակութեան նիստադահը՝ Փոլովսքի, խո – սակցութիւններ ունեցաւ Խրուշչեւի եւ Ա. Միկոյեանի հետ :

ԱԻՏՐԻՈՑ ընտրութիւններուն մէջ հող չահեցան Ընկերվարականները՝ մինչ կը սպասուէր որ պարտութիւն մը արձանա – գրեն անոնք : Համայնավարները ոչ մէկ աթոռ չահեցան, մինչ ընկերվարականնե – րը չահեցան 78 աթոռ (նախապէս՝ 74), ժողովրդականները՝ 79 (82), Ազատա – կանները՝ 8 (6) :

(Լուրերու շար.ը կարդալ Դ. էջ)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

•

ԽՄԲ.— Կը հրատարակենք այս գրութիւնը, որ պարզ ամփոփումն է այն հետազօտական դասախօսութեան, զոր կատարեց վերջերս Փրոֆ. Ֆրեդէրիք Ֆէյտի, Համազգայինի լսարանին մէջ, Փարիզ :

Բանախօսին նպատակն է մասնագէտ չեղող ունկնդիրներուն պարզել թէ ի՛նչ է համեմատական քերականութիւնը, ո՛ւրկէ ծագում առած է այս գիտութիւնը, ի՛նչ են անոր մեթոտն ու նպատակները, ի՛նչպէս կարելի է գործածել անոր հայթայթած տուեալները եւ զանոնք յարմարցնել հայերէն լեզուին քերականական ուսում-նասիրութեան, վերջապէս ինչ ըսել կ'ուզեն լեզուաբանները ըսելով որ հայերէնը հնդեւրոպական լեզու մըն է :

Բուն համեմատական քերականութիւնը ներկայացնելէ առաջ, պէտք է յիշեցնել կարգ մը նախադիտելիքներ :

Ա.) Լեզուները անդադար կ'այլափոխուին, բայց աստիճանաբար եւ աննշմարելի կերպով. այնպէս որ երբեք չի պատահիր որ իրարու անմիջապէս յաջորդող երկու սերունդներու պատկանող խօսակիցները իրար չհասկնան : Այս փոփոխութեանց ընթացքը կրնայ արագանալ եթէ լեզուական միջավայրը յանկարծակի փոխուի, ինչպէս կը պատահի գաղթի կամ արշաւանքի պարագային : Այսպէս է որ հայերէն լեզուին մէջ բոլորովին նոր երեւոյթներ կարելի է նշմարել ֆրանսահայ կամ ամերիկահայ երիտասարդութեան մօտ (օտարաբանութիւններ ինչպէս «այսօր չատ տաք կ'ընէ» .— ձայնաբանական չփոթութիւններ Ռի, Րի եւ նոյնիսկ Ղի՛ միջեւ) :

Բ) Թէեւ անդրդելի կը մնան սերունդէ սերունդ, սակայն դարերու ընթացքին մէկը միւսին վրայ աւելնալով, այս ճեւափոխութիւնները լեզուին կազմն ու կերպարանքը կրնան այլայլել այն աստիճան որ հետզհետէ սոյն լեզուին հին երեւոյթը անհասկնալի կը դառնայ նոր սերունդներուն համար եւ օտար լեզու կը սեպուի, ինչպէս լատիներէնը Իտալացիներուն եւ մանաւանդ Ֆրանսացիներուն համար :

Գ) Եթէ նոյն լեզուն խօսող համայնքին բոլոր մասերը սերտ յարաբերութեան մէջ մնան, լեզուին կրած փոփոխութիւնները այդ համայնքին ամբողջ բնագաւառին մէջ նոյն ուղղութեամբ եւ արագութեամբ կ'ընթանան եւ լեզուն միակուռ կը յեղաշրջի, իր միութիւնը պահելով : Բայց եթէ զայն խօսող համայնքը զանազան խումբերու բաժնուի եւ յարաբերութիւնները նուազանան կամ բոլորովին կորուին խումբերուն միջեւ, իւրաքանչիւր խումբին մէջ նոր եւ տարբեր ուղղութիւններով ձգտումներ երեւան կուգան, մանաւանդ եթէ իւրաքանչիւր խումբը զատ լեզու խօսող ժողովուրդի հետ շփման մէջ մտնէ : Այն ատեն հիմնական լեզուն զանազան բարբառներու կը ճիւղաւորուի, որոնք կամաց կամաց զատ լեզուներ պիտի դառնան : Այսպէս «մայր լեզուին» տեղ հետզհետէ ծնունդ կ'առնեն ոչ թէ մէկ «աղջիկ – լեզու» այլ մէկէ աւելի « աղջիկ – լեզուներ», ինչ որ պատահած է լատիներէնին, որ ճիւղաւորուած է իտալերէնի, ֆրանսերէնի, ռումանիերէնի, սպաներէնի եւայլն :

Դ) Այս դիտողութիւններէն կը հասկըցուի որ «մայր – լեզու » եւ «աղջիկ – լեզու» ասացուածքները պարզ այլաբանութիւններ են, քանի որ երկուքն ալ նոյն լեզուին երեւոյթներ են, մէկը հին, միւսը նոր՝ եւ անդրդելի բայց անդադար կրկնուած այլափոխութեանց արդիւնք, ինչպէս մարդուն ծերութիւնը իր մանկութեան նկատմամբ :

Ե) Այս տարրական դիտելիքները լրացնելու համար հարկ է աւելցնել որ լեզու մը խօսիլը եւ ցեղի մը պատկանիլը իրարմէ բոլորովին անկախ իրականութիւններ են. օրինակ Բուլղարները, որոնք սլաւական, այսինքն հնդեւրոպական լեզու մը կը գործածեն, ցեղով մոնղոլ են :

ԷՋՄԻԱԾԻՆ
ԵՒ ՀԱՅ ԼԵԶՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՍԽԱԼ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻՏՔԵՐ»

ԽՄԲ.— Էջմիածնի Մայր Աթոռի պաշտօնական ամսագրին մէջ (1959 Փետրուար) կը կարդանք հետեւեալ գրութիւնը որ պատասխան մըն է Նիւ Եորքի «Էջմիածնահաստատ» Առաջնորդարանի եպիսկոպոսական Առաջնորդարանի եպիսկոպոսական Առաջնորդարանի եպիսկոպոսական

ԿՈՉԵՑԻՔ

Ֆ. ՀՈՍՈՎ

12.

Մեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր Ռուբենի վրա, որ ոտքի էր կանգնել ու ինչ-որ բան էր ասում։ Ես ոչինչ չէի լսում, որովհետև ականջներս խցանված էին։ Ես միայն տեսնում էի, որ նա ձեռքերը թափահարում է, ինչ-որ բան է ասում, ապա նորից նստում։ Ես նրան ոչ մի խոսք չհասկացա։ Ինձ թվում էր, թե ինքն էլ չգիտի, թե ինչ է ասում։

Ռուբենի խոսքերից հետո ոտքի կանգնեց Ալեքսանդր Ալեքսանդրովիչը։ Նա ինչ-որ բան ասաց, ապա ինձ դիմեց։

— Ինչպե՞ս եք զգում ձեզ, ընկեր Հոսով,— հարցրեց նա։

— Ես... ես... ոչինչ,— պատասխանեցի ես։

— Ուրեմն կարո՞ղ եք ասել, թե ինչ է կատարվել ձեզ հետ,— հարցրեց Ալեքսանդր Ալեքսանդրովիչը։

— Ես... ես... ոչինչ,— կրկնեցի ես։

— Ուրեմն ինչո՞ւ եք ասում, թե ոչինչ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ Շահը տեսակցութիւն մը ունեցաւ Անգլիոյ նախկին վարչապետ Իտընի հետ : Խօսակցութիւնը եղած է Շահին լեզուով, որովհետեւ Իտըն չատ լաւ պարսկերէն գիտէ :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ Շարժումին համադումարը վերջացաւ : Կուսակցութեան նախագահ ընտրուեցաւ՝ Անտրէ Քոլէն որ կը յաջորդէ Ֆլիմլէնի, ընդհ. քարտուղար կը մնայ՝ Սիմոնէ : Ընդհանուր քաղաքականութեան վերաբերեալ բանաձեւին մէջ ժողովրդական հանրապետականները կը չեշտեն թէ համաձայն են Տը Կոլի ալժէրիական քաղաքականութեան :

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ կուսակցութեան «ազգային օրերը» վերջացան բայց այս ժողովը միայն ուսումնասիրական ընոյթ ունէր եւ ոչ մէկ բանաձեւ քուէարկուած է : Կի Մոլէ կարգ մը քննադատութիւններ ըրած է կառավարութեան քաղաքականութեան վերաբերեալ եւ զանոնք պիտի ներկայացնէր Տը Կոլին, Իսրայէլ մեկնելէ առաջ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապ. Խաչի Վիէնի վարչութիւնս, Տէր եւ Տիկին ընկերուհի Վ. Փ. Յովհաննէս – եանէ (Փարիզէն) ողբացեալ Լեւոն Քէ – չիչեանի կսկծալի մահուան առթիւ փո – խան ծաղկեպսակի երկու հազար Ֆրանք կը նուիրեն մասնաճիւղիս :

×

Կապոյտ Խաչի Մարսէյլի մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Յակոբ էմմէքճեանէ երկու հազար Ֆրանք, Օր. Գայեանէ Քի – րազեանի մահուան առթիւ :

×

Լիոնի եկեղեցաչէն Տիկնանց Միութիւնը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուէրները :— Պէյրու – թէն Տիկին Եսթէր Կիւլէսէրեանէ քսան հազար Ֆրանք : Պէյրութէն Պ. Ժամկոչ – եանէ 65·000 Ֆրանք : Պ. Վահէ Քիթապ – ճեանէ հազար : Տիկին Աբշալոյս Ինէք – ճեանէ Պ. Ք. Յովհաննէսեանի ամուսնութեան առթիւ երկու հազար Ֆրանք, Տիկին Իսկէնտէրեանէ հինգ հազար Ֆրանք :

×

ՄԱՐՍԷՅԼ.— Պ. Բարգէն Սողիկեան, Տէր եւ Տիկին Յակոբիկ Սողիկեան եւ զաւակը, Օր. Մարի Սողիկեան, Տէր եւ Տիկին Մանոյեան եւ զաւակները, Այրի Տիկին Յուլինէ – Թերզեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Կէլիւտեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Քիւթահեալեան եւ զաւակը, Պ. Հարպիկ Սողիկեան կուգան իրենց չնորհակալութիւնները յայտնել բոլոր անոնց որոնք անձամբ, նամակով եւ հեռագրով ցաւակցութիւններն յայտնեցին իրենց մօր, մեծ մօր, կնքամօր եւ հարսին՝ Այրի Տիկին Սաթենիկ Սո – ղիկեանի կսկծալի մահուան առթիւ որ տեղի ունեցաւ Ամերիկայի Վաթըրթաուն քաղաքին մէջ (21 Ապրիլ 1959) :

Երախտագիտական զգացումներով չը – նորհակալութիւն կը յայտնեն Ամերիկայի իրենց բոլոր ազգականներուն եւ բարե – կամներուն որոնք պարտ ու պատշաճը տնօրինեցին իրենց տարաբախտ մօր մահուան առթիւ :

ԴՊՐՈՑԱՍԷՐ

Բ. Ցանկ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանի վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները :— Տէր եւ Տիկին Ա. Համբարձումեան հարիւր հատ Ֆր., Գործունեան ընտանիք (Մարսէյլ) 50·000, Տէր Տիկին Ա. Զրբաչեան 45·000, Պ. Պ. Ա. Թերզիպաչեան, Է. Փափազեան, Ա. Դաբաղեան, Տօքթ. Հայկ Գալճեան տասը հազարական Ֆրանք, Շ. Կուրտիկեան հինգ հազար, Կ. Թուլումճեան երեք հազար Ֆրանք :

Գումար 243·000 Ֆրանք, Ա. ցանկի գումար 574·000 Ֆրանք, ընդհ. գումար 817·000 Ֆրանք :

ՑՐԱՆՄԱՀԱՑ ԼՍԱՐԱՆ

Այս Շաբաթ երեկոյ ժամը 9ին, Քահէ սրճարանի վերնայարկը, տեղի կ'ունենայ զրոյց մը՝ Ազգապահպանման հարցի շուրջ : Խօսք պիտի առնեն հայ տիկիններ : Կը ներկայացնէ Տիկին Գրիգորեան հարցը եւ իր տեսակէտը անոր լուծման մասին :

Օր. ԷՖԻԼ ԵՈՒԵԱՆ
Պ. ԹԱԳԻՒՈՐ ՊԱՐԹԱՆԼԵԱՆ
Ամուսնացած
Շուազլ լը Րուա *փարիզ*
10 Մայիս, 1959
Կնքահայրութեամբ՝ Պ. ՌՈԺԷ ԵՈՒԵԱՆի :

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Արձանագրութիւնները բացուած են 1959 – 1960 ուսումնական տարեշրջանի համար :

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները փութան դիմել տեսչութեան, ըրաւոր կամ հեռախօսով, ամէն օր :

26, RUE TROYON, SEVRES
TEL. OBS 18-28

Վարժարանի մէջ լրիւ կ'աւանդուին ազգային դիտութիւնները եւ ֆրանսական երկրորդական ուսմանց ամբողջական ծրագիրը, մինչեւ Պաքալօրէայի առաջին մասը :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Դպրոցասէրի տարեփակի հանդէսը Ցունիս 28ին, կիրակի, կէսօրէն ետք, ժամը 15ին, վարժարանի հանդիսասրահին մէջ :

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ
ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Ֆ. Կապ. Խաչի Օղափ. կայանի արձանագրութիւնները բացուած են :

Դիմումները պէտք է ընել տեղական մասնաճիւղերուն, իսկ կեդրոնի դիմումները կ'ընդունուին, Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը 13էն 14 եւ երեկոյեան ժամը 18էն 20, Րիւ Մէյրան 5, հեռ. Թռիւտէն 27–35 :

ՅՈՒԼԻՒՍԻ ՀԱՄԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓԱԿՈՒԱԾ ԵՆ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ժանթիլիի հայկական զպրոցի Ամավերջի հանդէս – դիւնեաճն : 13 Ցունիս Շաբաթ երեկոյ, Ժանթիլիի մէջ :

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Այս տարի Հայ կարմիր Խաչի Ֆէսան – վիլիէի օդափոխութեան կայանի բացումը տեղի պիտի ունենայ երեք Ցուլիսին : Արձանագրութեան համար դիմել Հայ կարմիր Խաչի կեդրոնատեղին, 15 Րիւ Ժան Կուժօն, Փարիզ, Երկուշաբթի եւ Ուրբաթ առաւօտները, ժամը 10 – 12 :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Համախարը. Միութեան Մարսէյլի եւ Սէն Լուի մասնաճիւղերու տարեկան մեծ դաշտապարահանդէսը Ցուլիս 12ին, Կիրակի, Զօխուրեան Հայկազ ազարակին մէջ, Սէն Լու Կրան Փէն :

Մանրամասնութիւնները յայտնուած :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

60 տարեկան կին մը, լաւ յանձնարարականով, առանձին կնոջ մը տան համար : Դիմել «Յառաջ»ին :

ԿԱՐԴԱՑԷՔ

Վերապրելու համար 1915ի ողբեր – գութիւնը՝

Կարդացէ՛ք

Կ. ՓՕԼԱՏԵԱՆԻ

վէպը՝

ԱՐԾԻՒՆԵՐԸ ԱՆԱՊԱՏԻՒ ՄԷՋ

Դիմեցէք հայ գրավաճառներուն կամ ուղղակի հեղինակին՝

G. POLADIAN
53, AVENUE DE ST JULIEN MARSEILLE 12.

Գինն՝ 1000 Ֆրանք :

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Դատական վճիռի մը համաձայն բնակարանի ծանր տաղնապի մը մատնուած ըլլալով, կը փնտռեմ Փարիզի կամ արուարձաններուն մէջ առնուազն երկու սենեակ եւ խոհանոցով յարկաբաժին մը : Տեղեկացնել հասցէիս՝

A. KEMPETIAN
6, RUE D'ARRAS, PARIS-5e

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

"ՄԱՅԻՍ 28"Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միւնչեւ լոյս) : *Վեցերորդ թաղապետարանի սրահներուն մէջ, Փլաս Սէն Սիւլփիս :*

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Ցունիս 6ին, Շաբաթ իրիկուն, Գ. թաղապետարանի սրահին մէջ :

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Ցունիս 7ին :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ
ՄԱՐՍԷՅԼ
ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Այս Շաբաթ Երեքշաբթի ժամը 21ին Ֆրանսական Համալսարանի Ամփիթատրոնը, 40 Ալէ Լէօն – Կամպէյթա, Մարսէյլ :

Կը խօսի ՍԱՐԳԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ :

Նիւթ՝ Արտասանութեան արուեստը :

(Հայերէն եւ ֆրանսերէն կտորներով համեմատած) :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Կազմակերպուած Կապոյտ Խաչի Իսիի մասնաճիւղին կողմէ :

Մասնակցութեամբ Ալֆորվիլի թատերախումբին, կը ներկայացուի՝

ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

Այս Երեքշաբթի ժամը 21ին Իսիի Ա – լամպրա սինեմային մէջ :

Մեթրօ Մեռի տ'Իսի :

Տոմսերու գին՝ 500, 300 Ֆրանք :

Comité du Prix Brémond
ԵՒ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԻՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐ – ԿՈՒԹԵԱՆ

Դասախօսութիւնը՝

Երեքշաբթի Մայիս 12 ժամը 21ին :

SALLE DEBUSSY
(252 Պօպուռ Սէն Օնօռէ)

Կը դասախօսէ՝

MONSIEUR GRABAR
Membre de l'Institut
Professeur au Collège de France

«Հայկական միջնադարեան ճարտարապետութեան ֆաւի մը գլուխ–գործոցները» :

Մուտքերու մասնակցութիւն՝ 350 Ֆր. :

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ տեղւոյն Երիտ. Միութեան եւ Հովանաւորութեամբ՝ Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցւոյ հոգաբարձութեան

Երեքշաբթի, 12 Մայիս 1959, ժամը 21ին Քաղաքապետարանի սրահը Րիւ Վօլթէռ կը դասախօսէ ՓՐՈՖ. ՖՐԵՏԵՐԻՔ ՖԷՅՏԻ

Նիւթ՝ Հայ գրականութիւնը :

Մուտքը ազատ է :

ՅԵՑԱՆՕԹՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ

Ժանն Տէր Յակոբեանի կողմէ :

(Մարսէյլ քաղաքի մեծ մրցանակ, Մարսէյլի առեւտրական սենեակին առաջին մրցանակ չնորհաւորութիւններով) :

Մայիս 9էն 23 :

19 A, RUE VENTURE, MARSEILLE

Բացումը՝ Շաբաթ ժամը 18 – 21 :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՕՐ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Փարիզի Ակարոնեան խումբին

Շաբաթ, 16 Մայիս, ժամը 21էն միւնչեւ լոյս Սէրքլը Միլիթէռի շքեղ սրահներուն մէջ :

Խնամուած գեղարուեստական բաժին : Երգ, պար, արտասանութիւն, զաւեշտ :

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

JACQUES MORINOTի ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲՈՎ

Երգիչը՝ ԱԼՎԱՐԷԶ

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՆՈՐՀՔՆԵՐՈՒ եւ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՑԷԼ–ԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ :

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ, ԺԱՄԸ 20ԷՆ ԵՏՔ

Վարժարանի դալարագեղ պարտէզներուն մէջ :

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ
ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ

Ցունիս 10ին, Շաբաթ երեկոյեան ժամը 9ին,

ECOLE NORMALE DE MUSIQUE
78, Rue Cardinet. Paris

Կը մասնակցին

ՍԻՐԻ ԳՈՒԼՕ (բամբ Ջուլթակահար)
ՄՈՆԻՔ ՄԱԹԱՆԵԼ (դաշնակահար)

Երեկոյթը նուիրուած է զերման վիպական երաժշտութեան (ՇՈՒՄԱՆ, ՊԸ – ՐԱՄՄ) :

Առաջին ունկնդրութիւն ՄԱՐՍԷԼ ՏԸ ԼԱՆՈՒԱՑի վերջին մէկ դործին. Սիւլվամիք :

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՄԻՇՏ ԱՌՈՂՋ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ՝
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՌԵՑԷՔ

BOSPHORE ի
ՀԷԼՎԱՆ ԵՒ ԹԱՀԻՆԸ

ՀՐՈՒՇԱԿԸ, որ կը պատրաստուի շուշմայով (*սուսամ*) եւ շաբարով, առաջնակարգ սնունդ մըն է, կազդուրիչ՝ շնորհիւ շուշմային, որ Արեւելքի մէջ ծանօթ է նաեւ հիւնէն ի վեր, իր հրաշալի բուժական յատկութիւններով, իր երիտասարդացնող տարրերով,

Արեւելեան ժողովուրդներուն երկարակեցութիւնը արդիւնք է Հէլվայի եւ թահինի գործածութեան :

Այսօր Արեւմուտքի մէջ եւս բժշկական հեղինակութիւններ կը հաստատեն առաջնակարգ այս սննդանիւթին արժէքը :

Sté BOSPHORE (ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՏԱԴՐԻՉԸ)
2, Rue Louis Astoin - Marseille

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար· 4000 ֆր·վեց·2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր·

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
13
ՄԱՅԻՍ
MERCREDI
13 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8391 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4292

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐՁԱԿԷՏ ՄԸ

1958 *Մայիս 13ը յիշատակելի դարձաւ կէտ մը կը կազմէ Ֆրանսայի ժամանակակից պատմութեան մէջ :*

Այդ օրը Ալժէրի մէջ կը կազմուէր Համրային Փրկութեան Կոմիտէ մը, կը դրաւուէին կառավարական չէնքերն ու ձայնասփիւռի կայանը : Շարժումին ղեկավարը՝ զօրավար Մասիւ վերջնագիր մը կը ղրկէր Հանրապետութեան նախագահ Քոթիի, պահանջելով «Փարիզի մէջ ստեղծումը Հանրային փրկութեան կառավարութեան մը, որ միակը կրնայ պահել Ալժերիան, մայր երկրի մասնիկը » :

Ալժերիոյ ապստամբները նկատի ունէին Զօրավար Շառլ Տը Կոլը՝ իբրեւ «միակը որ կրնայ ձեռք առնել Հանրային փրկութեան կառավարութեան մը ղեկավարութիւնը » :

Շատ թարմ են տակաւին դէպքերը եւ հարկ չկայ մանրամասնելու զանոնք :

Ցիշեցնենք միայն, որ այդ օրերուն Ֆրանսա քաղաքական ներքին աննախընթաց տաղնապ մը կ'անցընէր :

Ապրիլ 15ին Ազգային ժողովը 255ի դէմ 321 ձայնով տապալած էր Ֆէլիքս Կայեառի կառավարութիւնը, որովհետեւ Ֆրանքեւթունուգեան վէճին կարդադրութեան համար անիկա ընդունած էր անդլեւամերիկեան «բարեխօս»ներու առաջարկները :

Դահլիճին հրաժարումով ստեղծուած տաղնապը դրեթէ մէկ ամիս պիտի տեւէր : Նախագահ Քոթի նոր կառավարութիւնը կազմելու պաշտօնը առաջարկած էր կարգով Ժորժ Պիտոյի եւ Փլեվէնի, որոնք ձախողեցան : Երրորդ թեկնածուն՝ Ֆլիմլէն նոյն բախտին պիտի արժանանար, եթէ չպատահէին Մայիս 13ի դէպքերը :

Ֆլիմլէնի դահլիճը Մայիս 13էն մին չեւ ամսագլուխ միայն ապրեցաւ : Իր գործը պիտի ըլլար ճամբայ չարդարել Զօր· Տը Կոլի իշխանութեան դլուխ դալուն :

Մայիս 13ը դարձակէտ մը եղաւ այն իմաստով, որ հիմնական փոփոխութեան ենթարկուեցաւ Ֆրանսայի ներքին վարչաձեւը :

Վերջ դուաւ Չորրորդ Հանրապետութիւնը՝ տեղը տալով Հինգերորդին : Մշակուեցաւ ու քուէարկուեցաւ նոր Սահմանադրութիւն մը : Գործադիր եւ օրէնսդիր իշխանութեանց իրաւասութիւնները սահմանուեցան համաձայն նոր մտայնութեան : Ֆրանսայի անդրծովեան հողամասերուն (նախկին գաղթավայրեր) հնարաւորութիւն տրուեցաւ անկախութիւն հռչակելու կամ Հասարակապետութեան մէջ մնալու :

Յաջորդաբար տեղի ունեցած հանրաքուէներուն ու ընտրութիւնները բոլորովին փոխեցին Ֆրանսայի դիմագիծը :

Այժմ արդէն նոր վարչաձեւը ամրապնդուած է : Երկիրը ամենայն վստահութեամբ իր ղեկը յանձնած է Զօրավար Տը Կոլի եւ կը հետեւի անոր ջատագոված քաղաքականութեան՝ ներքին եւ արտաքին ճակատներուն վրայ :

Ալժերիոյ ցաւոտ հարցը կը շարունակէ կազմել գործադիր իշխանութեան դլխաւոր մտահոգութիւնը :

Զօրավար Տը Կոլ՝ հետեւողական 1943էն ի վեր իր հետապնդած ուղղութեան — երբ քուէի իրաւունք չնորհեց Ալժերիոյ խալամներուն — ամէն բանէ առաջ կ'ուղէ պատուաւոր լուծում մը գտնել այս վէճին, որ չորսուկէս տարիէ ի վեր անհուն զոհողութեանց կ'ենթարկէ երկիրը :

Կ'ուղէ ամէն դնով խաղաղութիւնը վերահաստատել Ալժերիոյ մէջ, — «Քաջերու խաղաղութիւնը » : Կը գնահատէ յանուն ազատութեան կռուող մարդոց հայրենասիրութիւնը : Բայց միաժամանակ կը փափաքի, որ Ալժերիա անբաժանելի մասնիկն ըլլայ Ֆրանսայի :

Իր հիմնական ծրագիրը չկրցաւ ցարդ իրականացնել : Զանազան յայտնի ու դաղտնի ուժեր արդելք կը հանդիսանան անոր :

Հանրապետութեան նախագահը հաստատ կը մնայ իր ծրագրին վրայ եւ ամէն առթիւ-հանդիսաւորապէս կը յայտարարէ իր անխախտ հաւատքը՝ թէ խաղաղութիւնը չուտով պիտի վերահաստատուի հիւսիսային Ափրիկէի մէջ, պատուաւոր կերպով :

Անյողդողդ կը դիմակալէ բոլոր խոչընդոտներուն եւ դժգոհութեան հրաւէր կ'ուղղէ ամէն անոնց, որոնք Ալժերիոյ Ֆրանսացիները իր դէմ կը ցցեն :

Ալժերիոյ մէջ խաղաղութեան չուտատփոյթ վերականգնումը պատկումը պիտի ըլլայ Մայիս 13ի դարձակէտին :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԲՈՒՌՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԷ Ե�տՔ՝

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ Ա. ՆԻՍՏԸ ԺՐՆԵՒԻ ՄԷՋ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՑԱՑԱԻ

ՍԵՂԱՆԸ՝ ԿԼՈՐ

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ՝ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ցեղասպանութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով «Ձորս»ներու ժողով մը նախատեսուած ժամուն չդացուեցաւ : Բուռն վիճաբանութիւններ ծայր տուին Արտաքին Չորս Նախարարներու միջեւ, մինչ հակասական լուրեր կ'ընդհին :

Քանի մը վայրկեանէ, կամ, առաւելագոյնը՝ ժամ մը եւս կը հերքուէր նախորդ լուրը :

Մինչ կարդ մը թերթեր երկուշաբթի օր ժողովին բացումը կը նկարագրէին՝ վերջին պահուն ձայնասփիւռը կը յայտարարէր թէ Ֆ· Միւոլեթեան Արտաքին նախարար Կրոմիքօ նոր դժուարութիւն-ներ կը յարուցանէր եւ ժողովը կը դրուէր նուէր ձախողութեան սպառնալիքին ներքեւ :

Ժրնեւի քաղաքական շրջանակները պահ մը մտածեցին նոյնիսկ՝ որ բացումը երեքշաբթի օրուան պիտի յետաձգուի : Աւելի յոռետեսները կը յայտարարէին արդէն՝ թէ խղումը բացորոշ է :

Տպաղնապը ծագեցաւ հետեւեալ պայմաններու տակ :

Կէսօրուան մօտ՝ Ֆ· Միւոլեթեան Արտաքին նախարարը յայտարարեց թէ ժողովի սեղանը կլոր պէտք է ըլլայ եւ երկու Գերմանիաներու ներկայացուցիչները պէտք է մասնակցին... այլապէս ինք չի մասնակցիր :

Երեք Արեւմտեանները անմիջապէս հաւաքուեցան Անգլիոյ Արտաքին նախարար Լոյտի բնակարանը եւ կարճ խորհրդակցութենէ մը ետք որոշեցին տեղի չտալ :

Սելվին Լոյտ Կրոմիքոյի մօտ երթալով հաղորդեց, թէ Արեւմուտքը վճռած է չճանչնալ Արեւելեան Գերմանիոյ կառավարութիւնը : Եթէ Մոսկուա պնդէ փան-քովի մասնակցութեան վրայ՝ ապահովարար որեւէ համաձայնութիւն կարելի պիտի չըլլար դոյացնել :

Տուեալ պայմաններու մէջ Զուիցերիոյ Դաշնակցային Խորհուրդը ճաշ մը տուաւ Արտաքին Չորս նախարարներուն : Վիճաբանութիւնները չարունակուեցան հացի սեղանին չուրջ եւ վերջապէս համաձայնութիւն մը դոյացաւ :

Ժամը 14·30ին յայտարարուեցաւ թէ Կրոմիքօ կ'ընդունէր կիսապաշտօնական հանդիպումը մը ունենալ՝ Գերմանացիներու մասնակցութեան հարցը վերաքննելու համար :

« Կիսապաշտօնական հանդիպումը » տեղի ունեցաւ եւ ժամը 16ին Ֆ· Միւոլեթեան Արտաքին նախարարը յայտարարեց թէ կարելի եղած էր համաձայնիլ եւ ժողովը յետաձգելու հարց չէր մնացած :

Հետեւաբար, ժողովը բացուեցաւ նախատեսուածին պէս, ինչպէս դրած էինք, բայց փոխանակ ժամը 15·30ի՝ բացումը կատարուեցաւ ժամը 18·15ին, Համբրչոլտի բարիզալուստի ճառով :

Արդարեւ, չորս նախարարները համաձայնած էին հետեւեալ ձեւով ·—

1·— Արեւմուտքը կ'ուղէր որ ժողովի սեղանը քառակուսի ըլլար, Ռուսերը կը փափաքէին կլոր սեղանի մը չուրջ հաւաքուիլ : Կլոր սեղանը ընդունուեցաւ (խորհրդային յաղթանակ) :

2·— Ռուսերը կը փափաքէին որ երկու Գերմանիաներու ներկայացուցիչները հաւասարազօր իրաւունքներով մասնակցին ժողովին : Արեւմտեանները որեւէ ձեւով չէին ուզեր ճանչնալ Փանքովի կառավարութիւնը : Որոշուեցաւ Գերմանացիները հեռու պահել կլոր սեղանէն (Արեւմտեան յաղթանակ) :

Հետեւաբար, Արեւելեան եւ Արեւմտեան Գերմանիոյ ներկայացուցիչները ժողովի սրահը պիտի մանեն իբրեւ խորհրդական : Ասոնք կրնան առնել միայն այն ատեն՝ երբ չորս նախարարները համաձայն դտնուին : Կրնան պատասխանել նաեւ իրենց եղած հարցումներուն :

Այսքանը պահպանուիչ կը համարուի առայժմ :

Բ· նիստը տեղի պիտի ունենար երեքշաբթի ժամը 15·30ին :

Բայց սեղանին եւ Գերմանացիներուն չուրջ ստեղծուած համաձայնութեամբ տարակարծութիւնները հարթուած չեն :

Ժամէ – ժամ կը սպասուի որ Կրոմիքօ Լեհաստանի եւ Չեխոսլովաքիոյ հարցը արծարծէ, նոր վիճաբանութիւններու տեղի տալով :

Լաւատեսներու կարծիքը այն է, թէ առաջին համաձայնութենէն ետք կարելի է լուծել նաեւ այս տարակարծութիւնը՝ տաք բանալէզ մը ետք :

× *Համայնավար մամուլը աւելի քան երբեք կը չեչտէ Արեւելեան Գերմանիոյ դերը Եւրոպայի մէջ : Երկուշաբթի օր «Փրաւտա»ն ոչ մէկ ակնարկ կ'ընէր Կրոմիքոյի ղրած պայմանին մասին բայց արձադանգ կը հանդիսանար «Թրիպիւն տը Ժընեւ»ի մէկ յօդուածին, որուն խորագիրն է՝ «Արեւելեան Գերմանիան մուտք կը դործէ քաղաքական աշխարհին մէջ» :*

Յօդուածադիրը ղրած է նաեւ.— «Ա. Բեւմուտքի մէջ բաղմաթիւ են անոնք որոնք կ'ընդունին թէ դերմանական ժողովրդավար հանրապետութիւնը իրակա-նութիւն մըն է » :

Արեւելեան Գերմանիոյ համայնավար պաշտօնաթերթը՝ « Նոյըս – Տոյչլանտ » ուրախ է որ Փանքովի կառավարութիւնը ներկայ է Ժընեւի ժողովին :

Ընդհանուր ձեւով համայնավար մամուլին կարծիքը Ժընեւի ժողովին մասին բաւական կծու է : «Փրաւտա» կը դրէ թէ Արեւմտեաններու ծրագիրը իրատես որ եւ է հիմ չունի եւ ցոյց կուտայ թէ Ա. Բեւմուտքի քաղաքագէտները «Նորութեան դաղափարն իսկ կորսնցուցած են» : «Նոր Չինաստան» մամուլի գործակալութիւնը յայտարարած է «Ժընեւի մէջ անհաճոյ բաները նոր սկսան » :

Ամերիկեան մամուլը խստօրէն կը քննադատէ խորհրդային դիրքը :

ԱՆԳԼԻԱ ՆՈՐ ՉԷՆՔԵՐ ԿՈՒՏԱՑ ԻՐԱՔԻ

«ՈՐՊԷՍԶԻ ԲԱՄԲՄ ՊԱՀԻ ԻՐ ԱՆԿԱԽՕՒԹԻՒՆԸ »

Արտաքին նախարար Լոյտի բացակայութեան՝ Փրոսիւմօ բրիտանական Խորհրդարանին մէջ յայտարարեց թէ Լոնտոնի կառավարութիւնը որոշած է նոր չէնքեր տալ Իրաքի :

Տրուելիք չէնքերուն քանակութիւնը սահմանափակ պիտի ըլլայ :

Այս հարցին չուրջ իր համաձայնութիւնը յայտնած է նաեւ Պարսկաստանի Շահն ու Յորդանանի Հիւսէյն Թագաւորը խորհուրդ տուած էին որ նոր չէնքեր չյանձնուին Քասըմի : Իրաքի մէջ համայնավարութիւնը կը չարունակէ հող չահիլ եւ բրիտանական չէնքերը պարզապէս պիտի օդտուին ի չահ կարմիր քարոզիչներու :

Անգլիոյ Արտաքին նախարարութեան բանբերը յայտարարեց նաեւ թէ Վարչապետ Քասըմ նոր չէնքեր ուղած է Լոնտոնի կառավարութենէն : Նկատի առնելով որ Անգլիա ցարդ միակ հայթայթիչն էր Իրաքի, պատճառ մը չկայ որ նոր չէնքերու առաքումը դադրեցնէ : Աւելին՝ որ պէտք միջազդային ճակատի վրայ Զօր· Քասըմ կարենայ պահել իր «անկախ» դիրքը՝ բրիտանական չէնքերը անհրաժեշտ են : Պէտք չէ մոռնալ նաեւ, որ Իրաքի Վարչապետը իշխանութեան տիրացած օրէն ի վեր պաշտօնապէս չէ դադրած իր «անկախ»ութենէն :

Այս բոլորը պատճառներ չեն սակայն՝ որ Անգլիոյ Արտաքին նախարարութեան մէջ որոշ դժդոհութիւններ ըլլան տրուած որոշումին հանդէպ : Դժդոհները դիտել կուտան, թէ կառավարութիւնը այդքան արագ չարժելու պատճառ մը չունէր, քանի որ Իրաքի անստոյգ կացութիւնը ծանօթ է բոլորին :

Այս վերջինները կը չեչտեն նաեւ կարեւոր ուրիչ պարագայ մը : Քասըմի ղէնք տալով՝ Եղիպտոսի հետ «մերձեցման » բոլոր կամուրջները կրնան քանդուիլ :

Անդրադառնալով այս մտահոդութեան՝ բանբերը ըսաւ թէ Նախագահ Նասըր լուր տրուած էր նախապէս : Անդլիա վստահեցուցած է նաեւ՝ թէ նոր չէնքերը որեւէ ձեւով Արաբական Միացեալ Հանրապետութեան դէմ պիտի չգործածուին :

Գահիրէի կառավարութիւնը թշնամական մը պէտք չէ դտնէ Իրաքի տրուած անդլիական չէնքերուն մէջ, քանի որ կացութիւնը աւելի կրնայ վտանգուիլ՝ երբ Քասըմ ուրիչ տեղ դիմէ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԿԻՆ ՎԱՐԶԱՊԵՏ Մենէս – Ֆրանսի մասին դիրք մը հրատարակուած է վերջերս «Մենէս – Ֆրանս կամ Կատաղրոսի արհեստը» որուն հեղինակն է՝ Նիքօլէ : Փէէր – Հանրի Սիմոն յառաջաբանին մէջ քննելով արմատական պարագլուխին պարագան, անոր հրեայ ըլլալուն կը վերագրէ քաղաքական ձախողութիւնը : Սիմոն կը դտնէ թէ կարեւոր հակահրեայ հոսանք մը կայ Ֆրանսայի մէջ հակառակ երեւոյթներուն, թէեւ, կ'ակնկալէ հեղինակը, ներկայ վարչապետը՝ Տրպրէ հրեայ մըն է :

ՊԵԼԺԻՈՑ Գօտուէն Թագաւորը Ուշինկթըն հասաւ, ուր ընդունուեցաւ Այդընհաուըրի կողմէ :

ՓԱՐԻԶԻ օդոպիւսներու դործադուլը ձախողեցաւ : Երեքշաբթի օր 2146 հանրակառքի վրայ 2039ը կը չարունակէին իրենց երթեւեկը· հետեւաբար՝ բանթող-ներու փոքր թիւը որեւէ ձեւով ազդեցութիւն չդործեց երթեւեկի կանոնաւորութեան վրայ :

(Լուրերու շար·ը կարդալ Դ· էջ)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Հիմա, եթէ, փոխանակ լատիներէնէ ղէպի իտալերէն, կամ լատիներէնէ ղէպի Ֆրանսերէն եւայլն ուղղելու մեր հետա – զօտութիւնները, սկսինք իրարու հետ զուգադրել լատիներէնէ սերած այս նոր լեզուները, կը նշմարենք որ այս նոր – լատինական լեզուներուն մէջ զանուող այն ձեւերը որոնք լատիներէնի միակ ձե – ւէ մը առաջ եկած են, որոշ նմանութիւն – ներ կը ներկայացնեն իրարու մէջ, որոնց համապատասխանութիւնները բոլորովին կանոնաւոր են: Որպէսզի կարենանք ա – պահովաբար ըսել որ երկու կամ աւելի լեզուներ աղգակցութիւն մը ունին իրենց մէջ, պէտք է որ կարելի եղածին չափ չատ ձեւերու համապատասխանութիւն – ներ կարենան ստուգուիլ:

Քանի որ աղգակից լեզուներուն մէջ ներկայացուած ձեւերը այլափոխութիւն – ներն են միակ նախնական ձեւի մը, կա – րելի ըլլալու է զանոնք բաղդատելով մօ – տաւորապէս գուշակել թէ ինչ էր այդ նախնական ձեւը որ իր մէջ կարելիութիւ – նը կը պարունակէր այս զանազան այլա – փոխութիւններուն: Օր. եթէ բաղդատենք Ֆրանս. սէրֆ, իտալ. չէրվօ, սպան. թէրվօ (1) պորտուկ. սէրվօ, ռում. չէրպ, հրեաերէն չէրֆ, լոգուդորերէն fեբպու, կը գուշակենք որ առաջին հըն – չիւնը, որ փոխուած է Չ, Ս, Թ, Ֆ հըն – չիւններուն պէտք էր ըլլար առաջաւոր Ֆ մը, — երկրորդ հնչիւնը, է, գրեթէ ա – նայլայլ մնացած է ամէն լեզուի մէջ, — երրորդը՝ Ր էր, — չորրորդը, Պ, Վ, եւ Ֆ հնչիւններով ներկայացուածը միայն Վ կրնայ եղած ըլլալ, — վերջին ձայնա – ւորը, Օ կամ ՈՒ, տարակուսական կը մնայ, բայց կ'անդրադառնանք որ որոշ բարբառներ վերջին վանկին ձայնաւորը կորնչացուցած են: Ենթադրաբար վերա – ստեղծուած ձեւը, fէրվօ կամ fէրվու բաւական ճիշդ է, քանի որ դիտենք որ

Սանսկր. հնդկ.	—mi	—si	—ti	—mas	—tha	—anti
Ցուն.	—mi	—si	—ti	—men	—te	—nti
Հայ. գրաբար	—մ	—ս	—յ	—մք	—յք	—ն

Երրորդ դէմքին հայ. Ց կը համապա – տասխանէ ձայնաւորներու միջեւ դըս – նուած հնդեւրոպական Դի մը, ինչպէս կը յայտնուէր ԲԱԴԻՐ – ՀԱՑՐ ձեւերուն բաղդատութեամբ: Ցոդնակի առաջին եւ երկրորդ դէմքերուն ձեւերը վերանորո – գուած կրնան ըլլալ հայերէնի մէջ եւ հնդեւրոպականին չեն համապատասխա – ներ: Ինչպէս Ֆրանսերէնը լատիներէնին, հայերէնը հնդեւրոպական լեզուին բառե – րուն վերջին վանկին կամ լոկ ձայնաւորը, կամ ամբողջութիւնը ջնջած է:

Համապատասխանութեան օրինաչափու – թիւնները քննելէ դատ, հնդեւրոպական քերականութեան մասնագէտները աշխա – տեցան նաեւ վերականգնել հնդեւրոպա – կան լեզուին նախնական ձեւերը:

Այս դիտութիւնով կը բացատրուին կարգ մը առեղծուածային հարցեր զորս կը ներկայացնեն որոշ լեզուներ եւ որոնց լուծումը՝ սոյն լեզուներուն քերականու – թիւնները չեն տար:

Օրինակի համար, հայերէնի հոլովման յատուկ յօրինուածքով կարելի չէ բա – ցատրել թէ ինչո՞ւ համար ՀԱՑՐ բառին սեռականը կ'ըլլայ ՀՕՐ եւ ԱՑՐ (ՄԱՐԴ) բառինը՝ ԱՌՆ մինչդեռ (ՔԱՐ) ԱՑՐ բա – ռին սեռականը կ'ըլլայ կանոնաւորապէս, ըստ հայերէնի հոլովումին՝ ԱՑՐԻ: Բաղ – դատելով մէկ կողմէն յունարէն, լատինե – րէն եւ հայերէն՝

pater	patr(os)	
pater	patr(is)	aratr(um)
հայր	հաւր=հօր	արաւր=արօր,

կը տեսնենք որ հայերէն Իր (այսինքն Վր) կը համապատասխանէ հնդեւր. Դրի, այնպէս որ ՀԱՑՐ բառին սեռականը 20րդ դարուն մէջ անգամ կը կազմուի հին հնդ – եւրոպական սիսթէմին համեմատ եւ որ ինչ որ հայերէնի յատուկ է այդ ձեւին մէջ պարզապէս հնդեւրոպական ձեւին հն – չիւնական այլափոխութիւնն է: Միւս կող – մէն, եթէ բաղդատենք յունարէն եւ հա – յերէն ուղղականի եւ սեռականի ձեւերը ԱՑՐ բառին

aner	an(d)r(os) (2)
այր	առն

Կը հասկնանք նոյնպէս որ այս սեռակա – նի ձեւը նախահայկական լեզուին կը պատկանի: Ուրիշ չատ մը հարցերու լու – ծումը կը բերէ համեմատական քերակա – նութիւնը:

(1) Այս եւ հետեւեալ օրինակներուն մէջ, տառադարձութիւնը եղած է արեւ – մըտեան հայերէնի հնչիւնաբանութեան համեմատ: Այս բառին մէջ բոլորագիր Ց-ն արդի յունարէնի թեդային հնչիւնը կը ներկայացնէ:

(2) Վերջաւորութիւնը վերցնելու է, քանի որ հայերէնի մէջ կը կորսուի: Ն եւ

ՍԱՀԱԿԴՈՒԽՏ
ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԿԻՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾ – ԵՐԱԺԻՇՏ

Մեր հին գրականութեան պատմութեան մէջ 8րդ դարը զգալիօրէն աղքատ է, եւ դրա պատճառն, անշուշտ, արաբական արշաւանքների հետեւանքով հայ ժողո – վուրդի համար ստեղծուած անբարենը – պաստիրազարձութիւնն էր: Եթէ դար – բում յիշատակուում են քան – քանըչորս դրող ու դիտնական, ապա 8րդ դարում մենք հանդիպում ենք աչքի ընկնող մի – այն մի քանի անունների՝ չարականների հեղինակ Օհան Օձնեցի, երաժշտագէտ Ստեփանոս Սիւնեցի, պատմիչ Ղեւոնդ վարդապետ: Դրանց կողքին ահա, մի դե – ղեցիկ անուն՝ Սահակդուխտ. դա Դուին մայրաքաղաքի աւազ քահանայի աղջիկն է, վերեւում յիշուած Ստեփանոս Սիւնե – ցու կրտսեր քոյրը: Եղբայր ու քոյր օժ – տուած են եղել խօսքի ու երգի չնորհ – քով: 13րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելեանը հիացմունքով է խօսում Սիւնե – ցու մասին: «Սա, — ասում է պատմիչը, — Դուինի մայրաքաղաքի աւազ երէցի որդին էր... Գրեց չատ ճառեր, բաժա – նեց ութ եղանակները (եկեղեցական) ... երգեց քաղցրահամ երգեր ...»: Սիւնե – ցու մասին ոգեւորութեամբ պատմում է նաեւ Կիրակոս Գանձակեցին:— « Մեծ Ստեփանոս Սիւնեցին գրեց չարականներ, կցուրդներ, հոգեւոր եւ այլ երգեր՝ քաղ – ցրը եղանակներով »... Գրագէտ ու երա – ժշտասէր էր նաեւ Ստեփանոսի եւ Սա – հակդուխտի հայրը: Ահա այդպիսի մի մշակութային բանիքում ամեց ու զար – գացաւ մեր առաջին կին բանաստեղծը: Բայց ախտս, որ ինչքան չատ են տեղե – կութիւնները Ստեփանոս Սիւնեցու կեան – քի ու գործունէութեան մասին, այնքան քիչ են տուեալները նրա քրոջ՝ Սահա – կդուխտի վերաբերեալ:

Միայն մէկ – երկու փոքրիկ տեղեկու – թիւն Սահակդուխտի մասին տալիս է Նոյն Ս. Օրբելեանը՝ այն էլ կապուած նրա եղբօր հետ: « Էր սորա քոյր մի՝ ի մանկութենէ ստացեալ ըղմարս կուսու – թեան եւ առանձնացեալ ի ձորակին Գառ – նւոյ յայրի միոջ... որոյ անուն Սահակ – դուխտ» («Սա մի քոյր ունէր, որ ման – կութիւնից կուսութեան կեանքն էր ըն – տրել եւ առանձնացել Գառնիի ձորակի այրերից մէկում. նրա անունը Սահակ – դուխտ էր»): Բայց յօրինելու ու երգելու ձիրքերով օժտուած այս աղջիկը լուռ ու անգործ չի մնացել Գառնիի ձորում: Եմբերով տղաներ ու աղջիկներ էին դա – լիս այդ ձորը՝ Սահակդուխտի մօտ, երգ – ում ու երաժշտութիւն սովորելու: Սեւասքեմ կոյսը նստում էր քարայրի մուտքից կախուած վարագոյրի ետեւ եւ այնտեղից սովորեցնում իր աշակերտներին:

Ս. Օրբելեանի հետեւեալ տողերը ցոյց են տալիս, թէ Սահակդուխտը եղել է եւ երաժիշտ, եւ՛ բանաստեղծ: «Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ ի ներքոյ վարագուրի նստեալ՝ ուսուցանէր զրաղումս ... եւ արար կցուրդս եւ մե – ղեդիս քաղցրելանակս, որոյ մին՝ սրբու – հին Մարիամ, որ իւր անուամբն է յօրին – եալ»: Ուրեմն Սահակդուխտը գրել է նա – եւ բանաստեղծութիւններ, որոնցից մէկը՝ նուիրուած Մարիամ Աստուածածնին, ըստ պատմիչի եղել է անուանակապով գրուած, այսինքն՝ անների կամ տողերի առաջին տառերից գրողի անունն է կազմուել:

Սահակդուխտի այդ բանաստեղծութիւ – նից մեզ հասել է միայն առաջին տունը, ընդամէնը վեց տող:

Սրբուհի Մարիամ սափոր ոսկի
Եւ տապանակ կտակարանաց,
Որ զի վերուստ գիացն կենաց
Պարգեւեցիր բաղցեալ բնութեանս,
Առ նա միշտ բարեխօսեա
Վասն բաւութեան մեղաց մերոց:

(Սրբուհի Մարիամ ոսկի սափոր
Եւ ուխտերի սրբութիւն.
Քանի որ վերեւից կեանքի հացը
Պարգեւեցիր բաղցած մարդկութեան
Նրա առաջ միշտ բարեխօսիր
Մեր մեղքերի բաւութեան համար):

Բանաստեղծութեան այս բեկորից էլ երեւում է, որ Սահակդուխտը լաւ ծանօթ է եղել մեր չարականների «Մեծացուցէ» կոչուող տեսակին, որոնք նուիրուած են Մարիամ Աստուածածնին: Այդ են ասում ակնյայտ նմանութիւնները: Հաւանական է, որ Սահակդուխտը, իրօք, գրել է չատ մեղեդիներ ու չարականներ, որոնք մեզ չեն հասել, կամ հասել են, բայց Շարակ – նոցի մէջ (եկեղեցում երգուող չարական – ների ժողովածու) դեռ եւս անյայտ են:

Մեր Շարակնոց կոչուող գրքում կայ մի դեղեցիկ, հայրենասիրական չար – կան՝ նուիրուած 8րդ դարի հայրենասէր նահատակ Վահան Գողթնեցուն, որի մա – սին, ի դէպ, ասենք երկու խօսք:

704 թուականին Վահան Գողթնեցուն ուրիշ չատ հայ մանուկների հետ արաբ – ները գերի տարան Դամասկոս, հաւա – տափոխ արին եւ անունն էլ փոխեցին Կո – չեցին Վահապ:

Երբ Վահանը մեծացաւ, կրթութիւն ստացաւ, իմացաւ, որ ինքը եղել է հայ եւ Գողթնեայ Յոսրով իշխանի որդին, ո – րին 704 թուին ուրիշ չատ հայ իշխան – ների ու նախարարների հետ այրել էին Նախիջեւանի տաճարում: Ամիրապետը ոչ պաշտօնով եւ ոչ էլ ուրիշ խոստումներով չկարողացաւ դայթակղեցնել հայրենասէր երիտասարդին, որ ուրանայ իր ազգն ու կրօնը եւ ընդմիշտ մնայ խալիֆաստում

Ր հնչիւններուն մէջ գտնուած Տը ատել – ցուած է նն րէն բաժնելու համար ինչպէս ռամիկ ժողովուրդը կ'ըսէ *մանորուկ* բա – ոին մէջ: կը մնայ ԱՆՐ որ շրջումով կը դառնայ ԱՐՆ եւ ԱՒՆ:

ՓՐՈՖ. Ֆ. ՖԻՑՏԻ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՑՈՒՇԱՏԵՏՐԸ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ

«ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ԻՐԱՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ – ԹԻՒՆԸ»·— «ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂ – ԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԸ »·— «ՀԱ – ՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒ – ԹԵԱՆ» Ա. Բ. ԵՒ Ե. ՀԱՏՈՐՆԵՐԸ:

●

Գրականութենէն քաղաքականութիւն, ինչո՞ւ այս զառիթափը, այս անկումը, եւ Օշականի կողմէ, ուղղուած մեր հե – րոսներուն, որոնք ինկան թշնամիին դնդակէն կամ կախաղաններու վրայ, որ – պէսզի Օշականները վանքերու մէջ նըս – տած, ազատ համարձակ գրականութիւն ընեն: Ինչո՞ւ եւ որո՞ւ համար այս զառ – նութիւնը մէկու մը կողմէն, որ բոլորէն աւելի փնտռուած ու վարձատրուած զա – սախօսն ու գրագէտը եղաւ: Սփիւռքի բովանդակ կեանքն է որ իր գրչին տակ կուզայ խարանուելու. «Մենք աւելի չենք կարող ըլլալ քան պայմանները որոնց ե – կաք օդակին է անցուած ամէն սիրտ, սա մեր աշխարհէն» (էջ 52): Արդ, այս տողերը գրողը ինչպէս կրնայ խստագոյն դառնալ եւ Սփիւռքի գրողէն պահանջել աւելին, երբ դիտենք թէ ինչպիսի երկաթ օղակներու ծանրութեան տակ կը հեւայ ան: Սփիւռքի ամէն գրող իր ողբերգու – թիւնն ունի, ոչ նուազ քան Վ. Թէքէեանն ու Յ. Օշականը:

Դարձեալ ակնարկութիւններ, յետին միտքեր, որոնք չենք դիտեր թէ որոնց ուղղուած են եւ որոնք գրական քննադա – տութեան էջերը կը վերածեն հաշիւ – ներ մաքրելու ... « Օ՛, կատակերգու – թիւնը բոլոր ազգային նման փառքերուն, չինուած սուտէն ու փուտէն: Շինուած մանաւանդ խեղճ, անպաշտպան զոհերու ոսկորներէն: Օ՛, անզգամ, անաստուած լրբութիւնը մեր մտնետիկներուն, որոնք վաւերական, անվերածելի աղբակոյտը կը փոխակերպեն փառաց կաթողիկէի մը»(էջ 83):

Զգալի է Օշականի դառնութիւնը, այն օրերուն երբ հիւանդութեան մը ճանկե – րուն մէջ կը զալարուէր եւ որուն արձա – գանդները կուտար մեղի տասնեակ մը է – ջերով, մանրամասնօրէն մեկնաբան – ուած. «պիտեմ սակայն թէ ինչ կ'ընեմ» կը գրէր. ընթացք տուի իմ ապրումնե – րուն. վասն զի այնքան անհերքելի կեր – պով ստոյգ է որ անոնք ապրումներն են ըլլալու բոլոր անոնց, որոնք ապաժամ այ – ցելութիւնը կ'ընդունին խորհրդաւոր նա – ւորդին» (էջ 100):

×

Սփիւռքի բանաստեղծութեան եւ բա – նաստեղծներուն մասին Օշական լայնօրէն կը զբաղի իր «Սփիւռքը եւ իրաւ բանաս – տեղծութիւնը» հատորին մէջ:

Այս հարցերուն եւ ընդհանրապէս Օշա – կանի վերջին տասնեակ մը հատորներուն արձարձած գրական հարցերուն մասին դրեթէ ոչ ոք արտայայտուած է: Մանա – ւանդ իր մահէն ետք, բերանները կղպը – ւած են եւ ոչ ոք անդրադարձած է «Օշա – կանի հէքեաթին»:

Փարիզի գրական սերունդին մասին գը – րեթէ միշտ բացասական վերաբերում ու – նեցած է: Իր մասին նախատուոր կամ ան – նպաստ գրուածքները չվարդալէ դատ, հեղինակներուն գործերը կարդացած ըլ – լալու հետքերը չենք գտներ իր բազմա – թիւ հատորներուն մէջ: Նոյն բանը չենք կրնար ըսել «Զարթօնքի սերունդին» իրապաշտներուն եւ բազմաթիւ ուրիշ մե – նագրութիւններուն եւ գրական չրջանն – րուն մասին, որոնք՝ Օշականի ունեցած հետաքրքրութիւններէն վկայութիւններ կը բերեն: Տեսակ մը նախապաշարում վարակած է դինքը, քանի մը աննշան գրական կարծիքներ արտայայտելով մէկ – տեղ, աւելի չատ բացասականութիւն մը վերագրած է սերունդին: Ի՞նչ կը գրէր Փարիզի տղոց մասին.— « Քսան տարին բաւ եղաւ որպէսզի Փարիզի չքեղ սերուն – դը հիւծած ներսէն, անպաշտպան դուր – սէն, զառածի կամ չիշխի » (էջ 3):

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

(10 Շար.)

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՀԱՆԴԷՍԸ

●

Ֆ. Կ. Խաչի Իթալիի մասնաճիւղի վարչութեան կազմակերպած հանդէս – ներ – կայացումը տեղի ունեցաւ Կիրակի, Ապրիլ 26, կէսօրէ ետք՝ Պիսէթթի Ֆրանսացի վարդապետներու սրահին մէջ։

Ընկ. Ս. Յովհաննէսեան իր բացման խօսքով ներկայացուց Կապ. Խաչի բարեսպատակ եւ ազգօգուտ գործունէութիւնը,— իր ուժերուն սահմանով ան կը հասնի թաղի աղքատներուն, անկարներուն եւ հիւանդներուն, առանց խտրութեան ։ Կոչ ըրաւ թաղեցիներուն՝ բոլորուիլ Ֆ. Կ. Խաչի չուրջ, որպէսզի ան կարենայ լաւագոյնս կատարել իր գործը ։

Գործադրուեցաւ զեղարուեստական կտիկ յայտագիր մը։

Երգեցին՝ Տէր եւ Տիկին Մարտիրոս Գարակէօզեան, Օր. Ա. Քէօսէեան, Օ. Ալթունեան եւ Յ. Սալանճեան՝ արժանապատիւ ներկաներու գնահատութեան ։

Օր. Շ. Յովհաննէսեան արտասանեց Ա. Իսահակեանի «Հայաստանին» եւ Ս. Յովհաննէսեանի «Նոր Սերունդին» քերթուածները։ Պ. Ա. Պաղտասարեան պարեց կովկասեան երկու սրապարեր՝ արժանանալով բուռն ծափերու ։

Կարճ դադարէ մը ետք Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Առնուվիլի «Կռուվարենց» խումբի կողմէ ներկայացուեցաւ «Թորոս Տառան», մօտ մէկ ժամ խնդացնելով ներկաները ։

Քաջալերելի են Խաչուհիները, որ այս ձեռնարկով կարողացան որոշ գումար մը հայթայթել՝ օգնելու համար անտէր ու անպաշտպան հիւանդներուն ։

Ձեռնարկը յաջողութեամբ պսակուեցաւ։

ԹԱՂԵՑԻ

ՋԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՍԳԱՏՕՆԸ ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

★

ՏԷՍԻՆ, (Յատ.)։— Ապրիլեան Եղեռնի 44րդ տարեդարձի առթիւ՝ մեր անթաղ նահատակներու յիշատակին նուիրուած հանդէսը տեղի ունեցաւ Մայիս 3ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին Հ. Յ. Դ. Տան մէջ։

Իսկ Մայիս մէկին, Ուրբաթ առաւօտեան, չնորհիւ տեղւոյս կրօնական ընկերութեան ջանքերուն, հոգեհանգստեան պատարագ մատուցուեցաւ եղեռնի զոհերուն համար, Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ ։

Այս տարի սգահանդէսին նախաձեռնութիւնը ստանձնած էր տեղւոյս Հ. Յ. Դ. Նոր Սերունդի մասնաճիւղը ։ Այս պարագան ինքնին ապացոյց մըն է որ օտար երկնքի տակ հասակ նետած սերունդը կը հետաքրքրուի ազգային կեանքով եւ պատրաստ է յաջորդելու իր նախորդ սերունդին ։

Սգատօնին իրենց մասնակցութիւնը բերած էին Վասպուրականի երիտասարդական երկսեռ Միութիւնը, Տարօն – Տուրուբերանի, Խարբերդի հայրենակցական միութիւնները, Սեբաստիոյ Նահանգային « Մուրատ » Ուսումնասիրաց Միութիւնը, Կրօնական Ընկերակցութիւնը, Ֆրանս. Բանակի Հայ Նախկին Ռազմիկներու եւ Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու զոյգ միութիւնները, Ֆրանսահայ Կապ. Խաչը, զպրոցին կրթական մարմինը, Հ. Մ. Ը. Մ. Ը. եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Օրուան նախագահ Լեւոն Աստուրեան, իր բացման խօսքով ուրուագծեց արիւնաթոր Թուրքին գործած խժդժութիւնները, հայութեան կրած տառապանքն ու մարտիրոսացումը։ Ինդրեց ներկաներէն մէկ վայրկեանի յոտնկայս լռութեամբ ոգեկոչել մեր բիւրաւոր զոհերուն խնկելի յիշատակը ։

Գեղարուեստական պատչաճ բաժին մը պատրաստուած էր։

Արտասանեցին՝ աշակերտուհիներ Թագուհի Սալլապաշեան, Նուարդ Գալուստեան, Ալիս Պօտուրեան, Տիրուհի Պարտաքճեան, Տիգրանուհի Պօղոսքեան, եւ օրիորդներ Թագուհի Պապիկեան (ՆորՍերընդական), Բրաբիոն Տաղաղեան եւ փոքրիկն Դաւնիկ Սաղաթելեան ։

Բոլոր արտասանութիւնները ալ եղան սահուն առողանութեամբ, անսխալ ու դպացումով, որոնք յուզումի և հաղորդակցութեան մթնոլորտ մը ստեղծեցին ։

Քնքոյշ ձայնով մը մենակրեց Օր. Ան – ժել Կարապետեան ։

Օրուան բանախօսն էր Լիոնի Ազգ. Մխութեան նախկին Ազգ. Կիւլպէնկեան, որ կենդանի օրինակներով անդամ մըն ալ պարզեց մեր անարդ թշնամիին Հայրենիքը բնաջնջելու նպատակով ի գործ դրած քաղաքականի, անմարդկային արարքները ։ Պախարակեց «քաղաքակիրթ» կոչուած քրիստոնեայ ազգերը, որոնք լուռ ականատեսները եւ պատասխանատուները հանդիսացան Հայուն կրած մեծ ոդբերդութեան։ Թուրք վայրագ ցեղը, մնայ ապիկար, անընդունակ, զազանային բնազդով ու նկարագրով ։ Ոչ մէկ յառաջդիմութիւն արձանագրեց քաղաքակրթութեան ճամբուն վրայ ։ Մինչդեռ Հայը, հակառակ իր անհաչուելի կորուստներուն, զարթեալ լեցուց ստեղծուած պարապը, կերտեց իր հայրենիքին կորիզը, ուր այժմ ժողովուրդը կը ստեղծագործէ ու երկիրը կը բարգաւաճի ։

Յարդելի բանախօսը իրրեւ պատգամաւոր կաթողիկոս ։ ընտրութեան՝ Հայաստան այցելած ըլլալով, տուաւ իր ակնատեսի վկայութիւնները հայրենիքի վերելքին մասին, նաեւ՝ արտասնդիչ, ուրախալի տեղեկութիւններ ։

Ապա, եղրափակելով իր մտածումները, բաղձանք յայտնեց որ Ապրիլեան զոհերը ունենան իրենց յուշարձանները կեդրոնական քաղաքներու մէջ։ Նաեւ սպասուհներու առթիւ բողոքի բանաձեւեր յղուին բոլոր պետութիւններուն, ներկայացնելով մեր ազգային պահանջները։

Լիոնի քահանաներէն Տէր Թորգոմի « Պահպանիչով» ու բոլորին կողմէ երգուած Տէրունական աղօթքով վերջ գտաւ հանդէսը, անդամ մըն ալ ամբապնդելով մեր յոյսերն ու հաւատքը՝ լուսաւոր ապագայի մը համար ։


× Սեբաստիոյ Նահանգ. «Մուրատ» Ուսումնասիրաց Միութեան տեղւոյս մասնաճիւղը Ապրիլ քառեակի երեկոյեան կազմակերպած էր Շիրվանզատէի «Պատուի համար» ժապաւէնի ցուցադրութիւնը, ի նպաստ իր առաջադրած կրթական նպատակներուն։ Երեկոյթը անցաւ յաջող ։

Գ. Պ.

ԼԸ ՖՈՑԻ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԸ

★

« Ծառաջ »ի ընթերցողները վերջերս տեսան թերթին Դ. էջին վրայ, Լը Ֆոյի բանակումին ծանուցումը ։ Մեր դեղեցիկ բանակավայրը կը գտնուի Իզեռ նահանգին մէջ, Կրընոպլէն 35 քիլմ. դէպի Մարսէյլ, Մոնէթիէ տը Քլեռմոն մօտ, Լը Ֆօ գիւղին մէջ։ Բանակավայրը ունի մօտ ինը հարիւր մեթր բարձրութիւն, մէկ հեքտար հող, չորս հազար մ. պուրակ, պտղատու ծառեր եւ գուլալ ջուրի աղբիւրներ ։ Դղեակը ունի 12 սենեակ, ընդարձակ ճաշարան մը, մեծ խոհանոց մը ամէն յարմարութիւններով,



երկու մեծ ննջարաններ, լուացարան, լեկտրականութիւն եւ հեռաձայն։ Երջանպատուած է Ալպեան լեռներու ձիւնազարդ գագաթներով։ Կը գտնուի Մարսէյլի ճամբէն երկու հարիւր մ. հեռաւորութեան վրայ ։ Շոգեկառքի ամենամօտիկ կայարանն է Մոնէթիէ տը Քլեռմոն որ կը գտնուի չորս քլմ. անդին։

Բանակումի ընթացքին կը լարենք նաեւ ամերիկեան զինուորական վրաններ եւ մահճակալներ, ընդունելու համար հարիւրէն աւելի հայորդիներ ։

Բանակավայրը գնուեցաւ 23 Սեպտեմբեր 1957ին երիտասարդութիւն եւ Գործ (Թէօվէս է Ալֆսիոն) կոչուած Միութեան կողմէ որ կազմուեցաւ այդ նպատակով ։ Վարչութեան նախագահ – տնօրէնն է Վեր. Յ. Հելվաճեան որ բանակում կը կազմակերպէ 1945էն ի վեր եւ որ վկայեալ է Կրթական նախարարութենէն ։

Անցեալ տարի ունեցանք 131 երիտասարդներ առաջին շրջանին, իսկ երկրորդին՝ 81։ Կը տիրէր հայկական մաքուր եւ տաքուկ մթնոլորտ։ Եղան հոգեւոր եւ ազգ. նիւթերու մասին զանազան դասախօսութիւններ։ Այս տարի բանակումին առաջին շրջանը կը սկսի Յուլիս վեցին, իսկ երկրորդը Օգոստոս երեքին։ Սեպտեմբերի ընթացքին ընտանիքներ կրնան գալ հոն արձակուրդ անցնելու համար ։

ՍԻՒԶԱՆ ՏԷՐ ԱԹԱՆԱՍԵԱՆ

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Անկախ Արուեստագէտներու այս տարուան նկարահանդէսին մէջ ցուցադրուած Բիւզանդ Թօփալեանի՝ « Ձիաւորները» պատուհին մասին հետեւեալ դրուատալից տողերը կը կարդանք «Ամթէօռ ա'Ա» կարեւոր կիսամսեային մէջ.—

« ... Նկատեցինք չատ հետաքրքրական գործը Բիւզանդ Թօփալեանի՝ « Ձիաւորները»։ Գրեթէ դերիրապաշտ պատառ մըն է ուրկէ կ'արտարերի միջնադարեան բանաստեղծութիւն մը. զեղեցիկ գոյներ, չարժում, անհատականութիւն եւ տոկունութիւն » ։

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

ՄԵԾ ՀՐԴԵՀ ԷՅՐԻՏԻՐԻ ՄԷՋ
300 ՏՈՒՆԵՐ ԱՅՐԱԾ ԵՆ

Պոլսական թերթերը կը գրեն թէ Մայիս չորսին մեծ հրդեհ մը պատահած է Էյրիտիրի մէջ, մոխիրի վերածելով աւելի քան 300 տուն ։

Ժամը 16ի մօտ Էյրիտիրի զէպի գետակ երկարող թերակղզիին վրայ՝ մզկիթի թաղամասին աթըլիէներէն ծագող հրդեհը հարաւային քամիին ազդեցութեամբ չուտով տարածուեցաւ ամէն կողմ։ Հակառակ անոր որ զինուորականներն ու հրշէջ գունդը անմիջապէս փութացին հրդեհի վայրը՝ բոցերը չատ կարճ ատենուան մէջ պատած էին ամբողջ թաղը ։

Հրդեհը տեւեց երկու ժամ եւ մզկիթի թաղամասէն երեք հարիւր տուն մոխիրի վերածուեցաւ ։

Էյրիտիրի չուկան, պատմական մզկիթներէն ձամիէ – Քէպիրը եւ մեծ նախակրթարան մը, ատենին առնուած միջոցներով կարելի եղաւ փրկել բոցերու ճակէն ։

«ԾԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (402)

ԿԱՅԾԵՐ

Բ. ՀԱՏՈՐ

Լ.Զ.

– Արդիւնքից մի որոշ մասն են առանում, — պատասխանեց վաճառականը ։ Երկար փորձերից յետոյ, ես այն համոզմունքին հասայ, որ նրանց պէտք է ընկերացնել ։ Այդ աւելի զօրացրեց նրանց եռանդը, աւելի պինդ կապեց զործի հետ ։ Նրանք ունեն խնայողական դրամարկղ, որից օգնում են իրանց ընկերներին, երբ մէկը հիւանդանում է, կամ վնասուելով աշխատել չէ կարողանում։ Ես ինքս իմ խանութի համար պէտք եղած ապրանքները գնում եմ զործարանից, որպէս օտար մարդ ։

— Այդ չատ մարզասիրական է, — նըկատեց Բաղէչցին եւ նրա ջերմեռանդ աչքերը, կարծես, ասում լինէին. «օհ – նեալ լինես»...

Նրանց խօսակցութիւնը ընդհատեց մի ծիծաղադէմ ծերունի, փոքր ինչ կռացած մէջքով, ներկերի մէջ գունաւորած ձեռքերով, որ ներս մտաւ եւ, մօտենալով որպէս առենաղպիր։ Վահանը մնում է անդրդուելի ։ Երբ ամիրապետը համոզւում է դրանում, հրաման է տալիս դըլխատել նրան։ Եւ ահա, երեսուն տարեկան հասակում Վահանը զերազատում է ընդունել մահը, քան թէ ուրանալ իր հայրենիքը։

Վերոյիշեալ չարականը՝ նուիրուած Վահան Գողթնեցուն, աւանդութիւնը վերագրում է Գողթնեցու քրոջը՝ Խոսրով – դուխտին, սակայն այդ մասին մեր մտենադրութեան մէջ ոչ մի փաստ չկայ ։ Աւելի հաւանական է թւում մի այլ են – թադրութիւն. Սահակդուխտը Վահանին հասակակից է եղել։ Երկու մեծ պիտանի – բանասէրները՝ Ղ. Ալիշանն ու Մ. Օրմանեանը ենթադրում են որ Վահան Գողթնեցու եւ Սահակդուխտի միջեւ եղել է հոգեկան, զուտ աւելի սերտ կապ։ Շատ հաւանական է, որ Վահանը հայրենիք այցելելիս, երբ ծանր ապրումների մէջ թափառում էր Հայաստանի վանքերում ու մենաստաններում, Գառնիի ձորում հանդիպել է Սահակդուխտին։ Վահանը մի տարի ապրեց Վայոց Ձորում, իսկ Վայոց Ձորն ու Գառնին իրարից այնքան էլ հեռու չեն։ Գողթնեցուն նուիրուած վերոյիշեալ «Զարմանալի է ինձ» չարականի ոճը, պատկերները, բոլոր – դակութիւնը, դիմումները Վահանին, բոլորովին նման չեն քրոջ զրածի ։ Այդ ամենը ենթադրել է տալիս, որ բուռն ըզգացումներով լեցուն մի այլ սիրող սիրտ է զրողը, որը հերոսացնում է անվեհեր, հայրենասէր երիտասարդին եւ հպարտանում նրա մարտիրոսութեամբ ։

Սահակդուխտը, այսպիսով, մեզ յայտնի առաջին հայ կին բանաստեղծն է, եւ բաժչտութեան առաջին ուսուցչուհին, առաջին կին մանկավարժը։ Նա միայն անպտուղ ճղնաւոր չի եղել, այլ իր ամբողջ կեանքում երգ է սովորեցրել ուրիշներին, թէկուզ վարադոյրի եռեւից ։ Մինչեւ իր կեանքի վերջը նա ապրել է Գառնիի ձորում ։ «Եւ անդէն ինմին վախճանեալ դնի ի հպատի, յորմէ բառում բժչկութիւնք լինին» («Եւ այնտեղ էլ նա վախճանուել է, որի գերեզմանից չատ բժշկութիւն է լինում») ։ այսպէս է վերջացնում ժլատ պատմիչը իր տեղեկութիւնները մեր առաջին կին բանաստեղծի մասին ։

ԳՐ. ՅԱԿՈԲԵԱՆ
«Հայաստանի Աշխատաւորուհի»

ԿԱՅԾԵՐ

Բ. ՀԱՏՈՐ

Լ.Զ.

– Արդիւնքից մի որոշ մասն են առանում, — պատասխանեց վաճառականը ։ Երկար փորձերից յետոյ, ես այն համոզմունքին հասայ, որ նրանց պէտք է ընկերացնել ։ Այդ աւելի զօրացրեց նրանց եռանդը, աւելի պինդ կապեց զործի հետ ։ Նրանք ունեն խնայողական դրամարկղ, որից օգնում են իրանց ընկերներին, երբ մէկը հիւանդանում է, կամ վնասուելով աշխատել չէ կարողանում։ Ես ինքս իմ խանութի համար պէտք եղած ապրանքները գնում եմ զործարանից, որպէս օտար մարդ ։

— Այդ չատ մարզասիրական է, — նըկատեց Բաղէչցին եւ նրա ջերմեռանդ աչքերը, կարծես, ասում լինէին. «օհ – նեալ լինես»...

Նրանց խօսակցութիւնը ընդհատեց մի ծիծաղադէմ ծերունի, փոքր ինչ կռացած մէջքով, ներկերի մէջ գունաւորած ձեռքերով, որ ներս մտաւ եւ, մօտենալով վաճառականին, մտերմութեամբ ձեռք տուեց, յետոյ զարմացած նայեց Բաղէչցու վրայ։

— Երեւի փողի համար էք եկել, — հարցրեց նրանից վաճառականը ։

— Ապա ինչի՞ համար պէտք է դայի, հէր օրհնած, պատասխանեց նա եւ մօտեցաւ գանձապահին ։

— Այդ ծերունու դէմքը ինձ ծանօթ երեւաց, — ասաց Բաղէչցին նրա հեռանալուց յետոյ ։

— Պէտք է որ ծանօթ լինի... պատասխանեց վաճառականը խորհրդաւոր ձայնով։ — Դա վարպետ Փանոսն է. առաջ ներկարարի մի հասարակ զործարան ունէր, իսկ այժմ այնքան կատարելագործել է, որ իմ զործուածները բոլորը այնտեղ են ներկւում ։

Ցաճախորդները հանգստութիւն չէին տալիս, մէկը դուրս էր դալիս, մի քանիսը մտնում էին։ Գործողութիւնները իրանց կենդանի չարժման մէջն էին։ Ներս մտաւ մի բարձրահասակ, հսկայատիպ պարոն, ալեխառն մօրուքով եւ յատակի տախտակամածը թնդաց նրա ամուր ոտքերի տակ։ Նա, առանց ոչ ոքին ողջունելու, կանդնեց սենեակի կետրոնումը, աջ ձեռքը մեկնելով դէպի զործակատարը, իսկ թուխ երեսը զարձնելով դէպի կրպակատէրը, զոչեց որոտալից ձայնով ։

— Աչեցէք այդ պարոնին, եթէ միւս անդամ հակերը իր ժամանակին չհասցնի, վաճառականին, մտերմութեամբ ձեռք տուեց, յետոյ զարմացած նայեց Բաղէչցու վրայ։

— Երեւի փողի համար էք եկել, — հարցրեց նրանից վաճառականը ։

— Ապա ինչի՞ համար պէտք է դայի, հէր օրհնած, պատասխանեց նա եւ մօտեցաւ գանձապահին ։

— Այդ ծերունու դէմքը ինձ ծանօթ երեւաց, — ասաց Բաղէչցին նրա հեռանալուց յետոյ ։

— Պէտք է որ ծանօթ լինի... պատասխանեց վաճառականը խորհրդաւոր ձայնով։ — Դա վարպետ Փանոսն է. առաջ ներկարարի մի հասարակ զործարան ունէր, իսկ այժմ այնքան կատարելագործել է, որ իմ զործուածները բոլորը այնտեղ են ներկւում ։

Ցաճախորդները հանգստութիւն չէին տալիս, մէկը դուրս էր դալիս, մի քանիսը մտնում էին։ Գործողութիւնները իրանց կենդանի չարժման մէջն էին։ Ներս մտաւ մի բարձրահասակ, հսկայատիպ պարոն, ալեխառն մօրուքով եւ յատակի տախտակամածը թնդաց նրա ամուր ոտքերի տակ։ Նա, առանց ոչ ոքին ողջունելու, կանդնեց սենեակի կետրոնումը, աջ ձեռքը մեկնելով դէպի զործակատարը, իսկ թուխ երեսը զարձնելով դէպի կրպակատէրը, զոչեց որոտալից ձայնով ։

— Աչեցէք այդ պարոնին, եթէ միւս անդամ հակերը իր ժամանակին չհասցնի, ես բոլորը ծուլը կը նետեմ ։

Նա առանց պատասխանի սպասելու, իսկոյն դուրս գնաց ։

— Ճանաչեցի՞ք դրան .— ասաց վաճառականը, դիմելով դէպի Բաղէչցին ։

— Ճանաչեցի՝ ... պատասխանեց նա ։— «Իէրղէն – Օղլին» է ... ։ Աւանց դիւղի նաւատէրն ... Այդ մարդը մինչեւ վերջն մնաց անտաշ ։ Բայց չատ օրինաւոր մարդ է, դիտէք ։ այժմ չորենաւի ընկերութեան դլխաւոր նաւապետն է ։

— Գիտեմ ։ Ես նրա չորենաւով եկայ Բաղէչից ։

— Վաճառականը խօսքը փոխեց հարցնելով ։

— Ինձ այն ասացէք, ի՞նչ կայ ձեզ մօտ, այնտեղ Բաղէչում ։

— Հետաքրքիր ոչինչ չկայ, միայն խեղճ Հաջի – Իսաղը վախճանուեցաւ ։

— Մի՞թէ՞, նա պէտք է բաւականի հարստութիւն թողած լինի ։

— Ոչ այնքան, որքան կարծւում էր ։ Վերջին ժամանակ նա չատ ծախսեց զանազան նպատակների համար ... Իսկ ինչ որ մնացել էր, նրա մի մասը կտակել է, որ այն զումարով մի դպրոց հիմնուի, որի մէջ սովորեն հայ երեխաներ, առանց կրօնի խտրութեան ։

Վաճառականի դէմքի վրայ երեւաց զարմացման նման մի բան ։

(Շար.)

ՐԱՖՖԻ

Սելվին Լոյտ չեշտեց նաեւ այն պարա – գան՝ թէ ապահովութիւնը պէտք է ըլլայ Արեւելքի եւ Արեւմուտքի համար եւ միաժամանակ՝ արդար պէտք է ըլլայ Գերման ժողովուրդին հանդէպ : Այլա – պէս , պէտք չէ մոռնալ որ մեծ վտանգ մը կրնայ առեղծուիլ Ֆ· Միւրվիլի եւ Ա – րեւմուտքի համար : « Մենք պէտք է հասկնանք, վերջապէս , Ֆ· Միւրվիլի մտահոգութիւնները՝ իր ապահովութեան համար , բայց Ֆ· Միւրվիլն ալ պէտք է հասկնայ թէ մենք ալ, նոյնպէս , մտա – հոգութիւններ ունինք այդ մարզին մէջ» :

Եզրակացնելով , Անգլիոյ Արտաքին նա – խարարը բսաւ թէ գերմանական հարցը իր ամբողջութեան մէջ պէտք է լուծել : Յայտարարեց թէ ինք համաձայն է կրո – միքոյի այն կարծիքին՝ որ մեծերու ժո – ղովի մէկ նիստն ալ թերեւս բաւական է լուծելու համար այս բարդ խնդիրները· հետեւաբար՝ պէտք է աշխատիլ ամէն դնով իրականութիւն դարձնել «Ջորս Մե – ծեր»ու հանդիպումը :

Նիստը փակուեցաւ՝ մինչեւ յաջորդ օր : Բայց քաղաքական բոլոր չրջանակ – ներն ալ հաստատեցին թէ «որոշ յառաջ – դիմութիւն» մը դղալի էր :

ԱՅԶԸՆՀԱՒՐԻ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Այզընհաուըրի մամուլի չա – բաթական ասուլիսը մեծ մասով յատկաց – ուած էր Միացեալ Նահանգներու ներքին հարցերուն : Այսուհանդերձ, անդրադար – ձաւ նաեւ միջազգային հարցերու, երկու յայտարարութիւններ ընելով :

1·— Նախագահը այն տպաւորութիւնը ունի թէ Ժընեւի ժողովին առաջին երկու օրերը Ֆ· Միւրվիլը փորձեց քարոզչու – թիւն ընել, բայց այն յոյսն ունի թէ չու – տով կը սկսի էական հարցերու քննու – թիւնը :

2·— «Պատասխանատու ոչ ոք ինձ բան մը բսաւ՝ Խրուշչեւի Միացեալ Նահանգները այցելութեան մասին » ըսաւ Այզընհա – ուըր , աւելցնելով թէ Ժընեւ հաւաքուած Արտաքին նախարարներու պարտականու – թիւնն էր ճշդել մեծերու ժողովի մը վայ – րը : Այդ ուղղութեամբ բաղմաթիւ քա – ղաքներ իրենց թեկնածութիւնը դրած են, ինչպէս նաեւ՝ Սան Ֆրանչիսքօ :

ՄԱՅԻՍ 13Ը
ՓԱՐԻԶԻ ԵՒ ԱԼԺԷԻ ՄԷՋ

Ինչպէս դրած էինք Մայիս 13ի տարե – դարձը մեծ չուքով տօնուեցաւ բայց կարգ մը միջադէպեր պատահեցան :

50·000 Մահմետականներ եւ Եւրոպա – ցիներ հաւաքուած էին Ալժէ , ներկայ ըլ – լալու համար տօնակատարութեանց :

Ժամը 9ին տեղի ունեցաւ զինուորական մեծ տողանցք մը :

Ժամը 11ին սկսան ճառերը : Առաջին անգամ խօսեցաւ Պուհարաուա , Ալժէի Թաղապետական Խորհուրդի նախագահը, որմէ ետք Փոլ Տըլուվրիէ խօսք առնելով ծանրացաւ Մայիս 13ի եղբայրական նկա – րագրին վրայ· «Պետութիւնը զօրաւոր է : Կառավարութիւնը՝ կայուն : Նախարարա – կան տագնապները վերջացած են » :

« Մայիս 13ը՝ կը նշանակէ բանակի եւ Ալժերիոյ ժողովուրդին ամբողջական մի – ութիւնը » յայտարարեց Զօր· Մասիւ :

Կարգ մը միջադէպեր պատահեցան Փարիզի մէջ, ուր ծագկեպսակ մը կը զե – տեղուէր Անծանօթ Զինուորի յուշարձա – նին վրայ : Աւանդական մէկ վայրկեան լռութենէն ետք՝ երիտասարդները սկսան պոռալ « Ֆրանսական Ալժերիա» : Պաշ – տօնական անձեր դիտել տուին թէ այդ աղաղակները անյարմար էին յաղթական կամարին տակ : Տօնակատարութիւնը վերջացաւ այս միջադէպին վրայ :

Երիտասարդները ցոյց մը ըրին Շան դ'Էլիզէէն իջնելով եւ աղաղակելով· «դո – դակահարեցէք Պէն Պելլան, Ֆրանսական Ալժերիա են» :

Բայց կացութիւնը ծանրացաւ՝ երբ ցուցարարները պոռացին «Տը Կոլը բանա – տարէք», «բանակը՝ իշխանութեան գը – լուխ » :

Ուրիշներ պատասխանեցին· «Կեցցէ Տը Կոլ » :

Վէճերը սկսան եւ նոյնիսկ հարուած – ներ փոխանակուեցան երկու կողմերու միջեւ :

Ինչպէս Ալժէի մէջ՝ Փարիզի այս արա – րողութեան ընթացքին ալ լսուեցան « Կեցցէ Փելէյն» աղաղակները :

Ոստիկանութիւնը ստիպուեցաւ միջա – մտել : Մօտ երեսուն հոգի ձերբակալուե – ցան :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ կառավարութիւնը կարգ մը բարեփոխումներ ըրաւ իր դիւանապե – տական մարմնին մէջ : Այսպէս Ֆրանսայի դեսպան նշանակուեցաւ Վիքթոր Խուրի որ, ցարդ, ընդհանուր քարտուղար էր արտաքին նախարարութեան մէջ : Այս պաշտօնը յանձնուեցաւ Գահիրէի դես – պանին՝ Ապուխաթէրի : Փարիզի դեսպա – նը՝ Մուսսա Մուպարէք նշանակուեցաւ՝ Պոն :

ՊԻՔՐՈՒԹի «Ալ Պինա » թերթը , (ըն – կերային ժողովրդական կուսակցութեան օրգան) կը գրէ թէ ինքնաւար Քիւբրեա – տանի մը ստեղծումը ձախողած ըլլա – լով , Քիւբրեր համայնավարներու օ – ժանդակութեամբ նոր ծրագիր մը ունին որ մասամբ պիտի զոհացնէ զիրենք : Այդ ծրագիրը կը նախատեսէ որ Իրաքը վե – րածուի .— «Դաշնակցային հանրապե – տութիւններու Միութեան » մը որուն մէջ Քիւբրեր, Թուրքերը, Ասորիները եւ Արաբները ունենան իրենց յատուկ հան – րապետութիւնը :

ԱՆՏԻՈՔԻ եւ բովանդակ Արեւելքի Մա – րոնի պատրիարքը՝ դերապայծառ Մէուշի Հոմ հասաւ առջի օր : Գեր· Մէուշի իր – րեւ պաշտօնական հիւրը Ֆրանսական կա – ռավարութեան, Փարիզ կը հասնի Մայիս 23ին :

ՊՈՆի մէջ մեռած է Փրոֆ· Էրիխ Հօֆ – ման որ, 1905ին, գտած էր Ֆրանկֆուրտի մանրէն, Տոքթ· Շէօտէնի հետ : 91 տա – րեկան էր եւ մասնագէտ մորթային հի – ւանդութեանց :

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Զիօսինք այն մասին, թէ այս բանա – ձեւումը ինչքան համապատասխանում է Հայաստանեայց եկեղեցու ոգուն եւ պատմա – իրաւական իրականութեան. ընդհանուր պայմանները Մայր Հայրենի – քում եւ Սփիւռքում թոյլ տալի՞ս են նը – ման բանաձեւի գործնականացման: Որ – հրդային Միութեան օրէնսդրութեան մէջ դոյութիւն չունի որեւէ յօդուած, որ եկե – ղեցին ճանաչէր «իրաւական անձ, որպէս կազմակերպչական – վարչական, տնտե – սական ամբողջութիւն», ոչ, եւս առա – ւել, իրաւական անձ չէ Ամենայն Հայոց կաթողիկոսը, ոչ էլ Ամենայն Հայոց կա – թողիկոսը, որպէս «ընդհանրական եւ բարձրագոյն վերատեսուչ»: Կազմակերպ – չական – վարչական եւ տնտեսական իրա – ւական անձ նշանակում է, որ էջմիածի – նը, որպէս Հայաստանեայց եկեղեցու նը – ւիրապետութեան կեդրոն եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը որպէս Հայաստան – եայց եկեղեցու «ընդհանրական եւ բար – ձրագոյն վերատեսուչ», օժտուած լինին իրաւունքով Խորհրդային Միութեան սահմաններում եւ դուրսը ունենալու է – կեղեցական ընդհանուր կազմակերպու – թիւն, ընդհանրական վարչութիւն, եկե – ղեցական, վարչական, մշակութային եւ տնտեսական սեփական հաստատութիւն – ներ, սեփական չէնքեր ու կալուածներ, ընդունել կտակներ, վարել միջեկեղեցա – կան վարչական ու տնտեսական յարաբե – րութիւններ եւայլն: Այսպիսի դրութիւն դոյութիւն չունի Խորհրդային Միութեան իրաւական հասկացողութեան եւ իրակա – նութեան մէջ: Ուրիշ խօսքով, եկեղեցին եւ Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը իրաւական անձ չեն, խորհրդային օրէն – քով չեն վայելում խորհրդային սահմա – նափակ իրաւական անձի իրաւունքները: Մի դրութիւն, որ անցողական քաղաքա – կանութեան արդիւնք չէ, այլ հիմնական հասկացողութիւն, որ բխում է համայ – նավարութեան էութիւնից:

Եթէ այս է կացութիւնը, ապա, ուրե – մըն, էջմիածնական եպիսկոպոսները կամ կաթողիկոսը ինքը ինչի՞ վրայ հիմնուած կարծում են թէ Խորհրդային Միութեան սահմաններում կարող է դոյութիւն ու – նենալ ընդհանրական եկեղեցական կազ – մակերպութիւն, որպէս վարչական եւ տնտեսական իրաւական անձ: Քանի Խոր – հրդային Միութեան ուղն ու ծուծն է կազմում համայնավարութեան բոլշեւիկ – եան ըմբռնումը՝ մարքսիզմի լենինական մեկնաբանութեամբ, միամտութիւն է, ապասել որ վերաբերմունքը դէպի կրօնն ու եկեղեցին կը փոխուի: Հետեւաբար, միամտութիւն է մտածել նաեւ, որ խոր – հրդային իրականութեան մէջ, օրէնքով, հնարաւոր կը լինի Ամենայն Հայոց կա – թողիկոսութեան դոյութիւնը, որպէս «կազմակերպչական – վարչական, տնտեսական իրաւական անձ»: Լաւագոյն պարագային եկեղեցական ընդհանրական կամակերպութեան ձեւով կը հանդուր – ժուի, մանաւանդ Ամենայն Հայոց կաթո – ղիկոսութիւնը, իբրեւ խայծ եւ խորհր – դային արտաքին քաղաքականութեան գործիք Սփիւռքի համար:

Աւելի մեծ միամտութիւն է Սահմանա – դրութեան նախագծի հեղինակների հա – մար ենթադրել, որ Խորհրդային հակա – կրօն եւ անաստուած միջավայրում գտնուող էջմիածնի Գահակալը, որ հէնց իր երկ – րում զրկուած է իրաւական անձի իրա – ւունքներից, կարող է որեւէ հեղինակու – թիւն վայելել արտասահմանում, մանա – ւանդ այն երկրներում, որոնք հակա – մարտ դիրքի մէջ են եւ չեն ճանչնար խորհրդային իշխանութեան իրաւական ու բարոյական զաղափարներն ու կարգերը: Այս տեսակէտից հետաքրքրական է հե – տեւեալ օրինակը:

1933 թ. թեմական պատգամաւորից յե – տոյ, Հիւս. Ամերիկայի հետ եկեղեցիների մի մասը մնաց էջմիածնի տեսչութեան ներքեւ, միւս մասը կազմակերպուեցաւ որպէս անկախ թեմ: Ֆիլատելֆիոյ Հա – յոց եկեղեցին մնաց վերջիններէ ձեռքը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազօր պատուիրակ Գարեգին Արք. Յովսէփեան – նը (յետագային Կիլիկիոյ Կաթողիկոս) անձամբ ներկայացաւ Ֆիլատելֆիոյ դա – տարանը եւ Հայոց եկեղեցու «ընդհանրա – կան եւ բարձրագոյն Վերատեսչի» անու – նից պահանջեց, որ եկեղեցին վերադար – ձուի էջմիածնական թեմին: Ամերիկացի դատաւորը, զարմանքով ու հեղնանքով լսելուց յետոյ Սրբազանի ճառը, պատաս – խանեց ոչ առանց երկիմաստի:

— Յարգելի Սրբազան, այդ ամէնը որ դուք խօսեցաք, ձեր երկրի եւ ձեր օրէնք – ների համար է. մեզ մօտ կրօնը ազատ է եւ եկեղեցու տէրը հաւատացեալ ժողո – վուրդն է: Եթէ ժողովուրդը կամենում է եկեղեցին յանձնել ձեզ, այդ իր գործն է: Եթէ կամենում է անկախ լինել, այդ էլ իրաւունքն է: Գնացէք եւ եկեղեցու ան – դամների հետ համաձայնութեան եկէք. մենք Ամենայն Հայոց Կաթողիկոս անու – նով իրաւատէր իշխանութիւն չենք ձա – նաչում մեր երկրում:

Գարեգին Սրբազանը ամօթահար դուրս եկաւ ամերիկեան դատարանից, բայց չհամարձակուեց իր կրօնակից ժողովուր – դին դիմելու:

Ամերիկացիք քաղաքավարի մարդիկ են եւ այդքանով միայն բաւականացան, բայց ահա Պարսիկները, որոնք ոչ պա – տճառով Ազգային Սահմանադրութեան հարցը ներկայացուցին Ազգային ժողովին, որ ընդունեց եւ ուղարկեց Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետի հաստատութեան: Ս. Էջմիածնի Վեհափառ Հայրապետը, որ ինքն էր ներկայացուցել Սահմանադրութեան նախագիծը Ազգային ժողովին, ստորագրեց եւ ուղարկեց Պարսկաստան, որպէսզի Ազգային ժողովի կողմէ ընտրուած անդամները ստորագրեն եւ ներկայացնեն Վեհափառ Հայրապետին հաստատութեան համար: Ազգային ժողովի անդամները ստորագրեցին եւ ներկայացուցին Վեհափառ Հայրապետին, որ ալ հաստատ

ԿՅՈՒՐԻ

Ֆ. ՀՈՍՍՈՐ

Լ2.

— Ես այդ երբէք չէի սպասում Հայկ – ասաց նա :

— Սպասել էր··· պատասխանեց Հա – կոբը : — Ա՛հ բոլոր կիները միշտ էլ ուրիշներ են երե – ւում նրանց մարդկանց համեմատ, որ ու – րախ ապրում են միայն այն ժամանակ, երբ նրանք մեզ չեն խանգարում ապրել մեր կեանքը : Ահա թէ ինչու ես ուզում էի, որ դուն այդ չիմանայիր : Ես ուզում էի, որ դուն ինձ միայն սիրես, ինչպէս որ ես սիրում եմ քեզ : Ես ուզում էի, որ դուն ինձ միայն սիրես, ինչպէս որ ես սիրում եմ քեզ ···

Տոքթ· Մամբրէ Գարաճեան , Տէր եւ Տիկին Նարպէյ Գարաճեան , Տէր եւ Տիկ· Նուպար Գարաճեան , Տէր եւ Տիկին Ժորժ Քալէմքէրեան (Հալէպ) , Տէր եւ Տիկին Օննիկ Թոթոյեան եւ զաւակները , Այրի Տիկին Համեստուհի Պատմաճեան եւ զաւակները (Ալեքսանդրիա) , Այրի Տիկին Սուլթան Արապեան (Ամերիկա) , Տէր եւ Տիկին Յով· Արապեան եւ զաւակութ (Ամերիկա) , Տէր եւ Տիկին Լըմարիէ (Էփինէ – Էօր) , Տէր եւ Տիկին Մարտիրոս Պալեան (Գահիրէ) , Պ· Մարկոս Շահ – պազեան , Տէր եւ Տիկին Խաչիկ Սէմէր – ճեան (Արժանթին) , Այրի Տիկին Արուս– եակ Զազզալեան , Գալէմքէրեան ընտա – նիք (Հալէպ) ցաւով կը ծանուցանեն ի – րենց սիրելի կնոջ , մօր , ազգականին , հօրաքրոջ եւ խնամիին՝

ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԷ Մ· ԳԱՐԱՃԵԱՆԻ

(Ծնեալ՝ Պալեան, Մարաշ)

մահը , որ տեղի ունեցաւ Շաբէքշաբթի , 13 Մայիս , առաւօտեան ժամը 10ին :

Յուղարկաւորութեան տխուր արարո – ղութիւնը պիտի կատարուի , Շաբաթ , 16 Մայիս , կէսօրէ յետոյ ժամը 3ին , իր բնակարանին մէջ , 26 Շըմէն տէ Լիոն , Շամփիեեի սիւր Մարն (Սէն) , ուրկէ մարմինը պիտի փոխադրուի Շամփինեիի գերեզմանատունը :

Մասնաւոր մահազդ ղրկուած չըլլալով , կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել :

Հաղորդակց· Միջոց·— Շոգեկառք՝ կառ տը Լ'Էսթէն առնել եւ իջնել Վիլիէր սիւր Մարն :

Օթօպիւս·— *Շաթօ Վէնսէնէն առնել 206 թիւ օթօպիւսը եւ իջնել կառ Վիլիէ սիւր Մարն :*

Ուղղակի գերեզմանատուն երթալու համար Շաթօ տը Վէնսէն առնել 108 օթօպիւսը եւ իջնել Շամփինեիի քաղա – քապետարանը :

ՑԱՒԱՋ·— Մեր ցաւակցութիւնները Տոքթ· Գարաճեանի եւ ընտանիքին :

Այրի Տիկին Լիւսի Քերովբէեան եւ զաւակները՝ Ժանին , Սերժ , Գարմէն եւ Տիանա , Այրի Տիկին Մելքոնեան , Տէր եւ Տիկին Ս· Քերովբէեան (Ռումանիա) , Տէր եւ Տիկին Պ· Պօտոսեան եւ զաւակը , Տէր եւ Տիկին Ձիվէլէկեան եւ զաւակը (Հայաստան) , Տէր եւ Տիկին Մելքոնեան եւ զաւակները (Հայաստան) , Տէր եւ Տիկին Գարակէօզեան եւ զաւակները (Պուլկարիա) , Տէր եւ Տիկին Գասապեան եւ զաւակները (Պուլկարիա) , Տէր եւ Տիկին Ստեփանեան եւ զաւակները (Պուլկա – րիա) , Տէր եւ Տիկին Անտոնեան եւ զա – ւակները (Հայաստան) , Այրի Տիկին Գա– լուստեան ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն , հօր , փեսին , եղբօր , եւ ազգականին՝

ԱՐՄԵՆԱԿ ՔԵՐՈՎԲԷԵԱՆԻ

մահը , որ տեղի ունեցաւ Մայիս 12ին , 57 տարեկանին :

Յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ այս Շաբաթ (Մայիս 16) ժամը 10·15ին , Պանեէօ – Քօմիւնալի գերեզմանատունը :

ՊԱՏԱՐԱԳ

Այս կիրակի Հոգեգալստեան տօնին առթիւ հանդիսաւոր Ս· պատարագ Շա – էլի եկեղեցիին մէջ , երգեցողութիւնները կը ղեկավարէ երաժշտապետ Պ· Ն· Սեր– գոյեան :

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆ. ԵԿԵՂԵՑԻ

8 bis, Rue des Ternes

Մէթրօ Փորթ Մայեօ կամ Շամփէրէ

Այս կիրակի առաւօտ ժամը 10·45ին : Կը խօսի Պատուելի ՍԻՍԼԵԱՆ : Նիւթ՝ « Սուրբ Հոգիին փոթորիկը » :

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏՉ. ԵԿԵՂԵՑԻ

20, RUE JEMMAPES

ՄԱՐՍԷՅԼ

Պաշտամունք , *այս կիրակի Հոգեգա – լուստի առթիւ , Սէն Ժերմ՝ ժամը 9·30– ին , Մարսէյլ , Ռիւ Ժէմաբ՝ ժամը 10·45– ին : Կը խօսի՝ Վեր· Յ· ՀԵԼՎԱՃԵԱՆ :*

Նիւթ՝ «Մարդուն սիրտը յեղաշրջող զօրութիւնը» :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ԼԻՈՆԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Լիոնի եկեղեցաչէն Տիկն· Մխիթիւ – նը ամէն չանք կը թափէ հասոյթի մի – ջոցներ ստեղծելու Լիոնի եկեղեցւոյ շի– նութեան համար :—

Սալ Մոլիէրի մէջ

ՄԱՅԻՍ 18ԻՆ·— Դպրոցասէր Տիկնանց Մխիթեան կոմիտէ թատերական ներկայա– ցում մը եւ խիստ սիրուն պարեր տեղի պիտի ունենան :

ՄԱՅԻՍ 24ին Հորլոժի սրահներուն մէջ իրիկուան ժամը 8·30ին պիտի ներկայաց– ուի , նոր պատրաստուած ֆիլմ մը Հա – յաստանի մէջ , զուտ հայկական կեանքէ « կապօն» :

ՄԱՅԻՍ 31ին մեծ պարահանդէս մը վիճակահանութիւն :

Մանրամասնութիւնները յայտրդով :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Գ· ՃԻՆՃԵԱՆ , Տէր եւ Տի – կին Վ· Պարսամեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար – ուի Մայիս 17ին , կիրակի առաւօտ , ժամը 10·30ին Ս· Խաչ եկեղեցին , 10պիս , Րիւ Թուէն , իրենց ամուսնոյն եւ հօր ԱՐԱՄ ՃԻՆՃԵԱՆի մահուան քառասունքին առ – թիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

×

Այրի Տիկին Շնորհիկ Յովհաննէսեան կը ծանուցանէ թէ այս կիրակի Լիոնի նո – րակառոյց Հայոց եկեղեցիին մէջ (295 Րիւ Պուալօ) հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի , ի յիշատակ իր ամուս– նոյն Պօղոս Յովհաննէսեանի մահուան տարելիցին առթիւ : Կը հրաւիրուին ող – բացեալին յիշատակը յարգող բարեկամ – ներն եւ ազգականները :

×

Պիւլպիւլեան , Գարբիէլեան եւ Նչան – եան ընտանիքները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար– ուի իրենց մօր , եւ հօր՝

ՏԻՐՈՒՀԻ ԵՒ ՄԻՀՐԱՆ ՊԻՒԼՊԻՒԼԵԱՆԻ

յիշատակին , այս կիրակի առաւօտ Փարի– զի Հայոց եկեղեցին :

Կը հրաւիրուին ողբացեալներուն յիշա– տակը յարգողները :

ԴՊՐՈՑ· ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

61959 – 1960ի դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են : Ամէն անոնք որ կը փափաքին իրենց զաւակները արձանագրել , պէտք է փութան այժմէն իսկ դիմել Հաստատութեան Տնօրէնու – թեան :

Դպրոցասէրը կը հետեւի պետական լի– սէներու պաշտօնական ծրագրին , աշա – կերտուհիները կը պատրաստէ պրէվէի եւ պաքալօրէայի քննութիւններուն , տալով նաեւ անոնց հայեցի դաստիարակութիւն , հայերէնի , ըրականութեան , պատմու – թեան եւ կրօնի ծանօթութիւններով :

Դիմել՝ 1 Պուլվ– տիւ Նօր , Լը Բէնսի :

Հեռաձայն՝ Լը Բէնսի 172 :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կը խնդրուի նկատի ունենալ Ֆ· կապ· Խաչի Վաչանի մասնաճիւղի ձաշահան– սէսը Յունիս 21ին :

×

Համախոբը· Մխիթեան Մարսէյլի եւ Սէն Լուի մասնաճիւղերու տարեկան մեծ ձաշատարահանդէսը Յուլիս 12ին , կի – րակի , Զօխուրեան Հայկազ ազարակին մէջ , Սէն Լու Կրան Փէն :

Մանրամասնութիւնները յայտրդով :

ԾԱԽՈՒ Է

Փարիզի մէջ , յարկաբաժին մը , ան – միջապէս տրամադրելի , երկու սենեակ (չատ մեծ) , մուտք եւ խոհանոց , երկ – րորդ յարկ , չատ արեւոտ , ջուր , կազ , էլեկտրականութիւն :

Գինը երկու միլիոն՝ կանխիկ :

Դիմել՝ (ամէն օր ժամը 8 – 20 , (բացի կիրակի եւ երկուշաբթի) :

M. BABAYAN - CORDONIER
17. Rue Bridaine, Paris 17·
Métro Rome

Կ'ՈՒԶՈՒԻ

Երիտասարդ հայ օրիորդ մը , կրթը – ւած , որ պիտնայ մեքենագրել (տաքթի– լօ) : Դիմել աւնամբ «Յառաջ»ի վարչու – թեան :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԻՍԻ·— Հ· Ց· Դ· Զաւարեան կոմիտէի ժողովը այս Շաբաթ , ժամը 21ին , սովո– րական հաւաքատեղին :

ՀԱՄԱԽՍԻՐ· Մխիթեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ· ժողովը այս կիրակի առաւօտ ժամը 9ին , Պառ տիւ Կլոպի սը– բահը , 7 Պուլվար տ'Աքէն : Օրակարգ Մխիթեան տարեկան ձաշատահանդէսը , 12 Յուլիս 1959 , Սէն Լու Կրան Փէնի մէջ եւ ընթացիկ հարցեր :

"ՄԱՅԻՍ 28"Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միւնչեւ լոյս):

Վեցերորդ թաղապետարանի սրահնե – րուն մէջ, փլաս Սէն Սիւլփիս :

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Յունիս 6ին , Շաբաթ իրիկուն , Գ· թա– ղապետարանի սրահին մէջ :

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Յունիս 7ին:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՕՐ

Նախաձեռնութեամբ Հ· Ց· Դ· Նոր Սերունդի Փարիզի Ազգոնեան խումբին
Շաբաթ, 16 Մայիս, ժամը 21էն միւնչեւ լոյս Սէրֆլը Միլիքէոի շէեղ սրահնե – րուն մէջ :

Խնամուած գեղարուեստական բաժին : Երգ , պար , արտասանութիւն , զաւեշտ :

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

JACQUES MORINOTի ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲՈՎ

երգիչը՝ ԱԼՎԱՐԴԷՆ

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ ԵՒ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՑԷԼ– ԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ :

ԿԻՐԱԿԻ , 7 ՅՈՒՆԻՍ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ , ԺԱՄԸ 20ԷՆ ԵՏՔ
Վարժարանի դպարագեղ պարտէզներուն մէջ :

ԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԸ

RUE DE L'ÉGALITÉ

Իսի Լէ Մուլինոյի մարզական խումբը կը կազմակերպէ ֆութպոլի բաժակի մեծ մրցում մը , կիրակի (17 Մայիս) եւ Երկուշաբթի (18 Մայիս) :

Նախագահութեամբ Պ· ՍԻՎԷՍԹՐԻ

Փոխ քաղաքապետ եւ նախագահ քաղաքապետական մարզական դրասեն – եակին Իսի Լէ Մուլինոյի :

Նուիրուած՝ Հ· Մ· Ը· Մ·ի Ա· խումբի անդամ

ՊԵՏՐՈՍ ԵՍԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Ինկած պատուոյ դաշտին վրայ Ալժերիոյ մէջ)

Կը մասնակցին հետեւեալ խումբերը·—

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՑ ՄԱՐԶԱԿԱՆԸ

(Promotion d'Honneur)

Stade de Vanves - C. S. A. Garches

ԻՍԻԻ Հ· Մ·Ը·Մ·Ի ՄԱՐԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

(Promotion de 1ère Division)

ԿԻՐԱԿԻ 17 ՄԱՅԻՍ

Ա·— Մրցում ժամը 14·30ին (Stade de Vanves contre U. G. A. Issy)

Բ·— Մրցում ժամը 16ին (U. J. A. Alfortville contre C. S. A. Garche)

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 18 ՄԱՅԻՍ

Ա· Մրցում ժամը 14·30ին

Հանդիպում (ֆինալ) կիրակի օրուան կորնչնող խումբերու :

Բ· Մրցում ժամը 16ին· Հանդիպում (ֆինալ) կիրակի օրուան յաղթական խումբերուն :

Հաղորդակցութեան միջոցներ՝

Metro Mairie d'Issy - Autobus 190, d scendre Hôpital Percy (Cimetière)

ՊԱՏԱՐԱԳ ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Այս Երկուշաբթի առաւօտ Հոգեգա – լստեան տօնին առթիւ , պատարագ պիտի մատուցուի Ռիւ Ժէ , Սէն Լուի սրահին մէջ : Կը պատարագէ՝ Թորգոմ Եպիս· :

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Դատական վճիռի մը համաձայն բնա– կարանի ծանր տպագրի մը մատնուած ըլլալով , կը փնտռեմ Փարիզի կամ ար – ուարճաններուն մէջ առնուազն երկու սենեակ եւ խոհանոցով յարկաբաժին մը : Տեղեկացնել հասցէիս՝

A. KEMPETIAN
6, RUE D'ARRAS, PARIS-5e

ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ
— ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ —

ՏՊԱՐԱՆ "ՏԱՐՕՆ"

20, Avenue des Cottages
CALLUIRE (Rhône)


Կը ստանձնէ հայերէն եւ ֆրանսերէն ամէն տեսակ տպագրական մաքուր գոր– ծեր :

Արագ գործառնութիւն , դիւրամատչելի պայմաններ :

Առնել թիւ 8 թրոլէյպիւսը եւ իջնել Սէն Քլէրի վերջաւորութիւն :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի , Հոգեգալուստի արարո – ղութիւնները կը կատարուին տօնին յա – տուկ երգեցողութիւններով , բազմաձայն երկսեռ երգչախումբին մասնակցու – թեամբ :



AU BEAU NOYER

Salles de séjour — Penderies - literie
Chambres - cosys — Cuisines laquées
Salons-tapisserie — Fauteuils-canapés-lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ
ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՁՐԻ ՅԱՆՁՆԵԼԻ ՓՐԱՆՍԱՑԻ
ԱՄԷՆ ԿՈՂՄԸ

185, BD. J. JAURES
15, AV. A. MORIZET
Boulogne - Billancourt
Métro : MARCEL SEMBAT
Mol. 06-03 et 60-38

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 փր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 փրանք: Հատը 20 փր.

ՇԱԲԱԹ
16
ՄԱՅԻՍ
SAMEDI
16 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8394 35EME ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4295

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԻՐ ԴԱՒԱՆԱՆՔԻՆ

—o—

Այսօր կը բացուի Հ. Յ. Դաշնակցու – թեան Արեւմտեան Եւրոպայի 30րդ Շրջա – նային ժողովը :

Այս տարուան հաւաքոյթը կը գուգա – դիպի քաղաքական արտակարգ պայման – ներու :

Լէմանի ափերուն վրայ կանաչ սեղան – ներու շուրջ հաւաքուած դիւանագէտները կը փորձեն լուծում մը գտնել այն բոլոր բարդ վէճերուն , որոնք 1945էն ի վեր կը փոթորկեն աշխարհը :

Ժողովականները բոլորն ալ երէկի դաշ – նակիցներն են, որոնք հասարակաց թըշ – նամիին դէմ միացեալ ուժերով ճակատած եւ յաղթանակը տարած էին ի դին ան – հուն զոհողութեանց :

Ինչպէս առաջինին, երկրորդ աշխարհա – մարտին ալ դաշնակիցները զեղեցիկ նշա – նաբաններ արձանագրած էին իրենց դրօ – շին վրայ, — մասնաւորաբար ազգերու ազատագրութեան փաղաքշիչ սկզբունքը :

Կը կռուէին «արդարութեան» եւ «ազա – տութեան» համար :

Յաղթանակը եղաւ կատարեալ, ինչպէս 1918ին : Գերմանիա անձնատուր եղաւ «ա – ռանց պայմանի » :

Ազատագրութեան գրաման ենթար – կուած սկանտինաւեան երկիրները , Պել – ժիա, Հոլանտա եւ Ֆրանսա : Սակայն կեդրոնական եւ արեւելեանեւրոպայի մէջ դաշնակից բանակներուն չնորհիւ ազա – տագրուած երկիրները ինկան բոլշեւիկ – եան բռնակալութեան տակ :

Արեւմտեան դաշնակիցները չ՛ա՞ռ բա – ւական էին եղած՝ հաւատալով Սթալինի խոստումներուն :

Ու ահա՛ 14 տարիէ ի վեր այդ բարե – մասութեան պատիժն է որ կը կրէ ամբողջ աշխարհ :

Հայկական Դատը մէկ մասնիկն է այն բոլոր ազատագրական արդար դատերուն, որոնք իրենց լուծումին կը սպասեն :

Մարդկութիւնը կ՛ապրի վտանգ ան – ստուգութեան մէջ :

Զիներ ու պատերազմը գերազդեու վի – ճակի մէջ կը պահէ ամբողջ աշխարհը :

Համաշխարհային նոր պատէմ մը մըղ – ձաւանջը կը ջլատէ ամէն ճիլ :

Աննահանջ մրցում արեւելքի եւ արեւ – մուտքի միջեւ՝ ազատագրութեան հա – մար, — հիւլէական ու ջրածնային :

Ու խարուսիկ բանակցութիւններ՝ յա – նուն դինադադարութեան :

Խաղաղասէր մարդկութիւնը աչքերն ուղղած է դէպի Ժընեւ , անկէ սպասելով աւետաբեր ազդանշան՝ ձիթենիի ճիւղը կը – տուցին :

Ցոյսի փոքրիկ նշոյլներ կը սկսին կայծ – կռտիլ հողիներուն մէջ հարիւր միլիոնա – ւոր մարդոց, որոնք երկաթէ վարագոյ – րէն անդին կը տառապին տարիներէ ի վեր , անվհատ սպասելով լուսաշող ար – շալոյսին, որ անպայման պիտի ծագի :

Հ. Յ. Դաշնակցութիւնը ի սիրուս աշ – խարհի իր ծաւալուն եւ կարգապահ կազ – մակերպութեամբ կանգնած է հայ ժողո – վուրդի կողքին, իբրեւ աննկուն պաշտ – պանը անոր արդար Դատին :

Հայապահպանման նուիրական գործին մէջ իրեն զօրավիգ կը հանդիսանան եր – բեակ քոյր կազմակերպութիւններ , — կանացի, երիտասարդական ու մշակու – թային :

Հաւատարիմ իր դաւանանքին, որուն կապուած է անդրդուելիօրէն եօթը տաս – նեակ տարիներէ ի վեր, անիկա անչեղ կը քալէ իր դծած ճամբէն եւ պիտի չա – րունակէ քալել՝ մինչեւ իրականացումը իր սրբազան նպատակին :

Այս խոր եւ անխախտ հաւատքով է , որ կը բացուի այսօր Հ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի 30րդ Շրջանային ժողովը :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԺԸՆեւի ՄԷՋ

ՀԵՐԹԸՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ԼՈՒԾՈՒԻ
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ

●

ԺՈՂՈՎԻՆ ՆԱԽԱԳԱՀԵՑ՝
ՔՈՒՎ ՏԸ ՄԻՒՐՎԻԼ

Հինգշաբթի կէսօրէ ետք, Ֆրանսայի Արտաքին նախարար Քուվ Տը Միւրվիլի նախագահութեան ներքեւ դումարուող Ժընեւի ժողովին մէջ Ամերիկայի Արտա – քին նախարար Հերթըր ներկայացուց Ա – րեւմուտքի խաղաղութեան ծրագիրը :

Գերմանիոյ վերամիացման, Եւրոպայի ապահովութեան եւ խաղաղութեան դաշ – նագրի ստորագրութեան չուրջ Ֆրանսա – յի, Անգլիոյ եւ Ամերիկայի կողմէ պատ – րաստուած այս ծրագիրը հիմնուած է դէմատուր չորս հանդրուաններու վրայ եւ մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ : Ամէն պարագայի մէջ, Հերթըր կը չեչտէ թէ գերմանացի ժողովուրդը ազատ է ըն – տրելու ի՛ր ուզած վարչակարգը՝ քանի որ ազատ ընտրութիւնները տեղի պիտի ու – նենան երկուքուկէս տարի յետոյ : Մի – ժամանակ պէտք է պահել ուժերու հա – ւասարակշռութիւնը՝ Եւրոպայի ապա – հովութիւնը հաստատուն հիմերու վրայ դնելու համար :

Հերթըրի ծրագիրով միջազգային ներ – կայ տաղնապը պէտք է լուծել չորս հան – գրուանններով :

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ

Վերամիացում.— Ազատ ընտրութիւն – ներ Պերլինի մէջ՝ մասնաւոր յանձնա – խումբի մը հսկողութեան ներքեւ : Պեր – լինը ամբողջութիւն մը պէտք է նկատել : Զորս մեծերը պիտի ապահովեն Պերլինի ազատութիւնը՝ սպասելով Գերմանիոյ վերամիացման :

Ապահովութիւն.— Հասարակաց յայ – տարարութեամբ մը, որուն կրնան մաս – նակցիլ նաեւ չհաղորդուած այլ երկիր – ներ, պատրաստակամութիւն պէտք է յայտնել միջազգային ամէն տարակար – ծութիւն խաղաղութեամբ լուծելու, ուժ չգործածելու եւ նախայարձակ որևէ երկ – րի տնտեսական ու զինուորական օժան – դակութիւն ցոյց չտալու համար :

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ

Վերամիացում.—Խառն կոմիտէ մը պի – տի կազմուի՝ որուն անդամները պիտի նշանակուին Արեւելեան եւ Արեւմտեան Գերմանիոյ կառավարութիւններուն կող – մէ : Կոմիտէն պիտի ունենայ 35 անդամ – ներ , որոնց 25ը՝ Արեւմտեան Գերմանիա – յէն (52 միլիոն բնակիչ) եւ տասը՝ Արե – ւելեան Գերմանիայէն (17 միլիոն բնա – կիչ) : Այսուհանդերձ որոշ իրաւասու – թիւններ կը տրուին Փանքովի , քանի որ որոշումները պիտի անցնին միայն երեք չորրորդի մեծամասնութեամբ :

Այս կոմիտէն պիտի հսկէ նաեւ երկու Գերմանիաներու բնակիչներուն գործակ – ցութեան, ազատ շրջագայութեան եւ հր – րատարակութեանց փոխանակութեան վը – րայ, քաջալերելով զանոնք : Վերջապէս , պիտի պատրաստէ ընտրական օրէնք մը՝ ամբողջ Գերմանիոյ համար : Երբ համա – ձայնութիւն չգոյանայ՝ ընտրական երկու օրէնքներ հանրաքուէի պիտի դրուին :

Ապահովութիւն.— Եւրոպայի զանա – զան չրջաններու միջեւ զինուորական տե – ղեկութիւններ պիտի փոխանակուին : Զին – եալ ուժերը պիտի սահմանափակուին, 2·500·000 Միացեալ Նահանգներու եւ նոյնքան ալ Խ. Միութեան համար : Ա – նակնկալ յարձակումներու առաջքն առ – նելու նպատակով հսկողութեան միջոցներ ձեռք պիտի առնուին : 1954ին Արեւմտա – եան Գերմանիոյ կողմէ ընդունուած հիւ – լէական դէնքերու պատրաստութեան վրայ դրուած արգելքը ի գործ պիտի կիրարկուի Գերմանիոյ բոլոր չրջաններուն, ինչպէս նաեւ Արեւելեան Եւրոպայի այլ երկիրնե – րուն համար :

ԵՐՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ

Վերամիացում.— Բոլանդակ Գերմա – նիոյ համար երեսփոխանական ընտրու – թիւններ պիտի ըլլան՝ երկու Գերմանիա – ներու ներկայացուցիչներուն պատրաս – տած ընտրական օրէնքի հիման վրայ , համաձայնագրի ստորագրութենէն երկու – քուկէս տարի յետոյ : Հսկողութիւնը պի – տի կատարուի Արեւելեան եւ Արեւմտեան Գերմանացիներու կողմէ, որոնց պիտի միանան ՄԱԿի պաշտօնեաները, կամ՝ չորս մեծերու ներկայացուցիչները : Ընտրուած երեսփոխանները պիտի ընտրեն իրաւասու միակ կառավարութիւն մը՝ որ պիտի ստորագրէ խաղաղութեան դաշնագիրը :

Ապահովութիւն.— Որոշ գիծի մը երկու կողմերը ապազինեալ գօտիներ պիտի ըս – տեղծուին՝ ուր սահմանափակ թիւով զին – ուորներ պիտի մնան մինչեւ խաղաղու – թեան դաշնագրի ստորագրութիւնը : Այնուհետեւ ,օտար բանակները պիտի հե – ռանան իրենց հաստատուած վայրերէն, եթէ խնդրոյ առարկայ երկիրները բաղ – ձանք յայտնեն : Սակայն այս որոշումնե – րը վերաքննելի կը դառնան այն ատեն՝ երբ վերամիացեալ Գերմանիան առաջար – կէ մաս կազմել Վարշաւայի Դաշնակցու – թեան կամ՝ Ատլանտեան Ուխտին :

Այդ պարագային՝

— Մասնաւոր միջոցներ ձեռք պիտի առնուին զինեալ ուժեր եւ ռազմական խարիսխներ հաստատելու համար վերա – միացեալ Գերմանիոյ եւ միւս Ուխտին ամէնէն մօտ երկիրներու սահմանադր – լութիւններուն վրայ· Զորսերը, ուրիշ եր – կիրներու հետ, համաձայնութիւն մը պի – տի կնքեն՝ միասին դիմադրաւելու համար որեւէ յարձակում :

— Եթէ միացեալ Գերմանիան Ատլան – տեան Ուխտին յարի ,երեք Արեւմտեաննե – րը կարգադրութիւն մը պիտի ընեն՝ ի – րենց ուժերը դէպի արեւելք չյառաջացը – նելու համար (Արեւելեան Գերմանիա) : Ընդհակառակն, եթէ միացեալ Գերմա – նիան վարշաւայի դաշնակցութեան յարի՝ խորհրդային կառավարութիւնը պէտք է նման կարգադրութիւն մը ընէ՝ իր ուժե – րը դէպի Արեւմուտք չյառաջացնելու հա – մար :

ՁՈՐՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ

Խաղաղութեան դաշինք մը պատրաս – տել՝ Գերմանիոյ բաժանման վերջակէտ մը դնելով ու Եւրոպայի ապահովութիւնը հաստատուն հիմերու վրայ դնելով :

Երբ Հերթըր ներկայացուց այս ծրա – գիրը, առաջին անդամ ըլլալով խօսք ա – ռաւ Արեւելեան Գերմանիոյ Արտաքին նախարար Լոթար Պոլց.— Արեւելեան Գերմանիոյ պատուիրակութիւնը պատ – րաստ է Արեւմտեան Գերմանիոյ պատ – ուիրակութեան հետ քննելու խաղաղու – թեան դաշնագրին հետ կապ ունեցող բո – լոր հարցերը, ինչպէս նաեւ միացեալ , ժողովրդավար եւ խաղաղասէր Գերմա – նիա մը ստեղծելու խնդիրը :

Բայց, աւելցուց Պոլց, Գերմանիոյ վե – րամիացումէն եւ Պերլինի հարցէն դուրս որեւէ ծրագիր պիտի մերժուի իրենց կող – մէ : Արդարեւ, համաձայնաւոր մամուլը խիստ յարձակողականի մը անցաւ Հերթը – րի ծրագրին դէմ :

Մոսկուայի ձայնասփիւռը մամուլի « Թաս » գործակալութեան մէկ լուրը հե – ռաստռելով յայտարարեց թէ Արեւմտեան ծրագիրը պատրաստուած է անպիտանա – լով երկու Գերմանիաներու գոյութիւնը եւ արծածելով միջազգային այնպիսի բարդ հարցեր՝ որոնք կ՛ուշացնեն եւ կը

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՕՏԱՐ ԹՂԹԱԴՐԱՄ ՓՈԽԵԼՈՒ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

★

Դրամափոխութեան Գրասենեակը (Օ – ֆիս տէ Շանժ) ծանուցագիր մը հրատա – րակած է որով այսուհետեւ ամէն օտար կամ Ֆրանսացի, երկրին մէջ հաստատ – ուած թէ ոչ ,ազատ է որեւէ օտար թղթա – դրամ փոխել դրամատան մէջ , առանց ինքնութիւնը յայտնելու եւ ծախած դրամարին ապրիւրը ճշդելու անցեալի պարտաւորութեան : Այս կարգադրութիւ – նը նոր քայլ մըն է Ֆրանքֆին բոլորովին ազատ առուծախի ծրագրին գործադրու – թեան համար, որուն ի տես կառավա – րութիւնը կարգ մը որոշումներ առած էր անցեալ Դեկտեմբեր 26ին :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՈՒՈՇԻՆԿԹՈՆԻ զինուորական հիւան – դանոցին մէջ վերաբուժական մտահոգիչ գործողութեան մը ենթարկուեցաւ սպա – յակոյտ պետերու յանձնախումբին նա – խագահը՝ Զօր· Նէյթըն Թուխինկ : Թոքե – րուն չղաղնկարին հիման վրայ, նախա – գուշական եւ անհրաժեշտ նկատուեցաւ զօրավարին ձախ թոքին վերնաբաժակի հատումը կատարել :

ԼՈՆՏՈՆի մէջ Պարսից Շահը մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեց թէ «խորհրդային կառոյցի յարձակումները եւ Թունաւոր քարոզչութիւնները Պարս – կաստանի դէմ», Մոսկուայի ակնկալածին հակառակ արդիւնքը տուած են : Շահն աւելցուց որ իր երկիրը միշտ պատրաստ է դրացիական հաչտ եւ բարեկամական յարաբերութիւններ պահել Խորհրդային Միութեան հետ պայմանաւ որ ան յարգէ Պարսկաստանի անկախութիւնը ու ազա – տութիւնը :

ՊԵԼԿՐԱՏԻ դիւանագիտական չրջանակ – ներուն մէջ կ՛ըսուի թէ խորհրդային եւ եւրոպացի պատգամաւորներ բանակցու – թեան մէջ են՝ երկու երկիրներու յարա – բերութիւնները բարելաւելու համար , նոյնիսկ՝ եթէ առ այժմ կարելի չըլլայ բոլորովին ջնջել քաղաքական եւ կուսակ – ցական հիմնական տարակարծութիւննե – րը :

ՀՈՒՆԳԱՐԻԱՑԻՆ կազմակերպուած պը – տոյտով Փարիզ եկած խումբի մը մէջէն հունգարացի զոյգ մը ազատութիւնը ընտ – րեց եւ որոշեց Ֆրանսա հաստատուիլ :

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԻ տօնին առիթով եր – կաթուղիի ընկերութիւնը 457 կառախում – բեր դրաւ Փարիզցիներու տրամադրու – թեան տակ , — 291 սովորական չոգեկառ – քեր եւ 166՝ յատկեալ :

ԻՐԱՔԻ վարչապետը՝ Զօր· Քասըմ յայ – տարարեց թէ Իրաքը համայնավար դար – ձած չէ, բայց բարեկամ է համայնավար պետութեանց : Վարչապետը բաւ նաեւ թէ Մէջ· Արեւելքի մէջ, առաջին անգամ ըլլալով, կիները մաս պիտի կազմեն Իրա – քի կառավարութեան :

ՊԼՑՐՈՒԹԻՆ կը հաղորդէն որ Իրաք ո – րոշած է «պօլքոթ»ի ենթարկել Ֆրանսան : Պաղտատի ձայնասփիւռը յայտարարեց նաեւ թէ Ֆրանսական նաւերը այլեւս պի – տի չկարենան Իրաքեան ապրանքներ բեռ – նել : Ինչպէս կ՛երեւի Իրաք կ՛ուզէ Ա· Միացեալ Հանրապետութեան տեղը գրա – ւել Ալժերիոյ Ազատ· ճակատին կողքին : Իրաքի կառավարութիւնը արդարացնելու համար իր որոշումները տուած է հետե – եալ պատճառաբանութիւնը .— «Ֆրան – սա թշնամական վերաբերմունք ունի Ա· – բարներու հանդէպ եւ կը գործակցի Իս – րայէլի հետ » :

ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ
ՄԵՐ
ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ

ՀԱՅՏՆԻԿ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

(Տե՛ս վերջին էջը)

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

(Տե՛ս վերջին էջը)

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

(Տե՛ս վերջին էջը)

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

(Տե՛ս վերջին էջը)

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

(Տե՛ս վերջին էջը)

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

ՀԱՅՏՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ

(Տե՛ս վերջին էջը)

ԿՈՅՏԸ

Ֆ. ՀԱՏՈՒՐ

Լ.

Մարմնոտ տատիկ մեր Հա – կոբ պապն էր մեր մանկության, մի հին ոչ սպիտակ, ոչ էլ սև մազերով, որոնց ներքևից չէին երևում նրա ականջները, որոնք ծածկված էին մեծ ու կարմրավուն ականջակալներով։ Ես ու քույրս Նատոն նրան անվանում էինք Կոյտ, որովհետև նա ինքն էլ իր մասին ասում էր, թե ինքը կոյտ է։ Մենք չգիտեինք, թե ինչ է նշանակում կոյտ, բայց ինքը ասում էր, ուրեմն մենք էլ էինք ասում։ Ինքն էլ մեզ Կոյտ էր կանչում։ Ես ու Նատոն միշտ նրա հետ էինք խաղում։ Մեր խաղերից ամենասիրելին «Ձին» էր։ Ես ու Նատոն ձի էինք դառնում, Կոյտը մեզ քշում էր, ինչպես ձիերին։ Ես ու Նատոն ուզում էինք, որ Կոյտը մեզ ավելի արագ քշի, որովհետև ուզում էինք, որ ինքն էլ ավելի արագ վազի։ Կոյտը մեզ քշում էր, ինչպես ձիերին, ինչպես ասում էր ինքը, ինչպես ինքն էր տեսել։ Ես ու Նատոն ուզում էինք, որ Կոյտը մեզ քշի, ինչպես ինքն էր տեսել։ Կոյտը մեզ քշում էր

դժուարացնեն Գերմանիոյ հետ խաղաղութեան դաշնագրի մը ստորագրութիւնը :

Իսկ Արեւելեան Գերմանիոյ մէջ կը յայտարարեն թէ «անընդունելի» ,«իրական» նուիրենէ հեռու» եւ «ձախողութեան դատապարտուած» է Արեւմտեան ծրագիրը :

ՄԵԾ ԺՈՂՈՎԻՆ ՊԶՏԻԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախընտրուած եւ փնտռուած խմիչք – ներն են :— Օրուան ժամերուն՝ գարե – ջուր, առաւօտուն՝ սուրճ, իրիկունը՝ Ուիսքի եւ ճիճի :

Ամէնէն շատ տոլար կը փոխուի գրա – մատուներու մէջ , երկրորդական գծի վրայ կուգան անգլիական ոսկի եւ գեր – մանական մարք :

Երկու Գերմանիաներու սեղաններուն կարգադրութիւնը բացատրելու համար անգլիացի դիւանագէտ մը կ'ըսէր :— Եր – կու Գերմանիաները Սփուրճիի ձեւով սեղաւորուած են :

Բայց այս բացատրութիւնը հաճելի չէ Թուած գերմանացի (Արեւմտեան) լրա – գրողի մը· ան չէր ուզեր որ իր երկիրը արբանեակի մը նմանցնեն , նոյնիսկ արուեստական եւ պատասխանած է :—«Զորս Մեծերն ալ լուսնի մէջ են, կուզէիք ըսել անչուչա» :

ԱՄԵՐԻԿԵԱՆ Օդնութեան հիմնադրամը թերաճ երկիրներու չարքին 6 միլ· տոլարի փոխատուութիւն մը ըրաւ Թունուզի :

ՍԻՏՆԷ ՊԷՇԷՖ ճապի նշանաւոր վար – պետը մեռաւ առջի դիշեր , 62 տարեկա – նին, թոքերու խլիրդէ :

ՎԻՆՆԱՅԷՆ կը հաղորդեն թէ Ա· Մ – ութեան մէջ «Ուկրայնական ազգայնա – կան կազմակերպութեան » հինգ անդամ – ներ մահուան դատապարտուած եւ հրա – ցանազարկ եղած են : Իրենց վերագրուած ամբաստանութիւնն էր — « Հակայե – ղափոխական գործունէութիւն, եւ դա – տարութիւն խորհրդային վարչաձեւին դէմ » :

ԽՐՈՒՇՁեի կարգ մը «յայտնութիւն – ներ» րրած է Ցունաստանի յառաջդիմա – կան կուսակցութեան պարագլուխ՝ Սփի – րոս Մառքեզինիսի որ Միկոյեանի հրա – էրով Մոսկուա կը դառնայ : Խրուշչեւ ը – սած է թէ Պարսից Շահին անկումը կը նախատեսէ , եւ թէ իր կարծիքով ո'չ Ֆը – րանսան , ո'չ Անգլիան , ո'չ ալ Ամերիկան երկու Գերմանիաներու վերամիացումը կը փափաքին : Գալով Ա· Միութեան , չի կրնար դրամատիրական սկզբունքներու վրայ հիմնուած միացում մը ընդունիլ :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի, Հոգեգալուստի արարո – ղութիւնները կը կատարուին տօնին յա – տուկ երգեցողութիւններով , բազմաձայն երկսեռ երգչախումբին մասնակցու – թեամբ :

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆ. ԵԿԵՂԵՑԻ

8 bis, Rue des Ternes

Մէթրօ Փորթ Մայեօ կամ Շամփէրէ

Այս կիրակի առաւօտ ժամը 10·45ին : Կը խօսի Պատուելի ՍԻՍԼԵԱՆ : Նիւթ՝ « Սուրբ Հոգիին փոթորիկը » :

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏՋ. ԵԿԵՂԵՑԻ

20, RUE JEMMAPES

ՄԱՐՍԷՅԼ

Պաշտամունք , այս կիրակի Հոգեգա – լուստի առթիւ , Սէն Ժերմ՝ ժամը 9·30– ին , Մարսէյլ , Ռիւ Ժէմար՝ ժամը 10·45– ին : Կը խօսի՝ Վեր· Յ· ՀԵԼՎԱՃԵԱՆ :

Նիւթ՝ «Մարդուն սիրտը յեղաշրջող զօրութիւնը» :

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Այս տարի Հայ կարմիր Խաչի Ֆէսան – վիլիէի օդափոխութեան կայանի բացումը տեղի պիտի ունենայ երեք Յուլիսին : Ար – ձանագրութեան համար դիմել Հայ Կար – միր Խաչի կեդրոնատեղին , 15 Րիւ Ժան Կուժօն , Փարիզ, երկուշաբթի եւ Ուրբաթ առաւօտները , ժամը 10 – 12 :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

Այրի Տիկին Աննա Շահլամեան , եւ որ – դին Սուրէն , Նուազար ճիվանեան եւ ի – րենց ընտանեկան պարագանները , սրտի խորին կսկիծով կը ծանուցանեն իրենց թանկագին զաւկին , քրոջ , կնոջ եւ ազգա – կանին՝

ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՀԻ ճԻՎԱՆԵԱՆի

(Ծնեալ Շահլամեան)

դառնագէտ մահը , որ տեղի ունեցաւ ծանր գործողութեան մը հետեւանքով Հինգ – շաբթի , 14 Մայիս :

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Երեքշաբթի (19 Մայիս) , ժամը 9ին , հաւաքուիլ ընակարանը՝

127 Աւընիւ Ա· Պրիան , Փավիյեօն :

Ուրկէ մարմինը կը փոխադրուի Փա – վիյեօն առ Պուայի Նոր գերեզմանատունը :

Մասնաւոր մահագդ ղրկուած ձգլլալով , կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել :

Հաղորդակցութեան միջոցները :— Էկ – լիզ տը Փանթէնէն 147 բիւ օթօպիւսը եւ իջնել Էկլիզ տը Փավիյեօն :

ՅԱՌԱՋ :— Մեր ցաւակցութիւնները Տիկին Շահլամեանին եւ ընտանիքին :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Պիւլպիւլեան , Գարբրիէլեան եւ Նշան – եան ընտանիքները կը ծանուցանեն թէ Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար – ուի իրենց մօր , եւ հօր՝

ՏԻՐՈՒՀԻ ԵՒ ՄԻՀՐԱՆ ՊԻՒԼՊԻՒԼԵԱՆի

յիշատակին , այս կիրակի առաւօտ Փարի – զի Հայոց եկեղեցին :

Կը հրաւիրուին ողբացեալներուն յիշա – տակը յարգողները :

×

Պ· Պ· Օզսէն եւ Պարսեղ Մուրատեան կը ծանուցանեն թէ Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի ա – ռաւօտ , իրենց մօր՝

ԱՆԹԱՌԱՄ ՄՈՒՐԱՏԵԱՆի

մահուան յիշատակին , Փարիզի Ս· Յովհ· Մկրտիչ եկեղեցւոյ մէջ : Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ

Յունիս 28ին : Նախաձեռնութեամբ՝ ՆԱՅԻՐԻ երգչախումբին : Ղեկավարու – թեամբ՝ ԳԷՈՐԳ ԵԱՆՊԼԿԵԱՆի :

ՊԱՏԱՐԱԳ

Տէսինի կրօն· Ընկերակցութիւնը կը ծանուցանէ թէ , այս երկուշաբթի առա – ւօտ ժամը 8·30ին Հոգեհալստեան մեռե – լոցի տօնին առթիւ Ս· պատարագ պիտի մատուցուի տեղւոյս Ս· Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ : Կը պատարագէ Վալան – ւէն Տէր Սահակ Քհնյ· Պապիկեան :

ՎԱՐՁՈՒ Է

Ամառուան համար (բացի Օգոստոս ա – միսէն) Նիսի մէջ, սքանչելի դիրքով , Մոն – Պոռոնի կողմը, երեք սենեակ դե – ղեցիկ տեսարանով, պզտիկ պարտէզ, շատ հանգստաւէտ :

Նաեւ ծախու է Սէն Ռեմի լէ Շեվրէօզ 3000 քառակուսի մեթր հող, վրան սիրուն պզտիկ տունով մը :

Դիմել Յառաջին որ կը հաղորդէ :

ՊԱՏԱՐԱԳ ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Այս երկուշաբթի առաւօտ Հոգեգա – լստեան տօնին առթիւ , պատարագ պիտի մատուցուի Ռիւ Ժէ , Սէն Լուի սրահին մէջ : Կը պատարագէ՝ Թորգոմ Քհնյ· :

ԿՈՒԶՈՒԻ

Երիտասարդ հայ օրիորդ մը , կրթը – ւած , որ գիտնայ մեքենագրել (տաքթի – լօ) : Դիմել անձամբ «Յառաջ»ի վարչու – թեան :

ՋՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
EXPERTISE GRATUITE
Ծախելու համար
ձեր փավիյօնը, վիլլան ,
յարկաբաժինը կամ խանութը :
J. TORANIAN
18, AVENUE DE L'OPÉRA
OPE 73-21 OPE 19-45

ՕՐՈՑՔԱՏՈՒՐ

Լիոնի եկեղեցաչէն Տիկն· Միութիւ – նը ամէն չանք կը թափէ հաստատի մի – ջոցներ ստեղծելու Լիոնի եկեղեցւոյ շի – նութեան համար :—

Սալ Մոլիէրի մէջ

ՄԱՅԻՍ 18ԻՆ :— Դպրոցասէր Տիկնանց Միութեան կողմէ թատերական ներկայա – ցում մը եւ խիստ սիրուն պարեր տեղի պիտի ունենան :

ՄԱՅԻՍ 24ին Հորլոժի սրահներուն մէջ իրիկուան ժամը 8·30ին պիտի ներկայաց – ուի, նոր պատրաստուած ֆիլմ մը Հա – յաստանի մէջ, զուտ հայկական կեանքէ « կապօն» :

ՄԱՅԻՍ 31ին մեծ պարահանդէս մը վիճակահանութիւն :

Մանրամասնութիւնները յաջորդով :

ՑՈՒՇԱՑԵՑՈՒՔ

ԻՍԻ :— Հ· Յ· Դ· Զաւարեան կոմիտէի ժողովը այս Շաբաթ , ժամը 21ին , սովո – րական հաւաքատեղին :

Հ· Յ· Դ· «Փոթորիկ» խումբի ժողո – վը այս Հինգշաբթի ժամը 21ին , Հայ Մը – չակոյթի Տան մէջ :

ԼԻՈՆ :— Ֆ· Կ· Ասչի Լիոնի վարչու – թիւնը, ընդհ· ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամուհիները այս Չորեքշաբթի, ժամը 16ին, Յոյներու սրահը : Կարեւոր օրակարգ :

ՀԱՄԱՅՕՐՔ· Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ· ժողովը այս կիրակի առաւօտ ժամը 9ին, Պառ տիւ Կրպի սը – րահը, 7 Պուլվար տ'Ալբէն : Օրակարգ Միութեան տարեկան դաշտահանդէսը , 12 Յուլիս 1959, Սէն Լու Կրան Փէնի մէջ եւ ընթացիկ հարցեր :

ԼԻՈՆԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Լիոնի եկեղեցաչէն Տիկն· Միութիւ – նը ամէն չանք կը թափէ հաստատի մի – ջոցներ ստեղծելու Լիոնի եկեղեցւոյ շի – նութեան համար :—

Սալ Մոլիէրի մէջ

ՄԱՅԻՍ 18ԻՆ :— Դպրոցասէր Տիկնանց Միութեան կողմէ թատերական ներկայա – ցում մը եւ խիստ սիրուն պարեր տեղի պիտի ունենան :

ՄԱՅԻՍ 24ին Հորլոժի սրահներուն մէջ իրիկուան ժամը 8·30ին պիտի ներկայաց – ուի, նոր պատրաստուած ֆիլմ մը Հա – յաստանի մէջ, զուտ հայկական կեանքէ « կապօն» :

ՄԱՅԻՍ 31ին մեծ պարահանդէս մը վիճակահանութիւն :

Մանրամասնութիւնները յաջորդով :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՕՐ

Նախաձեռնութեամբ Հ· Յ· Դ· Նոր Սերունդի Փարիզի Ահարոնեան խումբին

Շաբաթ, 16 Մայիս, ժամը 21էն մինչեւ լոյս Սէրքլը Միլիթէռի շէեղ սրահներուն մէջ :

Ինամուած զեղարուեստական բաժին : Երգ, պար, արտասանութիւն, զաւեշտ :

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

JACQUES MORINOTի ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲՈՎ

Երգիչը՝ ԱԼՎԱՐԻԶ

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ ԵՒ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՅԷԼ–ԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ :

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ, ԺԱՄԸ 20ԷՆ ԵՏՔ

Վարժարանի դալարագեղ պարտէզներուն մէջ :

ԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԸ

RUE DE L'ÉGALITÉ

Իսի Լէ Մուլինոյի մարզական խումբը կը կազմակերպէ ֆութպոլի բաժակի մեծ մրցում մը, կիրակի (17 Մայիս) եւ Երկուշաբթի (18 Մայիս) :

Նախագահութեամբ Պ· ՍԵՎԷՍԹՐԻ

Փոխ քաղաքապետ եւ նախագահ քաղաքապետական մարզական գրասէն – եակին Իսի Լէ Մուլինոյի :

Նուիրուած՝ Հ· Մ· Ը· Մ·ի Ա· խումբի անդամ

ՊԵՏՐՈՍ ԵՍԱՅԵԱՆի ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Ինկած պատուոյ դաշտին վրայ Ալժերիոյ մէջ)

Կը մասնակցին հետեւեալ խումբերը :—

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆԸ

(Promotion d'Honneur)

Stade de Vanves - C. S. A. Garches

ԻՍԻԻ Հ· Մ·Ը·Մ·Ի ՄԱՐԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

(Promotion de 1ère Division)

ԿԻՐԱԿԻ 17 ՄԱՅԻՍ

Ա·— Մրցում ժամը 14·30ին (Stade de Vanves contre U. G. A. Issy)

Բ·— Մրցում ժամը 16ին (U. J. A. Alfortville contre C. S. A. Garche)

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 18 ՄԱՅԻՍ

Ա· Մրցում ժամը 14·30ին


Հանդիպում (ֆինալ) կիրակի օրուան կորսնցնող խումբերու :

Բ· Մրցում ժամը 16ին· Հանդիպում (ֆինալ) կիրակի օրուան յաղթական խումբերուն :

Հաղորդակցութեան միջոցներ՝

Metro Mairie d'Issy - Autobus 190, descendre Hôpital Percy (Cimetière)

ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՄԵԼԻՆԵՐ



REMINGTON "Princess"
— Մասնաւորաբար —
ԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
պատրաստուած մօտէլը

REMINGTON "Super 60"
— Ամէնէն —
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾԸ
Super-confort du rasage électrique

REMINGTON IV
Բոլոր պիւտճէներուն
մատչելի ՄՕՏԷԼ մը
ԱՆՆԱԽԸՆԹԱՑ
ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ

Services Commerciaux Rasoirs Electriques
12 Rue Edouard VII Paris - 9e

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԹԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ԿԻՐԱԿԻ
17
ՄԱՅԻՍ
DIMANCHE
17 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8395 | 35EME ANNÉE | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4296

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ

Կեանքի կոչուած ժԹ. դարու վերջա – լոյսին, վաթսուն տարեկան է այսօր Հայրենիքը, պաշտօնաթերթը Հ. Ց. Դաշ – նակցութեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէին :

Իրրեւ ամէնէն հինն ու ամէնէն երկա – րակեացը ներկայիս լոյս տեսնող հայե – րէն օրաթերթերուն, անիկա մեզի կը ներկայանայ իրրեւ վաւերական ու պատ – կառելի վկայեան մը, որ յարգանք կը պարտադրէ :

Ամերիկեան «Ազատաց երկիր» մըն էր եղած Հայերուն համար երէկ, երբ բռնա – կալ կառավարութեան մը հալածանքները մէկ կողմէն, անզօրծութիւնն ու թշուա – ռութիւնը միւս կողմէն պանդխտութեան ճամբան ցոյց կուտային մեր զժբախտ ե – րիտասարդներուն՝ իրրեւ միակ միջոց փրկութեան :

Ամերիկեան միսիոնարները 1850ական թուականներէն սկսեալ Թուրքիոյ հայկա – կան շրջանակներուն մէջ իրենց կատարած քարոզչական գործունէութեամբ եւ հիմ – նած կրթական հաստատութիւններով Միացեալ Նահանգները ճանչցուցած էին մեր հայրենակիցներուն :

Ազատութեան ափերուն վրայ սկսաւ կազմուիլ հայկական գաղութ մը, որ հետզհետէ աճեցաւ 1895 – 96ի համիտ – եան համատարած ջարդերէն վերջ :

Այդ վտարանդի ու անտէր «զատա – ցի» Հայերուն տէր ու պաշտպան կը կանգնէր Հ. Ց. Դաշնակցութիւնը՝ իր կազմութեան առաջին օրերէն սկսեալ :

Քանի մը զուգադիպական, անճնազոհ մտաւորականներ հիմը կը դնէին Հայ – րենիքի՝ Նիւ Եորքի մէջ (նաքէն Պոսթըն փոխադրուած) :

Իրենց նպատակն էր առաջնորդ հան – դիսանալ տեղական լեզուին եւ օրէնքնե – րուն անծանօթ մեր պանդուխտ հայրենա – կիցներուն : Մանաւանդ անոնց պահել ա – նոնց սրտին մէջ հայրենիքի սէրը : Խօսիլ անոնց հետ իրենց մայրենի լեզուով : Խոպրիկները տալ հայրենիքէն : Սրտապն – դել զանոնք եւ արծարծել հայրենասիրա – կան ոգին՝ լաւագոյն օրերու հեռանկարը պատկերացնելով անոնց աչքերուն :

Մէկ խօսքով Հայրենիքը դարձնել «հո – գեկան հայրենիք» տարապէր բաղմու – թեանց համար :

Ու Հայրենիք լիուլի յաջողեցաւ իր սրբազան առաքելութեան մէջ :

Վաթսուն երկարաձիգ տարիներու ըն – թացքին տասնեակներով անուանի դաշ – նակցական մտաւորականներ իրենց մտքի լոյսը ի սպաս դրին Հայրենիքին : Իրենց մաքուր յեղափոխականի գաղափարական չունչով սերունդներ դաստիարակեցին, հասնելով մինչեւ մեր օրերը :

Հայրենիք աճեցաւ ու բազմացաւ տա – րիներու ընթացքին, նորանոր ծիլեր ու բողբոջներ արձակելով :

1922 Նոյեմբերէն ի վեր անընդհատ լոյս կը տեսնէ Հայրենիք ամսագիրը :

1933էն ի վեր կը հրատարակուի Նոր Սերունդի Հայրենիք շաբաթօրեակը (անգերէն լեզուով) :

1948ին հիմը դրուեցաւ Արմինիոն Րը – վիու անգլ. եռամսեայ պարբերաթերթին՝ հայ մշակոյթն ու հայկ. դատը ճանչցնե – լու համար օտարներուն :

Մեծ եղաւ դերը Հ. Ց. Դաշնակցու – թեան եւ Հայրենիքներուն Ամերիկայի մէջ, որ մինչեւ այսօր ալ «Ազատաց եր – կիր» է շատ մը Հայերու համար :

Ու տակաւին մեծ դեր վերապահուած է իրենց՝ քանի վերջ չեն գտած տարագրու – թեան տարիները :

Վաթսունամեակին առթիւ կը մաղ – թենք աւելի մեծ յաջողութիւն ու բար – գաւաճում մեր պաշտօնակցին :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿՐՈՄԻՔՕ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ՝ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԵՏ

Ժընեւի խորհրդաժողովին հինգերորդ նիստն ալ փակուեցաւ եւ տակաւին կա – րելի չէ խօսիլ յառաջդիմութեան կամ համաձայնութեան մը մասին :

Խ. Միւթէեան Արտաքին Նախարար կրոմիքօ, Հերթըրի ծրագիրը լսելէ յե – տոյ, առանց երկընտրանքի ներկայացուց Գերմանիոյ հետ խաղաղութեան դաշինք մը կնքելու հին ծրագիրը :

Անգլիոյ Արտաքին Նախարար Սելվին Լոյտ կարգ մը քննադատութիւններ ընե – լէ ետք՝ կանգ առաւ Արեւմտեան ծրա – գրին վրայ, չեշտելով այն պարագան՝ թէ «երեք»ները զիջումներ ըրած են արդէն, որպէսզի կարելի ըլլայ համաձայնութեան մը յանգիլ :

Ամէն պարագայի մէջ, խորհրդային ներկայացուցիչին բռնած դիրքէն յուսա – խար եղան Ժընեւի ժողովին Արեւմտեան նախարարները : Ոչ ոք կը մտածէր, թէ կողմերու մերձեցման ճիգերէն ետք կրո – միքօ դարձեալ սեղան պիտի դնէր ծրագիր մը, որ անընդունելի նկատուած էր պր – դէն Փարիզի, Ուաշինկթընի եւ Լոնտոնի կառավարութիւններուն կողմէ :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Այն փաստաթուղթն է՝ որ Արեւմուտ – քին յանձնուած էր Յունուար 10ին եւ Մարտ 3ին :

Նախկին դաշնակիցները խաղաղութեան դաշինք մը պէտք է կնքէն երկու Գերմա – նիաներու հետ : Հետեւաբար՝ Փանքով եւ Պոն պիտի քաշուին Վարշաւայի Դա – շինքէն եւ Ատլանտեան Ուխտէն :

1959 Յունուար մէկի պերմանական սահմանները պիտի պահուին՝ իբրեւ նոր Գերմանիոյ սահմանները : Լեհեւգերմա – նական սահմանը՝ Օտէր – Նայս գիծը պիտի ըլլայ : Լեհաստան իր դերիշխանու – թիւնը պիտի ունենայ նախապէս Գերմա – նիոյ պատկանած հողամասերուն վրայ :

Գերմանիա պէտք է համաձայնագիր մը ստորագրէ՝ որով կ'ընդունի թէ Զեխո – սլովաքիա տէրն է իր այժմու սահման – ներուն եւ Ավզան ու Լորէնը կը պատկա – նին Ֆրանսայի : Հետեւաբար՝ Միւնիխի համաձայնութիւնը չեղեալ կը նկատուի :

Գերմանիոյ եւ Աւստրիոյ միջեւ քաղա – քական ու տնտեսական որեւէ միութիւն պիտի արգիլուի :

Արեւելեան եւ Արեւմտեան Գերմանիա – ները պէտք է համաձայնին՝ որ որեւէ ձեւով զէնքի ուժի պիտի չդիմեն՝ իրենց միութիւնը իրականացնելու համար : Ի – րենց տարակարծութիւնները պէտք է հարթեն խաղաղ միջոցներով :

Երբ գերմանական միութիւնը իրակա – նութիւն դառնայ եւ միակ Պետութիւն մը հաստատուի՝ Արեւմտեան Պերլին ապա – գինեալ եւ ազատ քաղաք մը պիտի դառ – նայ :

Գերմանիա իրաւունք պիտի ունենայ պահելու ցամաքային, ծովային եւ օդա – յին ազգային ուժեր՝ երկրին պաշտպա – նութեան համար :

Գերմանիա իրաւունք չունի հիւլէական զէնքեր արտադրելու, գնելու կամ փոր – ձելու, ինչպէս նաեւ հեռաւար հրթիռներ չի կրնար ունենալ :

Կարեւոր յաւելում մը՝ Մարտ 3ի յու – շագրին մէջ.— Ցաղթական չորս երկիր – ները իրաւունք չունին խառնուելու Գեր – մանիոյ վերամիացման հարցին : Այդ կար – գադրութիւնը պէտք է ըլլայ փանքովի եւ Պոնի կառավարութեանց միջեւ :

Կրոմիքօ ուրբաթ օր այս ծրագիրը պաշտպանեց Քուվ Տը Միւրվիլի, Հեր – տըրի եւ Լոյտի ներկայութեան, բայց ոչ մէկ փոփոխութիւն դրաւ անոր մէջ : Հա – րեւանցի ակնարկ մը նետելով նախօրօք ներկայացուած արեւմտեան ծրագրին վր – րայ, յայտարարեց թէ չատ «բարդ» հարց էր անիկա, քանի որ Անգլիացիները, Ֆրանսացիներն ու Ամերիկացիները բազ – մաթիւ խնդիրները իրարու կապած են.— « եթէ այդ մեթոտին հետեւինք, աւել – յուց կրոմիքօ, անելի պիտի մատ – նուինք» :

Ամէն պարագայի մէջ, խորհրդային նախարարը ըսաւ թէ յետագային աւելի մանրամասնօրէն իր կարծիքը պիտի յայտնէ Արեւմտեան ծրագրին շուրջ :

Անգլիոյ Արտաքին նախարարը երկրորդ անգամ ըլլալով միջամտութիւն մը ըրաւ՝ կրոմիքոյի «յուսահատական » խօսքերէն ետք : Լոյտ պնդեց թէ լրջութեամբ հարկ է մօտենալ Արեւմտեան ծրագրին, քանի որ Մոսկուա չատ լաւ պիտէ թէ իր ծրա – գիրը, այնպէս՝ ինչպէս կրկնուեցաւ կրոմիքոյի կողմէ, յաջողութեան նուա – զագոյն բախտն անգամ չունի :

Արեւմտեան Գերմանիոյ ներկայացու – ցիչ Կրեւէ (Ուաշինկթընի գերմանական դեսպանը) մերժեց ընդունիլ խաղաղու – թեան դաշնագրի խորհրդային ծրագիրը եւ կը կարծուի թէ Արեւմտեան Արտաքին նախարարներն ալ նոյն վճռական դիրքը պիտի որդեգրեն :

Հաւանական է, որ «երեք»ները խոր – հրդային ծրագիրը մերժելու համար ներ – կայացնեն կրեւէի պատճառաբանութիւն – ները .— «Այդ ծրագիրը ուժերու հաւա – սարակշռութիւնը պիտի խախտէ ի վնաս Արեւմուտքի, վտանգելով Արեւմտեան Եւրոպայի ապահովութիւնն ու ազատու – թիւնը, ինչպէս նաեւ՝ ազատ աշխարհը» :

Գերմանացի դիւանագէտը անդրադառ – նալով Պերլինը «ազատ քաղաք» հռչակե – լու խորհրդային առաջարկին, ըսաւ .— Պերլին երբ ազատ քաղաք ըլլայ՝ Գերմա – նիա պիտի բաժնուի երեք մասի.— Արեւ – մտեան Գերմանիա, Արեւելեան Գերմա – նիա եւ Պերլին : Մինչդեռ, կ'աշխատինք երկու Գերմանիաները միացնել ... : Այդ պարագային՝ դժուար պիտի ըլլար եր – կիրը պաշտպանել՝ դուրսէն ըլլալիք յար – ձակումներու դէմ :

Խ. Միւթիւնը արգիլելով Գերմանիոյ զանազան ճարտարարուեստները՝ կը ձգ – տի ճախողութեան մատնել Եւրոպայի տնտեսական հաստարակապետութիւնը :

Կրեւէ անընդունելի կը նկատէ նաեւ այն պարագան, որ Խ. Միւթիւնը կ'ա – ռաջարկէ երկու Գերմանիաներու ներքին հարցերը կարգադրելու համար կազմուե – լիք խառն յանձնախումբի անդամները թիւով հաւասար ընել : Այսինքն՝ յիսուն հոգի Արեւմտեան Գերմանիայէն , որ 52 միլիոն բնակիչ ունի եւ 50 հոգի Արեւելեան Գերմանիայէն՝ որ 17 միլիոն բնակիչ ունի ... Մոսկուա միշտ կը մտա – ծէ համաչափ ներկայացուցիչներ ունենալ :

Երկու կողմերու մերձեցման վրայ դր – ուած յոյսերը հետզհետէ յօդս կը ցնդին :

Մինչ Արեւմուտքը անընդունելի կը նը – կատէ խորհրդային ծրագիրը, անդին, Արեւելեան Գերմանիոյ համաչափ պարագլուխ Իւլպրիխտ կը յայտարարէ թէ Արեւմտեաններու ծրագիրը կը ձգտի Արեւելեան Գերմանիան միացնել Պոնի կառավարութեան : Հակառակ պարա – գային, կ'ըսէ Իւլպրիխտ, փանքով պատ – րաստ է Խ. Միւթեան հետ խաղաղու – թեան դաշինք մը կնքելու :

Նոյնիսկ յայտարարութիւններ եղան նաեւ Մոսկուայի եւ համաչափ այլ երկիրներու պարագլուխներուն կողմէ :

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Լիոնի եւ Մար – սիլիոյ գոյգ փառատօներու հասոյթը՝ 183·241 *ֆրանք :*

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քնքշաբոյր ծաղկանց հրեղէն խաչով
Ժպտում են նորից անտառ ու ձորակ,
Եւ հեղեղները խօսուն – սառնորակ
Ողջունում են ինձ գուարթ ծիծաղով :

Զուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
Գարո՛ւն, ամէն տեղ նոր կեանք ես վառել·
Իմ սրտում էլ ես թեւերդ փռել,
Իմ հոգում էլ ես հրդեհել նոր սէր :

Եւ ահա կրկին գուարթ ու ջահել,
Դուրս ելայ տխուր մեհուրեան բանտից
Պայծառ աչքերդ ողջունում են ինձ
Եւ ես չեմ կարող իմ ճիչը պահել :

Բացել ես իմ դէմ ոսկեղէն հեռուն,
Ծաղկել ես սարո՛ւմ, անտառում, ար – տում ...
Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում —
Ողջո՛յն ձեզ, արեւ, ողջո՛յն ձեզ, գա – րուն :

ՎԱՀԱՆ ՏԻՐԵԱՆ

ՈՏՆԱԶԱՑՆ

Մի՛ խառներ իմ կրակը,
Թող նա հանգչի, մահանայ,
Ու ինձ այրող, յուշերից,
Ոչի՛նչ, ոչի՛նչ չմնայ :

Երբ ես մեռնեմ, իմ շիրմին
Այցի չգաս դու երբեք,
Թէ չէ սիրտս հողի տակ
Ոտնաձայնդ կ'իմանայ :

ՍԱՐՄԱՆ

ՄԵՐ
ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ
ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ
ՍԻՐՈՑ
ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ
ՎԷՊԸ
ԹՐԹՌՈՒԻՆ ԼԵԶՈՒԻ
ԵՒ ՀՈԳԵԿԱՆ ԽՈՐ ԱՊՐՈՒՄՆԵՐ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀՕՐ. ՏՐ ԿՈՀ Իտալիա պիտի այցելէ Յունիս 23ին եւ 27ին պիտի ընդունուի Պապին կողմէ, իտալական եւ Ֆրանսա – կան Հանրապետութեանց նախագահները, Մաճէնթայի, Սոլֆերինոյի եւ Սան Մար – թինոյի դաշտերուն վրայ պիտի մաս – նակցին 1859ի ճակատամարտի հարիւ – րամեակի տօնակատարութեանց :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ երկուշաբթի օր կը բացուի խորհրդային գրագէտներու եր – րորդ համագումարը : Ծանօթ է որ այս համագումարը քանիցս յետաձգուեցաւ վերջերս :

ԱԿԱԴԵՄԱԿԱՆ փիլը պընաւ իր հրա – ժարականը տուաւ Ֆրանսական ակադե – միայէն , բողոքելու համար Փօլ Մոռանի թեկնածութեան դէմ եղած դէպքերուն : Ակադեմիան մերժած է այս հրաժարակա – նը : Դէպքը, սակայն, անտուղր է որով – հետեւ ընդհանրապէս մարդիկ աւելի ա – կադեմիա մտնելու համար չանք կը թա – փեն քան ... դուրս ելլելու :

ԷՏՈՒԱՐ ՏԷՓՐԻՕ որ ընկերվարական ինքնաւար կուսակցութեան ընդհ. քար – տուղարն է, Լոնտոնի մէջ տեսակցեցաւ աշխատաւորական երեսփոխաններու հետ : Այս տեսակցութեաց ընթացքին խօսք ե – ղած է նաեւ Ընկերվարական ինքնաւար կուսակցութեան անդամակցութեան մա – սին Ընկերվարական Միջազգայինին :

(Լուրերու շար.ը կարդալ Դ. էջ)

ԼԵԶՈՒԱԿԱՆ

"ՈՒՄ" ՈՒ "ԿՈՐ"

ՀԱՅԵՑԻ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ

Ա.

Ցօղուածաշարքով մը, որ լոյս տեսաւ Ցառաջի մէջ՝ բաւական երկար ժամանակ առաջ, Պ. Անդրանիկ Բաբերդեան « կը բռնէր օձիքս » ու կարծիքս կը հարցնէր արեւելահայերէնի «ում» բայական ձեւին հարազատութեան մասին, ըստ երեւն՝ ծագումով թրքական :

Զպատասխանեցի առաջին առթիւ : Պատճառները բազմաթիւ :

1·— « Բանասէրներու եւ լեզուագէտ – ներու հոյլ մը ունինք Սփիւռքի մէջ » , ինչպէս կը զրէր Բաբերդեան, — նախ պէտք էր կառչիլ՝անոնց օձիքին, եւ ո՛չ իմ օձիքիս, որովհետեւ՝

2·— Ամէն անգամ որ հրապարակաւ հարցում կ'ուղղուի ինծի, անդին «եւ կ'ելլէ» ոմանց կանանչ կաթը, որ նա – խանձ կը կոչուի , — եղբա՛յր, կը զրէ ամէն բանի մասին, զրականութիւն , քերականութիւն, պատմութիւն, բժշկու – թիւն, փիլիսոփայութիւն եւ... Աստուա – ծաշունչ, մէկ նիւթը չլրացած՝ կ'անցնի միւսին(*), զրելիք բան թողո՞ւց մեզի : Հարկ է , ուրեմն, պարի մէջ քաշել ան – կիւնի այս մարդիկը ժամանակ առ ժա – մանակ, բայց ամէնէն առաջ :

3·— Ձեմ ուզեր դեռ յիշել անոնք, որ ցաւ կը յայտնեն, թերթերու մէջ, թէ ժա – մանա՛կ կը սպաննեմ զրելով հասարակ նիւթերու մասին՝ առանց փորեղ ու ծա – նրակեկ հատոր մը նետելու հրապարակ (ո՞ր զրամատան ծախքով) , մինչդեռ ան – զին կան եղեր ուրիշներ, կուտան նաեւ անուններ, որոնք բազմահազար էջերով բազմահատոր գործեր են հրատարակեր (անձնակա՞ն ծախքով) :

4·— Ի հարկէ աւելորդ կը համարիմ ըսել թէ ծանրաբեռնուած եմ բազում զբաղումներով :

Ի՞նչ փոյթ իմ այս պատճառներս, վըշ – տացա՛ւ մեր սիրելի Պ. Բաբերդեանը : Եւ երկար սպասումէ մը եաքը, եղրակացուց դառնօրէն եւ հեգնութեամբ ·—

« Կամ նի՛ւթը հետաքրքրական չէր, կամ... ներկայացնո՛ղը», որ «գրչի մշակ մը չէր, զրական մարզարանին մէջ տաս – նապետի աստիճան ալ չունէր», այլապէս « պիտի ունենար իր արձագանգը՝ եթէ ծանօթ անձնաւորութեան մը կողմէ ստո – բագրուած ըլլար» :

Տրտունջի դէմ տրտունջ : Դառնութեան դէմ դառնութիւն :

Իմ դառնութիւնս ուրի՛շ է, սակայն , սիրելի Պ. Բաբերդեան :

Այն որ «միշտ նոր ըսելիք մը ունի՝ բազ – մերանգ ճաշակներու գոհացում տալու » ընդունակ, ինչպէս կ'ըսէք իրեւ դնահա – տութիւն, իր կարգին՝ չ՛ա՞տ է սպասած, դառնացած ու դառնութեամբ լեցուած , երբ «պոն վոլոնթէ»ի մարդիկը չեն ուզած դալ հրապարակ, ոչ թէ միայն հարցում ուղղելու — պատասխան առանալու հա – մար, այլ եւ դատապարտութեան խօսք ուղղելու փեթակ քարկոծողներուն : Հա՞րկ է բացատրել թէ ո՛րքան օգտակար է նման միջամտութիւն մը, մաքրելու համար հը – րապարակը, որպէսզի աղնիւ մեղրը կեր չդառնայ արջին, ոչ ալ մեղր համարուի հասարակ ճանճին իր եաեւը ձգած պղտը : Ի վերջոյ, դուք ըլլայիք՝ պիտի չխոր – հէի՞ք, դառնութեամբ պիտի չհատա – ւէի՞ք, վիշտով եւ յուսահատութեամբ պիտի չընդունէի՞ք թէ, հայկական հրա – պարակին վրայ, մէկ ղին է արդար խղը եւ հոտած հաւկիթը :

Այնքան ատեն որ պարկեշտ մարդիկ , անկաշառ մարդիկ, անսայթաք մարդիկ , — այդ խումբին եւ մեր սիրելի Պ. Բա – բերդեանը , — կը նախընտրեն մնալ լուռ հանդիսատես, գարշանքը կը հասնի ծայ – բագոյն աստիճանի մը, վարդին բոյրը ձգմռուած մլուկին հոտէն զանազանելու անկարելիութեան :

Արդ, եթէ մէկուն աղնիւ վաստակը պի – տի չխոթուի միւսին անաղնիւ վաստակին հետ, եթէ լեզուական հարցի մը մասին մասնագիտօրէն տեսակէտ պարզողը նչա – ւակ պիտի դառնայ խարդախ մարդու մը բանջաղանքին եւ յաչաղանքին, կ'արժէ՞ նստիլ, աշխատիլ, յոդնիլ եւ հանգամա – նօրէն պատասխանել հարցումներու , փոյթ չէ թէ բանաձեւուած ըլլան մաքուր մարդոց կողմէ :

Դժդոհ չեմ , սակայն, կուլէն, ոչ ալ ... մենամարտէն : Պ. Բաբերդեանի դըժ – գոհութիւնը կամ դառնութիւնը չատ խո՛րթ է ինծի ,— ես փուչերս կը տըն – կեմ ասպարէզ կը վազեմ՝ երբ Փղշտացին տեսնեմ :

Ուրի՛շ է իմ ցաւս :

Ահաւոր աւերներ կը զործէ զրուանքը : Կը խաթարուի՛ մեր սքանչելի ժողովուր – դին հոգին : Աչքերուն առջեւ, հրապա – րակին վրայ, կ'ուրացուին մեր արժէք – ները, կը մերժուին արդար իրաւունք – ները, կը պախարակուին վաստակաւոր – ները, կը նախատուին աչխատանքի հե – րոսները, — այս կացութեան մէջ հոգի՞ կը մնայ՝ որ դիմանայ : Կը հարցնեմ՝ ժո – ղովուրդը որո՞ւ հաւատայ այլեւս , ո՛րը պաշտէ, ո՛րը այրէ :

Իմ ցաւս այն է որ լո՛ւռ է ... Աստ – ուածամայրը, Յիսուս Մանուկը գրկին մէջ, երբ անդին արիւն կուլայ գիւղա – ղին, — ես տեսա՛յ այս պատկերը : Տե – սայ եւ ի վերջոյ հաստատեցի թէ գիւ – ղացին, այն օրէն, սկսաւ չհաւատալ իր հոգւոյն մէջ զրուածին :

Կը վախնամ ասանկ փլուզումներէ : Ա – ստոր համար, ծանօթ միջամտութիւններս : Ու դառնութիւնս՝ որ կ'աճի երկա՛ր « սպասումներու » մէջ եւ « անարձա – գանգ » միջամտութիւններէ եաքը : Ես երբեք չեմ վշտանար՝ եթէ պատասխան եւ արձագանգ չտրուի «ում»իս ու «չու – մ»իս, բայց կը ցաւիմ՝ երբ ինծի կ'ըսեն թէ կուիս չա՛տ կ'ընես : Ես ինծի՞ համար կ'ընեմ կուիը :

— Եղբա՛յր, պիտի ըսէր մէկը, որո՞ւ համար է «ում»ը կամ «չում»ը երբ ժո – ղովուրդ չմնայ վաղը, քայքայուի հո – գիով, հաւատքով, իր մե՛ծ երազներով : Երբ զրուանքը առնէ տանի ամէն բան :

— Ի՞նչ սիրտով արձագանգ տայ , — պիտի ըսէր ուրիշ մը,— այն որ պարբե – րաբար, տարին տասներկու ամիս, կ'նե – քարկուի ամէնէն անամօթ, ամէնէն խայ – տառակ լուտանքներուն : Դառնանալ ա – նիկա՝ պիտի դառնամար, որ կը տեսնէ թէ իր ընկերը... ակադեմիա կ'երթայ՝ երբ ինք կը մեկնի ռազմաճակատ :

Բարեբախտաբար ռազմաճակատ մեկնո – ղին մօտ չի պակսիր ուժը՝ մէկ հարուա – ծով պայթեցնելու համար ամէնէն զըն – չական հակառակորդին թոքը, ոչ ալ... ախտամերժութիւնը՝ ամէն տեսակ դժո – խահամ դառնութեանց պատճառած դա – սալքութեան դէմ :

... Եւ հիմա, դառնութեան հոգեբա – նութեան նուիրուած այս կարճ ներածա – կանէն եաքը, կը պատասխանեմ(*) սի – րելի Պ. Բաբերդեանի հարցումին, — « ում »ը հարազա՞տ թէ ոչ :

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

(*) « Մէկ նիւթէն կ'անցնիմ միւսին », — արդարեւ 3 – 4 նիւթ ունիմ, զոր կը շարունակեմ ու պիտի շարունակեմ ու – սումնասիրել այստեղ՝ փոխն ի փոխ , առանց հաշուելու դեռ առիթները որ պի – տի տրուին ինծի՝ աջ ոտիս գործածելու համար ի հարկին, ձախ ոտիս ալ նոյնիես – տայն : Ի՞նչ փոյթ թէ մտաւորականներ զտնուին որ ըսեն թէ մոռցա՛ծ են այս յօդուածներուն շարքը, ո՛րը որո՛ւն մաս կազմելը : Նախ պէտք է ընդունիլ մէկ բան·— ես համ չեմ առներ պապայիս գիտցած ժուռնալիսմէն : Իմ գրածներս կը պահէ այն որ համ կ'առնէ, կը շինէ հաւաքածոյ, կը կարդայ եւ նորէն կը կարդայ, նոր բան մը սորվելու համար ամէ՛ն անգամ : Զանոնք հրատարակողը շատ է աշխատած, սրճարանի մէջ չէ գը – րած, կռնակը գիրքերու պատին է կըռ – թնցուցած՝ անանկ խմբագրած : Դասա – կարգ մը ընթերցողներու դիւրութիւն տալու համար՝ կը թելադրեմ ջնջել ստո – րագրութիւնս եւ մէկ շարքին տակ դնել սոխ իբրեւ գրող, միւսին տակ՝ սխտոր , — կարեւոր չէ ստորագրութիւնը : Կարե – ւորը բովանդակութիւնն է, նաեւ ընթեր – ցանութեան աւանդութիւն մը·— Մեծ – մայրս գոց գիտէր Նարեկը ու կը կար – դար՝ երբ գետնախնձոր կը ջարդէր կամ սեմնակը կ'աւէր : Բայց ես Նարեկը կը կարդամ Նարեկի ժամուն, գետնախնձորը կը ջարդեմ գետնախնձոր ջարդելու ժա – մանակ : Այդ աւանդութեամբ՝ իմ յօդ – ուածներս գրուած չեն ··· կարդալու հա – մար գետնախնձոր ջարդելու , սեմնակ աւելու կամ առօրեայ հասարակ գործեր կատարելու ժամանակ : Իմ անունս կրող որեւէ ուսումնասիրութիւն՝ մեր քոնըֆ – էրժին ոտիոճ չէ, զոր անպիտանը բաց կը թողու զուարթացնելու համար իր բնակարանը, զբաղման ժամանակ : Եթէ կան մարդիկ, որոնք համ չեն առներ իմ գրութիւններէս, թող չկարդան, եղբա՛յր, թող երբեք չկարդան ·— Ժողովողը ա – տոնց համար է ըսած· «Շատ կարդալը կը յոգնեցնէ մարմինը» (ԺԲ· 12), կամ « որ յոլովեաց ի գիտութիւն՝ յաւելցէ ի ցաւս » (Ա· 18) :

(*) Ծրագրած էի այս պատասխանը գրել Ցուսարերի հարցարանին նիւթերը սպառելէ ետք : Դարմանելու համար յա – պաղումը, սակայն, առաջ կ'անցընեմ լեզուական այս վէնը, յաջորդին թողլով «ո՞յ» թէ «օ» վերջավանկին ուղղագրու – թեան ճնճուղիւնը :

ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՐՑԸ

(Գ· եւ վերջին մաս)

Երբ կը կարդանք մեր գանազան կազ – մակերպութիւններուն տեղեկագրութիւն – ները, կը տեսնենք թէ ամբողջ ազգի մը գործունէութիւնը միայն սահմանուած է « խեղճութիւններ » զարմանելու :

Երբեք տեղ մը չի յիշուիր թէ իր ան – ձին եւ տաղանդին ամբողջ լիութեան մէջ գտնուած մէկու մը ճիգը, երբ եւ իցէ վարձատրուած ըլլայ :

Հայերը թեւեր կ'առնեն, եւ կը սլանան, միայն երբ տեսնուածը ղողմութեան կը կարօտի, — աղքատ, որբ, հիւանդ, ծեր, ուսանող, բայց ան ալ անպայման «աղ – քատ» ուսանող ...

Եւ, օ՛, այս բոլորը զարմանելու առ – թիւ, բարեգործական պարահանդէսներ ... ուր կ'երթան սուր կրունկներով հո – գեւին թեւածել եւ կայտռել, ուրիշնե – րուն թշուառութիւններուն վրայ ...

Բայց այսպէս է· ուրիշ գործունէու – թիւն եւ զոհունակութիւն չի տեսներ :

Իսկ մտաւորականի մը յաղթանակին առջեւ, աչքերը չիլ արտայայտութիւն մը կը ստանան , ձայները կը ցածնան, կը մարին : Անորոշ թոյն մը սպրդած է հո – գիներէն ներս :

Ասիկա է մտաւորականին դիրքը մեր մէջ :

Եւ այսպէս ալ է որ, խեղճութիւններու չարքէն եւ ոչ մէկուն պատկանելուն , մի – նակը մնացած է ան : Ոչ մէկը կը համար – ձակի, յիշուած խեղճութիւններուն անու – նով հրապարակ իջնել, քանի որ անոնք իրենց պաշտպանները ունին : Բայց, գըժ – բախտաբար, տեսնուեցաւ, որ ինչպէս մարդիկ յանդգնեցան, դրամ հաւաքելու ձեռնարկել, մտաւորականներու անունով, անդարմանելի անհասկացողութիւններու տեղի տալով ····

×

Մտաւորականութիւնը կը կազմէ ու – րոյն դասակարգ մը : Ինչպէս կ'ըսէր հայ – րըս , — «միակ ճշմարիտ աղնուականու – թիւնը » :

Այդ ոգիով թրծուած մեծցած եմ, եւ կը տեսնեմ մտաւորականութեան դերը աչ – խարհի վրայ :

ՀԱՅՐԵՆԻ ԳԻՒՂ

ՋՈՒՐԻ ԿՌԻԻ

Անցնող ամառներուն պէս, այդ առա – ւօտ ամառ մը եւս եկած ու, փառաւորա – պէս բազմած էր մեր հայրենի դաշտե – րուն մէջ :

Աղէ՞կ թէ գէշ տպաւորութիւն գործեր էին այդ ամառները : Ձեմ կրնար ըսել : Բայց բան մը որ պիտի ըսեմ, այն է, թէ այդ տարին, ամառը կը սկսէր արտա – կարգ տաքութեամբ մը :

Արեւը հազիւ երկու կանդուն ճամբայ կտրած՝ լեռ ու դաշտ, ծառ ու ծաղիկ արդէն ոսկեր էին ապրիլ ապագայ անմեղ զոհերու հրկիզման սարսուռը :

Գիւղացիին երեք քառորդը ուրախ էր : Ան կը սպասէր այդպիսի օրուան մը , որ – պէսզի հունձքը աւելի չուտ հասունանար : Աւելի չուտ քաղէր, կամնէր, եւ լեցնէր ամբարները : Մինչդեռ մէկ քառորդը, որ ոչ հունձք ունէր ոչ ալ կալ ու կուտ , կը սպասէր որ օդը նուազ տաք ու ջուրը ըլ – լար առատ, որով պիտի կրնար կեանք տալ իր բանջարներուն :

Կէսօրին, երբ արեւը կրակէ լողի մը պէս կախուեցաւ երկինքին գօտիէն, ամէն մարդ ինքզինքը զգաց չատ դժբախտ : Բայց աւելի դժբախտ էին ծառը, թուփը, բոյսը : Այս ամէնքն ալ իրենց գլուխը խոնարհած՝ կարծես մարդկային խմացա – կանութեամբ մը «պուտ մը ջուր» կ'ա – ղերսէին բոլոր անոնցմէ, որոնք կ'անց – նէին իրենց մօտէն :

Այս պահուն, ուր տաքը աւելի թանձ – րացեր էր, ու օդը զարձեր էր հեղձուցիչ, փերեզակնոց Աչօն բահը ուսին՝ խննթի մը պէս կը վազէր :

— Ո՞ւր կը վազես, որդի, հարցուց քահանան, թթենիի մը տուներէն :

— Կ'երթամ բանջարներուս պուտ մը ջուր ճարելու, Տէր Հայր : Ախ, այս տա – քէն հիմա չորցա՜ն, չորցա՜ն, չորցա՜ն :

Ու վազեց, ինչպէս կը վազէր քիչ ա – ռաջ :

Արագ արագ անցաւ վարդապետանոց Յակոբին, Թադէոս Պետրոսին եւ Ժամկոչին դռներուն առջեւէն ու բռնեց Կարմիր Հո – ղին ճամբան :

Այս անգամ եղաւ այնքան չուտ, որ Աչօ ժամանակ իսկ չունեցաւ նայելու իր չուրջը դռնուած խոտերն ու ծաղիկնե – րը, որոնք արեւին նետերէն խորշակա – հար՝ ծռեր էին իրենց ազուորիկ հասակ – ները :

Երբ հասաւ իր պարտէզը, ամէնէն ա – ռաջ Աչօ մօտեցաւ ռեհանին, անանու – խին, ադատքեղին եւ լոլիկներուն ածու – ներուն : Այս ամէնքն ալ կորսնցուցեր էին իրենց սովորական ժպիտները : Իրեն այն – պէս թուեցաւ թէ դադրած էին ընչելէ :

Այս երեւոյթը այնպիսի խոր ազդեցու – թիւն մը գործեց վրան, որ առանց մտա – ծելու միւսներուն մասին, գինովի մը պէս վազեց առուէն վեր :

Օրէնքով, այդ պահուն ջուրը կը պատ – կանէր Կրօ Միսաքին : Աչօ, առանց նկատի առնելու ժամանակացոյցը, ջուրը զարձուց իր կողմը : Բայց հազիւ երկո – ածու ջրած՝ տեսաւ որ ջուրը կտրեցաւ : Սրտնեղած՝ բահը դրաւ ուսը ու վազեց մայր առուն, ուր Միսաք յօնքերը պուս – տած կը սպասէր :

— Ո՞վ կտրեց այս ջուրը, պոռաց Աչո, բարկութեամբ :

— Այդ ես պիտի հարցնեմ , պատաս – խանեց Միսաք չէչտով մը : Ո՞վ կտրեց ջուրս :

Աչօ , լուռ, փորձեց ջուրը զարձնել իր կողմը :

— Բայց ի՞նչ իրաւունքով :

— Որովհետեւ բանջարներս ծարաւ են :

— Իմիններս ալ քուկինիդ պէս բանջար են ու ծարաւ : Եւ չետոյ, ըստ օրէնքին , կարգը իմս է : Երբ լրացնեմ, այն ատեն կրնաս օգտուիլ :

Աչօ չլսեց Միսաքին արդար ձայնը : Մէկ հարուածով փլցուց թումբը, ու ջուրը զարձուց իր կողմը :

Միսաք, տեսնելով , որ օրէնքը չի յարգուիր, հրեց Աչօյին հսկայ մարմի – նը անդին ու ջուրը զարձուց : Այս ան – գամ Աչօ բահը վերցուց ու նետեց Մի – սաքի գլխուն, առանց նպատակին հասնե – լու : Նոյնը ըրաւ Միսաք, որ Աչոյի վզին վրայ ճեղք մը բանալով՝ փռեց պե – տին :

Միսաք փախաւ, վիրաւորը ձգելով իր բախտին :

Քիչ վերջ գիւղացիները եկան, ու Աչօն սայլով տարին տուն : Ներսը տաք էր, զայն պահկեցուցին դրան առջեւ, ծառե – րուն չուքը :

Լուրը վայրկենական տարածուեցաւ գիւղին մէջ : Բոլոր «բժիշկ» մամիկները հաւաքուեցան անարին մօտ :

Ամէնէն տարեցը՝ Անուշ մայրիկ, որ մեծ համբաւ ունէր երբեւ «վիրաբոյժ» , ակնոցը դրաւ քթին ու նայեցաւ ուշա – դրութեամբ : Վճիռը եղաւ կարճ եւ կտ – րուկ ·

— Ես, Աստուածմով, քանի մը օրէն կ'աղեկցնեմ :

Քննեցին մայր Լուսիկ եւ Աննա հօր – քոյր, որոնք թէեւ չունէին իրենց«մեծ»ին համբաւը, բայց ունէին որոշ հասկացո – ղութիւն, կարգ մը վէրքերու նկատմամբ :

Պարզ քննութենէ մը վերջ, այս երկու «բժիշկ»ներն ալ յայտնեցին իրենց կար – ծիքը :

— Վեր վար ութ օր մը կը քշէ :

Եւ որպէսզի մէկը միւսին «համբաւ»ը չկոտրէ, մայր Լուսիկ եւ Աննա հօրքոյր վիրաւորը ձգեցին Անուշ մայրիկի խը – նամքին :

Մէկ չաբաթէն վէրքը բուժուեցաւ : Բայց սպին կար ու մնաց Աչոյի վիզին վրայ :

Այսպէս, բազում կրօնքներ անհետացած են: Բայց Աստուած միշտ ներկայ է ամէն տեղ, եւ անոնց տեղը բռնած է միշտ :

Սակայն անհետացած լեզուները ի սպառ կորսուած են :

Այս հրաշքն է որ գործած է՝ հայ գրագէտը: Մեր լեզուն կորսուած փրկողն է ան :

Ուրեմն եւ ազգը :

×

Շահեկան տեղեկատուութիւն մը կարդացած եմ «Նուվէլ Լիթէրէր»ի մէջ, Ֆրանսայի փոքրամասնութեանց մասին, որոնց կառավարութիւնը կալուածներ տուած էր: Մասնաւորապէս հետաքրքրուած եմ Ռուսերուն համար գրուածին, ուր խօսուած էր հոն գտնուող «Մտաւորականներու Տուն»ին մասին: Գրողը հոն հաւաքուած տեսած էր՝ ճերմակ Ռուսերուն, ամէնէն մեծ գրագէտները:

Մեզի ալ տրուած է կալուած մը՝ Մոնմորանսիի այդ գեղեցիկ դղեակը, պէտք էր որ՝ « Մտաւորականներու Տուն» ըլլար: Ուր, ամէն տարիքի մտաւորականները խմբուէին, իրենց կալուածնե-րուն մէջ զաղափարաբանութեան չուրջ :

Ահէ զատ, Նիւ Եորքի մէջ, վերապատուելի Պետիկեան, որ միակն է դրպէս հետաքրքրուող հայ մտաւորական-ներուն հարցով «առաջարկ մը քուէարկել տուած է Բարեգործական Միութեան, որով, իրենց կեանքին մէջ արդիւնքի մը հասած մտաւորականները պէտք է վարձատրուին: Կը սպասուի որ, Բարեգործական Միութիւնը, մտաւորականութեան ապագային համար այս այնքան կարեւոր որոշումը իրականացնէ :

×

Թէ իրապէ՞ս ոչինչ եղած է՝ հայ մտաւորականներուն համար :

Այստեղ կուգայ ամէնէն ցաւալի եւ անբացատրելի իրողութիւնը :

Երբ ես դեռ Եդիպտոս կը գտնուէի, երիտասարդ հիւանդ զրադէտի մը օգնելու առթիւ, Գահիրէի մէջ մէկ քանի հանրածանօթ անձեր հիմնեցին «Ազգային հիմնադրամ»ը :

Ծրագիրը սքանչելի էր.— Նախ մտաւորականներու պէտքերուն համար հիմնադրամ մը պիտի գոյութիւն ունենար : Այսինքն գրական ապահովութիւն մը իրենց համար :

Ահէ զատ, իրենց դիրքերը պիտի տալուէին, մրցանակներ պիտի հաստատուէին, ամբողջական գործերը վարձատրող կարեւոր յատկացումներ պիտի ըլլային:

Ժողովուրդը, իր բոլոր խաւերով ուրախացաւ, եւ քիչ առենուան մէջ գոյացաւ՝ 50·000 եգիպ· ոսկի, այսինքն 50 միլիոն Ֆրանք :

Այս դումարին գոյացած ըլլալը, հրապարակաւ յայտարարած է այն առենուան քոմիթէին առենապետը, որ նոյն անձն է մինչեւ այսօր ալ :

Բայց, ինչպէս դեղեցիկ խոչոր նաւ մը, սքանչելի առաւօտ մը ճամբայ կ'ելլայ նաւահանգիստէ մը, ճամբորդներով եւ հարստութիւններով լեցուն, եւ դժբախտ փոթորիկի դիշեր մը, ամբողջութեամբ ծովամոյն կ'ըլլայ, եւ կը կորսուի, ոչ մէկ հետք թողլով ետին: Այսպէս ալ ձգեցին որ «Ազգային հիմնադրամ»ը ծովամոյն ըլլայ, յուսալով, որ հետք չի ձգեր ետին :

Բայց թէ ո՞ւր է, եւ ի՞նչ եղաւ, մտաւորականներուս անունով եւ համար, ժողովուրդին կողմէ նուիրուած 50 միլիոնի գումարը, այդ է որ կուգամ հոս հարցնել եւ պահանջել, մտաւորական ընկերներուս անունով :

Որովհետեւ, վստահ ենք որ «Ազգային հիմնադրամ»ը, ծովամոյն չէ եղած :

ՄԱՆՆԻԿ ՊԻՐՊԻՐԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Բաղձանքս է ապագային մարդերուն նուիրել այնպիսի հզօր երգ մը, որ հայրենիքը ինծի պէս արարած ծնած ըլլալուն գոնէ չզղջայ :

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

1904 *Թուականին «Բազմավէպ»ի Թիւ 5–ում Դանիէլ Զպուքքեար ստորագրու-Թեամբ երեւաց մի փոքրիկ բանաստեղ-ծութիւն՝ նուիրուած Ղ. Ալիշանին : Անյայտ պատանին միանգամից ուշադրու-Թիւն գրաւեց: Գրական շրջաններում ընկերացին բարձրաձայն խօսել նրա մասին, իսկ Թերթերն ու ամսագրերը աղաղակեցին, Թէ «... ապահովաբար ճշմարիտ բանաստեղծ մը ծնած է մեր գրականու-Թեան» , Թէ «Զպուքքեարը հայ բանաս-տեղծութեան ամէնէն ինքնատիպ ու հզօր դէմքերէն մինն ըլլալու կոչուած է » :*

Ու եկաւ նա՝ ապագայի խոչոր բանաստեղծը, ակնկալուածից աւելի չուտ : Եւ-կաւ Վարուժանը « Սարսուռներ »ով պոեթիկայ միանգամից ու գարնան հեղեղի նման չաչելով լցուեց ժամանակակից-ների սրտերը, իշխեց այնտեղ, եւ յետոյ, Թողնելով նրանց իր հմայքի տակ, չարու-նակեց ընթացքը, ճանապարհին դուլալ-ուելով ու ահաղնանալով չարժուեց ա-ռաջ, հայեացքը ապագայի սերունդներին յառած, չարժուեց «դէպի աղբիւրը լոյ-սին » :

Դանիէլ Վարուժանը (Զպուքքեարեան) ծնուել է 1884 Թուականին Սեբաստիայի մօտ գտնուող Բրդնիկ գիւղում : 1896 Թուականի կոտորածի օրերին, դիւղի դպ-րոցում հազիւ ժամագիրքը սովորած փոքրիկ Դանիէլին տանում են Պոլիս : Այդտեղ նա սովորում է Սադրզ Աղաջիի Մխիթարեան դպրոցում եւ ապա Բակլե-գոնի վարժարանում, ուր եւ սկսում է դրական առաջին փորձերը: Դ. Վարու-ժանը ուսումը չարունակում է Վենետիկի Մուրատ – Ռափայէլեան վարժարանում ,

մինչեւ այսօր ալ :

Բայց, ինչպէս դեղեցիկ խոչոր նաւ մը, սքանչելի առաւօտ մը ճամբայ կ'ելլայ նաւահանգիստէ մը, ճամբորդներով եւ հարստութիւններով լեցուն, եւ դժբախտ փոթորիկի դիշեր մը, ամբողջութեամբ ծովամոյն կ'ըլլայ, եւ կը կորսուի, ոչ մէկ հետք Թողլով ետին: Այսպէս ալ ձգեցին որ «Ազգային հիմնադրամ»ը ծո-վամոյն ըլլայ, յուսալով, որ հետք չի ձգեր ետին :

Բայց թէ ո՞ւր է, եւ ի՞նչ եղաւ, մտաւորականներուս անունով եւ համար, ժողովուրդին կողմէ նուիրուած 50 միլիոնի գումարը, այդ է որ կուգամ հոս հարցնել եւ պահանջել, մտաւորական ընկերներուս անունով :

Որովհետեւ, վստահ ենք որ «Ազգային հիմնադրամ»ը, ծովամոյն չէ եղած :

ՄԱՆՆԻԿ ՊԻՐՊԻՐԵԱՆ

×

Այս պատմութիւնը, որ տխուր յիշատակի մը պէս Թաղուած էր դիւղացիներուն սրտին մէջ, չատ անգամ կուգար շրթներուն ծայրը .

— Մինչեւ հիմա եղածը բան մը չէ : Կռիւը ասկէ վերջն է որ պիտի սկսի :

Միսաք եւ Ֆաչօ, օրէ օր , իրենց մըտքերուն մէջ կը պատրաստէին չարաչուք բան մը: Անոնց դէմքերը ժժդոյն էին ու աչքերը կարմիր :

Առաւօտ մը, ճարահատ, Անուշ մայրիկ դնաց Տէր Գրիգորին: Ցետոյ Ռէսին ու վարժապետին: Ամէնուն ալ դատաստան խոստացաւ, հասկցուց երկու հակառակորդ-ներուն բարկութիւնները, որ կրնային պայթիլ մէկ վայրկեանէն միւսը :

Շատեր, որ արդէն եկեր ու հասեր էին լեցուն տարիքի մը դուռը, սկսեր էին դառնութեամբ նայիլ այդ մարդոց ,որոնք մղուած իրենց եսերէն, պուտ մը ջուրի համար դարձեր էին իրարու թշնամի :

Օր մը, դիւղին պապիկը Պետան կարօ, իր մօտ կանչեց դիւղին մեծերը եւ բսաւ.

— Հարիր տարեկան իմ: Մինչեւ ըս օրս ըս տեսակ բան չիմ տեսեր, ըն ըլ պուտ մը ջուրի համար: Ըս մարդիկը Աստուծմէ չե՞ն վախնար, մարդոցմէ չե՞ն ամչնար : Ալ հերիք է, խօսք մը հասկը-ցուցէք տըւոնց :

Հետզհետէ մթնոլորտը կը թանձրանար : Թշնամութիւնները կը սաստկանային : Եւ որպէսզի ծանր դէպք մը չպատահէր, քանի մը երեւելիներ դացին այդ երկու հակառակորդներուն քով :

Միսաք ըսած էր .

— Ես չմեռնիմ, որ Ֆաչօն Թէ իրաւունքս առնէ, եւ Թէ վրաս բահ քաչէ...

Ֆաչօն նոյնպէս կրկնած էր .

— Ես չմեռնիմ, որ Միսաք ինծի զարնէ ...

Միսաքի եւ Ֆաչոյի այս կարուկ յայտարարութիւնները աւելի վառնդեցին դիւղին խաղաղութիւնը :

Բոլոր բարեխօսութիւնները մնացին ապարդիւն :

Դիւղացին ձանձրացած՝ ձգեց իր երկու անառակ որդիները, որ իրենք իրենց մէջ կարդադրեն այդ հաչիւը :

Աղէ՞կ Թէ դէշ :

Ապագան էր, որ գոյց պիտի տար այդ :

×

Ցարութեան տօնին առթիւ, արեւին հետ կանուխ, դիւղացին Թափուեր է փողոց : Գրեթէ ամէն դուռի առջեւ մանուկներ կան :Անոնց ղրպանները լեցուն են կարմիր հաւկիթներով : Ուրախ են եւ հպարտ :

Բայց աւելի մեծ է բազմութիւնը հրապարակին, ուր երիտասարդ Թէ ծեր խումբերու բաժնուած՝ հաւկիթախաղ մը սկսած են :

Այդ պահուն, փողոցին ալ եւ ձախ կողմերէն դուրս եկան Ֆաչօն եւ Միսաքը : Երկուքն ալ դաշոյն կը կրէին իրենց գօտիներուն տակ :

Ցանկարծ բոլորին աչքերը դարձան անոնց կողմը: Իսկ քանի մը երիտասարդներ ալ դիրք բռնեցին չարը խափանելու համար :

Երկու հակառակորդները վճռական քայլերով մօտեցան իրարու: Բայց ոչ մէկը եւ ոչ ալ միւսը ձեռքը կը տանի դաշոյնին :

Մէկէն՝ ո՛վ հրաչք, Միսաք ժպիտ մը չինեց դէմքին վրայ ու բսաւ .

— Աֆ ըրէ, խնդութիւն մըն էր ըրի :

— Դուն ափ ըրէ, պատասխանեց Ֆաչօ,— չունչը խմս էր :

Պերան կարօ, որ այդ առաւօտ փողոց իջեր էր իր օրհնութիւնը բաժնելու դիւղացիներուն, զաւազանին յենած մօտեցաւ.

— Շատ ապրիք զաւակներս, ադէկ բան ըրիք: Քէնը Հայուն վայել չէ :

Միսաք և Ֆաչօ խոնարհեցին իրենց դըլուխները :

— Ես, վերսկսաւ պապիկը ,— որ ձեզմէ եօթանասուն չապիկ աւելի կտրեր եմ, կը հաւատամ ըս բանին՝ եթէ ամէնուն առջեւ պազտուիք :

Բազմութիւնը, որ հաւկիթախաղը ձգած եկեր հաւաքուեր էր դէպքին վայրը , ուրախութեամբ տեսնելով Միսաքին եւ Ֆաչոյին համբուրուիլը, բացագանչեց .

— Բարով ու սիրով ապրիք, տունով ու տեղով ապրիք ...

Ամէն մարդ ուրախ էր, բայց դիւղին նապահետը ալ աւելի :

ՇԱՏՈՒՐ ՊԻՐՊԻՐԵԱՆ

տոյ վրէժի բոցով ժայթքեց բանաստեղծի «Ցեղին սիրտը» (1909 Թ.) եւ «Հեթանոս երգեր» (1912 Թ.) ժողովածուներում : Այստեղ բանաստեղծը կատարելութեան է հասցնում երեւոյթներն իմաստաւորելու , դեղեցկութիւններ կրկնելու իր մոգական արուեստը :

Կանտում ուսանելու տարիները Վարուժանի կեանքում մնացել են որպէս զըր-կանքների եւ անձնական խոր տառապանքի տարիներ : Սակայն բանաստեղծը կարողանում է զսպել իր անձնական վիշտը եւ նախընտրում է «Ցեղին սիրտը» երգել : Ու Թէեւ օտար երկնքի տակ այդ երգերը միայն կարօտի լարով են կապուած մայր երկրին, բայց ջնջում են ջերմ հայրենասիրութեամբ, որովհետեւ բանաստեղծն իր մէջ զգում է ժողովրդի ուժը , իր կրծքի տակ՝ նրա սրտի բաբախիւնը :

Վարուժանը տառապող մարդու երգիչն է, ինչ ազգից էլ լինի այդ մարդը : Նա երազում է իր հայրենիքը տեսնել ամէն տեսակ ճնշումից ազատ «մէկ արեւու տակ նստած » ժողովրդների հետ միասին :

«Հեթանոս երգերում» յորդում է կեանքը իր ողջ բազմազանութեամբ՝ հեթանոս դարերից մինչեւ կապիտալի՝ տիրապետութեան չրջանը, փարթամ դահլիճներից մինչեւ հիւղակներն ու գործարանները , մի կտոր հացի համար իր մարմինը փերթ փերթ մեքենային տուող բանուորի հերոսական աշխատանքը, մինչեւ մարդկային հանճարի փայլատակումները : Ու այս ամէնը դեղարուեստական ինչպիսի վար-պետութեամբ, արուեստի ինչպիսի կատարելութեամբ :

Բանուոր դասակարգի կեանքին ու պայքարին նուիրուած նրա բանաստեղծութիւնները « Հեթանոս երգերի » պսակն են կազմում : Բանուորների կեանքի մռայլ պատկերներից նա հանում է համարձակ եղրակացութիւններ, տեսնում է, որ հացի դիհերի յորձանքը խուլ զայրոյթով փոթորում է «դղեակներու հիմունքները » :

Վարուժանը դեռ եւս ոչ պարզ որոշ , բայց նկատում է, որ բանուորական չարժման ալիքը տարածւում է ամբողջ աչխարհում, որ «վաւ հնոցի» մէջ պիտի կործանուի հին դարը եւ աչխարհը ելնի նորոգուած ու նոր : Նա հաւատում է դըրան, որովհետեւ՝

Ադին արդէն ռուսական մարգերու վրայ կ'որոտան
Հրաւէրները կռուին, եւ խոստումներն
Երազին ...

1915 Թուականի Ապրիլի 11ին հայ բազմաթիւ մտաւորականների հետ ձեր-բակալուեց նաեւ Վարուժանը եւ յետոյ դաւադրաբար սպանուեց աքսորի ճանապարհին: Մեռաւ նա, հազիւ 31 դարուն բոլորած, իր հետ տանելով ստեղծագործական բազմաթիւ յղացումներ ու անկատար երազանքներ ...

Ջերթակալութեան օրը ոստիկանութիւնը տարել էր նաեւ բանաստեղծի ձեռագրերը, այդ Թւում նաեւ «Հայկին երգը» անտիպ գործը, որ յետոյ բանաստեղծի այրին մեծ դժուարութեամբ եւ գնով :

« Հայկին երգը» լոյս տեսաւ 1921 Թուականին Պոլսում , բանաստեղծի աչակերտներից կազմուած «Նաւասարդ » մութեան ջանքերով :

Մեծ արուեստագէտ է Վարուժանը, միաժամանակ չափազանց խստապահանջ իր բանաստեղծութեան նկատմամբ : Ու Թէեւ անուն հանած բանաստեղծ էր արդէն, դարձեալ համեստութեամբ էր խոսում իր ստեղծած արժէքների մասին . « ժողովուրդին ինքզինքնիս յիշատակ տալէ առաջ, նախ պէտք է ինքզինքնիս գոհ տանք վահանի, բաղնին վրայ՝ Թէ քնարի, տուիկա նոյնն է : Իսկ իմ քերթուածներս... ոչ հեղնութիւն, երբ անդին Ալիշանի եւ Արովեանի պէս հանճարները կ'աչտարակուին վիթխարիօրէն »,— դրել է նա մի առիթով :

Դանիէլ Վարուժանը հայ դասական բանաստեղծութեան փայլուն աստղերից մէկն է, որը մեծ աղդեցութիւն է ունեցել հայրենական դրականութեան զարգացման վրայ : Ժամանակը երբեք չի խամրել նրա ստեղծագործութեան փայլը :

Ո՛չ, ո՛չ, երբեմ չվախճանիս պիտի դուն,
Չի կապեցիր կեանքդ արեւուն հետ ան-
չէջ ...

ՀՐԱՆՈՑՇ ԴԱՐԲԻՆԵԱՆ

«Գրական քերթ» Երեւան

ԱՐԺԱՆԹԻՆի մէջ կացութիւնը դարձ – եալ ծանրացաւ՝ ընդհանուր զօրաձուլի եւ նախարարական տաղնապով : Փերոնական եւ համաչնաւոր բանուորական կազմակերպութիւնները ընդհանուր գործադուլ հռչակեցին : Միւս կողմէ եօթը նախարարներ հրաժարեցան : Բանակը գիրք կը բռնէ երկրին կարեւոր կէտերուն մէջ՝ որեւէ անակնկալի առաջքն առնելու համար, մինչ Նախագահ Քրոնտիսի կը յայտարարէր.— Կառավարութեան քաղաքականութիւնը փոփոխութեան պիտի չենթարկուի : Գալով նախարարարական տաղնապին՝ ըսաւ թէ պարզ փոփոխութիւն մըն է ան :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՑ Պատերազմական նախարար Շեթրաուս Լոնտոն եր – թալով խորհրդակցութիւններ ունեցաւ անգլիացի իր պաշտօնակիցին հետ, որմէ ետք հրատարակուած զեկոյցի մը մէջ կը չեշտուի թէ երկու երկիրները համաձայնած են նոր հրթռացիլեր չինել՝ որոնք պիտի դրուին Եւրոպայի զանազան երկիրներու տրամադրութեան տակ : Հրթռացիլ – րու պատրաստութիւնը կրնայ ըլլալ նաեւ Ամերիկայի մէջ :

ԻՏԱԼԻՈՑ եւ Ամերիկայի միջեւ խօսակցութիւնները սկսան : Գլխաւոր նիւթերն են.— Ա) Իտալիոյ մասնակցութիւնը Ժընեւի ժողովին , Բ) Հրթիռներու արձակարաններու հարցը, Գ) Միջերկրականի խնդիրը :

ՃԱՓՈՆի կառավարութիւնը խորհրդային սպառնալիքին պատասխանելով յայտարարեց թէ Մոսկուա իրաւունք չունի Թոքիոյի ինուորական քաղաքականութեան խառնուելու : Ն. Մուրթիւնը բողոքած էր որ Ճափոն ընդունած է ամերիկեան արձակարաններ հաստատել :

ԻՆՏՈՆԵԶԻՈՑ հանրապետութեան նախագահը՝ Սոքառնօ ընդունուեցաւ Պապին կողմէ :

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԻ առթիւ «Յառաջ» երեքշաբթի լոյս չի տեսներ : Մեր յաջորդ թիւը՝ Չորեքշաբթի : Ամբաղրատունը փակ է երկուշաբթի :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Սամուէլ Մուրատեան վարժարանի տեսչութիւնը, Մխիթարեան Միաբանութեան եւ վարժարանի անմոռանալի բարեկամին, հանգուցեալ Տոքթ. Արամ Ճինճեանի քառասունքին առթիւ՝ Մայիս 24ի կիրակին, առաւօտեան ժամը 10·30ին, հոգեհանգստեան պատարագ եւ պաշտօն պիտի կատարէ վարժարանի Մատրան մէջ :

Փափաքողները կրնան ներկայ գտնուիլ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Արեզ Բարեկամեան, Տէր եւ Տիկին Գալուստ Բարեկամեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պետրոս Շահպազեան եւ զաւակը եւ ընտանեկան պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, գրաւոր , ցաւակցութիւն յայտնեցին իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԲԱՐԵԿԱՄ ԲԱՐԵԿԱՄԵԱՆի

մահուան առթիւ :

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ 30 ԱՄԵԱԿԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղի :

Այս Շաբաթ 23 Մայիս, երեկոյեան ժամը 8·30ին, 26 բիս Տիւնուար , «Սթիւտիօ Քրէֆի» սրահը :

Կը բանախօսէ՝

ԸՆԿ. ԷԼԼԷՆ ԲԻՒՋԱՆԴ

Գեղարուեստական խնամուած բաժին : Իր սիրայօժար մասնակցութիւնը կը բերէ Լիոնի Հ· Յ· Դ· Նոր Սերունդի երգչախումբը , ղեկավարութեամբ Պ· Ա· ԱՒ – ՐԱՀԱՄԵԱՆի :

Կենդանի պատկեր «Օրուան խօսքը» :

Մեներգ.— ՏԻԿԻՆ Մ· ԿԱՐԱՊԵՏԵԱՆ եւ Օր· Ա· ԿԱՐԱՊԵՏԵԱՆ :

Արտասանութիւն.— Օրիորդներ ԲՐԱ – ԲԻՈՆ ՏԱՊԱՂԵԱՆ, ՍԻՐԱՆ ԿԱՐԱՊԵՏ – ԵԱՆ, Օր· ՍԱՐԳԻՍԵԱՆ եւ Շ· ՂԱԶԱՐ – ԵԱՆ : Ջութակ .— Պ· ՅՈՎՀ· ՊԷՐՊԷՐ – ԵԱՆ :

Հայկական պար «Թամարա» գոյգպար :

Տրամախօսութիւն.— «Կեցցէ մեր լե – զուն» :

Մուտքը ազատ է :

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Փակուած են կայանի արձանագրութիւնները իսկ անոնք որոնք արդէն արձանագրուած են , պէտք է դիմեն կեդրոնին, հարկ եղած տեղեկութիւնները ստանալու եւ պոռֆասիոնի թերթիկները յանձնելու համար, երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը ժամը 13էն 14 եւ երեկոյեան ժամը 18էն 20, բիւ Մէյ – րան 5, հեռ· Թոիւտէն 27–35 :

×

ԿԱՊ· ԽԱՉԻ 30ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Կեդր· վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Պ· Գ· Փաթթուկեանէ հազար ֆրանք, Տէր եւ Տիկին Սատըդեանէ երկու հազար, Տիկին Տաւուտեանէ հազար, Ա· Ի· հազար ֆրանք :

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Յառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ այս Չորեքշաբթի երեկոյ , Քառէ սրճարանի վերնայարկը : Դասախօսն է Պ· Պ· ՆԱԶԱՐԵԱՆ : Նիւթն է.— «Հայաստանի տնտեսութեան ներկայ տուեալները» :

Մուտքը ազատ է :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

Վիճաբանական ժողով կազմակերպուած երիտասարդներուն համար :

Նիւթ՝ «Ի՞ՆՉ կը սպասեմ հայ երիտասարդական կազմակերպութենէ մը » :

«Ce que j'attends d'une association de jeunes Arméniens

CENTRE D'ÉTUDES ARMÉNIENNES
JEUDI. 21 MAI 1959 A 21 HEURES
AU CAFÉ CADET, 1er ÉTAGE, MÉTRO CADET

ԼԻՈՆ, ԸՆԴ· ԺՈՂՈՎՐ ՀՐԱՒԻՐ

Լիոնի եւ շրջանի Նախկին Հայ Մարտիկներու Միութեան ժողովը կը դուրս մարուի յառաջիկայ Ուրբաթ՝ Մայիս 22, ժամը 20·30ին, Նորակառոյց եկեղեցւոյ սրահին մէջ, 295 բիւ Պուալօ :

Անդամներուն ներկայութիւնը պարտաւորիչ է : Կարեւոր օրակարգ եւ նոր վարչութեան ընտրութիւն :

ՑՈՒՇԱՑԵՑՔ

Հ· Յ· Դ· «Փոթորիկ» խումբի ժողովը այս Հինգշաբթի ժամը 21ին, Հայ Մշակոյթի Տան մէջ :

ԼԻՈՆ.— Ֆ· Կ· Խաչի Լիոնի վարչութիւնը, ընդհ· ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամուհիները այս Չորեքշաբթի, ժամը 16ին, Յովներու սրահը : Կարեւոր օրակարգ :

ԼԻՈՆԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Լիոնի Եկեղեցական Տիկն· Միութիւնը ամէն չորք կը թափէ հասոյթի մը – չոցներ ստեղծելու Լիոնի եկեղեցւոյ շինութեան համար .—

ՄԱՅԻՍ 24ին Հորլոժի սրահներուն մէջ երեկոյեան ժամը 8·30ին պիտի ներկայացուի, նոր պատրաստուած ֆիլմ մը Հայաստանի մէջ, զուտ հայկական կեանքէ « կտաւոն» :

ՄԱՅԻՍ 31ին մեծ պարահանդէս մը վիճակահանութիւն :

Մանրամասնութիւնները յաջորդով :

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ եւ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ :

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ, ԺԱՄԸ 16ԷՆ ՍԿՍԵԱԼ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ, ԺԱՄԸ 20ԷՆ ԵՏՔ
Վարժարանի դալարագեղ պարտէզներուն մէջ :

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ

Յունիս 10ին, Չորեքշաբթի, երեկոյեան ժամը 9ին ,

ECOLE NORMALE DE MUSIQUE
78, Rue Cardinet. Paris
Կը մասնակցին

ՍԷՐԺ ԳՈՒԼՕ (բամբ կնթահարուհի)
ՄՈՆԻՔ ՄԱՔԱՆԵԱՆ (դաշնակահարուհի)

երեկոյթը նուիրուած է վերման վիպական երաժշտութեան (ՇՈՒՄԱՆ , ՊԸ – ՐԱՄՍ) :

Առաջին ունկնդրութիւն ՄԱՐՍԵԼ ՏԸ ԼԱՆՈՒԱՅԻ վերջին մէկ դործին· Սիւլա – միթ :

ԾՐԱՐՆԵՐ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆԱՑԱՏՈՒԿ ԵՒ ՆՊԱՍՏԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ՇՆՈՐՀԻՒ ԱՐՏԱԾՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԶԱՑՆՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— ՄԱՔՍ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՐԱՐԻ ԾԱԽՔԵՐԸ ՄԻԱՍԻՆ

Հարիս թուիտ (*զուտ բուրդէ հիւսուածեղէն*)	*մեթրը*	3·500	ֆր·
Ֆիլ ա ֆիլ	*մեթրը*	3·900	»
Փէնիէ Պոսթօն *զուտ բուրդ*	*մեթրը*	4·500	»
Սեռժ փենիէ *զուտ բուրդ*	*մեթրը*	4·900	»
Խառն կերպասեղէն	*մեթրը*	1·900	»
Գուլպա մուս նիլօն (*այր մարդու*)	2 *զոյգը՝*	1·500	»
Շապիկ (փոփլինի)		2·700	»
Կօշիկ Պօfu – fաֆ (*այր մարդու*)		5·900	»
Տիւվըթին *զուտ բուրդ* (*կնոջ հագուստիհամար*)	*մեթրը՝*	2·100	»
Քրէփ մուս *զուտ բուրդ*	*մեթրը*	2·800	»
Օթօման (*կնոջ եւ այր մարդու համար*)	*մեթրը*	3·800	»
Էնփրիմէ *չմոթկուող եւ լուացուող*	*Ա· գին*	500	»
Գուլպա նիլօն մուս (*կնոջ համար*)	2 *զոյգը*	1·900	»
Գուլպա նիլօն (*կնոջ համար*)	2 *զոյգը*	1·500	»
Նիլօն Փառիւռ (fոնպինէզօն եւ fիւլոթ)		3·200	»
Ժամացոյցներ՝ ոսկեզօծ , 17 քիւպի, աննիշօք		10·000	»

ԱՌԱՔՈՒՄԻ ԾԱԽՔ·— 2·500 ֆր· 10 fիլոնոց ծրարի մը համար :

ՍՏԱՑՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ՉՈՒՆԻ :

ԵՐԵՔ ՉՈՐՍ ՇԱՔԱԹԷՆ ծրարները իրենց տեղը կը հասնին :

Ձեր տրամադրութեան տակ են բոլոր կերպասներու նմոյշները :

SICOMEX

20, Rue Royale,
Tél. : OPE. 67-77 PARIS 8· Métro : Madeleine

ԱՅՍ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՀԵՑԷՔ

1959 ՅՈՒՆՈՒԱՐ 1ԷՆ

MORY et Cie

Հաստատութիւնը սկսած է շատ նպաստաւոր պայմաններով կատարել դէպի Խ· Միութիւն ծրարներու առաքումը :

ԳԻՆԵՐԸ ԶԳԱԼԱՊԷՍ ԻՋԱԾ ԵՆ

Մեր նոր գիները ստանալու համար դիմել, գրաւոր, հետեւեալ հասցէին.—

Service C des Colis Postaux
10, Rue St-Quentin, Paris 10

կամ հեռաձայնել .—NOR. 40 72 & 50 83

MÉTRO ET AUTOBUS : GARE DU NORD

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
20
ՄԱՅԻՍ
MERCREDI
20 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8396 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4297

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԻ՛ՇՏ ՊԱՏՆԷՇԻ ՎՐԱՅ

Հոլեվալուստի արձակուրդէն օգտուե – լով, Փարիզի մէջ իրենց տարեկան պատ– գամաւորական ժողովները գումարեցին Հ. Ց. Դաշնակցութեան արեւմտեան եւ– րոպայի կազմակերպութիւնն ու Հ. Ց. Դ. Նոր Սերունդը:

Ամբողջ երեք օր զոյգ ժողովներուն մէջ մանրակրկիտ քննութեան ենթարկուեցան օրակարգի բոլոր հարցերը:

Իրրեւ օրէնսդիր եւ հաշուառու դերա – զոյն մարմին, Հ. Ց. Դաշնակցութեան Շրջանային ժողովն ու Նոր Սերունդի պատգամաւորականը քննեցին կեդրոնա – կան մարմիններու եւ շրջանի մասնաճիւ– ղերու նիւթական եւ բարոյական գործու – նէութիւնը վերջացող տարեշրջանի ըն – թացքին:

Օրակարգի մաս կը կազմէին ազգային, քաղաքական, կազմակերպչական եւ մշա– կութային զանազան հրատապ խնդիրներ, որոնք կապ ունին տարապիր բազմու – թեանց ներկային եւ ապագային, մասնա– ւորապէս հայապահպանման եւ նոր սե – րունդի փրկութեան հետ:

Շրջաններէն եկած պատգամաւորները լայն հնարաւորութիւններ ունեցան ազա– տօրէն արտայայտելու իրենց տեսակէտ – ները քննութեան առարկայ հարցերու մասին:

Քուէարկութեան համապատասխան բա– նաձեւեր, որոնք իրրեւ ուղեցոյց պիտի ծառայեն նորընտիր կեդրոնական կոմի – տէին եւ կեդրոնական վարչութեան հա – մար՝ նոր տարեշրջանի ընթացքին:

Ներկայացուած տեղեկագիրները զո – հունակութեամբ կ'արձանագրէին, որ ա– մէն կողմ յարաճուն վերելքի մէջ են զոյգ կազմակերպութիւնները: Կը նշէին, որ ազատատենչ Հայութիւնը Փարիզի եւ պա– ւառի մէջ մեծ կարօտով ու խանդավա – ռութեամբ ներկայ կ'ըլլայ մեր հանդէս – ներուն: Հոգեկան բաւարարութիւն կը զգայ՝ լսելով մեր բանախօսներու հայրե– նաշունչ ճառերը: Դաշնակցութիւն սրտա– պնդիչ խօսքը: Կ'ոգեւորուի ու կը զօաե – պնդուի հայրենասիրական ոգիով:

Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Լիոնի եւ Մարսիլիոյ փառատօներուն աննախընթաց յաջողութիւնը պերճախօս փաստ մըն է և– րիտասարդական այս կազմակերպութեան կենսունակութեան եւ բարգաւաճման:

Հայաստան ամսաթերթը լոյս կը տեսնէ կանոնաւորաբար՝ հայերէն եւ ֆրանսե – րէն բաժիններով: Արդէն իսկ ինքնաբաւ զարձած է:

Քաջալերուած անցեալ տարուան յաջո– ղութիւններէն, Նոր Սերունդը այս ամառ եւս Փալատրիւի լիճին մօտ պիտի ունենայ իր ամառնային բանակումը:

Զոյգ ժողովները հաճոյքով լսեցին նա– եւ, որ Փարիզի Հայ Մշակոյթի Տան, վե– րաշինութեան եւ սարքաւորման աշխա – տանքները մեծ եռանդով առաջ կը տար– ուին: Տպարանէն եւ գեղասյարկի սրա– հէն վերջ, որոնք կ'օգտագործուին ար – դէն, միւս յարկերու նորոգութիւնները պիտի աւարտին մինչեւ աշուն:

Թանգարանի սրահներն ալ պատրաստ պիտի ըլլան չուտով:

Շրջանի ներկայացուցիչներուն ի պա – տիւ խանդավառ մթնոլորտի մէջ սար – քուած խնջոյքներով փակուեցան պատ – գամաւորական զոյգ ժողովները երկու – շաբթի իրիկուն:

Այս առթիւ անդամ մը եւս չեշտուե – ցաւ, որ պատնէշի վրայ է միշտ Հ. Ց. Դաշնակցութիւնը՝ հայ ժողովուրդի կող– քին:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԺԸՆԵՒԻ ՄԷՋ

ԿՐՕՄԻՔՕ ԶԸՆԴՈՒՆԻԲ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

★

ՀԵՐԹԸՐ ԿԸ ՄԵՐԺԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Ժընեւի Խորհրդաժողովին վեցերորդ նիստը եկաւ հաստատել երկու կողմերու միջեւ գոյութիւն ունեցող անհամաձայ – նութիւնը:

Ժողովին կը նախագահէր Խ. Միու – թեան Արտաքին նախարար Կրոմիքօ, որ խօսքը տուաւ Արեւելեան Գերմանիոյ ներկայացուցիչ Պոլցի: Ցետոյ՝ Արեւմտեան եռանեակներու կողմէ խօսելով, Հերթըր բա – ցատրեց թէ ի՛նչ պատճառներով կարելի չէ ընդունիլ խորհրդային ծրագիրը:

Պարզ է թէ Լոթար Պոլց կը ներկայա – ցնէր Կրոմիքօյի տեսակէտը՝ երբ անգամ մը եւս խօսք առնելով խտօրէն քննադա– տեց Արեւմտեաններու ծրագիրը եւ ուղ – ղակի մերժեց ընդունիլ զայն:

Պոլց նորութիւն չբերաւ:

Շեշտեց էթ ինք համաձայն է որ Արեւ– մտեան Պերլին ազատ քաղաք հռչակուի: Կրկնեց այն առաջարկները որ ծանօթ են այլեւս.— Խաղաղութեան դաշինք՝ Գեր– մանիոյ հետ: Օտար ուժերու հեռացում: Ատլանտեան Ուխտին եւ Վարշաւայի դաշինքէն հրաժարում՝ երկու Գերմա – նիաներու, եւն.:

Պոլց բացատրեց վերջապէս.— Ան – կարելի է որեւէ միութիւն՝ Արեւելեան Գերմանիոյ,— խաղաղասէր երկիր մը,— եւ Արեւմտեան Գերմանիոյ միջեւ:

Մի առեալ Նահանգներու Արտաքին նա– խարարը մանրամասնօրէն բացատրեց այն բոլոր պատճառները՝ որոնք արգելք կը հանդիսանան խորհրդային ծրագրին: Հերթըր թուեց այն բոլոր միջոցները՝ ո– րոնք ձեռք առնուած են ամերիկացիները նաղէտներու կողմէ՝ Գերմանիոյ հետ խաղաղութեան դաշինք մը կնքելու հա – մար (1946էն ի վեր): Ցաւ յայտնեց որ Խ. Միութիւնը միշտ հակառակած է:

— Մենք չենք կրնար ընդունիլ,— բաւ Հերթըր, — որ Գերմանիոյ հետ այնպէս վարուինք՝ ինչպէս վարուեցանք Աւստ – տրիոյ հետ, Ա. Աչխարհամարտէն ետք:

Անդրադառնալով Կրոմիքօյի պարտա– նած տեսակէտին, Հերթըր աւելցուց.— Ռուսերու առաջարկած Գերմանիան ոչ մէկ բանի կը համապատասխանէ: Մեզի համար կարելի չէ ընդունիլ գերմանական երկու կառավարութիւններ՝ որոնք հա – ւասար իրաւունքներով գերիշխանութիւն պիտի ունենան գերման ժողովուրդին վրայ:

Խորհրդային ծրագրին իւրաքանչիւր յօդուածը առանձին առանձին քննելէ եւ իր առարկութիւնները ընելէ ետք, ամե – րիկացի դիւանագէտը եզրակացուց.— Խ. Միութեան կառավարութեան առա – ջարկին մէջ կան ապագայ անհամաձայ – նութեանց եւ նոյնիսկ բախումներու լուրջ պատճառներ:

Երրորդ ճառախօսն էր Կրոմիքօ:

Անդամ մը եւս պաշտպանելով Մոսկու – այի տեսակէտը, Կրոմիքօ բուռն յարձա – կողականի մը անցաւ, քննադատելով Ա– րեւմտեաններու ծրագիրը:

Այսուհանդերձ, խորհրդային դիւանա– դէտը չատ քիչ բան յիշեց արեւմտեան ծրագիրէն. «պաղ պատերազմի ծրագիր» յորջորջեց զայն, աւելցնելով թէ «Զոր – ա»երու ժողովին միակ առաքելութիւնն է՝ Գերմանիոյ հետ խաղաղութեան դաշինք մը կնքելու մասին մտածել:

Միջազգային մամուլը Արտաքին նա – խարարներու վեցերորդ նիստը կը բա –

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Աթինէքէն կը հաղորդեն թէ վարչապետ Գարամանլիս կը փորձէ մօտեցնել Թուր – քիան եւ Եուկոսլաւիան մէկ կողմէն եւ Թուրքիա եւ Ա. Միացեալ Հանրապետու– թիւնը միւս կողմէ:

Թեհրանի մէջ ձերբակալուած են Խ. Միութեան դեսպանատան երկու պարսիկ պաշտօնեաներ, որոնք համայնավար են – ուգիներ կը բաժնէին: Երկու Պարսիկ– ները կրնան մահուան դատապարտուիլ:

Պաղտատի մէջ կացութիւնը միշտ անո– րոշ է: Համայնավար մամուլը բուռն յար– ձակումներ սկսած է անդրադառնալով մանաւանդ վարչապետին Մայիս մէկին արտասանած ճառին, ուր Քասըմ կ'արգի– լէր կուսակցական որեւէ գործունէու – թիւն: Մաքրագործումներ կը կատարուին նախարարութեանց մէջ, երկու չարաթ – ուան ընթացքին պրասենեակներու 22 պե– տեր եւ հարիւրաւոր պաշտօնեաներ իրենց գործէն արձակուած են: Արեւմտեան վերջին լրագրողը որ ցարդ Պաղտատ կը մնար արտաքսուեցաւ առջի օր: Տըքլաս Պրաուն Տէյլի Թելէկրաֆի եւ Փարի – Փրէսի թղթակիցն է:

Թուրքիոյ զինուորական ծախքերը բաւական ծանր կը նկատուին իրեն հա – մար, մանաւանդ խաղաղութեան ժամա– նակ: Թրքական պարբերաթերթը՝ Թիւր– քիէ Իճթիսաթ կազեթասի կը գրէ թէ Թուրքիա աշխարհի 4րդ պետութիւնն է որ զինուորական ծանր ելմտացոյց մը ու– նի: Իր ընդհանուր ելմտացոյցին 26·3 առ հարիւրը յատկացուած է պաշտպանական ծախքերու, անդին, առաջին դէմքի վրայ կուգայ Ամերիկա՝ 69·6 առ հարիւր, Ռա– նատա՝ 32·8 առ հարիւր, Ֆրանսա՝ 26·5 առ հարիւր:

Թուրքիոյ մէջ հարցապնդումներու ենթարկուած է Պէօյիւք Տոյու թերթին խմբագրապետը որ յօդուածով մը կոչ ը– րած էր Ինէօնիւն սպաննելու համար: Ընդդիմադիր մամուլը կ'ըսէ նաեւ թէ խմբագրապետը՝ Քիւչաքուրէք, վերջերս տասը հազար թրքական ոսկի տուգած է անտառներու մշակութեան ի նպաստ գո– րած իր յօդուածներուն համար: Ընդ – դիմադիր մամուլը կը չեշտէ որ կառա – վարութեան տուած այս դումարը անուղ– ղակի օժանդակութիւն մըն է թերթի մը՝ որ կը յարձակի ընդդիմութեան վրայ:

Խորհրդային զրպարտութիւնները բացուեցաւ երկուշաբթի օր Խրուշչեւի ներկայութեան: Օրակարգի նիւ – թերն են.— Ա.) Խորհրդային զրպարտու – թեան պարտականութիւնները համայնա – վարութեան կառուցման համար: Բ) Վե– րաքննիչ յանձնախումբին տեղեկագիրը: Գ) Զեկուցում՝ կանոնագրի կարգ մը փո– փոխութեանց առթիւ: Դ) Ընտրութիւն: Համագումարին ներկայ էին Էհրընպուրկ եւ Սիմոնով որ հինգ տարի առաջ մե – ղադրուած էին «դեղումներու» համար:

ՏՐԼԼՍԻ առողջական վիճակը ծանրա – ցած է: Ընտանիքը աշխարհի չորս կողմե– րէն եկած է մեծ հիւանդին վերջին վայր– կեաններուն հսկելու: Հոմէն Ուոչինկ – թըն զացած է իր անդրանիկ տղան որ յիսուսեան միաբան է, երկրորդ տղան՝ եկած է Մեքսիքայէն ուր հանքերու ճար– տարապետ է: Հիւանդանոց փութացած են նաեւ իր աղջիկը, քոյրերը, եղբայրը: Տըլլըս ձայնասփիւռէն կը հետեւէր իր իսկ հոդեվարքին: Այզընհաուըր այցելութեան գնաց երկուշաբթի: Արտաքին նախկին նախարարը կորսնցուցած է իր պիտակ – ցութիւնը. այլեւս ոչ ձայնասփիւռ մտիկ կ'ընէ եւ ոչ ալ թերթ կը կարդայ:

ՄԱՌԵՇԱԼ ԺՈՒԿՈՎ, վերադառնալով Ալժերիայէն, շահեկան ճառ մը խօսեցաւ Պարիզի մէջ, ենթասպաներու համագու– մարին: Մառեչալը ըսաւ որ վստահ է թէ Ֆրանսական քաղաքականութիւնը պիտի յաղթէ Ալժերիոյ մէջ եւ ինք համաձայն է Զօր. Տը Կոլի քաղաքականութեան:

ԼԻԲԱՆԱՆԻ 1959 ելմտացոյցը որ 206 միլիոն ոսկի է (1958էն 16 միլիոն աւելի), պաշտօնական հրովարտակով հաղորդուե– ցաւ:

ՎԱՐՉԱՊԵՏ Տըլըլ ճառ մը խօսեցաւ Փարիզի Տօնավաճառին մէջ «Հասարակաց Շուկայի օրերուն» առթիւ, չեշտելով թէ Եւրոպան իրականութիւն մըն է եւ մարդկային համախոհութիւնը՝ անհրա – ժեշտութիւն մը:

ՄՈՆԿՈՄԲՐԻԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ԵԹԷ ԵՒՐՈՊԱՆ ԵՐԿՈՒԻՒԲԻ ԲԱԺԻՆՈՒԱԾ Է ՅԱՆՑԱԻՈՐ ԵՆ՝ ՌՈՒԶՎԵԼԹ ԵՒ ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐ »

★

Մառեչալ Մոնկոմբրի չարք մը կարեւոր յայտարարութիւններ ըրաւ որ մեծ խան– դավառութիւն առեղծեցին Լոնտոնի մէջ: Եւ – Ալամէյնի յաղթականը նախ փորձեց պաշտպանել Անգլիան Ամերիկայի դէմ, անոր ըրած ամբաստանութիւններուն առ– թիւ: Ամերիկա չատ «ճկուն» կը դտնէ Մեծն Բրիտանիան Խ. Միութեան հետ իր ունեցած յարաբերութիւններուն մէջ:

Մառեչալը անդրադառնալով Ամերիկա– յի աննեղելի կաֆերուն, երեք գլխաւոր կէտերու մէջ կ'ամփոփէ զանոնք.—

1) Ամերիկացի փորձագէտներն են եւ սպաները, որոնց կարծիքն Զօր. Այզըն – հաուըր, որ 1942ին արդէն կը նախատե– սէին ցամաքահանում մը Եւրոպա: Ռուզվելթ համաձայն էր իրենց: Զըրչիլի վճռականութեան չնորհիւ այդ «յի – մարութիւնը» տեղի չունեցաւ: Ամե – րիկեան ուժերը պատրաստուած չէին եւ պիտի ձախողէին:

2) Մեծ սխալ մը կը նկատէ մառեչալ Մոնկոմբրի, 1943 Յունուար 26ի Քազա– պլանքայի ժողովին որոշումը, այսինքն Գերմանիոյ առանց պայմանի անձնա – տուութիւնը: Այդ տեսակէտը, կը չեշտէ մառեչալը, մէկ արդիւնք պիտի ունենար՝ պատերազմին չարունակութիւնը Գերմա – նացիներուն կողմէ մինչեւ ծայրը, եւ խորհրդային ու դաշնակից ուժերու հան– դիպումը Գերմանիոյ սիրտին վրայ: Կը նշանակէր նաեւ որ արեւմտեան յաղ – թանակին ժամանակ, այլեւս ոչ մէկ իշ – խանութիւն կամ կառավարութիւն պիտի ըլլար բանակցութիւններ վարելու համար հաչտութեան դաշնագրի մը ստորագրու– թիւնը ապահովող:

3) Ամէնէն ծանրակչիռ պատմական սխալն է, կ'ըսէ Մոնկոմբրի, ամերիկացի զեկավարներու թոյլատուութիւնը որ կարմիր բանակը գայ եւ նստի Եւրոպայի սիրտին վրայ: Ռուզվելթ համակերպեցաւ Եալթայի մէջ, հակառակ որ ինք համա– ձայն չէր, մինչ Մոնկոմբրի եւ Զըրչիլ կը պնդէին որ արեւմտեան ուժերը յառաջ– նան գրաւելու համար եւրոպական մայ– րաքաղաքները, մանաւանդ՝ Պերլին, Փը– րակ եւ Վիէննա, բայց Այզընհաուըր դանդաղեցուց զինուորական գործողու – թիւնները թոյլ տալու համար Ռուսերուն որ առաջ իրենք հասնին եւ տեղաւոր – ուին:

ՏԽՐՈՒՆԻ.— ՇԱՒԱՐՇ ԹԱՇՃԵԱՆ

Ցաւով կը տեղեկանանք, որ Մարսի – լիոյ մէջ յանկարծամահ եղած է ընկեր Շաւարշ Թաշճեան, դեղագործ:

Ողբացեալ ընկերը ծնած էր Խարբերդի մէջ չորք վաթսուն տարի առաջ: Կանու– խէն մտած էր Հ. Ց. Դաշնակցութեան շարքերը: Հաստատուած Մարսիլիոյ մէջ, տարիներով մասնակցութիւն բերած է ազգային եւ կուսակցական աշխատանք – ներու:

"ՍԱՅԱԹ ՆՈՎԱ"

«...Ֆի՛ վարդն էրից, ինձ՝ իմ եարըն,
Դու մի՛ լաց լի, ես իմ լալու»:
ՍԱՅԱԹ – ՆՈՎԱ

Գեղամ Սարեանի « Բալլադներ » գրքին ամէնէն ուշագրաւ տաղերէն մէկն է «Սայաթ – Նովա»ն, ուր սրատաչարժ գրուագ մը կը պատմուի մեծատաղանդ աշուղին կեանքէն :

Քանի մը առասպելախառն գրոյցներ կան անոր սիրային « արկածախնդրու – թիւն»ներուն մասին: Առոնց մէջ ամէնէն բնորոշը ընտրած է Գեղամ Սարեան ու բալլադով մը կը պատմէ զայն մեզի:

Ահա նաեւ գրոյցը:

Հերակլ արքայի արքունիքին մէջ երգիչ է Սայաթ – Նովա : Արքային քոյրը, Աննան, աչքով – ունքով իր սէրը կը յայտնէ աշուղին : Իսկ աշուղը նախանձամուխ Թեան գործը կը նկատէ այս զուգադէպ – պուխիւնը, քանի որ ինքն ալ նոյն զգացումները կը տածէր անոր հանդէպ : Բայց երբ արքան կ'իմանայ իրականու – Թիւնը, գաւով կը հեռացնէ աշուղը պա – լատէն: Դառնացած՝ աշուղը կը քաշուի վանք մը, ուր ինքզինք չարչարելով կ'անցընէ իր կեանքի մնացեալ օրերը:

Սարեանի գրչին տակ՝ պատահարները կը ներկայացուին առանց վերլուծումի , իբրեւ կեանքի անխուսափելի երեւոյթ – ներ: Հասարակ տեսիլ մըն ալ կեանքի երեւոյթ մըն է, բայց տարբեր հրապոյր կ'ունենայ առտուն, երբ ցօղաթուրմ է ու կը գոնուի արեւին առաջին շողերուն տակ: Ըսել կ'ուզեմ , որ հեղինակը հովուերգութիւնը կը ներկայացնէ մասնաւոր ընտրութեամբ ու զարդարանքով պահին ու ապրումներուն հաղորդակից ընելով մեզ :

«Արքունի խնջոյքներին երգում էր Սայաթ – Նովան,

« ... Սիրում էր նրան սրտով Հերակլը՝ վրաց արքան,
« Եւ նրա երգով էր նա վշտերը տալիս քամուն »:

Բայց, ինչպէս դիտենք , աշուղը թա – քուն կերպով կը սիրէր արքային քոյրը՝ Աննան :

« Երկու սիրտ իրար փարուած մխասին բարախեցին,
« Ու սիրոյ չշուկներից ծաղիկները ար – թնացան »:

Սակայն ինչ բան դաղտնի մնացեր է այս աշխարհին մէջ, բացի այն ներքին , սրտամորմոք ապրումներէն, որոնց առ – թած աւերներուն՝ ենթական ինքն ալ կը մնայ յաճախ անտեղեակ :

« Երբ խշշոց լսուեց յանկարծ, ճոնչաց առիւծ մի դուռ:
« Եւ Աննան փախաւ յանկարծ՝ եղնիկը ինչպէս նետից :
« Ու կորաւ հառաչի պէս, երգչի լայն կրծքից պոկուած :
« Ծաղիկները մոռացան չշուկները սի – րային,
« Բայց պահակը ծաղկոցի տեսածը չը – մոռացաւ »:

Անշուշտ գայրացաւ Հերակլ արքան , բայց որպէսզի չխօսուի այդ մասին իր պալատին մէջ, որպէսզի որեւէ վնաս չհասնի իր զահին, կը հեռացնէ Սայաթ – Նովան պալատէն :

Ուրիշ բան չէր մնար ընելիք աշուղին.

« Խաղաղ վանք ու անապատ էր տեն – չում նրա հոգին :
« Եւ մի օր, Սայաթ – Նովան, երբ իջ – նում էր երեկոն ,
« Մթնշաղն էր թանձրանում երբ Լոռու կատարին,
« Մտաւ վանքը Հաղպատի, փոշոտած , հոգով նկուն ,
« Քեամանչան կախած ուսից, ճամբոր – դի ցուպը ձեռքին »:

Մարդիկ ակամայ կրնան ենթարկուիլ տիրող օրէնքներուն: Բայց չէ՞ որ բնու – Թիւնն ալ ունի իր օրէնքները, որոնք ա – ւելի հզօր են, քան ընկերային օրէնք – ները :

Ի՞նչպէս կարելի է լռեցնել սիրտը, կամ կասեցնել միտքը: Ետ մղէ մտածումներդ, որքան հնարաւոր է: Ասիկա համաձայն է բանի :— Ծածկէ կաթսային մէջ եռա – ցող ջուրը: Տես թէ ինչ կը պատահի : Մահացու կամ օգտակար « ուժանակ » կը դառնայ: Անսահմանօրէն աւելի հզօր , բայց անձանօթ վիճակ մը չէ՞ մարդու հոգին ալ: Կեանքի դանազան պղտեցու – Թիւններուն ու ճնշումներուն տակ՝ կամ պիտի փճացնէ մեզ եւ կամ պիտի մղէ ստեղծագործութեան :

Այս վերջին թափը առած է Սայաթ – Նովայի միտքը: Տեսնենք՝ ինչպէս :

« Բայց երբ նա ուշ դիշերին փակւում էր մենակ խցում ,
« Արթնանում էր իր սրտում չքնաղ դէմքը Աննայի :
« Երկու մոմ աղօտ լոյսով խաւարում բոցկլտացին,
« Տիրամայրն էր կանդնել լուռ ու նա – յում իր աչքերին »:

Անկասկած , նման ապրումներու ար – դիւնք են իր կարգ մը դլուխ գործոցները:

Բայց որպէսզի ճակատագրին հարուա – ծը ըլլար կատարեալ, պիտի պատահէր տակաւին անխուսափելին .

«Մի լուր էր օձի նման փաթաթուել նրա հոգուն .—
« Պահակում են Աննային իշխանի հետ այս դիշեր :
« Մի ուրիշ երգչի երգ է մի դուցէ այնտեղ հնչում ,
« Եւ ուրիշ , ուրիշ մէկին է ժպտում հիմա Աննան ...»:

Նման փոթորկալից տատապանքներու օրերուն, խեղճ մահկանացուներուն միտ – քը մէկ վայրկեանէն միւսը դիւրու – Թեամբ չի կրնար դոնել իր հունը: Տեղի կ'ունենայ ներքին ցաւատանջ պայքար մը: Մինչեւ որ դայ վերջին քայքայումը՝ մահկանացու էակը հետք մը պիտի ձդէ այս մոլորակին վրայ: Անհամար են այս մասին մարդոց վկայարանները :

Ահա ներքին նման պայքարներու հետե – ւանքով, բանաստեղծը պիտի փափաքի « խարազնաղեաստ » հաղնիլ , չարչարել ինքզինք: Աչխարհիկ կեանքէ խուսափիլը առաջին փաստը չէ՞ ասոր: Ու կ'աղօթէր ան.

« Իմ մեղքին ներում մի տա , պատիժ տուր , ինչ կամենաս »:

Հոգեկան երկարատեւ տառապանքնե – րու անձնատուր չատ անձեր միտքի ո – լորտներու մէջ կ'ապրին յաճախ, ու կրօ – նական հարցեր կը յուզեն :

Նման վիճակ մը չէ՞ նաեւ սիրած կինը Աստուածածնի նմանցնել : Կը բաւէ կար – դալ Տիրամօր նուիրուած Նարեկացիի քերթուածները :

Նման զգացումի մը համար՝ Սայաթ – Նովա յանցապարտ կը զգայ ինքզինք ու կը չընչէ Տիրամօր պատկերին առջեւ .

« Գուցէ թէ մեղքի տէր եմ , մէկն ա – սէր՝ իմանալի,
« Գուցէ թէ քո բարկութեան իմ սէրը եղաւ պատճառ ,
« Որ երգում տեսքիդ պէս եմ գովել ես իմ Աննային ...»:

Եւ, իրրեւ վերջին ելք, պիտի վերանայ ու մաքրագործէ ինքզինք .

« Մի խնդիրք ունեմ քեզնից , մեն մի բան կ'ուզենայի .
« Գթառատ քո հայեացքով միշտ նրա դլխին կենաս ,
« Որ բարի , բարի լինի պսակը իմ Ան – նայի ...»:

Այս չէ՞ ներքին, անխմանալի մղումնե – րէն մէկը ամէն ապաչխարողի, որ հրա – ժարած է աչխարհիկ վայելքներէ, չհան – դիպելու համար նաեւ աչխարհիկ ցաւե – րու :

Տարբե՞ր եղած է Շմաւոնեան քահանա – յին պարագան, որ իր սիրելիներուն մա – հէն ետք դիմած է ապաչխարութեան :

Տարբե՞ր՝ մանաւանդ Նարեկացի մը :

Կը թուի սակայն թէ « խարազնա – դեաստ » հաղնիլ , երբ, աղօթք, վերա – ցում ու ստեղծագործութիւն չեն բաւեր հանդարտեցնելու չարչարուող միտք մը:

Անհրաժեշտ է նաեւ արցունքին հեղե – ղը:

« Ու երբ որ հարցրեց հանդիստ վա – նահայրը ջերմութեամբ ,
« Թէ արդեօք, արդեօք ի՞նչն է այդքան խոր յուզել նրան ,
« Շրթունքները դողացին ու ինչպէս կախուած մի ամպ
« Բարձրաձայն, սրտամորմոք հեկեկաց Սայաթ – Նովան »:

Ահա նման պատահարներու ընտրու – թեամբ, դասաւորումով ու բանաստեղ – ծութեամբ թաթաւուն քերթուածով մըն է, որ Գեղամ Սարեան կը ներկայացնէ մեծ աշուղին մեծ սէրը :

Այս բալլադին ընթերցումը ոչ միայն արուեստի վայելք մըն է, այլեւ հաստա – տում մըն է այն մասին, թէ ինչպէս մարդ իր դժբախտութիւնները կը վերածէ ըս – տեծագործութեան :

Արդէն Հայուն գլխաւոր յատկանիչը չէ՞ ասիկա: Այլապէս՝ ի՞նչպէս բացատ – րել անոր խորունկ մշակոյթը, այսքան հալածանքներէ ետք :

Ժողովուրդ մը իր ընտրանի՞ով մեծ է թէ իր հասարական գործերով: Դժուար է դտնել ասոր պատասխանը :

Սայաթ – Նովայի պարագային՝ երկու երեւոյթներն ալ հաստատելի են, քանի որ ժողովուրդը իր շրթներուն վրայ պա – հել է այդ տաղերը մինչեւ մեր օրերը : Այլ խօսքով՝ հասարակութիւնը արժանի եղեր է իր մեծ գաւկին :

Ներկայացնելով նման մեծութիւն մը , անկասկած Սարեան հաստատել կ'ուզէ այս պարագան :

Պ. Թ. ՄՈՄՃԵԱՆ

ԶԻՄԱՐԱ

Շրջապատուած անհամար պարտէզնե – րով եւ այդիներով, առջեւը հսկայ տա – րածութիւն, բլրակներ աջին ու ձախին , հովիտներ ու դաշտեր համապարփակ , ո – րոնք կը վէմվէմին մեղմօրէն դեպիւռին հեշտանքէն :

Զիմարա ծննդավայրը մեծ Հայերուն, Նալեան պատրիարքի եւ Շաւարշ Մի – սաքեանի : Աքսորի չրջանին հայ դպրա – կանները զարհուրանքի ապրումներէն եր – դեր էին յօրինած Թուրքերէն լեզուով , զուցէ այն մտածումով որ Թուրքերը այդ երգերը լսելով խղճահարուէին ու դթա – յին իրենց, բայց Թուրքերը ուրախու – Թեան Թէ հարսանիքի ժամանակ աքսորի վրայ յօրինուած երգերը երգելով կը զուարճանային ու կը պարէին ...

Այդ երգերէն քանի մը քառեակ յօրին – ուած էին Զիմարայի անունով: Թարգմա – նաբար քառեակ մը :—

Զիմարա այգիին խաղողն է հասեր ,
Հոգեակս աքսորի մէջ գլուխն է ծռեր ,
Քորնալիւ չէթէն սիրելիս է զարկեր
Զորնայ ձեռքերը, ինչպէ՞ս է կամեցեր:

Բարձր Հայքի ու Տրապիզոնի նահանգ – ներէն եկող գաղթականներուն մեծ մասը կ'անցնէր Զիմարայի չրջանէն, իր կանա – չաղարդ բլրակներն ու ծաղկազարդ պար – տէզնե՞րն էին արդեօք պատճառը՝ որ քառեակները հիւսուէին իր անունով :

×

Երկու հարիւրէ աւելի բաղկացած կա – բաւանի մը մէջ միայն երկու հայ պատա – նիներ էինք, մնացեալները Թուրք, քանի մը տասնեակ ալ քիւրտ ջորեպաններ , կը ճամբորդէինք Թրքական անունով: Պոլիս կ'երթայինք դրամ չահիլ ու կրկին վե – րադառնալու խոստումով ...

Քիւրտ աւազակներու յարձակումներէն խուսափելու համար կը ճամբորդէինք

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

(ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

Թատրոնը հասարակական դաղափար – ներու, մարդկային զգացումներու եւ կիրքերու ներկայացման այն մեծ հան – դիսարանն է, ուր բոլոր ժողովուրդնե – րուն կեանքը ստոյդ երեւոյթներով ու դի – ծերով, արուեստական նպատակաւոր ցայտեցումներով կը պատկերացուին : Թատրոնը, դպրոցին չափ կրթիչ ու դաս – տիարակիչ է: Դիւրամատչելի ու ըմբռ – նելի դաս մը կայ Թատրոնին մէջ, քանի որ անոր աղբիւրներն են պատմութիւնը , իրականութիւնը եւ տեսլականը: Ուրեմն, դերասանցապէս հրահանգիչ է ան եւ կը զարգացնէ ու կ'ազնուացնէ մարդկութիւ – նը :

Թատրոնը ապրեցնող , զայն սնուցանող ու դիեցնող միակ տարրը, Թատերագիրն է: Ան է որ կը հայթայթէ անոր կեանքին ու տեւողութեան համար հարկ եղած բո – լոր տուեալները:

Ինչպէս նկարիչը, որ իր երանգապնա – կին վրայ տարտղնուած գոյներու խառ – նիճաղանճէն կը ստեղծէ դլուխ գործոց պատառներ , այնպէս ալ Թատերագիրը , մարդկային զգացումներու խառնիճաղան – ճիչ ի ստեղծէ բեմական կոթողային տիպարները, որոնք չատ յաճախ կը դիմա – նան ու կը տոկան ժամանակի քանդիչ ա – ւերին: Սոփոկլեսի, Եսքիլեսի, Եւրիպի – տեսի, Արիստոֆանէի, Մոլիէրի եւ Շէյ – քսպիրի ստեղծած տիպարները, հակա – ռակ դարերու անոնց վրայ Թողած մչու – չին, դեռ ունին պայծառ ու ճառագայթող դիմագիծ մը եւ մինչեւ այսօր ալ առատ սնունդ կը մատակարարեն համաչխար – հային Թատրոնին :

Մեր իրականութեան մէջ ալ պատկերը նոյնն է: Մեր Թատերագիրները եղած են ապրեցնողը մեր ազգային Թատրոնը, հոգ չէ Թէ օգտուած ըլլանք նաեւ օտար Թատե – րագիրներու գործերէն : Դժբախտաբար սակայն, մեր Թատերական դրականու – Թիւնը, համեմատած, մեր Թատրոնի մե – ծութեան, եղած է աղքատիկ:

Տուա ծենք բազմաթիւ չողչողուն բե – մական դէմքեր, Աղամեան, Սիրանոյշ , Ֆասուլիաճեան, Մաղաքեան, Մնակեան, Արէլեան, Զարիֆեան, Սեւումեան եւ մինչեւ այսօր ալ ապրող ու գործող հրա – չալի արուեստագէտներ, որոնք իրենց տաղանդով ոչինչով պակաս կը մնան բո – լոր ազգերու դերասաններէն, սակայն իր – րեւ Թատերագիր ունեցած ենք ցանցառ դէմքեր՝ Սունդուկեանց, Շիրվանզադէ, Շանթ եւ մէկ երկու հատուկտոր հեղի – նակներ, որոնք բացառաբար գործ մը տը – ւած են :

Մեր Թատերական գրականութեան վե – րայիչեալ չքնաղ երրորդութեան՝ Սուն – դուկեանցի, Շիրվանզադէի եւ Շանթի գործին չարունակութիւնն ալ որք մնա – ցած է :

Ճիշդ է որ հայրենիքին մէջ Թատրոնը այսօր կը գոնուի բարձրադոյն վերելքի մը ճամբուն վրայ, կան հոն բեմի վաղեմի վեթերաններ եւ անոնց կողքին հասած են բազմաթիւ տաղանդաւոր նորեր, սակայն Թատերական գրականութիւնը տակաւին չի կրցաւ ծնիլ նոր Սունդուկեանց, նոր Շիրվանզադէ կամ նոր Շանթ: Բեմական նոր արտադրութիւնները հայրենիքին մէջ, մեծամասամբ գրուած են իրրեւ փիէս աթէզ, այսինքն գաղափարաբանու – Թեան մը փաստաբանութիւնը ներկայացը – նող գործեր , եւ ցարդ համամարդկային նիւթ մը չօչափող գործ չէ արտադրուած: Սփիւռքի մէջ, պատկերը նոյնն է: Չէ ծը – նած տակաւին սպասուած Թատերագիրը:

Այս ուղղութեամբ, մեր դաղութը՝ փարիզը կարծես նուազ անբախտ է եղած: Հոս առնն մը հրապարակին վրայ երեւ – ցաւ երիտասարդ մը՝ Հրաչ Տարօնեան , Թատերագրի լուրջ խառնուածքով օժտուն, որ տուաւ քանի մը գործեր եւ յոյս ներ – չընչեց ապագային համար, սակայն դժ – բախտաբար չուտով լքեց իր այնքան դե – դեցիկ կերպով սկսած գործը եւ քաչուե – ցաւ հրապարակէն :

Բարեբախտաբար, ուրիչ մը, Գրիգոր – Վահան , Թատերագրի աւելի հաստատուն եւ աւելի լայն տուեալներով օժտուած , մինչեւ այսօր անվհատ կը չարունակէ իր գործը եւ մեր Թատերական դրականու – Թիւնը հարստացուցած է իր բազմաթիւ քոմէտիներով, սաթիրներով , տագա – չափեալ տրամախօսութիւններով, տրամ – ներով եւ ինչու չէ՝ դասական ողբերգու – Թիւններով ալ :

Հայ Թատերական դրականութեան հիմ – նադիր Գաբրիէլ Սունդուկեանցի մասին այս ուսումնասիրութիւնը պատրաս – տելով ուրիչ նպատակ չունիմ , այլ միայն կ'ուզեմ որ մանաւանդ մեր նոր սերունդը ծանօթանայ այս հոյակապ դէմքին, սիրէ ու պաչտէ զայն, ինչպէս կը սիրեն ու կը պաչտեն եօթը տարեկա – նէն սկսած մինչեւ 70 տարեկան Ֆրան – սացիները իրենց Մոլիէրը, եւ մեր երի – տասարդութեան մէջէն չնորհալիները , որոնք անպակաս են, խրախուսուին , խանդավառուին եւ հետզհետէ Թատեր – դիրներ երեւան գալով, հարստացնեն մեր Թատերական դրականութիւնը :

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԻԹԵԱՆ

(1 Շար.)

ՁՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ :

ԿՅՈՒՆՔ

Ֆ. ՀՈՍՈՎ

ԼԸ.

Մտաղ ... ասում ես դիցեկոլքի , ասում եմ ես , իսկ ես ոչ մի ինչ ասում չեմ , որ ասեմ ինչ որ ասում ես , ասում եմ ես , որ ասեմ ինչ որ ասում ես , ասում եմ ես , որ ասեմ ինչ որ ասում ես , ասում եմ ես

գաղթ մէկ բառով ։— Անհամաձայնու – թիւն ։

Արդարեւ, երկու կողմերն ալ մերժեցին ընդունիլ ներկայացուած առաջարկներն ու պատրաստուած ծրագիրները ։

Արեւմտեանները սկիզբէն ի վեր յայ – տարարած էին թէ խորհրդային հին ծրա – գիրը ընդունելի չէր ։

Իսկ վեցերորդ նիստէն օր մը առաջ, Լէնինի խաղաղութեան մրցանակը ստա – նալուն առիթով Խրուշչեւ ճառ մը խօսե – ցաւ, անդրադառնալով Հերթըլի ծրա – գրին ։

Ա. Միւթեան վարչապետը յայտարա – րեց թէ Արեւմտեան ծրագրին «կարգ մը կէտերը կրնան քննուիլ» ։ Ըստ երեւոյթին կ'ուզէ համաձայնութիւնը ուշացնել, կամ՝ տարակարծութիւնները հասցնել մինչեւ «Մեծ»երու ժողովը ։

Խրուշչեւ միշտ կողմնակից կը մնայ «Մեծ»երու ժողովին, բայց իր ճառին մէջ չմոռցաւ յիշելու երկու Գերմանիա – ներու դոյութիւնը ։

Ընդհանուր տպաւորութիւնը այն է թէ Խրուշչեւ կ'ուզէ որոշ դիմումներ ընել, բայց ոչ առայժմ ։ Այլապէս՝ կա – րելի էր յայտարարել արդէն թէ Ար – եւմտեան նախարարներու ժողովը լուծումի մը պիտի չյանգի ։

× Ֆիկառոյի աշխատակիցը՝ Օզէռ, տեսակցութիւն մը ունեցած է Արեւմտ – եան Գերմանիոյ Արտաքին նախարար Ցոն Պրենթանոյի հետ ու կարգ մը հար – ցումներ ըրած՝ Գերմանիոյ եւ Պերլինի հարցերուն շուրջ ։

Ցոն Պրենթանո յայտարարած է, թէ որեւէ ձեւով կարելի չէ մտածել Պերլինը Գերմանիայէն բաժնելու մասին, մասնա – ւորապէս չեչտելով ։— Ռուսերը սպառնա – լիքներ ընելու սովորութիւն ունին, իսկ երբ օգտակար նկատեն՝ վերջնագիրներ ալ կուտան ։ Հարց հոն է, որ այլեւս պէտք է խօսինք, բայց խօսքը կը պահանջի Ա. Միւթեան ։ Ընդունելի չէ, որ այս ժո – ղովներու ընթացքին հին ծրագիրներ եւ հինցած առաջարկներ սեղան դրուին ։ Ա – րեւմուտքը, իր կողմէ, նորութիւններ կը բերէ, իսկ Ռուսերը կ'ուզեն պահել ամէն բան՝ ինչպէս որ է ։

Օզէռ ուշագրաւ հարցում մը ըրած է Ցոն Պրենթանոյի ։— Վստա՞հ էք որ Անգլիացիները համաձայն են ձեզի հետ ։

— Ցարդ ոչինչ ցոյց կուտայ թէ Անգ – լիա կ'ուզէ առանձին գործել ։

× 50·000 հոգիի առջեւ ճառ մը խօսե – լով Ուոլթըր Իւլպրիխթ Արեւելեան Գեր – մանիա հրաւիրեց Միացեալ Նահանգնե – րու Արտաքին նախարարը, որպէսզի տես – նէ թէ Փոցտամի համաձայնութիւնները յարգուած են իրենց կողմէ ։

Հ. Յ. Դ. Մարսէլիոյ Շրջ. կոմիտէն ցաւով կը ծանուցանէ իր անդամներէն ընկ. ՇԱՒԱՐՇ ԹԱՇՃԵԱՆի յանկարծական մահը, որ տեղի ունեցաւ 17 Մայիս, կի – րակի առաւօտ հիւանդանոցին մէջ ։

Այս տխուր առիթ Շրջ. կոմիտէն յա – նուն իր բոլոր ընկերներուն ցաւակցու – թիւն կը յայտնէ ողբ. ընկերոջ տիկնոջ եւ ընտանեկան պարագաներուն ։

"ՅԱՌԱՋ" ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Լիոնէն Պ. Վահէ Տէր Յակոբեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր հօր՝ Յակոբ Տէր Յակոբեանի ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Սամուէլ Մուրատեան վարժարանի տես – չութիւնը, Մխիթարեան Միաբանութեան եւ վարժարանի անմոռանալի բարեկա – մին, հանգուցեալ Տոքթ. Արամ Ճինճեա – նի քառասունքին առիթ՝ Մայիս 24ի կի – րակին, առաւօտեան ժամը 10·30ին, հո – գեհանգստեան պատարագ եւ պաշտօն պի – տի կատարէ վարժարանի Մատրան մէջ ։

Փափաքողները կրնան ներկայ գտնուիլ ։

Ա. Զ. Դ.

Ազգասիրական Ընկերակցութիւնը քանի մը օրէն Անթիլի ծերանոցին կից պիտի կառուցանէ յարկաբաժին մը, մասնաւո – րապէս անկար ծերերու համար ։

Այս առիթ, կոչ կ'ընենք կառուցման եւ կահաւորման հայ հասատատութեանց ի – րենց աջակցութիւնը բերել ։

Պայմաններու տեղեկութեանց համար դիմել Ազգասիրականի գրասենեակը՝

ASS. ARM. D'AIDE SOCIALE
32, Rue de Trévise, Paris - 9e

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ 30 ԱՄԵԱԿԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղի ։

Այս Շաբաթ 23 Մայիս, երեկոյեան ժա – մը 8·30ին, 26 բիս Տիւռուար, «Սքիւ – տիօ Քրէֆի» սրահը ։

Կը բանախօսէ՝

ԸՆԿ. ԷԼԼԷՆ ԲԻՒՋԱՆԴ

Գեղարուեստական խնամուած բաժին ։ Իր սիրայօժար մասնակցութիւնը կը բերէ Լիոնի Հ. Յ. Դ. Նոր Սերունդի երգչա – խումբը, դեկավարութեամբ Պ. Ա. Ա – ՐԱՀԱՄԵԱՆի ։

Կենդանի պատկեր «Օրուան խօսքը» ։

Մեներգ ։— ՏԻԿԻՆ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ եւ Օր. Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ։

Արտասանութիւն ։— Օրիորդներ ԲՐԱ – ԲԻՈՆ ՏԱՊԱՂԵԱՆ, ՍԻՐԱՆ ԿԱՐԱՊԵՏ – ԵԱՆ, Օր. ՍԱՐԳԻՍԵԱՆ եւ Շ. ՂԱԶԱՐ – ԵԱՆ ։ Ջութակ ։— Պ. ՅՈՎՀ. ՊԷՐՊԷՐ – ԵԱՆ ։

Հայկական պար «Թամարա» զոյգպար ։

Տրամախօսութիւն ։— «Կեցցէ մեր լե – զուն» ։

Մուտքը ազատ է ։

ԼԻՈՆԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Լիոնի եկեղեցաշէն Տիկն. Միւթիւ – նը ամէն չանք կը թափէ հասցնելի մի – ջոցներ ստեղծելու Լիոնի եկեղեցւոյ չի – նուելեան համար ։—

ՄԱՅԻՍ 24ին Հոլլոժի սրահներուն մէջ իրիկուան ժամը 8·30ին պիտի ներկայա – ուի, նոր պատրաստուած ֆիլմ մը Հա – յաստանի մէջ, զուտ հայկական կեանքէ «Կապօն» ։

ՄԱՅԻՍ 31ին մեծ պարահանդէս մը վիճակահանութիւն ։

Մանրամասնութիւնները յաջորդով ։

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Փակուած են կայանի արճանապրու – թիւնները իսկ անոնք որոնք արդէն ար – ճանապրուած են, պէտք է դիմեն կեդրո – նին, հարկ եղած տեղեկութիւնները ստանալու եւ ալոճասիոնի թերթիկները յանձնելու համար, երկուշաբթի, չորեք – շաբթի եւ ուրբաթ օրերը ժամը 13էն 14 եւ երեկոյեան ժամը 18էն 20, բիւ Մէյ – րան 5, հեռ. Թոիւտէն 27-35 ։

ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ
— ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ —

ՏՊԱՐԱՆ "ՏԱՐՕՆ"

20, Avenue des Cottages
CALLUIRE (Rhône)

Կը ստանձնէ հայերէն եւ ֆրանսերէն ամէն տեսակ տպագրական մաքուր գոր – ծեր ։

Արագ գործառնութիւն, դիւրամատչելի պայմաններ ։

Առնել թիւ 8 բրօշէպիւսը եւ իմանալ Սէն Քլէրի վերջաւորութիւն ։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Պ. Յարութիւն Շերամեան, ծնած Տիգ – բանակերտ, վերջերս մեռած է Ֆրանսայի Պուրժ քաղաքին մէջ, կը փնտռուին իր ազգականները եւ ժառանգորդները, տե – ղեկացնել Փարիզի Ս. Յովհաննէս Մըր – միչ եկեղեցւոյն դիւանատունը, 15 Րիւ ժան Կուժօն, փարիզ (8) ։

Կը խնդրուի արտասահմանի, մասնա – ւորապէս Լիբանանի թերթերէն արտատը – պել այս ագդը ։

ՋՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

EXPERTISE GRATUITE

Ծախելու համար
ձեր փավիյօնը, վիլլան,
յարկաբաժինը կամ խանութը ։

J. TORANIAN
18, AVENUE DE L'OPÉRA
OPE 73-21 OPE 19-45

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ

Յաղթանակի 44րդ տարեդարձը կը տօնուի մեծ պատրաստութեամբ ։

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Վասպուրականի Հայր. Միութեան Ֆրանսայի Կեդր. վար – չութեան եւ Հովանաւորութեամբ ու ներկայութեամբ՝ Կաթ. Պատուիրակ՝

ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆի

Այս կիրակի կէսօրէ յետոյ ժամը 3·30ին Սալ Մազրնոյի սրահներու մէջ 88 Րիւ տ'Օպայլեը ։

Կը նախագահէ Պ. Վ. ՊԱՆԴԻԿԵԱՆ (Վարչութեան նախագահ)

Փառատօնին հրաւիրուած են յարանուանութեանց, կուսակցութեանց ու բո – լոր բարեսիրական ընկերութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչները ։

Բանախօս՝ Պ. Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

Խօսք կը տրուի նաեւ կուսակցութեանց ներկայացուցիչներուն ։

Գեղարուեստական խնամուած բաժին ։ Պիտի ներկայացուի Յ. Պարոնեանի «ՄԵԾԱՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐ»Ը եւ զուարճ մը, դեկավարութեամբ՝ ԹՐԱԳՕՇի եւ ծանօթ ուժերու ։

Պարահանդէս ժամը ութէն մինչեւ կէս գիշեր ընկերակցութեամբ ՍԻՊԱՍՏԻԱՆ ՊՕՑՋ նուագախումբին ։

Ճոխ պուֆէ մատչելի գիներով ։

Տոմսերը ապահովել կանխօրօք վարչութեան անդամներէն ։

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

վիճաբանական ժողով կազմակերպուած երիտասարդներուն համար ։

Նիւթ՝ «Ի՞ՆՉ կը սպասեմ հայ երիտա – սարդական կազմակերպութենէ մը» ։

«Ce que j'attends d'une association de jeunes Arméniens

CENTRE D'ÉTUDES ARMÉNIENNES
JEUDI. 21 MAI 1959 A 21 HEURES
AU CAFÉ CADET, 1er ÉTAGE, MÉTRO CADET

ԼԻՈՆ, ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ ՀՐԱՒԻՐ

Լիոնի եւ շրջանի Նախկին Հայ Մար – տիկներու Միութեան ժողովը կը զու – մարուի յառաջիկայ Ուրբաթ՝ Մայիս 22, ժամը 20·30ին, Նորակառոյց եկեղեցւոյ սրահին մէջ, 295 բիւ Պուալօ ։

Անդամներուն ներկայութիւնը պարտա – տորիչ է ։ Կարեւոր օրակարգ եւ նոր վար – չութեան ընտրութիւն ։

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ ԵՒ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՑԷԼ – ԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ ։
ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ, ԺԱՄԸ 16ԷՆ ՍԿՍԵԱԼ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՑԹ, ԺԱՄԸ 20ԷՆ ԵՏՔ
Վարժարանի դալարագեղ պարտէզներուն մէջ ։

ANTI-VOMI
Marque et modèle déposés
ՀԱՆԳԻՍՏ ՃԱՄԲՈՐԴԵԼ

Այսուհետեւ ուղածնուդ չափ կրնաք կառքով ճամբորդել, առանց որեւէ դիմու պատճառի կամ անհանգստութեան ։

Գիւտը դիւրաբեր գործադրելի է ամէն կառքի մէջ ։ Մեհատով չինուած, այժմու դինն է՝ 400 ֆրանք ։

Փոխարժէքը կրնաք նամակագրելով վճարել ։

Վաճառականներուն համար մասնաւոր պայմաններ ։

Ստանալու համար դիմել՝

FERMETURE ETEX
7, RUE LOUIS BALMENS
GAP (H. A.)

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Լիոն ։— Հ. Յ. Դ. Վարանդեան կոմիտէի ժողովը այս ուրբաթ իրիկուն, սո – վորական հաւաքատեղին, ժամը 9ին ։ Կա – րեւոր օրակարգ ։

Լիոն ։— Ֆ. Կ. Խաչի Լիոնի վարչու – թիւնը, ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամուհիները այս Շաբաթ, ժամը 16ին, Ցոյներու սրահը ։ Կարեւոր օրակարգ ։

ՑՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Յառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ այս Շաբաթ երեկոյ, Քատէ սրճարանի վերնայարկը ։ Դասա – խօսն է Պ. Պ. ՆԱՋԱՐԵԱՆ ։ Նիւթն է ։— «Հայաստանի տնտեսութեան ներկայ տուեալները» ։

Մուտքը ազատ է ։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ՅՈՒՆԻՍ 8ին, թատերական ներկայա – ցում Շիրվանզադէի ծննդեան հարիւրամ – եակին առիթ, նախաձեռնութեամբ՝ Գէորգ Տէրվիշեանի եւ մասնակցութեամբ ծանօթ արուեստագէտներու ։

Կը ներկայացուի՝ ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ ։

ԾԱԽՈՒ Է

Փարիզի մէջ, յարկաբաժին մը, ան – միջապէս տրամադրելի, երկու սենեակ (չատ մեծ), մուտք եւ խոհանոց, երկ – րորդ յարկ, չատ արեւոտ, ջուր, կազ, ելեկտրականութիւն ։

Գինը երկու միլիոն՝ կանխիկ ։

Դիմել՝ (ամէն օր ժամը 8 – 20, (բացի կիրակի եւ երկուշաբթի) ։

M. BABAYAN - CORDONIER
17. Rue Bridaine, Paris 17e
Métro Rome

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՄԻՇՏ ԱՌՈՂՋ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
— ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՌԵՑԷՔ —

BOSPHORE Ի

ՀԷԼՎԱՆ ԵՒ ԹԱՀԻՆԸ

ՀՐՈՒՇԱԿԸ, որ կը պատրաստուի շուշմայով (*սուսամ*) եւ շաբարով, առաջնակարգ սնունդ մըն է, կազդուրիչ՝ շնորհիւ շուշմային, որ Արեւելքի մէջ ծանօթ է նաեւ հիւծէն ի վեր, իր հրաշալի բուժական յատկութիւններով, իր երիտասարդացնող տարրերով,

Արեւելեան ժողովուրդներուն երկարակեցութիւնը արդիւնք է Հէլվայի եւ թահինի գործածութեան ։

Այսօր Արեւմուտքի մէջ եւս բժշկական հեղինակութիւններ կը հաստատեն առաջնակարգ այս սննդանիւթին արժէքը ։

Sté BOSPHORE (ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՑՆ ԱՐՏԱԴՐԻՉԸ)
2, Rue Louis Astoin - Marseillle

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք : Հատը 20 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ
21
ՄԱՑԻՍ
JEUDI
21 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8397 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4298

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՊԻՏԻ ԿՐՆԱ՞Ն ՀԱՄԱՁԱՅՆԻԼ

Այս հարցումը կայ բոլորի շրթունքին վրայ, Եւրոպայէն մինչեւ Ամերիկա, մինչեւ Մերձաւոր ու Միջերկրական Արեւելք :

Շատ կանուխ է տակաւին զուշակութիւններ կատարելու համար :

Լէմանի խաղաղ ջուրերը բոլորովին փոթորկած չեն դեռ :

Բուն ճակատամարտին սկսելէ առաջ, հակառակորդ կողմերը նախապատրաստական հետաքրքրական աշխատանքներ կը կատարեն : Փոխադարձաբար իրարու ուժերը կը փորձեն եւ կը ջանան գտնել տակաւին կ'ետեր՝ յարձակողականի անցնելու համար :

Տասը օրուան վիճաբանութիւնները գրական արդիւնքի մը չեն յանգած տակաւին :

Հակընդդէմ երկու ճակատներն ալ ներկայացուցին իրենց ծրագիրները՝ օրակարգի հրատապ հարցերուն մասին :

Հակառակ ամիսներէ ի վեր տեղի ունեցած դիւանագիտական բանակցութեանց եւ երկուստեք փոխանակուած յուշագրերու, կը տեսնուի որ տակնուվրան լուծելու համար կողմերը հաստատ կը մնան իրենց նախկին տեսակէտներուն վրայ :

Արեւմտեան ճակատը ամէն բանէ առաջ կ'ուզէ իրագործել Գերմանիոյ երկու մասերուն միացումը եւ չետոյ միայն կնքել հաշտութեան դաշնագիրը : Արեւելեան Միութիւնը կը պնդէ նախ հաշտութիւն կնքելու մասին :

Այս կէտին չուրջ ո՛չ մէկ յառաջդիմութիւն կատարուած է անցեալ Յունուար 10էն ի վեր, երբ Խրուշչեւ դաշնակիցներ կրնայ ներկայացուցած էր իր ծրագիրը :

Մոսկուա կ'ուզէ պահպանել 1945 Մայիս ուժերէն ի վեր հաստատուած դոյավիճակը կեդրոնական Եւրոպայի մէջ : Կը պահանջէ, որ դաշնակիցները իրենց վերջնական ճանչնան Գերմանիոյ ներկայ սահմանները :

Տարակոյս չկայ, որ նման կարգադրութիւն մը իր մէջ կը պարունակէ յառաջիկայ նոր պատերազմի մը սաղմերը : Դաշնակիցները մեծ զգուշութեամբ կը մօտենան այս խնդրին :

Անոնց համար կարեւորը արեւելեան եւ արեւմտեան Գերմանիաներու միացումը եւ ազատ ընտրութիւններու ճամբով կեդրոնական կառավարութեան մը կազմութիւնն է :

Երկրորդ քայլը պէտք է ըլլայ «Եւրոպայի ապահովութեան» երաշխաւորումը :

Եթէ երկուստեք համաձայնութեամբ կարելի չըլլայ իրագործել այս երկու կէտերը, այդ պարագային դաշնակիցները պիտի առաջարկեն լուծել գոնէ Պերլինի խնդիրը, գոնէ ժամանակաւոր կերպով, նոր բախումներէ խուսափելու համար :

Միւս կողմէ բանակցութիւնները կը չարունակուին՝ հիւլէական փորձերը դադրեցնելու եւ հակակշիռի ենթարկելու մասին դաշնագիր մը կնքելու համար : Այս ուղղութեամբ որոշ յառաջդիմութիւններ կատարուած են արդէն :

Կրէմլինի մենատէրը կ'ուզէ ամէն գնով յաջողցնել Ջորս Մեծերու հանդիպումը : Այդ պատճառով ալ կարգ մը չըլլանակներ այն կարծիքն ունին, որ խորհրդային դիւանագէտները իրենց ներկայ անհաշտ դիրքը հետզհետէ պիտի մեղմացնեն՝ խզումէ առաջ չբերելու եւ կարգ մը զիջումներով համաձայնութեան եզր մը գտնելու համար :

Դիւրին պիտի չըլլայ հաշտեցնել կողմերու տեսակէտները, որոնք հիմնական տարբերութիւններ կը ներկայացնեն :

Ամբողջ աշխարհ սրտատրոփ կը հետեւի Ժընեւի խորհրդաժողովի վիճաբանութեանց ու ակնդէտ կը սպասէ լոյսի եւ յոյսի նշոյլներու :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՏԱՔ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԺԸՆԵՒԻ ՄԷՋ

ՖՐԱՆՍԱՑԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉԸ ԲՈՒՌՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԸՐԱՒ

•

ՄԵԾԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ՖՐԱՆՍԱ

Եօթներորդ նիստը, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, ամէնէն երկարն էր : Տեւեց մօտ երեքուկէս ժամ՝ Հերթըրի նախագահութեան տակ :

Օրուան գլխաւոր դէմքն էր Քուվ Տը Միւրվիլ, որ բուռն միջամտութեամբ մը դատապարտեց ծրագիրներու ճակատամարտը :

Ֆրանսայի ներկայացուցիչը վճռապէս յայտարարեց.— Կը մտածէինք թէ մեր ծրագիրը գոնէ քննութեան առարկայ պիտի ըլլար. վերջ ի վերջոյ մենք խնդրակուներ չենք եւ մենք չենք որ լուրջ տագնապ մը ստեղծեցինք Եւրոպայի մէջ :

Քուվ Տը Միւրվիլ անգամ մը եւս, բանաձեւուած, ներկայացուց Արեւմուտքի ծրագիրը.— Մենք Գերմանիոյ վերամիացումը կ'ուզենք նախ, ապա՝ հաշտութեան դաշնագիր մը : Այս երկու հարցերուն վրայ աւելցուցինք ապահովութեան եւ զինաթափութեան խնդիրները. հետեւաբար՝ նախօրօք պատասխանեցինք Խ. Միութեան ընելիք առարկութիւններուն : Բայց մեր սխալը այն եղաւ՝ որ տագնապը լուծելու համար բարեկամեցողութիւն ցոյց տուինք, մինչդեռ ամէն մարդ գիտէ թէ խնդրարկուները մենք չենք :

Ուղղակի պատասխանելով Կրոմիքոյի յայտարարութիւններուն, Ֆրանսացի նախարարը ըսաւ.— Խ. Միութիւնը կը յայտարարէ թէ վերամիացման մեր ծրագիրով չի հետաքրքրուիր : Բայց վերամիացումը գերմանական հարցին էական կէտն է : Միւս կողմէ, Մոսկուա կ'ընդունի քննել Եւրոպայի ապահովութեան մասին մեր ըրած առաջարկները : Խնդրին այս ձեւով մօտենալը հասարակ առեւտուրի մը կը նմանի : Գալով մեղի՝ խորհրդային ծրագրին մէջ հրապուրիչ ոչ մէկ կէտ կը գտնենք : Որովհետեւ ամէն բանի բանալին Գերմանիոյ վերամիացումն է :

Եզրակացնելով, Քուվ Տը Միւրվիլ չեշտեց մասնաւորապէս.— Պատերազմի չըլլանը անցեալ : Պատերազմի պատճառով ծագած հարցերուն մեծ մասը լուծուեցաւ, իսկ մնացեալներն ալ կրնան լուծուիլ միայն վերամիացումով :

Խորհրդային ծրագրին հիմնական կէտերը զինուորական եւ սահմանային հարցեր են. բայց ի՞նչ հարկ սահմանները ճշդել՝ երբ վերամիացեալ Գերմանիոյ մը սահմանները չեն ճշդուած տակաւին : Պարագան նոյնն է նաեւ զինուորական հարցերու համար : Մոսկուայի առաջարկած ծրագիրը ոչ մէկ բանի կը ծառայէ :

Պոնի կառավարութեան անունով խօսք առաւ Կրեւէ եւ խորհրդային ծրագիրը մերժեց հետեւեալ պատճառներով.—

Յաղագս խորհրդային ծրագիրը Գերմանիոյ վերամիացումը անկարելի կը դարձնէ : Փոխանակ երկուքի՝ երեք Գերմանիաներ կը ստեղծուին (Պերլին՝ երրորդը, երբ ազատ քաղաք հռչակուի) : Արեւմտեան Գերմանիոյ քաղաքական ազատութիւնը կը կաչկանդուի :

Կրեւէ աւելցուց նաեւ, որ Գերմանիոյ մասին խօսելու համար 1945ի նման պէտք չէ մտածել :

Արեւմտեան տեսակէտը պաշտպանեց նաեւ Սելվին Լոյտ՝ կարճ յայտարարութեամբ մը : Անգլիոյ Արտաքին նախարարը չեշտեց թէ «խորհրդային առաջարկները անիրականանալի են. անոնք հիմնը-

ԱԼԺԵՐԻՈՅ ՄԷՋ՝ ԿՈՒԻՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

24 ՋԻՆՈՒՈՐՆԵՐ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Մինչ Ալժերիոյ հարցը կը չարունակէ պրպղեցնել քաղաքական չրջանակները՝ կուիները կը չարունակուին, խլելով բազմաթիւ զոհեր :

Երկուշաբթի օր Ալժէէն մօտ վաթսուն քիլոմեթր հարաւ, Թապլայի չրջանին մէջ բանակը բախում մը ունեցաւ ըմբոստներու զինեալ խումբի մը հետ : Կուիները չարունակուեցան մինչեւ երեքշաբթի առաւօտ, 24 զինուորներու մահուան պատճառ դառնալով. տասնմէկ ուրիշներ վիրաւորուած են : Ապստամբներէն սպաննուած է 16 հոգի եւ չորս ուրիշներ ալ զերի ինկած են :

Միւս կողմէ, չարաթէ մը ի վեր կուիները կը չարունակուին Մոլիէրի չրջանին մէջ, ուր լեռներու բարձրութիւնը կը հասնի երկու հազար մեթրի : Բանակը ըրջօրէն յառաջ կը տանի մաքրագործման իր աշխատանքները : Բախումի մը ընթացքին ըմբոստները 27 զոհ տուին. երեք հոգի զերի ինկաւ : Ճէպէլ Մուսայի մէջ 17 ըմբոստներ սպաննուեցան : Ալժէէն հասած լուրերու համաձայն, մէկ չարթուան մէջ ֆելլահներու տուած զոհե-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ւած են սխալ տուեալներու վրայ » :

Վերջին խօսողն էր Կրոմիքօ, որ հերքեց Հերթըրի այն յայտարարութիւնը՝ թէ Արեւմուտքը զիջումներ ըրած է արդէն : Այնուհետեւ, Խ. Միութեան Արտաքին նախարարը դէմ արտայայտուեցաւ վերամիացումը հաշտութեան դաշնագրի ստորագրութենէն առաջ ընելու դաւադիրին : Վերամիացումը պիտի ըլլայ անշուշտ, բայց, Կրոմպլոյի համաձայն՝ հեռաւոր ապագայի մը մէջ :

Իր եզրակացութեան մէջ խորհրդային նախարարը ըսաւ թէ ժողովականներու կարեւորագոյն պարտականութիւնն է հաստարակաց կէտեր գտնել երկու ծրագիրներուն միջեւ.— Մերձեցման բոլոր կարելիութիւնները չեն սպառած, ըսաւ ան : Այդ պարագային՝ չատ յոռետես պիտի ըլլայինք : Հերթըրի, Քուվ Տը Միւրվիլի եւ Սելվին Լոյտի յայտարարութիւններուն մէջ դրական կէտեր կան. հետեւաբար, ուսումնասիրենք զանոնք եւ փորձենք համաձայնութեան մը յանգիլ :

Ժողովը փակուեցաւ Կրոմիքոյի այս խօսքերէն եւս : Քաղաքական չրջանակներու կարծիքով՝ Խ. Միութեան Արտաքին նախարարը կը փորձէ «Երեք»ներուն հետ վիճաբանութեան մը բռնուիլ հաշտութեան դաշնագրի մասին : Բայց դժուար թէ նման բան մը պատահի :

ՄԵԾԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ

Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահ Տը Կոլ Ուաշինկթընի կառավարութեան հաղորդեց թէ Մեծերու ժողովը Սան Ֆրանչիսքոյի մէջ պէտք չէ գումարուի :

Քուվ Տը Միւրվիլ ժընեւի մէջ առանձին տեսակցութիւն մը ունեցաւ Հերթըրի հետ եւ հետեւեալ պատճառաբանութիւնները տուաւ այս հարցին չուրջ.—

1.— Նախընտրելի է որ նման ժողով մը տեղի ունենայ չէզոք քաղաքի մը մէջ :

2.— Խօսակցութիւնները պիտի գառնան եւրոպական հարցերու չուրջ. հետեւաբար, պէտք է որ եւրոպական քաղաքի մը մէջ տեղի ունենան :

3.— Եթէ Մեծերու հանդիպումը Սան Ֆրանչիսքոյի մէջ ըլլայ՝ Խրուշչեւ կրնայ չարունակ քարոզչական ճառեր խօսիլ առանց աշխարհի ղէմ, անոր խակ հողին վրայ :

4.— Վերջապէս, լրագրողներուն համար դժուար պիտի ըլլայ թղթակցութիւններ հասցնել, քանի որ Սան Ֆրանչիսքօ Եւրոպայէն չատ հեռու է :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԱՄԱՁՆԱՎԱՐ ԶԻՆԱՄԱՏԱՆԻ ուժերը զարձեալ սկսան ռմբակոծել Մացիւ կըզղին, բայց Ուաշինկթընի մէջ մեծ արժէք չեն տար այս միջադէպին, յայտարարելով թէ համաձնաւարները որեւէ ձեւով առ այժմ պատերազմ չեն կրնար ընել : Ամէն պարագայի մէջ, պէտք չէ մոռնալ որ Փեքինի կառավարութիւնը միչտ մերժած է զինադադար մը կնքել եւ բնական է որ մերթ ընդ մերթ ռումբեր արձակէ զէպի Ֆորմոզա :

ԻՐԱՔի « Իթթիհատ էլ Շաապ » համայնավար թերթը կը զրէ թէ բանակը ճգմած է ապստամբութիւն մը՝ որ ծայր առած էր Պարզկաստանի եւ Թուրքիոյ սահմանին մօտ գտնուող Պրատուսթ գաւառին մէջ : Թերթը կ'աւելցնէ թէ ապստամբութիւնը կազմակերպուած էր «աջխարհակալ»ներէ «վարձկան աւազակներ»ու կողմէ :

ԳԱՀԻՐԻԻ « Ալ Ահրամ» թերթին համաձայն Ա. Մ. Հանրապետութեան կառավարութիւնը որոշած է հրաժարիլ արքայական ընտանիքին պատկանած հազուագիւտ զոհարեղէնները ծախելու ծրագիրէն : Այդ զոհարեղէնները պիտի դրուին եգիպտական թանգարաններու մէջ :

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ դրագէտներու համագումարին բացման նիստին մէջ, միութեան առաջին քարտուղար Ալէքսիէվ Սուրկով երկար եւ պաշտօնական զեկոյց մը ըրաւ : Տոքթէօր Թիվակօ վէպի հեղինակ՝ Պորիս Փասթերնաքի ակնարկելով, ըսաւ թէ ան «գաւաճան մըն է անբժշկական խորհրդային գրողի պատիւին» : Այս բացատրութենէն կարելի է հետեւցնել որ՝ հակառակ վերջերս չըլոզ լուրերուն, Փասթերնաքի նախկին դիրքին վերահաստատումը մօտալուտ չէ :

Ա.ՖՂԱՆՍՏԱՆԻ վարչապետ Տոտ Խան Պրիւէլէն գացած է Մոսկուա՝ ուր դիմաւորուած է Խրուշչեւի եւ Միկոյեանի կողմէ :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ դեմոկրատ պարագլուխ Հաուիման համայնավար Չինաստան երթալու արտօնութիւն ուղեց :

ԻՍՐԱՑԷԼԵԱՆ հալածիչ օդանաւեր ստիպեցին լիբանանեան ճամբորդարար օդանաւի մը որ պարտադիր էջք կատարէ Լիտտա օդակայանը : Օդանաւը կը փոխադրէր ՄԱԿի 27 զինուորներ : Կարճ ատեն մը օդակայանին մէջ պահուելէ ետք իր ճամբան շարունակելու արտօնութիւն ստացած է :

ՖՐԱՆՍԱՑԻ եմտական նախարար Փիէռ առջի օր Միացեալ Նահանգներ մեկնեցաւ :

ԳԱՀԻՐԻԷն պաշտօնական հաղորդութիւն մը կը տեղեկացնէ թէ Հոլանտայի հնախօսներ՝ առաջնորդութեամբ Տոքթ. Առոլֆ Ֆլասէնսի, երեք տարուան պեղումներէ ետք, երկու հարիւր հին դամբարաններ գտած են Կիզէի Բուրդէն 15 մղոն հիւսիս, Ապու Ռաուաշի չրջանին մէջ : Եթէ վերջնապէս հաստատուի որ անոնցմէ չատերը եգիպտոսի առաջին եւ երկրորդ արքայական ցեղի ատենէն են, կատարուած գիւտը արժէքաւոր պիտի ըլլայ հնախօսութեան պատմութեան համար :

ՇԱԲԱԹ ԿԸ ՍԿՍԻՆՔ ՄԵՐ ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ

ԼՈՒԱԾ ԶՐԱՊԱՅԸ

Գերմանական վէպ մը, ուր բեմ կուգայ երիտասարդութիւնը : Ուր կը պատկերացուի հոգեբանական խոր ողբերգութիւն մը, էիչ անգամ պատմուած : Ուր կը վառի սիրոյ բոցը, յաւիտենական բոցը :

Թարգմանած է ԳՈՒՐԳԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ բիւրեղ լեզուով մը :

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

(ԴՐԱԿԱՆ – ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

—o—

« Համազգային » Մշակութային Ընկե – րակցութեան Պէյրութի Վարչութեան նա – խաձեռնութեամբ եւ խմբագրական մարմնի մը համագործակցութեամբ, քանի մը օր առաջ լոյս տեսաւ Ն. Աղբալեանի դրական – քննադատական երկերու դրեթէ լիակատար ժողովածուն : « Գրե – թէ » կ'ըսենք անոր համար, որ, — ինչ – պէս կը չեշտէ խմբագրական մարմինը , — Սփիւռքի ներկայ պայմաններուն մէջ , անհնարին էր հաւաքել մեր պարբերական մամուլին մէջ հրատարակուած եւ Ն. Աղ – բալեանի դրչին պատկանող բոլոր դրա – կան – քննադատական վերլուծումներն ու տեսութիւնները, որովհետեւ նոյնիսկ Վիէննայի ճոխ մատենադարանին մէջ լը – րիւ հաւաքածոներ կը պակսին :

Բայց ինչ որ տրուած է 455 մեծադիր էջերու մէջ, խնամուած եւ մաքուր տը – պագրութեամբ, լայնօրէն բաւարար է ոչ միայն կորուստէ փրկելու համար Ն. Աղ – բալեանի խորաթափանց մտքին եւ դրա – կան ճանաչողութեան այդ վկայութիւնը, այլ նաեւ դրասէր լայն հասարակութեան սեփականութիւնը դարձնելու զայն :

Ն. Աղբալեանի պարագային, ամէն ան – գամ երբ կը խօսուի դրական չրջանակ – ներու մէջ եւ կամ այլ առիթներով, հայ մշակոյթի սէրն ու մտահոգութիւնը ու – նեցող մարդիկ ափսոսանքով կ'արտայայ – տուին այն վաստակի մասին, որ կրնար Աղբալեանինը ըլլալ, եթէ կեանքն ու պայմանները տարբեր տնօրինէին : Եւ կամ դուցէ ինք կամենար եւ կարենար : Եւ ա – սիկա՝ անոր համար, որովհետեւ անոնք ունին լրիւ դիտակցութիւնը այն արժէ – քին, որ կը ներկայացնէ Ն. Աղբալեանէն մնացած քիչը : Այսօր ահա այդ քիչը կ'ընծայուի հայ հասարակութեան :

Շատ ճիշդ նկատուած է, իր մասին դրուած մէկ ուսումնասիրութեան մէջ , թէ Ն. Աղբալեան, տարածուելու հնարա –ւորութիւն չգտնելով , խորացած է :

Այս խորացումը, որ կարելի ու ըմբռ – նելի է միայն մտային ու հոգեկան բա – ցառիկ ընդունակութիւններով եւ արժա – նիքներով օժտուած անձերու պարագա – յին, կը գտնենք Ն. Աղբալեանի դրական քննադատութեանց մէջ, ուր հեղինակին չափ, երբեմն ալ նոյնիսկ աւելի դիտէ խորաչափել իր մեկնաբանած տիպարնե – րուն, դրացումներուն եւ մտածումնե – րուն էութիւնը : Այն աստիճան, որ յա – ճախ, Ն. Աղբալեանի վերլուծումները կարդալով, մարդ կը տարուի մտածելու, թէ արդեօք չի՞ գտնուիր աւելի ստեղծա – գործող մտքի մը առջեւ, քան թէ վկա – յող :

Քննադատ Ն. Աղբալեանի ամէնէն յատ – կանշական դիծը եղած էնոր ,անյայտ ար – ժէքներ երեւան հանելուն մէկ օրէն միւսը

Ի՛ՆՉՊԷՍ ԿԱԶՄՈՒԵՑԱԻ "Հ. Մ. Ը. Մ."Ը

« Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան» ԾԱԳՈՒՄԸ 1911էն է, երբ կազմուած է «Հայ Մարմնամարզական Միութիւն»ը, որ չանացած է Պոլսոյ մէջ գտնուած թաղային փոքրիկ մարզական միութիւնները մէկտեղել, մէջ – միութե – նական մրցումներու մղել եւ 1911 Մայիս մէկին ալ դուրս հանել առաջին Հայ Ո – ղիմպիական խաղերը :

« Հ. Մ. Ը. Մ.»ի գաղափարը սակայն ծնունդն է Պոլսոյ «Մարմնամարզ » թեր – թի, յատկապէս անոր խմբագիր Շաւարշ Քրիսեանի :

« Հ. Մ. Ը. Մ.»ի հիմը դնելու համար «Մարմնամարզ»ի խմբագրութեան նախա – ձեռնութեամբ 1912 Յունիսին մասնա – խումբ մը կը կազմուի, որ կ'որոշէ 1912 Յուլիս 29ին Համաժողով մը գումարել Պոլսոյ մէջ, «ուր հայ մարմինին եւ հայ Պոլսոյ մէջ, «ուր հայ մարմինին եւ հայ միտքին աշխատաւորները ձեռք ձեռքի տուած՝ ելդեն բոլոր այն միջոցները , որոնք անհրաժեշտ են մեր ներկայ թմ – րած ու թուլամորթ սերունդին տեղ՝ վաղուան առողջ ու կայտառ սերունդը ստեղծելու համար» (*) :

Համաժողովին ներկայ պիտի գտնուէին Պոլսոյ եւ գաւառի բոլոր մարմնամարզա – կան ակումբներուն եւ անոնց մասնաճիւ – ղերուն, Թուրքիոյ հայ երկրորդական վարժարաններուն, հայ մամուլին, հայ բժշկական դասին ու ուսուցչութեան ներ – կայացուցիչները : Համաժողովի դլխաւոր

դանոնք դրասէր հասարակութեան ծանօ – թացնելու անսայթաք դաստղութիւնը : Աւետիք Խահակեան , Վահան Տէրեան , Եղիշէ Չարենց եւ նորերէն Ժադ Ցակոր – եան մեծ բան կը պարտին Ն. Աղբալեա – նի, որուն մտքին լուսարձակը ինկած է այդ բանաստեղծներուն վրայ, անոնց մէջ մատնանշելով ապագայի մեծ քերթող – ները :

Հիմա, երբ մեծ Հայուն հոս ու հոն ցան ու ցրիւ դործերը իրարու ամբողջու – թիւն կը մատուցուին մեղի, անոր ար – ժէքը, իրրեւ հայ մշակոյթի ներկիւղած քուրմի եւ նուիրեալ աշխատաւորի, աւե – լի եւս կը բիւրեղանայ :

Ու եթէ առնենք իր բոլոր արժանիքնե – րը, միացնենք հմուտ խմբագիրը, դը – րականագէտը, յեղափոխական տեսաբա – նը, հռետորը եւ այս բոլորը ցոլացնենք հայրենասիրութեան լոյսով, մեր դիմաց պիտի ունենանք լուսեղէն այն դէմքը, որ հայրենիքէն մինչեւ սիփիւռք ճառագայ – թեց հայ ժողովուրդի հոդեկան անդաս – տանին վրայ :

Լուսեղէն դէմքի այս մտապատկերով՝ կը սպասենք մնացեալ երկերու հրատա – րակութեան, որպէսզի անկորնչելի եւ չ – չափելի խորխոս մը ընծայուի այն մե – ծութեան, որ Ն. Աղբալեան կը կոչուի :

(Խմբ. «ԱԶԴԱԿ»ի)

ՏՈՄՍԵՐ

ԱԿԱՆՋԻ ԴՕՂ

★

— Եթէ քեզի բան մը ըսեմ, չե՞ս բար – կանար ...

— Ըսելիքդ կախում ունի, անշուշտ ... Եթէ ելլես ըսես թէ արեւը եռանկիւն է ու երկրագունդն ալ քառակուսի, ի հարկէ կը բարկանամ ...

— Չէ , առանկ ապուշ բաներ պիտի չըսեմ ...

— Սկսէ ...

— Չե՞ս կարծեր որ մեր կարդալ – դրել դիտցողները քիչ մը շատ խրատ կուտան մեր աղին ...

— Իմ կարծիքս կարեւոր չէ ...

— Լաւ, իմ կարծիքովս, այո, մեր աղ – ին կարդալ – դրել դիտցողները ալ սկը – սան համբ փախցնել ... Եղբայր, չունէ առնել չեն տար, մարդուս ... Խրատ , խրատ, խրատ ... Առտուն խրատ, կէսօ – րին խրատ, կէս դիշերին խրատ ... Ամա – ռը՝ խրատ, ձմեռը՝ խրատ ... Անձրեւ կու դայ՝ խրատ, անձրեւ չի դար՝ նորէն խր –

Միութեանս նպատակն է, Հայ ցեղին բարոյական եւ փիզիքական ազնուացմա – ւնը աշխատիլ (7) :

Կարեւոր օժանդակ մը եղած է դրեթէ նոյնաժամանակեայ հաստատութիւն մը — Հայ Սկաուտիզմը — միեւնոյն նպատա – կով (8) :

Շահօք է « Հ. Մ. Ը. Մ.»ի գործու – նէութիւնը եւ օգտակարութիւնը Հայ կեանքի մէջ : Անոր դերը սահմանափակ – ուած չէր միայն Պոլսոյ եւ կամ Թրքա – հայ չրջանակին մէջ, ինչպէս կը դիտէր Շ. Քրիսեան արդէն (9) : 1913ին կարճ ժամանակի մէջ ընդհանուր համակրու – թիւն դնտելով՝ ան տարածուեցաւ ամե – նուրեք, ուր Հայ մասնիկ մը բոյն դրած էր աշխարհի որեւէ անկիւնը (10) :

Այսօր ալ կը չարունակէ « Հ. Մ. Ը. Մ.»ը խորհրդանիշ մը ըլլալ Հայ Սփիւռ – քի մէջ Հայ ժողովուրդի ձգտումին դէպի Ընդհանուր Միութիւն, դէպի բարոյա – կան ու փիզիքական ազնուացում ու բար – ձրացում :

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

(*) *Մարմնամարզ*, Կ. Պոլիս 1912, էջ 219 :

(**) Անդ, էջ 221 :

(3) Անդ, էջ 334 – 5 :

(4) Անդ, էջ 300 :

(5) Անդ, 1913, էջ 61 :

(6) *Թէոդիկ*, Ամէնուն Տարեցոյցը , 1921, էջ 147 – 8 :

(7) Մարմնամարզ, 1913, էջ 62 :

(8) Անդ, էջ 78 :

(9) Անդ, էջ 83 – 6 :

(10) *Ճակատամարտ*, Կ. Պ. 1918 թ. 1 – 5 : — *Ժամանակ*, Կ. Պ. 1918 թ. 3363 : *Ժողովուրդի Ձայն*, Կ. Պ. 1921 թ. 983 : *Կեանք եւ Արուեստ*, Փարիզ, 1931, էջ 245, եւայլն :

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

(ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

———

Գաբրիէլ Սունդուկեանց ծնած է 1925 Յուլիս 23ին, Թիֆլիսի մէջ :

Անոր ընկերային ծագումին մասին ցարդ հրապարակուած տուեալները չա – փազանց հակասական են եղած :

Ոմանք սակայն ընդգծած են այն պա – րագան, որ Գաբրիէլի հայրը Մկրտիչ Սունդուկեանը եղած է ունեւոր վաճա – ռական, իսկ ուրիշներ պնդած են որ Մկր – տիչ Սունդուկեանը եղած է Էջմիածնի ճորտը : 1820 Թուականներուն Սունդուկ – եաններ բողոքած են այս վերջին պնդու – մին դէմ եւ նոյնիսկ այս հարցին չուրջ կաթոլիկոսական արչիւներուն մէջ մին – չեւ այսօր ալ յիշատակութիւն կայ այն մասին, որ Սունդուկեանները կը պնդեն թէ իրենք ի վաղուց անտի ունեցած են ազնուական ծագում :

Մէկ բան սակայն որոշ է : 1822 – 26 Թուականներուն Գաբրիէլի հօր եւ մօր՝ Մկրտիչ եւ Թինաթինա Սունդուկեաննե – րու նամակներէն կը փաստուի որ Մկր – տիչ Սունդուկեանը եւ իր կինը Թինա – Թինան եղած են զարդացած եւ զրադէտ [illegible] հայերէնի հետ հաւասարապէս [illegible] Եւրոպա – կան լեզուներէն :

Մկրտիչ Սունդուկեանի նամակները դրուած են Մոսկուայէն եւ այդ նամակ – ներէն պարզօրէն կ'երեւի որ Գաբրիէլի հայրը իրօք զբաղի հարստութեան տէր է եղած եւ Թիֆլիսի մէջ ունեցած է բազ – մաթիւ բնակելի չէնքեր եւ այլներ :

Սակայն, այնուամենայնիւ, եկեղեցա – կան իշխանութիւնները միշտ ալ պնդած են որ Սունդուկեանը ճորտ է : Էջմիածի – նը բազմաթիւ անդամներ դատ բացած է իր պնդումը հաստատելու եւ Սունդուկ – եանի հարստութենէն բաժին պահանջելու նպատակով :

Էջմիածնի եւ Սունդուկեան ընտանիքին միջեւ այս վէճը երկար տարիներ կը տե – ւէ եւ վերջ ի վերջոյ, չնորհիւ ընչա – քաղց եւ նիւթապաշտ կաթողիկոս Ցով – հաննէս Կարբեցիի ազդրանքներուն , Սունդուկեանները կը պարտուին, ցարա – կան դատարանը զանոնք կը դատապարտէ Էջմիածնին ահագին դումար հատուցանել ապաճորտացման համար եւ ուրեմն այս որոշումը գրեթէ կը անհնկացնէ խնդիր – րը :

Այդ չրջանին Գաբրիէլը տասներկու տա – րեկան էր : Ըստ երեւոյթին անիկա բազ – մաթիւ անդամներ լսած էր իր մօր ա – նէծքները այն մարդոց հասցէին որոնք զրեթէ իրաւազրկած եւ այդ խեղճ կա – ցութեան մատնած էին : Եւ արդարեւ , Այրի Թինաթինան ստիպուած էր իր օր – ուան ապրուստը ճարել ծանր աշխա – տանքներու դիմելով : Երեւի քիչ անդամ չէր որ անիկա, այրի Թինաթինան «Պէ – պօ» բիէսի Շուշանին նման, գինքը կո – ղոպտողներու հասցէին դրչած ըլլար : « Հախմխան տէրն անի ձեր դատաստա – նը» եւ պատահական չէ, որ հետագային մեծ տրամադրութիւը կը խոստովանի թէ իր բիէսներուն մէջ գտնուղ աղնիւ, բարի բայց ճնշուած մայրերու համար բնաւո – րութեան գիծեր է քաղած իր մօր տիպա – րէն :

Ամուսնոյն մահէն յետոյ, Թինաթինա – յին կը մնայ իր ամուսնոյն թողած երկ – յարկանի չէնքը եւ այլին, որ տարեկան միայն մի քանի հարիւր րուբլիի եկա – մուտ պիտի տար եւ որուն համար ալ տարեկան հարիւր րուբլիէն աւելի տուրք պէտք էր վճարել թագաւորին :

Այրի Թինաթինայի դրութիւնը դժըն – դակ կը դառնայ : Աշխատաւոր ձեռքի պակասը, երկու անչափահաս զաւակներ – րու գոյութիւնը (եղբայրը) կը ծանրա – ցնեն կացութիւնը : Սակայն, անկախ այս հանդամանքէն, քաջարի մայրը դի – մադրաւելով ամէն տեսակ խոչընդոտնե – րու թէ կը խնամէ ու կը կերակրէ իր զա – ւակները եւ թէ միեւնոյն ատեն ջանք չի խնայեր անոնց դաստիարակութեան վե – րաբերմամբ :

Այս տեսիլ, 1934ին երեւան հրատա – րակուած Գաբրիէլ Սունդուկեանցի Եր – կերի Լիակատար հաւաքածոյին մէջ, հե – տեւեալը կը գրէ ինքը Սունդուկեանցը : « Ամէնէն առաջ իմ մօրն եմ պարտական ստացածս ուսման ու դաստիարակու – թեան համար» : Եւ արդարեւ , ութ տա – րեկանէն սկսեալ Գաբրիէլը կը սկսի սիս – տեմաթիկ կրթութիւն ստանալ, հայերէն եւ վրացերէն լեզուներէն զատ իւրացնե – լով նաեւ Ֆրանսերէնը եւ ռուսերէնը :

Այս տեսակէտէն բարեպատեհ կ'ըլլայ իրեն համար այն հանդամանքը, որ իրենց սեփական բնակելի չէնքին մէջ այդ միջո – ցին կ'ապրէր Փարիզէն նոր եկած ուսու – ցիչ Շահան Զրպետեանը որ փոքրիկ Գաբրիէլին կը սորվեցնէ հայերէն գրա – բար եւ իտալերէն, իսկ, Զրպետեանի Ֆրանսուհի կինը պատանիին կ'ուսուցանէ Ֆրանսերէն :

1838էն 1840 Թուականներուն, Սուն – դուկեանց կ'ընդունուի Թիֆլիսի Աբգան – եաններու բանսիոնը եւ ապա՝ դիմնա – զիոն , միեւնոյն ժամանակ յաճախելով Ներսիսեան Աբովեանի բանսիոնը՝

« Ներսիսեան Աբովեանն է եղել իմ ու – սուցիչը կը պատմէ Սունդուկեանցը, նա է ինձ Ռուսաց լեզուից պատրաստել : Ե – թէ նա չլինէր ինձ դիմնազիոնում չէին ընդունի : Աբովեանի մօտ պատրաստուած աշակերտները Մոսկուայում, Պետեր – բուրդում էլ անուանի էին, ինչ թէ Թիֆ – լիզում » :

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ

(2 Շար.)

ԿՈՑԾԸ

Ա. ՀԱՍՏ

ԼԸ.

Պատմեմ ես ինչ որ ինձ հետ էր պատահել։ Շատ ատ ժամանակ առաջ մեծ քաղաքում ապրում էր մի մարդ, որի անունը ես մոռացել եմ։ Նա ուներ մի գեղեցիկ տուն։

— Ինչո՞ւ ոչխարի գլուխ չունի տունը, — հարցրեց մի ուրիշը։

— Ես, ատ ալ դուն էնպես, որ ես ալ չեմ գիտնար, — պատասխանեց առաջինը։ — Հայր, ինչո՞ւ ոչխարի գլուխ չկա մեր տան վրա։

— Ես ամենևին չգիտեմ, — պատասխանեց հայրը։ — Մի՛ դիպչիր այդ բանին։

— Ես ոչ մի բանի չեմ դիպչում, — ասաց տղան։ — Ես միայն ուզում եմ իմանալ, թե ինչո՞ւ ոչխարի գլուխ չկա մեր տան վրա։

— Մի՛ դիպչիր, ասում եմ քեզ, — կրկնեց հայրը։

Տղան ոչինչ չպատասխանեց։ Նա գնաց իր սենյակը, նստեց պատուհանի մոտ և սկսեց մտածել։ Ինչո՞ւ մյուս տների վրա կա ոչխարի գլուխ, իսկ մեր տան վրա չկա։ Ինչո՞ւ հայրը չի ուզում ասել։ Ինչո՞ւ ոչխարի գլուխ չկա մեր տան վրա։

Տղան մտածում էր, մտածում, բայց ոչինչ չէր կարողանում հասկանալ։ Նա ոչ միայն չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ ոչխարի գլուխ չկա մեր տան վրա, այլև չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ հայրը չի ուզում ասել։

Տղան ամբողջ օրը մտածում էր։ Նա մտածում էր նաև հաջորդ օրը, հաջորդ շաբաթը, հաջորդ ամիսը, հաջորդ տարին։ Նա մտածում էր մինչև այն ժամանակ, երբ ինքն արդեն մեծ էր դարձել։ Նա մտածում էր մինչև այն ժամանակ, երբ նրա մազերը սպիտակել էին։ Նա մտածում էր մինչև այն ժամանակ, երբ նրա ատամները թափվել էին։ Նա մտածում էր մինչև այն ժամանակ, երբ նրա աչքերը մթնել էին։ Նա մտածում էր մինչև այն ժամանակ, երբ նրա ոտքերը ծանրացել էին։ Նա մտածում էր մինչև այն ժամանակ, երբ նրա ձեռքերը դողդողացել էին։ Նա մտածում էր մինչև այն ժամանակ, երբ նրա ականջները խլացել էին։ Նա մտածում էր մինչև այն ժամանակ, երբ նրա սիրտը կանգ էր առել։

— Ես չեմ իմանում, ինչո՞ւ, — ասում էր հայրը։ — Ես ինքս էլ չգիտեմ։ Ես միայն գիտեմ, որ մեր տան վրա չկա ոչխարի գլուխ։

Տղան ոչինչ չպատասխանեց։ Նա գնաց իր սենյակը, նստեց պատուհանի մոտ և սկսեց մտածել։ Ինչո՞ւ մյուս տների վրա կա ոչխարի գլուխ, իսկ մեր տան վրա չկա։ Ինչո՞ւ հայրը չի ուզում ասել։ Ինչո՞ւ ոչխարի գլուխ չկա մեր տան վրա

բուն թիւը կը հասնի երկու հարիւրի : Գրաւուած են բազմաթիւ զէնքեր :

Ըմբոստները կը չարունակեն իրենց ա – հաբեկչական գործունէութիւնը՝ ռում – բեր արձակելով եւ մահափորձեր ընելով : Ժերիվիլի մէջ վեց իսլամներ սպաննուած են Ազատագր . Ճակատի կողմէ . մեռեալ – ներուն մէջ կը գտնուի ութ տարեկան տը – ղեկ մը :

Մինչ այս մինչ այն Ազատագր . Ճակա – տը ազատ արձակեց զուիցերիացի կառա – վար մը՝ որ կորսուած էր անցեալ Նոյեմ – բեր 27ին : Զուիցերիացին, որ կը կոչուի Հանրի Պուրկ, տարուած է կեդրոնացման կայան մը, ուր հանդիպած է եւրոպացի քան զերիներու,— զինուորական եւ քա – ղաքային :

Քանի մը օր առաջ բանտարկեալներու վերակացուն Հանրի Պուրկին ըսած է .— « Սխալմունք եղած է, դուք զուիցերիացի էք եւ չուտով ազատ պիտի արձակուիք . կրնայ ըլլալ նաեւ, որ ուրիշներ ալ ազատ արձակուին» :

Երեքշաբթի օր էշոշիէյքըտ Փրէս դոր – ծակալութիւնը Ալժէրէն կը հաղորդէր թէ «Քապիլիի ըմբոստները ազատ արձակե – ցին 15 բանտարկեալներ (ինը զինուորա – կան եւ 6 քաղաքային) որ ամիսներէ ի վեր զերի բնկած էին» :

× Փարիզի մէջ, 19րդ թաղամաս, առ – ջի օր Բիւ Փըթիի , երկու Ալժերիա – ցիներ կրակեցին իրենց ցեղակիցներէն մէկուն վրայ . վամփուշտները վրիպեցան իրենց նպատակէն : Ահաբեկիչները փա – խուստի դիմեցին . ոստիկանները հետա – պնդելով ձերբակալեցին անոնցմէ մէկը , որ ատրճանակ մը ունէր :

Նման դէպք մըն ալ պատահեցաւ Բիւ Քլիւնեաւիւրի վրայ . ահաբեկիչը յաջո – ցաւ փախիլ, մահացու կերպով Ալժերիա – ցի մը վիրաւորելէ ետք :

× Հանրապետութեան Նախագահը նե – րում չնորհեց ալժերիացի ութ ոճրա – գործներու, որոնք մահուան դատապար – տուած էին Ալժէի մէջ :

× Ալժերիոյ առժամեայ «կառավարու – թեան» երկու «նախարար»ները այցելու – թիւն մը տուած են Մոհամէտ Ե.ի , որմէ ետք արքայական պալատին կողմէ հրա – պարակուած զեկոյցի մը մէջ կը չեշտուի թէ թագաւորը «զօրավիդ կը կանչնի Ալ – ժերիոյ արդար դատին » :

Զեկոյցը կ'աւելցնէ .— « Ն. Վ. թագա – ւորը անդամ մը եւս հաստատեց թէ Ալ – ժերիա իր մահմետական ղեկաւար ա – ռարկան կը մնայ միշտ եւ մարդոցի ժո – ղովուրդը ալժերիացի եղբայր ժողո – վուրդին հետ միասին է կ'օժանդակէ ա – նոր ազատագրական պայքարին, ազատու – թեան՝ որ էական պայմանն է Մաղրէպ – եան միութիւնը իրականացնելու համար» :

Տէր եւ Տիկին Հայկ Թօփաքեան եւ զա – ւակները խոր ցաւով կը ծանուցանեն ի – րենց թոռնիկին եւ զաւկին՝

ԿՐԻՍԹԻՆ ԹՕՓԱՔԵԱՆԻ

կսկծալի մահը որ տեղի ունեցաւ Մայիս 17ին, 8 տարեկանին :

Ցուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Մայիս քսանին :

ՅԱՌԱՋ .— Մեր ցաւակցութիւնները Պ. Հ. Թօփաքեանի եւ ընտանիքին :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Պոմոնի մասնաճիւղի վարչութիւնը չնորհակալութեամբ ստա – ցած է, Այրի Տիկին Անիձայ Գուրպան – եանէ հազար ֆրանք, Պ. Յակոբ Վարեէ – մէզեանի տիւր մահուան առթիւ :

Տէր եւ Տիկին Յակոբ Տօլպաչեանէ եր – կու հազար եւ Պ. Յովսէփ Օհանեանէ հա – զար ֆրանք, ողբացեալ Տիկին Վարդուհի Աւոյեանի մահուան առթիւ, փոխան ծաղ – կեպսակի, Պոմոնի զպրոցին : Տէր եւ Տի – կին Նազար Իշխանեանէ հազար ֆրանք , Պ. Մկրտիչ Յարութիւնեանի մահուան ա – ռիթով, նոյնպէս զպրոցին : Այրի Տիկին Եղս . Տօլպաչեանէ հինգ հարիւր ֆրանք իր ամուսնոյն մահուան առաջին տարելի – ցին առիթ եւ Պ. Գէորգ Քիւրտօղլուեանէ 500 ֆրանք, իր մօր մահուան տարելիցի հոգեհանգստեան առիթ :

×

Կապոյտ Խաչի Սեւրանի վարչութիւնը չնորհակալութեամբ ստացաւ Պ. Պերճ Խոզերմանէ հինգ հազար ֆրանք, փոխան ծաղկեպսակի ողբացեալ Տոքթ. Արամ Ճինճեանի մահուան առթիւ :

''ՄԱՅԻՍ 28''Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

30 Մայիս, Շաբաթ գիշեր (միջնեւ լոյս) :

Վեցերորդ Թաղապետարանի սրահնե – րուն մէջ, Փլաս Սէն Սիւլփիս :

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Ցունիս 6ին, Շաբաթ իրիկուն, Գ. Թա – ղապետարանի սրահին մէջ :

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Ցունիս 7ին :

×

ՎԻԵՆԻ ՄԷՋ

Կիրակի , Մայիս 31ին, կէսօրէ ետք , Սէրքըլ Կաթոլիկ :

Կը նախագահէ՝ Պ. Կ. ՏԷՐՄՈՅԵԱՆ :

Մանրամասնութիւնները յաջորդով :

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ 30 ԱՄԵԱԿԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղի :

Այս Շաբաթ 23 Մայիս, երեկոյեան ժա – մը 8·30ին, 26 բիւ Տիւնուար , «Սքիւ – տիօ Քրէֆի» սրահը :

Կը բանախօսէ՝

ԸՆԿ. ԷԼԼԷՆ ԲԻՒՋԱՆԴ

Գեղարուեստական խնամուած բաժին : Իր սիրայօժար մասնակցութիւնը կը բերէ Լիոնի Հ. Յ. Դ. Նոր Սերունդի երգչա – խումբը , ղեկավարութեամբ Պ. Ա. Ա – ՐԱՀԱՄԵԱՆԻ :

Կենդանի պատկեր «Օրուան խօսքը» :

Մեներգ .— ՏԻԿԻՆ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ եւ Օր. Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ :

Արտասանութիւն .— Օրիորդներ ԲՐԱ – ԲԻՈՆ ՏԱՊԱԼԵԱՆ, ՍԻՐԱՆ ԿԱՐԱՊԵՏ – ԵԱՆ, Օր. ՍԱՐԳԻՍԵԱՆ եւ Շ. ՂԱԶԱՐ – ԵԱՆ : Ջութակ .— Պ. ՅՈՎՀ. ՊԷՐՊԷՐ – ԵԱՆ :

Հայկական պար «Թամարա» զոյգպար :

Տրամախօսութիւն .— «Կեցցէ մեր լե – զուն» :

Մուտքը ազատ է :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Սամուէլ Մուրատեան վարժարանի տես – չութիւնը, Մխիթարեան Միաբանութեան եւ վարժարանի անմոռանալի բարեկա – մին, հանդուցեալ Տոքթ. Արամ Ճինճե – նի քառասունքին առթիւ՝ Մայիս 24ի կի – րակին, առաւօտեան ժամը 10·30ին, հո – գեհանգստեան պատարագ եւ պաշտօն պի – տի կատարէ վարժարանի Մատրան մէջ :

Փափաքողները կրնան ներկայ գտնուիլ :

×

Այրի Տիկին Արշակուհի Թաղաւրօճի եւ զաւակները ու թոռները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կա – տարուի այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ իրենց ա – մուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԱՐՄԵՆԱԿ Գ. ԹԱԳԻՒՐՕՃԻ

մահուան քառասունքին առթիւ : Կը հը – բաւիրուին ողբացեալին յիշատակը յար – գողները :

Կ'ՈՒԶՈՒԻ

Հաշուապահուհի մը, որ պիտնայ մե – քենագրել, եւ հաշուապահութեան ամէն գործողութեանց տեղեակ ըլլայ :

Դիմել՝

ÉTB. O. B.
83, Rue d'Aboukir, Paris

ՆՈՒԻՐ

Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղը չը – նորհակալութեամբ ստացած է հազար ֆրանք Տէր եւ Տիկին Կարապետեանէ (Տէսին), 500 ֆր. Տիկին Աբրահամեանէ :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Առնուվիլի մասնաճիւղին կողմէ :

27 Մայիս, Չորեքշաբթի երեկոյ, ժամը 20·30ին, Առնուվիլի Սինեմա «Էտէն»ի մէջ :

Կը ներկայացուի Ալֆորվիլի խումբին կողմէ ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ (զուարթ օ – փերէթ) :

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ

Յաղթանակի 44րդ տարեդարձը կը տօնուի մեծ պատրաստութեամբ :

ՄԱՐՍԷՅԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Վասպուրականի Հայր . Միութեան Ֆրանսայի կեդր . վար – չութեան եւ հովանաւորութեամբ ու ներկայութեամբ՝ Կաթ . Պատուիրակ՝

ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ . ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Այս կիրակի կէսօրէ յետոյ ժամը 3·30ին Սալ Մազընոյի սրահներու մէջ

88 Բիւ տ'Օպայներ :

Կը նախագահէ Պ. Վ. ՊԱՆԴԻԿԵԱՆ (Վարչութեան նախագահ)

Փառաւոնին հրաւիրուած են յարանուանութեանց , կուսակցութեանց ու բո – լոր բարեկամական ընկերութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչները :

Բանախօս՝ Պ. Կ. ՓՕՂԱՏԵԱՆ

Խօսք կը տրուի նաեւ կուսակցութեանց ներկայացուցիչներուն :

Գեղարուեստական խնամուած բաժին : Պիտի ներկայացուի Յ. Պարոնեանի « ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐ »Ը եւ զուարճ մը , ղեկավարութեամբ՝ ԹՐԱԳՕՇԻ եւ ծանօթ ուժերու :

Պարահանդէս ժամը ութէն մինչեւ կէս գիշեր ընկերակցութեամբ ՍԷՊԱՍՏԻԱՆ ՊՕՑՋ նուագախումբին :

Ճոխ պիւֆէ մատչելի գիներով :

Տոմսերը ապահովել կանխօրօք վարչութեան անդամներէն :

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ ԵՒ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՅԷԼ – ԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ :

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ, ԺԱՄԸ 16ԷՆ ՍԿՍԵԱԼ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ, ԺԱՄԸ 20ԷՆ ԵՏՔ

Վարժարանի դալարագեղ պարտէզներուն մէջ :

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ

Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

SALLE PAUL FARALICQ
21. Rue Yves Toudic, Paris - Métro République

Երկուշաբթի, Ցունիս 8, ժամը ճիշդ 20·45ին :

Մասնակցութեամբ՝ Փարիզահայ թատ – րոնի լաւագոյն արուեստագէտներուն :

ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԳ ՏԷՐՎԻՇԵԱՆ

Կը ներկայացնէ եւ կը խաղայ

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

Տրամ չորս արար , Ա. Շիրվանզադէի : Բեմադրութիւն Տիկ. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Կը մասնակցին .— Քնար Ազնաւուր , Բերկրուհի Դաւիթեան, Նոյեմի Շահին – եան եւ Հայկուհի Խտշեան , Տրդատ Նշանեան, Նուրիան Մարգարեան, Ս. Սուրէնեան, Ն. Պշտիկեան, Օ. Սարաֆ – եան, եւ Արտաշէս Գմբէթեան :

Մուտքի գիները՝ սովորական :

Դիմել՝ Էր. Բալուեան գրատունը, 43, Բիւ Րիշէ, Փարիզ :

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Փակուած են կայանի արձանագրու – թիւնները իսկ անոնք որոնք արդէն ար – ձանագրուած են , պէտք է դիմեն կեդրո – նին, հարկ եղած տեղեկութիւնները առնելու եւ պոէասիոնի թերթիկները յանձնելու համար, երկուշաբթի, չորեք – շաբթի եւ ուրբաթ օրերը ժամը 13էն 14 եւ երեկոյեան ժամը 18էն 20, բիւ Մէյ – րան 5, հեռ. Թոիւտէն 27–35 :

Ա. Զ. Դ.

Աղքատախնամ Ընկերակցութիւնը քանի մը օրէն Անթիլի ծերանոցին կից պիտի կառուցանէ յարկաբաժին մը, մասնաւո – րապէս անկար ծերերու համար :

Այս առթիւ, կոչ կ'ընենք կառուցման եւ կահաւորման հայ հաստատութեանց իրենց աջակցութիւնը բերել :

Պայմաններու տեղեկութեանց համար դիմել Աղքատախնամի գրասենեակը՝

ASS. ARM. D'AIDE SOCIALE
32, Rue de Trévise, Paris - 9e

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

Սարգիսեան Մերուժան Աբսենի , Ղար – սեցի :

Զօրանեան Բարկէն Թորոսի , Համամ – լուեցի :

Բորիս Ամայեանց կամ Աման Երիմեա – նի, մօրը անունը Աննա, Բաքուէց :

Դիմել՝ եկեղեցին՝ 15 Բիւ ժան Կու – ժօն :

ՅՈՒՇԱՏԵՏԵՐ

ԼԻՈՆ .— Հ. Յ. Դ. Վարանդեան կոմի – տէի ժողովը այս ուրբաթ իրիկուն , սո – վորական հաւաքատեղին, ժամը 9ին : Կա – բեւոր օրակարգ :

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ Հայր . Երիտ . Միու – թեան ընդհ . ժողովը այսօր Հինգշաբթի, ժամը 20·30ին, Ռէժանի վերնայարկը : Օրակարգ՝ Ա.) Համարատուութիւն վար – չութեան : Բ.) Գործունէութեան ծրագիրը : Գ.) Նոր վարչութեան ընտրութիւն : Բո – լորին ներկայութիւնը անհրաժեշտ է :

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

Վիճաբանական ժողով կազմակերպուած երիտասարդներուն համար :

Նիւթ՝ «Ի՞ՆՉ կը սպասեմ հայ երիտա – սարդական կազմակերպութենէ մը » :

«Ce que j'attends d'une association de jeunes Arméniens

CENTRE D'ÉTUDES ARMÉNIENNES
JEUDI. 21 MAI 1959 A 21 HEURES
AU CAFÉ CADET, 1er ÉTAGE, MÉTRO CADET

ԳՐԱՏՈՒՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

46, Rue Richer - Paris (9e)
Tél. : PROvence 64-90

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔ .— Կարօ Գէ – որգեանի, 1959, Զ. տարի, լաթակազմ՝ 1706 ֆրանք, թղթակազմ՝ 1400 Ֆր. , 640 էջ, մաքուր տպագրութիւն, բազմա – թիւ նկարներով (Ֆրանսահայ գաղութին մասին միայն 182 էջ) Թղթատարի ծախք՝ երկու հարիւր ֆրանք :

ՅՈՎՍԱՓՈՐԻ ԳԵՐԻՆԵՐԸ, Վ. Անան – եան (արկածային վիպակ) տպ. «Յուսա – բեր», Գահիրէ, 1959, էջ 538 : Գինն՝ 900 ֆրանք :

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ , տպ. «Յուսաբեր», Գահիրէ, 1959, էջ 169, գին 400 ֆրանք :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Պ. Յարութիւն Շերամեան, ծնած Տիգ – րանակերտ, վերջերս մեռած է Ֆրանսայի Պուրժ քաղաքին մէջ, կը փնտռուին իր աղգականները եւ ժառանգորդները, տե – ղեկացնել Փարիզի Ս. Յովհաննէս Մկր – տիչ եկեղեցւոյն դիւանատունը, 15 Բիւ ժան Կուժօն, Փարիզ (8) :

Կը խնդրուի արտ սահմանի, մասնա – ւորապէս Լիբանանի թերթերէն արտատը – պել այս ազդը :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանգ: Հատը 20 ֆր.

ՈՒՐԲԱԹ
22
ՄԱՅԻՍ
VENDREDI
22 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8398 — 35EME ANNÉE — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4299

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԻՐԱՔԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

—o—

Ինչ կ'անցնի կը գտնայ Իրաքի մէջ : Կատաբնալ գաղտնիք :

Միջազգային մամուլին մէջ պարբերաբար կ'երեւան կցկտուր լուրեր — սակաւուած առաւել կամ նուազ պղտոր աղբիւրներէ— , որոնք չեն տար իրական պատկերը այդ երկրին մէջ տիրող կացութեան :

Անցեալ տարի Յուլիս 14ին Պաղտատի մէջ պայթած զինուորական յեղափոխութիւնը քանի մը ժամուան մէջ պատմութեան գլխին էր նետած Հաշէմական հարստութեան երիտասարդ թագաւորն ու իր վարչաձեւը :

Այդ չարժումը մութին մէջ լռելեայն պատրաստուած էր ազգայնական տարրեր — որ կոդմէ, որոնք իրենց ծոցին մէջ կը կրէին զնդապետ Ապտէլ Նասրի պատկերը :

Լիբանանէն մինչեւ Պարսից ծոց նոյն պատկերները կը տեսնուէին խանութներու, տուներու եւ ինքնաշարժներու մէջ : Նախագահ Նասր խորհրդանշանն էր դարձած համարեայ ան մեծ կայսրութեան :

Արդ երիտասարդները, մանաւանդ ուսանողները ամէն կոդմ կ'երդուընային անոր անունով :

Եգիպտոսի եւ Սուրիոյ միացումը 1 Փետրուար 1958ին՝ փայլուն հետանկար — ներ կը ցոլացնէր արաբ ազգայնականներու աչքին : Առաջին քայլն առնուած էր գլխի ծրագրի իրագործումը :

Եմէնի յարումը Արաբական Միացեալ Հանրապետութեան — որոշ պայմաններով — կը ծրագրէր անոր դիրքը :

Իրաքի զինուորականներուն դիւրին յաղթանակը կոչուած էր աւելի եւս ամրապնդելու նախագահ Նասրի հմայքը արաբական աշխարհին մէջ :

Սակայն հաշիւը սխալ դուրս եկաւ :

Նախագահ Նասրի զափնիները նախանձ կը չարժէին :

Զօր. Քասիմ չուզեց հետեւիլ Սուրիոյ եւ Եմէնի օրինակին : Չուզեց Իրաքի ճակատագիրը յանձնել նախագահ Նասրի ձեռքը՝ իրականացնելու համար համարաբական երազը : Ամբօրէն կառչեցաւ անկախութեան սկզբունքին : Ու հին վար — չաճեւի զեկավարները հրապարակէն քշելէ վերջ՝ սանձ դրաւ նաեւ նասրական ազգայնականներու ազատ գործունէութեան :

Ստեղծուած նոր կացութիւնը չահագործելով հրապարակ իջան համայնավար տարրերը՝ իրրեւ պաշտպան Քասիմի վարչաձեւին :

Պահ մը կարծուեցաւ թէ իրաքեան յեղափոխութիւնը չեղած է իր բուն նպատակէն : Մուսուլի մէջ զնդապետ Շաուաֆի ապստամբութիւնը երկու ամիս առաջ՝ պոռթկում մը, ընդվզում մըն էր համայնավարական ձգտումներու դէմ :

Կացութիւնը աստիճան մը աւելի պըղտորեցաւ, երբ Քիւրտերն սկսան խլրտիլ :

Թուրքերէն թերթերը քանի մը չաբաթ առաջ իրրեւ «ղայացունց» լուր ծանուցին, որ քրտական ցեղախումբ մը Իրաքի սահմանն անցնելով ապստամբած է Հէքքեարի (Թուրքիա) :

Մինչ մէկ կոդմէ կը խօսուի քրտական հալածանքներու մասին, միւս կոդմէն օտար թերթեր «հաւատամք աղբիւր»ներէ առնելով կը հաղորդեն , որ Խորհրդային Միութենէն զինեալ Քիւրտեր կը ղրկուին Իրաք՝ բոլշեւիկեան չոգենաւերով, Սուէզի ու Պարսից ծոցի ճամբով, պաշտպանելու համար Ապտէլ Քասրմի վարչաձեւը :

Այսքան հակասական լուրերուն մէջէն կարելի չէ պատրոչել սուտն ու իրաւը :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԻՊՔԵՐԸ

ՀԵՐԹԸՐ ՎՃՌԱԿԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒՍ ԸՐԱՒ

ՄԵԾԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԺԸՆԵՒԻ ԺՈՂՈՎԸՆ ԿԱՅՈՒՄ ՈՒՆԻ

—o—

Արտաքին նախարարները իրենց ուղեւորդ նիստը գումարեցին Զորեքշաբթի օր, բայց հիմնական ոչ մէկ փոփոխութիւն կը նկատուի տակաւին :

Օրուան նախագահն էր Ֆրանսայի Արտաքին նախարար Քուվ Տը Միւրվիլ :

Խօսք առին՝ Հերթըր, Սելվին Լոյտ եւ Կրոմիքօ : Երեք ճառախօսներն ալ կրկնեցին չաբաթէ մը ի վեր իրենց ըսած նները :

Այսուհանդերձ, Հերթըր որոշ նորութիւններ բերաւ՝ Արեւմուտքի ծրագիրը պաշտպանելու համար : Միաժամանակ նոր ազդարարութիւն մը ըրաւ Խ. Միութեան, մասնաւորապէս չեչեակով :— Միացեալ Նահանգներու պատուիրակութիւնը ժընեւ եկած է լուրջ բանակցութիւններ ունենալու համար : Բազմաթիւ առիթներով ըսած ենք արդէն, որ Մեծերու հանդիպումին կը մասնակցինք՝ երբ ժընեւի ժողովը որոշ արդիւնքներ տայ : Հակառակ պարագային՝ աւելորդ պիտի ըլլար նոյնիսկ այդ մասին խօսիլ :

Ուշադրաւ է այս յայտարարութիւնը՝ իր պարզութեամբ եւ վճռական չեշտով : Մեծերու հանդիպումը կախում ունի ժընեւի ժողովին արդիւնքէն :

Այնուհետեւ Հերթըր կարդ մը դիտողութիւններ ըրաւ խորհրդային ծրագրին շուրջ, յայտարարելով թէ անիկա Գերմանիան յաւիտենապէս բաժնուած պահելու կոչուած ծրագիրը մըն է :

Անգլիոյ Արտաքին նախարարը կարդ մը քննադատութիւններ ընելէ ետք յայտարարեց թէ «ժողովին յանձնուած երկու ծրագիրները «ամբողջութիւն»ներ են » : Ոչ Արեւմուտքը եւ ոչ ալ Խ. Միութիւնը կ'ուզէ փոփոխութեան ենթարկել իր ծրագիրը : Բայց, ըսաւ Սելվին Լոյտ «այնպէս կը թուի թէ համաձայն ենք գլխի մը չուրջ :— Զորս երկիրները պատասխանատուութիւն մը ունին վերամիացման հարցին մէջ» :

Կրոմիքօ խօսք առնելով յայտարարեց թէ Խ. Միութիւնը դէմ չէ որ Գերմանիոյ մէջ ազատ ընտրութիւններ ըլլան՝ երբ պերմանական երկու պետութիւնները համաձայն են. պայմանաւ սակայն՝ որ օտար միջամտութիւն մը չըլլայ եւ ընդհանուր ընտրութիւնները տեղի ունենան երկու կառավարութիւններու որոշումով :

Խ. Միութեան Արտաքին նախարարը խօսեցաւ աւելի քան մէկ ժամ, բայց ոչ մէկ նորութիւն ըսաւ :

Ընդհանուր եզրակացութիւնը այն է, որ կոդմերը չեն ուզեր վիճելու ելք : Հարց է թէ ժողովը ի՞նչ ընթացք պիտի ստանայ Հերթըրի ապստամբութենէն ետք :

Նոյն օրը իրիկուան մամուլի ասուլիսի մը ընթացքին խորհրդային բանբեր մը յայտարարեց թէ ժընեւի վիճաբանութիւնները դրական ու վճռական ընոյթ ունին. բանբերը անդրադարձաւ նաեւ Խ. Միութեան «ճկուն» վարուելակերպին , աւելցնելով.— « Եթէ Արեւմտեաններն ալ նոյնքան ճկուն ըլլային՝ արդէն եզրակացութիւններու հասած պիտի ըլլայինք» :

Միւս կոդմէ, ժընեւի մէջ չրջան ընող զրոյցներու համաձայն, Արեւմտեանները նոր ծրագիր մը պատրաստելու վրայ են : Բայց այս լուրերը պաշտօնական ընոյթ չունին :

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

ԽԱՆԴԱՎԱՌ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

ԽՄԲ.— Լիբանանի Հանրապետութեան Նախագահը Զօր. Ֆուատ Շեհապ, որուն կ'ընկերանայիր ներքին նախարար՝ էմտէ եւ կրթական՝ Ձէմայել Կիրակի օր պաշտօնական այցելութիւն մը տուած են Կիլիկիոյ Կաթողիկոսին : Այս առթիւ Պէյրութի մեր պաշտօնակիցը՝ Ապտակ հետեւեալ մանրամասնութիւնները կը հրատարակէ Մայիս 18ի իր թիւին մէջ :

Ծովածաւալ բազմութիւն մը ներկայ էր, Կիլիկիոյ Անթիլիասի հայրապետարանի նիստ տաճարին մէջ, ըղձափակը , պարտէզներն ու մինչեւ ծովափ երկարող ճամբաներուն վրայ, մասնակցելու հանդիսաւոր ընդունելութեան այն հանդիսութեանց, որոնք տեղի ունեցան Հոգեպետեան տօնին եւ Հանր. Նախագահ Ֆուատ Շեհապի այցելութեան առթիւ :

Տրամ չորս արար , Ա. Շիրվանզադէի: ԲեմադրութիւնՏիկ. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂԵԱՆի կը մասնակցին.— Քնար Ազնաւուր , Բերկրուհի Դաւիթեան, Նոյեմի Շահին – եան եւ Հայկուհի Խոշեան , Տրդատ Նշանեան, Նուրհան Մարգարեան, Ս. Սուրէնեան, Ն. Պշտիկեան, Օ. Սարաֆ – եան, եւ Արտաշէս Գմբէթեան :

Մուտքի գիները՝ սովորական :

Դիմել՝ Հր. Բալուեան գրատունը, 43, Րիւ Րիշէ, Փարիզ:

ՁՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
EXPERTISE GRATUITE
Ծախելու համար
ձեր փավիյօնը, վիլլան ,
յարկաբաժինը կամ խանութը :
J. TORANIAN
18, AVENUE DE L'OPÉRA
OPE 73-21 OPE 19-45

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ

Ցաղթանակի 44րդ տարեդարձը կը տօնուի մեծ պատրաստութեամբ :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Վասպուրականի Հայր. Միութեան Ֆրանսայի Կեդր. վար – չութեան եւ հովանաւորութեամբ ու ներկայութեամբ՝ Կաթ. Պատուիրակ՝

ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Այս կիրակի կէսօրէ յետոյ ժամը 3·30ին Սալ Մազբոյի սրահները մէջ 88 Բիս տ'Օպայները :

Կը նախագահէ Պ. Վ. ՊԱՆԴԻԿԵԱՆ (Վարչութեան նախագահ)

Փառատօնին հրաւիրուած են յարանուանութեանց , կուսակցութեանց ու բո – լոր բարեսպատակ ընկերութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչները :

Բանախօս՝ Պ. Կ. ՓՕՂԱՏԵԱՆ

Խօսք կը տրուի նաեւ կուսակցութեանց ներկայացուցիչներուն :

Գեղարուեստական խնամուած բաժին : Պիտի ներկայացուի Յ. Պարոնեանի « ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐ »Ը եւ զուարճ մը , ղեկավարութեամբ՝ ԹՐԱԴՕՇԻ եւ ծանօթ ուժերու :

Պարահանդէս ժամը ութէն մինչեւ կէս գիշեր ընկերակցութեամբ ՍԼՊԱՍՏԻԱՆ ՊՕՑԶ նուագախումբին :

Ճոխ պուֆէ մատչելի գիներով :

Տոմսերը ապահովել կանխօրօք վարչութեան անդամներէն :

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ
ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ
Յունիս 10ին, Հոգեբշաբթի, երեկոյեան ժամը 9ին ,
ECOLE NORMALE DE MUSIQUE
78, Rue Cardinet. Paris
Կը մասնակցին
ՍԻՐԻ ԳՈՒԼՕ (բամբ ջութակահար)
ՄՈՆԻՔ ՄԱՔԱՆԵԸ (դաշնակահար)
Երեկոյթը նուիրուած է զերման վիպական երաժշտութեան (ՇՈՒՄԱՆ , ՊԸ – ՐԱՄՍ) :
Առաջին ունկնդրութիւն ՄԱՐՍԷԼ ՏԸ ԼԱՆՈՒԱՑի վերջին մէկ գործին. Սիւլա – միք :

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ
Շաբաթ, 23 Մայիս, ժամը 21էն մինչեւ լոյս
CERCLE MILITAIRE
Փլաս Սէնթ Օկիւթէն
Նուագախումբ
'' GONGOND ''
Ղեկավարութեամբ Ամերիկա եւ Քանատա հռչակ հանած
ՔԱՍԱՊԵԱՆԻ
ժազի եւ թանկոյի յատուկ փօրմասիօն
Անակնկալներ եւ խաղեր — Թոմպոլա — Պուֆէ
(Թոմպոլային երկու տոմսէն մէկը կը շահի)
Եկէ'ք օգնելու մեր կրթական ձեռնարկներուն :

ԼԸ ՖՕՑԻ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՅԵՐԵԿՈՑԸՐ

Տեղի կ'ունենայ այս կիրակի, 24 Մա – յիս, կէսօրէ ետք ժամը հինգին, 20 Բիւ ժէմար, Հայ Աւետ. Մկրտչ. եկեղեցւոյ սրահին մէջ, Մարսէյլ : Պիտի ցուցա – դրուի Լը Ֆոյի բանակումին զուտաւոր ժապաւէնը :

Մուտքը ազատ է :

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏՉ. ԵԿԵՂԵՑԻ
20, RUE JEMMAPES
ՄԱՐՍԷՅԼ

Պաշտամունք, այս կիրակի, Սէն Ժե – րոմ՝ ժամը 9·30ին, Մարսէյլ՝ ժամը 10·45ին, Ռիւ ժէմար :

Կը խօսի՝ Վեր. Յ. ՀԷՎՎԱՃԵԱՆ :

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆ. ԵԿԵՂԵՑԻ
8 bis, Rue des Ternes
Մէթրօ Փորթ Մայեօ կամ Շամփէրէ

Այս կիրակի առաւօտ ժամը 10·45ին :


Կը խօսի Վեր. ԳԱՑԱՅԵԱՆ :

ՎԱՐՁՈՒ Է

Ամառուան համար (բացի Օգոստոս ա – միսէն) Նիւ մէջ, սքանչելի դիրքով , Մոն – Պոռոնի կողմը, երեք սենեակ ու – ղեցիկ տեսարանով, պզտիկ պարտէզ, լաւ հանգստաւէտ :

Նաեւ ծախու է Սէն Ռէմի լէ Շեվրէօզ 3000 քառակուսի մեթր հող, վրան սիրուն պզտիկ տունով մը :

Դիմել Յառաջին որ կը հաղորդէ :

ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՄԵԼԻՆԵՐ


REMINGTON "Princess"
— Մասնաւորաբար —
ԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
պատրաստուած մօտէլը
REMINGTON "Super 60"
— Ա Մ Է Ն Է Ն —
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾԸ
Super-confort du rasage électrique
REMINGTON IV
Բոլոր պիւտճէներուն
մատչելի ՄՕՏԷԼ մը
Ա Ն Ն Ա Խ Ը Ն Թ Ա Ց
ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ
Services Commerciaux Rasoirs Electriques
12 Rue Edouard VII Paris - 9e

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հաւարակապետութիւն, տար· 4000 ֆր·վեց·2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր·

ԿԻՐԱԿԻ
24
ՄԱՅԻՍ
DIMANCHE
24 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8400 — 35EME ANNÉE — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4301

ՕՐՈՒԱՆ ՏՕՍՔԸ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԳԾՈՎ

Այժմ որ վերջացաւ Հ· Ց ·Դ· Նոր Սերունդի Պատգամաւորական ժողովը, գործունէութեան նոր շրջան մը կը բացուի երիտասարդական այս առողջ ու կենդանի կազմակերպութեան առջեւ :

Մեծ պարտականութիւն կը ծանրանայ նորընտիր կեդրոնական վարչութեան ուսերուն վրայ, լրիւ գործադրելու համար քուէարկուած բանաձեւերը :

Անհրաժեշտ է ամէն բանէ առաջ լուրջ ուշադրութեան առարկայ դարձնել չորս – չանները : Նոր տարեշրջանը պէտք է ըլլայ «վերակազմութեան տարի» :

Փարիզեան շրջանին եւ գաւառի հայա – շատ կեդրոններուն մէջ ունինք հազարա – ւոր հայ պատանիներ եւ աղջիկներ, ո – րոնք մաս չեն կազմեր Նոր Սերունդին : Պէտք է հետաքրքրուիլ անոնցմով : Մո – տենալ անոնց ու բացատրել կազմակեր – պութեան ազգային ու մշակութային նը – պատակները : Եւ անդամագրել զանոնք :

Աշխատանքի ընդարձակ դաշտ կայ կեդրոնական վարչութեան առջեւ : Պէտք չէ խուսափիլ զոհողութիւններէ : Առանց անչահախնդիր նուիրումի կարելի չէ գործական արդիւնք ձեռք բերել :

Երիտասարդ գործիչներու պարբերա – կան այցելութիւնները դանազան շրջան – ներ՝ հետաքրքրութիւն եւ խանդավառու – թիւն կը ստեղծեն :

Տարրերը չեն որ կը պակսին : Կարեւո – րը զանոնք օգտագործել գիտնալն է :

Նոր Սերունդի ծրագիրը խմբագրուած է լայնամիտ ոգիով : Անոր կրնան անդա – մակցիլ այն բոլոր հայորդիները, որոնք հայրենասիրական հոգի կը կրեն եւ կ'ու – զեն հայ մնալ այս օտար աստղերուն տակ :

Նոր Սերունդը իր պատասխանատուի պէտք է գաստիարակէ չարքերը : Անոնց պէտք է ներշնչէ Հայութեան եւ հայրենի – քի սէրը :

Իր պաշտօնաթերթը՝ Հայաստան՝ կը հրատարակուի երկու լեզուներով : Անոնք որ սահուն կերպով հայերէն չեն կար – դար, կրնան օգտուիլ Ֆրանսերէնի բա – ժինէն, հազորդուելու համար Նոր Սե – րունդի գաղափարականին եւ ուղղու – թեան հետ :

Աւելի մեծ կարեւորութիւն պէտք է ըն – ծայել հայերէնի դասընթացքներուն, մայրենի լեզուին, հայ գրականութեան եւ Հայոց պատմութեան ուսուցումն ըլլալով իր գլխաւոր նպատակներէն մէկը :

Տարեկան բանակումն ու պարբերական վտառատօները լաւագոյն առիթը կ'ընծա – յեն Նոր Սերնդականներուն՝ դիւրաւ մօ – տէն ճանչնալու եւ իրենց յատկութիւն – ները յայտնաբերելու համար :

Փարիզեան շրջանին մէջ Նոր Սերունդը մօտ առնէն պիտի ունենայ իր մնայուն դրասենեակը եւ լայնօրէն պիտի օգտա – գործէ Հայ Մշակոյթի Տան Ակումբ – Ընթերցասրահը իր հաւաքոյթներուն, հան – դէսներուն եւ խնջոյքներուն համար :

Ապագան կը պատկանի երիտասարդու – թեան :

Երէցները հետզհետէ հրաժեշտ կուտան կեանքին : Նորերը պէտք է դան՝ դրաւելու անոնց բաց ձգած տեղերը :

Հայութիւնը անխախտ պէտք է պահէ իր դիմագիծը սփիւռքի մէջ :

Տարագրութեան տարիները յաւիտենա – կան չեն :

Համոզուած ենք, որ անպայման պիտի ծագի արշալոյսը :

Մինչ այդ, Նոր Սերունդը գաղափարա – կան դծով պէտք է կատարէ իր պարտա – կանութիւնը :

Որպէսզի հպարտօրէն ողջունէ արշա – լոյսը :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ԻՐ ԾՐԱԳԻՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻՑ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆԻՍՏԸ ԿԱՐՃ ՏԵՒԵՑ

ԱՆԵԼԸ ՎԵՐՋՆԱԿԱ՞Ն Է

Արտաքին նախարարներու տասներորդ նիստը կարճ տեւեց : Ոչ մէկ անակնկալ :

Հերթը խօսեցաւ Եւրոպայի ապահո – վութեան մասին, մասնաւորապէս յայ – տարարելով թէ Ուշինկթընի դիմաթափութեան հարցը չի կրնար Գեր – մանիոյ վերամիացման հետ. «Միացեալ Նահանգները միշտ պատրաստ են ընդհա – նուր ապագինման մասին բանակցութիւն – ներ սկսելու »:

Ամերիկայի Արտաքին նախարարը ան – դամ մը եւս կրկնեց թէ Գերմանիոյ վե – րամիացումը էական կէտն է Արեւմտեան ծրագրին :

Երկրորդ ճառախօսն էր Ֆրանսայի Արտաքին նախարար Քուվ Տը Միւրվիլ, որ բացառաբար անդրադարձաւ Պերլինի հարցին, աւելցնելով թէ այդ խնդիրը Խ· Միութիւնը հրապարակ դրաւ եւ ոչ թէ Արեւմուտքը :

Ֆրանսայի նախարարը առաջարկեց նախ միացնել մեծ Պերլինը (Արեւելեան եւ Արեւմտեան), որ պիտի կառավարուի ազատ քուէարկութեամբ ընտրուած խոր – հուրդի մը կողմէ : Զորս յաղթականները պիտի հսկեն այդ խորհուրդին գործու – նէութեան վրայ՝ մինչեւ Գերմանիոյ վերջնական միացումը :

Կրոմիքօ, որ նիստին կը նախագահէր, չորս վարկեան խօսեցաւ միայն, յայ – տարարելով .— « Մեր ուշադրութիւնը պէտք է կեդրոնացնենք այն կէտին վրայ՝ որ մեզ կը միացնէ եւ ոչ թէ անոր՝ որ մեզ կը բաժնէ »:

Խորհրդային նախարարը անդրադար – ձաւ նաեւ այն կէտին՝ որ արեւմտեան պատուիրակութիւնները խորհրդային ծր – րագիրը լաւ չեն հասկցած : Այն կասկած – ները՝ որոնց համաձայն Գերմանիա ըս – տիպուած պիտի ըլլայ հեռանալու տնտե – սական կազմակերպութիւններէն՝ «փաստ մըն է արդէն որ լաւ չենք հասկցուած . Մինչդեռ, քանիցս ըսինք արդէն թէ այդ կասկածները անհիմն էին »:

Կրոմիքօ յայտարարեց նաեւ թէ Խ· Մի – ութիւնը կը փափաքի նոր յօդուած մը եւս աւելցնել իր ծրագրին :

Նոր յօդուածը, որ կարդացուեցաւ, ու – րիշ բան չէ եթէ ոչ հետեւեալը.— Հաչ – տութեան դաշնագիրը արդէլք մը չէ որ Արեւելեան եւ Արեւմտեան Գերմանիանե – րը չարունակեն մաս կազմել միջազգային տնտեսական կազմակերպութեանց :

Անգլիոյ Արտաքին նախարարը ուշի ու – շով հետեւեցաւ եռաք Կրոմիքօյի խօսքերուն յայտարարեց թէ անհրաժեշտ չէր խօսիլ խորհրդային ծրագրին իւրաքանչիւր յօդ – ուածին մասին .— « Կը մտածեմ թէ մե – զի կը մնայ խորհրդակցիլ այն պայման – ներուն շուրջ՝ որոնք կը դրուին Գերմա – նիոյ վերամիացման համար : Երբ այդ պայմանները որոշենք՝ կրնանք անցնիլ հաշտութեան դաշնագրին միւս հարցե – րուն » :

Նիստը փակուեցաւ մինչեւ երկուշաբ – թի : Մասնաւոր յառաջդիմութիւն մը նը – կատելի չէ, բայց կասկածէ դուրս է այն պարագան՝ որ Արտաքին նախարարները անելի մտանուած են :

Արեւմտեանները վերջապէս իրենց ծրագրին բացատրութիւնները : Փոփո – խութիւնները ընելու մասին խօսք չկայ առ այժմ :

Կը կարծուի թէ մինչեւ երկուշաբթի նախարարներու միջեւ ըլլալիք անպաշտօն բանակցութիւններով ելքի դուռ մը պի – տի գտնուի :

Երեք օրուան այս «արձակուրդ»էն օգ – տուելով, Անգլիոյ Արտաքին նախարարը Լոնտոն գնաց : Արեւելեան Գերմանիոյ Արտաքին նախարար Պոլց նոյնպէս ուր – բաթ օր վերադարձաւ իր երկիրը : Ցոն Պրէնթանօ շաբաթ օր Պոն գնաց :

Ժրնեւ կը մնան՝ Հերթը, Կրոմիքօ եւ Քուվ Տը Միւրվիլ :

ԱՅԶԸՆՇԱՒՈՒԸՐ-ՓԻՆԷ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ելմտական նախարար Փինէ, որ Միացեալ Նահանգներ կը գտնուի, առ – ջի օր ընդունեցաւ նախագահ Այզընհաուըրի կողմէ : Փինէ յայտարարեց թէ չատ գոհ էր այդ հանդիպումէն .— «Հո – սկացանք Ֆրանսայի ելմտական կացու – թեան բարելաւման եւ մեր երկիրները չահագրգռող միջազգային այլ հարցերու մասին » :

Բնականաբար խօսած են նաեւ Ժընեւի ժողովին մասին. « Եթէ մեծերու ժողով մը տեղի ունենայ՝ նախագահ Այզընհա – ուըր եւ Նախագահ Տը Կոլ իրարու պիտի հանդիպին : Եւ ես լաւ գիտեմ՝ որ երկու նախագահները չատ ուրախ պիտի ըլլան վերստին միւսը տեսնելով : Տը Կոլ եւ Այ – զընհաուըր Եւրոպայի մէջ միասին կըռ – ուեցան հասարակաց թշնամիի մը դէմ եւ այսօր դարձեալ կը պայքարին հասարա – կաց թշնամիի մը դէմ » :

Կարգ մը լրագրողներ հարց տուին թէ Նախագահ Այզընհաուըր կը փափաքի՞ արդեօք Փարիզ երթալ եւ տեսակցութիւն մը ունենալ Տը Կոլի հետ՝ մեծերու հան – դիպումէն առաջ .

— Վստահ եմ թէ Նախագահ Այզըն – հաուըր կը փափաքի Նախագահ Տը Կոլի հանդիպիլ՝ ինչ որ ալ ըլլան մեծերու ժողովի մը պայմանները ... :

Լրագրողները չկրցան իրենց հարցու – մին ուղղակի պատասխանը ստանալ :

Նախագահ Սպիտակ Տունն այցելած էր ՄԱԿի ընդհանուր քարտուղար Համըր – շոլտ, որ Նախագահ Այզընհաուըրի հետ ճաշեց : Քաղաք – Լոճ եւ Տիլըն ներկայ եղան խօսակցութեանց :

Երբ դուրս կ'ելլէր՝ Համըրշոլտ մեր ժեւ որեւէ յայտարարութիւն ընել : Կը կար – ծուի թէ ՄԱԿի քարտուղարը Նախագա – հին հետ խօսած է Մեծերու հանդիպումը Միացեալ Նահանգներու մէջ ընելու մա – սին : Այս ուղղութեամբ Այզընհաուըր դեռ չէ լսած փինէի, քանի որ ծանօթ է այն պարագան՝ թէ Զօր· Տը Կոլ դէմ է Ամե – րիկայի մէջ ըլլալիք մեծերու ժողովին :

Նախագահ Այզընհաուըրի հետ տեսակ – ցելէ ետք, Ա· Փինէ ճաշեց Արտաքին փոխ նախարար Տիլընի հետ : Երկու դի – տանողները տեւեցին քան երեքուկէս ժամ խօսակցեցան զանազան հարցերու շուրջ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱՌԵՇԱԼ ՄՈՆԿՈՄԸՐԻ կարգ մը նոր յայտարարութիւններ ըրաւ Օքսֆորտի համալսարանի մէջ տուած իր դասախո – սութեան ընթացքին : Մոնկոմըրիի կար – ծիքով ներկայիս մէկ հատ զեկավար չկայ որ ի վիճակի ըլլայ բանակցելու Ռուսերուն հետ յանուն արեւմուտքի : Ա – րեւելք – արեւմուտք խնդիրները նոր ձե – ւով մը պէտք է քննուին, ըսաւ Մոնթի , յաջողելու համար եւ պարզեց հետեւեալ վեց կէտերէ կազմուած իր ծրագիրը· — 1) Արեւելքը, Խ· Միութեան զեկավարու – թեամբ, միտք չունի ռազմական պատե – րազմ մը ընել Արեւմուտքի դէմ : 2) Ա· – րեւմուտքը չի յարձակիր Արեւելքի վրայ : 3) Անհրամարաբանական է յուսալ որ Խ· Միութիւնը պիտի ընդունի միացած, ու – ժեղացած եւ զինուած Գերմանիա մը որ մաս կազմէ Ատլանտեան Ուխտին : Ամէն պարագայի մէջ Գերմանիոյ վերամիացու – մը գործնական քաղաքականութիւն մը չէ ներկայիս : 4) Անհրամարաբանական է լու – ծել գերմանական հարցը առանց նախա – պէս լուծելու եւրոպական ապահովու – թեան հարցը : 5) Անհրամարաբանական է ենթադրել որ արեւելեան Գերմանիոյ կա – ռավարութիւնը դոյութիւն չունի : 6) Անհրամարաբանական է աշխատիլ՝ միշտ են – թադրելով որ Զինաստանի կառավարու – թիւնը Փորմոզա կը գտնուի :

ՄՈՍԿՈՒԱՅի մէջ Աֆղանիստանի դես – պանատան կազմակերպած մէկ ընդունե – լութեան ընթացքին, վարչապետ Խրուշ – չեւ մտերիմ խօսակցութիւն մը ունեցաւ Արեւմտեան Գերմանիոյ դեսպան՝ Կրոլի հետ : Խրուշչեւ ըսաւ թէ Խ· Միութիւնը հաշտութեան առանձին դաշնագիր պիտի առորագրէ արեւելեան Գերմանիոյ հետ եթէ Ժընեւի ժողովը ձախողի : Խրուշչեւ աւելցուց թէ այդ պարագային արեւմտե – ան պետութիւնները պիտի կորսնցնեն իրենց բոլոր իրաւունքները Պերլինի մէջ : Այս առթիւ Կրոլ հարց տուաւ .— Ի՞նչ պիտի պատահի եթէ Արեւմտեանները մերժեն հեռանալ Պերլինէն : Խրուշչեւ պատասխանեց .— « Այդ իմ գաղտնիքս է » :

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ դիտնականներու պատ – ուիրակութեան մը առջեւ խօսք առնելով Խրուշչեւ յայտարարեց թէ Խ· Միութիւնը «չատ ուրախ պիտի ըլլար՝ եթէ հիւլէա – կան փորձերու ընդհատման չուրջ համա – ձայնութիւն մը գոյանար տարեվերջին առաջ» : Խ· Միութեան վարչապետը ա – ւելցուց թէ արագ համաձայնութիւն մը կնքելու համար մասնաւոր արգելքներ չկան .— Հսկողութեան կեդրոններն ու հսկիչներու կազմը լուծուելիքն հարցեր են :

(Լուրերու շար·ը կարդալ Դ· էջ)

ՕՐ ԸՍ ՕՐԻՆ

ՀԱՅՃԵԼԻ ԳԻՐՔ ՄԸ

Փիլ մը ուշ մնաց այս տարի Կ· Գէորգեանի 1959ի Ամէնուն Տարեվիրքը , ան – շուշտ Լիբանանի հաղաքական դէպքե – րուն հետեւանքով : Բայց երբ կը թղթա – տէք զայն, անոր բովանդակութենէն, տեսքէն եւ ճոխութենէն ձեր ստացած հաճոյքը անմիջապէս մոռցնել կուտայ ա – կամայ յապաղումը :

Արդարեւ յաջորդական այս տարիներու ընթացքին, Տարեգրքին աստիճանաբար ստացած կատարելութիւնը, իրաւամբ զինքը կը դասէ մեր լաւագոյն հրատա – րակութիւններու կարգին : 700 էջերով հաստափոր այս հատորին մէջ բացառիկ կերպով հաճելին եւ օգտակարը համա – դրուած են մեծ վարպետութեամբ :

Կ· Գէորգեան այլեւս մասնագիտական կարողութիւն մը ձեռք բերած է իր Տարե – գիրքերը այսքան հետաքրքրական դար – ձնելու համար :

Երբ հատորը կը բանաք, իբրեւ նախա – ճաշ ձեզի կը հրամցուի Հայաստանի գը – րականութիւնը գողտրիկ գրուածքներով ծանօթ եւ սիրուած դէմքերու կողմէ : Այնուհետեւ պիտի խլէք իրեն հետ յի – շատակի ուղիներէն, նկարներով զար – դարուած : Պիտի անցնիք մեր պատմու – թեան եւ հին ու նոր մեր մշակոյթին ա – րահետներէն, պիտի բարձրանաք նոյնիսկ երբեմն բարձունքներ , դէպք մը, դէմք մը, ձօն մը, ողջոյն մը, աղօթք մը գըր – պանելով, անցեալը վերապրելով : Ներ – կայիս ալ հետեւելով այժմէական դըր – ուագներով :

Տարեգիրքը չոր ու ցամաք «տեղեկա – տու» մը չէ սակայն : Աշխարհի չորս ծա – գերէն հոն եկած հաւաքուած են պիտանի գիտելիքներ, որոնք 1958ի լրիւ պատկերը կը դնեն ձեր առջեւ :

Ամէն տարի, Պ· Գէորգեան կը ներկա – յացնէ Սփիւռքի մեր զանազան գաղութ – ները՝ Լիբանան, Սուրիա, Յունաստան , Իրաք, Իրան եւն· : Այս տարի Ֆրանսա – հայ գաղութն է որ լայն եւ մանրամասն կերպով ներկայացուած է տարեգիրքին մէջ :

Կը շնորհաւորենք հեղինակը իր այս խնամուած աշխատանքին համար :

ՆՈՃԻ

ԼԵՌՆԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄ ԿԱ ՎՃՌՈՒՇ

«ՄԵՂՈՒ ՈՒ «ԽՈՒ»

Ե.

«Տարեգրք» ՀՍ գ. Ալդամով կվերնայ հա-
մեմատելով նրան Ղազարոս Աղայանի հետ։ Ինչպես
Աղայանը, նա ևս ունի մի շարք պատմվածքներ,
որոնցում ծաղրի է ենթարկում հասարակական
տգեղ երևույթները։ Ալդամովի ծաղրը ավելի
սուր է, քան Աղայանինը։ Նա ավելի հաճախ է
դիմում սատիրայի, քան հումորի։ Ալդամովի
սատիրան ավելի խորն է, ավելի ընդհանրացնող։
Նրա ծաղրի առարկան ավելի լայն է, քան Աղա-
յանինը։ Աղայանը ծաղրում է մանր-մունր թե-
րություններ, Ալդամովը՝ ավելի խոշոր։ Աղա-
յանը ծաղրում է մարդկանց, Ալդամովը՝ հասա-
րակական կարգերը։ Աղայանի ծաղրը ավելի
կենցաղային է, Ալդամովինը՝ ավելի սոցիալա-
կան։ Աղայանի ծաղրը ավելի ներողամիտ է,
Ալդամովինը՝ ավելի դաժան։ Աղայանի ծաղրը
ավելի ուրախ է, Ալդամովինը՝ ավելի տխուր։
Աղայանի ծաղրը ավելի ժպտուն է, Ալդամովի-
նը՝ ավելի ատելով լի։ Աղայանի ծաղրը ավելի
ուրախացնող է, Ալդամովինը՝ ավելի ցավեցնող։
Աղայանի ծաղրը ավելի ծիծաղ է առաջացնում,
Ալդամովինը՝ ավելի զայրույթ

ՀԱՄԱՌՈՏԱԿԱՆ

Ա.

Երևան ուշադրությամբ հետևում էին բանին Մ. Ազատյանը, Ճիճոյանը, Ղազարյանը, Ավետիսյանը, Ա. Ալեքսանյանը, Ա. Ալեքսանյանը, Ա. Ալեքսան

ՄՈՍԿՈՒԱ հրատարակուած համայնա – վար կուսակցութեան պատմութեան տա – ճեան դրքին մէջ, առաջին անդամն ըլ – լալով մանրամասն ճշդումները կան Նիկո – լա Եժովի կեանքին եւ վարմունքին մա – սին: Եժով Ի. Միութեան ներքին նախա – րար եւ ապահովութեան պետն էր 1936էն 1938: Բերիա անոր տեղը անցած էր 7 Դեկտեմբեր 1938ին: Նոյն օրը մամուլը յայտարարած է թէ Եժով պարզապար նշա – նակուած է Ի. Միութեան նաւարհեալի ու – պիներուն. հանրութեան մէջ երեւցած է, վերջին անգամ, 10 Ապրիլ 1939ին: Այս թուականէն ետք Եժովը տեսնող չէ եղած եւ մինչեւ այսօր արուած պաշտօնական մեկնութիւնը այն էր թէ՝ խենդութեան նոպայի մը մէջ, անձնասպան եղած է: Ըստ նոր առաձնի, « Եժով ՝ինչպէս յա – տագային Բերիա, սճպրպորձներու պա – տիժին արժանացած է »: Արիւնարբու Եժովի անունով կը յիշուի — Եժովչինա — Ի. Միութեան մէջ կատարուած ամէնէն զզուելի քաղաքական մաքրպորձումնե – րէն մէկը: Պաշտօնապուրկ ըլլալէն քանի մը ամիս առաջ, հրացանի բռնել տուած էր իր նախորդը՝ Եակոտա, « Ի. վար – չակարգի թշնամի եւ վարձկան լրտես կայսերակալ պետութեանց » ամբաստա – նութեան տակ:

ՖՐԱՆՍԱՑԻ դրամափոխութեան պետա – կան դրասենեակը պաշտօնապէս յայտա – րարեց թէ՝ Ցունիս մէկէն սկսեալ, ար – տասահման զացող զբօսաշրջիկները իրա – ւունք պիտի ունենան՝ անձ դլուխ, յիսուն հազար ֆրանքի փոխարժէք տարադրամ (տրվիզ) առանալու: Այս դումարէն դատ պիտի կարենան հեռերնին տանիլ 20·000 ֆրանք: Տարադրամի այս յատկացումը տարեկան է· կարելի է, ըստ կամս, մէկ կամ զանազան անդամներով օդտագոր – ծել, առանց սակայն որոշուած ընդհա – նուր դումարը անցնելու մէկ տարուան ընթացքին:

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ· Յ· Դ· Փոթորիկ խում – բի ժողովը այս Հինդշաբթի իրիկուն, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Տոքթ· Գուրգէն Մեծա – տուրեան եւ զաւակները, Օր·Ծուշան Մե – ծատուրեան կը ծանուցանեն թէ ողբաց· Տիկին ԱՂԱՒՆԻ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆԻ մահ – ուան առաջին տարելիցին առթիւ հոգե – հանգստեան մասնաւոր պաշտօն պիտի կատարուի այս երեքշաբթի առաւօտեան ժամը 10ին, Փարիզի Հայոց եկեղեցին, 15 Բիւ ժան Կուժօն:

Կը հրաւիրուին յիշատակը յարդողները:

×

Ողբացեալ Տիկին Ժպտուն Ոսկերիչեա – նի յիշատակին (ծնեալ Զուքասըզեան) մահուան տարելիցին առթիւ, Տիրան Ոս – կերիչեան, Վահրիճ եւ Վարդանոյշ Կէօք – ճէկեան կը ծանուցանեն կսկծալի սրտով որ իրենց յաւէտ անմոռանալի հնոջ եւ զաւկին՝ ողբ· ԺՊՏՈՒՆԻ մահուան Ա· տարելիցին առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի առաւ· Մայիս 31ին Հայ· Առաք· Ս· Ցովհ· Մկր – տիչ եկեղեցին:

Իր յիշատակը յարդողներէն կը խնդ – րուի ներկայ ըլլալ:

Ցաւարտ արարողութեան, այցելութիւն պիտի կատարուի հանդուցեալի դամբա – րանին, Սիմըթիէր Փարիզիէն տը Փաս – թէն, 139րդ տիվիզիօն, 9րդ լիներ, թիւ 7, աւթրէ տէ Փըթի Փոն:

×

Իրեններուն կողմէ կը տրուին նուէր – ներ՝ հինդ հազար ֆրանք Փարիզի Աղքա – տախնամին եւ հինդ հազար Ֆր· Մերա – նոցին: Առանալ Ս· Ցովհ· Մկրտիչ եկե – ղեցիի ղրասենեակէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

30 Մայիս, Շաբաթ գիշեր, ժամը 8·30ին ՓԱՐԻԶԻ 6ՐԴ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇՐԵՂ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Place St Sulpice Métro : St Sulpice

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ՝ ԸՆԿ. ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ԿԸ ԽՕՍԻՆ՝ Պ. Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, ԸՆԿ. Կ. ՄԵՀԵԱՆ *եւ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉԸ*

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՑԱՅՏԱԳԻՐԸ.—

Mlle. Guislaine de Monceau, Violon
Mlle. Gisèle de Monceau, Violoncelle
Mlle Bertile Huguet, Harpiste
1er Prix de Conservatoire de Paris

Պիտի նուագեն առանձին եւ միասնաբար ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻԻՆ.— Պ· ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԻԹԵԱՆ եւ ԸՆԿ· ՎԻԳԷՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Հայկական պարեր Հ· Յ· Դ· Նոր Սերունդի խումբին (Պասիեէօ) կողմէ:

Նուագախումբ՝ ՏԻՏԻՃԵԱՆ, երգիչ՝ ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆ

Գեղարուեստական բաժնէն ետք կը սկսին պարերը մինչեւ առաւօտ

Առատ եւ ճոխ պուֆէ: *Մուտք 300 ֆրանք*

ՀԱՄԱԶԳԱՑԻՆ ԼՍԱՐԱՆ

ՄԱՐՍԼԻԶԻ

Գրող, հրապարակագիր, ազգային դէմքեր՝ Ռ· ԶԱՐԴԱՐԵԱՆ, Գ· ԽԱՉԱԿ, Է· ԱԿՆՈՒՆԻ, Վ.ՌԱՄԵԱՆ:

Այս Շորեքշաբթի երեկոյ ժամը 21ին, Պոմոնի Հայ եկեղեցւոյ սրահին մէջ:

կը նախագահէ Պ· ՎԱՐԴԱՆ ՊԱՆՏԻԿԵԱՆ:

կը խօսին՝ Պ· ՎԱՀՐԱՄ ՄԻՄԹԻՔ եւ ուրիշներ:

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՀԱՄԱՐ

Վարձու սենեակներ, պարտէզով Թի – լիէ Սիւր Ավր:

Մանրամասնութեանց համար պրիլ «Յառաջ»ի հասցէով՝

Y. D.

սկզբնատառերով:

ԲԱՑՈՒԱԾ Է

STATION SERVICE
ELECTRICITE AUTOMOBILE
Réparation et équipement électrique de toutes voitures
Travaux exécutés par spécialistes
Electriciens, Auto et Radio
Duhesme Electric Auto
20, RUE DUHESME, PARIS (18e)
ՍԻՄՈՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ

ANTI-VOMI
Marque et modèle déposés
ՀԱՆԳԻՍՏ ՃԱՄԲՈՐԴԵԼ

Այսուհետեւ ուղածնուդ չափ կրնաք կառքով ճամբորդել, առանց որեւէ վլխու պտոյտի կամ անհանգստութեան:

Գիւտը դիւրաւ գործադրելի է ամէն կառքի մէջ: Մեռաղով չինուած, այժմու դինն է՝ 400 ֆրանք:

Փոխարժէքը կրնաք նամակագրօրէմով վճարել:

Վաճառականներուն համար մասնաւոր պայմաններ:

Ստանալու համար դիմել՝

FERMETURE ETEX
7, RUE LOUIS BALMENS
GAP (H. A.)

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ եւ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՑԷԼ–ԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ:

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ, ԺԱՄԸ 16ԷՆ ՍԿՍԵԱԼ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՑԹ, ԺԱՄԸ 20ԷՆ ԵՏՔ

Վարժարանի դալարագեղ պարտէզներու ւն մէջ:

Գարունը կը վերսկսի գեղազարդել բնութիւնը, տերեւաթափ ծառերը կը գունաւորուին դալարով եւ ծաղիկներով, կեանքը կը վերաճորոգուի

Ձեր բնակարանն ալ պէտք է որ վերանորոգուի

ՆՈՐ ԳՈՑՆԵՐՈՎ ԵՒ ՆՈՐ ՁԱՐԴԱՐԱՆՔՆԵՐՈՎ

Նոր կենսունակութիւն առանալու համար

PEINTURES THOMLAC

16 bis, BOULEVARD SEBASTOPOL, PARIS (4e)

Tél. : ARC. 26-61 (Métro : Châtelet - Halles)

ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Իր սեփական արտադրութիւնը եղող արդիական գոյներով առաջնակարգ Սին – թէթիք եւ վինիլիք նորոյթ իւղաներկներու, զեղարուեստական պատի թուղթերու, լինոլէումներու եւ միինեվիլներու տեսակները, նաեւ ձեր բը – նակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը պիտի հայթայթէ ձեզի, ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ՝

52, Rue de Chalon - Paris (12e)
64, Boulevard de Belleville - Paris (20e)
166, Av. Aristide Briand - Pavillons-sous-Bois (S.)
4bis, Rue Paul Vaillant-Couturier - Argenteuil (S.O.)
18, Rue Brézin (Paris (14e)

ԾՐԱՐՆԵՐ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՄՆԱՑԱՏՈՒԿ ԵՒ ՆՊԱՍՏԱՒՈՐ ՊԱՑՄԱՆՆԵՐՈՎ

ՇՆՈՐՀԻՒ ԱՐՏԱԾՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԶԱՑՆՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— ՄԱՔՍ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՐԱՐԻ ԾԱԽՔԵՐԸ ՄԻԱՍԻՆ

Հարիս թուխտ (*զուտ բուրդէ հիւսուածեղէն*)	*մէթրը*	3·500	Ֆր·
Ֆիլ ա ֆիլ	*մէթրը*	3·900	»
Փէնիէ Պոսթօն *զուտ բուրդ*	*մէթրը*	4·500	»
Սեռժ Փենիէ *զուտ բուրդ*	*մէթրը*	4·900	»
Ծառն կերպասեղէն	*մէթրը*	1·900	»
Գուլպա մուս նիլօն (*այր մարդու*)	2 *զոյգը՝*	1·500	»
Շապիկ (փոփլին)		2·700	»
Կօշիկ Պօխս – ֆաֆ (*այր մարդու*)		5·900	»
Տիւվըքին *զուտ բուրդ* (*կնոջ հագուստի համար*)	*մէթրը՝*	2·100	»
Քրէփ մուս *զուտ բուրդ*	*մէթրը*	2·800	»
Օթօման (*կնոջ եւ այր մարդու համար*)	*մէթրը*	3·800	»
Էնթրիմէ *չճմռթկուող եւ լուացուող*	*Ա· գին*	500	»
Գուլպա նիլօն մուս (*կնոջ համար*)	2 *զոյգը*	1·900	»
Գուլպա նիլօն (*կնոջ համար*)	2 *զոյգը*	1·500	»
Նիլօն փառիւռ (*ֆոնպինէզօն եւ ֆիւլոթ*)		3·200	»
Ժամացոյցներ՝ ոսկեզօծ, 17 բիւպի, աւթիշօֆ		10·000	»

ԱՌԱՔՈՒԻՄԻ ԾԱԽՔ.— 2·500 Ֆր· 10 ֆիլոնոց ծրարի մը համար:

ՍՏԱՑՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ԶՈՒՆԻ:

ԵՐԵՔ ՁՈՐՍ ՇԱԲԱԹԻՆ ծրարները իրենց տեղը կը հասնին:

Ձեր տրամադրութեան տակ են բոլոր կերպասներու նմոյշները:

SICOMEX

20, Rue Royale,
Tél. : OPE. 67-77 PARIS 8e Métro : Madeleine

ԱՅՍ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՀԵՑԻՔ

1959 ՅՈՒՆՈՒԱՐ 1ԷՆ

MORY et Cie

Հաստատութիւնը սկսած է շատ նպաստաւոր պայմաններով կատարել դէպի Ի· Միութիւն ծրարներու առաքումը:

ԳԻՆԵՐԸ ԶԳԱԼԱՊԷՍ ԻՋԱԾ ԵՆ

Մեր նոր դիները ստանալու համար դիմել, դրաւոր, հետեւեալ հասցէին.—

Service C des Colis Postaux
10, Rue St-Quentin, Paris 10e

կամ հեռաձայնել.—NOR. 40 72 & 50 83

MÉTRO ET AUTOBUS : GARE DU NORD

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ
26
ՄԱՅԻՍ
MARDI
26 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8401 35EME ANNÉE Fondateur SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4302

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

Ինը տարի առաջ, 1950 Մայիս 14ին Թուրքիոյ մէջ իշխանութեան գլուխ կու գար Դեմոկրատ կուսակցութիւնը :

Վերջ կը տրուէր Մուսթաֆա Քեմալի հիմնած Հանրապետական ժողովրդական կուսակցութեան (Ճիւմհուրիյէք Հալֆ Փըրքասը) մենաշնորհութեան, որ տեւած էր ամբողջ 27 տարի :

Դեմոկրատները ընտրութեանց մէջ չհաց էին առաւելապէս անոր համար, որ Հալքը աւելի քան քառորդ դար միահեծան իշխելով երկրին վրայ, ընդհանուր դժգոհութիւն էր առաջ բերած :

Հալքի անդամները տեղաւորուած էին կառավարական կարեւոր պաշտօններու գլուխը՝ մայրաքաղաքէն սկսեալ մինչեւ յետին գիւղը : Պետական գանձը անխիղճ շահագործումներու եւ գնդումներու առարկայ էր դարձած : Անատոլուի գիւղացիութիւնը բոլորովին անտեսուած՝ յետին թշուառութեան մէջ կը տուայտէր :

1947ին «Թրումընի վարդապետութիւն»ը օգնութեան փութաց Իսմէթ Ինէօնիւի Հալքեան կառավարութեան, որ անանկութեան դուռն էր հասած : Վարկըմ Վէրկիսիի (Ունեւորութեան տուրք) կողոպուտը չատոնց հալած էր : Ամերիկեան տոլարները ալ չկրցան փրկել կացութիւնը :

Տիրող ընդհանուր թշուառութեան եւ դժգոհութեան մթնոլորտին մէջ էր, որ տեղի ունեցան 1950ի մայիսեան ընտրութիւնները :

1934էն վերջ, 1937ի ընտրութեանց մէջ դարձեալ յաղթեցին դեմոկրատները, հակառակ ընդդիմադիր երեք կուսակցութեանց (Հալֆ, Միլլիյէք, Հաւրրիյէք) կազմած՝ միացեալ ճակատին :

1957ին Հալքը յաջողեցաւ հարիւրէ աւելի երեսփոխաններ դրկել Ազգ. Մեծ Ժողովը, ուր իրրեւ ընդդիմադիր կարեւոր դեր մը կը խաղայ :

Ինը տարուան իշխանութիւնը չփացուցած է նաեւ Դեմոկրատ կուսակցութիւնը, որ վերջին տարիներու ընթացքին, օրէնսդիր ժողովին մէջ իր ունեցած դերակշիռ դիրքէն օգտուելով քուէարկել տուաւ բազմաթիւ խիստ օրէնքներ՝ սեղմումներու ենթարկելով մամուլի եւ խօսքի ազատութիւնը :

« Դեմոկրատիա»ը մնաց թուղթի վրայ եւ Ատնան Մենտէրէս դարձաւ արժանաւոր յաջորդը Իսմէթ Ինէօնիւի՝ իրրեւ մենաշնորհ :

Հալքեանները յուսահատած չեն սակայն եւ կը յուսան չհիլ յաջորդ ընտրութեանց մէջ՝ կրկին տիրանալու համար իշխանութեան :

Օգտուելով երկրին անտեսական աննպաստ պայմանէն՝ կը չարունակեն իրենց բուռն քարոզութիւնները կառավարութեան դէմ :

Վերջերս Ինէօնիւ քարոզչական շրջագայութեան ելած էր Իզմիրի շրջանը : Կառավարութիւն, ոստիկանութիւն եւ դեմոկրատ կուսակցութիւն ընդհանուր ջրաշարժ յայտարարեցին՝ խափանելու համար Ինէօնիւի խօսքը :

Ուշագի մէջ նոյնիսկ ցուցարար մը քարով գլուխը պատռեց Հանրապետութեան նախկին նախագահին, որ կատարելապէս ձախողեցաւ իր առաքելութեան մէջ :

Այս ողբերգական դէպքը իր տխուր արձագանգն ունեցաւ Անգարայի խորհրդարանին մէջ, ուր Մայիս 11ին եւ 13ին դեմոկրատ ու Հալքեան երեսփոխաններ խստական ճակատամարտ մղեցին՝ բառնալ եւ ալաբուրա հայհոյութիւններով : Ծաղր ու ծանակի առարկայ դարձան ա-բար –աշխարհի առջեւ :

Անգամ մը եւս ապացոյցը տուին, որ Թուրքը Թուրք է միշտ եւ թէ Հալքն ու Դեմոկրատը իրար կ'արժեն :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՏԸԼԸՍ ՄԵՌԱՒ

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ ԵՐԿՈՒ ՕՐ ՅԵՏԱՁԳՈՒԵՑԱՒ

★

ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒԳ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

Կիրակի առաւօտ ժամը 7·49ին, Ուոլթըր Ռիթի զինուորական հիւանդանոցին մէջ քնացած աւուն մեռաւ Ամերիկայի Արտաքին Նախկին նախարար Ճոն Ֆոսթըր Տըլլըս : 71 տարեկան էր : Ընտանիքին բոլոր անդամները կը պտուզին իր մահճին չուրջ :

Մահուան լուրը անմիջապէս հաղորդուեցաւ Նախագահ Այզընհաուըրի եւ Արտաքին Նախարար Հերթըրի, որ Ժընեւ կը պտուզէր :

Ամերիկեան առաղաստող դրօշները խոնարհեցան Միացեալ Նահանգներու բոլոր չրջաններուն մէջ՝ իրրեւ սուգի նշան : Մարդը՝ որ ամիսներէ ի վեր մահուան դէմ պայքարելէ եաք կը պարտուէր իր քունին մէջ, մինչեւ վերջին չունչը կը պահէր Նախագահ Այզընհաուըրի քաղաքական խորհրդատուի տիտղոսը : Իսկ մինչեւ Ապրիլ 15 կը մնար Արտաքին Նախարար, երբ տուաւ իր հրաժարականը :

Մահուան լուրը խոր յուզում պատճառեց բովանդակ աշխարհին : Յատկապէս հեռագիրներ դրկուեցան ամէն կողմէ :

Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահ Տը Կոլ Նախագահ Այզընհաուըրի դրկած հեռագրին մէջ կ'ըսէ .— «Մորա պէս կը զգամ այն ծանր կորուստը՝ որ կը կրէք դուք, ձեր երկիրը, ինչպէս նաեւ ազատութեան կապուած բոլոր մարդիկը՝ Ճոն Ֆոսթըր Տըլլըսի մահով : Իր տոկունութիւնը, իր հաւատքը՝ բոլորիս համար մեծ օրինակ մը պիտի մնան » : Յատկապէս հեռագիր մըն ալ դրկեց Տիկին Տըլլըսի :

Նոյնիսկ հեռագիր մըն ալ դրկեց Վարչապետ Տըլլըս :

Անգլիոյ Վարչապետ Մաքմիլլըն չէ՛ուելէ եաք Տըլլըսի բացառիկ նկարագիրը՝ իբրեւ դիւանագէտ, յայտարարեց .— « Ատլանտեան Ուխտը մեծ ղեկավար մը պիտի ողբայ : Եւ անոնք, որ ինձ նման բարեկամներ էին անոր հետ, խորապէս պիտի պդան իր կորուստը » :

Ուինսթըն Չըրչիլ յայտարարեց թէ «ըկրկրունքի տէր Տըլլըսը տակաւին երկար տարիներ օրինակ պիտի ծառայէ բոլորին : Մեծ Ամերիկացի մը կ'անհետանայ այսօր » :

ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒԳ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԸՆՋ

Նախագահ Այզընհաուըր Ազգային Սուգ հռչակեց Միացեալ Նահանգներու մէջ եւ յետաձգեց պաշտօնական այն բոլոր ընդունելութիւնները՝ որոնց պիտի մասնակցէր : Ինչպէս Ամերիկայի, նոյնպէս արտասահմանի ամերիկեան բոլոր հաստատութիւններու դրօշակները պիտի խոնարհին իրրեւ յարգանքի արտայայտութիւն «մինչեւ որ Տըլլըսի մարմինը թաղուի » :

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի օր՝ պինուորական պատիւներով : Մեծ դիւանագէտին աճիւնները պիտի ամփոփուին Արլինկթընի ազգային գերեզմանատան մէջ, Ուոշինկթընէն 15 քիլոմեթր անդին :

Եկեղեցական արարողութիւնները տեղի պիտի ունենան Ուոշինկթընի մայր տաճարին մէջ :

Նախագահ Այզընհաուըր , Ամերիկայի ժողովուրդին ղղացումներուն թարգմանը ըլլալով, յայտարարեց .— « Տըլլըս մեռաւ : Աչխարհի խաղաղութեան նուիրուած կեանք մը վերջ գտաւ : Իր հայրենակիցները եւ բոլոր անոնք՝ որ արդարութեան կը հաւատան խորապէս ազդուած են ժամանակակից մեծագոյն դէմքերէն մէկուն մահով : Իր կեանքին ընթացքին, մանաւանդ՝ վերջին վեց տարիներուն, երբ արտաքին նախարար էր, իր խորհուրդները, իմաստութիւնը եւ անկեղծութիւնը ամբողջութեամբ նուիրուած էին ազդերու միջեւ յարաբերութիւնները բարելաւելու գործին : Մի՛ակ թշնամին՝ բռնատիրութիւնն էր իրեն համար » :

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Ճոն Ֆոսթըր Տըլլըս ծնած է 1888ին, Ուոշինկթըն : 1908ին վկայուած է Փրինսթընի համալսարանէն :

Փրնեւի մէջ միջոց մը Ֆրանսերէն սորվելէ եաք, ծնողքին հետ եկած է Փարիզ եւ 1908 – 1909 հետեւած Սորպոնի դասախօսութիւններուն : Իրաւաբանական համալսարանին պատրաստուելով հանդերձ՝ հետեւած է մեծ խմաստասէր Պերկսընի փիլիսոփայութեան դասերուն :

Փարիզի մէջ ճանչցաւ երիտասարդ ուսանողուհի մը, Ճանէթ Ալեան, որ ապագայ Տիկին Տըլլըսը պիտի ըլլար :

Սորպոնէն վկայուելով վերադարձաւ իր ծննդավայրը եւ երկու տարի եաք, Ճորճ Ուոշինկթընի համալսարանէն վկայուեցաւ իրրեւ իրաւաբան : 1912ին ամուսնացաւ :

Քաղաքական իր ասպարէզը կը սկսի 1917ին, երբ Միացեալ Նահանգներու կողմէ բանակցեցաւ Կեդրոնական Ամերիկայի Հանրապետութիւններու հետ՝ փոխադարձ ջրանցքին պաշտպանութեան համար :

1919ին, Վերսայլի Խաղաղութեան ժողովին մէջ ամերիկեան պատուիրակութեան անդամ, որմէ եաք՝ մինչեւ 1944 աչխատեցաւ իրրեւ միջազգային փաստաբան : Այս մարդին մէջ մեծ յաջողութիւն գտաւ եւ բազմաթիւ կառավարութիւններ իր յաճախորդները դարձան : Արհեստին բերումով յաճախակի ճամբորդութիւններ կ'ընէր Ամերիկայէն դուրս :

1944ին Տէվիյի կառավարութեան խորհրդատու եղաւ՝ արտաքին քաղաքական հարցերու մէջ : Յաջորդ տարին՝ Սան Ֆրանչիսքոյի ՄԱԿի Դաշինքը ստորագրող ամերիկեան պատուիրակութեան անդամ էր : Մինչեւ 1949 Արտաքին երեք նախարարներու խորհրդատու՝ Լոնտոնի, Մոսկուայի եւ Փարիզի ժողովներուն մէջ :

Մերակուտական, Թրումընի կառավարութեան խորհրդատու , Ճափոնի հաշտութեան դաշնագրի հեղինակ, ապա, 1953ին՝ Միացեալ Նահանգներու Արտաքին նախարար :

Իրրեւ ամերիկեան դիւանագիտական մարմինի ղեկավար, վեց տարի չարունակ Տըլլըս պայքարեցաւ յանուն խաղաղութեան եւ համերաչխութեան : Իր դիւանագիտութիւնը «համակրելի» չէր, բայց յարգանք կը պարտադրէր բոլորին :

Բացառիկ տեղ մը կը գրաւէ պատմութեան մեծ որպէս սկզբունքի տէր մարդ եւ անզիջող քաղաքագէտ : Մինչեւ վերջին չունչը մնաց պատնէշի վրայ :

Ժընեւի Արտաքին նախարարներու ժողովը իր աչխատանքները ընդհատեց մինչեւ հինգշաբթի՝ որպէսզի Հերթըր կարենայ մասնակցիլ իր նախորդինյուղարկաւորութեան :

Ֆրանսայի Արտաքին նախարար Քուվ Տը Միւրվիլ եւ Անգլիոյ Արտաքին նախարար Սելվին Լոյտ Ուոշինկթըն պացին՝ իրենց կառավարութիւնները ներկայացնելու համար :

Կը կարծուի թէ Մոսկուայի կառավարութեան կողմէ Ուոշինկթընն պիտի եր-թայ Ֆ. Միութեան Արտաքին նախարար Կրոմիքօ :

Հաւանական է որ Ուոշինկթըն երթայ նաեւ Արեւմտեան Գերմանիոյ վարչապետ Ատընաուըր, ներկայ ըլլալու համար իր բարեկամին յուղարկաւորութեան՝ ինչպէս յայտարարեց առջի օր, Տըլլըսի մահուան լուրը ստանալէ եաք :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԻՏՐՈՒԹԷՆ կը հաղորդեն թէ համաձայն Պաղտատի ձայնասփիւռին պինուպարական առեանը եօթը հոգի մահուան դատապարտած է եւ վեց ուրիշներ ցըկեանս տաժանակիր աչխատանքի : Ատոնք մասնակցած են Մուսուլի ըմբոստական շարժումին :

ՄԱԿԱՐԻՈՍ Արք. վճռապէս հերքեց Նիկոսիոյ քաղաքապետին այն յայտարարութիւնը, որուն համաձայն հելլէն կառավարութիւնը ճնշում բանեցուցած է իր վրայ՝ կիպրոսի անկախութեան վերաբերեալ Լոնտոնի համաձայնագիրը ստորագրելու համար :

Ե. ՄԻՈՒԹԵՆԷՆ 77 Սպանիացիներ իրենց հայրենիքը վերադարձան. հայրենադարձներու եօթներորդ խումբն է ասիկա : 1956էն ի վեր երկու հազար 65 Սպանիացիներ վերադարձած են իրենց երկիրը :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՑ նոր վարչակարգին հաստատումէն ի վեր, տասը տարուան ընթացքին, մէկ միլիոն 581·330 հոգի անցած է Արեւմտեան Գերմանիա : 1949ին Արեւելեան Գերմանիա ունէր 18·892·000 բնակիչ, 1959 Մարտ 31ին այդ թիւը իջած էր 17·310·670ի :

ՊԱՐՍԻՑ Շահը՝ Բիզա Փահլեւի Փարիզ հասաւ Շաբաթ օր : Երեքշաբթի օր , Զօր. Տը Կոլ պիտի ընդունի Թագաւորը :

ՓԱՐԻԶ հասաւ Արեւելքի եւ Աֆրիկի պատրիարքը՝ Գեր. Մկուչի : Այս այցելութիւնը աւանդութիւն դարձած է, եւ պատրիարքը ատ լիմիճա (Հռոմ) այցելութիւն մը տալէ եաք, հիւրը կ'ըլլայ Ֆրանսական կառավարութեան : Կիրակի առաւ Մարոնի ծէսով պատարագ մատուցանեց Նոքր – Տամի մայր տաճարին մէջ : Երկուշաբթի օր տեսակցութիւն մը ունեցաւ վարչապետ Տըպրէյի հետ , ապա՝ ճաշի հիւրը եղաւ Նախագահ Տը Կոլի :

ՊԻՏՐՈՒԹԷՆ կը հաղորդեն որ Ամմանի մէջ ձերբակալուած է Յորդանանի Սպայակոյտի պետը՝ Զօր. Սաաեկ Շէրար : Կը կարծուի թէ մաս կազմած է նասրական խումբի մը որ թագաւորին դէմ զաւդրութիւն մը կը պատրաստէր : Զօրավարը ձերբակալուած է թագաւորին իսկ հրամանով :

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ դրագէտներու համադումարը փակուեցաւ Պրուչչելի մէկ ճառով : Վարչապետը չէ՛ուեց թէ ներդամիտ աչքով պէտք է նայիլ անոնց որ «չեղումներ» ըրած են, եւ ոչ թէ դատապարտել : Հարկ է, ընդհակառակն օգնել միչտ անոնց եւ չյիչել անցեալը : Կը կարծուի թէ Պրուչչել այս ճեւով ճամբան բացած է Փասթերնաքի ներման :

ԺընեՒի մէջ, չաբաթ եւ կիրակի կարգ մը խօսակցութիւններ տեղի ունեցան ռոնք պաչտօնական հանդամանք չունէին : Կրոմիքօ տեսնուեցաւ Ֆոն Պրենթանոյի հետ, իսկ Հերթըր՝ Քուվ Տը Միւրվիլի :

ԻՐԱՔի վարչապետը՝ Քասըմ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեց թէ Իրաք փոխանցման շրջան մը կ'ապրի : « Մի կարծէք որ ազատութեան թշնամի եմ, ըսաւ Քասըմ, բայց թոյլ պէտք չէ տանք որ որոշ խմբակցութիւններ սկսին պաչտպանել անհատական շահերը երբ կարեւորը Հանրապետութեան օրացոյցն է» :

ՓՈՐԹՈՒԿԱԼԻ վարչապետը՝ Տոքթ. Սալազար ճառի մը ընթացքին յայտնեց թէ Ամերիկան՝ ափրիկեան քաղաքականութիւն չունի, մինչ Ֆ. Միութիւնը եւ ասիական երկիրները ունին, ինչ որ աւելի մեծ կը դարձնէ համաչխարհային վտանգը Ափրիկէի մէջ :

ԽՐՈՒՇՉԷՒ Ալպանիա գնաց երկու-չաբթի օր : Ֆ. Միութեան վարչապետը 12 օրուան պաչտօնական այցելութիւն մը պիտի տայ :

ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

—o—

ԽՄԲ.— Ռուս գիտնական ճանապար– հորդ Ա. Վ. Ելիսէեվի կարծիքը Հայոց մասին.— Կարդացուած (*) Ս. Պետեր– բուրգի կայսերական աշխարհագրական ընկերութեան նիստում, 1887, Մարտի չորսին:

« Տաճկահներից յետոյ մենք դառնում ենք Հայերին, թէպէտ սրանք աւելի տարածուած լինելով Փոքր Ասիայում դուցէ աւելի բազմաթիւ լինին, քան թէ միւս բոլոր ազգերը այս ազգագրական տարբեր բոլոր հարուստ աշխարհում: Հայը, որպէս եւ Հելլենացին կենդանի հանդոյց է կազմել արեւմուտքի եւ արեւելքի մէջ մարդկութեան կեանքի երկու նշանաւոր վայրկեաններում, երբ արեւմուտքի քաղաքակրթութիւնը թափանցում է մինչեւ արեւելքի սիրտը նրան զարեւոր նիրհից զարթեցնելու համար: Հայոց դերը այժմ աւելի պատուաւոր է, որովհետեւ նրանք տարածում են քաղաքակրթութիւնը մինչեւ այն լեռները, որոնք հիւսիսից ներփակում են Միջագետքը: Բայց այդ նշանաւոր պաշտօնից, Հայերը արժանի են մեր առանձին ուշադրութեանը ոչ թէ միայն մարդաբանական, այլ եւ կենսաբանական եւ պատմական տեսակէտներից: Մի ազգութիւն, որ կարողացել է պաշտպանել իր անհատականութիւնը Ներքոլթի եւ Շամիրամի ժամանակներից մինչեւ մեր օրերը, պահպանելով մասամբ եւ իր տիպը, սովորութիւնները, լեզուն եւ կրօնը՝ չնայելով որ ոչ մի ազգ, նոյն իսկ Հրեաները, չի ենթարկուել այնքան տառապանքների,— պատմութեան մէջ երբեք պէտք չէ մոռացուի:

Զարմանք է յարուցանում եւ զօրութեան կուռ տեսակէտից ուժերի չարաչարութիւնը եւ տոկունութիւնը այս փոքր ազգի, որ այնքան դարեր հղօր ազգերի մէջ սեպաձեւ մխուած է: Կործանուեցան Մեծ – Ասորեստանը եւ Բաբելոնը, Պարսից ահագնութիւնը, Պարթեւաց, Մակեդոնացոց, Հռովմայեցոց, Արաբացոց տէրութիւնները, մեծամեծ ազգեր բնաջինջ անհետացան աչխարհիս երեսից, իսկ Հայոց ազգը ոչ միայն կենդանի մնաց, այլ եւ լի կեանքով եւ յոյսով առջորւում է դիւութեան ծարաւով եւ սիրով դէպի աչխատանքը: Մինչեւ այժմ խորհում է նա թօթափել հազարամեայ լուծը, զարգացնում է իր լեզուն, ուսանում է գիտութիւններ, առաջ է մղում ինքն իրան եւ արդէն չատ բանի է հասել:

Այս ազգը մի աւելի խորին հանելուկ է պատմութեան համար, քան թէ Հրեաները եւ Գնչուները: Այս երկու աչխարհաքաղաքացիները համարեա մչտական թափառականներ են, զուրկ հայրենիքից, որոնց համար ուղի պէտք իպի փաթրիա, իսկ երկրագործ Հայը չէ թողել իր Հայաստանը, վանայ ծովակի ափից չէ գաղթել եւ Մասիսի ստորոտից չէ հեռացել: Հայ երկրագործի սերտ կապը իր մայրենի հողի հետ՝ կենդանի հերքումն է այն անճանց սխալի, որոնք դասում են նրան Հրեաների հետ մի կարգում՝ համարելով Հայերին միայն վաճառական ժողովուրդ: Ճչմարիտ է, որ ճակատագիրը նչանակելով Հային, ինչպէս եւ Ցոյնին, միջնոր– դական կապ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ, չնորհել է նրանց հատուկ յատկութիւններ՝ ճարպիկութիւն, հնարագիտութիւն, յայտնի մտքերի ներքութիւն, բնաւորութեան տոկունութիւն, որոնք թէ Հայոց եւ թէ Ցունաց ընդհանուր յատկութիւններ են: Բայց այս ամէնը բաւական չէ՝ բացատրելու համար հանելուկը Հայերի դոյութեան, այն Հայերի, որոնց հետ Եւրոպան սկսում է փոքր առ փոքր ծանօթանալ եւ տակաւին Բերլինի վեհաժողովում նա հրաժարւում էր իրրեւ ազգութիւն ճանաչել Հայերին:

Ջնայելով սրանց բազմադարեան պատմութեան, հազարաւոր արիածներին, որոնց ենթարկուել է այս ազգը, Հայոց տիպը ներկայացնում է այնուամենայնիւ աւելի հաստատ տոկունութիւն, քան թէ փոքր Ասիայի ազգերի որեէ ուրիչ տիպ, այնպէս որ ամենամաքուր արիւն պարունակող ազգերի թւում կարելի է դասել եւ Հայերին, որոնք միեւնոյն ժամանակ հանդիսանում են եւ տիպի մաքրութիւնը պահպանող՝ այն չափով, ինչ չափով որ նրանք իրանց հայրերից ու պապերից ժառանգել են »:

×

Եթէ ռուս զինական ճանապարհորդ Ելիսէեվը, 71 տարի սրանից առաջ, երբ նա քիչ թէ չատ ծանօթ էր ամբողջ Ռուսաստանում եղած ոչ աւելի քան 200·000–500·000 հոգի Հայերի կեանքին, այս զբաղմունքն է տուել հայ ժողովուրդին, որքան աւելին պիտի ասէր — եթէ ասե– լու համար համապատասխան բառեր գտնէր — եթէ մի հրաչքով այսօր նա վերակենդանանար ու տեսնէր, ծանօթանար Ռուսաստանում ներկայիս եղած չուրջ 5 միլիոն հոգինոց հայ ժողովուրդին, տեսնէր նրա հազարաւոր դպրոցները աչակերտներով լեփ լեցուն, տեսնէր նրա բարձրագոյն դպրոցները հազարաւոր ուսանողներով ու հարիւրաւոր պրոֆէսոր– ներով, տեսնէր նրա աչխարհահռչակ փառքը կազմող Համբարձումեանները, Մերկելեանները, Որբելեանները, Ալիք– սանեանները, Կոչոյեանները, Ռաչա– տուրեանները եւն., տեսնէր նրա բազմապիսի արդիւնաբերութիւնները եւ այսպէս անվերջ—կրկնում եմ — բառեր պէտք չէ դտնէր այդ նոյն Ելիսէեվը մեր ժողովուրդին համապատասխան դնահատանքը տալու ու փառաբանելու համար ...

Իսկ թէ ինչ բարձրութեան ու չափերի են լինելու հասած, յառաջիկայ 15 – 25 տարիների ընթացքում, մեր ժողովրդի իր կեանքի բոլոր մարդերում կատարած գործերը ու ստեղծագործութիւնները, ոչ ոք կարող է ըստ հարկին նախատեսել ու նախասել, ասում եմ ասածիս դիտակից ու առանց չափազանցութեան ...

Այս ամէնը պիտի դիտենան ու լաւ դիտակցեն մեր բոլոր մարդ ու ազգ ա– խոյեանները ..., մի պայմանով միայն, եթէ նրանց սրտերը այդ դիտակցութիւ– նից կարող են սրտաճաք չլինել ...

Ա. ՎԱԶԵՆՑ

(*) Արտագրուած Գրիգոր Վանկնանի Հայ Հեղինակներ գրքից, 5րդ տպագր., Թիֆլիս, 1913:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Պատմ. մեծ ու փոքր դէպքերը պէտք է որ վերաքննուին նոր ըմբռնումներով:

Անթոյլատրելի է, սակայն, խեղաթիւրել պատմական դէպքերը եւ դէմքերը:

Պատմութիւնը տաղերդութիւն չէ, ան– չուչտ, ուր ամէն դուսան իր նախասե– րած լարերով տաղերդէ:

Ինչ կ'ըսէ մեզ, ժամանակակից պատմութիւնը.—

1917: Երկու հակամարտ ուժերու՝ երբեակ զինակցութեան եւ երբեակ դաչնակցութեան միջեւ պատերազմը կը չարունակուէր նոյն ահարկու եւ նոյն ուժեղ թափով: Բազմամիլիոն ժողովուրդներ եւ երկիրներ կը չարունակէին կրել ամբողջ հետեւանքը:

Հայաչխարհը, որպէս երկիր եւ ժողո– վուրդ, կը ներկայացնէր՝ աւերակոյտ մը, չինարար ձեռքերէ պարպուած:

Ցամառ պայքարներու եւ անասելի զո– հողութիւններու դնով կամաւորական դունդերը եւ ռուսական կայսերական բանակը հասած ու բռնած էին Սեւ Ծով – Քիլքիթ – Երզնկա – Խնուս – Վան դի– ծը, չուրջ հինգ հարիւր քմ. երկարու– թեամբ:

Այլ հաչիւով, յետպատերազմեան իրաւարարութեամբ նուիրագործուած Հայաստանը, դրեթէ իր լայնքով ու տա– րածքով, դրաւուած կ'ըլլար ռուս եւ հայ զօրապունդերէն:

Թրքական բանակը թաւալգլոր կը նա– հանջէր: Պաքուի վրայով պանթորանիզ– մի դաղափարը լուրջ վտանգ մը չէր ներ– կայացներ այլեւս:

Այս էր իրերու վիճակը, երբ 1917 Փե– տրուար 28ին յառաջ եկաւ ռուսական մեծ յեղափոխութիւնը:

Ժամանակաւոր կառավարութիւնը փե– տրուարեան յեղափոխութեամբ եկաւ հիմնովին փոխել ցարական Ռուսաստանի քաղաքականութիւնը փոքր ազգերու եւ պատերազմի չարունակութեան մասին:

Կայսերական Ռուսաստանի հիմնական ծրագիրն էր ընդարձակել իր սահմանները — Թրքահայաստան եւայլն — առանց երբեք հաչուի առնելու տեղական ժողո– վուրդներու ինքնավարութեան իրաւունքը: Մեր մասին, « Հայաստան, այո, սա– կայն առանց Հայութեան» լոբանովեան ծրագիրը: Այդ նպատակով որդեգրելով յառաջխաղացումներու, տեղաչարժու եւ նահանջներու «խաղը»: Մինչ Թրքահայ բեկորները կ'ենթարկուէին նորանոր թշ– ուառութեանց, տեղահանութեանց եւ կո– տորակումներու:

Այլ եղաւ ժամանակաւոր կառավարու– թեան որդեգրած քաղաքականութիւնը պատերազմի եւ փոքր ազգերու վերաբեր– մամբ:

« Պատուաւոր հաչտութիւն» պատե– րազմող կողմերուն մէջեւ, իսկ փոքր ազ– գերու մասին՝ « հաստատել տեւական խաղաղութիւն, հիմնուած ժողովուրդնե– րու ինքնորոչման իրաւունքին վրայ »:

Հոկտեմբերին, Լենինի եւ իր համա– խոհներուն պետական հարուածը եկաւ հիմնովին յեղաչրջել ժամանակաւոր կա– ռավարութեան որդեգրած քաղաքակա– նութիւնը:

Մինչ, Կերենսկիի կառավարութիւնը կը փորձէր «պատուաւոր հաչտութեան» դը– նով դադրեցնել կռիւը, ռազմաճակատ– ներուն վրայ, բոլչեւիկները հրապարակ նետեցին «դէպի տուն» նչանախօսքը:

Եւրոպացին մինչեւ Կովկասեան ճա– կատ, հիւանդագին հոդեբանութեամբ ու դասալքութեան համաճարակէն վարակ– ուած, ռուս բանակը թողուց ռազմաբեմը ու քայլերը ուղղեց «Տուն»:

Սեւ Ծովէն Երզնկա եւ Վան երկարող հինգ հարիւր քմ. տարածութեամբ դի– ծի մը վրայ մէկ օրէն միւսը զինուորները կը լքէին դիրքերը:

« Հրաչքը», Հոկտեմբերեան պետական հարուածը, կուգար փրկել սահմանած ու իր պատեհին մէջ ծուարած Թրքական բանակը, որուն առջեւ կը բացուէին նոր ու յուսատու հեռանկարներ:

Դժբախտութիւնը, Հոկտեմբերեան պե– տական հարուածը լախտի հարուած մը կը դառնար Հայ ժողովուրդի գլխուն, ի դերեւ հանելով դարերու յոյսերը:

1918 տարին պատմութիւնն է արդ այլ խարուած ժողովուրդի մը, որ իր տկար բազուկներով, միս մինակ, պիտի փորձէր փրկել եւ թիւ եւ հող:

Հակառակ զինադադարի պայմաննե– րուն, պատրուակելով «անհաչիւ դպա– նութիւններ» Հայերուն կողմէ կատար– ած մահմետական ազգաբնակչութեան վրայ, Թրքական ուժերը, վերակազ– մուած արեւմտեան ճակատէն բերուած թարմ զօրապունդերով, կը վերսկսին դինուորական գործողութիւնները:

Արդէն Ցունուարի վերջերը, Թուրքերը ձեռնարկած էին դինուորական գործողու– թեանց, Երզնկայի ճակատին վրայ:

Երզնկայէն եաք, չուչցաւ էրզրումի անկումը:

Մարտի սկիզբներէն, Օլթիէն մինչեւ Մակու 250 քմ. տարածութեամբ դիծի պաչտպանութիւնը յանձնուած էր 15·000 հայ զինուորներու, Զօր. Նազարբէկեանի հրամանատարութեան տակ:

Մարտ 27ին, Սարդրամիլի անկումով, հայկական ճակատը փաստօրէն կը բաժ– անջատուէր նաեւ դէմքին եւ թւաց թէ իմ ա– ռաջ կանգնած է մեծ հայրս: — Ջաւա– կըս, մի թէ՞ չես ճանաչում, թէ ես ո՛վ եմ, որ այս պատուն ես տալիս: Մի ժա– մանակ ես այստեղի խոշոր բեկերից մէկն էի եւ այսօրուայ մեր տեղացի առաջին հարուստ հայերն ինձ մօտ ծառայում էր, սակայն աղքատութիւնն ինձ վերջ ի վեր– ջոյ այս դրութեան հասցրեց, որ ձուկ որ– սալով կարողանամ օրական պարենս հայ– թայթել: Այս ձկնորսի հետ խօսակցելու ժամանակ չարունակ մեծ հօրս էի յիչում: Շա՛տ, չատ օրհնեց ինձ: Այստեղ թրչ– ուած մարդիկ չատ կան»:

Մեծահոդի ու մարդասէր Սունդուկ– եանը, իսկական ընկերվարական Սուն– դուկեանը, ծանր ու տաժանակիր աչխա– տանքով իրենց օրապահիկը ճարող աչ– խատաւորներու ողբերգութիւնը խորա– պէս կ'ապրէր եւ իր միտքը կը չարչրկէր այդ թչուառները իրենց տարապարհակ դրութենէն դուրս քաչելու միջոցները ո– րոնելու համար: Եւ սակայն, անզօր էր..

Աքսորի դատապարտուելէն եաք, Գաբ– րիէլ Սունդուկեանը հաստատապէս հա– ւատացած էր որ ինք չուտով պիտի կարո– ղանար դարձեալ վերադառնալ իր ծնընդավայրը՝ Թիֆլիզ, չարունակելու հա– մար իր հասարակական եւ մանաւանդ դրական գործունէութիւնը:

ԱՐՏԱՇԷՍ ԳՄՐԷԹԵԱՆ

(6 Շար.)

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

(ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

Վորոնցովի համար նորութիւն մը չէր արդէն յառաջացեալ ու լուսամիտ զաղափարներու տէր անձերը գըրիչի մէկ հարուածով աքսորի դատապարտելու սովորութիւնը: Սունդուկեանցի աքսորէն քիչ ժամանակ առաջ վորոնցով աքսորի էր դատապարտած նոյնպէս մեծանուն Բուչկինը:

Որդւոյն աքսորէն եաք, զորավարուհի Թինաթինեան, Սունդուկեանցի աննման մայրիկը, աւելորդ է ըսել, որ կը կոր– սընդնէ իր դլուխը:

Սունդուկեան դիտէ այդ պարագան եւ աքսորավայրէն իր մօրը դրած բազմաթիւ նամակներուն մէջ կը ջանայ մխիթարել ու հանդստացնել մօրկանը խոոված հո– դին: Կը յայտնէ այդ նամակներուն մէջ թէ իր դրութիւնը աքսորավայրին մէջ վատ չէ եւ թէ նոյնիսկ ինք գոհ է որ ու– դարկուած է Դերբենտ:

« Մայրիկ ջան, կը դրէ ան, կարծես անհրաժեչտութիւն էր որ ես մի քանի տարի այս կողմերում ապրէի, նախ՝ նրա համար որ պաչտօնական դործերին աւելի մօտիկից ծանօթանայի, քանի որ իմ ձեռ– նարկն է այժմ մի նոր բաժանմունք որի ներկայացուցիչը ես եմ, որքան էլ սիրելի չլինի այդ դործը, ուզեմ չուզեմ պիտի կատա– րեմ, որովհետեւ պատասխանատու եմ»:

Եւ աւելի վարը այդ նամակին, ակնար– կելով իր մօրը պետրոպրատ եղած ժա– մանակ դրած նամակներուն, որոնց մէջ խեղճ կինը կը դդուչացնէր իր որդին ը– սելով որ իր ուսմանը միայն հետեւի եւ հետու կենայ թատրոնէն եւ այլ զուար– ճութիւններէ, տեսակ մը հեդնանքով կը դրէ.

« Ոչ թատրոն կայ որ ինձ խանգարի եւ ոչ էլ այդ տիպի ժամանցի տեղ: Երկ– րորդ՝ նրա համար որ այսպիսի ռոճիկով (ամսական ստանում եմ 65 ռուբլի) բացի իմ ապրուստից, որոչ նեցուկ կարող եմ լինել իմ օջախին»:

Այս բոլորէն պարզ կերեւի որ Սուն– դուկեանը ակամայ, ապրուստի տարբե– կան միջոցներէն չզրկուելու եւ ընտանի– քին հոգերը մեղմացնելու համար կը յո– ժարի անտրտունջ կատարել իրեն չսիրած պաչտօնները:

1856ին կը ծագի Անդրկովկասեան պա– տերազմը: Անդրկովկասի բնակչութեան մեծ մասը կը կորուի իր աչխատանքէն, բազմաթիւ ընտանիքներ կը քայքայուին ու կ'աղքատանան: Տակաւին Դերբենտ դտնուող իր որդւոյն հետեւեալ նամակը կ'ուղարկէ Սունդուկեանի մայրը.

« Այս երեք օրը ժողովրդին զինուած ուղարկում են ... այսօր ժամը հինգին քառասուն հազար մարդկանց զինուած տարան: Կիրակի օր զնացողները չինով– նիներն էին, իսկ Զորեքչաբթի՝ քաղա– քացիները. երէկ Հավլաբարի հերթն էր ... Գիւմրիի կողմը իրարանցում է և– ղեր, զրօչակներ բերին ... »:

Տխուր էր Սունդուկեանցը իր աքսորա– վայրին մէջ:

Իր ընտանիքին նիւթական դժնդակ կա– գութիւնը, որուն դէմ ճար ու դարման մը տանելու անընդունակ էր ինք, զինքը դարձուցած էր մելամաղձոտ:

Սակայն, այս չէր միայն իր տխրու– թեան պատճառը: Ապագայ տրամադրու– դը մեծահոդի, ուրիչին ցաւերով մօտէն հետաքրքրուող, իր շրջապատին թչուա– ռութեան կարեկցող անձ մըն էր: Իսկա– կան համամարդկային զաղափարներով տոգորուած հոդի մը: Իր չուրջը, ար– դարեւ, ծանր վիճակի մէջ գտնուղներ անպակաս էին:

Հետեւեալ նամակը, զորս ան դրած է Դերբենտէն իր ընտանիքին ցայտուն կեր– պով կը փաստէ մեր բսածները. —

« Երէկ առաւօտ ծովի ափն էի գնացել լողանալու եւ մի Թուրքից գնեցի սազան ձուկը... դրամս մօտս չէր, ասացի՝ տուն եկ եւ տանը կը վճարեմ: Երբ եկաւ ինձ մօտ, ես մեր բակում թէյ էի խմում, երբ պարտքս վճարեցի, խմելու ջուր ու– զեց, ասաց չատ ծարաւ եմ: Իսկոյն նըս– տեցրի նրան եւ թէյ խմցրի, աչքերը լըց– ուեցին արցունքով. այդ ժամանակ լաւ նայեցի նրա դէմքին եւ թւաց թէ իմ ա– ռաջ կանգնած է մեծ հայրս: — Ջաւա– կըս, մի թէ՞ չես ճանաչում, թէ ես ո՛վ եմ, որ այս պատուն ես տալիս: Մի ժա– մանակ ես այստեղի խոշոր բեկերից մէկն էի եւ այսօրուայ մեր տեղացի առաջին հարուստ հայերն ինձ մօտ ծառայում էր, սակայն աղքատութիւնն ինձ վերջ ի վեր– ջոյ այս դրութեան հասցրեց, որ ձուկ որ– սալով կարողանամ օրական պարենս հայ– թայթել: Այս ձկնորսի հետ խօսակցելու ժամանակ չարունակ մեծ հօրս էի յիչում: Շա՛տ, չատ օրհնեց ինձ: Այստեղ թրչ– ուած մարդիկ չատ կան»:

Մեծահոդի ու մարդասէր Սունդուկ– եանը, իսկական ընկերվարական Սուն– դուկեանը, ծանր ու տաժանակիր աչխա– տանքով իրենց օրապահիկը ճարող աչ– խատաւորներու ողբերգութիւնը խորա– պէս կ'ապրէր եւ իր միտքը կը չարչրկէր այդ թչուառները իրենց տարապարհակ դրութենէն դուրս քաչելու միջոցները ո– րոնելու համար: Եւ սակայն, անզօր էր..

Աքսորի դատապարտուելէն եաք, Գաբ– րիէլ Սունդուկեանը հաստատապէս հա– ւատացած էր որ ինք չուտով պիտի կարո– ղանար դարձեալ վերադառնալ իր ծնընդավայրը՝ Թիֆլիզ, չարունակելու հա– մար իր հասարակական եւ մանաւանդ դրական գործունէութիւնը:

ԱՐՏԱՇԷՍ ԳՄՐԷԹԵԱՆ

(6 Շար.)

ՀԱՄԱՌՈՏԸ ՀԱՅԱՑՔԸ

Ա.

Ընդ որ, յաշտ նոյնպէս. դիմաց ամենայն դասակից ինձ ծանօթ էր ինձ, որ ես բերդին, իբր պոռ հեծեալ դիտեմ ի քեզ ոչ ինչ ինձ ի պատերազմի ընդ դասակից ինձ, դիմակ ես ամենայն

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Այս Հինգշաբթի , ժամը 21ին կրօնա – կան երաժշտութեան Համերգ Նէօյիի Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ, (մետրօ Սապլօն) որուն հրաւիրուած է մասնակցելու Փա – րիզի Ս. Ցուվ. Մկրտիչ եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ Ա. Պարթեւեանի: Պիտի մեներգէ Օր. Պիւլ– պիւլեան :

Համերգի յայտագրին կը մասնակցին եկեղեցական երգերով Սէնթ Էսթաշի խումբը, Փարիզի ուսուցչաց ,Մարօ– նի եւ Աւետարանական եկեղեցիներու երգչախումբերը :

Համերգը կազմակերպուած է Արեւելք– Արեւմուտք ընկերակցութեան կողմէ :

Այս առթիւ բանախօսութիւններ կազ – մակերպուած են նաեւ երեքշաբթի 26 եւ Շորեքշաբթի 27 Մայիս , երեկոյեան , 121 Ավընիւ տը Նէօյի , Սէն Փիէր սրահին մէջ :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Կազմակերպուած Ֆրանսահայ կապոյտ խաչի Առնուվիլի մասնաճիւղին կողմէ :

27 Մայիս , Շորեքշաբթի երեկոյ , ժամը 20·30ին , Առնուվիլի Սինեմա «Իտէն»ի մէջ :

Կը ներկայացուի Ալֆոնսվիլի խումբին կողմէ ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ (գուարթ օ – փերէթթ) :

ՓՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս Հո – րոքշաբթի դիշեր , Քատէի սրահը :

Կը խօսի Տիկ. ԱՅՎԱԶԵԱՆ :

Շատ այժմէական նիւթ մը՝ «Ստախօ– սութիւնը մանուկին մօտ» :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, RUE THOUIN

Հոգեհանգստեան պատարագ ի յիշա – տակ բանակի զօրավար՝

Julien Dufieux ի

(Նախկին պատուիրակ և հրամանատար Կիլիկիոյ մէջ) : Այս Կիրակի առա – ւօտ ժամը 10·30ին :

Կը պատարագէ Գեր. ԿԱՐԱՊԵՏ Ծ. Վ. ԱՄԱՏՈՒՆԻ :

Կը հրաւիրուին ողբացեալ հրամանա – տարին յիշատակը յարգողները :

ԱՂՓԱՏԱԽՆԱՄԻ

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ՄՈՆՄՈՐԱՆՍԻ . ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ՕԴԱՍՈՒՆ ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ

Կիրակի , Յունիս 21 , ժամը 15էն – 22

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ , ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԵՐ

Ճոխ պիւֆէ , մատչելի դիներով , ա – ռատ ըմպելի եւ աւանդական «չիշ էֆ – պապ» :

Մուտք 100 ֆրանք

ԽԻՍՏ ԿԱՐԵԻՈՐ

200 հոգինոց բացօթեայ ճաշ մը նախատես– ուած է կէսօրին , անձ գլուխ 800 ֆրանք ճաշ եւ մուտք : Կը խնդրուի սեղանները կանխաւ ապահովել : (Դիմել Աղբատա – խնամի գրասենեակը , 32 Րիւ տը Թրէ – վիզ , հեռաձայն ՓՐՕ· 77–73) :

Կ'ՈՒԶՈՒԻ

Երիտասարդ հայ օրիորդ մը , կրթը – ած , որ գիտնայ մեքենագրել (տաքթի– լօ) : Դիմել անձամբ «Յառաջ»ի վարչու – թեան :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

30 Մայիս, Շաբաթ գիշեր, ժամը 8·30ին ՓԱՐԻԶԻ 6ՐԴ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇՐՋԵՂ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Place St Sulpice Métro : St Sulpice

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ՝ ԸՆԿ. ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ԿԸ ԽՕՍԻՆ՝ Պ. Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, ԸՆԿ. Կ. ՄԵՀԵԱՆ *եւ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՒՈՐՈՒՀԻՆ*

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ ՑԱՑՏԱԳԻՐԸ.—

Mlle. Guislaine de Monceau, Violon

Mlle. Gisèle de Monceau, Violoncelle

Mlle Bertile Huguet, Harpiste

1er Prix de Conservatoire de Paris

Պիտի նուագէն առանձին եւ միասնաբար ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.— Պ. ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ եւ ԸՆԿ. ՎԻԳԷՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Հայկական պարեր Հ. Յ. Դ. Նոր Սերունդի խումբին (Պաննէօ) կողմէ :

Նուագախումբ՝ ՏԻՏԻՃԵԱՆ , երգիչ ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆ

Գեղարուեստական բաժնէն ետք կը սկսին պարերը մինչեւ առաւօտ

Առատ եւ ճոխ պիւֆէ : *Մուտք 300 Ֆրանք*

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

ՄԱՐՍԷյԼ

Գրող, հրապարակագիր, ազգային դէմքեր՝ Ռ. ՋԱՐԴԱՐԵԱՆ, Գ. ԽԱՉԱԿ , Է. ԱԿՆՈՒՆԻ, ՎՌԱՄԵԱՆ :

Այս Շորեքշաբթի երեկոյ ժամը 21ին , Պոմոնի Հայ եկեղեցւոյ սրահին մէջ :

Կը նախագահէ Պ. ՎԱՐԴԱՆ ՊԱՆՏԻԿԵԱՆ :

Կը խօսին՝ Պ. ՎԱՀՐԱՄ ՄԻՍԹԻՓ եւ ուրիշներ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Տոքթ. Գուրգէն Մեծա– տուրեան և զաւակները, Օր. Շուշան Մե– ծատուրեան կը ծանուցանեն թէ ողբաց. Տիկին ԱՂԱՒՆԻ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆԻ մահ – ուան առաջին տարելիցին առթիւ հոգե – հանգստեան մասնաւոր պաշտօն պիտի կատարուի այս Երեքշաբթի առաւօտեան ժամը 10ին, Փարիզի Հայոց եկեղեցին , 15 Րիւ ժան Կուժօն :

Կը հրաւիրուին յիշատակը յարգողները :

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ

Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

SALLE PAUL FARALICQ

21. Rue Yves Toudic, Paris - Métro Répuplique

Երկուշաբթի, Յունիս 8, ժամը ճիշդ 20·45ին :

Մասնակցութեամբ՝ Փարիզահայ Թատ– րոնի լաւագոյն արուեստագէտներուն :

ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԳ ՏԷՐՎԻՇԵԱՆ

Կը ներկայացնէ եւ կը խաղայ

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

Տրամ չորս արար , Ա. Շիրվանզադէի :

Բեմադրութիւն Տիկ. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Կը մասնակցին.— Ռիւար Ագնաւուր , Բերկրուհի Դաւիթեան, Նոյեմի Շահին – եան եւ Հայկուհի Խոշեան , Տրդատ Նշանեան, Նուրհան Մարգարեան, Ս. Սուրէնեան, Ն. Պշտիկեան, Օ. Սարաֆ– եան, եւ Արտաշէս Գմբէթեան :

Մուտքի դիները՝ սովորական :

Դիմել՝ Հր. Բալուեան գրատունը, 43, Րիւ Րիշէ, Փարիզ :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ եւ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՑԷԼ– ԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ :

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ, ԺԱՄԸ 16ԷՆ ՍԿՍԵԱԼ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ, ԺԱՄԸ 20ՇԷ ԵՏՔ

Վարժարանի դալարագեղ պարտէզներու ւմ մէջ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Փոթորիկ խում– բի ժողովը այս Հինգշաբթի երեկուն , ժամը 21ին , սովորական հաւաքատեղին :

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑՔ'Ո

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան կազմակերպած դաշտագնացութեան , դէպ ի Սէն Զաղարիի պող պղրիւրը , 7 Յունիս կիրակի ամբողջ օրը : Օթոքարի համար արձանագրուիլ այժմէն , Պ. Տ՝ Զօրէքեանի մօտ , 5 Ավընիւ Քամիլ Փէլը– քան :

Կ'ՈՒԶՈՒԻ

Հաշուապահուհի մը , որ պիտնայ մե – քենագրել , եւ հաշուապահութեան ամէն գործողութեանց տեղեակ ըլլայ :

Դիմել՝

ÉTB. O. B.
83, Rue d'Aboukir, Paris

ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ
— ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ —

ՏՊԱՐԱՆ "ՏԱՐՕՆ"

20, Avenue des Cottages
CALLUIRE (Rhône)

Կը ստանձնէ հայերէն եւ ֆրանսերէն ամէն տեսակ տպագրական մաքուր գոր– ծեր :

Արագ գործառնութիւն, դիւրամատչելի պայմաններ :

Առնել թիւ 8 թրօլէպիւսը եւ իջնել Սէն Փլէրի (վերջին կայարանը) :

ՍԵՆԵԱԿ ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Առանձին մէկու մը համար կահաւոր – ուած կամ ոչ սենեակ մը եւ խոհանոց մը կը փնտռուի վարձու, Փարիզի կամ մօ – տակայ արուարձաններու մէջ: Դիմել «Յառաջ»ին :

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՄԻՇՏ ԱՌՈՂՋ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ'
— ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՌԵՑԷՔ —

BOSPHORE Ի

ՀԷԼՎԱՆ ԵՒ ԹԱՀԻՆԸ


ՀՐՈՒՇԱԿԸ, որ կը պատրաստուի շուշմայով (*սուսամ*) եւ շաքարով, առաջնակարգ սնունդ մըն է, կազդուրիչ՝ շնորհիւ շուշմայիին, որ Արեւելքի մէջ ծանօթ է նաեւ հինէն ի վեր, իր հրաշալի բուժական յատկութիւններով, իր երիտասարդացնող տարրերով,

Արեւելեան ժողովուրդներուն երկարակեցութիւնը արդիւնք է Հէլվայի եւ թահինի գործածութեան :

Այսօր Արեւմուտքի մէջ եւս բժշկական հեղինակութիւններ կը հաստատեն առաջնակարգ այս սննդանիւթին արժէքը :

Sté BOSPHORE (ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՏԱԴՐԻՉԸ)
2, Rue Louis Astoin - Marseillle

ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ



ՃԱՇԱՐԱՆԸ


ԼՈՆՏՈՆԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՅ
(HYDE PARK)

Knightsbridge Buttery 26, Knigthsbridge, London S.W.I.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ
ԻՆՉՊԷՍ ՆԱԵԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԻՈՐ ՕՂԻՆ

RAKI DUZE

ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ ԺԱՄԸ 8,30Է ՆԱԻԻՕՏԵԱՆ 2



ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար· 4000 ֆր·վեց·2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր·

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
27
ՄԱՅԻՍ
MERCREDI
27 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8402 — 35EME ANNÉE — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4303

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՇԱՀՆՇԱՀԻ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ

Իրանի Շահնշահ Մոհամմէտ Բըզա Փահլեւի Քոռէնհակ, Լա Հէյ եւ Լոնտոն այցելելէ վերջ եկաւ Փարիզ :

Թէեւ Պուրժէի օդակայանը հասնելուն՝ յայտարարած էր թէ իր այցելութիւնը բացարձակօրէն անպաշտօն հանդամանք կը ներկայացնէ, սակայն տարակոյս չկայ, որ Հանրապետութեան նախագահին հետ իր խօսակցութիւնները քաղաքական խնդիրներու շուրջ պիտի դառնան :

Լոնտոնի մէջ պետական շրջանակներու հետ իր չփումները կապ ունէին իր երկրի ներկայ փափուկ կացութեան հետ :

Յորմէհետէ Իրաքի մէջ համայնավար տարրերը գետնյահեցան, կրկնին սաստկացուց իր բարոյական ճնշումը Իրանի դէմ : Թաւ տուաւ Ջիղերու պաղ պատերազմին :

Խրուշչեւ չվարանեցաւ նոյնիսկ սպառնալու Շահնշահին՝ անոր համար նախատեսելով Իրաքի երիտասարդ Թագաւորը Ֆէյսալ Բ.ինչն նման եղերական վախճան մը...

Խորհրդային Միութիւնը սահմանակից չէ Իրաքի հետ. Թուրքիա եւ Իրան արդէն կ'ըլլան իրեն ուղղակի հաղորդակցելու Միջագետքի հետ, որուն քարիւղի հարուստ հորերուն է տնկած աչքերը :

Պարսկաստան լաւագոյն կամուրջը կրնայ ըլլալ բոլշեւիկներուն համար՝ դէպ ի Հարաւ ծաւալման ճամբուն վրայ :

Մոսկուայի հետ համաձայնութեան մը գալու համար սկսուած բանակցութիւնները խզուած ըլլալով, Թեհրանի կառավարութիւնը Մարտ 2ին յայտնեց Կրէմլինի թէ այլեւս ի զօրու չէ 1921ի ոուս-եւզարսկի դաշնագիրը, որուն համաձայն Խորհրդային Միութիւնը իրաւունք ունէր իր բանակը մտցնելու Պարսկաստան, երբ օտար զինուորական ուժերը ոտք դնէին Շահնշահի հողին վրայ :

Իր գիրքը վերջնապէս ճչդած ըլլալով Մոսկուայի ու Ուոշինկթընի միջեւ՝ Իրան քանի մը օր եառ՝ Մարտ վեցին զինուռ-բական դաշինք մը կնքեց Ամերիկայի հետ :

Նոյն օրը Պաղտատի Ուխտին միւս երկու անդամները՝ Թուրքիա եւ Փաքիս-տան՝ Անգարայի մէջ նման դաշինքներ կնքեցին ամերիկեան կառավարութեան հետ :

Իրանի կառավարութեան նպատակն էր Ուոշինկթընի զինուորական աջակցութիւնը ապահովել ոչ միայն Խորհրդային Միութեան կողմէ կատարուելիք յարձակումի մը առթիւ, այլեւ ներկայ վարչաձեւին դէմ փորձուելիք ներքին ապստամբութեան մը պարագային :

Իրանեւամերիկեան դաշինքը իր մէջ կը պարունակէ ապագայ վառնգաւոր բարդութեանց սաղմերը :

Շահնշահը իր ներկայ չրջապտոյտի ընթացքին կ'ուզէ նաեւ ապահովել արեւմտեան միւս երկու մեծ պետութեանց՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի անվերապահ աջակցութիւնը իր երկրին՝ տաղնապի մը պարագային :

Մոսկուա իր հերթական ջլամարտին նիւթ դարձուցած է «անկախ Քիւրտիստան»ի մը ստեղծումը, որով կը սպառնայ իր անմիջական դրացիներուն, մասնաւորապէս Թուրքիոյ եւ Պարսկաստանի :

Քիւրտերը վերջին աշխարհամարտէն ի վեր իրենց յոյսը դրած են Խորհ· Միութեան վրայ : 1946ին չարաչար կերպով յուսախաբ եղած : Մահապատի «Քիւրտ անկախ Հանրապետութիւն»ը արեան մէջ խեղդուեցաւ՝ Մոսկուայի անտարբեր աչքերուն առջեւ : Կը թուի թէ ատիկա դաս չէ եղած իրենց :

Ծովը ինկողը օձին կը փաթթուի ...

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՈՒՈՇԻՆԿԹՐԸՆ ԵՐԹԱԼԷ ԱՌԱՋ

ՋՈՐՍԵՐԸ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵՑԻՆ

ՀԵՐԹԸՐ ԵՒ ԿՐՈՄԻՔՕ ՎԻՃԵՑԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՇՈՒՐՋ

Երկուշաբթի օր Արտաքին չորս նախարարները ժողով մը գումարեցին, որ տեւեց երեք ժամ :

Առաջին խօսողն էր Անգլիոյ Արտաքին նախարար Լոյտ, որ Տըլլսի յիշատակին յարգանքի քանի մը խօսք ըրաւ·— « Իր տեսակէտը միշտ չէր ընդունուեր անոնց կողմէ՝ որոնք նստած են այս սեղանին չուրջ· այսուհանդերձ, կը կարծեմ թէ բոլորս ալ համաձայն ենք այն կէտին վրայ՝ որ անոր փափաքն էր խաղաղութիւնը, հաւատք ունէր մեր ղժուարութիւնները հարթելու գործին մէջ: Ճոն Ֆոսթըր Տըլլս մեծ մարդ էր, լաւ մարդ մը եւ ես հպարտ եմ որ երկար տարի վայելած եմ իր բարեկամութիւնը »:

Այնուհետեւ, Քում Տը Միւրվիլ, Կրոմիքօ եւ Հերթըր չեշտելով Տըլլսի արժանիքները, իրենց ցաւակցութիւնները յայտնեցին : Խօսեցան նաեւ երկու Գեր-մանիաներու ներկայացուցիչները :

Կրոմիքօ զարձեալ սեղան դրաւ Գերմանիոյ հետ հաշտութեան դաշնագիր կնքելու հարցը :

Խ· Միութեան Արտաքին նախարարին յայտարարութիւնները պարզ կրկնութիւններ էին·— »Հաշտութեան դաշնագիր մը անհրաժեշտ է Գերմանիոյ հետ: Արեւմտեան Գերմանիոյ քաղաքականութիւնը քննադատելի է : Քննադատելի է նաեւ դաշնակիցներու ցոյց տուած օժանդակութիւնը »:

Կրոմիքոյի յայտարարութիւններուն յաջորդեցին բազմաթիւ միջամտութիւններ, որոնք ժողովին տուին վիճաբանական հատագրքի մը երեւոյթը: Վիճաբանութիւնները տաքցան՝ երբ հարցը հասաւ Գերմանիոյ վերազինման :

Հերթըր պաշտպանեց Պոնի կառավարութեան « Խաղաղասէր» քաղաքականութիւնը, որմէ եառ Քում Տը Միւրվիլ հետեւեալ հարցումը տուաւ Կրոմիքոյի ·— « Դաշնագիրը՝ որ կ'առաջարկէք, Արեւմտեան Գերմանիան հակողութեան տակ առնելու նպատակ չունի՞, որպէս զի ան ռազմապաշտ պետութիւն մը չդառնայ : Այդ պարագային ձեր առաջարկած մի-ջոցառումները ուրիշ բան չեն եթէ ոչ ժամեայ կարգադրութիւններ, որոնք լուրջ ծրագիր մը չեն կրնար կազմել՝ Եւրոպայի մէջ խաղաղութիւնը հաստատուն հիմերու վրայ դնելու համար » :

Առանց ժամանակ կորսնցնելու Կրոմիքօ պատասխանեց , յայտարարելով թէ Խ· Միութիւնը կը վախնայ Արեւմտեան Գերմանիոյ վերազինումէն եւ մանաւանդ՝ անոր հողամասին վրայ հաստատուած հիւլէական խարիսխներէն:

Հերթըր, որ մինչ այդ ունկնդիր էր, խօսք առնելով կարգ մը թիւեր տուաւ՝ երկու Գերմանիաներու վերազինման չուրջ ·

— 450·000 զինուոր Արեւելեան Գերմանիոյ մէջ, 269 հազար՝ Արեւմտեան Գերմանիոյ մէջ, հակառակ անոր որ այս վերջինը երեք անգամ աւելի ընդարձակ է եւ երեք անգամ աւելի բնակչութիւն ունի :

Սելվին Լոյտ, մտահոգուելով ժողովին ընթացքէն, յայտարարեց ·— « Դէպի ապագան պէտք է նայինք եւ փնտռենք մերձեցման կէտեր՝ մեր կարծիքներուն մէջ: Կրոմիքօ ըսած էր թէ մեր ծրագրին մէջ լաւ բաներ կան· չատ պիտի ուզէի որ այդ մասին խօսի » :

(Շար·ը կարդալ Դ· էջ)

ՄԻԿՈՅԵԱՆ. - "ՏԸԼԼՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԵԾ ՄԱՐԴ ՄԸՆ ԷՐ"

ԿՐՈՄԻՔՕ ՈՒՈՇԻՆԿԹՐԸՆ Կ'ԵՐԹԱՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Օտար բազմաթիւ պատուիրակութիւններ ներ կը հասնին Ուոշինկթըն՝ ներկայ ըլլալու համար Տըլլսի յուղարկաւորութեան :

Քում Տը Միւրվիլ, Սելվին Լոյտ եւ Հերթըր մասնաւոր օդանաւով մը մեկնեցան Ուոշինկթըն :

Պաշտօնապէս կը յայտարարուի թէ Վարչապետ Մաքնաուըր ներկայ պիտի գտնուի իր «բարեկամ»ին թաղման, ինչպէս նաեւ՝ Արեւմտեան Գերմանիոյ Արտաքին նախարար Ֆոն Պրենթանօ : Իտալիոյ կողմէ՝ Փելլա : Ներկայացուցիչները կը գրկեն՝ Ճափոն, Հոլանտա եւ Աւբա – տրալիա :

Տըլլսի անձնական դիւանը պիտի տըրուի Փրինսթընի համալսարանին, ուրկէ վկայուած էր ծանօթ դիւանագէտը :

Արտաքին նախկին նախարարին թըղթածրարները երկար տաեն կառավարութեան սեփականութիւնը պիտի մնան. բազմաթիւ թուղթերու հրատարակութիւնը արգիլուած է առայժմ եւ պատմաբաններ այդ բոլոր կարդալու իրաւունք չունին :

Երկուշաբթի օր, լրագրողներէ հարցապնդուելով, Ժրնեւի խորհրդային պատուիրակութեան բանբերը յայտարարած էր թէ Կրոմիքօ Ուոշինկթըն պիտի չերթայ: Ժամ մը եառ, խորհրդային պատուիրակութիւնը մամուլի բացառիկ ասուլիս մը կուտար, ուր յայտարարուեցաւ թէ Արտաքին նախարար Կրոմիքօ Ուոշինկթըն պիտի երթայ խորհրդային կառավարութիւնը ներկայացնելու համար :

Ըստ երեւոյթին Թիրանայէն Խրուշչեւ լուր ղրկած էր ... առաջին յայտարարութեան եւ մամուլի ասուլիսին միջեւ :

Միւս կողմէ Խ· Միութեան փոխ վարչապետ Ա· Միկոյեան կարգ մը յայտարարութիւններ ըրաւ Մոսկուայի Արժանթինեան դեսպանատան մէջ տրուած ընդունելութեան մը ընթացքին :

Պատասխանելով Տըլլսի մահուան մասին եղած հարցումի մը, Միկոյեան ըսաւ · — Տըլլս պետական մեծ մարդ մըն էր· չատ խելացի: Միաժամանակ՝ փայլուն փաստաբան մը: Մենք չենք սիրեր տատամսող մարդերը: Կը նախընտրենք զօրաւոր մարդիկը՝ քան անկելք համակերպողները: Խորհրդային կառավարութեան հետ՝ չատ կը յաւիմ որ Տըլլս մեռաւ: Մենք իրապէս ազդուած ենք: Տըլլս խղճմտանքի տէր մարդ էր · երբ կացութիւնը իրեն բացատրուէր՝ կը հասկնար եւ միշտ պատրաստ էր իր դիրքը բարեփոխելու : Բան մը՝ որ չենք կրնար ըսել Վարչապետ Մաքնաուըրի համար :

« Ես չատ լաւ տպաւորութիւն մը ունիմ Տըլլսէն: Երբ անցեալ Յունուարին իրեն հանդիպեցայ՝ պիս ընդունեցաւ , հակառակ անոր որ իր առողջութիւնը լրսկատած էր քայքայուիլ արդէն· փափկանկատ մարդ էր :

— Կը կարծէ՞ք թէ ձեզի դէմ պատերազմ պիտի յայտարարէին՞ , — հարցուցի իրեն :

— Ո՛չ, չեմ կարծեր , — պատասխանեցան :

Այս անգամ ինք հարցուց ·— Կը կարծէ՞ք թէ մենք պատերազմ պիտի յայտարարենք ձեզի դէմ :

« Ո՛չ » պատասխանեցի :

« Ամերիկեան կառավարութիւնը պատերազմ պիտի չընէ , ելրակացուց Միկոյեան , բայց մարդիկ կան՝ որոնց վրայ վստահութիւն չունինք » :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ 1.768.000

★

Վերջապէս հրատարակուեցան Խորհրդ· Միութեան 1959ի մարդահամարին պաշտօնական արդիւնքները: Ըստ այդ մարդահամարին, 1939էն ի վեր, Խ· Միութեան բնակչութիւնը 18 միլիոնի չափ – լումմ մը արձանագրած է, հասնելով 209 միլիոնի :

Հայաստան , բնակչութեան թիւի տեսակէտէն, կը գրաւէ 13րդ տեղը՝ 1·768·000 բնակչութեամբ: Իրմէ եառ կուգան Թիւրքմէնիստան՝ 1·520·000 եւ Եսթոնիա՝ 1·196·000: Ռուսական հանրապետութեան բնակչութեան թիւն է 117 միլիոն 494 հազար :

Հայաստանի բնակչութիւնը Խ· Միութեան ընդհ· բնակչութեան 0·85 առ հարիւրը կը կազմէ :

1940ին, Հայաստանի բնակչութիւնն էր 1·300·000, իսկ 1956 Ապրիլին՝ մէկ միլիոն վեց հարիւր հազար: Հետեւաբար 1956 – 1959 երեք տարուան մէջ արձանագրած է 168 հազարի չափ մը:

Երեւանի բնակչութեան թիւն է այժմ 509·000, իսկ 1939ին 204·000 էր:

Հայաստանի քաղաքներու բնակչութեան թիւն է 884·000, որու 509·000ը Երեւանի մէջ:

Լենինականի բնակչութեան թիւն է 108 հազար, իսկ 1939ին՝ 68·000 էր:

ԾԱՆՕԹ.— Ըստ Խորհրդ· պաշտօնական յայտարարութիւններու, Հայաստանի բնակչութեան աճը տարին հազարին 45·4 է: Այս համեմատութեամբ, 1956էն 1959, երեք տարուան մէջ, Հայաստանի բնակչութիւնը 1·600·000էն պէտք է բարձրանար 1·825·855ի, մինչ կը յայտարարուի, թէ բնակչութեան թիւը այժմ 1·768·000 է: Կը նշանակէ, թէ մօտ 57000 հոգի Հայաստանի սահմաններէն հեռացած են :

ՏԽՐՈՒՆԻ.— ՄԻՀՐԱՆ ԷՄԻԷՃԵԱՆ

(խաւսասրցի)

Յաւով կը տեղեկանանք թէ յետ երկարատեւ հիւանդութեան, խոր ծերութեան մէջ մահկանացուն կնքած է Միհրան Էմիէճեան, ծանօթ՝ խաւսասրցի անունով : 87 տարեկան էր :

Հանգուցեալը՝ ընիկ Պոլսեցի՝ կանուխէն մտած էր Դաշնակցութեան շարքերը: 25 տարեկան էր, երբ իբրեւ հայդուկ 1897 Յուլիս 25ին մասնակցած է Խանասորի պատմական արշաւանքին: Տարիներ առաջ իր յուշերը ղրկեց Յառաջի մէջ, խաւսասրցի ստորագրութեամբ :

Երկար տարիներէ ի վեր հաստատուած էր Փարիզ, ուր կը զբաղէր առեւտրական գործերով :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԱՍԱՐԱԿԱԾ Շուկայի հինգ մեծ ընկերութիւններ միացած են Փարիզի մէջ հեռաւար հրթիռներու չինութեան համար: Այս ընկերութիւններն են՝ Թոմսոն Հուսթըն (Ֆրանսա) թելեֆունֆրըն (Գերմանիա) Աքըլիէ տը Շաւլրոուա (Պելժիա) Ֆիննմեքանիքա (Իտալիա), Ֆիլիփս (Հոլանտա):

ԹՈՒՐՔԻՈՅ Սեւ Ծովու չրջանին մէջ տեղատարափ անձրեւները պատճառ դարձած են որ Տրապիզոնի, Օֆի եւ Իսփիրի մէջ հեղեղներ ըլլան· չարաբաղդութեան բոլոր միջոցները կտրուած են: 12 հոգի խեղդամահ եղած են՝ հեղեղներէն քչուելով , իսկ 23 ուրիշներ կորսուած են: Խորտակուած են ելեկտրական կայաններ՝ Իքիզէրէի եւ Աքսաչպարտի մէջ: Քանդուած են ելեկտրական ցանցեր :

ՅՈՒՇԵՐ՝ ԹԼԿԱՏԻՆՑԻԷՆ

1908 Յունիսին, Պոլսոյ հայ թերթերը գրած էին, թէ դաւառացի մեծանուն կը-բաղէտ Յովհաննէս Յարութիւնեան — Թլկատինցիի — « սրտի հիւանդութենէ մեռած եւ յուղարկաւորութիւնն ալ տեղի ունեցած է մեծ չուքով»:

Խարբերդցիներս լուր չունէինք, թէ սիրուած ուսուցիչն ու գրագէտը մեռած էր եւ մենք զայն « մեծ չուքով» դերեզ-ման գրած էինք :

Անակնկալը մեծ զարմանք պատճառեց ամէնուն: Ընկերոջս (այժմ հանգուցեալ) Աստուր Էլճանեանի հետ միասին Թլկատինցիի վարժարանին ճամբան բռնեցինք՝ լուրը ստուգելու համար :

Հեւ ի հեւ վազելու ատեն ճամբուն վրայ հանդիպեցանք գրագէտին, որ սովորականին նման գլխիկոր եւ մտախոհ՝ գլանիկը ձեռքը՝ զպրոց կ'երթար :

Մեր վազքէն եւ իրարանցումէն հասկնալով ինքն ալ բան մը կռահեց, բայց չի խօսեցաւ: Նայեցաւ մեզի եւ մենք ալ իրեն: Թեթեւ ժպիտ մը կար դէմքին վրայ:

Ինչո՞ւ այդ խաղն ու կատակը: Ո՞վ էր հեղինակը, եւ ի՞նչ էր նպատակը ...:

Կէսօրին, ջուրի ճամբուն վրայ, երբ-քատ զոլէճի փրոֆեսորներուն եւ ուսու-ցիչներուն հետ էր Թլկատինցին ալ : Կանոնած կը կատակէր ու կը չաղակրա-տէր :

Ցետոյ երեւան ելան «չարաճճի խաղ»ին գաղտնիքն ու հեղինակները ...:

×

Թլկատինցին գաւառի պարզուկ միջա-վայրէն դատ ուրիշ միջավայր տեսած չէր: Պոլիսն ու Իզմիրը, Վենետիկն ու Վիէննան գրչով ծանօթ էին իրեն:

Գիւղացի այս տղան աշխարհն ու մար-դիկը գաւառի միջավայրով չափած էր:

Ինչպէս ժողովրդական դէմք էր Յով-հաննէս Թումանեան, նոյնն էր Թլկատին-ցին ալ :

Անոր չափ ասպետական, անոր չափ պարզ, անոր չափ հիւրասէր եւ լայն-սիրտ :

Թումանեան Լոռիի զեղաջիծաղ բարբ-բառանդակին վրայ ծնած եւ սնած էր, Թլկատինցին ալ՝ Խարբերդի մէջ: Երկու-քէն ալ դիւղացի, դիւղի չքաւոր զաւակ:

Թլկատինցիին անծանօթ մնացին օտար դրականութիւնը եւ օտար միջավայրը : Անոր ներշնչումի աղբիւրները եղան գիւ-դրն ու գիւղացին:

Վարպետը իր պատկերաւոր դրութիւն-ներուն չատ անդամ խառնած է հեղնանք, ծիծաղ եւ խայթող արտայայտութիւն-ներ:

Ամերիկացի միսիոնարուհի Էմիլիի, Վասն մեղաց մերոց, Ա՞խ, Հոիփսի, Հո-գիս, Մաճառոսը, Ի՞նչպէս կը նպաստեն, Գաւաթ մը միայն, Պիծակներուն ճայնը, Տանիէլին աղջիկը, Կուլիկ ու վարժա-պետը, զուռնաչէզ պատկերներու շարքեր են, որոնք կը պարփակեն ծիծաղ, հեգ-նանք, սէր եւ յոյսեր :

Ասոնք կարդալու ատեն ո՞ր գաւառա-ցին հին սէր մը չի յիշեր: Եւ կամ ո՞ր գաւառացի պատանին պիծակներու ճայ-նին նման փորձութիւններ ունեցած չէ : Տանիէլին աղջիկը մեր յոյզերուն, սէրե-րուն եւ կարօտներուն ամէնէն հարազատն ու նուիրականն է :

×

Մեծ եղեռնի տարին էր: Բանտար-կուած են քաղաքին վաճառականները, արհեստաւորները, ուսուցիչներն ու կու-սակցականները :

Ամէն օր բանտ տարուողներուն թիւը կ'աւելնայ : Դուրսը մնացողները չուա-րած են :

Օսմանեան բանակի հայ զինուորները զինաթափուած եւ անյայտ ուղղութեամբ քշուած են :

Թլկատինցին թուրք հոճայի մը եւ Թիւ-ֆէնկճեան Յարութիւնի հետ հայ տունե-րէն տարուած միւզիւր թղթերն ու կիր-քերը թուրքերէնի կը թարգմանէր: Այս պատճառաւ ալ բանտարկուած չէր:

Վերի թաղէն չուկայ՝ մեր դեղարանը կ'երթամ:

Հիւանդ եմ, վատոյժ: Վարցաւէն դեռ նոր ելած եմ եւ հազիւ կրնամ քալել :

Տուներուն պատերը բռնելով եւ տեղ տեղ հազչելով հազիւ քայլ մը երկու կըր-նամ առնել :

Մէկէն՝ Թլկատինցիին ճայնը առի :

Եկաւ մօտեցաւ ինծի: Օրուան ծանր կացութիւնը մեր խօսակցութեան նիւթն էր:

Քիչ եւաք, մեր դիմացը ելաւ քաղաքի ոստիկաններէն Համոն եւ մեզի մօտենա-լով, յարդալից բարեւէ մը եաք, ըսաւ .

— էֆէնտի, ձեր տունէն կուգամ , քո-միսէր պէյը ձեզ կ'ուզէ :

Թլկատինցին, ոստիկանին խօսքէն թունդ ելած, սկսաւ դոդալ եւ այլայլիլ :

— Մի վախնար, էֆէնտի :

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ կը կանչէ, քիչ ա-ռաջ գոնն էի:

— Հարցում մը պիտի ընէ ձեզի: Հոգ մի ընէք, նորէն տուն կուգաք :

Թլկատինցին ինձմէ բաժնուելէ առաջ՝ ըսաւ.

— Լեւոն, վահաճ էֆէնտիին լուր տուր (գարշելի թուրք մը): Վարցաւով մաչեր, հալեր էի :

Ոստիկանը կը վախնար ինծի դպչելէ եւ նոյն իսկ հետս խօսելէ, մի գուցէ ինքն ալ վարակուէր:

Ընկճուած՝ ճամբաս չարունակեցի:

Լացի եւ ճիչերու ճայներէն եաեւ գար-ճայ եւ նայեցայ: Թլկատինցիի աղջիկնե-րէն մէկն էր, որ տեսած էր հօրը ձեր-բակալուիլը: Թլկատինցին եւ ոստիկանը, իրենք ալ ճայնէն ազդուած, գարձան եւ եաեւ նայեցան : Օրիորդը « Հայրիկ հայ-րիկ» պոռալով կը վազէր: Թլկատինցին ձեռքի չարժումներ ըրաւ եւ ուղեց զաւկին ըսել, որ չգայ, եա՝ տուն երթայ :

Բայց, հակառակ հօրը թելադրանքին, օրիորդը «Հայրիկ, հայրիկ» կրկնելով կը վազէր անոր եաեւէն, նեղ ու գարձգար-ձիկ փողոցներէ :

Գնա՛ց հայրիկը ու ալ չվերադարձաւ:

Նոյն դիշերը աքսորեալներու առաջին կարաւանին հետ Խարբերդէն Մեղրէ տարուեցաւ եւ անկէ՝ Ծովք – Կէօլճիւք , ուր աւելի քան երեք հարիւր ուրիշներու հետ կացինահար եղաւ :

Աւելի քան 45 տարիներ անցեր գացեր են, բայց ոչ մէկ լուր գրագիտէն :

Գրագէտն ալ, երկու միլիոն նահատակ-ներուն հետ, աչքերը բաց, խունկի, ա-ղօթքի եւ ափ մը օրհնուած հողի կարօտ, հայրենի լեռներուն մէջ կը քնանայ ...

Ո՞վ պիտի կանչէ զայն եա եւ ո՞վ պիտի հնչեցնէ իր սիրական գալրոցին գանգա-կը ...:

ԼԵՒՈՆ ԼԻՒԼԻՃԵՄ

ԱՐԴԻ ԹՈՒՐՔԻԱՆ
ԱՄԵՐԻԿԱՑԻԻ ՄԸ ԱԿՆՈՑՈՎ

«ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ Կ'ՕԺԱՆԴԱԿԵՆ ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ, ՈՐ ՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ ԱՐԺԷՔ ՈՒՆԻ »

★

ՀՄՐ.— Շիքակօ Թրիպիւն մեծ օրա-թերթը հրատարակած է Զ. Մեճլիի մէկ յօդուածը Թուրքիոյ մասին: Պ. Մեճլի որ վերջերս Թուրքիա այցելած է, կ'ըսէ, թէ Բ. մեծ պատերազմէն ի վեր, Թուր-քիա ստացած է երկուքուկէս պիլիոն տո-լարի օգնութիւն մը, եւ ունի 45.000 թրաքթորներ: Եւ սակայն, թրքական բանակը տարակուսելի արժէք ունի, եւ իր տնտեսութիւնը «մէկ ոտքով» կը գտ-նուի դեռ Միջին Դարու մէջ: Ստորեւ կու տանք այդ յօդուածաշարքին թարգմանու-թիւնը .—

Թրքական 500.000նոց բանակէն զին-ուորները, ամերիկեան զէնքերով զինուած, օրը 24 ժամ կը հսկեն՝ համաչնաւոր Պուլկարիոյ 125 մղոն սահմաններուն վը-րայ, Եւրոպայի մէջ, եւ 367 մղոն՝ Յ. Միութեան սահմաններուն՝ Ասիոյ մէջ, երբեմն զէրոյէն վար քառասուն աստիճան ցուրտի մէջ :

Թուրքիոյ արեւելեան լեռնային չրջան-ներուն վրայ հաստատուած ամերիկեան բատարներ կը հսկեն Ռուսիոյ ընդարձակ տարածութեանց վրայ: Ամերիկեան ճեթ օդանաւեր, ջրածինի ռումբերով բեռնա-ւորուած, կրնան ռմբակոծել Ռուսիոյ ա-մէն կողմերը: Թուրքերը համաձայն են ընդունելու հրթիռներ, որոնք պիտի կր-նային ամբողջ Յ. Միութեան ճարտա-րարուեստական չրջանները ռմբակոծել , Ուրալներէն անդին խակ:

Այս նկատումներով է, որ Ամերիկա 1947էն ի վեր, 2.5 պիլիոն տոլար նուի-րած է Թուրքիոյ: Ամերիկեան հաչիւնե-րով, լաւ ճեռնարկ մըն է այս որովհե-տեւ, մինչ ամերիկացի զինուոր մը մօտ 6500 տոլար կ'արժէ պետութեան, թուրք զինուորը 700 տոլար կ'արժէ տարեկան: Ամերիկացի պաչտօնատար մը բաւ նոյն-իսկ ինձ, որ թուրք զինուորները « ամե-րիկեան վարձկաններ» են :

Այսուհանդերձ, չատ մը թուրք եւ ա-մերիկացի զինուորականներ եւ պաչտօ-նատարներ, ունին կարգ մը այլ հիմնա-կան տեսակէտներ :

Թուրքերը հաւանաբար մերժեն կռուիլ Ռուսերուն դէմ, այս վերջիններուն դէ-րակչիռ հրթիռներուն եւ հիւլէական զէն-քերուն առջեւ, ճիշդ ինչպէս ամերիկ-եան քաղաքացիական կռիւներուն ընթաց-քին, հիւսիսի բանակները մերժած էին կռուիլ, իրենց զէնքերով :

Թրքական բանակը, հակառակ Ամերի-կայի տուած օժանդակութեան, իրապէս արդիական բանակ մը չէ, եւ դեռ չատ հին զէնքեր ունի, նոյնիսկ Ա. մեծ պա-տերազմէն մնացած, նոյնիսկ Ղրիմի պա-տերազմէն (1855):

Ռօպ Այլընտի մեր պատմական զինա-րանը օր մը նկատեց, թէ 1866ի զէնքեր չունի. Թրքական բանակը անմիջապէս երկու օրինակ կրցաւ ղրկել, իր պահես-տէն :

Թուրք բանակը մարզող ամերիկացի զինուորականներ կը նկատեն, թէ Թուր-քերը մեքենական միջոցներ քիչ ունին, եւ մանաւանդ անոնց կը պակսին թեք-նիք պատրաստութեամբ մասնագէտներ, արդիական զէնքերը պահպանելու հա-մար:

Այս տողերու հեղինակը, խորհրդային սահմանապուլիչէն վերադարձին, էրզրու-մէն յետոյ, կարնի մօտերը տեսաւ՝ նեղ կամուրջի մը վրայ կեցած ամերիկեան բեռնատար կառք մը, որ աւերուած ըլլա-լով ամբողջ ճամբան փակած էր: Մղոն մը երկարութեամբ կառքերու չարանը ա-նոր կը սպասէր, սակայն, բեռնակառքին թուրք վարիչը, անկարող՝ չտկելու մե-քենան , հոն կեցած էր, անճարակի պէս :

Ամերիկացի սպան, անմիջապէս հասկը-ցաւ, թէ մեքենան խանգարուած էր այն-պէս, որ կառքը չէր կրնար ճախ դառնալ. թելադրեց վարիչին, ուղղակի աջ կող-մէն յառաջանալ, ճամբէն դուրս ելլել, եւ օդնութիւն խնդրել Սարըղամըշէն :

Միայն ամերիկացի սպային օժանդա-կութեամբ կարելի եղաւ հարցը լուծել , այլապէս, կարսէն մինչեւ էրզրում պիտի երկարէր սպասող կառքերու չարանը : Սակայն, պատերազմի մը պարագային , նման արկած մը կրնայ աղետալի ըլլալ :

Թուրք սպաները թերի են՝ բանակի լայն չարժումներու համար: Պատերազմի մը պարագային, ամերիկացի խորհրդա-կաններու պէտք պիտի ունենայ Թրքական բանակը, դումարտակէն վեր բոլոր մի-ութիւններու համար: Նոյնպէս ամերիկա-ցի դիտողներ կ'ըսեն , թէ Թրքական հը-բետանիին ճշդութիւնը տիրօրէն պակա-

(7 Շար.)

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ
(ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

Դժբախտաբար սակայն, հակառակ այն իրողութեան որ աքսորի ժամկէտը չա-տունց լրացած էր եւ պէտք էր որ Սուն-դուկեանը վերադառնար Թիֆլիզ , բայց կեդրոնի եւ տեղական իշխանութիւնները եւ մանաւանդ փոխարքայ Վորոնցովը , այդ մասին որեւէ արտօրանք չէին ցոյց տար :

Սակայն բարեբաստիկ միջնորդութիւն մը օդնութեան կը հասնի: Վրացի յայտ-նի բանաստեղծ Գրիգոլ Օրբելեանի, որ 1820 թուականներուն Վրաստանի ապըս-տամբական չարժումին մասնակցութեանը առնչութեամբ իր կարգին աքսորի դա-տապարտուած էր եւ յետոյ վերադառնա-լով Սունդուկեանի աքսորի չրջանին պե-տական բարձր պաչտօն կը վարէր, կը մի-ջամտէ ազդու կերպով եւ կը ստանայ Սունդուկեանցի վերադարձի որոշումը :

Ու վերջապէս, հինդ տարի Դերբենտի մէջ մնալէ եաք, հինդ տարի հոդեկան ու բարոյական տանջանքներու դիմադրաւելէ եւ իր սիրելիներուն, մանաւանդ իր խան-դակաթ մօրկանը կարօտովը խանձելէ եաք, 1858ին Գաբրիէլ Սունդուկեանց կը վերադառնայ Թիֆլիզ, բոլորովին ազատ եւ տեսական պարտաւոր ծառայութենէ ոչնչ :

Մինչեւ հոս ներկայացուցինք Սուն-դուկեանցը իբրեւ մարդ , այժմ անցնինք իր կեանքին ուրիշ կարեւոր մէկ երեսին, եւ տանք պատկերը արուեստագէտ – թա-տերագիր Գաբրիէլ Սունդուկեանցին:

Արեւելահայ թատրոնի հիմնարկու-թեան թուականը կարելի է համարել 1860-ական թուականներու չրջանը :

Մոսկուայի հայ ուսանողները բեմա-դրած էին Ալադեանի «Վայ իմ կորած յի-սուն ոսկին» կատակերգութիւնը: Մի քա-յէլ Նալպանտեանը «Հիւսիսափայլ»ի մէջ դովասանքով կը խօսէր այդ ներկայաց-ման մասին եւ ապա նոյն դովասանքին կ'արժանացնէ Գ. Տէր Յովհաննէսեանի « Տէր Սարգիս»ը գործը, որուն հեղինա-կին Նալպանտեանը կը մաղթէր Հայոց Գադոլը դառնալ :

Խօսելով թատրոնի մասին, Նալբանտ-եանը նոր ստեղծուող հայ իրապաչտ թատրոնին կ'առաջադրէր հետեւեալը .—

« Թատրոնի բեմն է այն բարոյական ահեղ դատաստանը, ուր արդարութիւնը եւ յանցանքը, առանց աչառութեան, ըս-տանում են իւրեանց արժանի հատուցու-մը: Մարդկային բանականութիւնը մի-այն այդ բեմին է տուել այն կախարդա-կան մեծ զօրութիւնը, որ մի ակնթար-թում ցոլացնում է բոլոր հանդիսական-ների սրտի մէջ ուրախութիւն, տրտմու-թիւն, զարմանք, զմայլանք, ցաւ եւ կա-րեկցութիւն: Մի խօսքով, անդ բեմը տի-րում է մարդու բոլոր հոգեբանական կարողութիւններին:

« ... Նա մի տեսակ դպրոց է, ուր ու-սանում են ամէն հասակի մարդիկ ... նա չէ միայն սղնուացնում հասարակու-թեան զգացմունքը, այլ եւ ցոյց է տալիս առաքինութեան վսեմութիւնը, մոլու-թեան վատթարութիւնը, առաջինին խրա-խուսելով եւ երկրորդից զզուացնելով եւ ոչ միայն այսչափ, նա քրքրում է ընտա-նեկան կեանքը, քննում է նորա ամենա-նուրբ կողմերը եւ մերկապարանոց դնում է հասարակութեան դատաստանի առ-ջեւ»: (Երկ. լիակատար հաւաքածոյ, տպ. Երեւան 1947):

Նալպանտեանը արեւելահայ նորաս-տեղծ թատրոնին ուրիշ թելադրանքներ եւս կ'ընէր: Անիկա կը թելադրէր չափա-զանց զգոյշ ըլլալ խաղացանկի ընտրու-թեան տեսակէտէն: Եւ այդ առթիւ, 1861ին կը գրէր հետեւեալը .—

« Հայոց ազգի ընտանեկան կեանքը խեղճ է, ինչպէս մի ասիական ազգի կեանք, բայց այդ խեղճութիւնը թշուա-ռութեան կը փոխուի եթէ եւրոպական ընտանեկան կեանքի գեխութիւնը եւ աւե-րանքը, որպէս քաղաքակրթութեան յատ-կութիւնք, պատուաստուին հայկական ընտանիքի վրայ : Վերին աստիճանի քըն-քուչ է թատերդութեանց ընտրութիւնը, վերին աստիճանի զզուչութեան կարօտ , մանաւանդ՝ անցնելու ժամանակ այն ժայռի մօտից ուր գահավէժ սկսաւ ֆը-րանսական ընտանեկան կեանքը»: Այս դրութեամբ Մ. Նալբանտեան կը թելա-դրէ մանաւանդ զգուչանալ ֆրանսական մելոդրամներուն հետեւելէ :

Տակաւ հոգի ու մարմին կ'առնէ թատ-րոնական գործը: Նոր ձեւաւորուող թատ-րոնը առաջին անգամ կը բեմադրէ Ն. Փուլինեանի (Նալպանտեանի դասընկե-րը) «Դալալ Ղազո» փիէսը: Այս փիէսին մէջ տրուած էր տիպարը իր հայրենիքը թողած եւ ապրուստի միջոց գտնելու հա-մար Թիֆլիզ եկած մշակը : Այդ դերը կը ստանձնէ Ստեփան Մանուկեան եւ մեծ յաջողութեամբ կը ստեղծէ տիպարը միչտ պանդուխտ, սակայն հոգիով ու սրտով իր հայրենիքին կապուած մուշեղի մշակին : Այս առաջին ներկայացումէն իսկ սկսը համագործակցութեան կը սկսի գործի նախաձեռնողներուն եւ հասարակութենէն անհատներու միջեւ: Այդ առաջին ներ-կայացման մասնակցող դերասան Շահ-խաթունեանցի խաղէն խանգավառուած ապագայ դրամագուրգը Սունդուկեանց եւ ուրիշ համալսարանական երիտասարդ մը՝ Տէր Գրիգորեան, կը մտնեն ժողո-վուրդին մէջ, հանդանակութեան կը ձեռ-նարկեն եւ հարիւր ռուբլի հաւաքելով կը յանձնեն Շահխաթունեանցի, իբր ֆոնտ նոր կազմակերպուած խումբին համար :

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԻԹԵԱՆ

ԱՐՏԱՔՍՈՒՄ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ՀԻՒՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

★

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հիւս. Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէին որոշումով, այսօրուընէ սկսեալ — Մայիս 3, 1959 — Հ. Յ. Դաշնակցութեան շարքերէն արտաքսուած են հետեւեալ – ները. —

Վարդգէս Ափրիկեան, կարպիս Ջէր – տէլեան, Արտաւազդ Տաղլեան :

Հ. Յ. Դ. ՀԻՒՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴ. ԿՈՄԻՏԷ

սաւոր է : Թուրքերը անփորձ են, եւ չու– նին արդիական բանակ մը պահանջուած թեքնիք պատրաստութիւնը :

Բ. մեծ պատերազմէն յետոյ, Ռուսիա պահանջեց Սեւ Ծովու Նեղուցները, սա – կայն չստացաւ, որովհետեւ Միացեալ Նահանգները եւ Անգլիա պաշտպանեցին Թուրքիան այդ պահանջներուն դէմ :

Այս օրերուն, շատ հարցական է այն ենթադրութիւնը, թէ պատերազմի մը պարագային, Թուրքիա պիտի կրնայ պա– հել Տարտանէլը եւ Վոսփորը, ու Ռուսա– կան մարտանաւերուն Միջերկրականի մերձեցումը արգիլել :

Պատրաստ է կարծել, թէ պատերազմի պարագային, Ռուսիա թոյլ պիտի տայ, որ գիւղ փակէ Սեւ Ծովու մէջ, երկիր մը, որ իր արմտիքին մեծ մասը կը պատ– րաստէ դեռ այնպիսի միջոցներով, զորս Հիթլերները կը գործածէին, Քրիստոսէ երկու հազար տարի առաջ :

Եթէ մեզի Թուրքիան է արգելքը, եւ ոչ Միացեալ Նահանգները, մարդ կրնայ պարմանալ թէ ինչո՞ւ Ռուսերը չեն անց – նիր տակաւ Իրանէն, տիրելու համար ամ – բողջ Պարսից Ծոցի շրջանին, որ կը բո – վանդակէ ամբողջ աշխարհի քարիւղի մը– թերքին 2/3ը : Անշուշտ Իրանեան բանակն ալ արգելք չէ, որովհետեւ դեռ վերջերս, Իրանի վարչապետը Պ. Մահուդէր Էկպալ յայտարարեց, թէ Պաղտատի դաշնագրին պետութեանց նոր ժողով մը «պարզապէս ժամանակի վատնում է, եւ եթէ նոր կեանք մը պիտի հարուի այդ դաշինքին, աւելի լաւ է լքել զայն» :

Թուրքիա օղակ մըն է, որ կը կապէ Հիւսիսային Ատլանտեանի դաշնագրին երկիրները՝ Հարաւ. Արեւելեան Ասիոյ դաշնագրի երկիրներուն : Համայնավա – րութեան դէմ «պաշտպանութեան այս շղթայ»ին տկարութիւնը հաստատուե – ցաւ, երբ, անցեալ Յուլիս 14ին, յեղա – փոխութիւն մը Իրաքը քշեց Պաղտատի դաշինքէն :

(1 Շար.)

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼԲԷՆԿԵԱՆ ՍԱՆԵՐԸ

●

Ինչպէս ամէն երեսուն տարի առաջ, վարժարանի բացման սկզբնական շրջա – նին, այսուհետեւ ալ պիտի վերյիշուի Գալուստ Սարգիս Կիւլպէնկեանի անունը, Մխիթարեան մայրավանքի թանկագին կրթական գործունէութեան նպաստողնե – րուն ցանկին վրայ :

Վեց էին, այն առեն, Գ. Կիւլպէնկեա– նի անձնապէս որդեգրած սանները : Հիմա է այսօր՝ անոր բարերարութեամբ հաս – տատուած Հիմնարկութեան որդեգրած սաներուն թիւը :

Առաջին փորձ մը, նախնական քայլ մըն է անշուշտ, Հիմնարկութեան կատարած այդ համեմատաբար համեստ յառաջ – դումը :

Նորընտիր սաներուն ուսումնական յա – ջողութիւնը հայկական ու եւրոպական դիտութեանց մէջ, ապահովաբար հրաւէր մը պիտի ըլայ որ մարզասիրական եւ կրթական այդ հայակերտ Հաստատու – թիւնը՝ առաւելագոյն չափով ստանայ, կարելի եղածին չափ շուտ, Սամուէլմու– րատեան վարժարանի ազգանուէր գոր – ծունէութեան :

Ծանօթ է որ, 125 տարիէ ի վեր, Մխի– թարեաններու մշակած կրթական հողին վրայ ձգուած ամենախոր լուման ան – պամ՝ ինչպէս փոքր սերմնցուն, մեծ հունձք կուտայ :

Մայիս 18ին՝ Մուրատեան վարժարանի մէջ տեղի ունեցաւ սաներու ընտրութեան դրաւոր եւ բերանացի քննութեանց մըր – ցումը :

Կարելի թեկնածուներու անխտիր ար – ձանագրութեան համար, վարժարանի տեսչութեան սահմանած նախապատրաս– տական պայմանները օրինակելի էին ի – րենց ուղղամտութեամբ :

Քննութեանց մրցումին զործադրու – թեան համար, արդիական տեսութեամբ պատրաստուած, դրաւոր եւ բերանացի նիւթերու հարցարանը՝ հաւասար բախտ կուտար բոլոր թեկնածուներուն, առանց պատահական կամ դիպուածով կողմնա – կալ յաջողութեան մը կարելիութեան : Հարցարանը եւ օրակարգը պատրաստած էր վարժարանի վկայեալ ուսուցիչներու կազմը, հետեւողութեամբ պետական լիկէանի վեցերորդ դասարան մուտքի ու– սումնական ծրագրին :

Իրենց դաւակներուն թեկնածութիւնը ներկայացուցած են 42 ծնողք : Արձանա – գրութեան պայմանները լրացնող, քննու– թեանց ներկայացած են 17 մանուկներ : Առնցմէ ինը յաջողած են դրաւորի մէջ. բերանացի քննութիւններէն ետք, վերջ – նապէս յաջողած եւ կիւլպէնկեան սան ընտրուածներն են՝ Եսայեան (Պորսօ), Փիրիմ (Թուլոն), Գալայճեան (Անները – մաս), Պիպէրեան (Մարսէյլ), Պուկուր – լեան (Փարիզ) :

Շորհիւ իր սաներուն ապագայ յաջո – ղութեանց, վստահ ենք որ Կիւլպէնկեան Հաստատութիւնը՝ մինչեւ երկիւղ ա – կանջալուր միայն, այսուհետեւ ականա– տես ալ պիտի ըլլայ Սամուէլ Մուրատեան վարժարանի կատարած անփոխարինելի դերին, Ֆրանսայի հայկական կեանքին մէջ :

ԿԱՄ

ՅԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՍԳԱՏՕՆԸ ՆԻՍԻ ՄԷՋ

Նիս, (Յառաջ).— Այս տարի մեծ չու– քով եւ բոլոր կազմակերպութիւններու մասնակցութեամբ տօնուեցաւ Ապրիլեան Եղեռնի 44րդ տարեդարձը :

17 Մայիս՝ Կիրակի կէսօրէ ետք ժա – մը 3:30ին Աթէնէի սրահը լեցուած էր ա– մէն դասակարգէ հայրենակիցներով : Ե – կած էին Քանէն, Տրակինեանէն, Ժուան Լէ Փէնէն եւ այլ շրջաններէն :

Բեմը զարդարուած էր չատ պատշաճ կերպով : Սիս շղարշ մը : Զոյգ մասիսնե– րու լուսանկարկ մեծադիր նկարը : Էջմիա– ծինը : Ծաղիկներ եւ մոմ մը, որ կը պըլ– պըլար : «Ցուշարձան ապրիլեան նահա– տակներուն» :

Օրուան նախագահ Պ. Սահեան Վա – հանեան՝ կարճ այլ պատշաճ ճառով մը թուեց ապրիլեան եղեռնի պատճառները, հրաւիրելով ներկաները որ մէկ վայր – կեան լռութեամբ յարգեն մէկ միլիոն զո– հերուն յիշատակը :

Օր. Շաքէ Գաբրիէլեան դաշնակի վրայ նուագեց «Շանսոն Թրիսթ»ը Զայքովսկիէ, ինչպէս նաեւ «Իմ հայրենիք» եւ «Հայրե– նի կարօտ» կտորները :

Օր. Փափազեան, Ա. մրցանակ Նիսի երաժշտանոցէն, նուագեց Շօփէնի «Մա– հերգը» եւ Ռիմսկի Քորսաքովի «Լը Վոլ տիւ Պուտոճ» :

Արտասանեցին՝ Սալբի եւ Արամ Գէ– որգեան. «Հէյ Ջան հայրենիք» եւ «Աստ– ուած ասաց» :

Ուղերձներ կարդացին Պ. Պէտիկեան, հոգաբարձութեան եւ Թոզաթլեան մար – զական միութեան կողմէ :

Պ. Ռաֆայէլ Զարդարեան արտասա – նեց՝ Թումանեանէն եւ Զարենցէն երկու ընտիր կտորներ :

Ընկեր Գաբեգին Գէորգեան, նոյնպէս յուզիչ կերպով, արտասանեց Աւետիս Ա– հարոնեանի «Ուխտաւորը» :

Օրուան գլխաւոր բանախօսն էր Պ. Հրաչ Զարդարեան, որ ընդհատուելէ նա– խաձեռնարկ յանձնախումբը եւ փափաք յայտնեց որ ամէն տարի համերաշխ ո – գիով տօնուի Ապրիլ 11 – 24ը, ապա անդրադառնալով եղեռնին ըսաւ.—«Սուտ է եւ սխալ այն ամբաստանութիւնը, թէ յեղափոխական շարժումն էր պատճառը այդ ջարդերուն : Թուրքը միշտ ջարդած է, կողոպտած, քանդած եւ յափշտա – կած : Ան մինակ Հայերը չէ որ կոտորած է այլ ուրիշ բազմաթիւ ազգեր՝ Ռուսա –

նացիները, Սերպերը, Պուլկարները, Յոյները, Հրեաները եւ ուրիշներ :

Երբեք չէ կրցած հանդուրժել ստեղծա– գործ Հայուն գոյութեան, որուն չնորհիւ ան ունեցած է երաժշտութիւն, ճարտա – րապետութիւն, թատրոն եւ մշակոյթ» :

Գովքը հիւսեց յեղափոխական մեր պայքարին եւ անդրադառնալով հերոսա – մարտերուն ջատագովեց Սասունն ու Զէյթունը, Գարահիսարն ու Եթեսան, Վասպուրականն ու Մուսատաղը եւ աւել– նյուց՝ «Անոնց թափած արիւնով ստեղ – ծուեցաւ հայրենիքը » :

Վերապատուելի Հէլվաճեան եւս քանի մը խօսքով բացատրեց օրուան իմաստը, «Թուրքը չէր յաջողեցաւ իր առաջադրու – թեանց մէջ, չորս միլիոն էինք ապրիլեան եղեռնէն առաջ, այսօր նորէն նոյն թիւը ունինք :

Զարդերուն առեն հայրենիք չունէինք, յետոյ ունեցանք, վաղը կ'ունենանք նաեւ Թրքահայաստանը » :

Շ. ՆԵՄՐՈՒԹ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐԸ

ԲԱՐԻ ԵԿԱՐ ՍԷՐ

Գրեց Վարդան Կոմիկեան

—o—

Այս է վերնագիրը, Պոլիս հրատարակ– ուած, Արամեան Սանուց Միութեանմա– տենաշարի երկրորդ հատորին : Դեղին եւ սեւ կողքով ու ուղիքա փիքասօ նկարնե – րով, որոնց խմաստը ապագային միայն պիտի հասկնանք :

Հեղինակը՝ Վարդան Կոմիկեան, կեդ– րոնականցի մըն է յետ պատերազմեան սերունդէն, որ մէկ անգամէն հաստատուն քայլերով ներս կը մտնէ հայ դրականու– թեան ածուէն, հասուն եւ իր լիութեան մէջ :

Ամէնուն ծանօթ է Պոլսոյ դրական, դեղարուեստական եւ մշակութային ան – մխիթար վիճակը : Սակայն, երբ նման հատորներ հրապարակ կուգան ասուպի մը տպաւորութիւն կ'ընեն մեր վրայ ու կը հրճուինք ի խնդիր լոյսին ... : Եւ Բարի եկար Սէրը ատոնցմէ է :

Այս հատորին մէջ, մարդկային ամէն մէկ հեւք, հոգեկան կամ ֆիզիքական ան– կարեւոր դէպք, կամ մեր սովորական կեանքին հետ զալարուող ու միչտ ներ – կայ իրողութիւն մը, վրիպած ու խուսա– փած մեր անդրադարձ նկատողութենէն, մեր փիլիսոփայելու կարողութենէն, փո – դոցէն, տունէն, չուկայէն եւ կամ ճամ – բու ընթացքէն, եկած ու մաս մը դրա – ւած են :

Վ. Կոմիկեան, իր քլինիքին աչխա – տանքներուն կողքին (ատամնաբոյժ), ըս– տանձնած է հայ լեզուի դասաւանդումը, Պոլսոյ հայ լիսէներու մէջ :

Իր ոճը, հասուն ու կոկիկ է : Լեզուն դաղանիք մը չունի իրեն համար եւ բա – ռերը կը գործածէ ճիշդ ու տեղին իրենց իմաստին համաձայն : 36 պատմուածքներ կուտայ մեզի 240 էջերով, ամփոփ ու սեղմ : Իր, տեսնելու, զգալու, պատմե – լու եւ կեանքը ըմբռնելու, պարտադրանք– ներուն եւ հետեւանքներուն հանդէպ, միչտ հաճելի իւմիւրով մը ծածկուած, մարդկայնական ախորժելի փիլիսոփայու– թեամբ մը կը խորանայ : Ու, կեանքը կ'առնէ այնպէս ինչպէս դարերէ ի վեր իր տառապանքներովն ու հաճոյքներովը :

Բարի եկար, Սէրը հատոր մըն է, ո – րուն հրատարակութիւնը աւելորդ նիւ – թական եւ հոգեկան սպառում մը չէ ե – ղած, այլ դրական վայելք մը : Իրաւունք ունինք սպասելու հեղինակէն որ աւելին տայ մեզի, զի վստահ ենք իր դրելու չը– նորհքին վրայ :

Ց. ՓԱՓԱԶԵԱՆ

ձի համար աւելի երկար հանդուրժել մի – նակութեան եւ որոչեցի ամուսնանալ : Ընտրեալս կը կոչուի Կէրթրուտ Պեռլինկ, — աղջիկը ջաղացպանի մը՝ որ հողմա – ղաց մը ունի Լէհնօրթի մէջ, մեզմէ ետ – կու փարսախ հեռուն : Տակաւին չատ դե– ռահաս է եւ չատ կը սիրեմ զայն : Հարս– նիքը պիտի կատարուի վեց չարաթէն : Եէթ կրնաս, արտօնութիւն առ դալու համար :

Հ. ԶՈՒՏԷՐՄԱՆ

(Շար.)

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (4)

ԼՌԱԾ ԶՐԱՂԱՑԸ

Գ.

Ժան բոլորովին ուրիչ տեսակ էր : Ա – նիկա յանդգնօրէն զուարթ ակնարկներ կը պատցնէր աչխարհի վրայ : Իր չբը – թունքներուն վրայ կ'արտայայտուէր խենթ անհոգութիւնը եւ չարաճճիութիւ – նը, տեւական ժպիտով մը : Իր նուրբ եւ ճկուն հասակը ունէր երիտասարդութեան բովանդակ հրապոյրը :

Անիկա չէր խուսափեր մանկամարդ աղ– ջիկներու աչքէն. ամէնքն ալ անցնելու առեն տեղչատառ ակնարկներ կը նետէին անոր, եւ մէկէ աւելի չփոթ չիկնումներ, մէկէ աւելի ձեռքի արտայայտիչ սեղ – մումներ կ'ընէին իրեն. « Պիտի ուզէի սիրել քեզի » : Ժան չատ հոգ չէր ըներ այս բաները : Հասած չէր դեռ սիրոյ համար. կը նախընտրէր կոնախաղի չար– ժումն ու աղմուկը քան պարասրահը, եւ Ռոզի կամ Էրէչէնի ընկերակցութեան փո – խարէն, կը փնտռէր իր լռակեաց եղբօրը

ընկերակցութիւնը՝ սահանքի եղերքը :

Երկուքն ալ, հանդիսաւոր ժամու մը, երեկոյեան խաղաղութեան մէջ, իրարու խոստացած էին երբեք չբաժնուիլ եւ եր – բեք իրենց միջեւ չընդունիլ երրորդ անձ մը, — սէր բերէր՝ թէ աեւլութիւն : Ա – նոնք կարղադրած էին այս բոլորը առանց վերաքննութեան արքայական խորհուր – դին : Եկաւ օրը, ուր Ժան սիրելուհւոյ դինուորագրուիլ. պէտք եղաւ որ չատ, չատ հեռու երթար, մինչեւ Պերլին, ծա– ռայելու համար Ուլաններու պահակազօր– քին մէջ : Անիկա երկուքին համար ալ դժնդակ հարուած մը եղաւ : Մառթէն, իր սովորութեան համաձայն, վիշտը իրեն պահեց, առանց բան մը ըսելու. Ժան, աւելի բուռն խառնուածքով, անմխիթար վիշտ մը արտայայտեց, այն աստիճան, որ մեկնումի պահուն իր ընկերներուն հաղար ծաղրանքներուն ենթարկուեցաւ :

Բայց, իր վիշտը երկարատեւ չեղաւ : Առաջին մարզանքներուն յաղնութիւննե – րը, մայրաքաղաքի չփոթ շարժումը, — իրեն համար այնքան նոր, — ժամանակ չէին ձգեր իր երազներուն անձնատուր ըլլալու համար. միայն, երբ կը տա – րածուէր իր զինուորական անկողնին մէջ, վերջալոյսի խաղաղ պահուն, մելամաղ – ձութիւնը, մորմոքումները կը պաշարէին զինքը ծայրայեղ ուժգնութեամբ մը : Այն առեն մութին մէջ կը տեսնէր կորսուած ղրախտի մը պէս փայլիլը Ջրաղացին, ուր ծնած էր, եւ անիւներու թիք – թաքը կը հնչէր ականջին չափականութեամբ մը, ինչպէս աստուածային երգ մը : Ան– միջապէս որ հաւաքման զանգը կը հնչէր, հրապոյրը անհետ կ'ըլլար :

Մառթէն չատ աւելի դժբախտ էր ջրա– զացին մէջ, ուր բացարձակապէս մինակ մնացած էր. որովհետեւ պէտք չէր իրր ընկերութիւն նկատել ջաղացպան տղաքը եւ ծերունի Դաւիթը, զոր հայրը մեռնե– լու առեն իրեն ձգած էր : Երբեք բարե – կամ չէր ունեցած, ոչ գիւղը, ոչ ալ ու – րիչ տեղ : Լռակեաց եւ ինքնասոյզ, կը թափառէր մտմտոլոր :

Իր միտքը մթագնեցաւ օրէ օր, հետ – զհետէ մխրճուեցաւ երազներու մէջ եւ մելամաղձոտութիւնը այնպիսի մթու – թիւններով պատեց զայն, որ իր զոհին ուրուականը սկսաւ հալածել զինքը : Ի վիճակի էր դեռ հասկնալու համար թէ չէր կրնար չարունակել այս կեանքը : Այն առեն, ամէն գնով դբօսանքներ փնտռեց : Կիրակիները պարահանդէսներ յաճախեց, գնաց մօտակայ գիւղերը, մանաւանդ այ– ցելելու համար իր արհեստաւորներուն : Առնց հետեւանքը եղաւ ... կարճ խօս – քով, դեղեցիկ օր մը, գինուորութեան երկրորդ տարուան սկիզբը, Ժան եղբօր – մէն ստացաւ հետեւեալ նամակը :

« Սիրելի պղտիկս,

Պէտք է գրեմ քեզի եւ սակայն պիտի չվշտանաս ինծի դէմ : Անկարելի եղաւ ին–

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (4)

Կրոմիքօ Անգլիացի իր պաշտօնակիցին պատասխանելու փորձ մը ըրաւ, բայց սահմանափակուեցաւ ... խորհրդային ծրագրին մէջ, մասնաւորապէս յիշելով օտար ուժերու հեռացման ժամանակամիջ – ջոցը եւ չորս մեծերու պատասխանատուութիւնը՝ Գերմանիոյ վերամիացման գործին մէջ: Վերամիացում՝ որ պէտք է իրականանայ Պոնի եւ Փանքովի կառավարութիւններուն համաձայնութեամբ եւ գործակցութեամբ:

11րդ նիստը փակուեցաւ այս ձեւով:

Երեքշաբթի կէսօրէ ետք Արտաքին Նախարարները Ուաշինկթըն պիտի մեկնէին՝ Տըլըսի յուղարկաւորութեան մասնակցելու համար, բայց օդանաւ առնելէ առաջ կարճատեւ հանդիպում մը նախատեսած էր:

Հինգշաբթի օր ժողով տեղի պիտի չունենայ, բայց հաւանական է որ Ուաշինկթընի մէջ չորս նախարարները կարծիքի փոխանակութիւններ ունենան:

Ուրբաթ օր Արտաքին Նախարարները Ժընեւ պիտի վերադառնան՝ իրենց աշխատանքները վերսկսելու համար:

—o—

ԹԻՐԱՆԱՅԻ ԺՈՂՈՎԸ

Ինչպէս գրած էինք Խրուշչեւ, երկուշաբթի օր Ալպանիա հասաւ 12 օրուան այցելութեան մը համար: Յարդ յայտնի չէ այս ճամբորդութեան բուն նպատակը, բայց կը կարծուի թէ, արբանեակ եր – կիրներու զեկավարներու ժողով մը տեղի պիտի ունենայ Թիրանայի մէջ:

Հոն կը գտնուի նաեւ արեւելեան Գերմանիոյ վարչապետ՝ Գրօթվոլ:

Քաղաքական բոլոր չրջանակները մեծ կարեւորութիւն կուտան այս խորհրդաժողովի ճամբորդութեան: Խրուշչեւ պիտի տեւողի անչուշտ էնվէր Հոճայի հետ: Ցատկանշական է նաեւ որ Խրուշչեւի կ'ընկերանան բազմաթիւ անձնաւորու – թիւններ որոնց կարգին պատերազմական նախարար՝ մարեշալ Մալինովսկի: Խորհրդային պատուիրակութեան մաս կը կազմէ նաեւ կրեմլինի մահմեդական հարցերու մասնագէտը՝ Մուխիտինով:

Այս պատճառով զանազան ենթադրու – թիւններ կարելի է ընել գտնելու համար Թիրանայի հանդիպումին բուն դրդապատճառը: Ոմանք կը սպասեն որ Պալքաններու արբանեակները եւ Միջին – Արեւելքի «չէզոքավար» պետութիւնները միասնաբար պլօք մը կազմեն: Այս կարծիքը ունին անոնք որ մեծ կարեւորու – թիւն կուտան Մուխիտինովի ներկայու – թեան, եւ կը սպասեն արաբ պատասխանատուներու անմիջական ժամանումին:

Կ'ըսուի նաեւ թէ Խրուշչեւի նպատակը կրնայ չատ աւելի որոշ ըլլալ:— ցոյց տալ թէ մեծ հետաքրքրութիւն ունի Ալպանիոյ նկատմամբ եւ այս ձեւով ազդարարու – թիւն մը տալ՝ Աթէնքի, Պելկրատի եւ Հռոմի:

Ալպանիան քանի հազար քառակուսի քիլոմեթր տարածութիւն ունի եւ 1.210.000 բնակչութիւն: Միչտ բարդ հարց մը եղած է Եւրոպայի համար, քիչ անգամ կրցած է ինքնավար ըլլալ եւ միչտ զոհը դարձած է մեծ պետութեանց չահերուն:

Հաւանական կը թուի նաեւ որ Խրուշ – չեւ իր այս ճամբորդութիւնով կ'ուզէ իր «պաշտպանութիւնը» չնորհել Ալպանիոյ ընդդէմ Եուկոսլաւիոյ եւ Իտալիոյ:

—o—

ՍԸՆՏԻՑ ԹԱՅՄԶի թղթակիցին հաղորդած է կարեւոր դիտողութիւններ ստանալ Ատլնաուըրէն Պերլինի հարցին վերաբերեալ: Ըստ ամերիկեան թերթին դաշնակցային Գերմանիան ընդունած է որ արեւմտեան Պերլինը արեւելեան Գերմանիոյ հսկողութեան տակ անցնի:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

Կ. ՄԵՀԵԱՆԻ

Իմաստութեանց Ուղիով

(Հէքեաթներ եւ առանդութիւններ)

ԳԻՐՔ Ա.

ԵՕԹ ԶՐԿԵԱԼՆԵՐ

ԵՒ

ԵՕԹ ՕԺՏԵԱԼՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

30 Մայիս, Շաբաթ գիշեր, ժամը 8·30ին ՓԱՐԻԶԻ 6ՐԴ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇՐԵՂ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Place St Sulpice Métro : St Sulpice

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ՝ ԸՆԿ. ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ԿԸ ԽՕՍԻՆ՝ Պ. Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, ԸՆԿ. Կ. ՄԵՀԵԱՆ եւ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉԸ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ ՑԱՑՏԱԳԻՐԸ.—

Mlle. Guislaine de Monceau, Violon

Mlle. Gisèle de Monceau, Violoncelle

Madame Brisset, Harpiste

Պիտի նուագեն առանձին եւ միասնաբար ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻԻՆ.— Պ. ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ եւ ԸՆԿ. ՎԻԳԷՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Հայկական պարեր Հ. Յ. Դ. Նոր Սերունդի խումբին (Պաւեէօ) կողմէ:

Նուագախումբ՝ ՏԻՏԻՃԵԱՆ, երգիչ ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆ

ԵԻՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ԺԱՄԸ 11·30ԻՆ:

ORCHESTRE JEAN-CLAUDE PELLETIER

Vedette des disques Vogue

Առատ եւ ճոխ պիւֆէ: Մուտք 300 ֆրանք

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Վալանսի Շրջ. Կոմիտէի, մասնակցութեամբ՝ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Շ. Միսաքեան» խումբին:

Այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, քաղաքապետարանի թատրոնին մէջ:

Կը նախագահէ ընկերը Մ. ՊՕՅԱՃԵԱՆ:

Գեղարուեստական ճոխ բաժին Նոր Սերունդէն: Խմբերգ, մեներգ, պար, արտասանութիւն, կովկասեան պարեր Պոյաճեան եղբայրներու կողմէ:

Ճոխ պիւֆէ:

Մուտքը ազատ է:

ՀԱՄԱԶԳԱՑԻՆ ԼՍԱՐԱՆ

ՄԱՐՍԷՅԼ

Գրող, հրապարակագիր, ազգային դէմքեր՝ Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ, Գ. ԽԱՉԱԿ, Է. ԱԿՆՈՒՆԻ, ՎՌԱՄԵԱՆ:

Այս Շորեքշաբթի երեկոյ ժամը 21ին, Պոմոնի Հայ Եկեղեցւոյ սրահին մէջ:

Կը նախագահէ Պ. ՎԱՐԴԱՆ ՊԱՆՏԻԿԵԱՆ:

Կը խօսին՝ Պ. ՎԱՀՐԱՄ ՄԻՈՓԻՓ եւ ուրիշներ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս Շորեքշաբթի պիչեր, Քատէի սրահը:

Կը խօսի ՏԻԿ. ԱՑՎԱՋԵԱՆ:

Շատ այժմէական նիւթ մը՝ «Ստախօսութիւնը մանուկին մօտ»:

ԿԱՐԵՒՈՐ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻԻՆ

Ի նպաստ Լիոնի եկեղեցւոյ չինութեան կազմակերպուած վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Մայիս 31ին: Հովանաւորութեամբ Լիոնի քաղաքապետարանի կարեւոր խորհրդական եւ Ծանօթ Հայասէր ՏՈՔԹ. ՊԱՐԻՏՈՆԻ:

Նոյն առթիւ չքեղ պարահանդէս մը կազմակերպուած է: եկեղեցաչէն Տիկնանց Միութեան կողմէ: Ոչ մէկ չանք խնայուած է զայն հաճելի ժամանց մը դարձնելու ներկաներու: Տեղի պիտի ունենան խիստ զեղեցիկ անակնկալներ:

Պարահանդէս – վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Պրօնի հին քաղաքապետարանի կիզ՝ նոր եւ ընդարձակ Սէն Միշել Լաքրուա այլ անունով Լա Կլա – Նէօղի մէջ:

Այժմէն ապահովեցէք ձեր տոմսերը: Անոնք որոնք տակաւին վիճակահանու – թեան տոմսեր չունին, կրնան եկեղեցւոյ դրասենեակէն գնել:

Կով կ'ուղղենք անոնց, որոնք տոմ – սակներ ունին հաճին, անոնց փոխարժէքը ղրկել ամսոյս մինչեւ 27ը:

ՊԱՏԱՐԱԳ

Այս կիրակի, Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի: Հանդիսաւոր քառաձայն Ս. պատարագ Փարիզի Ա. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ Նորպատասխ Բաբգէն Եպիսկ. ԱՊԱՏԵԱՆ, Հայրապետական Պատուիրակ Հարաւային Ամերիկայի:

Պիտի կատարուի Հայրապետական մաղթանք:

Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Փարիզի եւ Մարսիլիոյ Թոքատի Հայր. Միութիւններու տարեկան խնջոյքը Յունիս 7ին, կիրակի կէսօրէ վերջ:

Մանրամասնութիւնները յայտնուած:

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՇՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կազմակերպուած

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ եւ ՄՈՒՐԱՏ – ՌԱՓԱՑԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԵՐՈՎ:

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ, ԺԱՄԸ 16ԷՆ ՍԿՍԵԱԼ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ, ԺԱՄԸ 20ԷՆ ԵՏՔ

Վարժարանի դալարագեղ պարտէզներու ւն մէջ:

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ

Յունիս 10ին, Շորեքշաբթի, երեկոյեան ժամը 9ին,

ECOLE NORMALE DE MUSIQUE

78, Rue Cardinet. Paris

Կը մասնակցին

ՍԻՐԺ ԳՈՒԼՕ (բամբ Ջուլթակահար)

ՄՈՆԻՔ ՄԱՔԱՆԵԼ (դաշնակահար)

Երեկոյթը նուիրուած է զերման վիպական երաժշտութեան (ՇՈՒՄԱՆ, ՊԸ – ՐԱՄՄ):

Առաջին ունկնդրութիւն ՄԱՐՍԻԼ ՏԸ ԼԱՆՈՒԱՑի վերջին մէկ գործին. Սիլվամիք:

Տոմսերու համար դիմել՝

DURAND, PLACE DE LA MADELEINE

OU MLLE. ITCHKALATZIAN, 73, FBG. POISSONNIERE, TEL. PRO. 64-23

ՅՈՒՇԱՑԵՑ�ԷՔ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Փոթորիկ խումբի ժողովը այս Հինգշաբթի իրիկուն, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱԻ ԵԻ ԿԸ ԾԱԽՈՒԻ

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ ԿԱՐՕ ԳԷՈՐԳԵԱՆԻ

1959 – Ջ. ՏԱՐԻ

640 մեծադիր էջերով, 300 հին ու նոր նկարներով եւ բազմատեսակ նիւթե – րու կարգին նաեւ Ֆրանսահայ գադութին վերաբերեալ ընդարձակ բաժինով (170 էջ):

«Ամէնուն Տարեգիրքը» հետաքրքրական հրատարակութիւն մըն է ամէնուն համար:

Հատորը կ'արժէ՝ լաթակարմը 1700 ֆրանք եւ թղթակարմը՝ 1400 ֆր.:

Դիմել՝ Փարիզի մէջ Հ. Սամուէլ, Մ. Պարսամեան եւ Հ. Բալուեան դրատուներուն եւ «Յառաջ»ի խմբագրատունը, իսկ գաւառներու մէջ՝ Տարեգրքի ներկայացուցիչներուն:

Կ'ՈՒԶՈՒԻ

Երիտասարդ հայ օրիորդ մը, կրթուած, որ պիտնայ մեքենագրել (տաֆթիլօ): Դիմել անձամբ «Յառաջ»ի վարչութեան:

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Կազմակերպուած Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Առնուվիլի մասնաճիւղին կողմէ:

27 Մայիս, Շորեքշաբթի երեկոյ, ժամը 20·30ին, Առնուվիլի Սինեմա «Իտէն»ի մէջ:

Կը ներկայացուի Ալֆորվիլի խումբին կողմէ ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ (գուարթ օրվերջիկ):

ԾԱԽՈՒ Է

Փարիզի մէջ, յարկաբաժին մը, ան – միջապէս տրամադրելի, երկու սենեակ (չատ մեծ), մուտք եւ խոհանոց, երկրորդ յարկ, չատ արեւոտ, ջուր, կազ, էլեկտրականութիւն:

Գինը երկու միլիոն՝ կանխիկ:

Դիմել՝ (ամէն օր ժամը 8 – 20, (բացի կիրակի եւ երկուշաբթի):

M. BABAYAN - CORDONIER

17. Rue Bridaine, Paris 17·

Métro Rome

ՋՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

EXPERTISE GRATUITE

Ծախելու համար

ձեր փավիյօնը, վիլլան,

յարկաբաժինը կամ խանութը:

J. TORANIAN

18, AVENUE DE L'OPÉRA

OPE 73-21 OPE 19-45

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար· 4000 ֆր·վեց·2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր·

ՀԻՆԳՇԱԲԹԻ
28
ՄԱՅԻՍ
JEUDI
28 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8403 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4304

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ընկերներ եւ հայրենակիցներ ,

Այս տարի եւս օտարութեան մէջ կը տօնենք Հայաստանի անկախութեան տարեդարձը , հեռո՛ւ մայր – հայրենիքէն :

Հարաւէն ու Հիւսիսէն փչող խորշակները 39 տարի առաջ քանդեցին մեր անկախութիւնը եւ ետքը ծովերու ափերուն վրայ նետեցին Հայութեան էկսը :

Ծանր օրեր կ'ապրի հայ ժողովուրդը անկէ ի վեր՝ հայրենիքի եւ սփիւռքի մէջ :

Երկաթէ վայրապոյր մը իրարմէ կը բաժնէ Հայութեան երկու հատուածները :

Զունինք «Ամենայն Հայոց կառավարութիւն» մը, որ տէր ու պաշտպան կանգնի տարագիր բազմութեանց :

Խորթ ու բռնակալ վարչաձեւ մը երկրին մէջ տարբերական ազատութենէն զրկած է ազատատենչ հայ ժողովուրդը : Զկո՛յ ազատութիւն մտածումի, խօսքի, մամուլի, հաւաքոյթի, երթեւեկի եւ կրօնական պաշտամունքի :

« Սոցիալիզմ կառուցանելու» պատրուակին տակ «անասատուածութեան » քարոզիչ համայնավարները առաջին օրէն իսկ փակած էին հարիւրաւոր եկեղեցիները ու վանքեր՝ բոլշեւիկեան ակումբի կամ մթերանոցի վերածելով զանոնք: Գրաւած էին եկեղեցական կալուածները եւ հալածանքի ենթարկած կրօնաւորները :

Այսօր նոյն անաստուածները էջմիածինն ու կաթողիկոսը իրենց զօրթիք կը ծառայեցնեն իրենց քարոզութենէն՝ պատակտելու հայ Սփիւռքի Հայութիւնը :

Զորս տասնեակ տարիներէ ի վեր մէկ թիզ հող իսկ չեն տալ ցուցած Հայաստանի սահմաններուն վրայ :

Իսկ Սփիւռքը 39 տարիէ ի վեր ծանր աչխատանքի է լծուած՝ յանուն ապրատահպանման :

Քանի՛ կ'երկարին ակամայ պանդխտութեան տարիները, ա՛յն – քան կը դժուարանայ հայրենադարձ Հայութեան ինքնապաշտպան – նութեան նուիրական գործը :

Ներկայ ծանր օրերուն, բոլոր հայրենասէրներու կարգախօսը պէտք է ըլլայ .

Պայքա՛ր ուծացման, ապազգայնացման և ձուլման վտանգին դէմ :

Պայքա՛ր նահանջականութեան, յուսալքումի եւ զանալքութեան դէմ, որոնք բաժինն են տակաւ հողիներուն :

Պայքա՛ր ստորադասութեան ղեկացումին եւ ստրատկմտութեան դէմ : Վերջապէս պայքա՛ր բոլոր այն կամապուրկներուն դէմ, որոնք համակերպելով «կատարուած իրողութեան», աննեղելի եսասիրու – թեամբ ձեռնթափ են եղած ամէն բանէ եւ անտարբեր զարձած հանդէպ ամէն ինչի, որ կապ ունի հայութեան անցեալին , ներկային, մանաւանդ ապագային հետ :

Ու բոլորիս վերազոյն նպատակը պէտք է ըլլայ , ներբին ճակատին վրայ՝

Միացեալ ուժերով նուիրուիլ ինքնապաշտպանութեան եւ ազգապահպանման սրբազան գործին ,

Ու ամէն բանէ առաջ նոր սերունդի փրկութեան,

Հայկական նուիրական աւանդութեանց անխախտ պահպանման :

Արտաքին ճակատին վրայ՝

Տէր կանգնիլ հայ ազգի անկորնչելի իրաւունքներուն .

Հետապնդել անվհատ, կարելի բոլոր միջոցներով, հայութեան քաղաքական արդար Դատը, աչխարհի ճակատագիրը վարելու յաւակնող մեծերուն յիշեցնելով միշտ թէ՝ հայ ժողովուրդը պահանջատէր կը մնայ՝ ցորչափ չէ վճարուած 39 տարի առաջ Սեւրի մէջ իրեն տրուած միջազգային պարտամուրհակը :

Ազատատենչ Հայութիւնը 69 տարի առաջ կեանքի կոչելով Հ· Ց· Դաշնակցութիւնը՝ անոր վստահած է իր ազգ· դատին հետապնդումը: Հաւատարիմ իր ուխտին, Հ·Ց· Դաշնակցութիւնը իր դէօչին վրայ արձանագրած է ազատ եւ անկախ հայրենիքի հանդանակը :

Ինչպէս երէկ երկրին մէջ, այսօր ալ արտասահմանի մէջ անվիկ կանգնած է հայ ժողովուրդի կողքին ,

Պաշտպանելու համար զայն ներքին եւ արտաքին ճակատներուն վրայ անոր սպառնացող բոլոր վտանգներուն դէմ ,

Եւ հետապնդելու անոր արդար դատը,

Մինչեւ որ իրականանայ իր հաւատոյ հանդանակը ,— անկախ եւ Միացեալ Հայաստանը :

Կեցցէ՛ հայ ազգը, կեցցէ՛ Հ· Ց· Դաշնակցութիւնը :

Հ.Ց.Դ. ԱՐԵՒՄՏ· ԵՒՐՈՊԱՅԻ ԿԵԴՐ· ԿՈՄԻՏԷ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԺԸՆԵՒԻ ՄԷՋ

ԴՈՒՆՓԱԿ ՆԻՍՏ ՈՒՐԲԱԹ ՕՐ

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԿԱՐՃԱՏԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ինչպէս պրած էինք, երեքշաբթի օր Ուոշինկթըն մեկնելէ առաջ Արտաքին նախարարները կարճատեւ հանդիպում մը ունեցան Ազգերու Պալատին մէջ: Հակառակ անոր որ կարեւոր հարցեր սեղան դրուեցան՝ ժողովը տեւեց հազիւ մէկուկէս ժամ :

Երկու հոգի խօսեցան միայն. Ամերիկայի Արտաքին նախարար Հերթըը եւ Արեւելեան Գերմանիոյ ներկայացուցիչ Լոթար Պոլց :

Քրիչչիըն Հերթըը մանրամասնօրէն ներկայացուց Պերլինի վերաբերեալ արեւմտեան ծրագիրը : Ամերիկացի դիւանագէտը իր բացատրութիւններուն անց նկէլ առաջ չէչտեց թէ իր ծրագիրը « վերջնական չէ». առաջարկներ՝ որոնք կրնան բարելաւուիլ կամ քնուիլ եան են թարկուիլ :

1·— Արեւմտեան ծրագրին չուրջ համաձայնութիւն գոյանալէ երկու չաբաթ յետոյ «Զորս»երը յայտարարութիւն մը պիտի ընեն, նախատեսելով .

Ա·— Մինչեւ Գերմանիոյ վերամիացումը Մեծ – Պերլինը պիտի կառավարուի երրեւ անբաժանելի ըլլան մը :

Բ·— Պերլինի Սահմանադրական Ժողովի մը ընտրութիւնները տեղի պիտի ունենան հասարակաց յայտարարութենէն վաթսուն օր յետոյ : Ժողովուրդը պիտի բաղկանայ հարիւր հոգիէ, ընտրուած՝ ազատ, գաղտնի եւ ուղղակի հանրաքուէով : Սահմանադրական խորհուրդը իր ընտրութենէն չաբաթ մը ետք ժողով պիտի գումարէ եւ վաթսուն օրուան ընթացքին պիտի պատրաստէ Մեծ Պերլինի սահմանադրութիւնը եւ ընտրական օրէնք մը, որոնք հանրաքուէի պիտի դրուին եւ ի զօրու պիտի ըլլան այն ատեն՝ երբ Պերլինի բնակիչներու մեծամասնութեան ձայնը ստանան :

2·— Երբ սահմանադրութիւնը Պերլինի բնակչութեան հաւանութիւնը ստանայ « Զորս »երը պիտի յայտարարեն .

Ա·— Սահմանադրութիւնը ի զօրու կը դառնայ :

Բ·— Քաղաքը պիտի կառավարուի այդ սահմանադրութեան տրամադրութենէն համաձայն եւ կառավարական ներկայացուցիչները ամէն իշխանութիւն պիտի ունենան, բացի հետեւեալներէն.

1)·— Զորս մեծերը իրաւունք ունին Պերլինի իրենց բանակները պահելու եւ անոնց ապահովութեան համար հարկ եղած միջոցները ձեռք առնելու :

2)·— Զորսերը մխաձայնութեամբ կըրնան չեղեալ համարել սահմանադրութեան տրամադրութենէն գործադրութիւնը՝ անոր ի զօրու դառնալէն երեսուն օր յետոյ, եթէ անհրաժեշտ ըլլայ :

3·— Զորսերը համաձայն պիտի ըլլան որ Պերլին ազատ մուտք գործուի՝ օդի, ջուրի եւ ցամաքի ճամբաներէն. այս ազատութիւնը պէտք է տրուի մարդոց, ապրանքներու եւ հաղորդակցութեան բոլոր միջոցներուն :

4·— Զորսերը Պերլինի կառավարութեան հետ պիտի կարգադրեն իրենց բանակներուն հետ կապ ունեցող բոլոր հարցերը: Պահակախումբ մը՝ կազմուած չորս երկիրներու զինեալ ուժերէն, պիտի հսկէ քաղաքին վրայ:

5·— Պերլինի կառավարութիւնը իրաւունք պիտի ունենայ գործադրելու խառն կոմիտէի բոլոր որոշումները: Պերլինի բնակիչները Գերմանիոյ օրէնք չրջանին մէջ ըլալիք ընտրութիւններուն մասնակցելու իրաւունք ունին:

6·— Գերմանական սահմանադրութեան ընդունելէն եւ գերմանական կառավարութեան մը հաստատումէն ետք՝ Պերլին պիտի դառնայ վերամիացեալ Գերմանիոյ մայրաքաղաքը:

7·— Հաշտութեան դաշնագրին ի զօրու դառնալէն ետք միայն խնդրոյ առարկայ պիտի ըլլայ օտար բանակներու հարցը :

Այնուհետեւ Հերթըը պատասխանեց կրոմիքոյի կարգ մը առարկութիւններուն:

Քուլ Տը Միւրվիլ, որ կը նախագահէր օրուան նիստին, խօսքը տուաւ Արեւելեան Գերմանիոյ ներկայացուցիչ Լոթար Պոլցի, որ երկու Գերմանիաներու միջեւ ոչ – յարձակողական դաշինքի մը առաջարկը ըրաւ :

Մրագիրը բաղկացած է 17 կէտերէ, որոնց ղեկաւորները հետեւեալներն են ·—

Վերամիացման մասին մտածելէ առաջ՝ Արեւմտեան Գերմանիա պէտք է վերաքննէ զինուորական իր քաղաքականութիւնը՝ Ատլանտեան Ուխտին հետանալով: Պէտք չէ վերազինուի :

Պէտք է ընդունի բարեփոխել տնտեսական եւ ընկերային իր վարչաձեւը՝ անհատական ճարտարարուեստը արդիլելով: Հողային բարենորոգումները, հողերու բաժանում, պաշտօնեաներու մէջէն ռազմապաշտներու մաքրագործում, զործադրութիւններու մէջ բանուորական խորհուրդներու հաստատում, եւն. :

Ինչպէս կը տեսնուի, Պոլց կ'առաջարկէ Արեւմտեան Գերմանիան դարձնել .. « ընկերվարական հանրապետութիւն» մը՝ արբանեակներու սիստեմով :

Այս պայմաններուն մէջ, միջազգային մամուլը հարց կուտայ թէ Մ· Միութիւնը ի՞նչ բան պիտի ընդունի արեւմտեան առաջարկներէն եւ ի՞նչ ձեւի բարեփոխումներ պիտի ընէ իր ծրագրին մէջ, — ինչպէս յայտարարած էր Կրոմիքօ :

Ուրբաթ օր, Արտաքին չորս նախարարները միեւնոյն օդանաւով պիտի վերադառնան Ժընեւ, ուր պիտի դումարեն դռնփակ նիստ մը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Պելժիոյ մէջ տագնապը կը չարունակուի, եւ Թագաւորին հայրը՝ Լէոփոլտ Գ· յայտարարեց թէ կը հեռանայ Թագաւորական պալատէն : Պելժիոյ մէջ մեծ զժգոհութիւն ծագեցաւ վերջերս երբ յայտնուեցաւ թէ Թագաւորին եղբայրը՝ իշխան Ալպեռ պիտի ամուսնանայ Հռոմի մէջ եւ նոյնիսկ քաղաքական պատկ պիտի չբլլայ կամ՝ Պրիւսէլի կամ առնուազն Հռոմի պելժիական դեսպանատան մէջ : Պելժիոյ քաղաքական բոլոր չրջանակները, նոյնիսկ կաթոլիկէ, դժգոհ են եւ անդամ մը եւս Լէոփոլտի եւ իշխանուհի Ռէթիի տղեցութիւնը կը տեսնեն: Այս պատճառով Պելժիոյ նախկին Թագաւորը ստիպուեցաւ անդամ եւս քաչուիլ:

ԹԻՐԱՆԱՅի մէջ Արուչչեւ յայտարարեց թէ ժընեւի մէջ « Արեւմտեաններու դիրքէն դատելով այն եղրակացութեան կուգանք թէ համաձայնելու փափաք չունին» :

ՍՈՒՐԻԱԿԱՆ « Ալ Վահատա» թերթին համաձայն Իրաքի Վարչապետ Քասըմ յօրդորաբար երկու անդամ այցելած է Դնդապետ Արէֆի, որ Փետրուարին մահուան դատապարտուած էր «դաւաճանութեան » յանցանքով : Կը կարծուի թէ Քասըմ կ'աչխատի համաձայնութիւն մը գոյացնել Նասրի համախոհ իրաքցի ազգայնականներու հետ, որոնց պարագլուխն է Արէֆ :

ԻՍՐԱՅԷԼԻ մէջ կը յայտարարեն թէ Արաբական Միացեալ Հանրապետութեան պատկանող օդեւէ նաւ՝ որ պիտի անցնի իսրայէլեան ջուրերու սահմանը՝ պիտի դրաւուի, ինչպէս կիրակի օր դրաւուեցաւ Եգիպտական նաւ մը:

ԲՈՒԻՊԱՅի մայրաքաղաքին մէջ մեծ թիւով ցուցարարներ յարձակում գործեցին համայնավար «Հոյ» թերթին խմբագրատան վրայ :

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ընկերներ եւ հայրենակիցներ ,

Այս տարի եւս օտարութեան մէջ կը տօնենք Հայաստանի անկախութեան տարեդարձը , հեռո՛ւ մայր – հայրենիքէն :

Հարաւէն ու Հիւսիսէն փչող խորշակները 39 տարի առաջ քանդեցին մեր անկախութիւնը եւ ետքը ծովերու ափերուն վրայ նետեցին Հայութեան էկսը :

Ծանր օրեր կ'ապրի հայ ժողովուրդը անկէ ի վեր՝ հայրենիքի եւ սփիւռքի մէջ :

Երկաթէ վայրապոյր մը իրարմէ կը բաժնէ Հայութեան երկու հատուածները :

Զունինք «Ամենայն Հայոց կառավարութիւն» մը, որ տէր ու պաշտպան կանգնի տարագիր բազմութեանց :

Խորթ ու բռնակալ վարչաձեւ մը երկրին մէջ տարբերական ազատութենէն զրկած է ազատատենչ հայ ժողովուրդը : Զկո՛յ ազատութիւն մտածումի, խօսքի, մամուլի, հաւաքոյթի, երթեւեկի եւ կրօնական պաշտամունքի :

« Սոցիալիզմ կառուցանելու» պատրուակին տակ «անասատուածութեան » քարոզիչ համայնավարները առաջին օրէն իսկ փակած էին հարիւրաւոր եկեղեցիները ու վանքեր՝ բոլշեւիկեան ակումբի կամ մթերանոցի վերածելով զանոնք: Գրաւած էին եկեղեցական կալուածները եւ հալածանքի ենթարկած կրօնաւորները :

Այսօր նոյն անաստուածները էջմիածինն ու կաթողիկոսը իրենց զօրթիք կը ծառայեցնեն իրենց քարոզութենէն՝ պատակտելու հայ Սփիւռքի Հայութիւնը :

Զորս տասնեակ տարիներէ ի վեր մէկ թիզ հող իսկ չեն տալ ցուցած Հայաստանի սահմաններուն վրայ :

Իսկ Սփիւռքը 39 տարիէ ի վեր ծանր աչխատանքի է լծուած՝ յանուն ապրատահպանման :

Քանի՛ կ'երկարին ակամայ պանդխտութեան տարիները, ա՛յն – քան կը դժուարանայ հայրենադարձ Հայութեան ինքնապաշտպան – նութեան նուիրական գործը :

Ներկայ ծանր օրերուն, բոլոր հայրենասէրներու կարգախօսը պէտք է ըլլայ .

Պայքա՛ր ուծացման, ապազգայնացման և ձուլման վտանգին դէմ :

Պայքա՛ր նահանջականութեան, յուսալքումի եւ զանալքութեան դէմ, որոնք բաժինն են տակաւ հողիներուն :

Պայքա՛ր ստորադասութեան ղեկացումին եւ ստրատկմտութեան դէմ : Վերջապէս պայքա՛ր բոլոր այն կամապուրկներուն դէմ, որոնք համակերպելով «կատարուած իրողութեան», աննեղելի եսասիրութեամբ ձեռնթափ են եղած ամէն բանէ եւ անտարբեր զարձած հանդէպ ամէն ինչի, որ կապ ունի հայութեան անցեալին , ներկային, մանաւանդ ապագային հետ :

Ու բոլորիս վերազոյն նպատակը պէտք է ըլլայ , ներբին ճակատին վրայ՝

Միացեալ ուժերով նուիրուիլ ինքնապաշտպանութեան եւ ազգապահպանման սրբազան գործին ,

Ու ամէն բանէ առաջ նոր սերունդի փրկութեան,

Հայկական նուիրական աւանդութեանց անխախտ պահպանման :

Արտաքին ճակատին վրայ՝

Տէր կանգնիլ հայ ազգի անկորնչելի իրաւունքներուն .

Հետապնդել անվհատ, կարելի բոլոր միջոցներով, հայութեան քաղաքական արդար Դատը, աչխարհի ճակատագիրը վարելու յաւակնող մեծերուն յիշեցնելով միշտ թէ՝ հայ ժողովուրդը պահանջատէր կը մնայ՝ ցորչափ չէ վճարուած 39 տարի առաջ Սեւրի մէջ իրեն տրուած միջազգային պարտամուրհակը :

Ազատատենչ Հայութիւնը 69 տարի առաջ կեանքի կոչելով Հ· Ց· Դաշնակցութիւնը՝ անոր վստահած է իր ազգ· դատին հետապնդումը: Հաւատարիմ իր ուխտին, Հ·Ց· Դաշնակցութիւնը իր դէօչին վրայ արձանագրած է ազատ եւ անկախ հայրենիքի հանդանակը :

Ինչպէս երէկ երկրին մէջ, այսօր ալ արտասահմանի մէջ անվիկ կանգնած է հայ ժողովուրդի կողքին ,

Պաշտպանելու համար զայն ներքին եւ արտաքին ճակատներուն վրայ անոր սպառնացող բոլոր վտանգներուն դէմ ,

Եւ հետապնդելու անոր արդար դատը,

Մինչեւ որ իրականանայ իր հաւատոյ հանդանակը ,— անկախ եւ Միացեալ Հայաստանը :

Կեցցէ՛ հայ ազգը, կեցցէ՛ Հ· Ց· Դաշնակցութիւնը :

Հ.Ց.Դ. ԱՐԵՒՄՏ· ԵՒՐՈՊԱՅԻ ԿԵԴՐ· ԿՈՄԻՏԷ

ԳԻՏՈՒՆԻ ՄԸ ՄԱՀԸ

—o—

Եւրոպական մամուլը հաղորդեց Ֆրանսական զոյգ կաճառներու անդամ Անդրէ Սիկֆրիտի մահը ալեւոր տարիքի մէջ։

Քաղաքական Գիտութեան եւ Գոլէժ տը Ֆրանսի ուսուցիչ՝ հեղինակած էր երեք մատնի մօտ ընկերաբանական, մնատնա - դիտական գործեր։ Ճամբորդած էր աշխարհի ամէն կողմ ուսումնասիրելու համար մարդիկ եւ ընկերութիւններ եւ իր բողոքեանց տակ հետազօտելու մնատնական եւ ընկերային հոլովոյթի ներքին զսպանակները։

Երկար տարիներ հետեւած էր քաղաքական ընտրութեանց եւ գծած Ֆրանսայի իւրաքանչիւր նահանգին երեսփոխան - նական ընտրութեանց մասնակցութիւնը մասնաւոր կուսակցութեանց։ Նահանգ մը աւելի պահպանողական է, նահանգ մը ընկերվարական, ուրիշ մը միշտ հաւատարիմ մնացած է արմատական կուսակցութեան։ Ընկերային ամէն երեւոյթ իր բացատրութիւնն ունենալու է, մակերեսային տեսութիւն մը կը հաստատէ երեւոյթը, առանց բացատրելու մնատնական, ընկերային խորունկ պատճառները։ Սիկֆրիտ այդ աշխատանքը կատարած է եւ կը գտնէ նահանգային նախասիրութիւններ ծրագիրներէ աւելի անձերու, թեկնածուներու որոշ նահանգներու մէջ, փոքրիկ հայրենիքի նախանձախնդրութիւններ։

Լատին ժողովուրդներ պետապաշտ են, պետութեան խնամակալութեան կ'ապաւինին, մինչդեռ անկլեւսաքսոններ պետութեան պաշտօնները կը սահմանափակեն։ Սիկֆրիտ վերադառնալով նախկին զբաղմունքներուն, պիտի հաստատէր թէ Անգլիոյ ընտրական մարմինն ալ ազատական կուսակցութիւնը լքելով, Աչխատաւորականներու յանձնեց պետութեան եւ կայսրութեան ճակատագիրը։

Գլուխ գործոցը կը համարուի «Միացեալ Նահանգները» գործը։ Արքայական Լեւոն Տոտէ դասական գործ մը կը նկատէր, լաւագոյն ուսումնասիրութիւնը, որ հրատարակուած ըլլայ Ալեքսիս Թոքվիլի «Ռամկավարութիւնը Ամերիկայի մէջ» գործէն ասդին, որ գարու մը հնութիւն ունէր։ Տոտէ զանց կ'առնէր Լորա Պրայի գործը, կը մոռնար Էմոլ Նուվել տէ Ռոշի վարիչ Փօլ տը Ռուղիէի «Ամերիկեան կեանքը» ստուար հատորը, որ խղճամիտ ուսումնասիրութիւն մըն է Լը Փլէյի դպրոցին մեթոտով։

Սիկֆրիտ Նիւ Եորքի մէջ հանդիպած է բազմաթիւ ցեղերու ներկայացուցիչներ - ուն։ Դպրոցներու մէջ աշակերտները կը կրեն ցեղային հոլովոյթի յատկանիշները։ Նախակրթարաններու մէջ յաջող են Արեւելքէն եկողներուն զաւակները, որովհետեւ յիշողական են, Արեւմտեան ժողովուրդներու զաւակները տկար կը մնան, ապագային դէպազանցելու համար իրենց դասընկերները։

Բառով մը միայն կը յատկանշէ Հայը, անկախ, անձեւ, (ամորֆ) մակդիրը կցելով զոյականին։ Պոստոյի Համալսարանին ուսուցիչը, Ալպեր Շերել, խառնուրդ ժողովուրդ մը կը տեսնէր Հայութեան մէջ, իսկ իր պաշտօնակից ընկերաբան Կասթոն Րիչար «դարաւոր հաւատարիմ ժողովուրդ» աւանդութեանց եւ բարքերու եւ որ սակայն նախնի բարքերը կը թօթափէր հայրենի հողէն դուրս հետեւելով եւրոպական յառաջացած ժողովուրդներու բարքերուն։

Ուսումնասիրած էր Սուէդ եւ Փանամա ջրանցքներու միջազգային տնտեսական եւ քաղաքական արժէքները, պետութեանց պայքարները միջազգային հաղորդակցութեանց շուրջ։

Քանի մը տարի առաջ հրաւիրուեցաւ դասախօսութեան մը Ժընեւի Համալսարանին մէջ։ Սիկֆրիտ կը գտնէր կալուխնական միջավայրը։ Ընկերաբաններու համադումարին մէջ կը գծէր եւրոպական արդի քաղաքակրթութեան յատկանիշը։ Գիտունը բնութեան զաղտնիքները կորզելու աշխատանքն ունի, անշահախնդիր է իր ձգտումը, սակայն թեճնիքը կը խլէ դիտունին աշխատանքին արդիւնքը չահախնդիր նպատակով։ Թեքնիքը կը ձգտի մարդկային կարողութիւնը բազմապատկել մեքենայով։ Մէկուն համար նպատակը միւսին համար միջոց մը դարձաւ։ «Այս դիծը սպիտակ ցեղին տուաւ դերադահութիւն, բայց փոխեց դիտութեան պայմանները։ Անշահախնդիր, ինչպէս էր Հելլէններուն մօտ, օգտապաշտ եղաւ մերօրերուն։ Մարդը սորկացաւ մեքենային առջեւ։ Թեքնիքին սահմանումն եղաւ մեթոտ մը, եղանակներ, գործնական նը պատակ մը իրականացնելու համար»։

Դասախօսին համաձայն քաղաքակրթութեան երկու ազդակներն են մշակոյթ եւ բարոյականութիւն, թեքնիքը երկրորդականն կը մնայ, որ կը սնանի դիտութեամբ։ Արդ, դիտութիւնը նիւթական պէտքերու գոհացում տալու համար է։ Տնտեսական մրցակցութիւնը արդի մարդը կը մղէ դիտութեան հետազօտութեան, թեքնիքի կատարելագործումին։ Դիտութեան թեքնիքի պաշտպաններ են համայնավարները։ Համայնավար կենսաբան Մարսել Փրլնան կը յայտնէ թէ յառաջդիմութիւնը կատարուած է թեքնիքով, որ տուաւ «կեանքի կանոն մը, հետեւանք անհատին յարմարումին բնական եւ ընկերային միջավայրին»։ Բարոյական ըմբռնումները պիտի սատկացուին թեքնիքին։

Համայնավար թեզին տկար կողմն է հոգեւոր ուժերու ժխտումը եւ հետեւաբար անդրադական բարոյականին ժխտումը։ Համայնավար հեղինակներ վարպետներէն յիշումներ կատարելով ջանացին փաստել թէ համայնավարութիւնն ալ իր բարոյականութիւնն ունի, համայնավարը կրնար աւանդական իմաստով բարոյական անհատ մը ըլլալ։ Մարսել Փրլնան կը յայտնէր թէ կրնար համայնավար քրիստոնեայ ըլլալ։ Կաթոլիկէ Էմմանուէլ Մունիէ եւ աւետարանական Շէօրրի պիտի փաստեն Անդրէ Սիկֆրիտի հետ թէ թեքնիքը բարոյական մը չի տար, թէ հոգեւորը դերադաս է նիւթականէն։ Մարքսականութիւնը մարդկային երջանկութեան հետազօտութիւնն է, բայց զանց կ'առնէ Աստուծոյ եւ նուիրականին ծանօթութիւնները եւ ամէն բան տնտեսականին եւ ընկերականին տանելով, կը պատասխանէ միայն մարդկային ձգտումներու մէկ մասին։

Գիտութիւնն ալ աւելի մասնագիտական կը դառնայ եւ դիտունը չի կրնար մատչելի դարձնել մասնագիտական ծանօթութիւնները ինչպէս Նիւտոնի ձգողութեան օրէնքը։ Գիտուններ նորագոյն ուժեր կը փնտռեն եւ ուժերու գործածութեան մէջ ջոցները կը հետազօտեն, բայց ամէն յառաջդիմութիւն չի բարելաւեր ընկերութեան բարոյական կեանքը։ Ցուսախաբ - ներ կէս ճամբան կը մնան եւ դժգոհներու զանգուածները կը խտացնեն։

Սիկֆրիտ վերջնելով բնագէտ տը Պրէյի խօսքը կը յայտարարէր թէ դիտական հետազօտութեան արդիւնքները կը խուսափին դիտուններու նպատակէն, կարելի չէ նախատեսել թէ ուր պիտի յանգի յառաջդիմութեան հետազնդումները։ Բարոյապէս դատապարտելի էր Հիրոշիմայի կործանումը, որուն պատասխանատու չէր դիտունը, հիւլէական ռումբի հեղինակը։

ԽՈՐԻՆ ԳԱԲՐԻԿԵԱՆ

ԱՐԴԻ ԹՈՒՐՔԻԱՆ
ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԸ ԱԿՆՈՑՈՎ

«ՊԱՏՐԱՆՔ Է ԿԱՐԾԵԼ, ԹԷ ԹՈՒՐՔԻԱ ԿՐՆԱՑ ԿԱՍԵՑՆԵԼ ՌՈՒՍԻԱՆ»

●

ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ 65 ԱՄ. ՀԱՐԻՒՐԸ ԱՆԳՐԱԳԻՏ Է

Ա. Մխիթեան դէմ պատրաստուած Հիւսիսային այս զինակցութեան (Պաղտատի Դաշինք) ուրիշ մէկ տկարութիւնն ալ այն է, որ Ռուսիա պարզապէս ցատկած է անոր վրայէն։ Մեր ազգային պաշտպանութեան եւ Արտաքին Օդնութեան Միջազգային Գործակցութեան միացեալ մէկ զեկոյցը կը հաստատէ, թէ 1957ին, Ռուսիա յաջողած է խախտել Միջին Արեւելքի մէջ ուժերու փափուկ հաւասարակշռութիւնը, մեծաքանակ զէնք եւ մարդիկ ուժեր ղրկելով Սուրիա, դաւեր նիւթելով նաեւ այդ երկրին ղրացիներուն դէմ։

Նախագահ Նասր փրկեց Սուրիան, խորհրդային արբանեակ մը դառնալէ, զայն կցելով Միացեալ Արաբական Հանրապետութեան, սակայն Ռուսերը այժմ Իրաքի մէջ ընել կը փորձեն այն, զոր ընել ձախողեցան Սուրիոյ մէջ։

Ներկայ պատմութեան մեծագոյն անկանոնութիւններէն մէկը այն է, թէ Ռուսերը, որոնք առաջնորդներն են համայնավար յարձակողական կայսրութեան, տիրելով մարդկութեան մէկ երրորդին, եւ աչխարհի ցամաքին մէկ չորրորդին, չեն հակակշռեր Սեւ Ծովու նեղուցները, որոնք, իրապէս, կը գտնուին Միացեալ Նահանգներու մէկ դաշնակցին հակակշռին տակ։

Այս կացութիւնը կը նմանի այնպիսի ենթադրութեան մը, ուր Ռուսիա, դաշնակից ըլլալով Քանատայի, պիտի կըրնար խարիսխներ ունենալ Սբ. Լորան գետին ստորին ափերուն, ուրկէ պիտի կրնար արգիլել ամերիկեան նաւերու երթեւեկը Մեծ Լիճերու վրայ, եւ քանդել Ուոշինկթընը, Նիւ Եորքը եւ Շիքագոն, ռմբահարկու հրթիռներով։

ԿԱՍՏՐՕՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Անգլիոյ պետական մեծագոյն գէմքերէն մէկը՝ է. Կլատսթընն, 1879ին ըսած է. «... եթէ Անգլիա գտնուէր այն դիրքին մէջ, ուր կը գտնուին Թուրքիա եւ Ռուսիա, քարտէսի վրայ... չատ հաւանաբար մենք Թուրքիան կերած պիտի ըլլայինք, դեռ չատ ժամանակ առաջ»։

Հետեւաբար, տեսակ մը պատրանք կը թուի կարծել, թէ Ռուսիա, պատերազմի մը պարագային, թոյլ պիտի տայ որ ինք բանտարկուի Սեւ Ծովու մէջ, Թուրքիոյ կողմէ։

Թուրքիոյ մէջ յաճախ լսուող ուրիշ հարց մըն ալ այն է, թէ Միաց. Նահանգները ո՞րքան կը քաջալերեն Թուրքիոյ դինուորական ծախքերը։ Երկրին վերջին տարեկան պիւտճէն է, 6·74 պիլիոն թըրքական լիրա, որմէ 605 միլիոն լիրան միայն կ'երթայ կրթական նախարարութեան։ Թուրքիոյ այս պիւտճէին մէկ չորրորդը, ուղղակի կամ անուղղակի կերպով, կը յատկացուի դինուորական նպատակներու։

Թուրքիա ունի հողային, հանքային եւ մարդկային աղբիւրներ, տնտեսական հսկայ զարգացման մը համար։ Ջունի դրամագլուխ, եւ սակայն, ամէնէն աւելի պէտք ունի զարգացնելու իր ժողովուրդը, կրթութեամբ եւ թեքնիք պատրաստութեամբ։

Ունենալով 26 միլիոն բնակիչ, Թուրքիա իր նախակրթարաններուն մէջ ունի միայն 2·274·000 աշակերտներ։ Ասոնց 42 առ հարիւրը կ'աւարտեն հինգերորդ դասարանը. տասը առ հարիւրը՝ ութերորդ դասարանը, եւ միայն երկու առ հարիւրը՝ բարձրագոյն վարժարանը։

Թուրքիոյ առեւտրական եւ արհեստից վարժարանները ունին 57·900 ուսանող, եւ միայն տասը հազար թեքնիքի բարձրագոյն վարժարաններուն մէջ։ Համալսարաններու մէջ կան երեսուն հազար ուսանողներ։ Կը հաշուուի, թէ բնակչութեան, տակաւ Ռուսերը այժմ Իրաքի մէջ ընել կը փորձեն այն, զոր ընել ձախողեցան Սուրիոյ մէջ։

Ներկայ պատմութեան մեծագոյն անկանոնութիւններէն մէկը այն է, թէ Ռուսերը, որոնք առաջնորդներն են համայնավար յարձակողական կայսրութեան, տիրելով մարդկութեան մէկ երրորդին, եւ աչխարհի ցամաքին մէկ չորրորդին, չեն հակակշռեր Սեւ Ծովու նեղուցները, որոնք, իրապէս, կը գտնուին Միացեալ Նահանգներու մէկ դաշնակցին հակակշռին տակ։

Այս կացութիւնը կը նմանի այնպիսի ենթադրութեան մը, ուր Ռուսիա, դաշնակից ըլլալով Քանատայի, պիտի կըրնար խարիսխներ ունենալ Սբ. Լորան գետին ստորին ափերուն, ուրկէ պիտի կրնար արգիլել ամերիկեան նաւերու երթեւեկը Մեծ Լիճերու վրայ, եւ քանդել Ուոշինկթընը, Նիւ Եորքը եւ Շիքագոն, ռմբահարկու հրթիռներով։

ԿԱՍՏՐՕՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Անգլիոյ պետական մեծագոյն գէմքերէն մէկը՝ է. Կլատսթընն, 1879ին ըսած է. «... եթէ Անգլիա գտնուէր այն դիրքին մէջ, ուր կը գտնուին Թուրքիա եւ Ռուսիա, քարտէսի վրայ... չատ հաւանաբար մենք Թուրքիան կերած պիտի ըլլայինք, դեռ չատ ժամանակ առաջ»։

Հետեւաբար, տեսակ մը պատրանք կը թուի կարծել, թէ Ռուսիա, պատերազմի մը պարագային, թոյլ պիտի տայ որ ինք բանտարկուի Սեւ Ծովու մէջ, Թուրքիոյ կողմէ։

Թուրքիոյ մէջ յաճախ լսուող ուրիշ հարց մըն ալ այն է, թէ Միաց. Նահանգները ո՞րքան կը քաջալերեն Թուրքիոյ դինուորական ծախքերը։ Երկրին վերջին տարեկան պիւտճէն է, 6·74 պիլիոն թըրքական լիրա, որմէ 605 միլիոն լիրան միայն կ'երթայ կրթական նախարարութեան։ Թուրքիոյ այս պիւտճէին մէկ չորրորդը, ուղղակի կամ անուղղակի կերպով, կը յատկացուի դինուորական նպատակներու։

Թուրքիա ունի հողային, հանքային եւ մարդկային աղբիւրներ, տնտեսական հսկայ զարգացման մը համար։ Ջունի դրամագլուխ, եւ սակայն, ամէնէն աւելի պէտք ունի զարգացնելու իր ժողովուրդը, կրթութեամբ եւ թեքնիք պատրաստութեամբ։

Ունենալով 26 միլիոն բնակիչ, Թուրքիա իր նախակրթարաններուն մէջ ունի միայն 2·274·000 աշակերտներ։ Ասոնց 42 առ հարիւրը կ'աւարտեն հինգերորդ դասարանը. տասը առ հարիւրը՝ ութերորդ դասարանը, եւ միայն երկու առ հարիւրը՝ բարձրագոյն վարժարանը։

Թուրքիոյ առեւտրական եւ արհեստից վարժարանները ունին 57·900 ուսանող, եւ միայն տասը հազար թեքնիքի բարձրագոյն վարժարաններուն մէջ։ Համալսարաններու մէջ կան երեսուն հազար ուսանողներ։ Կը հաշուուի, թէ բնակչութեան

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ
(ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

Իսկ յաջորդ օրը, դերասանները կը հաւաքուին համալսարանաւարտ Գէորգ Իզմիրեանի տունը եւ հիմը կը դնեն առաջին թատրոնական դեկավար մարմնին։

Այս խումբին մաս կը կազմէր նաեւ դերասան Գ. Ջմշկեանը, որ յետոյ պիտի հանդիսանար Սունդուկեանցի տիպարներուն լաւագոյն մեկնարկողը։

Եւ ահա այս ոգեւորեալ եւ խանդավառ մթնոլորտին մէջ է որ Գաբրիէլ Սունդուկեանց կը սկսի արտադրել։

Ընդարձակ է մեծ արամադրուրդին թատերա - դրական վաստակը։ Անսահման ու անծայրածիր։ Եթէ անոր արտադրութիւններուն մասին մի առ մի խօսինք, մի առ մի անդրադառնանք անոնց թատերական ու դրական անհաւասարելի արժանիքներուն, ոչ միայն ժամեր, այլ օրեր անբաւարար պիտի ըլլան.— Գիշերուայ Սաթրը խեր է, խաթաբալայ, Օսկան Պետրովիչն էն կինոիում, Եւայլն կամ նոր Դիոգինէս, Էլի մէկ զոհ, Քանդուած օջախ, Պեպօ, որ իր թատերական ստեղծագործութեանց դլուխ - գործոցը կարելի է համարել։

Ես պիտի ծանրանամ այս վերջին դործ - ին՝ Պեպոյին վրայ, որ մեզի՝ արեւմտահայերուս համար Սունդուկեանի ա - մէնէն ծանօթ մէկ գործն է։

Սակայն խօսելէ առաջ Պեպոյին մասին, հոս կը բանամ փակագիծ մը։

×

Մեծ է Սունդուկեանցի սէրը հայ բեմական լեզուի ստեղծման հարցին առջեւ։ Չուէթեամբ։ Այս հարցին վրայ կարելի է կանդ առնել, որովհետեւ Սունդուկեանցի կատարած մեծ գործին սխալ ըմբռնումը տեղի է տուած թիւր կարծիքներու։ Սունդուկեանցը իր հերոսները խօսեցուցած է, դրեթէ մեծամասնութեամբ, Թիֆլիզի բարբառով։ Ամիկա ըրած է ոչ թէ անոր համար որ Սունդուկեանց անդիտակ էր ու անկարող դրական մաքուր լեզուն գործածելու եւ այդ լեզուին արժէքը հասկնալու, այլ անոր համար, որ ան ուղած է լեզուն ծառայեցնել իրրեւ բնաւորութիւնները դրսեւորելու, յայտնուն կերպով ներկայացնելու, իր տուած տիպարը իրականութեան մէջ զոյութիւն ունեցող ձեւով պատկերացնելու միջոց։

Լեզուն, իրրեւ հասարակական հաղորդակցութեան, մարդոց միջեւ կապ պահպանող, մարդոց մտածողութիւնն ու յոյզերը արտայայտող միջոց, Սունդուկեանցը բեմ փոխադրած է այնպէս, ինչպէս այդ լեզուն եղած է կեանքի մէջ, ինչպէս հասկնալի է եղած ժամանակի ժողովրդական լայն խաւերուն համար։

Սակայն մեր դրամատուրդը իր լեզուին մէջ մեքենականօրէն չի մտցներ այն ամէնը, ինչ որ կայ խօսակցական լեզուին մէջ. ամէն մէկ գործող անձի համար անկա ընտրած է համապատասխան բառերը, եւ ոչ միայն ընտրած է, այլեւ վերամշակած, յղկած, եւ դարձուցած է աւելի արտայայտիչ եւ մինչեւ իսկ, իր գործերուն մէջ, այդ ֆրազները երբեմն հասցուցած է չափածոյի։ Սակայն, Սունդուկեանի լեզուին հիմքը՝ ժողովրդական կենդանի խօսքն է, իր հարուստ ասացուածքներով, դարձուածքներով եւ արտասանութեամբ։

Այս ուղղութեամբ, յաճախ քննադատուած է Սունդուկեանց, եւ սակայն ան, դինքը քննադատողներուն պատասխանած է թէ՝ իր հերոսները բեմին վրայ կը խօսին այնպէս, ինչպէս կը խօսէին կեանքի մէջ։

Եղած են փորձեր, կարդ մը ճարպիկ ապեկուլացիոներու կողմէ, ինչպէս պիտի ըսէր Շիրվանզադէն, թարգմանել այսինքը իր քուչօո - լօքալէն ղրկել Սունդուկեանցի կարդ մը փիէսները, ի մաս նաւորի Պէպօի, եւ զանոնք ներկայացնել այդպէս, սակայն այդ փորձերը բոլորն ալ ձախողած են եւ Սունդուկեանցի ըզմայլելի երկերը դարձած են կեանքէ ու չունչէ զուրկ ու անիմաստ բաներ։

Ի զուր են ուրեմն բոլոր ձեւերու քննադատութիւնները Սունդուկեանցի լեզուին մասին։ Այդ լեզուն, վստահ եմ որ հեղասահ կերպով պիտի հնչէ այնքան ժամանակ, որքան դոյութիւն պիտի ունենայ հայը եւ հայ թատրոնը։

Սունդուկեանցը «Պեպօ»ն աւարտած է 1870ին։ 1871ին տեղի ունեցած է անոր առաջին ներկայացումը։ Մեծ խանդավառութիւն յառաջ բերած է, «Պեպո»յի բեմադրութիւնը հասարակական լայն շրջանակներուն մէջ։ Շատ չուտով ան դարձած է ոչ միայն հայ, այլեւ վրացական եւ ռուսական բեմերու սեփականութիւնը։

Շահադործող դասակարդին եւ հալալ քրտինքով ապրող աչխատաւորին հակադրութիւնն է տուած Սունդուկեանը իր «Պեպո» յին մէջ։ Հոն կ'արտացոլայ այնպիսի էական հակամարտութիւն մը, որ կը յուղէ հանդիսատեսը։ Հոն, այդ գործին մէջ, մեծարուած է աչխատանքն ու աչխատաւորը, եւ դատապարտուած են չաքաղց կեղեքողին խարերայ էութիւնը։ Այս ամէնը պատկերացուած են այնպիսի դեղարուեստականութեամբ մը, որ փիէսին գործող իւրաքանչիւր անձին մէջ հանդիսականը կը տեսնէ ամէն օր կեանքի մէջպատահող նկարագիրներ։ Այս թատերակը կը մղէ հանդիսատեսը առելութեամբ լեցուիլ ընչաքաղց Ջիմղիմովին հանդէպ, եւ հիացումով դիտել ձկնորս Պեպոյի բողոքն ու ըմբոստացումը։

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԼԹԵԱՆ

(8 Շար.)

ՀԱՆԴԱՄԱԿԸ

9.

«Մթին եղանակ է, ես եղել եմ որևէ տեղ։ Գիշեր է, ամենքն էլ քնած են։ Գիտեմ, որ ոչ ոք չի տեսնի ինձ։ Ես ոչ մի բան չեմ անում։ Ես պարզապես ուզում եմ տեսնել, հասկանալ, թե ինչպես է ինձ հետ կատարվում։ Ինչո՞ւ եմ ես ինձ հետ տանջվում։ Ինչո՞ւ եմ ես ինձ հետ խոսում։ Ինչո՞ւ եմ ես ինձ հետ կռվում։ Ինչո՞ւ եմ ես ինձ հետ հաշտվում։ Ինչո՞ւ եմ ես ինձ հետ ...»։

«Հարավային Ամերիկա» նավի վրա։ գալուց մի քանի օր առաջ։ Ես նստած եմ իմ սենյակում, գրում եմ իմ օրագիրը։ Ինձ համար դժվար է գրել, որովհետև ես ինձ հետ խոսում եմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի խոսում։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի ուզում խոսել։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի կարող խոսել։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի ցանկանում խոսել։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի համարձակվում խոսել։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի կարողանում խոսել։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի ցանկանում խոսել։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի համարձակվում խոսել։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ինձ հետ ոչ ոք չի կարողանում խոսել։

Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու կարիք ունեմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու անհրաժեշտություն ունեմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու պարտավորություն ունեմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու պատասխանատվություն ունեմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու պատասխանատվություն եմ զգում։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու պարտավորություն եմ զգում։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու անհրաժեշտություն եմ զգում։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու կարիք եմ զգում։

Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ցանկություն ունեմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու հակում ունեմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու միտում ունեմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ձգտում ունեմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ձգտում եմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ձգտում եմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ձգտում եմ։

Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ձգտում եմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ձգտում եմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ձգտում եմ։ Ես ինձ հետ խոսում եմ, որովհետև ես ինձ հետ խոսելու ձգտում ե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

30 Մայիս, Շաբաթ գիշեր, ժամը 8·30ին ՓԱՐԻԶԻ 6ՐԴ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇՐԵՂ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Place St Sulpice Métro : St Sulpice

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ՝ ԸՆԿ. ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ԿԸ ԽՕՍԻՆ՝ Պ. Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, ԸՆԿ. Կ. ՄԵՀԵԱՆ *ԵՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ*

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ ՅԱՁՏԱԳԻՐԸ.—

Mlle. Guislaine de Monceau, Violon

Mlle. Gisèle de Monceau, Violoncelle

Madame Brisset,

Պիտի նուագեն առանձին եւ միասնաբար ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.— Պ. ԱՐՏԱՇԷՍ ԳՈՒԲԷԹԵԱՆ եւ ԸՆԿ. ՎԻԳԷՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Հայկական պարեր Հ. Յ. Դ. Նոր Սերունդի խումբին (Պաճէօ) կողմէ :

Նուագախումբը՝ ՏԻՏԷՃԵԱՆ, երգիչ ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ԺԱՄԸ 11·30ԻՆ:

ORCHESTRE JEAN-CLAUDE PELLETIER
Vedette des disques Vogue

Առատ եւ ճոխ պիւֆէ :

Մուտք 300 Ֆրանք

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՆԼԵԱՆ,
ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ

Ուրախութեամբ կը ծանուցանեն իրենց զաւակներուն՝

ԺԱՆԻՆ ՎԱՆԼԵԱՆԻ
ԵՒ
ԺՈՐԺ ՊՈՒԼՈՒԶԵԱՆԻ

ամուսնութիւնը որ կատարուեցաւ Նիսի մէջ, 1959, Ապրիլ 26ին :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ն. Պ. Հայ Սպասից Մխիթարեան Միաբանութիւնը հրաւիրում է անխտիր բոլորը ներկայ լինելու այս կիրակի, Փարիզի Հայոց եկեղեցում հոգեհանգստեան պաշտօնին, յարգելու համար յիշատակը Սարդարապատի, Բաշաբարանի, Ղարաքիլիսի եւ ուրիշ հերոսամարտերում 1918 Մայիսին, պատուոյ պաշտում ընկած հայ բանակի սպաների, ենթասպաների եւ զինուորների, որոնք Սպարապետ Նազարբէկեանի ընդհանուր հրամանատարութեամբ եւ քաջարի հայ ժողովուրդի միահամուռ ճիգերով պարտութեան մատնեցին դարաւոր թշնամու դերազանց ուժերը եւ փրկեցին հայրենիքը եւ էջմիածնի Մ. Աթոռը :

×

Ողբացեալ Տիկին Թոպուզ Ոսկերիչեանի յիշատակին (ծնեալ Զուքասըզեան) մահուան տարելիցին առթիւ, Տիրան Ոսկերիչեան, Վահրիճ եւ Վարդանոյշ Կէօքճէեան կը ծանուցանեն կսկծալի սրտով որ իրենց յաւէտ անմոռանալի կնոջ եւ զաւկին՝ ողբ. ԺԻՏՈՒՆԻ մահուան Ա. տարելիցին առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի առաւօտ Մայիս 31ին Հայ. Առաք. Մ. Ցովհ. Մկրտիչ եկեղեցին :

Իր յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ ըլլալ :

Ցաւարտ արարողութեան, այցելութիւն պիտի կատարուի հանգուցեալի դամբարանին, Սիմըթիէր Փարիզիէն տր Փան – թէն, 139րդ տիվիզիօն, 9րդ լիւեը, թիւ 7, աւթրէ տէ Փըթի Փոն :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պ. Աւոյեան Մարտիրոս, Տէր եւ Տիկ. Ասատուր Գափըճէլեան եւ իրենց զաւակները (Նիւ Եորք), Տէր եւ Տիկին Աբել Աւոյեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Անրի Աւոյեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պետրոս Աւոյեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Հայկ Տէր-Մարտիրոսեան եւ զաւակները, Այրի Տիկին Սարա Աւոյեան եւ զաւակները (Վիէն, Իզէր), Տէր եւ Տիկին Գափըճէլեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պարսեղ Գարըճէլեան եւ զաւակները (Մ. Նահանգներ), Տէր եւ Տիկին Մկրտիչ Թարայեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Աւետիսեան եւ զաւակները, Ֆաշաուրեան ընտանիք (Լիոն), Տէր եւ Տիկին Պալտասար Աատուրեան, Պ. Սարգիս Ամիրխանեան (Մ. Նահանգներ), Էչյէկեան զերզասան (Մ. Նահանգներ), Պ. Սերոբ Սահակեան (Մ. Նահանգներ), Տէր եւ Տիկին Միսաք Ա. Ամիրխանեան (Հայաստան), չնորհակալութիւն կը յայտնեն՝ ամէն անոնց, որոնք՝ անձամբ, նամակով, հեռագրով, ծաղկեպսակով եւ փոխան ծաղկեպսակի ցաւակցութիւն յայտնեցին տարաբախտ՝

ՏԻԿԻՆ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՒՈՑԵԱՆԻ
(Ծնեալ Ժողովարեան)

մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ 28 Ապրիլ 1959ին, իր կողակցին, իրենց մօր, զոքանչ մօր, հարսին, ներոջ, մօրաքրոջ եւ աղգականին :

Այս առթիւ Աւոյեան եղբարք եւ զաւակները կը նուիրեն՝ երկու հազար Ֆր. Կապոյտ Ֆաչին, երկու հազար Մշակոյթի Տան, հազար «Յառաջ»ի բարգաւաճման, երկու հազար կապոյտ Ֆաչի Վիէնի մասնաճիւղին : (Տառնալ «Յառաջ»էն) :

×

ՄԱՐՍԷյԼ.— Տէր եւ Տիկին Յակոբ Գէորգեան եւ զաւակները իրենց չնորհակալութիւնները կը յայտնեն Զարսանճագի Հայր. Միութեան Մարսէյլի եւ Լիոնի մասնաճիւղերու բոլոր անդամներուն, նոյնպէս Ամերիկայի Բէնոյի հաստատութեան տնօրէնին ու բոլոր անդամներուն : Եւ բոլոր անոնց որոնք անձամբ, գրաւոր, հեռագրով, ծաղկեպսակով եւ փոխան ծաղկեպսակի նուէրներով ցաւակցութիւն յայտնեցին իրենց սիրեցեալ եւ բիտասարդ զաւկին, եւ եղբօր ՊԵՏՐՈՍ ԳԷՈՐԳԵԱՆի անակնկալ կսկծալի մահուան առթիւ :

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Վալանսի Շրջ. Կոմիտէի, մասնակցութեամբ՝ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Շ. Միսաքեան» խումբին :

Այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, քաղաքապետարանի թատրոնին մէջ :

Կը նախագահէ ընկեր Մ. ՊՕՅԱՃԵԱՆ :

Կը խօսի ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆ

Գեղարուեստական եռոյ բաժին Նոր Սերունդէն : Խմբերգ, մեներգ, պար, արտասանութիւն, կովկասեան պարեր Պօյաճեան եղբայրներու կողմէ :

Ճոխ պիւֆէ :

Մուտքը ազատ է :

ՎԻԵՆԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին, Սէրքլը Կաթոլիկ սրահը :

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Վիեննի կոմիտէի, մասնակցութեամբ Ֆ. Կ. Խաչի, Հայ Կամ. եւ Մարտիկներու Միութեան, Հ. Մ. Ը. Մ.ի եւ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի :

Կը նախագահէ Պ. Կ. ՏԷՐՄՈՑԵԱՆ :

Գեղարուեստական խնամուած բաժին :

Մեներգ, արտասանութիւն, պարեր եւ ուրիշներ :

Կիթառի վրայ պիտի նուագէ Նոր Սերունդի երգչախումբի ղեկավար Պ. Ռուբէն Ալեքսանեան :

Առատ եւ ճոխ պիւֆէ :

Մուտքը 10 Շիլինկ :

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Հ. Յ. Դ. «Քրիստափոր» ենթակոմիտէի ընկերները կ'ողբան իրենց ընկերներէն՝ ընկեր Շաւարշ Թաշճեանի յանկարծական մահը եւ այս առթիւ ցաւակցութիւն կը յայտնեն ողբ. ընկերոջ այրին եւ ընտանիքին :

×

Վասպուրականի Հայր. եւ Երիտ. Միութիւնները իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն երկու Միութեանց անձնուէր, անխոնջ ու զործօն անդամ Օգսէն Մուրատեանին, իր մօր՝ ԱԽԹԱՄԱՄԻ մահուան առթիւ : Նոյնպէս իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն ԱԶԳԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆի եւ ՊԱՅՏԱՍ ԽԼՈՑԵԱՆի պարագաններուն, իրենց եւ Վասպուրականցիներուն կրած ծանր կորուստին առթիւ :

Երիտ. Միութեան վարչութիւնը իր խորին չնորհակալութիւնը կը յայտնէ հայրենակից Հայգազործեանի (Մարսէյլ) որ քսան հազար Ֆր. նուիրեց Միութեան բարգաւաճման համար :

×

Համա – Զարսանճագի Հայր. Միութեան Պոմոնի եւ Լիոնի մասնաճիւղերը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հայրենակիցներ Այրի Տիկին Հայկանուշ Ցարութիւնեանի, Տէր եւ Տիկին Ցարութիւն Մարտիրոսեանի, Տէր եւ Տիկին Պետրոս Նահարեանի (Վալանս), Տէր եւ Տիկին Մանուկ Իշխանեանի եւ զաւակներուն, Տէր եւ Տիկին Նազար Իշխանեանի եւ զաւակներուն, Այրի Տիկին Հասու Օհանեանի եւ զաւակներուն իրենց ամուսնոյն, հօր, աներհօր, փեսին եւ աղգականին՝ ՄԿՐՏԻՉ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆի (Զարսանճագի Մերխոյ դիւղէն) դառնակսկիծ մահուան առթիւ :

ԾԱՒՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ

Մէկ սենեակ եւ խոհանոց մը Ժանթիլի, մեթրօ Փորթ տ'Իթալիի չատ մօտիկ, անմիջապէս տրամադրելի :

Դիմել Տիկին Թաթուլեանին գրաւոր,

21, RUE JULIEN-LACROIX· PARIS - 20·

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Տիկին Օհանեանի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի, Հայ Կարմիր Խաչի Ֆէռանվիլիէի օգափոխութեան կայանին կը նուիրեն.— Տէր եւ Տիկին Պապեան երեք հազար ֆրանք, Տէր եւ Տիկին Պ. Իսկէնտէր երեք հազար, Ոմն հազար Ֆր. :

Հայ Կարմիր Խաչի օրուան առթիւ Ֆէռանվիլիէի օգափոխութեան կայանի ընդարձակման ի նպաստ կը նուիրեն.— Պ. Պ. Վ. Ֆրէնկեան, Ն. Զարեհ տասը հազարական ֆրանք, Տէր եւ Տիկին Ալեռանաք հինգ հազար ֆրանք, Պ. Պ. Խանճեան, Ձէվահիրճեան հինգ հազարական ֆրանք, Պ. Ֆրէնկեան երեք հազար, Ցովհաննէսեան երեք հազար, Ա. Ֆրէնկեան երկու հազար, Օր. Հոիփ Գարապաչեան, Տիկին Խորասանճեան, Պ. Ա. Հարենց երկու հազարական ֆրանք, Տիկ. Մեսրոպեան, Պ. Պահթիարեան հազարական ֆրանք :

ՆՈՐԵՐՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Փարիզէն Օր. Անահիտ Մանուկեան յաջողութեամբ մասնակցած է բժշկական համալսարանի ղեկավարծական ճիւղի մրցումներուն եւ ստացած է «Ներքին ղեկավարծ»ի տիտղոս :

ՆՈՒԻՐ

Տիկին Մերճանեան իր մօր ողբացեալ Մարիամ Ցովհաննէսեանի մահուան 15րդ տարեդարձին առթիւ երկու հազար Ֆր. կը նուիրէ Ֆ. Կապ. Խաչին եւ հազար Ֆրանք «Յառաջ»ի բարգաւաճման : Ֆ. Կ. Խաչի բաժինը ստանալ «Յառաջ»էն :

ՊԱՏԱՐԱԳ

Այս կիրակի, Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի : Հանդիսաւոր քառաձայն Ս. Պատարագ Փարիզի Ս. Ցովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ :

Պիտի պատարագէ եւ քարոզէ Նորապսակ Բարգէն Եպիսկ. ԱՊԱՏԵԱՆ, Հայրապետական Պատուիրակ Հարաւային Ամերիկայի :

Պիտի կատարուի Հայրապետական մաղթանք :

Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ՑՈՒՇԱՑԵՑՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Փոթորիկ խումբի ժողովը այս Հինգշաբթի իրիկուն, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին :

ՎԱԼԱՆՍ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէի ընդհ. ժողովը այս կիրակի առաւօտ ժամը 10ին, սովորական հաւաքատեղին : Ներկայ կ'ըլլայ Կ. Կ. Ներկայացուցիչը : Կարեւոր օրակարգ :

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի նպաստ Լիոնի եկեղեցւոյ չինութեան կազմակերպուած վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Մայիս 31ին : Հովանաւորութեամբ Լիոնի քաղաքապետարանի կարեւոր խորհրդական եւ ծանօթ հայազգի Տոքթ. ՊԱՐԻՏՈՆԻ :

Նոյն առթիւ չքեղ պարահանդէս մը կազմակերպուած է : Եկեղեցաշէն Տիկ – նոջ Միութեան կողմէ : Ոչ մէկ չանք խնայուած է զայն հաճելի ժամանց մը դարձնելու ներկաներուս : Տեղի պիտի ունենան խիստ գեղեցիկ անակնկալներ :

Պարահանդէս – վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Պրօնի հին քաղաքապետարանի կից՝ նոր եւ ընդարձակ սէն Միշէլ լաքրուա այլ անունով լա կլա – նէօվի մէջ :

Այժմէն ապահովեցէք ձեր տոմսերը : Անոնք որոնք տակաւին վիճակահանութեան տոմսեր չունին, կրնան եկեղեցւոյ դրասենեակէն գնել :

Կոչ կ'ուղղենք անոնց, որոնք տոմսակներ ունին հաճին, անոնց փոխարժէքը ղրկել ամսոյս մինչեւ 27ը :

ԱՄԱՌ Է

Ձեր պատրաստներու ընթացքին մի մոռնաք հանդիպիլ՝

RESTAURANT JEAN
7, Rue de la Paroisse
CHATOU (S. & O.)

Ուր պիտի գտնէք մաքուր եւ արագ սպասարկութիւն եւ ֆրանսական խնամուած ճաշացուցակ :

Ճաշարանը կը ստանձնէ նաեւ հարսանիքի, նշանախօսութեան, մկրտութեան եւ նման հանդիսութեանց սպասարկութիւնը :

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՓԱԿ Է

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար· 4000 ֆր·վեց·2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանգ: Հատը 20 ֆր·

ՈՒՐԲԱԹ
29
ՄԱՅԻՍ
VENDREDI
29 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8404 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4305

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԳԼՈՒԽ ԳԼԽԻ

Ֆոսթըր Տըլլըսի մահը — որ անակնկալ մը չէր — իր տպաւորութիւն ձգեց դի – ւանագիտական աշխարհին վրայ :

Դիմացի ճակատի քաղաքագէտները անդամ յարգանքով արտայայտուեցան լ – րենց երկրի հակառակորդին մասին :

Շատ քիչ դիւանագէտներ մխայն այն – քան համբաւի տիրացած են :

Միացեալ Նահանգներու Սահմանադրութիւնը բացառիկ լայն իրաւասու – թիւններ տուած է Հանրապետութեան Նախագահին, որ ամբողջովին իր ձեռքին մէջ կեդրոնացուցած է այդ հսկայ երկրին գործադիր իշխանութիւնը :

Նախարարները այնտեղ «քարտուղար» կը կոչուին եւ պարզապէս Նախագահին գործակատարներն են :

« Պետական քարտուղարի » պաշտօնը, որ կը համապատասխանէ եւրոպական երկիրներու արտաքին գործերու նախա - րարութեան, ամէնէն կարեւորն է եւ դի – ւանագիտական մեծ հմտութիւն կը պա – հանջէ :

Ֆոսթըր Տըլլըս «պետական քարտուղար»ի պաշտօնին կոչուեցաւ Նախագահ Այ–զընհաուըրի կողմէ եւ ամբողջ ութը տա- րի վարեց Ամերիկայի արտաքին քաղա - քականութիւնը, դժնդակ պայմաններու մէջ, մեծ ձեռնհասութեամբ :

Նախագահը բացառաբար լիակատար ա- զատութիւն տուած էր իրեն՝ վստահ ա – նոր արտակարգ կարողութեան վրայ :

Միջազգային բանակցութեանց մէջ իր քոնած վճռական դիրքը յաճախ բարերար արդիւնքներ տուած էր : Զինքը կը կոչէին արեւմուտքի Մոլոթովը :

Խորապէս ուսումնասիրած խորհրդային քաղաքականութեան հիմնական նպատակ– ները, անհաշտ եւ անզիջող էր կրէմլինի պահանջներուն հանդէպ : Երբեք չէր ազ– դուեր Խրուշչեւի սպառնական ծանուցա – դրերէն :

Հակառակ իր հիւանդագին ծանր վիճա– կին, վերջին ամիսներու ընթացքին անդ– կա ցոյց տուաւ բացառիկ կորով մը, Ուշինկթընէն թռչելով դէպի Լոնտոն, Փարիզ ու Պոն՝ քաղաքերելու եւ հաստա– տակամութեան մղելու համար արեւմտա – եան դաշնակիցները :

Խրուշչեւ անցեալ Նոյեմբեր 27ին ծա – նուցագիրը մըն էր ուղղած Մ· Նահանգնե– րուն, Անգլիոյ եւ Ֆրանսայի՝ յայտնելով որ խորհրդային իշխանութիւնները արե– ւելեան Պերլինէն պիտի քաշուին՝ իրենց իրաւունքները ձգելով Ֆերմանացինե – րուն : Ու կը հրաւիրէր դաշնակիցները, որ մինչեւ վեց ամիս իրենք ալ քաշուին :

Կրէմլինի մենատիրոջ տուած վեց ամ – սուան պայմանաժամը վերջնագրի հան – րամանք ունենալով, ազատ աշխարհը՝ Տըլլըսի ղեկաւորութեամբ խստիւ մեր – ժած էր եղած պահանջը :

Տարօրինակ զուգադիպութեամբ մը, վեց ամսուան պայմանաժամը կը լրանար Մայիս 27ին, այսինքն Ֆոսթըր Տըլլըսի յուղարկաւորութեան օրը :

Ֆանի մը օրուան համար վինաղուլ կնք– ուած է ժընեւի մէջ : Արեւպատոսի մե – ծաւորները Լէմանի ափերէն փոխադրը – ուած են Ուշինկթըն, ուր զանազան չը – փումներ ունենան : Դաշնակից նախարար– ները խորհրդակցեցան Այզընհաուըրի հետ :

Իսկ վերադարձի ճամբուն վրայ, Տը – լլըսի յաջորդը Քրիսչըն Հըրթըր եւ Կրո– միքօ նոյն օդանաւով կը ճամբորդէին : Աստուծոյ աւելի մօտ ըլլալով, յուսա՞նք որ եթերին մէջ երկուստեք համաձայնու– թեան լեզու մը գտան...

Զենք յուսահատած :

Գլուխ գլխի խօսակցութիւնները կրնան փարատել բազմաթիւ թիւրիմացութիւն – ներ : Եւ ամբարտնդել խաղաղութիւնը :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԹՆԴԱՆՕԹԻ 19 ՀԱՐՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՀՐԱՑԱՆՆԵՐՈՒ 3 ՀԱՄԱԶԱՐԿԵՐ՝ Ի ՑԱՐԳԱՆՄ ՏԸԼԼՍԻ

ԱՑԶԸՆՀԱՒՈՒԸՐ ԿԸ ՏԵՄՆՈՒԻ ԱՐՏԱՔԻՆ ԶՈՐՄ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Աշխարհի բոլոր երկիրներու ներկայա– ցուցիչները, բարեկամ թէ թշնամի, հինգ– շաբթի օր Տըլլըսի մարմինը առաջնորդե– ցին Արլինկթընի պետական տունը :

Ցուղարկաւորութեան մասնակցեցան միայն հանգուցեալին ընտանեկան պա – րագաներն ու հրաւիրեալները, — 2·818 հոգի,— մինչ միլիոնաւոր Ամերիկացիներ արարողութեանց կը հետեւէին իրենց հե– ռատեսիլներէն :

Թաղումը կատարուեցաւ զինուորական բացառիկ պատիւներով, որոնք, ընդհան– րապէս, վերապահուած են նախագահնե – րու, փոխ նախագահներու եւ ազգային հերոսներու :

Ամերիկեան բանակի վերջին հօթը ձիե– րը կը քաշէին թնդանօթի սայլակը՝ որուն վրայ դրուած էր Տըլլըսի դագաղը :

Զինուորական նուագախումբ մը արա – րողութեանց ընթացքին կը հնչեցնէր մա– հերգը : Արտաքին նախկին նախարարին դագաղը վերեւման իջնելէ առաջ՝ թնդա– նօթի 19 հարուածներ եւ հրացաններու ե– րեք համազարկեր վերջին յարգանք մը մատուցին մեծ Ամերիկացիին՝ մինչ ա – մերիկեան աստղազարդ դրօշը խոնարհած էր, իբրեւ սուգի նշան :

Նախագահ Այզընհաուըր, յանուն բոլոր Ամերիկացիներուն, վերջին հրաժեշտ մը տուաւ պետական հուշակաւոր մարզուն եւ իր հին բարեկամին, որմէ հետ ցաւակ – ցութիւնները ներկայացուց Տիկին Տըլը– սի : Նախագահին կողքին կը գտնուէին փոխ – նախագահ Նիքսըն, Ֆրանսայէ, Մ· Միւռֆեան, Անգլիոյ եւ Միացեալ Նա– հանգներու Արտաքին նախարարները, Վարչապետ Ատընաուըր, Մ·Ա·Ք ընդհա – նուր քարտուղար Համըրշոլտ, Ատլան – տեան Ուխտի ընդհանուր քարտուղար Սփաք, Իտալիոյ Արտաքին նախարար Փելլա եւ բազմաթիւ ուրիշներ, որոնք ի– րենց կարգին ցուցակագրութիւնները յայտ – նեցին Տըլլըսի այրիին :

Ցուղարկաւորութեան յաջորդ օրը, Հինգշաբթի, Նախագահ Այզընհաուըր ընդունեցաւ Արտաքին Գործոց-նախարարնե– րը, որոնց հետ խորհրդակցութիւն մը ու– նեցաւ հրատապ հարցերու շուրջ : Ինչպէս գրած էինք, «Ցորս»երը ժընեւի իրենց աշ– խատանքները ընդհատելով ղացած էին Ուշինկթըն եւ այսօր, Ուրբաթ, կը վե– րադառնան իրենց աշխատանքին՝ միեւ – նոյն օդանաւով :

ՊԵՐԼԻՆ, ՏԸԼԼՍ ԵՒ ԽՐՈՒՇՉԵՒ

Զուգադիպութեամբ մը՝ որ չատեր խորհրդանշան մը կը նկատեն, Տըլլըսի դագաղը վերեւման իջաւ Մայիս 27ին, այսինքն այն օրը՝ որ Խրուշչեւի կողմէ որոշուած էր վեց ամիս առաջ՝ խորհր – դային ծրագիրները Պերլինի մէջ գործա– դրութեան դնելու համար :

Այսօր, վերջնագրի հարց պայութիւն չունի :

Մայիս 27ը Պերլինի մէջ անցաւ սովո– րական օրերուն պէս :

Նոյնիսկ Խրուշչեւ յարգանքի իր բա – ժինը բերաւ այն մարդուն՝ որ իր ամէնէն կատաղի հակառակորդը եղած էր : Արդա– րեւ, Խ· Միւռֆեան Վարչապետը յայտա– րարեց .— « Ընկերներ, պիտի ուզէի այս առիթով իմ անկեղծ ցաւակցութիւնները յայտնել ամերիկեան կառավարութեան՝ Տըլլըսի մահուան համար ... Մենք Տը – լլըսի հակառակորդներն էինք՝ հիմնական տարբերու մէջ : Այսուհանդերձ, իրողու – թիւն է այն պարզապէս, որ իր քաղաքա– կանութիւնը կարեւոր փոփոխութիւն – ներ կրեց՝ երբ ան Միկոյեանի հետ խո – սած պահն ընդունեցաւ թէ Արեւելեան Եւրոպայի մէջ համայնավարութեան դէմ պայքարելով արդիւնքի մը պիտի չհաս – նին » :

Վերջապէս, անդրադառնալով Տըլլըսի քաղաքական արժէքին, Խրուշչեւ զայն կոչեց «քաղաքական մեծ մարդ մը, որ , իր դասակարգին շահերը պաշտպանելով հանդերձ, վերջին ամիսներու ընթացքին ցոյց տուաւ թէ առողջ դատողութիւններ ունի միջազգային կացութեան շուրջ » :

Ամէն պարագայի մէջ, կացութիւնը չէ փոխուած Պերլինի մէջ : Միկոյեան եւ Խրուշչեւ իրենց յարգանքի բաժինը բերին Տըլլըսի, ճիշդ այն օրը՝ երբ պիտի յայտարարէին թէ ի զօրու պիտի դառնայ իրենց ծրագիրը՝ Պերլինի մէջ :

Միւս կողմէ, Ամերիկայի Արտաքին նախարար Հերթըր պաշտօնապէս յայտա– րարեց թէ ձեռ Ֆոսթըր Տըլլըսի քաղաքա– կանութիւնը պիտի շարունակուի : Հան – դուցեալ դիւանագէտը իր թեւաղրու – թիւններով ուղղութիւն կուտար իր յա – ջորդներուն՝ Ուոլթըր Ռիսի հիւանդա – նոցէն : Այսօր, երբ կը հանդիպի Արլինկ – թընի վերեզմանատան մէկ բլուրին վրայ՝ իր անունն ու զաղափարները խորհր – դանշան մը դարձած են Միացեալ Նա – հանգներու Արտաքին նախարարութեան մէջ եւ հաւանական չէ որ ամերիկեան դիւանագիտութիւնը փոփոխութիւններ կրէ Հերթըրի դիւաւորութեամբ : Ար – տաքին նոր նախարարը Տըլլըսի ամէնէն վայլուն «աշակերտ»ներէն մէկն էր եւ կը բաժնէ անոր կարծիքները :

ԽՐՈՒՇՉԵՒ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ...

Ալպանիոյ մայրաքաղաք Թիրանայի մէջ ճառ մը խօսելով, Վարչապետ Ռը – բուչչեւ յայտարարեց .— «Այնքան ալ կարեւոր չէ թէ ուրկէ պիտի մեկնին մեր հրթիռները· Ալպանիայէն, Պուլկարիա – յէն, կամ ուրիշ երկրէ մը : Այդ որոշու– մը պիտի տանք մենք մեր մէջ, որովհե– տեւ հաղարաւոր քիլոմեթրերէ Թիրանա – ներ ռմբակոծելու կարող հրթիռներ ու – նինք » :

Հասկնալով՝ թէ Ալպանիոյ եւ Պուլկա– րիոյ մէջ հրթիռներու արձակարաններուն հաստատումը հաւանական է, Խրուշչեւ չէշտեց թէ փոքր հրթիռներն ալ բաւական են ռմբակոծելու համար իտալական հո – ղամասը՝ ուր Ամերիկացիները արձակա– րանները կը զետեղեն :

« Իրաւունք չունի՞մ, ընկեր Մալինո – վըսքի», — հարցուց Խրուշչեւ Պատերազ– մական նախարարին, որ իր կարգին ան – միջապէս պատասխանեց· «Շա՛տ ալ լաւ իրաւունք ունիք » :

Այնուհետեւ Խրուշչեւ չարունակեց իր ճառը, աւելցնելով թէ Իտալիոյ մասին իր ըսածները ի զօրու են նաեւ Ցունաստանի համար : Վերջապէս, եզրակացուց .— « Կ'ուզեմ որ Պալքաններէը խաղա– ղութեան զօտի մը ըլլան, առանց հրթիռ– ներու կամ ջրածին զէնքերու : Ասիկա չատ օգտակար պիտի ըլլայ յոյն եւ իտա– լացի ժողովուրդներուն, ինչպէս նաեւ պալքանեան բոլոր ժողովուրդներուն հա – մար : Մենք պիտի աշխատինք երկրա – դունդը ապատել հիւլէական զէնքերէ, ինչ որ մեծ մխիթարութիւն մը պիտի ըլլայ բովանդակ մարդկութեան համար» :

Մինչ այս մինչ այն կը յայտարարուի թէ համայնավար Չինաստանի Պատերազ– մական նախարար Թէ – Հիւէ Թիրանա գացած է, վեց օրուան համար : Կը կար – ծուի թէ արբանեակ երկիրներու համա – դումար մը պիտի ըլլայ Ալպանիոյ մէջ :

ըլլըսի հակառակորդներն էինք՝ հիմնական տարբերու մէջ : Այսուհանդերձ, իրողու – թիւն է այն պարզապէս, որ իր քաղաքա– կանութիւնը կարեւոր փոփոխութիւն – ներ կրեց՝ երբ ան Միկոյեանի հետ խո – սած պահն ընդունեցաւ թէ Արեւելեան Եւրոպայի մէջ համայնավարութեան դէմ պայքարելով արդիւնքի մը պիտի չհաս – նին » :

Վերջապէս, անդրադառնալով Տըլլըսի քաղաքական արժէքին, Խրուշչեւ զայն կոչեց «քաղաքական մեծ մարդ մը, որ , իր դասակարգին շահերը պաշտպանելով հանդերձ, վերջին ամիսներու ընթացքին ցոյց տուաւ թէ առողջ դատողութիւններ ունի միջազգային կացութեան շուրջ » :

Ամէն պարագայի մէջ, կացութիւնը չէ փոխուած Պերլինի մէջ : Միկոյեան եւ Խրուշչեւ իրենց յարգանքի բաժինը բերին Տըլլըսի, ճիշդ այն օրը՝ երբ պիտի յայտարարէին թէ ի զօրու պիտի դառնայ իրենց ծրագիրը՝ Պերլինի մէջ :

Միւս կողմէ, Ամերիկայի Արտաքին նախարար Հերթըր պաշտօնապէս յայտա– րարեց թէ ձեռ Ֆոսթըր Տըլլըսի քաղաքա– կանութիւնը պիտի շարունակուի : Հան – դուցեալ դիւանագէտը իր թեւաղրու – թիւններով ուղղութիւն կուտար իր յա – ջորդներուն՝ Ուոլթըր Ռիսի հիւանդա – նոցէն : Այսօր, երբ կը հանդիպի Արլինկ – թընի վերեզմանատան մէկ բլուրին վրայ՝ իր անունն ու զաղափարները խորհր – դանշան մը դարձած են Միացեալ Նա – հանգներու Արտաքին նախարարութեան մէջ եւ հաւանական չէ որ ամերիկեան դիւանագիտութիւնը փոփոխութիւններ կրէ Հերթըրի դիւաւորութեամբ : Ար – տաքին նոր նախարարը Տըլլըսի ամէնէն վայլուն «աշակերտ»ներէն մէկն էր եւ կը բաժնէ անոր կարծիքները :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Պէյրութէն կը հաղորդեն թէ արտա – քին նախկին նախարար եւ Մ.Ա.Ք նախա– գահ՝ Շառլ Մալիք զրաւոր պատասխա– նած է Լիբանանի խորհրդարանին կողմէ իրեն եղած հարցապնդումներուն : Ծանօթ է թէ Մալիք այցելելով Նիւ Եորքի մի – ջազգային ժողովաճաղը, Իսրայէլի տա– զաւարեն մէջ Իսրայէլի կենացը խմած էր : Մալիք կ'ըսէ թէ այս ժողովաճաղը այցելած ժամանակ, ինք՝ Մ.Ա.Ք կը ներ– կայացնէր եւ ոչ թէ Լիբանանը : Կ'աւելցնէ թէ երբ իրեն զաւաթ մը առաջարկուեցաւ, չէր գիտեր թէ Իսրայէլի տա – զաւարեն մէջ կը գտնուի եւ երբ անդրա– դարձած է՝ մեկնած է առանց հրաժեշտ առնելու :

Գահիրէի մէջ բացուեցաւ աշխարհա – կալութեան դէմ պայքարի համաժողովա – րին հերթական կոմիտէին նիստը : Ներթը երկիրներու պատկանող պատուիրակին – րուն մէջ կը նկատուի Քլօտ Պուրտէի (Ֆրանսա), Վիորթվիքի (Նուկոսլաւիա), Լուճաթոյի (Իտալիա), Փուլիփուլոսի (Ցունաստան) ներկայութիւնը :

ԻԶվԵՍՏԻԱՅԻ (Մոսկուա) խմբագրա – պետ նշանակուեցաւ Ադժուպէյ, Խրուշ – չեւի փեսան : Նախապէս խմբագրապետն էր Կոմսոմոլսկայա Փրաւտայի (երիտա – սարդ համայնավարներու պաշտօնաթեր– թը) :

Գահիրէի լաւատեղեակ աղբիւրներու համաձայն Նասը նամակ մը պրած է Իրաքի չարչապետին, որպէս զի սիասին պայքարին համայնավարներուն դէմ՝ Իրաքի եւ Միջին Արեւելքի մէջ : Դասալ ցարդ չէ պատասխանած այդ նա – մակին : Հարկ է նկատել թէ վերջերս հա– կա – իրաքեան պայքարը զաղրած է Ա. – րաբ Միացեալ Հանրապետութեան մէջ եւ մանաւանդ Քասըմի դէմ այլեւս ոչ մէկ յարձակում կայ Գահիրէի ձայնասփիւռին կողմէ :

90 ՋԱՆԱՋԱՆ երկիրներու պատկանող 550·000 զբօսաշրջիկներ Խ· Միութիւնը այցելած են 1958ի ընթացքին : 740·000 Ռուսեր ալ 60 օտար երկիրներ այցելած են :

ՍՈՒՏԱՆԷն կը հաղորդեն թէ համայ – նավար կուսակցութեան 24 ղեկավարներ ձերբակալուած են :

ՄՈՍԿՈՒԱՅի մէջ, Արժանթինի դես – պանատան մէկ ընդունելութեան ընթացքին Ա· Միկոյեանի հարց տրուած է թէ ի՞նչ կը մտածէ Փասթերնաքի Տոք·Ժիվա– կօ վէպին մասին : Միկոյեան պատասխա– նած է .— «Կարդացած եմ, չատ հետա – քրքրական չէ, չատ դէշ ալ չէ, բայց բա– ւականաչափ դէշ է» : Երբ իրեն հարց տրուած է նաեւ թէ ինչո՞ւ դիրքը լոյս չէ տեսած Խ· Միութեան մէջ որպէսզի հու– սերը իրենք կարենան կարծիք կազմել, Միկոյեան ըսած է .— «Որովհետեւ այդ դիրքը կ'անուանարկէ ռուս ժողովուրդը» :

ԻՍՐԱՑԷԼԵԱՆ հալածիչէ մը հետապն– դուելով, Լիբանանեան ամբարձակ թեթեւ օդանաւ մը ստիպուեցաւ պարտադիր էջք կատարել Հայֆայի օդակայանը :

ԼՈՆՏՈՆի խորհրդային դեսպանատան նաւային կցորդին կինը՝ Նինա Տիմիթ – րիեւ, որ Կիրակի օրուընէ ի վեր հինգ տարեկան իր աղջնակին հետ անհետացած էր, քաղաքական փախստականի ապաս – տան խնդրեց բրիտանական կառավարու– թենէն : Իսկ նաւային կցորդը՝ Տիմիթ – րիեւ, Մոսկուա վերադարձաւ :

ԱԼԺԵՐԻՈՅ եւ Թունուզի սահմանին վրայ ծանր բախումներ պատահեցան բա– նակին եւ ըմբոստներու զօրաւոր խումբի մը միջեւ : Վեց զինուորականներ սպան– նուեցան եւ 11 ուրիշներ վիրաւորուե – ցան : 32 ըմբոստներ սպանուեցան :

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴի որոշումով Ալժերիոյ եւ Մայր երկրին մէջ նոյն դը– րամները պիտի գործածուին :

ԼԵԶՈՒԱԿԱՆ

"ՈՒՄ" ՈՒ "ԿՈՐ"

ՀԱՅԵՑԻ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ

Գ.

Եօթը տարի եաքը՝ հարիւր տարեկան կ'ըլլայ Քերականութեան ղերք մը, որ լոյս է տեսած Վիէննայի Մխիթարեան Միաբանութեան տպարանէն, 1866ին,— « Քննական քերականութիւն աշխարհա – բար կամ արդի հայերէն լեզուի »: Հոյա – կապ եւ անմահ ղործ: Հեղինակը Հ. Ա – սէն Այտընեան :

Հարիւր տարեկան, բայց առոյղ եւ ի – մաստուն, ընդմիշտ առաջնորդ հայ լեզ – ուի ուսման:

Այս գործին մէջ, էջ 98, կը կարդանք·

— « Սահմանական ներկային եւ ան – կատարին վերջին ծայրը կոր մասնիկ դր – ուելով՝ կը ցուցընէ թէ գործողութիւնը դեռ կը չարունակուի, կամ թէ հիմակ ըլ – լալու վրայ է, եւ նոյն է տաճկերէնն յօր մասնիկան հետ: Օրինակ· կը մեռնի (տաճկերէն էօլիւր), կը մեռնի կոր (տաճկերէն էօլիւյօր): Կ'ելլէր (տաճկե – րէն չիգար ըտր), Կ'ելլէր կոր (տաճկե – րէն չիգայօր ուտու), որ նշանակութեան կողմանէ չատ տարբերութիւն ունի: Բայց հիմա դրաւորի մէջ այդ մասնիկը չատ քիչ կը բանի: Վերջին դարերուս մէջ տաճկերէն յօր մասնիկը հայացած մտած է լեզուին մէջ, որ գաւառականի մէջ ա – ւելի բացայայտ մնացեր է, կ'ուզէյօր»:

Նոյն Քերականութեան մէջ, էջ 208, կը կարդանք·—

« Սահմանական բուն ներկայ եւ անկա – տար, (այսինքն սկսուած եւ դեռ չվճռացած գործողութիւն ցուցընող ժամանակ), տաճկերէն լեզուն ունի, որուն վրայ ձեւ – ուած է մեր ռամկօրէնը՝ կը խաղան կոր, կը խաղային կոր, եւ մէկ երկու եւրոպա – կան լեզուներ »:

Ձեմ գիտեր թէ կ՞ոյ մէկը, որ աւելի կանուխ չայտնած ըլլայ նոյն այս կար – ծիքը: Բայց տեսայ թէ քանի տարի ետ – քը, Զայրխեան վարդապետին Քերակա – նութեան մէջ (տես Թ. տպագրութիւն, էջ 366), Այտընեան դարձեալ կը կրկնէ իր կարծիքը ·—

« Սահմանական ներկային եւ անկատա – րին կրկին նշանակութեան որոշ զանազա – նութիւնը միայն տաճկերէն լեզուն ունի· Ուչայօր եւ ուչար, կէլիյօր ուտու եւ կէլիր իտի, որմէ մեր ռամկօրէնին ան – ցած է կոր յետադաս մասնիկը»:

Ի՞նչ հարկ այլեւս մեղադրելու Ցովհ· Գաղանճեանը, որ նոյն կարծիքը կը չայտնէ իր Քերականութեան մէջ (տպ· Պոլիս, էջ 184) ·—

« Կոր մասնիկը սահմանական ներկայ եւ անկատարի ձեւերուն յետադասուելով բուն ներկայ ժամանակ չինելու կը ծա – ռայէ, օրինակ՝ կ'երթամ կոր, եւ երբեմն առանց կրի՝ երթոր բայը բաղաձայնով կը սկսի, ինչպէս գրեմ կոր, կարդայի կոր: Այս կորը փոխառութիւն է թուր – քերէնէ, որուն ներկայակերտ յորին հա – ցացած ձեւն է· օրինակ՝ կիտիյոր = կ'երթայ կոր: Կորի գործածումը աւելի չատուկ է խօսուած լեզուին եւ քիչ ան – դամ կը կիրարկուի գրական լեզուի մէջ: Բայց պէտք չէ խուսափիլ գործածելէ՝ երբ իմաստի պայծառութեան հարկը կը պահանջէ որ գործածուի »:

Կարելի է ներել Այտընեանին՝ իր հա – րիւր տարիներուն համար: Իսկ Գաղան – ճեանին՝ իրրեւ ... անչափահաս: Բայց ի՞նչ ըսել Ագառեանին, որ կը կրկնէ նոյն կարծիքը, փոքրիկ սրբագրութեամբ մը·—

« Յոր միեւնոյն է ինչ որ տաճկերէնի յոր մասնիկը, որի վրայ մեր սահմանա – կանի կ մասնիկն աւելցնելով ձեւացել է կոր, ճիշդ ինչպէս որ Համչէնում ունի մասնիկի վրայ աւելացնելով՝ նոյնը դար – ձել է կունի (տեսնել Հայոց լեզուի պատ – մութիւն, Բ. հատոր, էջ 290):

Ագառեանի գործը ուսումնասիրողները դիտած պէտք է ըլլան թէ երբեմն կը պակսի տեսակէտի միութիւնը, ծաւալուն իր ժառանգին մէջ մնացեր են երեսա – սարդական օրերու կարգ մը պրպտում – ներ, առանց վերաքննութեան ենթար – կուելու՝ հասունութեան մէջ: Դժուար է այլ ձեւով բացատրել թերաճ տեսութիւն – ներ: Մանաւանդ հանդիսութիւններու վը – րայ ձեւուած ուսուցչանական եղրակա – յութիւնները:

Կորը թրքացնել՝ կը նշանակէ թելադրել ... ուրիշ թրքացումներ: Կիտի – յոր–ում բառին մէջ, ըստ հանդիսութեան, վեր – ջընթեր վանկը կը կանչէ մեր ռամը՝ հա – կառակ միւսոնին: Այսինքն, կորէն եաքը՝ նաեւ ռամը: Այսպէս, Ագառեան կը չա – րունակէ ·—

« Հայերէնը պիտի մի տեսակ սահ – մանական ներկայ եւ մի տեսակ անկա – տար, ինչպէս նաեւ հին ու նոր եւրոպա – կան լեզուները· այսպէս պրտաբար սիրեմ, սիրէի, արեւմտեան գրական կը սիրեմ, կը սիրէի, արեւելեան գրական սիրում եմ, սիրում էի: Թուրքերէնը (ինչպէս եւ արդի անմլերէնը) զանազանում են եր – կու տեսակ ներկայ եւ անկատար, — մէկ – կի մէջ գործողութիւնը ընդհանուր է, իսկ միւսը՝ միմիայն այս րոպէի համար: Երկրորդը կարող ենք կոչել չարունակա – կան ներկայ կամ անկատար, առաջինը՝ բուն ներկայ կամ բուն անկատար: Այս – պէս թուրքերէն եէրիմ = կ'ուտեմ, (ա – րինակ՝ ձուկ կամ միս կ'ուտեմ, ընդ – հանրապէս ուտելու սովորութիւն ունիմ), բայց եէյորում = ուտում եմ, (այս վայր – կեանիս նստած ուտում եմ, ուտելու գործողութեան մէջ եմ): Թուրքերէնի օ – րինակով՝ ներկայի եւ անկատարի այս երկրորդ ձեւն էլ հնարուեց ու մտաւ հա – յերէնի մէջ» (Նոյն տեղը, էջ 289):

Այստեղ, Պ. Անդրանիկ Բաբերդեան կրնայ ըսել ինձ ·— Այժմ ձգէ օձիքս, դնա բռնէ Ագառեանի օձիքը, քանի որ ան ալ կը կարծէ թէ ...ում ձեւը հայերէն լեզուի մէջ մտած է «թուրքերէնի օրինա – կով »:

Ըսի, չէ՞, արեւմտահայերէնը կորը թուրքերէն յօրէն հանելէ եաք՝ դժուար չէր արեւելահայերէնի սիրում եմ խո – նարհման ձեւը կապել սէվիյօրում թրքա – կան ձեւին:

Ներողութի՛ւն, չ՛ոտ են ումին սիրա – հարները, նոյնիսկ տէր կանդնողները: Ինչպէս Ղազարեան կը պրէ, «լեզուաբա – նական գրականութեան մէջ արտայայ – տուած է այն կարծիքը թէ հայերէնի ում ածանցը փոխառուած է ... քարթվելա – կան լեզուներից» (Հայոց լեզուի համա – ոտ պատմութիւն, էջ 348, տես եւ 351):

Թուրքերէնէն եաքը՝ ահա բազմաթիւ պնորդներ, եթէ կ'ուզէք՝ դիակապուտ – ներ, — քարթվելական լեզուները:

Բայց ո՛րքան հրապուրիչ է այս ումը, որ այսքանով չի վերջանար կռիւը: Մեզ – մէ կ'ուզեն կորզել ոչ միայն գերբայա – կան այս ածանցը, ում, այլեւ տրականի հոլովաձեւը, ում, (յատկիկային պի – տի բացատրեմ ումին ծագումը, խոնարհ – ման եւ հոլովման նոյն ածանցին ապա – կցութիւնը): Այս անգամ, «գերմանական, բալթեան եւ սլաւոնական լեզուներն են » ու կը խօսին իրենց սեփականութեան մա – սին ումին վրայ (Նոյն տեղը, էջ 349):

Այսպէս, մատ՛ղ դարձած է արեւելա – հայերէնի ումը: Ուղղը չ՛ոտ, բարե – բախտաբար տուողը քիչ :

Մե՛րն է ումը,— հայեցի եւ հարազատ: Ոչ Թուրքին կուտանք, ոչ ալ Քարթվե – լացիներուն :

Մեկէ ումը կը տանի մինչեւ նախա – դրաբարեան շրջանը: Ուրիշներ՝ մինչեւ Ե. դար: Գերմանեւհայկական ուսումնա – կան թերթի մը աշխատակիցը՝ մինչեւ Ժ. դար: Հայաստանի երիտասարդ լեզուա – բաններն, իրենց կարգին՝ կը մերժեն «քարթվելական ծագում» տալ ումին, իսկ խօսքն անգամ չեն ըներ Թրքական ռեփականութեան :

Պիտի տամ բոլոր այդ տեսակէտները եւ պրպտումները:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ԱՐԴԻ ԹՈՒՐՔԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՑԻԻ ՄԸ ԱԿՆՈՑՈՎ

ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ԱՊՐՈՒՍՏԸ ՍՂԱԾ Է ՔԱՌԱՊԱՏԻԿ 1948Էն Ի ՎԵՐ

●

1947, 1948 եւ 1949 տարիներուն, Թուր – քիոյ արտածումները հասան ներածում – ներու արժէքին հարիւրին 82ին: 1955, 1956, եւ 1957 տարիներուն, արտածում – ները կը կազմէին միայն 74 առ հարիւրը ներածումներուն: Վերջին տարիներուն, Թուրքիոյ առեւտրական հաշուեկշիռին բացը եղած է, տարեկան մօտ հարիւր միլիոն տոլար, այս տարի այդ բացը պի – տի ըլայ աւելի քան երկու հարիւր միլիոն տոլար, Օղոստոսին խոստացուած արտա – քին նոր վարկերուն հետեւանքով :

Թուրքիա, Միացեալ Նահանգներէն օգ – նութիւն ստանալով, կը բարձրացնէ՝ իր ժողովուրդին տնտեսական վիճակը: Թուրք դիւղացիները, ըստ երեւոյթին բարելաւուած են, օգտուելով նոր չին – ուած ճամբաներէ, արտածման քաջալե – րանքէն, տուրքերու թեթեւացումէն, եւ չաքարի պետական գործարաններէ, ո – րոնք կը գնեն անոնց արտադրութիւննե – րը: Անկասկած սակայն, քաղաքային բը – նակչութեան ապրուստի մակարդակը վը – նասուած է, դրամին անկման հետեւան – քով :

Թուրք պետական վիճակագրութեանց համաձայն, 1948էն մինչեւ 1958, տաս – նամեակի մը ընթացքին, կեանքը սղած է հարիւրին հարիւր համեմատութեամբ: Սակայն, անկարելի է դնել Թուրք մը, որ պետական պաշտօնեայ չըլլայ, ու հա – ւատայ այս վիճակագրութեան: Թուրք պետեր, պանդոկի ծառաներ եւ ընդդիմա – դիր կուսակցութեան առեւտրականներ, խմբագիրներ, բանակի զօրավարներ վըս – տահեցուին այս տողերը գրողը, թէ 1948էն ի վեր, ապրուստը սղած է ոչ թէ կրկնապատիկ, այլ եռապատիկ չափով : Ու զանազան դիներ կը յիշեն, իրենց պն – դումը հաստատելու համար :

Իսթանպուլի մէջ առեւտրական մը, որ տարիսը 3600 թրքական լիրա կը ստանայ, ամուսնական մը, որ չատ բարձր է Թուրքիոյ համար, կը վճարէ 1500 լիրա երկու նըն – ջասենեակով չարկաբաժնի մը համար. դոր սակայն, 1948ին, կը վարձէր միայն հինգ հարիւր լիրայով: Իր այս վճարած վարձքը աւելի է քան այն ամսականը, դոր կը ստանայ պետական պաշտօնեայ մը, նախարարէն անմիջապէս վար աստի – ճանով: Այդ առեւտրականը ըսաւ տողերս դրողին, թէ իր 3600 լիրայի ամսականով, ինք եւ իր կինը, կրնան ամիսը միայն մէկ անդամ դուրս, ճաշարան երթալ :

1948ին, դերճակի մօտ կարուած հա – դուստ մը, անդլիական լաւագոյն ապ – րանքով, կ'արժէր երեք հարիւր լիրա· այժմ կ'արժէ 1500 լիրա: 1948ին, ամէնէն աժան ձեռք մը հագուստը կ'արժէր 60 լիրա· այժմ կ'արժէ երեք հարիւր, որ հասարակ բանուորի մը ամբողջ ամսական չահածն է, մօտաւորապէս: 1948ին, զոյգ մը լաւ չինուած կօշիկը կ'արժէր երեսուն լիրա· այժմ, հասարակ կօշիկը կ'արժէ 90 լիրա: Նոյնիսկ ամէնէն աժան կօշիկը, ներբանը քաուչու կամ փլաստիք, կ'ար – ժէ չիսուն ոսկի, հինգ օրականը, բան – ուորի մը :

Թուրքիոյ սքանչելի հացը, որ չատ մը Թուրքերու դլխաւոր սննդեղէնն է, երեք անդամ սղած է 1948էն ի վեր: Սղութիւնը ծածկելու համար, պակսեցուցած են հա – ցին կշիռը :

Թղթադրամին այս արժեզրկումը առաջ

կը սկսի, ինչպէս գրեմ կոր, կարդայի կոր: Այս կորը փոխառութիւն է թուր – քերէնէ, որուն ներկայակերտ յորին հա – յացած ձեւն է· օրինակ՝ կիտիյոր = կ'երթայ կոր: Կորի գործածումը աւելի չատուկ է խօսուած լեզուին եւ քիչ ան – դամ կը կիրարկուի գրական լեզուի մէջ: Բայց պէտք չէ խուսափիլ գործածելէ՝ երբ իմաստի պայծառութեան հարկը կը պահանջէ որ գործածուի »:

Կարելի է ներել Այտընեանին՝ իր հա – րիւր տարիներուն համար: Իսկ Գաղան – ճեանին՝ իրրեւ ... անչափահաս: Բայց ի՞նչ ըսել Ագառեանին, որ կը կրկնէ նոյն կարծիքը, փոքրիկ սրբագրութեամբ մը·—

« Յոր միեւնոյն է ինչ որ տաճկերէնի յոր մասնիկը, որի վրայ մեր սահմանա – կանի կ մասնիկն աւելցնելով ձեւացել է կոր, ճիշդ ինչպէս որ Համչէնում ունի մասնիկի վրայ աւելացնելով՝ նոյնը դար – ձել է կունի (տեսնել Հայոց լեզուի պատ – մութիւն, Բ. հատոր, էջ 290):

Ագառեանի գործը ուսումնասիրողները դիտած պէտք է ըլլան թէ երբեմն կը պակսի տեսակէտի միութիւնը, ծաւալուն իր ժառանգին մէջ մնացեր են երեսա – սարդական օրերու կարգ մը պրպտում – ներ, առանց վերաքննութեան ենթար – կուելու՝ հասունութեան մէջ: Դժուար է այլ ձեւով բացատրել թերաճ տեսութիւն – ներ: Մանաւանդ հանդիսութիւններու վը – րայ ձեւուած ուսուցչանական եղրակա – յութիւնները:

Կորը թրքացնել՝ կը նշանակէ թելադրել ... ուրիշ թրքացումներ: Կիտի – յոր–ում բառին մէջ, ըստ հանդիսութեան, վեր – ջընթեր վանկը կը կանչէ մեր ռամը՝ հա – կառակ միւսոնին: Այսինքն, կորէն եաքը՝ նաեւ ռամը: Այսպէս, Ագառեան կը չա – րունակէ ·—

« Հայերէնը պիտի մի տեսակ սահ – մանական ներկայ եւ մի տեսակ անկա – տար, ինչպէս նաեւ հին ու նոր եւրոպա – կան լեզուները· այսպէս պրտաբար սիրեմ, սիրէի, արեւմտեան գրական կը սիրեմ, կը սիրէի, արեւելեան գրական սիրում եմ, սիրում էի: Թուրքերէնը (ինչպէս եւ արդի անմլերէնը) զանազանում են եր – կու տեսակ ներկայ եւ անկատար, — մէկ – կի մէջ գործողութիւնը ընդհանուր է, իսկ միւսը՝ միմիայն այս րոպէի համար: Երկրորդը կարող ենք կոչել չարունակա – կան ներկայ կամ անկատար, առաջինը՝ բուն ներկայ կամ բուն անկատար: Այս – պէս թուրքերէն եէրիմ = կ'ուտեմ, (ա – րինակ՝ ձուկ կամ միս կ'ուտեմ, ընդ – հանրապէս ուտելու սովորութիւն ունիմ), բայց եէյորում = ուտում եմ, (այս վայր – կեանիս նստած ուտում եմ, ուտելու գործողութեան մէջ եմ): Թուրքերէնի օ – րինակով՝ ներկայի եւ անկատարի այս երկրորդ ձեւն էլ հնարուեց ու մտաւ հա – յերէնի մէջ» (Նոյն տեղը, էջ 289):

Այստեղ, Պ. Անդրանիկ Բաբերդեան կրնայ ըսել ինձ ·— Այժմ ձգէ օձիքս, դնա բռնէ Ագառեանի օձիքը, քանի որ ան ալ կը կարծէ թէ ...ում ձեւը հայերէն լեզուի մէջ մտած է «թուրքերէնի օրինա – կով »:

Ըսի, չէ՞, արեւմտահայերէնը կորը թուրքերէն յօրէն հանելէ եաք՝ դժուար չէր արեւելահայերէնի սիրում եմ խո – նարհման ձեւը կապել սէվիյօրում թրքա – կան ձեւին:

Ներողութի՛ւն, չ՛ոտ են ումին սիրա – հարները, նոյնիսկ տէր կանդնողները: Ինչպէս Ղազարեան կը պրէ, «լեզուաբա – նական գրականութեան մէջ արտայայ – տուած է այն կարծիքը թէ հայերէնի ում ածանցը փոխառուած է ... քարթվելա – կան լեզուներից» (Հայոց լեզուի համա – ոտ պատմութիւն, էջ 348, տես եւ 351):

Թուրքերէնէն եաքը՝ ահա բազմաթիւ պնորդներ, եթէ կ'ուզէք՝ դիակապուտ – ներ, — քարթվելական լեզուները:

Բայց ո՛րքան հրապուրիչ է այս ումը, որ այսքանով չի վերջանար կռիւը: Մեզ – մէ կ'ուզեն կորզել ոչ միայն գերբայա – կան այս ածանցը, ում, այլեւ տրականի հոլովաձեւը, ում, (յատկիկային պի – տի բացատրեմ ումին ծագումը, խոնարհ – ման եւ հոլովման նոյն ածանցին ապա – կցութիւնը): Այս անգամ, «գերմանական, բալթեան եւ սլաւոնական լեզուներն են » ու կը խօսին իրենց սեփականութեան մա – սին ումին վրայ (Նոյն տեղը, էջ 349):

Այսպէս, մատ՛ղ դարձած է արեւելա – հայերէնի ումը: Ուղղը չ՛ոտ, բարե – բախտաբար տուողը քիչ :

Մե՛րն է ումը,— հայեցի եւ հարազատ: Ոչ Թուրքին կուտանք, ոչ ալ Քարթվե – լացիներուն :

Մեկէ ումը կը տանի մինչեւ նախա – դրաբարեան շրջանը: Ուրիշներ՝ մինչեւ Ե. դար: Գերմանեւհայկական ուսումնա – կան թերթի մը աշխատակիցը՝ մինչեւ Ժ. դար: Հայաստանի երիտասարդ լեզուա – բաններն, իրենց կարգին՝ կը մերժեն «քարթվելական ծագում» տալ ումին, իսկ խօսքն անգամ չեն ըներ Թրքական ռեփականութեան :

Պիտի տամ բոլոր այդ տեսակէտները եւ պրպտումները:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

(ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

Պեպօն, Թիֆլիսի Կուր դեսին մէջ որ – սացող ձկնորս մըն է: Ամառ թէ ձմեռ, ութակէդ ցերեկին կամ սառնաչունչ գի – շերին, անիկա իր ուռկանը կը ձգէ ջուրը, ապահովելու համար իր մօր Շուշանին եւ իր քրոջ՝ Կեկելին հացը :

Հալալ աշխատանքին մարդն է Պեպօն, վեհանձն, մեծահոգի եւ արդար: Մայրն ու քոյրը իրենց կարգին կարի գործ կ'ը – նեն, թեթեւցնելու համար Պեպոյին բե – ռը:

Կեկելը նշանուած է եւ չուտով պիտի ամուսնանայ, իր նշանածին խոստացած է որոշ գումար մը իրր դրամօժիտ: Այդ գումարը կը պտնուի մեծահարուստ վա – ճառական Զեմզիմովի մօտ, ուր պահ է դրուած Պեպոյի ողբացեալ հօր կողմէ, և փոխարէն ստացուած «պարաթ» մը, մուրհակ, որ կը պտնուի Պեպոյենց բա – բեկամ Գիքոյի քով: Եւ ահա, երբ հար – ատնեկան պատրաստութիւնները կը տես – նեն, յանկարծ Գիքոն կուգայ եւ կը դու – ժէ թէ պարաթը կորսուած է: Իրարան – ցում, ողբ ու կոծ, Կեկել ու Շուշան Ի'իյնան խոր յուսահատութեան մէջ, կը [illegible] Նաեւ Պեպոյի հոգին: Ազնիւ տը – ղան կ՝ խռովի ոչ միայն անոր համար որ դրամը կորսուած է, այլ եւ անոր համար որ պիտի խայտառակուին ամբողջ քա – ղաքին մէջ, եթէ իր քրոջ փեսացուն նը – չանը ետ տայ :

Եւ Պեպօն կ'որոշէ երթալ Զիմզիմովի տունը, ըսել անոր որ մուրհակը կոր – սուած է, եւ խնդրել որ ան տայ իրեն մօտ պահ դրուած հազար թումանը :

Ու ահա Պեպօն, հարուստ Զիմզիմովի ընդունելութեան դահլիճին մէջ, դէմ դի – մաց անոր :

— Բերել ե՞ս պարաթը, կը հարցնէ ա – ղա Արութինը :

Պեպօն կը խոստովանի որ կորսուած է այդ թանկագին թուղթի կտորը :

Եւ ահա, վաչխառու Զիմզիմովի ընչա – քաղց ախորժակը կը սրուի: Քանի որ մուրհակը կորսուած է, կրնայ հանդիստ կերպով, առանց օրէնքէն որեւէ վախ ունենալու իւրացնել այդ խեղճերուն հա – զար թումանը :

Ու կը մերժէ: Իր ականջները կը խցէ Պեպոյին բոլոր թախանձանքներուն դի – մաց :

— Պարաթ չունի՞ս, իմ տաֆտարնե – րում էլ ոչինչ չկայ գրուած, կը գոռայ ա – ւազակը :

— Բա՛ս, քու սրտի տաֆտարո՞ւմն էլ ոչինչ չկայ գրուած, կ'ընդմիջէ բարի ու առաքինի Պեպօն :

— Սրտի տաֆտարս ո՞րն է... կը դար – մանայ որեւէ ազնիւ ու մարդկային ղա – ցումէ ղուրկ վաչխառուն :

Ցուսահատ երիտասարդը անկեղծօրէն կը բացատրէ իրենց դժուարին կացու – թիւնը: Եթէ դրամը չտան փեսացուին, նշանը ետ պիտի ըլլայ եւ իր հէք քոյրը պիտի ծաղրու ծանակ դառնայ ընդհանու – րին: Անօգուտ : Հրէշը կը մերժէ : Եւ ամէն մեղքիս վրայ, իրր մեծահոգի անձ, կը յօժարի հինգ թումանի նուիրատուու – թիւն մը ընել Պեպոյին· քանի որ քոյրը պիտի ամուսնացնէ :

Բաժակը կը յորդի: Պեպօն իր սրտին բովանդակ մաղձը կը թափէ վաչխառուին դլխուն, եւ անոր ճոխ դահլիճին դուռ – ները չռնդալից կերպով դոցելով անօրէն մարդուն երեսին, կը թողու կը հեռա – նայ :

Իր ինքնասիրութեան մէջ վիրաւորուած վաչխառուն սակայն, չի բաւականանար միայն խեղճերուն դրամը իւրացնելով, հիմա կ'ուզէ նաեւ վրէժ լուծել իրեն է – ղած նախատական խօսքերուն համար : Եւ իրր զրպարտիչ մեղադրելով ազնիւ Պե – պօն, զայն որոշ ժամանակի մը համար բերդարդելութեան դատապարտել կու – տայ :

Գործը այս վիճակին է հասած, երբ յանկարծ, հրաչքով մը «պարաթ»ը կը դտնուի: Ծերունի Գիքոն կուգայ աւե – տելու բախտաւոր լուրը, որ արդէն ա – կանջին է հասած նաեւ վաչխառուն : Այս վերջինը կը չտապէ, կուգայ դտնել Պեպօն, եւ կ'առաջարկէ տալ իրեն պարաթը, ստանալ հազար թումանը, խն – դիրը փակել, քանի որ ինք իր կողմէն ետ է առած արդէն իր բողոքը եւ այլեւս Պեպօն բանտ ալ պիտի չերթայ :

Սակայն, Պեպօն, անդրդուելի կը մնայ, կը պահէ մուրհակը իր քով, յանձն կ'առ – նէ բանտ երթալ, եւ կ'ուզէ որ արար աչ – խարհ իմանայ, թէ ինք իրաւացի էր եւ թէ Զիմզիմովը ստոր վաչխառու մըն է, որուն հարստութիւնը, մեծութիւնն ու չքեղութիւնը իրր պատուանդան ունի բազմահարիւր դրկուածներու ադի ար – տասուքը :

Պեպոյի առաջին արարուածը կը սկսի չափազանց չատկանչական տեսարանով մը: Պարզ ու անպաճոյճ, աչխատասէր ընտանիքի մը բնակարանն է, ձկնորս Պե – պոյի բնակարանը: Սակայն, այս պարզ ու աղքատիկ, առանց բեմական աւելորդ ճոխութիւններու ներկայացող տէքորին մէջ, հեղինակը, առաջին իսկ րոպէէն հանդիսատեսը կը պատրաստէ ներկայ դտնուելու այն ահաւոր պայքարին որ ի – րարու դէմ պիտի հանէ ընչաղուրկն ու կեղեքող վաչխառուն :

Պեպոյի մայրը՝ Շուշանը եւ քոյրը՝ Կեկելը նստած կար կ'ընեն: Անհանդիստ են, վասնզի տան նեցուկը եղող Պեպօն ու – չացած է այդ օրը :

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ

(9 Շար·)

ՀԱՄԱՌՈՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

9.

Ա՛ս ձօնագրութիւնս, թոյլ տուողներուս համար, ինծի համար ալ ամենէն դժուարը եղաւ։ Ես ինքզինքս չեմ գոհացներ։ Ինչպէս ըսի, ես ինքս ալ կը տառապիմ անոնց պակասներէն, որոնք զիս կը տանջեն։ Ես ալ կ՚ուզէի, որ ամէն ինչ ըլլար կատարեալ։ Բայց ես ինքս ալ գիտեմ, որ կատարեալ բան չկայ։ Ամէն ինչ ունի իր պակասները։ Ամէն ինչ ունի իր թերութիւնները։ Ամէն ինչ ունի իր ստուերները։ Ամէն ինչ ունի իր մութ կողմերը։ Ամէն ինչ ունի իր ցաւերը։ Ամէն ինչ ունի իր տառապանքները։ Ամէն ինչ ունի իր մահը։ Ամէն ինչ ունի իր վախճանը։ Ամէն ինչ ունի իր անհետացումը։ Ամէն ինչ ունի իր մոռացումը։ Ամէն ինչ ունի իր ջնջումը։ Ամէն ինչ ունի իր ոչնչացումը։ Ամէն ինչ ունի իր անյիշատակութիւն

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի, ժօն Կաթողիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի, կը կատարուի Հայրապետական մաղթանք: Կը կատարուի նաեւ մասնաւոր Հոգեհանգիստ ողբացեալ Տիկին Աբամ Թէքեանի յիշատակին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ն. Պ. Հայ Սպասից Միութիւնը հրա-ւիրում է անխտիր բոլորը ներկայ լինելու այս կիրակի, Փարիզի Հայոց եկեղեցում հոգեհանգստեան պաշտօնին, յարգելու համար յիշատակը Սարդարապատի, Բաշաբաբանի, Ղարաքիլիսի եւ ուրիշ հերոսամարտերում 1918 Մայիսին, պատուոյ դաշտում ընկած հայ բանակի սպաների, ենթասպաների եւ զինուորների, որոնք Սպարապետ Նազարբէկեանի ընդհանուր հրամանատարութեամբ եւ քաջարի հայ ժողովուրդի միահամուռ ճիգերով պարտութեան մատնեցին զարհուրը թշնամու դերազանց ուժերը եւ փրկեցին հայրենիքը եւ էջմիածնի Ս. Աթոռը:

×

Ողբացեալ Տիկին Թոպուզ Ոսկերիչեանի յիշատակին (ծնեալ Զուքասըզեան) մահուան տարելիցին առթիւ, Տիրան Ոսկերիչեան, Վահրիճ եւ Վարդանոյշ կնօքհէեան կը ծանուցանեն կսկծալի սրտով որ իրենց յաւէտ անմոռանալի կնոջ եւ զաւկին՝ ողբ. ԺՊՏՈՒՒՆի մահուան Ա. տարելիցին առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի առտու Մայիս 31ին Հայ. Առաք. Ս. Ցովհ. Մկրտիչ եկեղեցին:

Իր յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ ըլլալ:

Ցաւարտ արարողութեան, այցելութիւն պիտի կատարուի հանգուցեալի դամբարանին, Սիմըթիէր Փարիզիէն տը Փաքէն, 139րդ տիվիզիօն, 9րդ լիները, բիւր 7, աճքրէ տէ Փըթի Փոն:

×

Դպրոցասէր Տիկնանց Միութեան հիմնադրութեան 80ամեակին առիթով, յառաջիկայ կիրակի, 31 Մայիսին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի անոր հիմնադիրներուն եւ բոլոր աշխատաւորներուն յիշատակին համար, Փարիզի Հայոց եկեղեցիին մէջ:

×

Պ. Վահրամ Տէր Խաչատուրեան կը ծանուցանէ թէ այս կիրակի առաւօտ հոգեհանգիստ պիտի կատարուի Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին, իր ողբացեալ կնոջ՝

ՓԵՐՈՒԶ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

մէ հուան քառասունքին առթիւ:

Կը հրաւիրուին հանդուցեալին յիշատակը յարգողները:

Այս առթիւ Պ. Տէր Խաչատուրեան եւ Պ. Զէրչեան 5000ական ֆրանք կը նուիրեն Հայ Մշակոյթի տան:

Տառնալ «Յառաջ»էն:

ՀՐԱՒԷՐ ԸՆԴՀ. ԼԻՈՆԱՀԱՅՑ ԳԱՂՈՒԹԻՆ

Հայկ. Բ. Ը. Միութեան Լիոնի մասնաճիւղը, սիրով կը հրաւիրէ ձեզ, կարեւոր խորհրդակցական ժողովի մը, որ տեղի պիտի ունենայ այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, տեղւոյս նորակառոյց եկեղեցւոյ սրահին մէջ, 295, Րիւ Պուալօ:

ԿԱՐԵՒՈՐ.— Միութեանս «Շինարար» թերթին յաջորդ թիւը նուիրուած պիտի ըլլայ մեր այս Ընդհ. Ժողովին: Ժողովը պիտի նկարուի եւ լայն մանրամասնութիւններով թերթին պիտի ուղարկուի, հրատարակութեան համար: Վարչութիւնը կը փափաքի տեսնել մեր բոլոր անդամներուն եւ համակիրներուն խմբանքը կարը իրենց կենսագրական գիծերով:

ԴԻՒԱՆ

Կ'ՈՒԶՈՒԻՆ

JACKY

39, AVE. DU GENERAL LECLERC, PARIS 14e

POR. 68-82

Կը փնտռէ ամառուան հագուստի, շըմիզիէի եւ կանացի ֆօնֆէխիոնի ամէն տեսակ ապրանքի արտադրողներ (փապրիքանթ): Բոլոր ապրանքները կը վճարուին կանխիկ: Դիմել առաւօտները ժամը 10–12:

ԾԱՆՕՒ ԲՆԱԿԱՐԱՆ

Մէկ սենեակ եւ խոհանոց մը ժանթիյի, մեթրօ փորթ տ'Իթալիի չատ մօտիկ, անմիջապէս տրամադրելի:

Դիմել Տիկին Թաթուլեանին ղրաւոր,

21, RUE JULIEN-LACROIX. PARIS - 20e

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

30 Մայիս, Շաբաթ գիշեր, ժամը 8·30ին ՓԱՐԻԶԻ 6ՐԴ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇՐԵՂ, ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Place St Sulpice Métro : St Sulpice

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ՝ ԸՆԿ. ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ԿԸ ԽՕՍԻՆ՝ Պ. Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, ԸՆԿ. Կ. ՄԵՀԵԱՆ *եւ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉԸ*

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ ՑԱՑՏԱԳԻՐԸ.—

ՋՈՒԹԱԿՈՎ.—
1·— Կանչէ Կոռնիկ *Ալէքսանեան*
2·— Փուն եղիր պապա *Կանանչեան*
3·— *Եւրոպական*

ԹԱՒ ՋՈՒԹԱԿՈՎ.—
1·— Մայր Աբաթսի *Հ. Թորոսեան*
2·— Ալագեազ *Կոմիտաս*
3·— *Եւրոպական*

Ա· մրցանակ Փարիզի Պետ· երաժշտանոցէն
Mlle. Guislaine de Monceau, Violon
Mlle. Gisèle de Monceau, Violoncelle
Madame Monceau, Piano
Madame Brisset,
Կ'ԵՐԳԷ (Զանգակներուն երգը) (*Լաքմէ*)

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.— Պ. ԱՐՏԱՇԷՍ ԴՄԲԼԹԵԱՆ եւ ԸՆԿ. ՎԻԳԷՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Հայկական պարեր Հ· Յ· Դ· Նոր Սերունդի խումբին (Պաննէօ) կողմէ:

Նուագախումբ՝ ՏԻՏԻՃԵԱՆ, երգիչ ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ԺԱՄԸ 11·30ԻՆ:

ORCHESTRE JEAN-CLAUDE PELLETIER
Vedette des disques Vogue

Առատ եւ ճոխ պիւֆէ:

Մուտք 300 ֆրանք

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ· Յ· Դ· Վալանսի Շրջ· Կոմիտէի, մասնակցութեամբ՝ Հ· Յ· Դ· Նոր Սերունդի «Շ· Միսաքեան» խումբին:

Այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, քաղաքապետարանի թատրոնին մէջ:

Կը նախագահէ ընկեր Մ. ՊՕՅԱՃԵԱՆ:

Կը խօսի ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆ

Գեղարուեստական ճոխ բաժին Նոր Սերունդէն: Խմբերգ, մեներգ, պար, արտասանութիւն, կովկասեան պարեր Պօյաճեան եղբայրներու կողմէ:

Ճոխ պիւֆէ:

Մուտքը ազատ է:

ՎԻԵՆԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին, Սէրքլը Կաթոլիկ սրահը:

Նախաձեռնութեամբ Հ· Յ· Դ· Վիեննի կոմիտէի, մասնակցութեամբ Ֆ· Կ· Խաչի, Հայ Կամ· եւ Մարտիկներու Միութեան, Հ· Մ· Ը· Մ·ի եւ Հ· Յ· Դ· Նոր Սերունդի:

Կը նախագահէ Պ. Կ. ՏԻՐՄՈՑԵԱՆ:

Գեղարուեստական խնամուած բաժին:

Մեներգ, արտասանութիւն, պարեր եւ ուղերձներ:

Կիթառի վրայ պիտի նուագէ Նոր Սերունդէն Արմաճ Էգասեան:

Հայրենակիցներ.— 41 տարի առաջ, հայ ժողովուրդի արեան գնով ստեղծուեցաւ Հայաստանի անկախ անդրանիկ Հանրապետութիւնը: Զեր ներկայութեամբ ազդ. նուիրական պարտականութիւն մը պիտի կատարէք՝ ոգեկոչելով յիշատակը բոլոր անոնց որոնք իրենք ազատագրական ճամբուն վրայ, իրականացնելով Հայուն զարաւոր երազը:

Մուտքը ազատ է:

ԻՍԻԻ ՄԷՋ

Իսիի մէջ Յունիս 7ին:

ԿԱՐԵՒՈՐ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի նպաստ Լիոնի եկեղեցւոյ շինութեան կազմակերպուած վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Մայիս 31ին: Հովանաւորութեամբ Լիոնի քաղաքապետարանի կարեւոր խորհրդական եւ ծանօթ հայասէր ՏՈՔԹ. ՊԱՐԻՏՈՆԻ:


Նոյն առթիւ չքեղ պարահանդէս մը կազմակերպուած է: Եկեղեցաչէն Տիկնանց Միութեան կողմէ: Ոչ մէկ ջանք խնայուած է զայն հաճելի ժամանց մը դարձնելու ներկաներու: Տեղի պիտի ունենան խիստ գեղեցիկ անակնկալներ:

Պարահանդէս — վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Պրօնի հին քաղաքապետարանի կից՝ նոր եւ ընդարձակ Սէն Միշէլ Լաքրուա այլ անունով Լա Կլա-նէօզի մէջ:

Այժմէն ապահովեցէք ձեր տոմսերը: Անոնք որոնք տակաւին վիճակահանութեան տոմսեր չունին, կրնան եկեղեցւոյ ղրասենեակէն գնել:

Կոչ կ'ուղղենք անոնց, որոնք տոմսակներ ունին հաճին, անոնց փոխարժէքը ղրկել ամսոյս մինչեւ 27ը:

AU BEAU NOYER



Salles de séjour — Penderies - literie
Chambres - cosys — Cuisines laquées
Salons-tapisserie — Fauteuils-canapés-lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ
ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԶՐԻ ՑԱՆՁՆԵԼԻ ՓՐԱՆՍԱՑԻ
ԱՄԷՆ ԿՈՂՄԸ

185, BD. J. JAURES
15, AV. A. MORIZET
Boulogne - Billancourt
Métro : MARCEL SEMBAT
Mol. 06-03 et 60-38

ANTI - VOMI
Marque et modèle déposés
ՀԱՆԳԻՍՏ ՃԱՄԲՈՐԴԵԼ

Այսուհետեւ ուղածնուդ չափ կրնաք կառքով ճամբորդել, առանց որեւէ ղլխու պտոյտի կամ անհանգստութեան:

Գիւղը ղիւրաբերձորձարդելի է ամէն կառքի մէջ: Մեռաղով չինուած, այժմու գինն է՝ 400 ֆրանք:

Փոխարժէքը կրնաք նամակաղրկմով վճարել:

Վաճառականներուն համար մասնաւոր պայմաններ:

Ստանալու համար դիմել՝

FERMETURE ETEX
7, RUE LOUIS BALMENS
GAP (H. A.)

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ՑՈՒՇԱՑԱԾՑՐ

ՎԱՃԱՌԱՆՈՒ.— Հ· Յ· Դ· Շրջ· կոմիտէի ընդհ· ժողովը այս կիրակի առաւօտ ժամը 10ին, սովորական հաւաքատեղին: Ներկայ կ'ըլլայ Կ· Կ· Ներկայացուցիչը: Կարեւոր օրակարգ:

ՊԱՏԱՐԱԳ

Այս կիրակի, Տօն Կաթուղիկէ Ս· Էջմիածնի: Հանդիսաւոր քառաձայն Ս. պատարագ Փարիզի Ս· Ցովհ· Մկրտիչ եկեղեցւոյ մէջ:

Պիտի պատարագէ եւ քարոզ նորապսակ Բարղէն Եպիսկ· ԱՊՈՏԵԱՆ, Հայրապետական Պատուիրակ Հարաւային Ամերիկայի:

Պիտի կատարուի Հայրապետական մաղթանք:

Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը:

Գարունը կը վերսկսի գեղազարդել բնութիւնը, տերեւաթափ ծառերը կը գունաւորուին դալարով եւ ծաղիկներով, կեանքը կը վերանորոգուի

Ձեր բնակարանն ալ պէտք է որ վերանորոգուի
ՆՈՐ ԴՈՑՆԵՐՈՎ ԵՒ ՆՈՐ ՁԱՐԴԱՐԱՆՔՆԵՐՈՎ
Նոր կենսունակութիւն ստանալու համար

PEINTURES THOMLAC

16 bis, BOULEVARD SEBASTOPOL, PARIS (4e)
Tél. : ARC. 26-61 (Métro : Châtelet - Halles)

ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Իր սեփական արտադրութիւնը եղող արդիական գոյներով առաջնակարգ Սէն-Թիթիք եւ Վինիլիթ նորոյթ իւղաներկներու, գեղարուեստական պատի թուղթերու, Լինոլէումներու եւ Միխնեվիլներու տեսակները, նաեւ ձեր բոլոր նկարանոցներուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը պիտի հայթայթէ ձեզի, ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ՝

52, Rue de Chalon - Paris (12e)
64, Boulevard de Belleville - Paris (20e)
166, Av. Aristide Briand - Pavillons-sous-Bois (S.)
4bis, Rue Paul Vaillant-Couturier - Argenteuil (S.O.)
18, Rue Brézin (Paris (14e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Téléph : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ՇԱԲԱԹ
30
ՄԱՅԻՍ
SAMEDI
30 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8405 — 35EME ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4306

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԿԸ ՀԱՒԱՏԱ՛ՆՔ ՀՐԱՇՔԻՆ

1918 *Մայիս 28ին կ'իրականանար վերջապէ՛ս ազատ եւ անկախ հայրենիքի դարաւոր երազը :*

Հայ ժողովուրդի անճնազոհ զաւակներ – ը, առանց սեռի, հասակի ու դաւանանքի խտրութեան, միակամ ոգի կանգնած՝ կատ֊ղած կռւացին անարդ թշնամիի գրոհ֊ներուն եւ դիւցազնական ճակատամարտ֊ներու չնորհիւ հիմը կը դնէին Հայաստան֊ի Հանրապետութեան :

Կը հնչէր հայրենազարձի դերապոյն ժա֊մը եւ ի սիւռս աչխարհի ցրուած հայոր֊դիներն ու Մեծ Եղեռնէն ճողոպրած բե֊կորները դունդ առ դունդ կը դիմէին դէպ ի հայրենիք :

Ներքին ճակատին վրայ նորակազմ կա֊ռավարութիւնը կը նուիրուէր պատերազ֊մէն աւերակ դարձած երկրի վերաշինու֊թեան սրբազան գործին : Գերմարդկային ճիգեր կ'ընէր սրբելու համար հազարաւոր որբերու եւ այրիներու արցունքը եւ մեղ֊մելու՝ համատարած թշուառութիւնը :

Երկրէն դուրս նորազատ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչները օրուան յաղթականներէն արդարութիւն կը պահանջէին հայ ժողովուրդին հա֊մար :

Արտասահմանի մէջ դարձեր էինք Հա֊յաստանի քաղաքացի, կը վայելէինք հայ֊կական կառավարութեան պաչտպանու֊թիւնը եւ հպարտօրէն կը ճամբորդէինք հայկական անցագրով՝ աչխարհի ամէն կողմը :

Լայն բացուած էին Հայաստանի դուռ֊ները՝ ներս մտնողին եւ դուրս ելլողին առջեւ, առանց հաւատարքննութեան՝ :

Փառքի, հպարտութեան եւ ազատու֊թեան բարիքները երեսուն ամիս միայն վայելեցինք :

Զուչացաւ փոթորիկը, որ արմատէն պիտի քանդէր մեր անկախութիւնը եւ «դպրոցական» պիտի դարձնէր ազատ Հա֊յաստանի քաղաքացիները :

1920ի աչնան հայ ժողովուրդը կրկին ապրեցաւ սեւ օրեր : Թուրքն ու Ռուսը ձնոջ ձեռքի տուած անգամ մը եւս իրենց միջեւ բաժնեցին մեր հայրենի հողերը , «մեծ դաչնակից»ներու անտարբեր աչքե֊րուն առջեւ :

«Կորիդ»ը մտաւ համաչնաւոր վարչա֊ձեւ՝ ամէ՝ Մոսկուայէն յուսալով հա֊յրենեան վերկութիւնը :

Թրքահայաստանը մնաց «թշուառ, ան֊ապր, մեր թշնամեաց ոտնակոխ » :

Շերակն ու Վասպուրականը, Տարօնն ու Բարձր Հայքը ղրկուած չինարար ձեռ֊քերէ՝ քառասուն տարիէ ի վեր վայրի գազաններու որջ եւ գիչատիչ կենդանինե֊րու բոյն են դարձած :

Հայ գարաւոր ու փառաւոր ժողովուր֊դի պատմական ու պապենական այս սուրբ հողերը — որոնց ամէն մէկ թիզին վրայ, հայկական քրտինքի եւ հայ մաքի ու հանճարի հետքերը կան — ակնդէտ կը սպասեն հարազատ սեփականատիրոջ, որ հետացած է ժամանակաւորապէս՝ խորա֊կէն հալածական :

Այդ հաստատ համոզումն ունինք մենք, որովհետեւ կը հաւատանք հրաչքին :

Վկայ՝ Արարատեան դաչտի հրաչքը 41 տարի առաջ :

Կը հաւատա՛նք, որովհետեւ ո՛չ միայն Սփիւռքի, այլեւ հայրենիքի մեր եղբայր֊ները իրենց հայրենակրօտ աչքերն ուղ֊ղած են միշտ դէպի յաւիտենական Ա֊րարատն ու անկէ անդին դէպի մեր նախա֊հայրերու սուրբ հողերը :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՅԶԸՆՀԱՒՈՒԸՐ ԿՈՉ ՄԸ ԸՐԱՒ ԺԸՆԵՒԻ ԺՈՂՈՎԻՆ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

—o—

Ինչպէս պրած էինք, Նախագահ Այզըն֊հաուըը իր մօտ հրաւիրած էր Արտաքին չորս նախարարները, որոնց հետ մօտ կէս ժամ խորհրդակցեցաւ :

Նախագահը յոյս յայտնեց Ժընեւի ժո֊ղովին յաջողութեան համար : Տեսակցու֊թենէն առք հրապարակուած պաչտօնա֊կան զեկոյցին մէջ կը չեշտուի թէ Նա֊խագահը մօտէն կը հետեւի Ժընեւի խո֊սակցութիւններուն եւ Հերթըրի հետ միչտ կապ կը պահէ : Այզընհաուըը կը հաւատայ թէ այդ խորհրդակցութիւննե֊րը միջոց մը պիտի ըլլան որպէս զի կա֊րելի ըլլայ Եւրոպայի առջեւ ցցուած բարդ հարցերուն լաւագոյն լուծում մը գտնուի :

Ինակտնաբար, Նախագահ Այզընհաուըը չէ՛ւեչ խաղալ լուծում մը գտնելու ան֊հրաժեչտութեան վրայ : Յոյս յայտնեց նաեւ, որ Արտաքին նախարարները Ժընեւ վերադառնալէ յետոյ պիտի կարենան որոչ յաջո֊ղութիւններ պիտի արձանագրեն՝ որպէս զի կարելի ըլլայ մեծերու հանդիպումը իրականացնել :

Այս զեկոյցը բաղմաթիւ մեկնաբանու֊թիւններու դուռ բացաւ միջազգային մամուլին մէջ : Լաւատեղեակ շրջանակ֊ները կը յայտարարեն թէ այդ ձեւով Նա֊խագահը ուղղակի կոչ մը ըրաւ Խ. Միու֊թեան՝ որպէսզի վէճերը կարճ կապուին եւ մեծերու ժողովը դումարուի :

Զորս նախարարներու եւ Այզընհաուըրի կէս ժամուան հանդիպումին ընթացքին խօսք առած է Նախագահը եւ իր կարծիքը յայտնած «խոհեմ եւ վճռական » ձեւով. խօսակցութիւն, կամ կարծիքներու փո֊խանակութիւն չէ եղած :

Այզընհաուըը կը պահէ քանի մը ամիս առաջ կատարած իր առաջարկները .— Պատրաստ է որեւէ տեղ եր֊թալու՝ միւս կառավարութեան դեկա֊վարներուն հետ խորհրդակցելու համար , ի չահ խաղաղութեան ամրապնդման, ան֊չուչտ՝ եթէ նախապէս ամէն ապահո֊վութիւն տրուի թէ նման հանդիպում մը արդիւնաւոր պիտի ըլլայ :

Նախագահը չէ ուզած առանձին ընդու֊նիլ, կրամիքօն, — կը մեկնաբանեն ուրիչ֊ներ : Զորս նախարարները միասին հրա֊ւիրելով իր մօտ եւ նման յայտարարու֊թիւն մը կատարելով՝ Այզընհաուըը ան֊ուղղակի կերպով ճնշում բանեցուցած է Կրամիքօյի , եւ այդ ճամբով՝ Խրուչչեւի վրայ, որպէսզի անհրաժեչտ զիջումները ըլլան եւ Ժընեւի մէջ եղրակացութեան մը հասնին :

Տակաւին չատ կանուխ է նախատեսելու համար այս կոչին արդիւնքները :

Ուրբաթ օր, միւնհըն օգնաւուժ Ժընեւ վերադառնալով՝ Արտաքին նախարարները պիտի զումարէին դռնփակ նիստ մը : Տը֊լլըսի մահուան առիթով ստեղծուած հա֊մերաչխ մթնոլորտը եւ Այզընհաուըրի կո֊չը հաւանաբար որոչ ազդեցութիւն զոր֊ծեն՝ վիճաբանութիւնները կարճ կապե֊լու համար : «Յուսատու» պարագայ մը կը նկատուի նաեւ այն՝ որ Հերթըր , Կրամիքօ, Լոյտ եւ Քուվ Տը Միւրվիլ մի֊եւնոյն օգնաւուժ դպցին Ժընեւ, մաեր֊մօքն խորհրդակցելու առիթ մը ունե֊նալով :

ԿԱՊԻԿՆԵՐԸ ՓՈԽԱԴՐՈՂ ՀՐԹԻՒՐԸ ԵՐԿԻՐ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ

—o—

ԿԱՊԻԿՆԵՐԸ ՈՂՋ ԵՆ

Ամերիկացի վիճակախաղերը Քափ Քա֊նաւերալի փորձադաչտէն արձակեցին 52 թոն ծանրութեամբ հրթիռ մը, որուն մէջ դրուած էին երկու կապիկները :

« Ճուպիթըր» հրթիռը ժամական 16 հազար քիլոմեթր արագութեամբ սլացաւ երկինք եւ 480 քլմ. բարձրանալէ ետք վե֊րադարձաւ երկիր, ինչպէս նախատես֊ուած էր :

Հրթիռը ինկաւ Ատլանտեանի մէջ՝ ուր մանուռը նաւեր կը սպասէին :

Բացի երկու կապիկներէն՝ բազմաթիւ գործիքներ զետեղուած էին «ճուպիթը֊ր»ի մէջ : Գիտնականները կը հետեւէին կապիկներու չնչառութեան եւ չարժում֊ներուն : Կապիկներէն մէկը կը կշռէր ե֊րեք քիլօ, իսկ միւսը՝ 450 կրամ :

Փորձը ցոյց տուաւ թէ երկու կենդանի֊ները չատ քիչ տառապած են այս արագ ճամբորդութեան ընթացքին : Գիտնական֊ները յոյս ունէին թէ կապիկները ողջ պիտի գտնեն, բայց վստահ չէին մինչեւ այն վայրկեանը՝ երբ հրթիռը Ատլան֊տեան խնկաւ :

Հրթիռը բարձրացուցին յատկապէս սպասող նաւուն վրայ եւ հաստատուեցաւ որ երկու կապիկներն ալ ողջ են :

Ուշչնկթընի եւ Քափ Քանաւերալի մէջ «կատարեալ յաջողութիւն » նկատուեցաւ միջմթնոլորտային այս ճամբորդութիւ֊նը : Արդարեւ, առաջին անգամ ըլլալով երկու չնչաւորներ մխրճուեցան եթերին մէջ եւ վերադարձան երկիր՝ ողջ առողջ :

ԶՈՐՍ ՕՐՈՒԱՆ ՄԷՋ

ԽՐՈՒՇՉԵՒԻ ԶՈՐՐՈՐԴ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ալպանիա հասնելէն ի վեր , Խ. Միու֊թեան Վարչապետ Խրուչչեւ չորրորդ ան֊գամ ըլլալով սպառնալիից յայտարարու֊թիւններ ըրաւ .— « Հեղլէն կառավարու֊թեան կ'ապղարարենք՝ որ իր տրամա֊բանութիւնը չկորնչցնէ եւ կը դադրեցը֊նենք զայն իր հոգեմտային վրայ հրթիռ֊ներու եւ ջրածին զէնքերու խարխխներու հաստատման դէմ » :

Ինչպէս յայտնի է, չորս օրէ ի վեր Խր֊ուչչեւ չարունակ կը խօսի Իտալիոյ եւ Յունաստանի մէջ հաստատուելիք արձա֊կութիւններու դէմ, միաժամանակ խաղաղ զօտի մը ստեղծելու հարցին չուրջ .— « Խ. Միութիւնը կը փափաքի որ Յու֊նաստան չէզոք զօտի մը ըլլայ, կարելի եղածին չափ հեռանայ Ատլանտեան Ուխ֊տէն եւ չընդունի հրթիռներու արձակա֊րաններու հաստատումը, ինչ որ պիտի նչանակէ թէ մեզի դէմ սպառնալիք մը եւ վտանգ մը պիտի դառնայ » :

Նոյն հարցին չուրջ իտալական կառա֊վարութեան ընծած դիրքին անդրադառ֊նալով, կարմիր պարապուլիսը յայտարա֊րեց թէ արձակարաններու հաստատումը ընդունելով « Իտալիա մեծ սխալ մը գործեց » :

Շեչտելէ ետք թէ ընկերվարական դա֊դաչծը իր ուժերը կ'ուղէ գործածել ոչ թէ պատերազմի՝ այլ խաղաղութեան համար, Խրուչչեւ ըսաւ թէ դէպի առաջ քայլ մը առնուած կ'ըլլայ այն ատեն՝ երբ Գալքաններու մէջ զինուորական խա֊րիսխներ չըլլան :

Այնուհետեւ սկսաւ յարձակիլ Արեւ֊մտեան Գերմանիոյ Արտաքին նախարարին վրայ : Գերմանիոյ հետ հաչտութեան դաչնագրի մը ստորագրութեան հարցը , ըսաւ ան , վերջ ի վերջոյ պիտի որոչուի Ցաչիմի դէմ պայքարած բոլոր ժողո֊վուրդներուն կողմէ եւ եթէ Ցոն Պրեն֊թանօ հիմա չստորագրէ այդ դաչնագիրը՝ օր մը պիտի ստորագրէ անկասկած : Ա֊մէն պարագայի մէջ, եթէ Ցոն Պրենթա֊նոյի կառավարութիւնը չուզեր՝ վերման ժողովուրդը ուրիչ կառավարութիւն մը պիտի ընտրէ եւ Արտաքին ուրիչ նախա֊րար մը : Զենք պիտեր թէ ե՞րբ պիտի ըլ֊լայ ասիկա , բայց սպասելու կարելիու֊թիւններ ունինք : Անոնց՝ որոնք մեզի կը սպառնան թէ Մեծերու ժողովը տեղի պի֊տի չունենայ՝ կը պատասխանենք թէ պի֊տի չարունակենք մեր ճամբան , նոյնիսկ առանց այդ ժողովին , — եղրակացուց Խրուչչեւ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Ալժերիացի փաստաբան՝ Ուլտ Աու֊միայի յուշարկաւորութիւնը նոր դիժ֊ուարութիւններու դուռ բացաւ : Ծանօթ է որ Աուամիա սպանուեցաւ անծանօթնե֊րու կողմէ որովհետեւ ըմբոստներու փաստաբանն էր, մահէն յետոյ, իր բա֊րեկամներէն եօթը հոգի սպառնական նա֊մակներ ստացան : Միւս կողմէ ներքին նախարարութիւնը արգիլեց որ մարմինը հանրութեան ցուցադրուի թաղումէն ա֊ռաջ անախորժ միջադէպերու առիթ չտա֊լու համար : Ընտանիքը յետաձգել տուաւ յուշարկաւորութիւնը :

ՇԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ երկու նախարարներ՝ Պէթուէն (ներքին)եւ Ուէ (երկրա֊գործական) հրաժարեցան : Ծանօթ է որ Ե. Հանրապետութեան սահմանադրու֊թեան համաձայն երբ երեսփոխան մը կամ ծերակուտական մը նախարար կ'ընտրուի, ստիպուած է հրաժարիլ եր֊կու պաչտօններուն մէկէն : Պէթուէն եւ Ուէ որ ծերակուտական ընտրութեան վերջերս նախընտրեցին այդ հանգաման֊քը : Վարչապետին առաջարկով ներքին նախարար նչանակուեցաւ Փիէռ Շաթընէ՝ ոչ խորհրդարանական մը, եւ երկրագոր֊ծութեան՝ ծերակուտական մը՝ Ռօշերօ :

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ անդամ ընտրուեցաւ ծանօթ թատերագիր՝ Մառսել Աչառ , դրաւելով Անտրէ Շերվէյհնի աթո֊ռը : Փաթաթի հեղինակը ընտրուեցաւ 3րդ քուէարկութեան՝ 28ի վրայ 17 ձայնով :

ՏԼԼԸՍ 238·000 տոլարի կտակ մը ձգած է որ պիտի բաժնուի իր զաւակներուն մի֊ջեւ, մնացեալը ձգած է իր այրիին : Տը֊լլըս 100·000 տոլար ձգած է իր մկրտ֊ղուն, տասը հազար տոլար իր աղջկան եւ միայն հինգ հազար իր այն զաւկին որ դաւանափոխ եղած է եւ յետսեան մխա֊բան է :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ 22 մասնագէտներ պաղ֊տատ հասան՝ պատրաստ նաւահանգիս֊տին մէջ աչխատելու համար. 15 այլ մասնագէտներ չուտով պիտի միանան ա֊նոնց :

ԱՐԺԱՆԹինի Քորտոպա քաղաքին մէջ նոր խռովութիւններ ծագեցան եւ ոստի֊կանութիւնն ու դրամատան պաչտօնեա֊ները բախումներ ունեցան. ինչպէս ծա֊նօթ է, դրամատան պաչտօնեաները եօթը չարաթէ ի վեր գործադուլի մէջ են : Ե֊րեք հոգի վիրաւորուած եւ բազմաթիւ ուրիչներ ձերբակալուած են :

ՍՈՒՏԱՆԻ Արտաքին նախարար Ահմէտ Հէյդ յայտարարեց թէ երեքչաբթիէն ի վեր 40 համայնավարներ ձերբակալուած են. անոնք կը դործակցէին օտար տարրե֊րու հետ՝ երկրին ապահովութեան դէմ աչխատելով , ուեղցուց ձայնասփիւռը :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ՝ ԱՅՍՕՐ, ՇԱԲԱԹ

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՍ՝ Դ. ԷՋ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀՐԱՇՔԸ

Այն օրերին Ռուսաստանը քաղաքացիական կռիւներով էր բռնուած, եւ կովկասեան ճակատի բանակը չունէր դէպի տուն։ Յաղթական էր Թիւրք-պերման զինակցութիւնը։

Կովկասեան ժողովուրդները մի պահ մնացին իրենք իրենց, մէնմենակ։ Եւ Ռուսի մարակով զապուած միջցեղային առելութիւնն ու կիրքը, յանկարծ, պոռթկացին հիւսիսից հարաւ, երկրի ամբողջ տարածութեան վրայ։

Հայ, Թուրք, Վրացի, լեռնական ցեղեր կատաղի մրցեղնութեամբ միմեանց դէմ ելան։ Եւ մինչ սրանք իրար էին յօշոտում, վէհիր փաշայի դումարտակները քայլ առ քայլ մօտեցան Կովկասի դռներին։ Ընկան Երզնկան ու Բաբերդը, Կարսն ու Տարօնը։ Ապա՝ Սարըղամիշ, Բաթում, Կարս եւ Ալէքսանդրապօլի երկաթուղային հանդոյցը։

Վէճ, նախանձ, զաղանի դաւեր Թիֆլիսի Սէյմում։ Տրապիզոնի եւ Բաթումի անպատուղ բանակցութիւններ։ Թուրքը յաղթական իր կամքն է թելադրում Կովկասին, որի խլամ զաւակները սրտա-տրոփ անձկութեամբ սպասում էին հաբաղատ հաւատակիցների ազատարար դալստեան։

Ողբերգական օրեր Հայաստանի համար։ Ի սպառ կտրած արտաքին աշխարհից։ Մենակ ու լքուած։ Ջախջախուած եւ անօգնական։ Ամէն կողմ աւեր ու աւար։ Որբ ու զաղթական։ Ողբ ու կական։ Սով ու համաճարակ հիւանդութիւններ։ Գարտուղիւն եւ մահ։ Հայոց աշխարհը՝ մեռելների կղզի, համատարած գերեզմանատուն։ Իսկ Վէհիր փաշայի զուարտակները զրաւել են Շիրակը, Արագածոտնը, մտել են Արարատեան դաշտ եւ արագ չարժումով մօտենում են Էջմիածնին ու Երեւանին։

Ոչ մի տեղից ոչ մի յոյս։ Փախո՞ւստ, բայց ո՞ւր։ Թիֆլիսի ու Բագուի ճամբաները՝ փակ։ Պարսկաստանի երկաթուղին ապստամբ Շարուրցիների ու Նախիջեւանցիների ձեռքը։ Իսկ հարաւից եւ արեւմուտքից՝ Թիւրքն է խուժում՝ վրէժխնդիր ու կոտորող։ Մահ ու մահ — ուրիշ ելք չկայ։

Ու յանկարծ. «Հայեր, չտապեցէք հայրենիքը ազատելու», որտայց ընդհանուր յուսալքութեան մէջ Զօրավար Սիլիկեանի ձայնը։ Յաւիտեան տանջուող ու միշտ կենսունակ ու յաղթական Հայի ոգին է խօսում այդ օտարացած ու նոր միայն, տառապանքի ծովում իր ազգային ինքնութիւնը ճանաչած հայ զօրավարի բերանով.—

« Հայեր, չտապեցէք հայրենիքը ազատելու։

« Հասել է րոպէն, երբ իւրաքանչիւր Հայ՝ մոռանալով իր անձնականը, յանուն Մեծ Գործի՝ հայրենիքի փրկութեան եւ իր կնոջ ու ազջիկների պատուի պաշտպանութեան պէտք է զործ դնէ իր վերջին ճիգը՝ թշնամուն հարուածելու համար։

« .. Հայեր, ժամանակը չէ դանդաղելու։ Մինչեւ յիսուն տարեկան ամէն առողջ մարդ՝ զէնքի տակ։ Ես պահանջում եմ ամէնքից ներկայանան սեփական զէնքով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանութեան համար։

«Հայուհիներ, յիշեցէք հինգերորդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգեւորեցին իրենց ամուսիններին զէպի Մեծ Գործը, անմահ Վարդանի կռիւների ժամանակ։ Հետեւեցէք նրանց օրինակին։ Պրախուսեցէք ու զէպի կռիւ մղեցէք ձիաւոր զնդլուց խուսափող վախկոտներին։ Հաւաքեցէք ռազմամթերք, հաց, հագուստ եւ ուրիշ մթերքներ ...

« Ոտքի ելէք։ Դէպի սրբազան պատերազմ »։

Եւ հինգերորդ դարու ոգիով ներչըն-չուած այս կոչը անարձագանգ չմնաց։ Շարժուեց, մէկ մարդու պէս ոտքի ելաւ ողջ Արարատեան դաշտի ժողովուրդը, յաղթելու վճռական կամքով։ Ազատութիւն կամ մահ։ Ազատութեան սրբազան հուրը ոգեւորեց ամէնքին։ Եւ երբ Թիւրքական զօրքերը, հետեւելով երկաթուղու գծին, երեւացին մի կողմից Սարդարապատի մօտերն ու Արագածի լանջերին, իսկ միւս կողմից՝ Փամպակի ձորում, իրենց առջեւ գտան առիւծասիրտ հայու թեան երկաթէ կուրծքը։ Եւ կատարուեց Սարդարապատի հրաշքը։

Պատմութիւնը ասում է.

« Արարատեան դաշտի ժողովուրդը մի մարդու պէս ոտքի է կանգնում։ Գոր ծում են ամէնքը։ Ազգային Խորհուրդը վարում է բանակի լրացման, կազմակերպման եւ մատակարարման գործը։ Հրամանատարութիւնը կարգաւորում ու բարձրացնում է զօրքի մարտական ուժը։ Զօր. Սիլիկեանը մի շարք հրամաններով ու կոչերով խրախոյս է ներչնչում զինուորներին ու հասարակութեան։ Ամէնքը լծուում են թիկունքային աշխատանքի։ Կանայք, օրիորդներ՝ ուսելիք, ծխախոտ, վիրակապներ են պատրաստում։ Հոդեւորականութիւնը խաչ ու քարոզով մտնում է ժողովրդի ու զօրքի մէջ։ Գաղեղին եպ. Յովսէփեանը չրջում է մի մասից միւսը եւ իր հրաշունչ ճառերով բարձրացնում է զօրքի տրամադրութիւնը։ Կրկնուում էին Վարդանանց պատմական օրերը »...։

Հայոց ուժերը բաժանուած էին երկու մասի. Բաչ – Արարանի ճակատի պետն էր Դրօն, Սարդարապատի ճակատում՝ Դանիէլ Բէկ Փիրումեանը։ Զօրքերի ընդհանուր հրամանատարն էր Զօր. Սիլիկեանը։

Կռիւները սկսեցին Սարդարապատում.. Մայիս 23ին Զօր. Սիլիկեանը տուեց հակայարձակման հրաման։ Հայկական ուժերը նետուեցին առաջ։ «Բռնկուեց կատաղի ճակատամարտների երկար մի շարք։ Թուրքերը ցոյց տուին յամառ դիմադրութիւն՝ անցնելով բազմաթիւ հակայարձակումների ... Որոտում էին թնդանօթները, որոնց զոռոցը հասնում էր մինչեւ Երեւան, ուր նոյնպէս տիրում էր անդադար եռ ու զեռ։ Թիկունքից սայլերով, էշերով, ձեռքերով ռազմամթերք էին հասցնում կռուողներին, հաց, ծխախոտ, խմելու ջուր ...։ Բազմաթիւ կամաւորներ՝ ծեր ու երիտասարդ՝ ռազմաճակատ էին չտապում։ Ճակատի դին-ուրը չէր միայն — ամբողջ երկիրը մի մարդ, մի չունչ դարձած՝ կռւում էր մահացու թշնամու դէմ։

« Մայիս 24ին Թիւրքերը դիմեցին փախուստի։ Մերոնք հալածեցին ոգեւորուած ... Ճակատամարտները նաեւ Ղարաքիլիսայում ու Բաչ – Աբարանի ճակատում։ Այստեղ էլ կռիւները տեւեցին մի քանի օր, բայց Դրօյի հմուտ զեկավարութեան տակ Հայերը յետ չպրտեցին թշնամուն Աբարանի բարձունքներից։

Մայիս 28ին ամբողջ ճակատի վրայ, Սարդարապատից Բաչ – Աբարան, Թուրքերը նահանջում էին անկարգ։ «Թուրքերը, երեք օրուայ կռիւներից յետոյ, ջարդուած են եւ նահանջում են հապճեպով... Մեր զօրամասերը քայլ առ քայլ հետապնդում են նրանց։ Ոգեւորութիւնը աներեւակայելի է »,— հաղորդում էր Զօր. Սիլիկեանի սպայակոյտը։

Թիւրք զօրքը փախչում էր եւ Հայը հալածում։ Այլեւս փոխվրէժի մասին էր մտածում Սիլիկեանը. յետ առնել Ալէքսանդրապոլը, յարձակուել ու վերագրաւել Կարսը։

Սարդարապատի յաղթութեան յաջորդ օրն իսկ, Մայիս 29ին, նա մի նոր կոչ ուղղեց ժողովրդին.—

« Հայեր։ Մեր քաջարի զօրքերի հերոսական գործունէութիւնը չարունակուում է, եւ թիւրք զօրքերը նահանջում են։

« Մենք պէտք է յետ առնենք Ալէքսանդրապոլը, որը այնպէս նենգօրէն գրաւեցին Թիւրքերը։

« ... Մի դանդաղէք, Հայեր։ Շտապեցէք խիտ ու համերաշխ շարքերով, վոնտեցէք թշնամուն մեր հայրենի արիւնաներկ հողից, եւ թող ձեզ հետ լինի ձեր յետնորդների օրհնութիւնը։

« Դէպի՛ զէնք բոլորդ։

«Դէպի՛ Ալէքսանդրապոլ»։ (*)

Եւ, իսկապէս, Արարատեան Աշխարհը այդ օրերին ապրում էր Ալէքսանդրապոլը վերագրաւելու տենդով։ «Մի երեք չորս օրից յետոյ մենք կը հասնենք մեր նպատակին », վստահացնում էր Սիլի կեանը։ Եւ ամէնքը հաւատում էին։

Եւ մինչ հայկական բանակը պատրաստում էր նոր յարձակման, հասաւ ապրիլեան Նազարբէկեանի հրամանը.—

Բաթումում ստորագրուած էր հաշտութեան դաշնագիր Օսմանեան կայսրութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ։ Պէտք էր վար դնել զէնքերը ...

Մոխիրների եւ տառապանքի միջից ծնունդ էր առնում Մանուկ Հայաստանը։ Փոքր, հիւծուած, «անձեւ քաոսի եւ ահեղ վհուկների կոյտ», բայց — Հայաստանի Հանրապետութիւն։ Առաջին անգամ, դարերի սարկութիւնից յետոյ, Հայը կոչուում էր պետական կեանքի եւ Հայաստանը դառնում էր անկախ պետութիւն։ Եւ Հայաստանի անդրանիկ Խորհրդարանի առաջին նախագահ Ա. Սահակեանի բերանով հայ ժողովուրդը յայտարարում էր աշխարհին իր վճռական հաւատը.—

« Երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ։ Ես հաւատում եմ, որ մեր երկրի սահմանները կ'ընդարձակուեն կեանքի երկաթէ ուժով »...

Եւ ընդարձակուեցին։ Հայաստանը նորից տեսաւ վերելքի եւ անկման օրեր։ Նոր փոթորիկներ եկան ու անցան։ Եւ հիւսիսի Բորէասը դեռ չարունակում է իր սառցէ գրկում կաչկանդուած պահել մեր Հայրենիքը, բայց Հայաստանի Հանրապետութիւնը կայ ու կը մնայ։

« Երկրի սահմանները քարացած չեն » ... Քարացած չեն եւ ոչխարները։ Սուլթաններն եւ ցարերի գահերի խորտակումը տեսանք. կը տեսնենք եւ Սթալինների բռնապետութեան փլուզումը։ Եւ Հայաստանի Հանրապետութիւնը նորից կը տեսնենք ազատ ու անկախ։

Այս է խորհուրդը Սարդարապատի հրաշքի։

Ս. ՎՐԱՑԵԱՆ.

(*) Բոլոր մէջբերումները առնուած են « Հայաստանի Հանրապետութիւն » պրից։

ԻՐ ԽՕՍՔԸ

ԻՆՉՈ՞Ւ

ՏԷՐ ՉԵՆ ԸԼԼԱՐ

Զարմանալի բաներ կ'լիմանանք։

Երկու տարի առաջ, 1954ին, Երեւանի մէջ հրատարակուեցաւ գիրք մը, «Դերուազներ Սովետական Հայաստանի պատմութենէն », (Ա. Հատոր)։ Հեղինակները՝ Հ. Մ. Էլչիբէկեան եւ Ա. Մ. Յակոբեան։

Գիրքը նկարագրելով 1918ի մայիսեան ճգնաժամը, կը պատմէ.

— Հայ ժողովուրդն իր համար ստեղծուած այս ծանր օրերին, հակառակ դաշնակիցների կապիտուլանտական – դաւանանական բաղաքականութեան, մի շարք վայրերում յամառ դիմադրութիւն ցոյց տուեց թիւրքական զաւթիչներին։ Երեւանի շրջակայ գիւղերի բնակչութիւնը Սարդարապատի տակ Մայիսի վերջին օրերին, պարտութեան մատնեց, երեսուն վրայ արշաւող թիւրքական դիվիզիային եւ ստիպեց նրան ետ նահանջել դէպի Ալեքսանդրապոլ։ Նոյն օրերին Ղարաքիլիսայի տակ Ղազախ – Դիլիջանի եւ Փամպակի գիւղերի գիւղացիութիւնը երեք օր

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

(ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

Ու կը խօսի Շուշանը, «ով գիտէ ջուրը մինչքացաւ, ով գիտէ խմքնի էգնէն ննջաւունքն էլ հիմը գնաց» ընդգծելով իր որդւոյն կատարած արհեստին վտանգաւոր հանգամանքը, եւ կ'աւելցնէ. «Ներա գլխին էլ վուր մի բան գա, Ջուրն ածելու կու գառնանք»։ Ու բողոքի հուժկու ցասումով մը ծառանալով Զիմզիմովի դործած անիրաւութեան դէմ, որ իրենց գործատուութեան ուղղակի պատճառն է, ծերունի կինը կը գոչէ. «Խէնց էլ ապրել կուլի՞, Հաղմիեան տէրն անի քու գատաստանը, Արութին»։

Միայն Պետօն չէ որ գլխէր – ցերեկ կը չարչարուի իրենց օրապահիկը ճարելու համար։ Նոյն վիճակին մէջ է նաեւ քոյրը՝ կեկելը։ «Կար անող է » ան եւ մուշտարու ձեռքին գերի է։ Մայրը, տեսնելով իր միակ աղջկան չարաչար աշխատանքը, կը յորդորէ որ հանգստանայ, քիչ աշխատի։

« Չի ըլի, դէդի, հորէս տէրը կուզայ» ու երբ Շուշանը կը դժգոհի թէ «Ներա աչքն էլ կարեմ, խիստ չատ է տալի՞», կեկելը կը բացատրէ. « Բանն էլ էդ է՛, էդ է՛, դէդի, ինչրու Ներա գալը դիւի հազեր ի՛, էլ թամամ գլինը չի տա. խօ գլխես ինչ անատուածն է»։

Ո՞վ է այդ «անատուածը» որուն դէմ իրենց տրտունջը կը բարձրացնեն Շուշանն ու կեկելը։ Այդ անատուածը կարի դործ տուող հարուստ վաճառականն է, որ քիչ դրամ վճարելով հանգերձ իր աչխատաւորներէն կը պահանջէ չատ դործ՝ եւ իր հատու գրիչով ու կծու ոճով, Սունդուկեանց կը յարձակի բոլոր տեսակի կապալառուներուն եւ վաչխառուներուն, անարդանքի սիւնին դամելով զանոնք։

Սունդուկեանցի ստեղծած տիպարները բոլորն ալ կենդանի, առողջ ու իրենք իրենց մէջ յատկանչական են։ Աղնիւ, բարի, ծանրախոհ ու աչխատասէր Պետոյի տիպարին քով, Սունդուկեանց ստեղծած է ուրիշ մըն ալ՝ կակուլին, Պետոյի ընկերը։ Կակուլին ալ, նման Պետոյին, վհանձն է, աղնիւ ու հալալ աչխատանքի հետամուտ։ Սակայն, աւելի կրակոտ է ու աւելի չուտ բորբոքող։

Սունդուկեանի այս հերոսը կինոտ մըն է, որ սակայն մեծ առելութեամբ է լեցուած դէպի հարուստները։

« Վիրչի կինոտչին կու փոխի՞մ նրանց հետ, կ'ըսէ կակուլին, ակնարկելով հարուստներուն, միղ վուր ստեղծել է աստուած, թուչունի հանքն է ստեղծի, օր դատինք, օր ուտինք, էլ մեռնելիս ան-դերձի դլուխ ո՞վ ունէ, տօ՛»։

Երբ կ'իմանայ որ մուրհակը կորսուած է եւ Զիմզիմով ուզելով առիթէն օգտը-ել նպատակ ունի «զոլնել» հազար թուման, կակուլին բռունցքը բարձրացնելով, կ'առաջարկէ Պետոյին միասին երթալ ու Արութինին լաւ դաս մը տալ։ Պետոն, սակայն, կը յանդիմանէ դրեթէ իր տաքարիւն ընկերը, ըսելով թէ ամէն բան աչխարհի վրայ բռունցքով չի կարդաղրուիր։ Եւ սակայն, դէպքերը այն պէս մը կը դասաւորուին, որ խաղի վերջաւորութեան պէտքը կը զգացուի կակուլիի բռունցքին։ Արդարեւ, երբ Զիմզիմով կը տեղեկանայ թէ մուրհակը պատռուած է եւ թէ Պետօն մտաղրած է այդ մուրհակով խաղալ ու խայտառակ ընել զինքը, կուզայ եւ կ'աղաչէ որ մուրհակը վերադարձուի իրեն եւ ինք քիչ մըն ալ աւելի վճարէ ու ամէն բան վերջանայ։ Ինչպէս արդէն ըսած էի քիչ առաջ, իր ինչպէս արդէն ըսած էի քիչ առաջ, իր ինչպէս արդիւն կ'անցնին, Պետօն կը չանքերը ապարդիւն կ'անցնին, Պետօն կը չանքերը ապարդիւն կ'անցնին, Պետօն կը չանքերը ապար

ԼՈՒՅՍ ՋԱՐԱՆՑԵԼ

Գ.

— Շատ բնական է որ մարդ ուզի իմանալ, թե ինչո՞ւ ես դու այդպես վարվում քո հարազատների հետ, ինչո՞ւ ես դու նրանց հեռացրել քեզանից, ինչո՞ւ ես դու ատում քո ամուսնուն, որ այդքան սիրում է քեզ, ինչո՞ւ ես դու ամեն կերպ փորձում նրան նեղացնել, ինչո՞ւ ես դու ամեն օր նրան նոր վշտեր պատճառում, ինչո՞ւ ես դու ամեն օր նրան նոր ցավեր պատճառում, ինչո՞ւ ես դու ամեն օր նրան նոր տանջանքներ

ՄՆՈՒՆԴ

Տէր եւ Տիկին Նուբար Գարբիէլեան ուրախութեամբ կը ծանուցանեն իրենց անդրանիկ զաւկին՝

ՆԱՏԻՆ – ԱՆԱՀԻՏԻ

Ծնունդը 26 Մայիս, 1959, Փարիզ :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՕՐ ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Վալանսի Շ. Միսաքեան մասնաճիւղի Նոր Սերունդի օրուան առթիւ կազմակերպած խնջոյքը՝ այս կիրակի կէսօրէ յետոյ ժամը երեքին, Ահարոնեան Սկումբին մէջ :

ՕԴԱՓ. ԿԱՑԱՆ

Ֆ. Կապոյտ Խաչի Օգափոխ. կայանին արձանագրութեանց վերջնական ձեւ մը տալու համար, նախապէս արձանագրուողները պէտք է ներկայանան մինչեւ Յունիս 10, Րիւ Մէյրաւի 5, երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ, ժամը 13–14 եւ 18 – 20, այս օրերէն դուրս ժամադրութեամբ, հեռ. Թռիւէն 27-35:

Մինչեւ Յունիս 10 չներկայացողները պիտի համարուին հրաժարած :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ն. Պ. Հայ Սպասից Մխիթարեանը հրաւիրած է անխտիր բոլորը ներկայ լինելու այս կիրակի, Փարիզի Հայոց եկեղեցւոյ հոգեհանգստեան պաշտօնին, յարգելու համար յիշատակը Սարդարապատի, Բաշաբարանի, Ղարաքիլիսի եւ ուրիշ հերոսամարտերուն 1918 Մայիսին, պատուոյ պաշտում ընկած հայ բանակի սպաներուն, ենթասպաներուն եւ զինուորներուն, որոնք Սպարապետ Նազարբէկեանի ընդհանուր հրամանատարութեամբ եւ քաջարի հայ ժողովուրդի միահամուռ ճիգերով պարտութեան մատնեցին զարաւոր թշնամու զերազանց ուժերը եւ փրկեցին հայրենիքը եւ էջմիածնի Ս. Աթոռը :

×

Պ. Վահրամ Տէր Խաչատուրեան կը ծանուցանէ թէ այս կիրակի առաւօտ հոգեհանգիստ պիտի կատարուի Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին, իր ողբացեալ կնոջ՝

ՓԵՐՈՒՋ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

մուտքը ազատ է :

Կը հրաւիրուին հանդուցեալին յիշատակը յարգողները :

ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԿՐՏՋ. ԵԿԵՂԵՑԻ

20, RUE JEMMAPES

ՄԱՐՍԻԼ

Այս կիրակի առաւօտ Սէն Ժեռոմ 9-45ին, Մարսէյլ 10-45ին: Կը խօսի Պատուելի Հէլվաճեան :

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

30 Մայիս, Շաբաթ գիշեր; ժամը 8-30ին ՓԱՐԻԶԻ 6ՐԴ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇՐՋԱՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Place St Sulpice Métro : St Sulpice

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ՝ ԸՆԿ. ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ԿԸ ԽՕՍԻՆ՝ Պ. Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, ԸՆԿ. Կ. ՄԵՀԵԱՆ *եւ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉԸ*

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ.—

Ա. մրցանակ Փարիզի Պետ. Երաժշտանոցէն

Mlle. Guislaine de Monceau, Violon
Mlle. Gisèle de Monceau, Violoncelle
Madame Monceau, Piano
Madame Brisset,

ԿԵՐԳԷ (Զանգակներուն երգը) (Լաքմէ)

ՋՈՒԹԱԿՈՎ.—
1.— Կանչէ Կուսիկ *Ալէքսանեան*
2.— Քուն եղիր պալաս *Կանանչեան*
3.— *Եւրոպական*

ԹԱՒ ՋՈՒԹԱԿՈՎ.—
1.— Մայր Արաքսի *Հ. Թորոսեան*
2.— Ալագեազ *Կոմիտաս*
3.— *Եւրոպական*

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.— Պ. ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԼԷԹԵԱՆ եւ ԸՆԿ. ՎԻԳԷՆ ԹՈՐՈՍԵԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ (Երգ)

Հայկական պարեր Հ. Յ. Դ. Նոր Սերունդի խումբին (Պանեէօ) կողմէ :

Նուագախումբ՝ ՏԻՏԻՃԵԱՆ, Երգիչ ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ԺԱՄԸ 11-30ԻՆ:

ORCHESTRE JEAN-CLAUDE PELLETIER

Vedette des disques Vogue

Առատ եւ ճոխ պիւֆէ :

Մուտք 300 ֆրանք

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Վալանսի Շրջ. Կոմիտէի, մասնակցութեամբ՝ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Շ. Միսաքեան» խումբին :

Այս Շաբաթ երեկոյ ժամը 8-30ին, քաղաքապետարանի թատրոնին մէջ :

Կը նախագահէ ընկերը Մ. ՊՕՅԱՃԵԱՆ :

Կը խօսի ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆ

Գեղարուեստական ճոխ բաժին Նոր Սերունդէն: Խմբերգ, մեներգ, պար, արտասանութիւն, կովկասեան պարեր Պօյաճեան եղբայրներու կողմէ :

Ճոխ պիւֆէ :

Մուտքը ազատ է :

ՎԻԵՆԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին, Սէրքլը Կաթոլիկ սրահը :

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Վիեննի կոմիտէի, մասնակցութեամբ Ֆ. Կ. Խաչի, Հայ Կամ. եւ Մարտիկներու Միութեան, Հ. Մ. Ը. Մ.ի եւ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի :

Կը նախագահէ Պ. Կ. ՏԻՐՄՈՑԵԱՆ :

Կը խօսի ընկ. ՍԻՍԱԿ ՍԻՍԼԵԱՆ

Գեղարուեստական խնամուած բաժին : *Մեներգ, արտասանութիւն, պարեր եւ ուղերձներ :*

Կիթառի վրայ պիտի նուագէ Նոր Սերունդի Արման Էգասեան :

Մուտքը ազատ է :

×

ԻՍԻԻ ՄԷՋ

Իսիի մէջ Յունիս 7ին :

×

ՊԱՆԵԷՕ-ՔԱՇԱՆԻ ՄԷՋ

Յունիս 14ին :

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Յունիս 7ին :

ՀՐԱՒԻՐ ԸՆԴՀ. ԼԻՈՆԱՀԱՑ ԳԱՂՈՒԹԻՆ

Հայկ. Բ. Ը. Միութեան Լիոնի մաս. նաճիւղը, սիրով կը հրաւիրէ ձեզ, կարեւոր խորհրդակցական ժողովի մը, որ տեղի պիտի ունենայ այս Շաբաթ երեկոյ ժամը 8-30ին, տեղւոյս նորակառոյց եկեղեցւոյ սրահին մէջ, 295, Րիւ Պուալօ :

ԿԱՐԵՒՈՐ.— Միութեանս «Շինարար» թերթին յաջորդ թիւը նուիրուած պիտի ըլլայ մեր այս Ընդհ. ժողովին : Ժողովը պիտի նկարուի եւ լայն մանրամասնու-թիւններով թերթին պիտի ուղարկուի, հրատարակութեան համար : Վարչու-թիւնս կը փափաքի տեսնել մեր բոլոր անդամներուն եւ համակիրներուն խմբանքը-կրը իրենց կենսագրական դիծերով :

ԴԻՒԱՆ

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ

Յունիս 10ին, Շորեքշաբթի, երեկոյեան ժամը 9ին,

ECOLE NORMALE DE MUSIQUE

78, Rue Cardinet. Paris

Կը մասնակցին

ՍԻՐԾ ԳՈՒԼՕ (բամբ Լութակահար)
ՄՈՆԻՔ ՄԱԹԱՆԵԼ (դաշնակահար)

Երեկոյթը նուիրուած է զերման վիպագան երաժշտութեան (ՇՈՒՄԱՆ, ՊԸՐԱՄՍ) :

Առաջին ունկնդրութիւն ՄԱՐՍԻԼ ՏԸԼԱՆՈՒԱՑԻ վերջին մէկ դործին. Սիւլամիթ :

Տոմսերու համար դիմել՝

DURAND, PLACE DE LA MADELEINE
OU MLLE. ITCHKALATZIAN, 73, FBG. POISSONNIERE, TEL. PRO. 64-23

ՇՕՓԵՐ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԼԻՈՆԻ ԵԿԵՂԵՑԱՅԻՆ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Այս կիրակի Մայիս 31ին, ժամը 16էն 24,

Պրօնի հին քաղաքապետարանի կից՝ ՍԷՆ ՄԻՇԵԼ ԼԱՖՐՈՒԱ (Լա Կանէօզ) սրահներուն մէջ :

ORCHESTRE RAOUL BRUCKHER

եւ հեռատպայութեան (թելեփաթի) մասնագէտ՝

RYSKO

ՃՈՒՇԱՑԻՑ

ՎԱԼԱՆՍ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէի ընդհ. ժողովը այս կիրակի առաւօտ ժամը 10ին, սովորական հաւաքատեղին : Ներկայ կ'ըլլայ Կ. Կ. Ներկայացուցիչը : Կարեւոր օրակարգ :

Կ'ՈՒԶՈՒԻ

Հաշուապահուհի մը, որ պիտոյ մը քննապրել, եւ հաշուապահութեան ամէն գործողութեանց տեղեակ ըլլայ :

Դիմել՝

ÉTB. O. B.
83, Rue d'Aboukir, Paris

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, RUE THOUIN

Հոգեհանգստեան պատարագ ի յիշատակ բանակի զօրավար՝


Julien Dufieux ի

(Նախկին պատուիրակ եւ հրամանատար Կիլիկիոյ մէջ) : Այս կիրակի առաւօտ ժամը 10-30ին :

Կը պատարագէ ԳԵՐ. ԿԱՐԱՊԵՏ Ծ. Վ. ԱՄԱՏՈՒՒՆԻ :

Կը հրաւիրուին ողբացեալ հրամանատարին յիշատակը յարգողները :

ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՄԵԼԻՆԵՐ



REMINGTON "Princess"
— Մասնաւորաբար —
ԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
պատրաստուած մօտէլը

REMINGTON "Super 60"
— ԱՄԷՆԷՆ —
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾԸ
Super-confort du rasage électrique

REMINGTON IV
Բոլոր պիւտճէներուն մատչելի ՄՕՏԷԼ մը
ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ

Services Commerciaux Rasoirs Electriques
12 Rue Edouard VII Paris-9e

ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ
— ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ —
ՏՊԱՐԱՆ "ՏԱՐՕՆ"
20, Avenue des Cottages
CALLUIRE (Rhône)

Կը ստանձնէ հայերէն եւ ֆրանսերէն ամէն տեսակ տպագրական մաքուր գործեր :

Արագ գործառնութիւն, դիւրամատչելի պայմաններ :

Առնել թիւ 8 թրօլէյիւսը եւ իջնել Սէն Փլէրի (վերջին կայարանը) :

ԶՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
EXPERTISE GRATUITE
Ծախելու համար
ձեր փավիյօնը, վիլլան,
յարկաբաժինը կամ խանութը :

J. TORANIAN
18, AVENUE DE L'OPÉRA
OPE 73-21 OPE 19-45

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և Հասարակապետութիւն, տար. 4000 ֆր. վեց. 2200
Արտասահման՝ տարեկան 5000 ֆրանք: Հատը 20 ֆր.

ԿԻՐԱԿԻ
31
ՄԱՅԻՍ

DIMANCHE
31 MAI
1959

35ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8406 35EME ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 15ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4307

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀԱՅ ՄԱՅՐԸ

Ֆրանսայի աղջնակն ու տղեկը կ'երգեն.
Իմ մայրս մայր մըն է՝
Ուրիշ մայրերու նման,
Եւ սակայն ... իմս է ան :

Մենք ալ նմանօրինակով կրնանք ը – սել.
Հայ մայրը մայր մըն է
Ուրիշ մայրերու նման,
Եւ սակայն ... Հայ է ան :

Անտիտուութիւն չէ, ոչ ալ մեր ազգա – յին եսասիրութիւնը չոյելու կոչուած ամ – բոխոտարութիւն՝ երբ ուելցնենք թէ հայ մայրը աշխարհի բոլոր մայրերէն գերա – զանց է :

« Մայրերու Օր »ուան առթիւ ամէնէն ուելի հայ մայրն է, որ իրաւունք ունի փառաբանուելու : Որովհետեւ չնորհիւ հայ մօր անաչառման զոհողութեան եւ անձնման նուիրումին է, որ անյիշատակ դարերէ ի վեր հայ ժողովուրդը կարծր ուալով ահաւոր փոթորիկներու՝ եկած հասած է մինչեւ մեր օրերը :

Անհուն պարտամունք են ունեցած մեր նախահայրերը հանդէպ հայ մօր :

Հեթանոսական շրջանի չաստուածներէն ամէ՛ն սիրելին եղած է Անահիտ, մայ – րութեան աստուածուհին, զոր կը կոչէին «մայր ամենայն դրաստութեանց, բարե – բար ամենայն մարդկան բնութեան ,որ է փոս, ապիս մերոյ եւ կեցուցիչ, որով կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց » :

«Քանդակագործ քաջ եղիչէ»ն անմահ է – ղերու մէջ պանծացուցած է հինգերորդ դարու մեր «Տիկնայք փափկասունք»ը, ո – րոնք Վարդանանց պատերազմի բախտո – րոշ օրերուն այնքան սխալի քաջութիւն – ներով զարմնեցուցած էին հայ կնոջ զոր – խուն :

« Իրենց մարմիններուն մորթը սեփսե եղաւ, որովհետեւ գերեզմանը արեւուն դիմացը կ'այրէին եւ դիւցերները գեանի վրայ կը պառկէին : ... Մոգան իրենց կանացի տկարութիւնը եւ առաքինի այ – րեր եղան հզօրաւոր պատերազմին մէջ » :

Այրեցած հայ մայրը իր ջարդուած ա – ռուսինին սուգը սրտին՝ արցունքատ աչ – քերուն լոյսով մինչեւ լոյս աքնեցաւ՝ ա – զգին ծայրով ապրուստ ճարելու համար իր որբ ճագուկներուն :

Աքսորի ճամբաներուն վրայ եւ անա – պատին մէջ հայ մայրն էր, որ իր զա – ւակներուն ֆիզիքական գոյութիւնը պահպանելով մկկռեղ՝ անոնց կը ներչն – չէր հայրենասիրական ոգի եւ կը սոր – վեցնէր հայ լեզուն :

Զուննալով դիրք, թուղթ ու գրիչ , աքսորական մայրիկը անապատի աւազին վրայ մատներով կը գծէր մեր ոսկեղինի – կին 38 տառերը, որպէսզի օտար աստղե – րուն տակ հասակ նետող փոքրիկին փո – խանակ պապենական ժառանգը , — մայ – րենի լեզուն :

Մեծ է եղած դերը հայ մօր ու հայ կնոջ նաեւ մեր ազատագրական պայքարին մէջ :

Հայ Տիկինը յորդորում է ամուսնոյն
գնալ
Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ
ստանալ :

Զէյթունի մէջ, Սասունի լեռներուն վրայ, Տուրուբերանէն եւ Վասպուրական – էն մինչեւ Ղարաբաղ, Մուսա լեռէն ու Եգեսիայէն մինչեւ Շապին Գարահիսար մեր բոլոր հերոսական մարտնչումներուն մէջ հայ կինը միշտ կանգնած է իր ա – մուսնոյն կողքին եւ զոհաբերուած յանուն ազգին :

Այսօր ալ մայրերն են, մանաւանդ մեծ մայրիկները, որոնք սփիւռքի մէջ վառ ու կենդանի կը պահեն ազգային ոգին ու մայրենի լեզուն կը սորվեցնեն նոր սե – րունդին :

Փա՛ռք ու պատիւ հայ մայրերուն :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ՄԵԾԵՐՈՒ ԺՈՂՈՎ ԹԻՐԱՆԱՅԻ ՄԷՋ

ԱՐԲԱՆԵԱԿ ԵՐԿԻՐՆԵՐԷ ՕԴԱՆԱՒԵՐ
Կ'ԵՐԹԱՆ ԱԼՊԱՆԻԱ

ԽՐՈՒՇՁԵԻ – ԹԻԹՕ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ
ՀԱՐՑ ՉԿԱՅ

Ա. Մ[illegible] արբանեակ երկիրներէն բազմաթիւ օդանաւեր անցան Եուկոսլա – ւիոյ վրայէն՝ դէպի Ալպանիա : Պելկրատի մէջ հարց կուտան թէ համայնավար մե – ծերու ժողով մը չէ՞ բացուած արդեօք Թիրանայի մէջ, Խրուշչեւի նախապատու – թեան ներքեւ :

Արդարեւ, բացի խորհրդային Վարչա – պետէն, Թիրանա կը գտնուին արդէն Ա – րեւելեան Գերմանիոյ Վարչապետ Կրոթ – ուոլ եւ համայնավար Չինաստանի Պաոե – բազմական նախարար Թէ – Հուէ : Ալ – պանական մամուլի դործակալութիւնը հաղորդեց թէ երեքշաբթի օր անոնց պի – տի միանայ նաեւ Հիւս. Քորէայի Խոր – հրդարանի նախագահ Շոէ Եոնկ Քուն :

Ամէն պարագայի մէջ, Պելկրատի մէջ կը մտածեն թէ հաւանական է որ համայ – նավար այլ դեկավարներ կը գտնուին Թի – րանա, Խրուշչեւի մօտ : Արեւելեան գրե – թէ բոլոր երկիրները Եուկոսլաւիոյ վը – րայէն թռիչք կատարելու արտօնութիւն ուգած եւ ստացած էին վերջին օրերու ըն – թացքին : Բացառիկ պարագայ մը :

Կարգ մը լրագրողներու հարցումներուն պատասխանելով, Պելկրատի կառավա – րութեան բանիերը յայտարարեց . — « Մենք արտօնութիւն տուինք որ Արեւել – եան Եւրոպայի երկիրներէն օդանաւեր թռիչք կատարեն Եուկոսլաւիոյ վրայէն՝ Ալպանիա երթալու համար, բայց չենք դիտեր ճամբորդներու անունները » :

Յարդ Ա. Միութիւնը 13 օդանաւերու անցքին համար արտօնութիւն ստացած է Եուկոսլաւիոյէն՝ մինչեւ Յունիս վեց , երբ կը վերջանայ Խրուշչեւի այցելու – թիւնը : Ուշագրաւ է այն պարագան, որ 13 օդանաւերու երկուքը Թ. Իւ. – 104 եւ Թ. Իւ 114 տեսակէն են, մեծ եւ զօրաւոր օդանաւեր , որոնք բնական հաղորդակ – ցութիւններու համար չեն գործածուիր :

Հետեւաբար, կիսապաշտօնական կեր – պով կը հաստատուին այն գրոյցները , որոնց համաձայն Վարչապետ Դաշինքին պատկանող երկիրներու դեկավարները ժողով մը կը գումարեն Թիրանայի մէջ , Խրուշչեւի հետ :

Այս առթիւ Միացեալ Նահանգներու Արտաքին նախարարութիւնը դեկոյց մը հրապարակեց, ուր կը հետեւի թէ Ալ – պանիայէն Յունաստանի եւ Իտալիոյ դէմ ագահնալիքներ ընելով՝ Խրուշչեւ կը ծանրացնէ միջազգային լարուած կացու – թիւնը ճիշդ այն պահուն՝ երբ Արեւ – մուտքն ու Արեւելքը միջոցներ եւ համա – ձայնութեան եղանակներ կը փնտռեն՝ պաղ պատերազմին վերջ տալու համար :

Միւս կողմէ, Եուկոսլաւիոյ կառավա – րութեան բանիերը վճռապէս հերքեց այն գրոյցները՝ թէ Խրուշչեւ մտադիր թիթօ հրաւիրած է Ալպանեւեւուկոսլաւ սահմա – նագլուխը՝ տեսակցութիւն մը ունենալու համար : Գալով խորհրդային վարչապե – տին Ալպանիա այցելութեան՝ Պելկրատի կառավարութիւնը առ այժմ ոչ մէկ մեկ – նաբանութիւն կ'ընէ :

Կը հաղորդուի նաեւ, թէ Թիթօ այցե – լած է ռումանական սահմանին մօտ գա – նուղ բազմաթիւ քաղաքներ, մասնաւո – րապէս Նեկոթին եւ Փրահովօ, ուր ժողո – վրդական խանդավառ ընդունելութեան մը արժանացած է : Այս այցելութեան նպատակն էր՝ աչքէ անցընել կարգ մը

ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԺԸՆԵԻՒ ՄԷՋ

Կայսերթիւնը որոշ չափով մեղմացած կը թուի ժընեւի մէջ, ուր Արտաքին չորս նախարարները, առաջին անգամ ըլլալով հասարակաց յայտարարութիւն մը հրա – տարակեցին, ընդունելով որ յառաջդի – մութիւններ արձանագրուած են եւ լա – տակցութիւնները եղած են օգտակար :

Զորսերը իրենց յայտարարութեան մէջ կը չեշտեն .— «Արտաքին չորս նախարար – ները օդնաւոյ իրենց համբորդութեան ընթացքին տաքին առքի ունեցան աչքէ անցը – նելու ժընեւի ժողովին մէջ ձեռք ձրդ – ուած յաջողութիւնները եւ խօսեցան ա – ռաջարկներու կարգ մը մանրամասնու – թեանց շուրջ :

« Բոլորն ալ համաձայն գտնուեցան՝ որ կարծիքներու փոխանակութիւնները օգ – տակար եղած են » :

Մինչ Խրուշչեւ ապառնալիքներ կ'ընէ Ալպանիոյ մէջ, Կրոմիքօ արեւմտեան իր պաշտօնակիցներուն հետ համաձայնելով կ'ընդոծնի թէ կարելի պիտի ըլլայ որոշ եղրակացութեան մը յանգիլ : Պարագայ մը, որ միջազգային մամուլին մէջ նպաս – տաւոր արձագանգ դտաւ :

Յամենայն դէպս, այլեւս իրականու – թիւն է, որ Ուշինկթըն – Ժընեւ օդա – նաւին մէջ աւելի չատ գործ տեսնուած է, քան՝ Ազգերու Պալատի վիճաբանութիւն – ներուն ընթացքին :

չինարաններ ,— կ'աւելցնէ մամուլի Թան – նուի գործակալութիւնը :

Համայնավար Չինաստանի Պաոեբազմա – կան նախարարին Ալպանիա գտնուելու պարագան բազմաթիւ մեկնաբանութեանց դուռ կը բանայ Ճափոնի մէջ : Այնպէս կը թուի թէ փէքին նոր պահանջներ պիտի բանաձեւէ՝ մեծերու ապագայ ժողովին համար : Հաւանական է , որ համայնա – վար ուժերը նոր յաւցագրութիւններու սկսին՝ ապագային կզզիներու դէմ :

ԴԱՐԱՄԱՆԼԻՍԻ ԵՒ ՓԵԼԼԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Յունաստանի Վարչապետ Գարամանլիս Խրուշչեւի ապառնալիքներուն պատաս – խանելով ըսաւ . — « Խրուշչեւ կը գտ – նուի չատ մեծ եւ չատ զօրաւոր երկրի մը գլուխը եւ Յունաստան կը փափաքի լաւ յարաբերութիւններ ունենալ անոր հետ, հակառակ այն իրողութեան՝ որ 1946ին եւ 1949ին իր անկախութիւնը վտանգուեցաւ : Բայց Խրուշչեւի գործելակերպը եւ մեր սահմաններուն մօտ գտնուղքարգքներու մէջ արտասանած ճառերը մեր տրամա – դրութիւնները քաջալերելու բնոյթ չու – նին :

« Մենք չենք անպիտանար Ա. Միու – թեան ուժն ու ունեցած կարողութիւն – ները, այսուհանդերձ կը յայտարարենք թէ Թիրանայի եւ Քորչայի մէջ եղած ցոյցերը կրնան խանգարել մեր պատա – րիւնութիւնը :

« Ամէն պարագայի մէջ եւ ինչպէս անց – եալին՝ Յունաստանի օրինաւոր եւ պա – տասխանատու իշխանութիւնները պիտի պաշտպանեն մեր երկրին չահերը, փոքր՝ բայց անկախ եւ ինքնիշխան Յունաստանի չահերը» :

Ուշինկթընէն վերադառնալով, ուր դացած էր ներկայ ըլլալու Տըլըսի յու – պարկաւորութեան, փելլա յայտարարեց թէ Ալպանիոյ մէջ Խրուշչեւի խօսած ճա – ռերը հակառութեան մէջ են Արեւմտեան – ներու յոյսերուն հետ : Ըստ փելլայի, Խրուշչեւի ապառնալից խօսքերը անպա – տասխան պէտք չէ մնան .— «Իտալական կառավարութեան դէմ եղած բուռն յար – ձակումները՝ մեր երկրին դրացի հողա – մասէ մը, քարոզչութիւններ են պարպա – պէս, որոնք նոր չեն, բայց մեզի անակն – կալի բերին, գոնէ այս օրերուն » :

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ահաւասիկ ... պակաս մը եւս լրացու – ցին Հայաստանի մէջ : Աստուածաբա – նական համալսարան մը բացուեցաւ երե – ւանի մէջ : Աստանկ համալսարան չկայ ամբողջ արեւմուտքի մէջ,— ո՛րքան եւս կը մնայ Արեւմուտքը :

« Սով. Հայաստան» թերթը կը գրէ (20 Մայիս) թէ «ընակչութեան գիտական ա – նատուածաբանութեան քարոզչութիւնը բարե – լաւելու նպատակով՝ Երեւանի մէջ բաց – ուած է աստուածաբանութեան միամեայ համալսարան մը» :

Համալսարանին առաջին դասախօսու – թիւնը տեղի ունեցաւ «Քաղաքական եւ գիտական գիտելիքների տարածման ըն – կերութեան Երեւանի պաշտօնատան դահ – լիճին մէջ» : Բացման խօսքը արտասանեց Մ. Մինասեան, բացատրելով համալսա – րանին ստեղծման նպատակը, կատարե – լիք գերը եւ կարեւորութիւնը աշխատա – նքներու մէջ աստուածաբանութեան քա – րոզչութիւնը բարելաւելու տեսակէտով :

Ցետոյ փիլիսոփայութեան դասախօս Ա. Կարապետեան խօսեցաւ «Մարքսիզմը — Լէնինիզմը կրօնքի մասին» նիւթին չուրջ :

Դասախօսութենէն ետքը, ներկայա – ցուեցաւ հակակրօնական բովանդակու – թեամբ գեղարուեստական չարժանկարի ժապաւէն մը :

ՄԱՅԻՍ 28Ը
ԱԶԳԵՍԱՆԴՐԻՈՑ ՄԷՋ

Մայիս 28, Հինգշաբթի, Հայաստանի Անկախութեան 41րդ տարեդարձին առ – թիւ առաջնորդարանը եւ հայ վարժա – րանները փակ էին : Առաւօտեան ժամը 9·30ին, Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցիին մէջ կարդացուած է Թորգոմ Աբգ. Գու – չակեանի կողմէ պատրաստուած գոհաբա – նական մաղթանքը՝ Հայաստանի Անկա – խութեան համար գոհուած բիւրաւոր հե – րոսներու յիշատակին :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼՈՐԻՆԻ չրջանին Սէնթ – Ֆոնթէնի հանքերուն մէջ ծանր պայթում մը պա – տահեցաւ առջի օր, 14 հանքագործներու մահուան պատճառ ըլլալով : 34 ուրիշներ ծանրապէս վիրաւորուած են : Սէնթ Ֆոնթէնի հանքերուն մէջ 2·850 հոգի կ'աշխատին 660 մեթր խորութեան մը մէջ : Վիրաւորները անմիջապէս փո – խադրուած են Փարիզի եւ Լիոնի հիւան – դանոցները :

ԻՐԱՔԻ մէջ ոչ համայնավար բանուոր – ներու եւ ոստիկանութեան միջեւ պատա – հած բախումի մը ընթացքին երեսուն հոգի վիրաւորուած են , — կը գրէ Պաղ – տատի Իթիհատ էլ Շաապ համայնավար թերթը :

ՊԱՐՍԻՑ Շահը որ քանի մը օրէ Փարիզ է մամուլի ասուլիս մը տուաւ առջի օր : Թագաւորը որ մաքուր Ֆրանսերէն կը խօսի, յայտարարեց թէ մինչեւ տասը տարի կ'ուզէ բացարձակ երջանկութիւն տալ Պարսկաստանի ժողովուրդին : Շահնշահը աւելցուց.— « Միշա ուզած ենք լաւ դրացիներ ըլլալ Ռուսաստանի հետ : Բայց պէտք է ըսել որ երբեմն այն տպաւորութիւնն ունինք որ Ա. Միութիւ – նը մեզի իր գաղթավայրին տեղը դրած է եւ հրահանգներ կը դրկէ» :

ԱՆՏՐԻ ՄԱԼՐՕ որ հիւրն է Յունաստա – նի կառավարութեան, պաշտօնական բա – ցումը կատարեց « Զան եւ Լոյս » ներ – կայացման՝ Ակրոպոլի վրայ : Հմուտ ճա – ռով մը «Ցոյս»ին հեղինակը յիշեց անց – եալի յունական քաղաքակրթութիւնը եւ անոր նպաստը այսօրուան աշխարհին եւ մարդուն :

ԵՐԿՈՒ ՁԵՌՔԵՐ ԿԱՑԻՆ...

(ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ)

★

Երկու ձեռքեր կային — երկու փոքրիկ, քնքուշ ձեռքեր, կը փայփայէին չկ՚զլուխը, ու ամէն փոյթ կը տանէին որ ես ամէն բան ունենամ: Երկայն ղիշերներ կը կարէին անոնք ինձ համար սիրունիկ հագուստներ, որպէս զի միւս տղաքներէն աւելի սիրուն ըլլամ: Այս փոքրիկ, փափկիկ ձեռքերը կ՚առաջնորդէին իմ քայլերս, կը տանէին զիս բնութեան ծոցը, կանանչ անտառները ու ինծի կը թուէր թէ այդ ձեռքերը բնաւ երբեք չեն յոգնիր:

Տղայ էի ես ու ամէն տղաքներու պէս այդ ամէն հոգերն ու սէրերը բնական բան մը կը համարէի: Չէի նշմարեր թէ մայրիկս ժպտայն ու նիհար է, թէ ան կը հագայ ու — իր սրտին մէջ չատ մը հոգեր ունի; Հայրիկ չունէի: Զինքը ճանչցած ունէի; Հայրիկ չունէի: Զինքը ճանչցած անդամ չէի: Ան կանուխէն մեռած էր... մայրիկը երբեմն կը յիշէր զայն ու միշտ արցունքոտ կ՚ըլլային իր աչքերը...: Մայրիկին ամբողջ կեանքը, հիմա, իր զաւկին կը վերաբերէր:

Տարիները անցան, ձմեռներ անցու — ցինք: Մանուկի մը անհոգութեամբ կը դիտէի ձիւնէ սպիտակ փաթիլները՝ հովէն տարտղնուած: Կարծես երեւակայական աշխարհի մը մէջ ըլլայի. առասպելական պատկերներ կը տեսնէի: Արեւուն այս երազներուն մէջ՝ յանկարծ յարձակում մը նշմարեցի խաղընկերուհիներէս, որոնք ձիւնադնդակի բռնած էին զիս: Ճչմարիտ «պատերազմ» մը սկսած էր: Դիմադրեցի ամբողջ ուժովս: Ի՜նչ լաւ «ճակատ»: Ցողնած, զաղրած էի, երբ զգրոցէն տուն դարձայ: Ահա դարձեալ նոյն ձեռքերը մօրկանս, որոնք չուտ մը ծածկեցին զիս տաքուկ բաներով: Ջնեղացաւ բնաւ. ա՜յնքան զուրգուրոտ սիրով պատեց զիս ու ես՝ տղայ՝ անկարող էի տակաւին պէտք եղածին պէս դնահատելու: Երջանիկ էի ու զոհունակ ու աննըմանի ուրախութեան մէջ կը սահէին իմ օրերս: Եկաւ դարունը. ամառ եկաւ ու զգրոցէն արձակուած՝ նետուեցանք արձակուրդի մէջ:

Մայրիկս փոքրիկ ստացուածք մը ունէր: Արտերը ու այդիները վարձու տրուած էին: Մեզի պահուած էր դիւղական սիրունի՛կ տնակ մը: Մեր, կոյր կին մը կը բնակէր հոն, ձմեռ առնէն, անբնակ չմնալու համար: Տնակին կից ունէինք պարտէզիկ մը, ուր կային ծաղիկները, թուփեր ու պտղատու ծառեր: Աւելիկ իմ զբաղումս էր: Մայրիկս կը հսկէր ու չէր ձգեր որ բոպիկ վազվռտեմ, զղուշանալու համար որ չըլլայ թէ ոտքս քարին զարնեմ: Դիւղի տղաքներու հետ չուտով բարեկամացայ ու անոնք կը հիանային զիս — դեկամացայ ու անոնք կը հիանային զիս — դեկավարելու ձիրքիս համար: Ամէն առաւօտ կանուխ կ՚ելլէի տունէն ու կ՚երթայի դաշտերը, ուր ընկերներս կը սպասէին ինծի: Ամէն օր նոր խաղեր կը հնարէինք: Ամէն օր նոր ուրախութիւններ կը զգայինք: Ամէն օր նոր ուրախութիւններ կը զգայինք: Ամէն օր նոր ուրախութիւններ կը զգայ

ԵՐԵԲ ՍԻՐ

•

Ինչպէս երեբ աստղեր անշէջ՝
Երեբ սէր կայ իմ սրտի մէջ·—
Ասի սիրած իմ աղջկան ,
Եւ նա տխրեց ամպի նման :

Մի՛ կասկածիր ,— ասի նրան ,—
Դո՛ւ ես իմ սէրն , ի՛մ անձրման ·
Ես սիրում եմ , վկայ հոգիս ,
Քե՛զ , մայրիկի՛ս ,
Հայրենիքիս ··· ·

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

անպէտ նկատուած , վէրատակ մը սկիզ – բէն··· :

Ցետոյ , ձայնը բարձրացնելով , նկարա– գրեց անոր արդի վիճակը Հայաստանի մէջ , ուր գնահատուած , իր բարձր դիր – քին վրայ կանգնած , առաջին անդամ ըլ– լալով զարթած է ինքնաբաւ , ու կ՝ապրի մարդու պէս : Ասիկա է ապահովաբար , արդի Հայաստանին ամէնէն պատուաբեր նուա· ւումը ···

« Գրագէտ » բառին արտասանուելէն ի վեր , սակայն , սրահը սկսած էր պապել , տակել , կարծես անօսրանալ ··· Անապա– տին լռութիւն մը տիրած էր , ուր Սըր– բազանին ձայնը , երկաթէ մուրճի մը պէս կը հնչեցնէր չարունակ « գրագէտ » բառը :

Բայց կարծես կարելի էր լսել խոր – հուրդները որոնք իրարու կը բանային դանկերուն մէջ·— « Ի՞նչ էր , ո՞վ էր գը– րագէտը : Ի՞նչ բանի կը ծառայէր : Եթէ անօթի կը մնար , ո՞վ ըսեր էր իրեն որ գրագէտ ըլլար : Մենք գրագէտ կ՝ըլլա՞նք կոր : Թող աշխատին ուտեն , էֆէնտիմ : Խեղճ՛ը , խեղճ՛ը··· իրա՞ւ առանկ պոշ մարդեր ալ կան··· Լալիք բան ··· :

Եւ սրահը առաւ , մեռածի մը համար , վայրկեան մը լռութեան պահի մը քա – խիծը եւ անտարբերութիւնը : Սրբազանը , բեմին ամէնէն առջեւը կանգնած , ժողո – վուրդին չատ մօտ կը խօսէր·— « Պատիւ նոր Հայաստանին , որ պիտի պատուէ իր գրագէտները ···» :

Այդ վայրկեանին , մահացու լռութեան մէջ , մէկ ծափ մը փրթաւ : Մէկ ծափ մը միայն···

Ես էլ , մխ մինակս , որ կը զարնէի իրարու ձեռնոցապատ ձեռքերս , որոնց ակարացած ծափը , զսպուած չունչերով խեղդող մթնոլորտին մէջ , սրտաճմլիկ ազդակ մըն էր աւելի , ուղղուած դէպի հայ գրականութիւնը ···

Զգացի որ անբարեացակամ ակնարկներ կը տեւեհին վրաս , ամէն կողմէն ··· :

Անձանօթ մը այդ միջավայրին մէջ , յանկարծ ուշագրաւ դարձայ , իմ անհաս– կնալի ժէսթովս դէպի հայ գրագէտը : Թերեւս ալ խորհեցան·— « Սխալ հաս – կըցած ըլլալու է· այդտեղ ի՞նչ կար ծա– փահարելու ··· :

Եւ այդպէս էր որ , այն պիծին վրայ ուր նստած էի , կրակէ ցանցը աւելի սեղմուե–

անպէտ նկատուած , վէրատակ մը սկիզ – բէն··· :

Ցետոյ , ձայնը բարձրացնելով , նկարա– գրեց անոր արդի վիճակը Հայաստանի մէջ , ուր գնահատուած , իր բարձր դիր – քին վրայ կանգնած , առաջին անդամ ըլ– լալով զարթած է ինքնաբաւ , ու կ՝ապրի մարդու պէս : Ասիկա է ապահովաբար , արդի Հայաստանին ամէնէն պատուաբեր նուա· ւումը ···

« Գրագէտ » բառին արտասանուելէն ի վեր , սակայն , սրահը սկսած էր պապել , տակել , կարծես անօսրանալ ··· Անապա– տին լռութիւն մը տիրած էր , ուր Սըր– բազանին ձայնը , երկաթէ մուրճի մը պէս կը հնչեցնէր չարունակ « գրագէտ » բառը :

Բայց կարծես կարելի էր լսել խոր – հուրդները որոնք իրարու կը բանային դանկերուն մէջ·— « Ի՞նչ էր , ո՞վ էր գը– րագէտը : Ի՞նչ բանի կը ծառայէր : Եթէ անօթի կը մնար , ո՞վ ըսեր էր իրեն որ գրագէտ ըլլար : Մենք գրագէտ կ՝ըլլա՞նք կոր : Թող աշխատին ուտեն , էֆէնտիմ : Խեղճ՛ը , խեղճ՛ը··· իրա՞ւ առանկ պոշ մարդեր ալ կան··· Լալիք բան ··· :

Եւ սրահը առաւ , մեռածի մը համար , վայրկեան մը լռութեան պահի մը քա – խիծը եւ անտարբերութիւնը : Սրբազանը , բեմին ամէնէն առջեւը կանգնած , ժողո – վուրդին չատ մօտ կը խօսէր·— « Պատիւ նոր Հայաստանին , որ պիտի պատուէ իր գրագէտները ···» :

Այդ վայրկեանին , մահացու լռութեան մէջ , մէկ ծափ մը փրթաւ : Մէկ ծափ մը միայն···

Ես էլ , մխ մինակս , որ կը զարնէի իրարու ձեռնոցապատ ձեռքերս , որոնց ակարացած ծափը , զսպուած չունչերով խեղդող մթնոլորտին մէջ , սրտաճմլիկ ազդակ մըն էր աւելի , ուղղուած դէպի հայ գրականութիւնը ···

Զգացի որ անբարեացակամ ակնարկներ կը տեւեհին վրաս , ամէն կողմէն ··· :

Անձանօթ մը այդ միջավայրին մէջ , յանկարծ ուշագրաւ դարձայ , իմ անհաս– կնալի ժէսթովս դէպի հայ գրագէտը : Թերեւս ալ խորհեցան·— « Սխալ հաս – կըցած ըլլալու է· այդտեղ ի՞նչ կար ծա– փահարելու ··· :

Եւ այդպէս էր որ , այն պիծին վրայ ուր նստած էի , կրակէ ցանցը աւելի սեղմուե–

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Անցեալ չաբթու վերջացաւ Խորհրդային Գրողներու Գ· Համագումարը , որ տեղի ունեցաւ Մոսկուայի մէջ :

Այս համագումարի ընթացքին , արգիլ– ուած է ներկայութիւնը « պուրժուական » մամուլի ներկայացուցիչներուն··· որոնք նկատուած են անբաղձալի :

Համագումարին առթիւ խօսք առած է նաեւ Թիւ մէկ՝ Սրուչչեւ , որ ի միջի այ– լոց բսած է ·

« Խորհրդային իրականութեան մէջ կան միլիոնաւոր մարդիկ , մարդիկ՝ որոնք անօրրատ են բիւրեղի նման , ու կան նաեւ մարդասպաններ եւ պոռոտախօսներ : Կը տառապինք անցեալի ժառանգութենէն : Մարդը համայնավար չի ծնիր : Կարելի չէ զուշակել թէ ինչ պիտի ըլլայ ան եւ ինչպէս պիտի վերջնայ ···» :

Այնուհետեւ Սրուչչեւ կը թելադրէ խորհրդային գրողներուն բարեկամական ձեռք երկարել եւ օգնել բոլոր անոնց , ո– րոնք «ինկած են սխալանքի մէջ» :

« ··· Մի մառնացոյց ընէք զանոնք եւ ցոյց մի տաք անոնց հանդէպ թշնամա – նանք : Պէտք չէ մոռնալ անցեալը , սա – կայն պէտք չէ նոյնպէս այդ անցեալը յի– շեցնել անոնց : Մի՛ ռանահարէք պար – տաւածները : Փոփանակ քանդելու , աշխա– տինք դաստիարակել ···» :

Համագումարի ընթացքին ամէնէն բու– րէն քննադատութեանց նշաւակ են եղած ռուիկանական վէպերու հեղինակները , ի մասնաւորի անոնցմէ մին՝ անգլուհի աշ – խարհածանօթ վիպասանուհին՝ Ակաթա Քրիսթի , որուն գործերէն , բստ Մոս – կուայի , կ՝արտացոլայ Թունաւոր չունչը քայքայեալ իրաւակարգին ···» :

Ակաթա Քրիսթիի մասին ամէնէն բուռն քննադատութիւնը բրած է խորհրդային գրող Քորնել Շուքովսքի , որ կէս գարէ ի վեր ռուսերէնի կը թարգմանէ անգլիա– ցի եւ ամերիկացի գրողներու գործեր :

« Ակաթա Քրիսթին , տատանդաւոր կին մըն է , բսած է Շուքովսքի : Եւ սակայն , եթէ այս կինը գրած ըլլար վեց կամ եօթը հատոր փոխանակ վաթսունի , անոնք հա– ւանաբար բնաւին գործեր պիտի ըլլա – յին··· : Ամէն մարդկային զգացում վր – տարուած է իր գործերէն : Իր միակ գրա–

Ու տե՛ս , որդիս , ուր էլ լինես ,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս ,
Թէ մօրդ անգամ մտիցդ հանես ,
Քո մայր լեզուն չմոռանաս ···

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ղումն է եղած ստեղծել այնպիսի տիպար– ներ որոնք իրենց խելքին ուժով կը յաջո– ղին պարտկել իրենց գործած ոճիրներուն ահաւորութիւնը » :

Եւ չարունակելով իր խօսքը , Շուքո – վսքի աւելի եւս սրելով իր սլաքները Ա– կաթա Քրիսթիի գրականութեան դէմ , կ՝աւելցնէ ·

« ··· Ոճրային երկերու հեղինակնե – րուն անմարդկայնականութիւնը սար – սռազդեցիկ է : Անոնք յաջողած են ամբո– խին մէջ ստեղծել հոգեբանական մասնա– ւոր վիճակ մը՝ հանդէպ ոճրային պատ – մութիւններու : Անոնք յաջողած են թու– նաւորել ժողովրդային պանդուածներու ուղեղը , այն աստիճան , որ այս վերջին – ները այլեւս անընդունակ են զարմա– նալու , հասկնալու եւ մարսելու որեւէ գրական գործ , եթէ այդ գործը չի նե – յատցներ հանճարեղ ոճիրի մը պատկե – րը :

« ··· Ակաթա Քրիսթին , ամէն ոքէ աւելի , յաջողած է ստեղծել տիպարներ , որոնց քով չկայ , գոյութիւն չունի պա – տիւը , առաքինութիւնը , բարեկամութիւ– նը , եւ որոնք ընդհակառակն չաղախուած են առելութեան , սարսափի , վախի , ամօ– թի եւ եսասիրութեան ու կասկածամտու– թեան խմորով , եւ զգուշաւորութեամբ մը՝ դէպի բոլոր առաքինի ու պատուա – ւոր մարդերը ···» :

490 խորհրդային գրողներ , որոնց չար – քին կան 33 կիներ , լսած են Շուքովսքիի այս կծու քննադատութիւնները Ակաթա Քրիսթիի հասցէին , առանց սակայն վայրկեան մը իսկ մոռնալու թէ՝ անգ – լուհի վիպասանը Խորհրդային Միութեան սահմաններէն ներս ամէնէն չատ կար – գացուող հեղինակներէն մին է ···

Դռնփակ նիստի մը մէջ , Համագումա – րը ընարած է իր նոր վարչութիւնը , բաղ– կացած 143 հոգիէ , որուն մէջ կայ Շա – հինեան հայանունը :

Համագումարի փակումէն ետք , մեծ ընդունելութիւն մը տեղի է ունեցած կը– բեմլինի սրահներուն մէջ , ուր ներկայ ե– ղած են Սրուչչեւ եւ Միկոյեան , ամբողջ կառավարական կազմին հետ :

Այս ընդունելութեան ընթացքին , Սր – բուչչեւ դարձեալ խօսք առնելով , բսած է ·

« ··· Քիչ առաջ գրող մը ինծի բսաւ խօսքեր որոնք չատ ճիշդ են : Թէ՝ գրողը մենակեաց արհեստաւոր մըն է , թէ անոր խօսքը դառն է սակայն արդար : Մենք , կուսակցութեան դեկավարներս պիտինք ասիկա : Սակայն , ձեր պարտա – կանութիւնն է մեեւնոյն ատեն նկարա – գրել և սովետ· իրականութիւնը եւ այդ իրականութեան մէջ մարդոց փոխ – յա – րաբերութիւնները » :

Եւ Սրուչչեւ , աւելի խիստ , աւելցու – ցած է ·

« ··· Դուք պարտաւոր էք հասկցնալու որ մեզի իրաւունք ունինք ձեզի դիտել տալու թէ ըստ մեզի ո՛րն է լաւը եւ ո՛րն է վատը ···» :

ղումն է եղած ստեղծել այնպիսի տիպար– ներ որոնք իրենց խելքին ուժով կը յաջո– ղին պարտկել իրենց գործած ոճիրներուն ահաւորութիւնը » :

Եւ չարունակելով իր խօսքը , Շուքո – վսքի աւելի եւս սրելով իր սլաքները Ա– կաթա Քրիսթիի գրականութեան դէմ , կ՝աւելցնէ ·

« ··· Ոճրային երկերու հեղինակնե – րուն անմարդկայնականութիւնը սար – սռազդեցիկ է : Անոնք յաջողած են ամբո– խին մէջ ստեղծել հոգեբանական մասնա– ւոր վիճակ մը՝ հանդէպ ոճրային պատ – մութիւններու : Անոնք յաջողած են թու– նաւորել ժողովրդային պանդուածներու ուղեղը , այն աստիճան , որ այս վերջին – ները այլեւս անընդունակ են զարմա– նալու , հասկնալու եւ մարսելու որեւէ գրական գործ , եթէ այդ գործը չի նե – յատցներ հանճարեղ ոճիրի մը պատկե – րը :

« ··· Ակաթա Քրիսթին , ամէն ոքէ աւելի , յաջողած է ստեղծել տիպարներ , որոնց քով չկայ , գոյութիւն չունի պա – տիւը , առաքինութիւնը , բարեկամութիւ– նը , եւ որոնք ընդհակառակն չաղախուած են առելութեան , սարսափի , վախի , ամօ– թի եւ եսասիրութեան ու կասկածամտու– թեան խմորով , եւ զգուշաւորութեամբ մը՝ դէպի բոլոր առաքինի ու պատուա – ւոր մարդերը ···» :

490 խորհրդային գրողներ , որոնց չար – քին կան 33 կիներ , լսած են Շուքովսքիի այս կծու քննադատութիւնները Ակաթա Քրիսթիի հասցէին , առանց սակայն վայրկեան մը իսկ մոռնալու թէ՝ անգ – լուհի վիպասանը Խորհրդային Միութեան սահմաններէն ներս ամէնէն չատ կար – գացուող հեղինակներէն մին է ···

Դռնփակ նիստի մը մէջ , Համագումա – րը ընարած է իր նոր վարչութիւնը , բաղ– կացած 143 հոգիէ , որուն մէջ կայ Շա – հինեան հայանունը :

Համագումարի փակումէն ետք , մեծ ընդունելութիւն մը տեղի է ունեցած կը– բեմլինի սրահներուն մէջ , ուր ներկայ ե– ղած են Սրուչչեւ եւ Միկոյեան , ամբողջ կառավարական կազմին հետ :

Այս ընդունելութեան ընթացքին , Սր – բուչչեւ դարձեալ խօսք առնելով , բսած է ·

« ··· Քիչ առաջ գրող մը ինծի բսաւ խօսքեր որոնք չատ ճիշդ են : Թէ՝ գրողը մենակեաց արհեստաւոր մըն է , թէ անոր խօսքը դառն է սակայն արդար : Մենք , կուսակցութեան դեկավարներս պիտինք ասիկա : Սակայն , ձեր պարտա – կանութիւնն է միեւնոյն ատեն նկարա – գրել և սովետ· իրականութիւնը եւ այդ իրականութեան մէջ մարդոց փոխ – յա – րաբերութիւնները » :

Եւ Սրուչչեւ , աւելի խիստ , աւելցու – ցած է ·

« ··· Դուք պարտաւոր էք հասկնալու որ մեզի իրաւունք ունինք ձեզի դիտել տալու թէ ըստ մեզի ո՛րն է լաւը եւ ո՛րն է վատը ···» :

Այս կողմէն դուրս կ՝եկնար սկսուած ասեղնագործութիւն մը , երկար սպիտակ երիզ մը , որուն վրայ ծագիկներ եւ տե – րեւներ զծուած էին , այնպէս ինչպէս կի– նները սովոր են զարդարելու իրենց ճեր – մակեղէնները : Առանց աղէկ մը գիտնա – լու թէ ինչ կ՝ընէ , իր ձեռքն առաւ կտաւի երիզը եւ զննել ասեղնակէտերու բարդ աչխատանքը , մինչեւ այն վայրկեանը , ուր իր ականջին հնչեց իր հարսին ծի – ծաղկոտ ձայնը : Յանկարծ , սիրալի մէջ բռնուած տղու մը պէս , ձեռքէն ձգեց ա– սեղնագործութիւնը : Տունին ծայրը երեւ– ցաւ կէրթրուտ , որ զուարճալի կերպով իր եաեւէն կը քաչկռտէր հաստատուն կազմով մարդ մը , ամբողջովին ալիւրով ծածկուած , որ անճարակ չարժուձեւով մը , կը չտնար ինքզինքը պաշտպանել , զինքը քաչկռտող փոքրիկ ձեռքերուն դէմ , եւ իր չուրջը կը ծաւալէր ճերմակ փոչիի թանձր ամպեր : Եւ այս մարդը··· էր··· արդարեւ ···

— Մառթէն , սիրելի Մառթէնս ·

Եւ Ժան սուրաց դէպի իր եղբայրը՝ ա– նոր թեւերուն մէջ թռչելու համար :

Զարմրդ եւ անճարակ անդամները կը կասին իրենց չարժումին մէջ , ցախանման յօնքերը վեր կը բարձրանան , հանդարտ եւ մանկունակ ժպիտը կարծես սառած կը մնայ իր շրթունքներուն վրայ : Եւ Մառ– թէն կը ղրայ սարսուռի մը անցնիլը իր մարմնին վրայէն եւ դողդղալով դէպի ետ

Այս կողմէն դուրս կ՝եկնար սկսուած ասեղնագործութիւն մը , երկար սպիտակ երիզ մը , որուն վրայ ծագիկներ եւ տե – րեւներ զծուած էին , այնպէս ինչպէս կի– նները սովոր են զարդարելու իրենց ճեր – մակեղէնները : Առանց աղէկ մը գիտնա – լու թէ ինչ կ՝ընէ , իր ձեռքն առաւ կտաւի երիզը եւ զննել ասեղնակէտերու բարդ աչխատանքը , մինչեւ այն վայրկեանը , ուր իր ականջին հնչեց իր հարսին ծի – ծաղկոտ ձայնը : Յանկարծ , սիրալի մէջ բռնուած տղու մը պէս , ձեռքէն ձգեց ա– սեղնագործութիւնը : Տունին ծայրը երեւ– ցաւ կէրթրուտ , որ զուարճալի կերպով իր եաեւէն կը քաչկռտէր հաստատուն կազմով մարդ մը , ամբողջովին ալիւրով ծածկուած , որ անճարակ չարժուձեւով մը , կը չտնար ինքզինքը պաշտպանել , զինքը քաչկռտող փոքրիկ ձեռքերուն դէմ , եւ իր չուրջը կը ծաւալէր ճերմակ փոչիի թանձր ամպեր : Եւ այս մարդը··· էր··· արդարեւ ···

— Մառթէն , սիրելի Մառթէնս ·

Եւ Ժան սուրաց դէպի իր եղբայրը՝ ա– նոր թեւերուն մէջ թռչելու համար :

Զարմրդ եւ անճարակ անդամները կը կասին իրենց չարժումին մէջ , ցախանման յօնքերը վեր կը բարձրանան , հանդարտ եւ մանկունակ ժպիտը կարծես սառած կը մնայ իր շրթունքներուն վրայ : Եւ Մառ– թէն կը ղրայ սարսուռի մը անցնիլը իր մարմնին վրայէն եւ դողդղալով դէպի ետ

Մ Ա Յ Ր Ե Ր Ի Ն

★

Մայրերն են պահել մեր Հայոց լեզուն ,
Մեր մանուկներին տուել կաթի հետ ,
Մեր հայրենիքով դարձրել են լեցուն ,
Որ ժողովուրդը ապրի յար յաւէտ :

Մայրերն են պահել մեր Հայոց երգը ,
Երբ մանուկներին օրօր են ասել ,
Արցունքն աչքերին , սրտերում՝ վէրքը
Մեր ազատ կեանքի օրն են երազել :

Նրանք չեն զիջել մեր երգն ու լեզուն
Բիրտ Յազկերտներին , սուլթանին ,
ցարին ,
Որոնք մեր վախճանն էին երազում ,
Տիրելու համար Հայոց աշխարհին :

Նրանք չեն եղել օտարի գերին ,
Ու չեն վհատուել եւ ոչ մի դարում ,
Հայ գիրքն ու մանկան սեղմած
կրծքերին՝
Հպարտ են ապրել նրանք աշխարհում :

Գ· ՍԱՐԵԱՆ

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԻՏՐԱ ԿԱՐԻՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵԼՈՒԹՆԵՐԸ

★

Լիտրա Կարին՝ Պէրնի եւ Լոզանի Բա – ւիոյի կայաններէն զօնաէրներ տալէ յե– տոյ , Մայիսի սկիզբները՝ երաժչտական Լոյթներ ունեցաւ Մարսէյլի , Մոնթէ Քարլոյի եւ Պրիւսէլի ձայնասփիւռէն :

Ցառաջիկայ Յունիս եօթին պիտի մաս– նակցի Սոյի փառատօնին , ուր պիտի երգէ Նարեկը , թարգմանութիւն՝ Լիւք Անդրէ Մարսէլի եւ երաժչտութիւն՝ Մարսէլ տը Լանուայի : Վերջապէս Յունիս տասնին՝ իր երգահանդէսը «Էքօլ Նորմալ տը Մի– զիքի սրահին մէջ :

×

Շնորհ դաչնակահարուհի՝ Գոհարիկ Ղազարոսեան Փարիզ ժամանած է քանի մը օրէ :

Փարիզահայ գաղութը առիթը պիտի ունենայ զինքը լսելու այս երեքչաբթի (Յունիս երկու) ժամը 20·45ին :

Institut Hongrois de Paris
18, Rue Pierre Curie

Ցայտագիրը՝ Պախ , Քուպերէն , Փրսել , Սքառլաթի , Հէնտէլ , Պէթովէն , Վէպէռ , Շուպէրթ , Շուման , Պրամս , Լիսթ , Շո– փէն , Պարթոք , եւ Ղազարոսեան :

«Աստուած ամէն տեղ չէր կրնար ըլ – լալ , հետեւաբար մայրը ստեղծեց » :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՔ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (8)

ԼՌԱԾ ՉՐԱՂԱՑԸ

Դ·

— Ինչո՞ւ համար չտեսաւ անիկա այս բոլորը , ըսաւ ան կէս ձայնով , իր մտա – ծումին հետեւելով :

— Մա՞յր , հարցուց իրեն կէրթրուտ :

Զարմացած անոր նայեցաւ : Անիկա չը– սաւ «ձեր մայրը» , ասիկա նախ նեղա – ցուց զինքը , յետոյ անպատում երանու – թեան դղացում մը պատճառեց իրեն , այն աստիճան որ երբեք չէր զգացած իր կեանքին մէջ :

Զգաց որ քաղցր ջերմութիւն մը կը ծա– ւալէր իր մէջ , որ կը տիրէր իր սրտին եւ չէր ուզեր անհետ ըլլալ : Ուրեմն , աչ – խարհի մէջ , ընտանիքէն դուրս , կար է բիտասարդ եւ զեղեցիկ կին մը , որ իր մօր մասին կը խօսէր ինչպէս իր սեփա – կան մօր մասին պիտի խօսէր : Կարծես անոր մէջ քոյր մը կը տեսնէր , այն քոյ – րը , զոր այնքան յաճախ բաղձացած էր մանկութեան խենթ տարիներուն , երբ իր աչքերը զաղանի հիացումով մը կանգ կ՝առնէին զիւղի դեռատի աղջիկներուն

վրայ :

Եւ կէրթրուտ մեղմօրէն կրկնեց իր հարցումը ·

— Այո··· մայր , պատասխանեց Ժան երախտագիտական ակնարկ մը ձգելով անոր վրայ :

կէրթրուտ վայրկեան մը պահեց այս ակնարկը , յետոյ խոնարհեցուց աչքերը եւ ըսաւ· քիչ մը վրդոված ·

— Ուր կրնայ ըլլալ Մառթէնը·

— Զրաղացը , անշուշտ ·

— Ա՛հ , այո , Զրաղացը , բնականաբար , պատասխանեց խկոյն :

Եւ հեռանալով , աւելցուց թեթեւ մը·

— Երթամ փնտռեմ :

Գրեթէ մեքենաբար , Ժան աչքերով հե– տեւեցաւ դիմաստուերին այս դեռատի աղջկան , որ այնքան թեթեւ քայլով մը կը կարէր մարմանդը : Անոր վրայ ամէն բան կը թոչկոտէր եւ կը ծփար , — իր չէջազգեստին քղանցքները , գողնոցին ժապաւէնները , պերոզը որ իր պարանոցը կը չրջապատէր եւ իր ըմբոստ խոպոպնե– րուն անկարգ դանդուածը :

Ժան կանգ առաւ հոն պահ մը , ան – չարժ , կարծես կախարդուած ըլլար· ա – նոր հետեւեցաւ աչքերով , յետոյ խնդա – լով ցնցեց գլուխը եւ ուղղուեցաւ դէպի պատչամ : Առաջին բանը որ իր աչքին դարկաւ , պզտիկ նուրբ սեղան մըն էր , որուն վրայ դրուած էր ձեռագործ չար– դէ հիւսուած կողով մը :

վրայ :

Եւ կէրթրուտ մեղմօրէն կրկնեց իր հարցումը ·

— Այո··· մայր , պատասխանեց Ժան երախտագիտական ակնարկ մը ձգելով անոր վրայ :

կէրթրուտ վայրկեան մը պահեց այս ակնարկը , յետոյ խոնարհեցուց աչքերը եւ ըսաւ· քիչ մը վրդոված ·

— Ուր կրնայ ըլլալ Մառթէնը·

— Զրաղացը , անշուշտ ·

— Ա՛հ , այո , Զրաղացը , բնականաբար , պատասխանեց խկոյն :

Եւ հեռանալով , աւելցուց թեթեւ մը·

— Երթամ փնտռեմ :

Գրեթէ մեքենաբար , Ժան աչքերով հե– տեւեցաւ դիմաստուերին այս դեռատի աղջկան , որ այնքան թեթեւ քայլով մը կը կարէր մարմանդը : Անոր վրայ ամէն բան կը թոչկոտէր եւ կը ծփար , — իր չէջազգեստին քղանցքները , գողնոցին ժապաւէնները , պերոզը որ իր պարանոցը կը չրջապատէր եւ իր ըմբոստ խոպոպնե– րուն անկարգ դանդուածը :

Ժան կանգ առաւ հոն պահ մը , ան – չարժ , կարծես կախարդուած ըլլար· ա – նոր հետեւեցաւ աչքերով , յետոյ խնդա – լով ցնցեց գլուխը եւ ուղղուեցաւ դէպի պատչամ : Առաջին բանը որ իր աչքին դարկաւ , պզտիկ նուրբ սեղան մըն էր , որուն վրայ դրուած էր ձեռագործ չար– դէ հիւսուած կողով մը :

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Տէր եւ Տիկին Լեւոն Գապաճեան կը ծանուցանեն իրենց անդրանիկ զաւկին՝ վարուժանի ծնունդը եւ այս առթիւ Հայ Մշակոյթի Տան կը նուիրեն երկու հազար ֆրանք ։

Նոյն առթիւ Պ. Կար. Սուպարալեան կը նուիրէ հազար ֆրանք Մշակոյթի Տան եւ հազար ֆր. «Յառաջ»ի բարգաւաճման, Տէր եւ Տիկին Ղազարոս Գապաքճեան՝ երկու հազար ֆր. Մշակոյթի Տան ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷՅԼ.— Այրլ Տիկին Ժանին Թաշճեան (ծնեալ Վիքլիօն), Տէր եւ Տիկին Յ. Հէքիմեան եւ զաւակները եւ բոլոր ազգականներ չնորհակալութիւնը կը յայտնեն Հ. Յ. Դ. Կեդր. Կոմիտէին, Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէին, Հ.Յ.Դ. Ֆը-ներան, Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Շրջ. վարչութեան, Մարսէյլի Համազգային Մշակութային Միութեան եւ Հայ Կաթոլիկ Հոգեւոր Առաջնորդարանի վարչութեան ու բոլոր ընկերներուն եւ բարեկամներուն, ուրոնք անձամբ, հեռագրով կամ բարեւներ-պատուէր հատատութիւններու ըրած նը-վիրատուութիւններով եւ ծաղկեպատկներ պրկելով մասնակցեցան ողբացեալ

ՇԱՒԱՐՇ ԹԱՇՃԵԱՆԻ (զեղապոյծ)

յուղարկաւորութեան, որ տեղի ունեցաւ 19 Մայիս, 1959ին, Մարսէյլի Մայր Ե-կեղեցին մէջ։ Կը խնդրուի մահազդ չըստացող ազգականներէ եւ բարեկամներէ ներողամիտ դանուիլ ։

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Համաչարսանճապի Հայր. Միութեան Պօռնի եւ Լիոնի մասնաճիւղերը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հայրենակիցներ Այրլ Տիկին Աղնիւ Օհանեան, Այրլ Տիկին Հասա Օհանեանի, Տէր եւ Տիկին Կարապետ Օհանեանի, եղ-բայրք Օհանեանի, Այրլ Տիկին Անահիտ Օհանեանի եւ զաւակներուն (Վալանս), Այրլ Տիկին Զարդար Օհանեանի եւ զա-ւակներուն (Տէսին), Տէր եւ Տիկին Վարդերէս Օհանեանի եւ զաւակներուն (Հալէպ), իրենց ամուսնոյն, հօրեղբօր, տաքրոջ, հօրեղբօրորդւոյն եւ բոլոր իրենց պարագաներուն ՊՕՂՈՍ ՕՀԱՆԵԱՆԻ (Զարսանճապի Թանձ դիւղէն) դառնա-կսկիծ մահուան առթիւ ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Փարիզի Աղքատախնամի վարչութիւնը չնորհակալութեամբ առած է հետեւեալ նուէրները.— Տիկին Զաքարեան, Առնու-վիլլէն ծերանոցներուն համար երկու հա-զար ֆրանք ։ Տիկին Հաճեան Տրակին-եանէն իր ամուսնոյն մահուան առթիւ հինգ հազար ֆրանք։ Տէր եւ Տիկին Պէր-պէրեան Սիմոն, փոխան ծաղկեպատկի ի-րենց հօրաքրոջ Տիկին Բիլիճեանի մահ-ուան առթիւ երկու հազար ֆրանք։ Տէր եւ Տիկին Զամասեանեան հազար, Տէր եւ Տիկին Տօլրամաճեան Սիսակ Մոնմորան-սիի ծերանոցին երկու հազար ֆրանք ։ Տէր եւ Տիկին Արա Աթալլա իրենց հօր մահուան քառասունքին առթիւ հազար, Տէր եւ Տիկին Գուենտուրճեան, Մոնմո-րանսիի ծերանոցին, իրենց մեծ մօր Տի-կին Շահնուրի մահուան առթիւ հինգ հազար, Ոմն, Անահիտի ծերանոցին հա-զար, Պ. Գալֆեան փոխան ծաղկեպատ-կի իր մօրը մահուան առթիւ հինգ հազար ֆրանք, Օհանեան, Գէորգեան եւ Պօյա-ճեան ընտանիքները, իրենց ողբացեալ մօր՝ Տիկին Ֆիլօր Օհանեանի մահուան առթիւ ծերանոցներուն հինգ հազար ֆր., Աղքատախնամին հինգ հազար ֆրանք, Ոմն, Տիկին Ֆ. Օհանեանի մահուան առ-թիւ փոխանծաղկեպատկի երկու հազար, Պ. Ասլանեան Յակոբ հազար, Պ. Ղոն-ճանց հազար, Ոմն երկու հազար, Տիկին Տէր Եղիազեան Թագուհի հինգ հարիւր ։

Տէր եւ Տիկին Մկրտիչ Գազանճեան փո-խան ծաղկեպատկի Օր. Գայանէ Քիրազ-եանի մահուան առթիւ երկու հազար ֆր։

×

Լիոնի Եկեղեցասէր Տիկնանց Միութիւ-նը չնորհակալութեամբ առած է հետե-ւեալ նուիրատուութիւնները ի նպաստ ե-կեղեցւոյ չինութեան.— Պ. Պ. Արսէն Թէրզեանէ հինգ հազար ֆրանք, Մկրտիչ Պալեօզեանէ հինգ հազար, վասն իր կըն-քահայրութեան Ստեփան Մարկոսեանի ամուսնութեան առթիւ։Վարդեվառ Գամ-պէրեանէ երկու հազար ֆրանք ։

ՆՈՒԻՐՆԵՐ

Ֆ. Կապոյտ Խաչի Կեդր. Վարչութիւնը չնորհակալութեամբ առած է հետեւեալ նուիրատուութիւնները.—

Տիկին Զրբաշեանէ երկու հազար ֆր. Միութեան 30ամեայ յոբելեանին առթիւ ։

Տիկին Ասղիկ Ագնադարեանէ տասը հազար ֆրանք Օզափ. կայանին ի նը-պաստ, ի յիշատակ իր սիրեցեալ ամու-սնոյ մահուան երրորդ տարելիցին առ-թիւ եւ հինգ ջիլօ պօնպօն ։

×

Տէր եւ Տիկին Կ. Պապաիկիեան հա-զար ֆրանի կը նուիրեն Մարսէյլի Կապ. Խաչի վարչութեան, փոխան ծաղկեպատկի Տիկ. Անէթ Մէլտոնեանի մահուան առ-թիւ։

Տէր եւ Տիկին Տէր Գէւորգեան փոխան ծաղկեպատկի երկու հազար ֆրանք կը նը-վիրեն Կապոյտ Խաչի Մարսէյլի մասնա-ճիւղին, Տիկին Զարուհի Ձիվանեանի կսկծալի մահուան առթիւ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրլ Տիկին Նազարէթեան, Տէր եւ Տիկին Մուրթազեան, Տէր եւ Տիկին Նա-զարէթեան եւ իրենց զաւակները, իրենց չնորհակալութիւնը կը յայտնեն, բոլոր անոնց եւ կազմակերպութեանց ի մասնաւոր Լանսէի հայ զաղութին, որոնք անձամբ թէ գրաւոր, իրենց վշտի մաս-նակցութիւնը բերին ամուսնոյն, հօր եւ մեծ հօր Պ. Յովհաննէս Նազարէթեանի կսկծալի մահուան առթիւ ։

ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

կազմակերպուած Տէսիլի Նոր Սերուն-դի կողմէ։

Շաբաթ, Յունիս 6, ժամը 9ին, Սալ տէ Ֆէթ տը լա Մէրի, Տէսիլ։

Նուագախումբ՝

RUDY MISSOL

Հայերէն երգեր՝ Ժ.Ո ՊՕՂՈՍԵԱՆ ։

COTILLONS-BAR-BUFFET

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

ՄԱՐՍԷՅԼ

Այս Շաբաթ Հոկտեմբեր 21ին, Ֆրանս. Համալսարանի Ամփիթեատրոնը, 40 Ալէ Լէօն Կամպէթա ։

Կը նախագահէ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅԵԱՆ ։

Կը խօսի Վեր. Յ. ՀԵՎՎԱՃԵԱՆ ։

Նիւթ՝ Ա. Իսահակեանի «Աբու Լալա Մահաբի»ն, Աստուածաշունչի լոյսին տակ ։ Մուտքը ազատ է ։

ՕԴԱՓ. ԿԱՅԱՆ

Ֆ. Կապոյտ Խաչի Օզափոմ. կայանին արձանագրութեանց վերջնական ձեւ մը տալու համար, նախապէս արձանա-գրուողները պէտք է ներկայանան մինչեւ Յունիս 10, Րիւ Մէյրաան 5, Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ, ժամը 13–14 եւ 18 – 20, այս օրերէն զուրս ժամադրու-թեամբ, հեռ. Թուիւէն 27.35։

Մինչեւ Յունիս 10 չներկայացողները պիտի համարուին հրաժարած ։

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ

Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԻԻ

ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

SALLE PAUL FARALICQ

21. Rue Yves Toudic, Paris - Métro République

Երկուշաբթի, Յունիս 8, ժամը ճիշդ 20.45ին ։

Մասնակցութեամբ՝ Փարիզահայ Թատ-րոնի լաւագոյն արուեստագէտներուն ։

ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԳ ՏԷՐՎԻՇԵԱՆ

Կը ներկայացնէ եւ կը խաղայ

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

Տրամ չորս արար, Ա. Շիրվանզադէի։

Բեմադրութիւն Տիկ. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Կը մասնակցին.— Քնար Ազնաւուր, Բերկրուհի Դաւիթեան, Նայիմի Շահին-եան եւ Հայկուհի Խտշեան, Տրդատ Նշանեան, Նուրհան Մարգարեան, Ս. Սուրէնեան, Ն. Պշտիկեան, Օ. Սարաֆ-եան, եւ Արտաշէս Գմբէթեան ։

Մուտքի դիները՝ սովորական ։

Դիմել՝ Էր. Բալուեան գրատունը, 43, Րիւ Րիշէ, Փարիզ։

Imprimerie Spéciale
du Journal « Haratch »

Սամուէլ – Մուրատեան Վարժարանի Աշակերտաց Ծնողքներու եւ Մուրատ–Ռափայէլեան Ն. Ա. Միութեանց միացեալ կազմակերպութեամբ

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՃՔԵՂ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾԱՌԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆԻՍ, ԺԱՄԸ 16ԷՆ ՍԿՍԵԱԼ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ ԺԱՄԸ 20 ԷՆ ԵՏՔ

... ՈՒՐԱՀ, ԶՈՒԱՐԹ ՄԹՆՈԼՈՐՏ ...

ՏԷՏԷՃԵԱՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

իր ամբողջական կազմով

Փարիզի մէջ առաջին անգամ

ԱՆՐԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ

հեղինակ–երգիչ

ԵՐԳ, ԽՄԲԱԿԱՆ ՊԱՐ, ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ

« Շիր էպապ »

ՃՈՒ ՊԻՒՖԷ ՄԱՏՋԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Անձպատառ օդի պարագային, հանդէսը տեղի կ'ունենայ ներքին սրահներու մէջ

26, RUE TROYON, SÈVRES **MÉTRO : PONT DE SÈVRES**

ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Մատակոսքարի ազգասէրներուն ի նը-պաստ ։

Կիրակի Յունիս 7։

Մանրամասնութիւնները յայտրդով ։

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ ՊԱՆԷՀՕ – ՔԱՇԱՆԻ ՄԷՋ

Փարիզի եկեղեցւոյ Պանէհօ – Քաշանի դպրոցի ամավերջի հանդէսը՝ Յունիս 7ին, կիրակի օր ժամը երեքին, Քաշանի Թաղապետարանի Սալ տէ Ֆէթի մէջ ։

Հովանաւորութեամբ՝

ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կը նախագահէ Պ. Լեւոն Տօնիկեան

Երգ, պար, արուեստանութիւն, արամա-խօսութիւն աշակերտներու կողմէ, դեկա-վարութեամբ ուսուցչուհի Տիկին Հռիփ-սիմէ Պալըկճեանի, բոլոր ծնողքները եւ հայ հասարակութիւնը կը հրաւիրուին ներկայ բլլալ այս հանդէսին ։

Ծանօթ.— Հաղորդակցութեան միջոց, իջնել Քաշանի Մէթրոյի կայարանը ։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Դպրոցասէրի 28 Յունիսի մրցանակա-բաշխութեան հանդէսէն առաջ, տեղի պիտի ունենայ դպրատհանդէսը։ Մանրամաս-նութիւնները յառաջիկային։

ՊԱՇՏՕՆԵԱՅ ԿՈՒԶՈՒԻ

Ազատ ժամերու զբաղումի մը համար պաշտօնեայ կ'ուզուի ։ Դիմել Զ. Ալեք-սանեանի, 18, Ռիւ տ'Ելֆս, Մարսէյլ ։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Կարապետ եւ Յարութիւն Քիւրքճեան կամ Տալթա Քիւրքճեան եղբայրները ։ Ըլ-նած Գրըչհիր եւ մեծցած Կեսարիա ։ 9 եւ հօթը տարեկանին իրենց ծնողաց հետ տեղահանուած Կեսարիայէն ։ Հօր անուն Յակոբ, մօր՝ Հայկապուհի, Կեսարացի ։ Կը կարծուի թէ ողջ են եւ Նիս հաստատ-ուած ։ Իմացնել իրենց քրոջ ։—

Mlle Hrandouhi Kupelian (Dalakh Kupeyan)
c/o Swiss School for Blind
Bourj Hammoud No 289, BEYROUTH (Liban)

ԾՐԱՐՆԵՐ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆԱՅԱՏՈՒԿ ԵՒ ՆՊԱՍՏԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ՇՆՈՐՀԻՒ ԱՐՏԱԾՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— ՄԱՒՍ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՐԱՐԻ ԾԱԽՔԵՐԸ ՄԻԱՍԻՆ

Հարիս բուխտ (զուտ բուրդէ հիւսուածեղէն)	*մէթրը*	3·500	*ֆր.*
Ֆիլ ա ֆիլ	*մէթրը*	3·900	»
Փէնիէ Պոսքօճ *զուտ բուրդ*	*մէթրը*	4·500	»
Սեռժ Փենիէ *զուտ բուրդ*	*մէթրը*	4·900	»
Ծառն կերպասեղէն	*մէթրը*	1·900	»
Գուլպա մուս նիլօն (*այր մարդու*)	2 *զոյգը՝*	1·500	»
Շապիկ (փոփըլին)		2·700	»
Կօչիկ Պօfu – fաֆ (*այր մարդու*)		5·900	»
Տիւվըթին *զուտ բուրդ (կնոջ հագուստիհամար)*	*մէթրը՝*	2·100	»
Քրէփ մուս *զուտ բուրդ*	*մէթրը*	2·800	»
Օթօման (*կնոջ եւ այր մարդու համար*)	*մէթրը*	3·800	»
Էնֆրիմէ *չմոթկուող եւ լուացուող*	*Ա. դին*	500	»
Գուլպա նիլօն մուս (*կնոջ համար*)	2 *զոյգը*	1·900	»
Գուլպա նիլօն (*կնոջ համար*)	2 *զոյգը*	1·500	»
Նիլօն փառիւռ (fոնսիոնէզօն եւ բիլոթ)		3·200	»
Ժամացոյցներ՝ ոսկեզօծ, 17 բիւսի, աներիշօf		10·000	»

ԱՌԱՔՈՒՄԻ ԾԱԽՔ.— 2·500 ֆր. 10 բիլոնոց ծրարի մը համար ։

ՍՏԱՅՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ԶՈՒՆԻ ։

ԵՐԵՔ ԶՈՐՍ ՇԱԲԱԹԷՆ ծրարները իրենց տեղը կը հասնին ։

Ձեր տրամադրութեան տակ են բոլոր կերպասներու ճմոյշները ։

SICOMEX

20, Rue Royale,
Tél. : OPE. 67-77 PARIS 8· Métro : Madeleine

ԱՅՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՀԵՅՔ Է

1959 ՅՈՒՆՈՒԱՐ 1ԷՆ

MORY et Cie

Հաստատութիւնը սկսած է շատ նպաստաւոր պայմաններով կատարել դէպի Խ. Միութիւն ծրարներու առաքումը ։

ԳԻՆԵՐԸ ԶԳԱԼԱՊԷՍ ԻՋԱԾ ԵՆ

Մեր նոր դիները ստանալու համար դիմել, զրաւոր, հետեւեալ հասցէին.—

Service C des Colis Postaux
10, Rue St-Quentin, Paris 10

*կամ հեռաձայնել.—*NOR. 40 72 & 50 83

MÉTRO ET AUTOBUS : GARE DU NORD